ՄԱՐՏԻՆՅԱՆ

Մարտին ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Այս գիրքը վիմագրություն է 1988-94թթ. Հայաստանի սահմանների պաշտպանության և Արցախյան ազատամարտի մասին. Հերոսանալու, որի առաջին հիմնադիր ջոկատների ու գնդերի կազմավորման մասնակիցն ու ականատեսն է եղել հեղինակը: Դրանց թվում են.

1. «Կոնինոր» ջոկատը (հիմնադիր՝ Արտակ Կարապետյան, հրամանատար՝ Արայիկ Խուդավերդյան),
2. Մասիսի «Ջորախաբ Անդրանիկ» ջոկատը (հրամանատար՝ Գնել Մանուկյան),
3. Երևանի «Ջորախաբ Անդրանիկ» ջոկատը (հրամանատար՝ Ավետիս Գրիգորյան, Սմբատ Խաչատրյան, Հովհաննես Ավագյան),
4. ՀԱԲ-ը (հրամանատար՝ Ռազմիկ Վասիլյան), «Արամոն», «Արարատ», Աղանայի ջոկատը (հրամանատար՝ Անդրանիկ Զուլիակյան), Արովյանի ՀԱԲ-ը (հրամանատար՝ Արմեն Ավետիսյան),
5. «Դժոխք Հրայր» ջոկատը (հրամանատար՝ Այբերտ Մուսինյան),
6. Սևանի ջոկատը (հրամանատարներ՝ Սուրիկ Սարգսյան, Սամվել Գևորգյան),
7. Հրազդանի «Սասուն», «Այակերտ», «Կոռոռ», «Աշտարակ» ջոկատները (հրամանատարներ՝ Սասուն Միրզայան՝ «Սև կանաչ», Արիկ Հարությունյան, Ռուբիկ Գալստյան, Յաչա Մելքոնյան, ինչպես նաև՝ Սլայնիր),
8. Գորիսի գունդը (հրամանատար՝ Սուրեն Խաչատրյան, շտաբի պետ՝ Սուրեն Բաղդասարյան),
9. Սիսիանի ջոկատները (հրամանատարներ՝ Աշոտ Միհրանյան, Վարդ և Հովիկ),
10. Վայքի ջոկատները (կրտսեր հրամանատար Վարդիթեր Գևորգյան, հրամանատարներ՝ Օնիկ Խաչատրյան, Նազիրների Հակոբյան, Արմեն Ավետիսյան),
11. Եղեգնաձորի ջոկատը (հրամանատարներ՝ Ռուբիկ, Սլյան, Հովիկ),
12. «Արարատ» ջոկատը (հրամանատար՝ Մանվել Եղիազարյան),
13. «Արևան» ջոկատը (հրամանատար՝ Արևան Թոքմաջյան),
14. «Մարաթիա-Սեբաստիա» ջոկատը (հրամանատարներ՝ Վանան Զաքիկյան, Հակոբ Հակոբյան՝ Լիդեր),
15. Եռաբլուրի «Բերդ» ջոկատը (հրամանատար՝ Մուշեղ Սարյան, Հրաչյա Աբրամյան՝ «Դաշտ»),
16. «Մեծն Տիգրան» գունդը (ատրճանակի նախագահ՝ Սմբատ Աբրահամյան, հրամանատար՝ Արմեն Աբրահամյան, տանկային խորհրդի նախագահ՝ Հրաչիկ Գալստյան),
17. «Մարտիկ-Ամի-Դատ» ջոկատը (հրամանատարներ՝ Գևորգիկ Միրզոյան՝ Դատ, Մուշեղ Սարգսյան),
18. «ՄԵՍԾ» 15 ջոկատները (հրամանատարներ՝ Մուշեղ Միսաքյան՝ Լուծ, Հովիկ Հարությունյան, Սասունցի Դավիթ),
19. Վարդան Հովակիմյանի ջոկատը (հրամանատար՝ Մարտին Ղազարյան՝ Ապարանցի),
20. «ՄԵԳԱՍ» ջոկատը (հրամանատար Ռոլանդ Քելեշյան, Ռոմիկ Մխիթարյան),
21. Օմարի ազատագրման ջոկատը (հրամանատարներ՝ Սեյրան Սարոյան, Գևորգ 4-րդ, Էջմիածնի ջոկատների հիմնադիր հրամանատար՝ Ֆիրդուսի Սարոյան),
22. Արարատի ջոկատը (հրամանատարներ՝ Վազգեն Մարգսյան, Դավիթ Զաղոյան,),
23. «Նոր Եդեսիա» ջոկատը (հրամանատար՝ Գևորգ Հայրապետյան),
24. Թալինի «Սասունցիներ» ջոկատը (հրամանատարներ՝ ԱՖՕ, Լենդրուշ),
25. Վանաձորի ջոկատը (հրամանատար՝ Կամո Հովհաննիսյան),
26. «Մեղրի» ջոկատը (հրամանատար՝ Վանդ Հովհաննիսյան),
27. «Արտաշատ» ջոկատը (հրամանատար՝ Լաերտ Սաղաթելյան):
28. Ապարան ջոկատը (հրամանատարներ՝ Ֆեդյա Տոնոյան, Մյասնիկ Մպխասյան, Ռազմիկ Պետրոսյան),
29. Ստեփանավանի ջոկատը (հրամանատար՝ Հրաչ Նահվերդյանը),
30. ՄՀՆՋ, ՄՀՕՋ ջոկատները (հրամանատարներ՝ Գրիշա Սարգսյան՝ «Ժարիտ Գրիշ», Վահան Հարությունյան, Արթուր Գևորգյան),
31. ԼՂՀ ինքնապաշտպանական ջոկատները, (հրամանատարներից՝ Արկադի Կարապետյան՝ Ագռ, Սամվել Բաբայան, Վիտալի Բալասանյան, Աշոտ Դալլյան՝ Ասկոլկա),
32. Կապանի ջոկատը (հրամանատարներ՝ Համլետ Քոչարյան, Օնիկ Ստեփանյան),
33. «Լույս» ջոկատ (հրամանատար՝ Յուրիկ Խաչատրյան, գնդի հրամանատար՝ Վլադիմիր Սարգսյան),
34. ՀԻԿ «Գարդման» գումարտակը (հրամանատար՝ Կարեն Ներսիսյան),
35. Հատուկ նշանակության ջոկատը՝ (հրամատնատար՝ Ամարասի Արթուր),
36. Վարդենիսի պայմանագրային գումարտակը (հրամանատար՝ Հենրիկ Մուրադյան),
37. «Վարդենիկ» ջոկատը (շտաբի պետ՝ Գևորգ Այվազյան),
38. «Ջավախք» ջոկատը (հրամանատար՝ Սամվել Պետրոսյան),
39. 5-րդ բրիգադը, որը կազմավորվեց Էջմիածնի ջոկատների հիման վրա հրամանատար՝ Մանվել Գրիգորյան),
40. «Անկախության բանակը» (հիմնադիրներ՝ Մովսես Գորգիսյան, Աշոտ Նավասարդյան),
41. «Արծվաբույն» ջոկատը (հրամանատար՝ Անդրեաս Հովհաննիսյան):
42. «Արովյան» ջոկատը (հրամանատար՝ Վովա Մանուկյան):

9(47.925)
Բ-24

ՄԱՐՏԻՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՋԱՏԱԳՐՈՒՄ

ԳԻՐՔ 3

ՍՊԱՐԱՊԵՏ

4346

Երևան
«ԱՅՍՕՐ» հրատարակչություն
2010

ՀՏԴ 325:342.5(479.25)
ԳՄԴ 66.3(2Հ)+67.99(2Հ)
Բ 242

Բաղդասարյան Սարտին
Բ 242 Ազատագրում: Գիրք 3: Սպարապետ.- Եր.:
Այսօր, 2010.- 720 էջ:

«Ազատագրում» 3-րդ գիրքը Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻ, Հայոց պետականության, բանակաշինության, Հայաստանի սահմանների պաշտպանության, Արցախի գոյատևման միասնական պայքարի, ինչպես նաև այն մարդկանց մասին է, ովքեր իրենց ներդրում են ունեցել Արցախյան պատերազմում հայ ժողովրդի տարած Մեծ Հաղթանակի գործում:

ՀՏԴ 325:342.5(479.25)
ԳՄԴ 66.3(2Հ)+67.99(2Հ)

ISBN 978-99941-888-1-9

© Բաղդասարյան Մ. 2010թ.

ԱՌԱՋԱԲԱՆ

Մեր նորօրյա պատմության մեջ իր ուրույն տեղն ունի արցախահայության ազատագրական պայքարը: Այն ավելի քան յոթ տասնամյակի վերք ու տառապանք ունի: Արցախյան գոյապայքարի նոր և աննախադեպ հզոր պոռթկումը տեղի ունեցավ 1988թ. փետրվարին: 1991թվականից վերածվելով իսկական պատերազմի, որը շարունակվեց մինչև 1994թ.-ի մայիսյան զինադադարը: Հակամարտող Ադրբեջանը մղում էր բռնատիրական պայքար: Անզեն, անպաշտպան Լեռնային Ղարաբաղի բնակչության պայքարն ընթանում էր նահանջի դառնությամբ և առաջադիմության վերելքով: Հայ ժողովրդին հաջողվեց ինքնապաշտպանությունից անցնել պաշտպանության բանակի ստեղծմանը և ադրբեջանցիների նկատմամբ տանել փառապանծ հաղթանակներ, ինչպիսիք Շուշիի, Լաչինի, Քելբաջարի ազատագրումն էր, որոնք բեկումնային նշանակություն ունեցան պատերազմի ընթացքի մեջ: Հենց Լեռնային Ղարաբաղի ազատագրական պայքարի այս դյուցազներգությանն էլ նվիրված է Մ. Բաղդասարյանի «Ազատագրում» գրքի 3-րդ մասը: Այստեղ պատկերված է 20-րդ դարավերջի մեր ժողովրդի հերոսամարտի մանրամասները, նրա մասնակից ու ղեկավար մարդկանց քաջագործությունները: Գրքի հերոսները հանուն հայրենիքի զոհողության պատրաստ, սովորական, հասարակ մարդիկ են: Նրանց մեջ է հայոց ազատամարտի նշանավոր զորավար, Սպարապետ Վազգեն Սարգսյանը, որի կարճատև կյանքի տարեգրությունը գոյատևումի երանելի իմաստ է, կատարյալ հայի ու քաղաքացու, հասարակական-պետական գործչի, շնորհալի զինվորական կազմակարպչի բնութագրություն: Նրա մանկության, պատանեկության և երիտասարդության տարիները ներկայացվում է ընթերցողին, որպես սովորական հայի կյանքի անցած ուղու նկարագրություն, սկսած կենցաղային ապրելակերպից,

գրական ու կազմակերպչական գործունեությունից մինչև հայոց նորաստեղծ հանրապետության բանակի ստեղծման ակունքներում կանգնած զորահրամանատարի, պաշտպանության նախարարի ու վարչապետի: Աշխատությունում հեղինակը բազմաթիվ հուշագրությունների, կենդանի մարդկանց զրույցների, անձամբ իր հետ կռված ու ծանաչած զինվորական մարդկանց բերած փաստերի հիման վրա բացահայտում է հայոց հերոսամարտի ծակատամարտերի, ռազմական ընդհանուր գործողությունների մանրամասները:

Գրքում ներկայացվում է ազատամարտի առաջին օրերից սկսած ինքնաբուխ կազմակերպված հայ կամավորական խմբերի ու ջոկատների ստեղծման ու զինման դժվարությունները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ամեն մի շրջանում հայրենասիրությունից խանդավառված, սեփական կյանքի զոհողությանը պատրաստ, նույնիսկ զենքին ամբողջությամբ չտիրապետող երիտասարդների պատրաստակամությունը ազատամարտի զինվորագրման գործին: Հանգամանորեն քննարկվում է ոչ միայն ռազմական տարբեր ոլորտների՝ հետախուզության, հրթիռա-հրետանային, կապի ծառայության, ինչպես նաև մոտոհրաձգային ստորաբաժանման, բժշկական ծառայության և այլոց գործունեությունն հաղթանակի ապահովման գործում: Զգալի տեղ է հատկացված ՀՀ-ում կազմակերպված տարբեր գումարտակների ու ջոկատների՝ Երևանի, Սպիտակի, Հրազդանի, Ապարանի, Վարդենիսի, Նաիրի (Զովունու), Թալինի, Արտաշատի, Եղեգնաձորի, Սյունիքի, Իջևանի, «Ալաշկերտի», «Սասուն»՝ Սև կակաչ, «Գարդմանցիների», «Արաբոյի», «Մեծն Տիգրան» ցուցաբերած ակտիվ մասնակցությանն ու կատարած հերոսությանը հայրենիքի տարածքների ազատագրման գործում:

Գրքում խորությամբ ցույց է տրված ՀՀ առանձին մարզերի շրջանների և ընդհանրապես թիկունքի ներդրումը Արցախյան ազատագրական մարտերում: Դրանց մեջ հանգամանորեն ներկայացված է Սյունյաց աշխարհի՝ հատկապես Կապանի, Մեղրու, Քաջարանի, Գորիսի բնակչության, ինպես նաև Ջավախահայության ներդրումը Արցախյան ազատամարտում: Աշխատությունում հայոց ազգային բանակի (ՀԱԲ-ի) Հատուկ գնդի, «Մեծն Տիգրանի», Կոռնիձոր ջոկատի կազմավորման մասին խոսելիս հեղինակը այն դիտում է, որպես հայոց ազգային բանակի ստեղծման հիմքը: Այստեղ ներկայացվում է Կոտայքի գնդի՝ (ՀԱԲ-ի գումարտակ) Արմեն Ավետիսյանի, Սմբատ

Այվազյանի, Խաչիկ Գալստյանի, Արայիկ Խուդավերդյանի հրամանատարությամբ կատարած սխրագործությունը Արցախյան պատերազմի տարիներին: Լայն հերոսական համայնապատկերի վրա է ներկայացված առանձին անհատների՝ Արմեն Բաբայանի (Ծռամ), Գարուն Աբգարյանի (գրադ Գարուն), Ամարասի Արթուրի, Զովունու Խաչիկի, Հայր Վահանի, Երվանդի Ռուբիկի (Եղեգնաձոր), Սուրեն Բաղդասարյանի (Գորիս), Կամո Հովհաննիսյան (Վանաձոր), ՀՀ ՀՈՒ հրթիռա-հրետանային զորամասի պետ Վլադիմիր Հայրապետյանի, կապի ծառայության պետ՝ Ալեքսանդր Բալբաբյանի, կապավոր 18-ամյա Հարությունի (Մորեխիկ)-ի, «Գարդման» ջոկոտի» Կոմիսար Կարեն Ներսիսյանի, «5-րդ բրիգադի» հրամանատար Մանվել Գրիգորյանի, գնդի հրամանատար Սեյրան Սարոյանի, Կոմանդոսի, Սասուն Միքայելյանի, Մուշեղ Սաղաթելյանի, Լեոնիդ Գրիգորյանի, Աբել Հարությունյանի, Ալբերտ Մուսինյանի և այլոց քաջագործությունները, հերոսական սխրանքը ազատամարտի տարիներին: Հենց այս հերոսների շնորհիվ էր, որ հայոց եռագույնը ծածանվեց Օմարի գագաթին՝ ի նշան խաղաղության:

Գիրքը գրված է հայրենասիրական շնչով, պատերազմի դաշտում, խրամատի մեջ՝ ազատամարտի մասնակիցների ներկայությամբ: Այն պատկերացում է տալիս դարավերջի մեր ազատամարտի տարիներին հայոց սխրանքների մասին: Գիրքը հարազատ մասունք է, ու թանկագին նվեր սեփական արյունով հայրենիքի տարածքներն ազատագրած հայ զոհված ազատամարտիկների հիշատակին: Այն կոչ է ապրողներին՝ հիշեցնելու ազատամարտի դասերը ցեղասպանության փորձերին հակահարված հասցնելու, վերջ տալու նպատակով:

Պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր՝ Էդիկ Մինասյան

Մեր հահապարակների հեղինակ արքունը,
որովհետև 5 հերկա հայորդու
պարարտությունների խնամարարը.

Տեր Դավոր քահ
Գեղաշարյան.

ՍՊԱՐԱՊԵՏ

Մենք խրամատում նույնիսկ խոսում էինք այս մասին՝ սա է իրականությունը:

Ջոն Կիրակոսյանի հանձնարարականով Սուրեն Այվազյանը կազմեց մ.թ.ա. 2107 - մ.թ.428թթ. Հայաստանի հնագույն և հին շրջանների պատմական քարտեզները, որոնք ժամանակին Հայաստանի կոմկուսը և ՊԱԿ-ը աշխատեցին չեզոքացնել: Իսկ 1988 թ., երբ սկսվեց ղարաբաղյան շարժումը, անհետացրին ատլասի 2-րդ հատորի 18 քարտեզները:

Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց»-ում հայաստանցիների մասին ասվում է՝ «Այս Հայկը՝ Թորգոմի որդին, Թիրասի որդին, Գամերի որդին, Հաբեթի որդին» (Նոյի որդու) հայաստանցիների նախնին է:

Հայկ նախահոր (մ.թ.ա.-2492-2026թթ.) տերության սահմանները եղել են Արաքս գետի հարավում, Կապուտան ծովը, Բզնունյաց ծովից դեպի հարավ, Տիգրիս գետից դեպի արևմուտք մինչև Եփրատ գետը, հյուսիսից՝ Սև ծովը: Արամանյակ Հայկազունի թագավորը (մ.թ.ա. 2026-1980թթ) սահմանները հասցնում է Քուռ գետի ակունքին, արևելքից Արաքսի ափերով Կապուտան ծովին հասնելով՝ անցնում է Եփրատ գետը, հյուսիսից մոտենում Սև ծովին:

Արամ, Արա Գեղեցիկ Հայկազունի թագավորները (մ.թ.ա. 1827-1743) Հայաստանի սահմանները հասցրել են ծովից ծով՝ Միջերկրական, Սև, Կասպից ծովերին:



Ծովից ծով Հայաստան.
Արամ, Արա գեղեցիկ Հայկազունի թագավորների (մ.թ.ա. 1827-1743) ժամանակաշրջան

Իսկ Տիգրան 2-րդ Արտաշեսյան թագավորը (մ.թ.ա. 89-55 թթ.) վերականգնեց Արքայից Արքա տիտղոսը: Սահմանները հարավ-արևմուտքից սկսում էին Հրեաստանի Կիսար քաղաքից՝ Հորդանան գետով, Հիսուս Քրիստոսի ծննդավայր Նազարեթ քաղաքով, Փյունիկե Ասորիք ծովափնյա երկրներով ու ծովափնյա Ավագն, Անտիոք, Ալեքսանդրիա քաղաքներով, Իսոսի ծոցով միանում է Կիլիկյան Տավրոսին, Կապադովկիա երկրամասի սահմանով (որը Պոնտոսի կողմից ժամանակավորապես գրավված երկրամաս էր) միանում Փոքր Հայքին, ապա Եվքսինյան Պոնտոս Սև ծովով՝ Կովկասին, Ալանաց սահմաններին:

❖Հյուսիսից՝ Սև ծովից, Վիրք, Աղվանք սահմանագծով հատվում է Քուռ գետի հետ և Արևելքում միանում է Կասպից (Վրկանա) ծովին՝ մինչև Գելան երկրամասը:

❖Արևելքից Ատրպատականով, Հադրիանե Պալմիրենե հարավային Պարթևական թագավորության սահմաններով միանում է արևմուտքին՝ Հրեաստանին:

Իսկ այսօր հայկական վեց գետերից՝ Եփրատ, Տիգրիս, Արաքս, Քուռ, Հալիս, Արածանի, ոչ մեկը, ցավոք, Հայաստանին չի պատկանում:

❖Եփրատը սկիզբ է առնում հյուսիսից՝ Բաղաբերդ, Կարին քաղաքների մոտերքից, Անի քաղաքին հպվելով՝ հոսում է հարավ՝ ձգվում դեպի Պարսից ծով:

❖Տիգրիսը հյուսիսից՝ Չետվերտայա Հայաստան Արտամաշատ քաղաքի մոտերքի լճակից հոսում է հարավ, Տիգրանակերտ քաղաքով մոտենում Բաբելոնյան Տիզբոն, Սելևկիա, ինչպես նաև Նեապոլիս քաղաքներին: Եփրատ ու Տիգրիս երկու գետերը միախառնվում են Բաբելոնյան երկրամասում, հոսելով Պարթևական թագավորության խորքերը, Ալեքսանդրիա-Անտիոք քաղաքի միջով թափվում են Պարսից ծոցը:

❖Քուռը արևմուտքից Տաշիր և Կումայրի սահմանների հատման գծից Արդահան քաղաքին մոտենալով՝ հոսում է արևելք, Փայտակարան երկրում խառնվում Արաքսի ջրերին:

❖Հալիս գետը սկիզբ է առնում արևելքից՝ Թորգոմա և Անի քաղաքների միջև ընկած տարածքի մեջտեղով Եփրատին հարակից հոսելով՝ թափվում է Սև ծով:

❖Արածանի գետը հարավից՝ Բզնունյաց ծովից, Նազիկ լճակից, Մեծքի քաղաքի մոտերքից, վտակը հյուսիսից՝ Ջերմուկ քաղաքից, Մեղեդուղխի լեռներից Քեբանի ջրամբարով միանում է Եփրատին:

❖Արաքսը արևմուտքից՝ Տուրուբերան երկրամասից, Կարին քաղաքից հոսելով արևելք, անցնում է Ախուրյան քաղաքով, Արարատ սարի լանջով, Պարսկաստանի հյուսիսային սահմանագծով լցվում է Կասպից ծովը:

Եվ այսպես, մ.թ.ա. 2492-ից մինչև մ.թ. 428թթ., այսինքն՝ մոտ 2920-3920 տարվա ընթացքում 108-ից ավելի թագավորներ են թագավորել Ծովից ծով Հայաստանում:

Վերջին հայ թագավոր Արտաշես 3-րդ (Արտաշիր) Արշակունի թագավորի (մ.թ. 422-428թթ.) օրոք եղավ Արշակունիների հարստության անկումը:

1453 տարվա ընթացքում հայ տիրակալները սպառեցին հայկական պետականությունը. իշխանների ու նախարարների գզվռտոցից պառակտվեց Հայաստանը, որից օգտվեցին հարակից պետությունները... դեռևս 11-րդ դարից: Հիշենք 1914 թ. Պետական Դումայում դեպուտատ Մարկովի ելույթը. «Ինչո՞ւ Ռուսաստանը պետք է Կովկասի սահմաններում ստեղծի Մեծ Հայաստան: Դա ավելի վատ կլինի, քան Մակեդոնիան: Դա կստեղծի երկրորդ Լեհաստան: Հայերը լավ են ապրում Առաջավոր Ասիա և Հայաստան ներխուժած սելջուկ թուրքերից»: Ընկնում 1722թ. Դավիթ Բեկի ապստամբության օրերից ձևավորվեց ռուսական կողմնորոշումը:

Հայաստանի անծայրածիր սահմանները փոքրացան, փոքրացան, դարձան 29.8 հազար քառ. կմ՝ մի փոքրիկ ոտնաչափ տարածք: 1988-1994թթ. ղարաբաղյան ազգային-ազատագրական պայքարի շնորհիվ հայ ժողովուրդը համախմբվեց, միասնական պայքարով ազատագրեց Արցախը՝ յոթ կորցրածզավթած շրջաններ՝ մոտ 11 հզ. քառ. կմ տարածքով: Մոսկովյան «Նեզավիսիմայա գազետա» թերթը մերձավոր և Միջին Արևելքում հզոր ուժերի ներքո ձևավորում է նոր տարածք:

Ամերիկյան աղբյուրները, վկայակոչելով մոսկովյան «Նեզավիսիմայա գազետա» թերթը, գրում են, որ մեր աչքերի առջև Մերձավոր և Միջին Արևելքում անգլո-ամերիկյան առանցքի վերահսկողության ներքո ձևավորվում է մի հսկայական էլիպսաձև տարածք: Այդ էլիպսը կազմված է երկու՝ հյուսիսային և հարավային աղեղներից:

Մոսկովյան «Նեզավիսիմայա գազետա» թերթից

Եթե որպես մեկնակետ վերցնենք Միջերկրական ծովը, որը

վաղուց ԱՄՆ-ի լիակատար վերահսկողության տակ է, ապա առաջին՝ հյուսիսային աղեղն անցնում է Ստամբուլով և ամբողջ Կովկասով: Ուստի պատահական չէ այն ամենը, ինչ ներկայումս տեղի է ունենում Վրաստանում, Չեչնիայում, Ղրիմում: Կովկասին հաջորդում է Մերձկասպյան տարածաշրջանը՝ ԱՄՆ-ի միջինասիական ռազմակայաններով: Ի դեպ, վերհիշենք, թե Ամուդարյայի ափերին ովքեր էին ֆինանսավորում և խորհուրդներ տալիս բասմաչներին:

Երկրորդ՝ հարավային աղեղն անցնում է Միջերկրական ծովի արևելքով (դարձյալ ընդգրկելով Ստամբուլը), Թել Ավիվով, ներառում Իրաքը, Իրանը և Պարսից ծոցով հասնում Պակիստան: Ամեն ինչ միակցվում է Աֆղանստանում: Դա մեծ ռազմավարական շրջան է, որը վերահսկում է նավթի հանքավայրերի բոլոր ծովային մատույցները: Այդ շրջանը միաժամանակ Ռուսաստանին զրկում է Միջերկրական ծով դուրս գալու կարևոր ուղիներից:

Այսպիսով, ԱՄՆ-ը ստեղծում է վերահսկելի ներքին համաշխարհային ածխաջրածնային էլիպս, որը բոլոր մակրոտնտեսական ռազմավարական հետազոտություններում հենց այդպես էլ կոչվում է:

Անմիջապես հասկանալի է դառնում, որ դրա վերջնական կայունացման համար նախ պետք է ընկնի Բաղդադը, ապա՝ Թեհրանը: Քանզի Պարսից ծոցը կարելի է վերահսկել դրա իրաքյան և իրանական ափերը հսկողության տակ առնելով միայն: Այլ կերպ ասած, սկսվել է աշխարհի նոր, անչափ լուրջ վերաբաժանում, որտեղ Ռուսաստանին հազիվ թե որևէ դեր վերապահված լինի:

1988թ. նոյեմբերին, երբ Թուրքիայի նախագահ Թ. Օզալը Փարիզում հայտարարեց. «Այո՛, եթե կոմունիզմի գաղափարները մեզ մոտ գային ոչ թե Ռուսաստանից, որի դեմ մենք բազմադարյան պայքար ենք մղել, այլ՝ Ֆրանսիայից, դա այլ խնդիր կլիներ»: Պատերազմի հարվածի գլխավոր ուղղությունը Խորհրդային Միությունն էր:

Հիշենք վերհանված այն գեղեցիկ մտքերը, որ ժամանակին ձևակերպել էր Ստեփան Կարապետի Պողոսյանը: 1974թ. նոյեմբերի 14-ին «Ստամբուլ» թերթում տպագրվեց արտասահմանյան թուրքերի շրջանում տարվելիք հակակոմունիստա-

Ադրբեջանցիների կազմած Հայաստանի սխեմատիկ քարտեզը. 1920թ

կան, նացիոնալիստական - պրոթուրքական աշխատանքների մի ամբողջ ծրագիր, որն ընդգրկում էր կազմակերպական, քաղաքական և գաղափարախոսական բնույթի 20 միջոցառում:

Ամերիկան, Թուրքիան և Ադրբեջանն ամեն ինչ արեցին և անում են, որ Անդրկովկասը անջատվի Ռուսաստանից, որպեսզի Թուրքիան տեր դառնա Կովկասի լեռնաշղթայից հարավ ընկած ամբողջ տարածքներին, Կարս-Սուրմալու-Նախիջևան-Զանգեզուր-Ղարաբաղ գծով միանալու ռուսական և պարսկական Ատրպատականներին ու Բաքվից դեպի Կենտրոնական Ասիայի իսլամական աշխարհը: Միակ խոչընդոտը հայերն էին:

Ադրբեջանի թուրք ղեկավարները հաստատում էին, թե Հայաստանի մայրաքաղաքը կարող է լինել Էջմիածինը, Սևանի

հյուսիս-արևմտյան ափերը՝ Դիլիջան չհասած, մի փոքր մաս էլ Ալեքսանդրապոլի գավառից: Ընդամենը 15 հազար քառ. կմ: «Թուրք» բառը համարժեք է տգիտության ու բռիության: Եվ առանց տատանման, բացահայտ կարելի է ասել, տգետներն ու բռիները ակտիվ են ու միաբան: Օգտագործվում էր «Օսման» անվանումը, որը քաղաքական ազգության անուն է, այսինքն՝ պետության և ազգության հոմանիշ լինելու գաղափար, միազգության գաղափար:

Հպատակ ազգերին ձուլում կամ ոչնչացնում էին, և թուրքերը 300 տարի հետևողականորեն կիրառելով ձուլման քաղաքականությունը, որը ցանկալի արդյունք չտվեց, հանգեցին ոչնչացման գաղափարին՝ օգտագործելով Ղուրանը:

Երկրաշարժ, 1988 թ., 7 դեկտեմբերի, 11:41:

Եկել է պահը ապրելու հպարտ ու ինքնուրույն, սակայն այն թանկ է տրվում: 1988 թ. դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժից կործանվեցին Գյումրի, Սպիտակ, Վանաձոր քաղաքները և շատ գյուղեր: Եղան մարդկային զոհեր՝ 25 հազար, որից 8 հազարը՝ աշակերտներ:

Ադրբեջանից Հայաստան մտնող գնացքների վագոնների վրա գրում և շնորհավորում էին հայ ժողովրդի գլխին եկած աղետը՝ երկրաշարժը: Եվ հեռուստատեսությամբ իրենց ելույթներում Ադրբեջանի նախագահները՝ Վեզիրովը, Էլչիբեյը, պարծենում էին, թե շուտով, շատ շուտով կնավարկեն Սևանի զուլալ ջրերում:

Աստված այս հողագնդի վրա նման վիժվածքներին ինչպե՞ս և ինչո՞ւ է պահում...

Տարիներ հետո, Հռոմի պապը Գերմանիայում 2006 թ. սեպտեմբերի իր ելույթում ասել է. «Մուհամեդը չար և անմարդկային է, ահա Ղուրանի խրատը»:

Ահա այս խոր վերքը ինչպե՞ս ամոքել: Եվ յուրաքանչյուր հայ կրկնում է...

Ախր ուրիշ տեղ հորովել չկա.
Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ:

Այս ցավն ամոքում էր բանաստեղծությունը. Դեռ կանք, դեռ կռվում ենք, հաղթելու ենք... Եվ 21-րդ դարը մերն է լինելու: Սասունցի Դավիթ, Տիգրան Մեծ, Վարդանանց պատերազմ, Սարդարապատի ճակատամարտ, Մեծ եղեռն, իսկ հիմա հարկադրված՝ Արցախյան պատերազմ:

Չյան փաթիլները տարբեր են մարդկանց նման, մեր հավատով կտրվեն այս պատերազմի հաղթանակի պտուղները, հարկավոր է հավատով, համառ համբերատարությամբ առաջ շարժվել, միայն համազգային պայքարով կա հաղթանակ...

19-րդ դարի մայրամուտից և 20-րդ դարի արշալույսից մինչև 1923թ. հայ ժողովրդի և առհասարակ, մարդկության համար զարմանալի ճակատագրերի ժամանակաշրջան էր:

20-րդ դարի սկիզբը նշանավորվեց 1914-ին սկսված Առաջին համաշխարհային պատերազմով, ինչպես նաև 1917-ի համաշխարհային կոմունիզմի հեղափոխությամբ: Թուրքերի կողմից կազմակերպվեց հայերի ցեղասպանությունը: Աբդուլհամիդյան գաղափարախոսությունը սկիզբ դրեց երիտթուրքերի ծրագրի իրականացմանը, որոնք նոր սահմանադրության քողի տակ խաբեցին հայ իշխանավորներին և մտավորականներին, ջարդեցին 2 միլիոն հայերի:

Քեմալ Աթաթուրքը «կարդաշ» Լենինին հայերին ներկայացրեց որպես կոմունիստական համաշխարհային հեղափոխության խանգարողներ: Թուրքը ցեղասպանությունից փրկվածներին վերջնականապես ոչնչացնելով՝ սահմանները ձգեց Արաքս և Ախուրյան գետերով: Եվ Աղվանք երկրամասում՝ Կասպից ծովի ափերին, կազմավորվեց «Ադրբեջան» պետությունը:

Ռուսաստանում խորհրդային 15 եղբայրական պետությունների մեջ կազմավորվեց Ադրբեջան հանրապետությունը և 1921թ. մարտի 16-ին Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված, այսպես կոչված, բարեկամության և եղբայրության Մոսկվայի պայմանագրով, Հայաստանից Թուրքիային անցան Կարսի մարզը և Սուրմալու գավառը:

1921թ. հուլիսի 4-ին Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության կենտկոմի Կովկասյան Բյուրոն քվեարկությամբ որոշում է Լեռնային Ղարաբաղը թողնել Հայկական ԽՍՀ-ի կազմում: Սակայն հաջորդ օրը նույն մարմնի, առանց քվեարկության կայացած որոշման համաձայն՝ Լեռնային Ղարաբաղը միացվում է Ադրբեջանական ԽՍՀ-ին՝ ստանալով լայն ինքնավարության իրավունք:

Եվ մինչև 1965թ. կոմունիստական կուսակցությունը՝ պատմությունը աղավաղելով, խեղդեց ճշմարտությունը: Բայց հայ-

№ 20

Огромны заслуги выдающихся деятелей Коммунистической партии и Советского государства, верных ленинцев С. Кирова, С. Орджоникидзе и А. Микояна в деле победы Советской власти в Армении, восстановлении и развитии народного хозяйства республики.

1920 թ. Բոլշևիկյան ավերիչ 11-րդ կարմիր բանակը մտավ Հայաստան. հրամանատարներն էին Միկոյանը, Օրջոնիկիձեն, Կիրովը

4346

Հայաստանի փրկարարին, Աղոթք, 1988թ.

կական ցեղասպանության՝ Մեծ Եղեռնի 50-ամյակի զարթոնքը սկիզբ դրեց խեղդամահ արված հայոց ճշմարտությանը, իսկ գորբաչովյան վերակառուցման ծրագիրը խարխլեց, խառնեց բռնակալական մամլիչի զնդանի տակից ծլարձակած ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքները, անկախության ձգտումը:

Եվ այսպես, 1965-ին հայ ժողովուրդը հավասարակշռվեց: 1988թ. փետրվարին ձևավորվեց Ղարաբաղյան շարժումը, որպեսզի հարկադրված պատերազմում բարբարոսների ձեռքից ինքնազոհաբար փրկի համաշխարհային մշակույթը, Արցախ երկրամասը, ինչպես 1821թ. հույները թուրքական լուծը թոթափելու համար ելան ազգային-ազատագրական պայքարի՝ իրենց երկիրը, մայրաքաղաք Աթենքը ազատագրելու համար: Թուրքերը Ակրոպոլիսում հուսահատ պաշտպանվում էին: Ակրոպոլիսի չքնաղ տաճարի մարմարյա սյուները միմյանց ագուցված էին անագե ձողերով, այդ ձողերը ձուլելով՝ թուրքերը փամփուշտ էին պատրաստում՝ ավերելով հուշարձանները: Բարբարոս այդ վերաբերմունքը կանխելու համար հույն առաջնորդ Կարաիսկակիսը հրամայեց արկղերով փամփուշտ

Ազգակործան «Նեպրավդան», 1988, Օպերա

ուղարկել թուրքերին, որպեսզի փրկի նախնիների կառուցած ճարտարապետական հրաշքը:

Ճակատամարտը բորբոքվեց: Թուրքերը, զգալով իրենց անելանելի ու անհույս վիճակը՝ ստիպված էին անձնատուր լինել: Հայերը չպայքարեցին. երեք ծովերից ու վեց գետերից մնաց 29,8 քառ. կմ:

Նախիջևանի կործանման դառը փորձը շարունակվում է. փոշիացվեցին հայկական համաշխարհային բարձրարժեք շինությունները՝ եկեղեցիներ, խաչքարեր, հուշարձաններ: Նույն բախտին արժանացավ նաև Արցախ երկրամասը:

Հիմա ո՞վ է այն անհատը, որը կկարողանա ժողովրդին շարժել, իրականացնել երևակայող հեռուն գնացող Գորդյան հանգույցի լուծումը, որը կկարողանա գրավել ու նվաճել ժամանակակիցների սիրտն ու հոգին, արժանավորների մեջ դառնալ արժանի:

Ո՞վ է այն Սասունցի Դավիթը, որն իր հոր ոսկին ինքը պիտի չափի... Դա եղավ ժողովրդի հավաքական ուժը, «Ղարաբաղ» կոմիտեն... Եռյակը, ՍՊԱՐԱՊԵՏԸ...

Շարենցականը 35 կիլոմետր ոտքով հասավ Երևան, 1988 թ. փետրվարի 24

ԱՐԱՐԱՏ՝ ԴԱՎԱԼՈՒ

Երևան քաղաքին մոտ, Արարատ սարի ստորոտին, Արաքս գետի հովտում, Խոր-Վիրապի հարևանությամբ, իր բնակչությամբ հանրապետության խոշոր գյուղերից մեկն է հնամենի Դավալուն, որը ոմանց կարծիքով նշանակում է վեճ, ոմանց կարծիքով՝ քարավանատեղ, հիմնականում մակվեցիներ ու ակոռեցիներ են: 1604թ. Շահ Աբաս պարսիկ թագավորը նահանջի ժամանակ գյուղի ազգաբնակչությանը մեծամասամբ տեղահանել է, հետագայում նորից վերաբնակվել են: Խորհրդային տարիներին Դավալուն վերանվանվեց Արարատ:

Բերրի հողերով, փարթամ ծառ ու ծաղիկներով, կանաչավուն դաշտավայրերով, պատմական ծիրանի բերքատու ծառերով, որոնց արմատները հողի խորքից քամում են ընդերքի բարիքը և ցյուղերի ծաղիկների բարի աչքով նայում են աշ-



Սպարապետի օրորոցը

Արամ և Վազգեն Սարգսյանները

խարիին: Արևելքը Արևմուտքին կապող խճուղին Երևան-Զանգեզուր-Արցախ կապող ճանապարհին նստած՝ գնացողին բարև տալիս, բարև է առնում:

Դավալեցի Զավենի ու Գրետայի ամուսնությունից ծնվում են երեք արու զավակներ՝ Վազգենը, Արամը, Արմենը:

Վազգենը ծնվել է հայրական պապի տանը, 1959թ. մարտի 5-ին, Արամ Զավենի Սարգսյանը նույնպես ծնվել է այդ տանը, իսկ ծնողների երրորդ արու զավակը՝ Արմենը՝ հոր նոր կառուցած տանը:

Հաճախել է տեղի միջնակարգ դպրոցը, մեկ օր բացակա չունենալով: Ավարտել է գերազանց, այնուհետև Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտը՝ կարմիր դիպլոմով:

Վազգենը դասավանդել է հայրենի Արարատ գյուղի միջնակարգ դպրոցում, միաժամանակ աշխատելով ցեմենտի գործարանում: 1985-ից Հայաստանի գրողների միության անդամ է:

Անհոգ մանկություն. Վազգեն և Արմեն Սարգսյաններ

1986-89թթ. աշխատակցել է «Գարուն» ամսագրին՝ որպես հրապարակախոսության բաժնի վարիչ: 1987թ. նրա «Հացի փորձություն» գիրքը արժանացել է մրցանակի:

Գյուղի բնակիչները վաղուց գիտեն միմյանց:

Գյուղը, նրա բնակչությունը այնպես են, ինչպես բոլորը աշխարհում. կա սեր, թշնամություն, ծնունդ, մահ, աղքատություն, հարստություն, բարություն, դաժանություն, գործեր աստվածային և գործեր սատանայական:

Գյուղը ապրում էր իր ցավերով և հոգսերով:

Մայրամուտ էր: Արևն անցել էր Արարատ սարի աջ լեռնապարին՝ ծուլորեն նստել: Ծիրանավառ բոցկլտացող շողերը հասնում էին գյուղի էլեկտրասյուների վրա ծղոտներով դիզած բներին մեկ ոտքի վրա ննջող արագիլին:

Մասիս-Արաքս-Խոր Վիրապ: Այս եռանկյունուն էր ուղղված Վազգենի հմայված հայացքը: Ի՞նչ գեղեցիկ է աշխարհը, Տեր Աստված: Բնությունը գեղեցիկ է իր բազմազանությամբ, մար-



Վազգենը հորաքրոջ որդու՝ Վանիկի հետ

Սպարապետը
5-րդ դասարանի աշակերտ

Սպարապետը
ուսանողական տարիքում

դը՝ իր զգացողությամբ: Հայաստանը մեկ ոտքի վրա Արագիլի պես կանգնել է աշխարհի կենտրոնում:

Եթե չլիներ բարին, չէր լինի չարը: Եթե չլիներ Աստված, չէր լինի բնությունը և մարդը՝ Աստծուն փառաբանելու համար է:

Քարին նստած՝ արագիլին նայելով՝ արծաթազարդ երկնքի աստղերի հետ էր խոսում երիտասարդ գրողը, որ ուժեղ էր և փխրուն: Չափազանց խելացի, զգայուն, մեծ կամքի տեր: Մահից չվախենալով՝ չէր փախչում կյանքից:

Առավոտյան հայ ժողովուրդը հավաքվեց Օպերայի Ազատության հրապարակում, միասնության շեփորը հնչեց:

Վազգենն իր մտքերի հետ քայլում էր փողոցի մայթեզրով՝ նախրին զուգահեռ: Քայլում էր դանդաղ, ոտքերը դնելով տաք հողին՝ հոգով ջերմանում: Հայացքն առավ Արարատ սարի ծերմակ կատարին, հոգին շանթեց կայծակաձիչ: Նայեց սարին, օդը նվաճեց. այդքան բավականություն իր կյանքում չէր զգացել: Հասկացավ, որ մարդը կարող է մոլորվել Մասիս սարի հայացքից: Սուրբ գրքի մեջ ասվում է, որ խավար շրջաններում մարդիկ, որ Աստծու մասին ոչինչ չգիտեն, մթության մեջ են ապրում:

Գրետա և Հավեն, երեք արու զավակներ՝ երկու վարչապետ, մեկ Սպարապետ

Եվ ի՞նչ էր մտածում այդ երիտասարդը: Եվ ինչո՞ւ էր պատրաստվում ձեռնոց նետել ճակատագրին: Հանուն այս գեղեցկության՝ պիտի գոչեմ, որ բախտ եմ ունեցել լինել նրա ժամանակակիցը և նրա հետ առաջինը մարտնչել հանուն հայ ժողովրդի ազատագրման: Անցնելով տանջանքի ու տառապանքի ճանապարհով՝ նա մտածեց ունենալ անանձնական երջանկություն:

Աշխարհում կա ոչ միայն անհրաժեշտություն, այլ նաև ազատություն: Վազգենը մտասևեռվեց «ազատագրում» բառի վրա: Այն, ինչ օդի, ջրի պես որպես կոդ անհրաժեշտ էր հայ ժողովրդին: Առանց իմաստության չկա սխրանք. չկա քարը քարին դնելու մեծագործություն:

Հենրիկ Թևոսի Վարդանյանի հետ դուռ-դռան հարևաններ էին: Ծնված օրվանից նույն գյուղի, փողոցի տղաներ՝ մանկության ընկերներ: Երկու տան այգիները բաժանվում էին փայտե ցանցաձև ցանկապատով: Այսօրվա Մոսկվա-Երևան-Բաքու մեկնող գնացքը իրենց գյուղում կայարան ուներ, որը Վազգենենց տան դիմացն էր, մոտ 100 ոտնաչափ հեռավորությամբ:

Արազի ափին Ծիդլուն՝ Եղեգնավան, Խալիսա, ներկայիս Նոյակերտ, թուքական գյուղերի ադրբեջանցիները Վազգենենց տան փողոցով անցնելիս, երբ խոսում էին թուրքերեն, 5-րդ դասարանում Ռաֆֆու «Սամվել» վեպը կարդացած Վազգենը քարերով խփում էր նրանց, հայհոյելով պահանջում հեռանալ իրենց գյուղից:

Ձմռանը փայտե չմուշկներով սահում էին Սարիբաբա բլրակի ստորոտի փոսիկի «գյոլի» սահադաշտում: Ամռանը ավտոդողի վրա ցատկոտում էին, արտեզյան ջուրը պահում էին վրան՝ շատ էր զվարճանում, ջրի շիթի հետ խաղում, թռչկոտում, ուրախանում: Պարապ ժամանակ կիթառ կամ դաշնամուր նվագել էր սովորում: Հրաչն էլ աթոռի նստատեղին դիոլ էր խփում: Երգում էր հայկական երգեր, պարում էր սասնա պարեր, շատ անգամ կրկնում՝ «Հազար թմբուկ թող հնչեն այս առավոտ»:

...հնչեց շեփորը... Աշոտ, 1988 թ. փետրվարի 20

Իգոր Մուրադյանը միտինգ է անցկացնում Չարենցավանում, 1988 թ. հունիս:

Մեծահասակ մարդիկ իրիկվա հովին ավանդական շարքով նստում էին տան պատերին կից բազալտե նստարաններին: Վազգենը նրանց կողքից հեռու չէր գնում: Կլանված լսում էր գյուղի մեծամեծ մարդկանց՝ Թեմուր Բեկին, Խոսրով Աղային՝ աշխարհի անցուդարձի մասին: Նրանց իմաստուն խոսքերը գրի էր առնում, մինչև մոր լուսնաշողով ողողված ձայնը Վազգենին տուն էր կանչում:

Հավենի ընկերները շատ էին սիրում չարաճճի Վազգենին, քաղցր արյուն ուներ, նրա ծննդյան օրերին բոթաս, ֆուտբոլի խաղակոշիկներ էին նվիրում, որն էլ պատճառ հանդիսացավ ընտրելու ֆուտբոլիստի մասնագիտությունը: Ոտքով շատ էր թափառում Արարատի ստորոտին, Արաքսի ափերին ձգվող փշալարերին մոտենալով՝ արագ բարձրանում էր, Խոր Վիրապից կլանված նայում Արարատ սարի ծերմակ կատարին: Ի՞նչն էր նրան առաջնորդում, ի՞նչն էր նրան ձգում: Պատանու հոգում փոթորիկ էր: Ծատ էր կարդում Ծեքսպիր, Նարեկացի, Պարույր Սևակ, Ծիրազ, Ծուկշին, Սոլժենիցին:

Ծարժուն պատանի էր, քրտնում էր, այդ պատճառով բամբակե հագուստը հագից չէր հանում, մի քանի անգամ լվանում էր ու նորից հագնում: Ամռանը կիզիչ շոգին անկողին հիմնականում չէր մտնում, պառկում էր տան գորգին, թիկնում բարձին ու խորհում, կարդում և այդպես քնում: Լուսադեմին էլ վազում էր դպրոց: Ճաշում էր առանց ընտրության, առանց դանակ պատառաքաղի, թեև հարկ եղած դեպքում կարող էր արվեստ ցուցադրել, երբ դրա կարիքը լինում էր պաշտոնական ճաշկերույթների ժամանակ: Լոլիկ, վարունգ, մրգեր ուղղակի պոկում էր ծառից կամ թփից ու ախորժակով ուտում: Չէր սիրում միրգը, բանջարեղենը կտրատած դնել սեղանին:

Հետագայում բախտ ունեցա խնձոր պոկել խնձորենուց, որի ճյուղերը բերքից ճկված Հայկ նահապետի աղեղի տեսքով խոնարհվել էին հողին: Բարի աչքով նայում էին աշխարհին նազանքով, խորհրդավոր, թվում էր, թե Վազգենը հիմա վագրի ճարպկությամբ կցատկի ծառին, ծոցը կլցնի խնձորները ու կթռչի փողոց՝ բաժանելու ընկերներին:

Պատմում են՝ Արարատի փեշերից մորեխների պարս էր գալիս, ցանած արտերի հասկերը ոչնչացնում: Այդ տեղանքից

հատուկ ջուր են բերում և շաղ տալիս: Կապուտակ աղավնիները գալիս են, ոչնչացնում մորեխներին, փրկում հացահատիկը:

Այդ սուրբ ջրով կառուցում են սուրբ Հակոբ եկեղեցին:

Սակայն 20-րդ դարում անաստված ու անհավատ կոմունիստական կարգերը այն ավերում են և դարձնում գյուղի պահեստ: Հավատի ու աղոթքի շնորհիվ եկեղեցին մնում է կանգուն: Ազատամարտիկները հետագայում վերանորոգում են Սուրբ Հակոբ եկեղեցին:

1988թ. ղարաբաղյան շարժումը, փոխելով Վազգեն Սարգսյանի ճակատագիրը, նրան նետեց Հայաստանի սահմանների պաշտպանության և Արցախի ազատագրման խառնարանը:

Մարզիկ, գրող և հրապարակախոս այս երիտասարդը հիմա կամավոր շարքային ազատամարտիկ՝ ավտոմատը ուսից կախած մեր կուռքը, շարքում կանգնած պատրաստ էր կատարել հրամանատարների հրահանգները: Մտքով անգամ չէր անցնում սպարապետի տիտղոս ունենալու մասին: Մտածում էր

Վազգեն Սպարապետը, Ռազմիկ Պետրոսյանը, Սուրիկ Խաչատրյանը շարային ուսումնամարզական պարապմունքի ժամանակ

որպես զինվոր, որն զբաղեցնում էր իր տեղը ջոկի կազմում, պարզում ստացած առաջադրանքը և ի կատար ածում:

Ի՞նչ իմանար, որ ազգային-ազատագրական պայքարը սկսվում է ցույցերից, երթերից, գործադուլներից, և հետո լինելու են ընդհարումներ և պատերազմ, որի ժամանակ պետք է հայոց բանակը առաջնորդեր թուրքական հատուկ ստորաբաժանումներով համալրված ադրբեջանական զավթիչ բանակի դեմ, ծնկի բերեր՝ տաներ փայլուն հաղթանակներ:

Իսկ հիմա շարքում կանգնած՝ սպասում էր հրամանի՝ ցույց տալու ունակություններն ու կարողությունները՝ զգալով, որ Հայաստանի լինել-չլինելու հարցն է դրված:

Շարքում Վազգենը Աստծու հետ էր խոսում և նրանից օրհնություն խնդրում: Աստված կամեցել էր արժանավոր զավակի միջոցով օգնել առաջին քրիստոնյա ժողովրդին:

Այդ պահին եղավ «հավսա՛ր-զգա՛ստ» հրամանը: Վազգենի մարմինը դողաց. երևի Աստծու կողմից հրահանգ էր ստանում, քիչ էր մնում ծչար...

Բայց Աստծու հավատով հետևեց նրա պատգամներին, ինքն իրեն կրկնեց՝ դու պարտավոր ես հավատարիմ ծառայել, դու այս հողի ու ջրի ազնիվ, անարատ զավակն ես: Ահա՛, անելիքդ: Իսկ ինչո՞ւ նա պիտի աշխարհ գար և ծառայեր իր տառապյալ հայրենիքին: Ինչու՞... Աստված է այդպես կամե-

«Ղարաբաղ» կոմիտեն առաջնորդում է հայ ժողովրդին. Լևոն Տեր-Պետրոսյանը ղեկավարում է միտինգը, ելույթ է ունենում Եղիշ պապը, 1988 թ. Ազատության հրապարակ

նում: Նա պիտի պայքարի, տանջվի, իր օրինակով Հիսուս Քրիստոսի պես առաջնորդի իր ժողովրդին և խաչվի:

Քանի որ Աստծու պատգամներին սրբորեն հետևելը հազվագյուտ մարդկանց շնորհն է, որոնք մտադիր չեն տեր դառնալ, նոր տեր փնտրել: Տերեր են փոխում և մշտապես նոր տերեր են որոնում թույլերն ու վախկոտները:

Այդ էր պատճառը, որ նա առանց հետին մտքերի, առանց մաֆիայի կամ գաղտնի ծառայությունների ազդեցության, կամավոր որդեգրվեց Հայաստանը անկախ տեսնելու, ինքնիշխան ու հզոր դառնալու, իր գլխի տերը դառնալու սուրբ գործին:

Խրամատում Վազգենը Հայաստանի խաղաղության, պատերազմի հաջողությունների համար խաչակնքում էր, ավտոմատն ամուր գրկած՝ հույս ու հավատ ներշնչում մարտական ընկերներին: Փրկությունը կապում էր և՛ Աստծու հետ, և՛ իր բնածին ունակությունների, և՛ իր ծագման, և՛ Քրիստոսի օրի-

Արջ Աշոտ, 1988 թ.

նության հետ՝ վերհիշելով Մեծն Արամազդի երեք պատգամները:

Վազգենը պարզ գիտակցում էր և մեզ բացատրում այդ պատգամները: Վայելք կա, որ մարդուն տանում է դեպի վայրէջք, դեպի անդունդ: Վայելք էլ կա, որ մարդուն մղում է վերելքի, տանում դեպի թագի կատար: Ելքի ճանապարհը միայն իմաստությամբ է լուծվում, ոչ թե մեր թագավորներից եկած գժտություններով:

Արծվենի քթով քեզ կճանաչեն և կընդունեն որպես Հայքի արքա, բայց Հայաստանը պիտի ղեկավարես ոչ թե քթով, այլ՝ խելքով ու սրով՝ Ալեքսանդր Մակեդոնացու պես, որը Գորդյան հանգույցի խնդիրը սրով լուծեց: Տիգրան Մեծի սրարշավ հեծելախմբի նահանջն ու սրընթաց հարձակումը հաղթանակի էին հասնում հանճարեղ խելքով և իմաստությամբ:

Վազգենը զինվորագրվեց կամավոր՝ իր վրա վերցնելով զինվորի տանջանքի ու տառապանքի տիտղոսը: Ովքեր կա-

Աջից Արայիկ Խուդավերդյան, Սամսոն Աթոյան: Գերագույն խորհրդի շենքի առաջ, հացադուլ, 1988 թ.

յուն հավատով աղոթել գիտեն բարուն, համբերել ու ներել գիտեն, դրանք իմաստուն զորավարներ են:

Հակառակորդից առաջ անցնելու, մեկ օր առաջ ընկնելու համար մեկ ժամ ավել պետք է մտածել՝ ժամանակի մեջ՝ ժամանակին: Մեզ բացատրում էր օրինակներով, թե երբ գործերդ հաջող լինեն՝ դիմիր աստվածներին: Նրանք կամրապնդեն քո հաջողությունները, իսկ երբ նեղն ընկնես, աստված կբռնես միայն սրիդ դաստակը և հույսդ չդնես աստվածների վրա:

Այդպես, երիտասարդ գրող Վազգենը քայլերն ուղղեց «Գարուն» ամսագրի խմբագրատուն: Մտավ իր աշխատասենյակը, հարմարվելով աթոռին՝ նստեց: Փարթամ մարմնի կտրուկ շարժումով հենվեց ձախ ձեռքի բազկին: Մատներով շոյեց կարճ ու սև, փարթամ, գեղեցիկ մորուքը: Կանգնեց, մարմինը ձգելով՝ ձեռքերի մի քանի վարժություն կատարեց, նորից նստեց ամսագրի համար հոդված պատրաստելու՝ իր առաջին տպավորությունների մասին՝ ղարաբաղյան շարժման վերաբերյալ:

1988թ. Դավիթ Զադոյանն ու Վազգեն Սարգսյանը մեկմեկու թիկունք կանգնելով ստեղծեցին 700 հոգանոց «Արարատ» ջոկատը:

Ամուսնացած չէր, երևի պատրաստվում էր տուն-տեղ, կին-երեխա ունենալ՝ ինչպես բոլոր մահկանացուներն են անում: Բայց սկսվեց ազգային-ազատագրական պայքարը: Այս կապակցությամբ հայ ժողովուրդը հավաքվել էր օպերայի՝ Ազատության հրապարակում: Միտինգավորները վանկարկում էին՝ միացում, միացում... Ականջում դժժում էր Աշոտի շեփորի նվագը՝ «Ինչո՞ւ է աղմկում գետը» կինոնկարի երաժշտությունը, որը հայ ժողովրդին մարտակոչ էր ավետում:

Երևի մտահոգվել էր, որ ամուսնանալու ծրագիրը խախտվեց, բայց ինչու՞: Այն բանի համար, որ կնոջ մարմինը տիեզերքի խորամանկ ժպիտն է, որից գլուխ չեն հանում ոչ իրենք՝ աստվածները, ոչ էլ՝ մարդիկ: Վազգենի ներքին ձայնը թելադրում էր հետաձգել ամուսնանալու ծրագիրը:

ԵՌՅԱԿ. ԼԵՎՈՆ, ՎԱԶԳԵՆ, ՎԱՆՈ

Խորհրդային պետության առաջնորդ Գորբաչովը վերակառուցման ծրագիր առաջ քաշեց, որը երկրում անհասկանալի խառնաշփոթ առաջացրեց, որից Խորհրդային Միությունը մտավ խոր ցնցումների մեջ: 1988թ. փետրվար 28-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը մերժեց Հայաստանի հետ վերամիավորվելու ԼՂԻՄ-ի մարզխորհրդի պահանջը:

11 հոգուց ձևավորվում էր «Ղարաբաղ» կոմիտեն, առաջնորդներն էին Լևոնը, Վազգենը, Վանոն՝ 21-րդ դարի հետ-

Վանո

Լևոն

Վազգեն

խորհրդային շրջանի ամենաիմաստուն քաղաքական-պետական գործիչները:

1988թ. փետրվարի 26-29-ը Սումգայիթում հայության ջարդի ու բռնագաղթի սկիզբ դրվեց, իսկ նոյեմբերի 21-ին՝ Բաքվից հետո սկսվեց Ադրբեջանի 2-րդ հայաշատ կենտրոնի՝ Կիրովաբադի՝ հայոց հինավուրց բազմահազարանոց Գանձակ քաղաքի հայաթափումը: Ադրբեջանի վայրագությունները լայն թափ ստացան մոտ 500 հազար հայերի տեղահանման հարցում: Անհավատ, եկեղեցիներ քանդող աշխարհի հզոր Խորհրդային պետությունը, ատոմային, միջուկային հզոր զենքերի տիրակալը հայտնվեց անորոշության մեջ:

1988թ. նոյեմբերի 25-ին գորբաչովյան վարչակարգը

Երևանում և Բաքվում պարետային ժամ մտցրեց: Թնդանոթային արկի թռիչքի արագությամբ աշխարհը խծծվեց պատմական մեծ արժեք ունեցող հայտնի ցնցումների մեջ: Իսկ 1989թ. դեկտեմբերի 1-ին Երևանում կայացավ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի միացյալ նիստ, որում ընդունվեց պատմական որոշում՝ ԼՂ Հայաստանի հետ վերամիավորվելու մասին:

Հարյուր հազարավոր հայեր՝ բանվորներ, հողի մշակ գյուղացիներ ժամ առ ժամ սկսեցին միավորվել մեկ ընդհանուր գաղափարի շուրջ: Ինժեներներ, ուսուցիչներ, տնտեսագետներ, բժիշկներ, հոգեբաններ, պատմաբաններ, ակադեմիկոսներ, մեծ մտավորականներ, երաժիշտներ, մի խոսքով ողջ հայ ժողովուրդը, որի շարքերում կանգնած էին նաև ռուս, եզդի, ասորի, հույն, կազակ, էստոնացի և այլազգերի ներկայացուցիչներ՝ ոտքի ելան: Ելույթներում ամփոփում էին, պարզաբանում պատմությունը, վիճաբանում, վերլուծում հավանականությունը, իրականության մոտ ծրագրեր կազմում, օրինական դաշտում գործնական հարցեր լուծելու համար կատարում ստուգումներ:

Եվրոպայում տիրապետող բազմադարյան հզոր միապետություններն իրենց անխորտակելի են կարծում, բայց այդ արտաքին տպավորությունը խաբուսիկ է, քանի որ ամեն ինչ գտնվում է շարժման մեջ: Այդ պետություններն իրենց գոյությամբ որոշակի կապ ունեն մարդկանց ու ժողովուրդների հետ: Երբեմն իրենց ճնշող լծից ազատագրվելու անզուսպ ցանկությամբ և հինավուրց մայրամուտի խավարը հորիզոնի վրա ձևավորող պատմության անցումները և դրանց տասնյակ անունների երևան գալը և նրանց միջև ժողովուրդների շարժող ուժերի հզորության ներքո հորիզոնում ձգվող անուններ, որոնք փայլեցին պատմության մեջ իրենց տաղանդի, հանճարի, նվիրվածության ու աշխատանքի բոլոր գույներով, քաղաքականության համաշխարհային մշակույթ կերտեցին: Ինչպիսիք են Ալեքսանդր Մակեդոնացին, Հայկ Նահապետը, Տիգրան Մեծը, Նապոլեոնը, Ադոլֆ Հիտլերը, Լենինը, Ստալինը, Հաննիբալը, Սուվորովը, Պետրոս Մեծը, Գեորգի Ժուկովը, Հուլիոս Կեսարը, Կլեոպատրան, Միքելանջելոն, Լեոնարդո Դա Վինչին, Ռեմբրանդտը, Արամ Խաչատրյանը, Շեքսպիրը, Նա-

ռեկացին, Ֆիրդուսին, Բայրոնը, Գյոթեն, Վան Գոգը, Լևոն Տեր-Պետրոսյանը, Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԸ, Վանո Սիրադեղյանը: Այս եռյակը ընտրություն չէր կատարում սննդի հարցում:

- Ինչ դնեին կամ լիներ սեղանին կուտեինք՝ հաց ու պանիր, չլիներ խաշած ձու կամ ձվածեղ, մի բան կստեղծեինք, կուտեինք,- պատմում է Լևոնը:

Եռյակը՝ Լևոնը, Վազգենը, Վանոն, փայլուն աշխատանք կատարեց: Արհամարհելով դժվարությունները, զրկանքները՝ իրենց նետեցին փորձությունների ու պատերազմական գործողությունների մեջ: Կյանքի գնով համախմբվեցին և միավորեցին հայությանը՝ վերականգնելով հավատը:

Վազգենը իր սպարապետական թագը ձուլեց իր իսկ ձեռքերով, անձնվեր գործերով, հաղթաբազուկ, գեղադեմ, իր բնածին տաղանդով և մտավ մեր ժողովրդի կենսագրության մեջ, դարձավ նրա անբաժան մասը: Մեծերը նման են և կենսագրական տարբերությամբ բնորոշվում են իրենց ազգային

«Քեզ հետ ենք, Ղարաբաղ» 1988 թ.

խառնվածքով, ազգային պայմաններով, ժողովուրդների անկրկնելի հատկություններով և անհատական գործերով, նրանց մեջ ինչ-որ ընդհանուր բան կա:

«Ազատագրում» մատենաշարի գրքերում հիշատակված են բազմաթիվ խմբեր, ջոկատներ, գումարտակներ, գնդեր, զորամիավորումներ, թիկունքային այլ անհատներ, որոնք հնարավոր չէ հիշատակել ու հավասար, նույնաբաժին իրավունքով՝ նրանք մնալու են գալիք պատմության, սերունդների հիշողության մեջ:

Դրանք հայ ժողովրդի ազգային սերուցքն են, անհանգիստ հայրենասերներ, չբավարարված անցյալի կեղծ պատմությունից, սոցիալական հարաբերությունների իշխող օրենքներից, վանդակաձաղերում իրավունքի բարոյականությունից:

Պայքարի սկիզբը հայ ժողովրդի համար նրա երազանքների իրականացման բնական ձգտումն էր: Այս ամենը հրաբխի պես ժայթքեց, լավայի պես հոսեց դեպի նպատակը: Եվ Աստծո կամքով համախմբվեց հայ ժողովուրդը: Նրանցից մեկը՝ ամենաարժանավորը, Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏՆ էր, և ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի բնութագրմամբ՝ բոլոր նախարարները նրա ճկույթը չարժեին: Վազգենին է պատկանում հայտնի աֆորիզմը. «Քսանմեկերորդ դարը մերն է լինելու»:

Խաղաղ պայմաններում շատանում են գեներալները՝ յուրաքանչյուրն իր բնագավառում:

Եթե 1775 թ. Ֆրանսիայում ծավալված գյոտացիական ապստամբությունը պատմության մեջ է մտել «ալյուրի պատերազմ» անունով, ապա Ղարաբաղյան շարժումը Արցախի երկրամասի, նրա մշակույթի փրկության, ժողովրդի անկախության, ազատության ազգային-ազատագրական շարժում էր:

Երիտասարդ Ալեքսանդր Մակեդոնացին արևմուտքից հասավ արևելք՝ ընդարձակելով հարավը, հյուսիսը, նվաճեց աշխարհի կեսը, ուզեց միավորել ժողովուրդներին՝ մի ընդհանուր կյանքով ապրելու ցանկությամբ:

Միջերկրական ծովում կորած մի փոքրիկ կղզու՝ Կորսիկայի Այաչո քաղաքում 1769թ. օգոստոսի 15-ին ծնված Նապոլեոն Բոնապարտն էլ ցանկացավ Եվրոպան միավորել մեկ ընդհանուր քաղաքակրթության մեջ:

Ֆրիդրիխ Շիլլերը զինվորական բժիշկ էր, գրեց «Ավազակ-

ներ»-ը, որի պրեմիերայից ոչ շատ առաջ լրացել էր նրա 22 տարին: 1782թ. հունվարի 13-ից հետո Ֆրիդրիխ Շիլլերի անունը դարձավ ամենահռչակավոր անուններից մեկը: Մի երեկոյի ընթացքում նա նվաճեց աշխարհը:

Եռյակը, ուսումնասիրելով անցյալի պատմությունը, հանդես եկավ նոր գաղափարախոսություններով՝ Վանո Սիրադեղյանը «Ձեռքդ ետ տար ցավի վրայից», Լևոն Տեր-Պետրոսյանը «Պատերազմ, խաղաղություն» գրքերով:

Վազգեն Սարգսյանը հրատարակեց «Հացի փորձություն» գիրքը, նվաճեց շրջապատին այդ ուժով, հավատով, ինչպես Հակոբ Մովսեսն է ձևակերպել գրչակից ընկերոջ երեք հատկությունները: Առաջինը՝ քաղցր արյուն է, երկրորդը՝ արագ ընկալում, երրորդը՝ հաղթանակին հասնելու հաստատակամությունը:

Գրող Վազգեն Սարգսյանը (աջից առաջինը) կինոնկարահանման ժամանակ

Մի փոքր շտապելով՝ ասենք, որ 1991թ. փետրվարի 14-ին Մուշեղ Մխեյանը (Վոժդ), Սմբատ Հակոբյանը, Վազգեն Սարգսյանը, Մանվել Գրիգորյանը՝ ուս ուսի տված, քաղաքացիական հագուստով պարում էին ավտոմատները օդում թափահարելով: Սասնա պարը պարեցին, դեմ-դիմաց պարում էին, գնում, հետ-առաջ գալիս, ձեռքերով զարնվում իրար, պարում էին խենթացած:

Դա պայքարի ու ազատության, հաղթանակի ու անկախության պարն էր:

Այդ նույն պարը պարեց զինվորական-ֆիդայական համազգեստով և իրենց սեփական նախաձեռնությամբ սովորեցնում էին մեր ազգային երգն ու պարը:

Եթե չլիներ Ղարաբաղյան շարժումը, ապա ազգերի ինքնորոշման գաղափարը, հարկավ, խիստ կոտնահարվեր: Հայ ժողովուրդը առաջինն է պետականորեն ընդունել քրիստոնեությունը: Նա էլ պիտի համամարդկային ինքնորոշման, ազատության, ազատ ապրելու իրավունքների խաչը կրի, իր պայքարի արգասիքով ապրի:

Տղաներով մտանք «Գարուն» ամսագրի խմբագրություն: Այստեղ էին բանաստեղծ-թարգմանիչ Հակոբ Մովսեսը, գրող Մերուժան Տեր-Գուլանյանը, գրող-հրապարակախոս Վազգեն Սարգսյանը:

- Հ՛ը, տղաներ, ի՞նչ կա,- մեզ դիմեց Հակոբ Մովսեսը:

- Վեր կացեք, հայ ժողովուրդը կանչում է,- բացականչեցինք միաձայն:

Օպերայի Ազատության հրապարակում բռունցքվում էր վանկարկվող մի-ա-ցու-մը...

Բազմահազարանոց ձայները խտանում էին, հզորանում և փոթորկի մոլեգնությամբ հուժկու օդը ծեղքելով, պատեպատ զարնվելով, ծառերի կատարներին ծվարած թռչուններին թևաթափ անելով, դուռ-լուսամուտ ծեծելով, տուն ու երդիկ ելումուտ անելով՝ սավառնում էին՝ կանչելով համայն հայությանը՝ քնած թե արթուն, ահել թե ջահել, գործարաններից, ֆաբրիկաներից, ուսումնական հաստատություններից հավաքվել օպերայի հրապարակում:

Դա ազգային կանչ էր, տագնապ, ազատության ու անկախության հասնելու հրավեր: 1988թ. գարնանամուտն էր:

Այս համաժողովրդական հուժկու ալիքի ձայնը նեղլիկ լուսամուտից ներս սողոսկեց, սպիտակ թղթի վրա գրիչը դանդաղ սահելով հասավ Արցախ բառին:

Ի՞նչ էր գրում երիտասարդ գրողը, ով եկել էր կինոնկարահանումից: Նա գրում էր, որ կկարողանա՞ր ապագա կերտել, ամուսնանալ, տուն ու տեղ դնել, երեխա ունենալ, իմաստունների հետ նստել-վերկենալ, գրքեր գրել, ապրե՞լ, ինչպես ապրում են մարդիկ, թե՞ մարդկության համար նոր կյանքի ուղի հարթել:

20-րդ դարի մայրամուտը այդ խառնափնթոր անցումներով սահում, տրվում էր 21-րդ դարի արշալույսին՝ հայ ժողովրդին ձգելով անկախության, ազատության համար մղվող պայքարի հորձանուտը: Ադրբեջանի կողմից պարտադրված պատերազմը հիշեցնում է մեծ փիլիսոփա Ալեքսանդր Մակեդոնացու դաստիարակ-ուսուցիչ Արիստոտելի խոսքերը. «Միայն պատերազմի հետևանքով կարելի է որոշել, թե որ ժողովուրդն է

Վազգեն Սպարապետը՝ հավատարիմ ապագային

բարձրագույն, որը՝ ստորագույն: Բարձրագույն ժողովուրդը հաղթող ժողովուրդն է»:

Վազգենը գրեց վերջին բառը, ձայն տվեց Հակոբ Մովսեսին: Աշխատասենյակի դռները փակեցին ու դուրս եկան փողոց, քայլերն ուղղեցին օպերայի՝ Ազատության հրապարակ:

Թուրքերն ամբողջ պատմության մեջ անցել են բռնության, թալանի, կողոպուտի արյունոտ ճանապարհով, ավերել քաղաքներ, հրկիզել գյուղեր, ավերելով մշակույթ ու քաղաքակրթություն, հատկապես մասսայաբար ոչնչացնելով ժողովուրդների (հայեր, բուլղարներ, հույներ, մակեդոնացիներ, ասորիներ, քրդեր)՝ ցանկանալով հասնել մինչև Հայաստանի բուն մայրաքաղաք Երևանը՝ ուղի հարթելով դեպի Միջին Ասիա:

Եվ այսպես, եռյակը՝ ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, ՀՀ ՆԳ նախարար Վանո Սիրադեղյանը, ՀՀՊ նախարար Վազգեն Սարգսյանը ուս ուսի տված հայ ազատամարտիկներին առողջ բանականությամբ առաջնորդում էին դեպի հարկադրված պատերազմի հաղթանակը:

Վազգեն Սարգսյանի անվան հետ կապված չէին որևէ նոր զենքի կիրառությունը կամ պատերազմելու տեսական նոր մարտավարությունը: Ամենից առաջ նա այն գործնական զորավարներից էր, որ կարողանում էր, ըստ էության, օգտվել նույնիսկ հաջողության հասնելու ամենաչնչին հնարավորությունից:

Վազգեն Սարգսյանին հաջողվում էր կերտել հայոց բանակի մարտական պատրաստությունը՝ շնորհիվ ենթակաների հմուտ ղեկավարման, հրամանատարների ճիշտ ընտրության և արդյունավետ վերահսկման: Նրա ռազմավարությունը հիմնված էր թշնամու համար արագ ու անսպասելի գործողությունների վրա, միաժամանակ գիտակ էր պաշտպանվելու և խուսանավելու արվեստին: Գեներալի և զինվորի միջև տարբերություն չէր դնում:

Հիմնական ջոկատների փոխհամագործակցությունն այնպես էր կազմակերպում, որ նրանցից ամեն մեկը հնարավորություն ունենար Ծամշադին, Նոյեմբերյան, Մեղրի, Արցախ կամ Ծահումյան տեղափոխություն կատարել և ինքնուրույն գործել: Հետագայում դրանք զարգանալով և, միաժամանակ

բարդանալով՝ գնդերի, զորամիավորումների էին վերածվում: Այնպիսի մարդկանց էր հրամանատարներ նշանակում, որոնք ունեին հեղինակություն, նրանց անձնական քաջությունն ու հեղինակությունը ոգևորում էին զինվորներին, ազատամարտիկներին:

Չչափազանցնենք, 7 միլիոն բնակչություն ունեցող Ադրբեջանը պատերազմում էր 3 միլիոնանոց Հայաստանի դեմ, որին գումարվեց երկրաշարժը, որը նիզակի պես խրվեց Հայաստանի թիկունքին: Բերենք օրինակ, որ զորքի քանակը չէ, որ որոշում է հաղթանակը, այլ հրամանատարի հեղինակությունն ու մարտավարությունը, նրան կազմակերպչական ունակությունները: Ուժեղ բանակը դաժան չի լինում: Օրինակ, հռոմեական բանակը կազմված էր 80.000 հետևազորից և 6.000 հեծելազորից, Հաննիբալինը՝ 40.000 հետևազորից, 10.000 հեծելազորից, հաղթեց Հաննիբալը՝ Կարթագենի առաջնորդը:

Վազգեն Սարգսյանը շրջապատված էր խորհրդային բանակի բարձրաստիճան սպաներով, գեներալներով ու գնդապետներով, որոնք նվիրված ու մեծ ոգևորությամբ կատարում էին նրա հրամանները, կարգադրություններն ու ցուցումները: Նա ոչ միայն դաշտային հրամանատար էր, այլև զինված ուժերի շտաբային հմուտ ղեկավար ու կազմակերպիչ:

ՀՀ և ՌԴ Պաշտպանության նախարարներ Վազգեն Սարգսյանը և Պավել Գրաչովը. 1996 թ. Հվարթնոց

Իր վերադասի բոլոր ծրագրերը, պարզ հրամանները վերլուծելու և ծակատամարտերի թեժ պահերին մարտավարական ճշգրտումներ մտցնելու եզակի ընդունակությունները զարմացնում էին ռազմական շատ վերլուծաբաններին:

Հեշտ չէր նոր ձևավորվող հայկական բանակի մատակարարումը և սպառազինումը ղեկավարել ու հասնել հաղթանակի: Շտաբի աշխատանքների ծրագրման, զորքերի գործողությունների փոխհամաձայնության, բանակի մատակարարման, սուրհանդակային կապի, առաջին բուժօգնության անխափան իրականացման ասպարեզում նրա գործունեությունը օրինակ էր բոլոր հրամանատարների համար, բոլոր օղակներում:

Նպատակներին հասնելու նրա համառությունը էական նշանակություն ուներ ազատամարտիկներին կամային հատկանիշներով դաստիարակելու համար: Ականատես լինելով նրա եռանդին, որոշումներ կայացնելու համարձակությանը, յուրաքանչյուր սկսած գործ մինչև վերջ հասցնելու հաստատակամությանը, նրա համառությանը և աշխատասիրությանը՝ ազատամարտիկները փորձում էին ընդօրինակել, հավատարիմ մնալ տված խոսքին ու երդմանը:

Հայրենիքի ապագա զինվորներին բնորոշ ու անհրաժեշտ այլ դրական հատկանիշների հետ նա լավ տիրապետում էր զինվորական օրենսդրության հիմունքներին, կարողանում էր ունեցած գիտելիքները կապել մարտական գործողությունների հետ, ցույց տալ, որ զինվորի ռազմական թույլ գիտելիքները, ինչպես նաև պարտականությունների թերի ու անփույթ կատարելը կամ միտումնավոր չկատարելը հանգեցնում է քրեական խիստ պատասխանատվության:

Նրա սպարապետական հատկությունները կայանում էին նրանում, որ առավելագույնս օգտագործելով իր անձնական հատկանիշները, առանձնահատկություններն ու վարպետությունը՝ նա հիմնվում էր մարդու բանականության վրա: Իմաստությամբ կարողանում էր լրիվ արդյունավետ օգտագործել

մարտ վարելու և հաղթանակի հասնելու հնարավորությունները:

Նա անհատ էր, ուներ տեսական պատրաստության բարձր մակարդակ և տարաբնույթ միջոցների կիրառման կարողություն: Հնարքների ցուցադրումով կամ գործողության կատարումով շրջապատի նկատմամբ հասնում էր առավելագույնի, որը շատ մեծ նշանակություն ուներ զինվորների համար:

Աչքի էր ընկնում գիտելիքների բարձր մակարդակով, լավ մասնագետ լինելով: Ուներ բանավոր խոսքի բարձր կուլտուրա և այն անընդհատ կատարելագործում էր: Նրա հրամանատարական լեզուն ամենից առաջ գրականն էր՝ լակոնիկ, համառոտ և շատ պարզ: Վայելչակազմ, թիկնեղ, գեղագանգուր, փարթամ մազ ու մորուքով, բոցաշունչ աչքերով, բազկի ուժով քաջ ու արժանավոր արժանավորների մեջ:

Հետագայում նա պիտի ասեր. «Մենք պատրաստ ենք մերանի, հաշտեցնողի դեր խաղալ, պատերազմի և խաղաղության արանքում ձգտել բարի աշխատանք կատարել»: Հայոց ցեղասպանության մրմուռը ներսում պիտի հիշեր, որ 1914

Վազգեն Սարգսյանը «Գարուն» ամսագրի աշխատակիցների հետ իր տանը, 1987 թ. Այս տանը հիմա ապրում է Սպարապետի եղբայր Արամ Սարգսյանը

թվականի Կոստանդնուպոլսում 600 հայ մտավորական ձերբակալեցին, Ադանայում 25 հազար հայ կոտորեցին: 2 միլիոն հայ մորթեցին: Անատոլիան պատմական Հայաստանն էր, որը 1916թ ոչնչացվեց: Թեկուզ 1918թ-ին Թուրքիան պարտվեց, Մուդուսի պայմանագրով ջարդարար երիտթուրքերը մահվան դատապարտվեցին: «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը պարտվեց: Հայերի ցավը չբուժվեց: Այս է պատճառը, որ հայ ժողովուրդը հավաքվում էր Օպերայի ազատության հրապարակում:

Սամվել Այվազյանը Կարո Տերտերյանի հետ, Սուրբ Նշան սրբավայրում, ուր Վազգեն Սպարապետը իր ջոկատով երդման արարողություն է կատարել, 1988թ նոյեմբերի 15-ին:

ՀԱՅ ԴՅՈՒՑԱԶՈՒՆՆԵՐ

Խորհրդային Միության փլուզման ընթացքում, ազատատենչ Արցախին իր տիրապետության, իր ճիրաններում պահելու, խեղդելու համար Ադրբեջանը լկտիաբար 913 կմ ճակատով լայնածավալ հարձակում կազմակերպեց Հայաստանի վրա: Ոմբակոծում էին բնակավայրերը, շինությունները, օբյեկտները, գողանում էին անասուններին, հովիվներին, խաղաղ աշխատող մարդկանց և գազանաբար սպանում, վառում էին, հետո մոխրացած դիակները կամ մարմնի մասերը ծախում, փոխանակում, առևտուր անում զոհերի հարազատների

Հարություն Մուրադյան՝ Գոլյան, Արտակ Կարապետյան՝ Լեռնային Արծիվ, Գեղազնիկ Միքայելյան՝ Չաուշ, 1990թ. Կոռնիձոր

Վոժդ

հետ, որոնք քրիստոնեական սրբությամբ ստիպված էին գնալ նման գործարքների:

Արտակը ընդգրկվում է ղարաբաղյան շարժման մեջ, մասնակցում ցույցերին, երթերին, գործադուլներին, միտինգներին, աչքի է ընկնում ակտիվությամբ, ձեռք է բերում վստահություն: Պայքարի առաջին փորձությունն ստանում է Ադրբեջանից Նախիջևանով Հայաստան մտնող բեռնատար ավտոմեքենաների ստուգումների ժամանակ, երբ փորձ էր արվում Հայաստան տեղափոխել փչացած, թունավորված մրգեր, կանաչեղեն և այլ սննդամթերք: Արտակն իր խմբով կազմակերպում է այդ թունավոր պարենամթերքի բացահայտման և ոչնչացման աշխատանքները, վառում, հրկիզում կամ թաղում հողում:

Բոլշևիկների կողմից հալածված Հորավար Սմբատը՝ Մախ-

Չախից՝ անկախության ջահակիր Մովսես Գորգիսյան, Երևան, 1989 թ

լուտոն, մահից առաջ Կոմիտասի այգում մի կապոց է թաքցնում: Բյուրականցի Կարապետյան Արտակի Պետրոս պապի հորեղբոր որդին՝ Թովմասը, ով աշխատում էր այգու հրածգարանում, ծառատունկի ժամանակ գտնում է կապոցը և տանում Բյուրականի իրենց տան սալահատակների տակ հորում: Այս ամենի մասին Պետրոս պապը պատմում է 15 տարեկան Արտակին:

Արտակը, լսելով այս բոլորը, շտապում է հայրենի գյուղ՝ Բյուրական, իր մանկական ընկերների՝ Խաչիկ Թորոսյանի, Նվեր Փիլիպոսյանի հետ, իրենց հին տան (պապի պատմածով), սալահատակները շուռումուռ են տալիս, փորում հողը, գտնում մոմակալած կտավե կապոցը, որի մեջ կար զենք, զինամթերք, և դժվարությամբ կարդացվող մի գրություն, որում գրված էր, որ մոսինը Սմբատ Զորավարինն էր՝ Մախլուտոյինը, մոսին աբրեզը (փողից կտրված էր, որ ձիու վրայից հեշտ լիներ կրակելը)՝ Արաբոյինն էր: Կար նաև բիրդանկա, որը չիմացվեց ումն էր, քանի որ չկարողացան կարդալ գրությունը:

Ազատություն «Ղարաբաղ» կոմիտեին, 1989 թ.
Առջևից ընթանում է Արտակ Կարապետյանը՝ Լեռնային արծիվ

Զենքերը ժանգոտած էին, ցեցը կերած: Տղաներով մաքրեցին, յուղեցին, եկան Ազատության հրապարակ: Այստեղ հայտարարվեց, որ ադրբեջանական Ջիջիմլի գյուղից կրակ էին բացել Կոռնիձորի գյուղի վրա և կոռնիձորցիներին օգնություն է անհրաժեշտ: Յոթ տղաներով անմիջապես դադարեցրին նստացույցը և մեկնեցին Կոռնիձոր: Նրանք էին.

Հարություն Մկրտիչի Մուրադյան՝ Գդլյան (մականունը կնքել են Կոռնիձորում),

Արտակ Նիկոլայի Օհանյան՝ Գուսան (մականունը կնքել է Արտակը Կոռնիձորում),

«Մեծն Տիգրան» աշխարհազորային գնդի հիմանադիր Սերյան Գուրգենի Մաթևոսյան (կենտրոնում կանգնած), Կորյուն Ղումաշյան, Խաչիկ Գալստյան,
նստած աջից՝ Լևոն Միսակյան, Գուսան, Տեր Տիրայր, ձախից՝ Ամարասի Արթուր,
ձախից 6-րդը՝ հրամանատար Արմենակ Արմենակյան, 1990 թ. մարտից առաջ

Մարտին Զաքարի Ղազարյան՝ Ապարան,

Արա Վարուժանի Խուդավերդյան՝ Կոռնիձորի Արո (մականունը կնքել են Կոռնիձորում),

Կարեն Մելիքբեկյան՝ մոլոկան (մականունը կնքել են Կոռնիձորում),

Արտակ Բաբկենի Կարապետյան՝ Լեռնային արծիվ (մականունը կնքել է Վազգեն Սպարապետը),

Աշոտ Ավետյան՝ Արաբո (փոքր Ջոն) (մականունը կնքել են Կոռնիձորում):

Կոռնիձոր եկան նաև Գեղազնիկ Միքայելյանը՝ Չաուշը, որի մականունը կնքեց տողերիս հեղինակը, Հովհաննես Պողոսյանը՝ Ծարքային Պողոսյանը, «Մալաթիա» ջոկատի հրամանատար Վահան Զատիկյանը, Հակոբ Հակոբյանը՝ Լիդերը, Նվերը, Նորիկը, Տիգրանը՝ Տիկոն, զինագործ Ռուբոն, Արջ Աշոտը, Խաչատրյան Սամվելը՝ Ղժղժը, Լալայան Գեղամը, Արթուրը, Սամվելը, Սարգիսը, Արսենը, Արմենը, Ալիկը, Կորյունը, Կառան, Սամսոնը, Ծռամը և Արտակի եղբայրներ Գոռը, Ատոմը, քեռորդի Գնել Նազարյանը, Ծերուկ Գագոն, Արտաշատի ջոկատի

«Չաուշ» ջոկատ, հրամանատար՝ Գեղազնիկ Միքայելյան (կքանստած աջից երկրորդը) Կոռնիձոր, 1990 թ.

Զավենը, Սոսը, Մանվել Կարապետյանը, Կոռնիձորի Արոյի եղբայր Անդրանիկը և այլ հայորդիներ, ովքեր իրենց կազմակերպած առաձին ջոկատներով միասնական ձակատով հերոսաբար մասնակցեցին Հայաստանի սահմանների ինքնապաշտպանությանը և Արցախի յոթ շրջանների ազատագրմանը:

Յոթ դյուցազունները գործում էին հստակ, վճռական, գրագետ, ցանկացած իրավիճակում յուրաքանչյուրն իրեն զգում էր գլխավոր հրամանատար: Նրանք շատ անգամ հենվելով իրենց ընդունակությունների վրա ինքնուրույն աշխատում էին զարգացնել և լուծել գոյություն ունեցող ընդհանուր խնդիրները՝ հավատարիմ մնալով իրենց սկզբունքներին, վստահելով միմյանց, որոնց հոգում եռում էր հայոց պատմությունը՝ մեր նախնիների տառապանքը, կոտորածը, փրկված մարդկանց սրտի խոսքը, արցունքի կաթիները, որ արթնացումի են բերում յուրաքանչյուր հայի, լցնում վրեժի ցասումով, դարձնում ամրակուռ, հավատի ուժով մարդուն օժտում կռվելու ընդունակությամբ, թշնամուն դիմադրելու կարողությամբ, բռնակալական շղթաները պատառոտելու պատրաստակամությամբ, ազատություն նվաճելու անհրաժեշտությամբ:

Մուշեղ Մխեյան՝ Վոժդ, Սամվել Գևորգյան, Վազգեն Սպարապետ

Աստված օգնում է ուժեղին, որ հզորանա, իսկ թույլին ոգևորում՝ ասելով հույսդ դիր բազկիդ և սրիդ վրա:

Կոռնիձորում միտինգ կազմամակերպելուց հետո տղաներն ինձ տեսան, ուրախացան ու ոգևորվեցին, եղան ծանաչողներ: Չաուշն էր: Մոտեցավ ինձ և ասաց.

- Կոմանդիր, ինձ չե՞ս ծանաչում...

Տեղյակ պահելով գյուղի մի-

տինգի, գյուղապետի հետ ունեցած իմ խոսակցության, իրավիճակի վերաբերյալ ժողովրդի դիրքորոշման մասին, համաձայնեցինք, որ յուրաքանչյուրս պարտավոր ենք համխմբված մասնակցել ՀՀ սահմանների ինքնապաշտպանության և Արցախի գոյատևման, ինքնորոշման գործին:

Զենքերը՝ Արաբոյի Աբրեզ (մոսին), Սմբատ Զորավարի՝ Մախլուտոյի մոսինը, բիբդանկան դրեցին սեղանին, հավաքվեցինք շուրջ 25 հոգի և երդվեցինք:

Տեքստը մոտավորապես հետևյալն էր.

«Անառիկ պահել Հայաստանի սահմանները: Հակահարված տալ ոտնձգություններին, սատար կանգնել Արցախի ժողովրդի ինքնորոշմանը: Ենթարկվել ՀՀ օրենքներին: Անվերապահորեն կատարել նրա պահանջները: Ենթարկվել հրամանատարներին, կատարել Կանոնադրության պահանջները, լինել հավատարիմ, պահպանել ռազմական գաղ- տնիքը:

Գուսանը, Կառան, Մանվելը մարտից առաջ, 1992 թ.

Եթե դրժենք երդումը, թող պատժվենք օրենքի ամբողջ խստությամբ»:

Արտակը մեզանից ամենա հավատավորն էր: Նա խաչակնքեց և «Հայր մերը» ասելով, կրկնեց ֆիդայապետ Արաբոյի խոսքերը.

- Զենքը գրավել թշնամիեն և զայն ուղղել անոր կրծքին,- ապա ավելացրեց,- բարձը քարն է լինելու, զենքը իմ կինս: Աստված մեզ զորավիգ,- ու նայեց Զաուշին:

Արա Խուդավերդյանը ավելացրեց Նիկոլ Դումանի խոսքերը.

- Մի ազգ, եթե ուզում է մնալ հարգված, եթե չի ուզում կորչել, միշտ պետք է լինի կազմ ու պատրաստ ինքնապաշտպանության համար մանավանդ քաղաքական ցնցումների պահերին:

Այդ ժամանակ կապավորը ձայնեց Արտակին, բայց պատասխանեց Արտակ Օհանյանը, սակայն կապավորը ծածկանունով պահանջեց «Իվանովին»: Արտակ Կարապետյանը կապավորի զեկույցը ընդունելուց հետո սուսերով խաչը մոտեցրեց Արտակ Օհանյանին և ասաց՝ այսօրվանից ընդունել մարտական անունդ՝ Գուսան: Ինչու՞ Գուսան. նա երգում էր, ուներ քաղցր, մեղեդային ձայն և ունկնդիրներին գերելու ունակություն:

Գուսանը սիրով ընդունեց անունը և երգեց Կոռնիձորի կտրիչների մասին իր հորինած երգը: Նա 1993 թ. հերոսաբար զոհվեց Ղուբաթլուի մարտերում՝ իր վերջին գնդակն ուղղելով ինքն իր սրտին:

Ձախից՝ Գրիգոր Ավետիսյան, Գոռ Կարապետյան, Գնել Նազարյան մարտից առաջ, Կոռնիձոր 1989 թ

...Սհա այսպեն են զոհվում ազատամարտիկները...

Գեղազնիկ Միքայելյանը՝ Չաուշը, մոսին հրացանը սեղմեց կրծքին, ընդունեց հանդիսավոր զգաստ դիրք, արտասանեց սևքարեցի Սաքոյի խոսքերը.

- Երդվում եմ կյանքս ու հոգիս զոհել հայրենիքիս ազատություն սուրբ գործի:

Փարթամ բեղերը ոլորեց, զենքը համբուրեց ու քաշվեց մի կողմ՝ կիսաձայն ասելով. «Թուրքի գնդակը ինձ չի դիպչի» և 1990թ. օգոստոսի 20-ին Վիտյա Այվազյանի հետ զոհվեց Երևանում՝ դավադիր գնդակից, Հանրապատության հրապարակի մոտ, «Էրեբունի» հյուրանոցի դիմաց սև տուֆակերտ շենքում տեղակայված ՀԱԲ-ի շտաբում՝ բանակցություններ ժամանակ:

Հարութ Մուրադյանը՝ Գդյանը աշխուժորեն առաջ եկավ, ձեռքերի մեջ առավ զենքը և ասաց.

- Ես պիտի պաշտպանեմ իմ հայրենիքը:

Մարտին Ղազարյանը, Ապարանցի Կարենը, Մոլոկանը, Աշոտը՝ Արաբոն, Սոսը պահակակետից գալով ներս մտան: Սոսը Մախլուտոյի զենքը ձեռքին ասաց.

Ազատություն «Ղարաբաղ» կոմիտեին, 1989 թ.

- Ճշմարիտ խոսքից վախեցողը ստրուկ է: Եղբայրներ, այս զենքով հասնելու ենք բաղձալի հաղթանակի: ՄԱԿ-ի կանոնադրությունում էլ հստակ ամրագրված է, որ յուրաքանչյուր պետություն ունի ինքնորոշվելու իրավունք:

Կարենը՝ մոլոկանը, Ծարքային Պողոսյանը, Գևորգ Պետրոսյանը՝ Գոգան, Կապանի Կարինեն, Սամվել Սաֆարյանը երդվեցին՝ ասելով. արդար է մեր գործը, թշնամին ծնկի է գալու:

Արա Խուդավերդյանը, հատուկ իր հրամայական կեցվածքին, գոչեց՝ Հանուն հայրենիքի պետք է ողջ և առողջ մնալ, հաղթելու ենք»:

Տողերիս հեղինակը կարդաց Գարեգին Նժդեհի խոսքերը. «Քանի դեռ սուրն է կառավարում աշխարհը, ձիթենու ճյուղով զինված լինելը ծիծաղելի է և անմտություն: Ուժն է ծնում իրավունք: Ուժեղինն է աշխարհը, հայրենիքը, ազատությունը, ամեն ինչ... Ուզում ես փրկել հայրենիքդ՝ եղիր ուժեղ, քանզի թույլերը բարեկամ չունեն աշխարհում: Իսկ ուժիդ ազատություն տալու համար ցույց տուր երկու բան՝ առաջինը, որ գիտես մեռնել գիտակցված իմաստալից մահով, երկրորդը, որ գիտես մեռնել»:

Արտակ Կարապետյանի կազմավորած «Հավան Հովակիմյան» ջոկատ, հրամանատար՝ Մարտին Ղազարյան, Սիսիանի շրջան, Գոռհայկ 1993 թ.

Երդումից հետո ազատամարտիկները գոտեպնդվեցին, ուժեղացրին ծառայությունը խրամատներում, պահակային դիրքերում: Արա Խուդավերդյանը և Արտակ Կարապետյանը համալրում էին ջոկատը՝ հասցնելով այն 87 հոգու: Ես վերադարձա Չարենցավան՝ արկեր նռնակներ բերելու:

1993 թվականի սեպտեմբերի 15-ին ծանր վիրավորված Արտակ Կարապետյանին Սեյրան Մաթևոսյանի առաջարկով տեղափոխեցին Մոսկվա՝ բուժման: Թիկունքին ամուր ապահովող և ճակատին օժանդակող Կարապետ, Արամ և Մուշեղ Ալեքսանյան եղբայրների և Արամ Հակոբյանի մեծ հայրենասերների անմիջական նախաձեռնությամբ ցուցաբերած օգնության շնորհիվ կողացան ֆիդայիների շարքին պատկանող թիվ մեկ ֆիդայուն դուրս բերել մահվան ճիրաններից: Վարդան Ավդալյանը ընդգրկվեց ջոկատի կազմում և մինչ օրս Արտակի անբաժան ընկերն է: Մինչ այդ ազգի ընտրյալներ Աշոտ Նավասարդյանը, Ազատ Արշակյանը, Մովսես Գորգիսյանը, որոնք ականատես և մասնակից են եղել յոթնյակի մարտական գործողություններին, Արտակենց տանը սեղմեցին Գուսանի, Հարութի, Մարտինի ձեռքերը, իսկ ՀՀ Ազգային հերոս Մովսես Գորգիսյանը ոգևորված գոչեց.

Ռազմաճակատին զենք ու զինամթերք ապահովող Մուշեղ Ալեքսանյանը աջակցել է Արտակ Կարապետյանի բուժմանը, Մոսկվա, 1994 թ.

Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏ

«Մալաթիա» ջոկատի հրամանատար Վահան Չատիկյան

«Մալաթիա» ջոկատի փոխհրամանատար Հակոբ Հակոբյան՝ Լիդեր

- Արտակ, հայ ազգը գալիս է իմ հետևից, ես ձեր հետևից ուր ասեք կգամ:

Գեղազնիկ Միքայելյանը՝ Չաուշը, մի առիթով ասել է՝ Արտակի անունը քաղցր է ինձ համար:

Իսկ Վոդժը Արտակին «մեր մաքուր ախպեր» էր ասում:

Վահան Չատիկյանը խորհրդակցության ժամանակ գոչեց.

- Արտակ, մեր կատարած գործերի փառքը կշարունակվի դարերով, սերունդները կվայելեն:

Հակոբ Հակոբյանն էլ ավելացրել է.

- Առաջատար մարտիկներից Արտակ ա մեր ախպերը:

Իսկ Ալիկ Պետրոսյանը լրացնում է.

- Արտակն իր գործերը ժառանգում է ընկերներին:

Արտակը վիրավոր էր, հայրը՝ վարպետ Բաբկենը, վաղաժամ մահանում է: Մարտադաշտից Արտակի եղբայրներ Գոռն ու Ատոմը վերադառնում են և մարտական ընկերներով կազմակերպում հուղարկավորությունը:

Մի անգամ երբ Արտակ Կարապետյանը Սպարապետին դիմեց «պարոն նախարար», Վազգեն Սպարապետն ասաց.

- Արտակ, ինձ մի նեղացրու, մենք ախպերներ ենք, ես նույն Վազգենն եմ:

«ՇՈՒՍՄ»
ՋՈԿԱՏԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1988թ. փետրվարի 20-ին գերեվարված Ղարաբաղի կանչով Հայաստանի տարբեր անկյուններից հայ ժողովուրդը գարնան անձրևներից առաջացած առվակների պես հոսեց օպերայի Ազատության հրապարակ: Բազմահազարանոց լեփ-լեցուն հրապարակում ասեղ գցելու տեղ չկար: Ժողովուրդն

Ձախից՝ Արմեն Բաբայան՝ Ծռամ, նստացույց 1988 թ.

ալեկոծվում էր, փոթորկվում: Հացը, ջուրը, պանիրը մարդկանց բաժանվում էր հավասար, մինչև վերջին պատառը: Առաջին բուժօգնության ավտոմեքենաները՝ կազմ ու պատրաստ սպասում էին: Այդ սիրո և հարգանքի շնորհիվ ներողամիտ էին, բարի, հոգեհարազատ: Մեծ հարգանք ու սեր կար իրար նկատմամբ: Միասնության, անձնվիրության շնորհիվ կես խոսքից հասկանում էին իրար: Գեղեցիկ այդ շարժումը համազգային բնույթ ուներ: Չարից դեպի բարին. դա էր ճշմարտությունը, որ թուրքերը չունեն: Միտինգը վարում էր Իգոր Մուրադյանը, նրա օգնականներն էին Գագիկ Սաֆարյանը, Մանվել Սարգսյանը:

Ասենք, որ այդ նույն օրը Ստեփանակերտում Մարզային խորհուրդն ընդունեց Ադրբեջանից անջատվելու և մայր հայրենիքին՝ Հայաստանին, վերամիավորվելու որոշումը:

Իգոր Մուրադյանը մեգաֆոնով բացատրում էր, որ ութ օր առաջ՝ փետրվարի 12-ին, Ստեփանակերտում տեղի է ունեցել ժողովրդական առաջին զանգվածային ցույցը՝ ԼՂԻՄ-ը Հայաստանին վերամիավորելու պահանջով (որը մեկ տարի հետո՝ 1992թ.փետրվարի 12-ին, ԼՂՀ Գերագույն խորհուրդը կհայտարարի վերածննդի օր):

Իգոր Մուրադյանը բացատրում էր այդ որոշումը՝ Հայաստանի Գերագույն խորհրդից պահանջելով գումարել սեսիա՝ կատարված պատմական սխալը շտկելու կապակցությամբ, ինչպես ասել ենք, 1921թ. առանց հայերի ներկայության, Ստալինը, Լենինը Քեմալ Աթաթուրքի հետ միասին Նախիջևանը և Արցախը բռնի կերպով հանձնեցին Աթաթուրքի ստեղծած Ադրբեջանական հանրապետությանը:

70 տարվա ընթացքում Ադրբեջանը հայաթափեց Նախիջևանը: Արցախին էլ նույն ճակատագիրն էր սպասում: Եվ ոտքի է կանգնում Արցախի ողջ հայությունը:

Աշխարհի առաջադեմ մարդկությունը իր ուշադրությունն է բևեռում Արցախյան թնջուկի վրա: Հայ ժողովուրդը պայքարում էր ընդդեմ թուրք բռնակալության և բարբարոսության, այդ անհավասար պայքարը լուրջ բնույթ էր կրում:

Ժողովուրդը գոռում-գոչում էր՝ Լենի՛ն, պարտի՛ա, Գորբաչո՛վ, վանկարկելով «Ղա-րա-բաղ», «մի-ա-ցում»: Եվ այդ հողմաշառաչ դղրդյունի ալիքի թափը ծնեց ինը համարձակ երի-

տասարդ տղաներ, որոնք հայտարարեցին նստացույց՝ ի բողոք անարդարության:

Ռոամը ձևավորում է Կոռնիձոր մեկնելու խումբը, 1988 թ.

Նստացույցի ընթացքում ծանոթանալով, ճանաչելով միմյանց, իրար անվանակոչելու համար ընտրեցին մականուններ՝ Արմեն Բաբայանը՝ «Ռոամ», որի երեսին կար շռամ, հետագայում ջոկատը կոչվեց «Ռոամ», Մուշեղ Մխոյանը՝ «Վոժդ», Կորյուն Ղումաշյանը, Արտակ Կարապետյանը՝ «Բյուրականցի Արտակ», Արտաշատցի Սոս, Գդլյան Հարութը, գուսան Արտակ, «Արջ Աշոտ», «Կուզիկ Բաբո», «Չելենտանո Արթուր», «Չելավեկ Մրդո», «Սևո Արմեն», Կապանի և Զաբուխի Կառաներ, Աբովյանի Էրիկ, Քանաքեռի Ֆրունզ, «Քառասունհազար Ռաֆո»:

Նստացույցին միացավ Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի Միշան, որը տղաներին բացատրում էր գյուղի սահմանամոտ լինելը և ազգաբնակչության ծանր վիճակը: Խնդրում և կոչ էր անում տղաներին օգնության գնալ:

Եվ 1989թ. աշնանը մեկնում են Թալիշ, տեղի բնակիչների հետ կազմակերպում ինքնապաշտպանություն: Թուրքերը իրենց ավանդույթներին հավատարիմ՝ զբաղվում են սպանությամբ, մարդագողությամբ, անասնագողությամբ ու վերավա-

Նստացույց «Զվարթնոց» օդանավակայանում, 1988 թ. հուլիսի 6:
Այստեղ 80-90 հոգով փակել էին «Զվարթնոց» օդանավակայան մտնող ճանապարը:
Մի ավտոմեքենայից դիմահար կրակոցից զոհվեց լուսանկարիչ Խաչիկ Զաքարյանը

ծառքով, ոսկի դիզելով: Եվ ձգտում են խոր արմատներ գցել զավթած հողերում, ինչպես արեցին, օրինակ՝ Նախիջևանում՝ նմուշի համար չթողնելով ոչ մի հայ: Նույնիսկ վերացրին հուշարձանները, գերեզմանները, հային վերաբերող ամեն բան վերածեցին մոխրի ու փոշու:

Ըստ Ծոպենհաուերի՝ մարդը ցավ է պատճառում ուրիշներին սեփական ցավը մեղմացնելու համար: Այդ դեպքում վայրագությունը մի տեսակ դարման է սեփական ցավի դեմ:

«Ծռամը» առաջին անգամ Թալիշի Արեգսարի բարձունքից նայում էր թուրքական Թափկարակոյնլու գյուղի թուրքերին, հիշում անցյալը, թալանը, ավերը, կոտորածը, տեղահանությունը, ցեղասպանությունը: Ահա թուրքը՝ սոված գազանը, արթնացել է:

Հիշեց Լենինի խոսքը՝ «Սպանի՛ր մեկին, ահաբեկած կլինես շատերին»: «Սպանիր հազարին,- բոլշևիզմի քրմից շատ առաջ ասել է թուրքը,- և ահաբեկված կլինի ժողովուրդը»: Ահա Հայաստանը հարկադրված է պատերազմով կանգնել թշնամու դեմ: Դարեր շարունակ թուրքական պետության կառավարելու միակ մեթոդն ու զենքը ահաբեկումն է: Ադրբեջանցիները կիրառեցին նույն ձեռագիրը՝ հայերին ներքաշելով հարկադրված պատերազմի մեջ:

ՀՀ ԳԽ շենքի անվտանգության պահպանումը ցուցարարներից, 1988 թ.

Թուրքը իր ցավը մեղմելու բնազդով իր տկարության վրեժը պիտի լուծեր անզեն հայից, որին վտանգավոր էր համարում իր գոյության համար: Մարտակերտի Արեգսարի բարձունքին նստած՝ Ծռամը նայում էր հայկական ու թուրքական հողերում աշխատող մարդկանց: Ինքն իր հետ խոսում. թուրքերը հայերից այս անգամ ի՞նչ են ուզում:

Քոչվոր-թափառական թուրքերը թաթար-մոնղոլական սելջուկների մնացորդներ են եղել, չունեն հայրենիք, զավթել են բյուզանդական, հունական, հռոմեական, բուլղարական, ասորական, հայկական հողերը, հարստությունը, ապրում են ուրիշների հաշվին: Ահաբեկումով, ավարով սնուցել են իսլամի խուժան մոլեռանդությունը: Ապրելու համար սկսել են կոտորածից:

Ծռամը այդ մտորումների մեջ՝ փայտով փորում էր հողը, կարծես ճանապարհ էր հարթում բլոճին, որը թրիքի մի ահագին գունդը հրելով՝ առաջ էր տանում: Միշտ ձայնեց, որ շտապեն Մատաղիս գնալու համար:

- Միշա՛, դու ինձ լսո՞ւմ ես, հայ առյուծները լեռներում մռնչում են, նայի՛ր այս սարերին, նայի՛ր թուրքի գյուղերին, երդիկներից ծուխ չի ելնում, նայի՛ր հայկական գյուղերին, ինչպես է ծուխը գալարվում երկինք: Թուրքերը հիմա պատրաստվում են հարձակվել, հայի օջախների ծուխը մարել:

Հայերս պիտի արհամարհենք, մահվան երեսին ժպտանք, դիմադրենք խուժանին: Հայ ժողովուրդը ելել է իր իրավունքները պաշտպանելու: Նստացույց կազմակերպեցինք,

Վրաստանում խաչքարի տեղադրում, Ծռամ, Թբիլիսի 1989 թ

ոչնչի չհասանք: Թուրքերը շարունակում են իրենց հետադիմական ծրագրերն ու նպատակներն իրագործել:

Բարբարոս է թուրքը, տգետ ու վախկոտ: Նայում ես թուրքական գյուղերին, զգում ես նրանց վախը, կրոնական մոլեռանդությունը, կեղծիքով են օրորել մարդկության պատմությունը: Դաստիարակվել են թալանով, գողությամբ, ստով ու կեղծիքով: Եվ սնվել է վախի ու տգիտության արմատներով, որոնց պտուղները ծնում են գազանություն, մարդակեր բռնակալություն: Ճշմարիտ պատմությունից խուսափելով՝ ճշմարիտ խոսելու պակասության պատճառով իրենց զրկում են ընկերային, մարդկային, բարեկամական արդար գաղափարներից:

Հայն ունի հայրենիք, բնահող, իր արմատները ամենանվիրական, ամենավսեմ ձգտումով հսկում և պահպանում է իր համամարդկային արժեքները: Սակայն թուրքը չունի հայրենիք, հիմա ապրում է ուրիշներից թալանած-զավթած հարստությամբ:

«Ծռամ» ջոկատի ազատամարտիկները, Գորիս, 1993 թ.

Ավելացնենք նաև, որ 1604թ. պարսիկ Ծահ Աբասը 350 հազար հայեր տեղահանեց, քշեց Պարսկաստան: Օսմանյան Թուրքիայում 19-րդ դարավերջում հայկական բնահողում՝ իր օրրանում ապրում էին 3,5 միլիոնից ավելի հայեր: 1914 թ. օգոստոսին առաջին աշխարհամարտում 6000 հայ զինվորագրվեց թուրքական բանակ, Թալեաթի հրամանով բոլորին ոչնչացրին և մշակվեց հայերի բնաջնջման ծրագիրը:

1915 թ. Մեծ Եղեռնը իրականացվեց ամբողջ Օսմանյան կայսրության 800.000 քմ ընդգրկող տարածքում, որից 400-500 հազար քառակուսի կիլոմետրը Հայաստանն էր: Հոշոտվեց 500.000 հայ ընտանիք:

Մոտ 2 միլիոն հայերի թուրքերը բնաջնջում են: Թուրքացնում են 200 հազար հայերի: Ոչնչացնում են 66 քաղաքներ ու 2500 հայկական գյուղեր՝ իրենց բնակիչներով: Թալանվում են և ավերվում 2350 եկեղեցիներ ու վանքեր, 1500 դպրոցներ ու վարժարաններ: Ոչնչացվեց 20.000 ձեռագիր մատյան, գաղթական դարձան 2 միլիոն հայեր: 500.000 հայ բռնի կրոնափոխվեց: Մեծ եղեռնի ընդհանուր վնասն այն ժամանակվա դրամական փոխարժեքով կազմել է 20 միլիարդ ֆրանկ, իսկ այսօրվա փոխարժեքով՝ 60 միլիարդ դոլար: Իսկ զավթած հողերի արժեքը անգնահատելի է:

Եվ այսպես՝ վերհիշելով անցյալը, տեղեկագրական աղբյուրներից Մարտակերտի ազգաբնակչության վիճակը գրի առնելով՝ վերադարձան Ազատության հրապարակ, իրադրության մասին հաղորդեցին միտինգավորներին, շարունակեցին նստացույցը: Այդ ժամանակ Կոռնիձորի Ջիջիմլի գյուղում տեղակայվում էր ադրբեջանցիների հետ համագործող խորհրդային 4-րդ բանակի ստորաբաժանումներից մեկը: 1989թ. դեկտեմբերին տղաները արագ կազմակերպում են առաջին խումբը և մեկնում Կոռնիձոր, որտեղ ձևավորվում է կառնիձոր ջոկատը: Ինչպես ասել ենք, Արցախյան պատերազմի առաջին մարտը, առաջին զոհը՝ ուջանցի Նորիկը, եղել է Կոռնիձորում:

Ազատագրական պայքարի առաջին մարտը և առաջին զոհը Ուջանցի Նորիկը, 1989թ, Կոռնիձոր

Ազատամարտիկների ճակատներին կապած ժապավեն-

ների վրա պատկերված էր Արցախյան քարտեզը, իսկ վրան գրված է ԱՄՋ սկզբնատառերը՝ Ազգ, միացիալ ջոկատ: Ձևավորվում է Դեշեբե, հետո «Կոռնիձոր» ջոկատը: 1990թ. հունվարի 17-ին սկսվում է Երասխավանի մարտերը, «Ծռամ» ջոկատը համալրվում է, մասնակցում այդ մարտերին. Արմեն «Ծռամ», Արմեն «Բղդո», Արմեն «Տոգ», Արմեն «Իվան», Արմեն «Չաղ», Արմեն «Հավ», Արմեն «Ծերուկ», Արմեն «Սպո», Արմեն «Ալիկ», Արսեն «Չախկալ», Սահակ «Հիսուս», Գևորգ «Ճուտ», Սամո «Ճուտ», Հովո «Ջունգլի», Անո «Սատանա», Արեգնազ «Աղվես», Նորիկ «Ճուտ», Կամո «Ճուտ», Սամո «Պոնչ», Աշոտ «Տոտիկ», Ռուբո «Կլուբ», Արտուշ «Չելո», Սարո «Քաչալ», Գագո «Լոռեցի», Ռաֆո «Ծմոբիլ», Մելքոն «Փոթ», Անդո, Արթուրիկ, Հարութ, Լյուդվիկ, Գուգո, Պետրոս:

Երբ 1991թ. դեկտեմբերին վարչապետ Վազգեն Մանուկյանի որոշումով ընդունվեց և Հայաստանում ձևավորվեց պաշտ-

Կոռնիձոր, 1989 թ. պաշտպանական դիրքերում, առաջին մարտ Կոռնիձոր ջոկատի հրամանատար Արայիկ Խուդավերդյան

պանության նախարարությունը, հանձնարարեց մեկ ամսվա ընթացքում կազմակերպել կառույցներ և ստորաբաժանումներ: Կոռնիձոր, Խնձորեսկ գյուղերի հարևանությամբ Ջիջիմլի և Գյուլիբերդ թուրքաբնակ գյուղերի համար մղվող մարտերի ժամանակ որպես փորձառու ջոկատ «Ծռամ» ջոկատը 8 հոգով կռվում էր 70 թուրքերի ուժեղացված գումարտակի դեմ: Դաժան, անհավասար մարտերում զոհվեց Արթիկցի Վաղինակը՝ Ռեմբոն: Իսկ Արմեն Բաբայանը՝ Ծռամը, Գյուլիբերդ գյուղի մոտակա սարի բարձունքից թղթին հանձնեց իր սրտամոտ բանաստեղծությունը.

Ես լեռան բարձրությունից տեսնում եմ հողն հայրենի,
Ուր օտարն է ոտնակոխ ավերում...
Անկարող ես հայոց հողին տիրանալ
Այնտեղ իմ նախնիներն են հանգչում,
Զոհվում են իմ ընկերները, Արցախի հողին բարի,
Քամին է շոյում գերեզմանին ծաղկած
ծաղիկների վարսաթերթերին:

Այդպիսի դժվար օրեր էին նաև Վարդենիսի, Կրասնոսելսկի, Իջևանի, Ծամշադինի սահմանների ինքնապաշտպանության ժամանակ: Ռազմագծի մեր հատվածը ծառաշատ էր,

Ծամշադինի Մովսես գյուղի ինքնապաշտպանները 1990թ:

քարքարոտ, տեխնիկան անհնար էր գործադրել, իսկ ձեռքով խրամատներ փորելը շատ դժվար: Ռմբակոծության ժամանակ թաքնվում էինք պատահական փոսերի մեջ, իրար վրա լցվում, որը ծիծաղելի էր և թշնամու համար խոցելի:

Չի կարելի բռնի ուժով հավատ ներշնչել ուրիշներին: Ով իր տունը պաշտպանում է, տաս անգամ ուժեղ է: Հայրենի հողի կանչը համախմբում է մարդկանց: Երբ ազատամարտիկը կամավոր զինվորագրվում է հայրենիքի պաշտպանության սուրբ գործին, այդ դեպքում սրտից բեռ կախված չէ:

Հատկապես դժվար էր հայկական այն բնակավայրերը՝ Կոռնիձոր, Բարձրունի, Խաչիկ, որոնք սլաքաձև սահմանագիծ էին Ադրբեջանին: Դրանց պաշտպանությունը թեև դժվար, այնուամենայնիվ գտնում էին հնարքներ:

1989թ. պատմում է Աշոտ Կարապետյանը.

- Գտանք հնարք. ուսումնական ՀՀՄ-ի վրա 2 մետր խողովակ հարմարեցրինք, հակառակորդին տեսանելի դիրքերում՝ սար ու ձոր, լեռների, բլուրների վրայով վերուվար շարժեցինք: Թշնամին այդ տեսնելով կարծեց զենիթային զենք է, դադարեցրեց հրաձգությունը:

Վազգեն Սարգսյանի ներկայությունը Աշոտին ավելի էր ոգևորում, բարձրացնում էր ազատամարտիկների ոգին: «Էրեբունի» օդանավակայանում ուղղաթիռով զենք ու զինամթերք էինք տեղափոխում Արցախ: Ինձ տված գրության մեջ ասված էր. «Մեկ փամփուշտ կորցնելու դեպքում պատասխան ենք տալու կյանքով»:

Աշոտ Կարապետյանը Խնձորուտ գյուղի երեխաներին, անչափահասներին տեղափոխեց անվտանգ վայր: Առաջին մարդագողությունը՝ 60 անց հովիվի մարտական գործողությունների սկիզբը հանդիսացավ: Գյուղի ելումուտը ուներ միայն մեկ ճանապարհ, իսկ ձորից թուրքերը գաղտագողի «Կամազ» մեքենայով գողանում էին հայերին: Հայ հովվին դաժանորեն ծեծել էին, շատ բան թաքցնում էր: Գյուղապետի թույլտվությամբ գյուղից մարդիկ հաց, ձու, կաթ էին բերում ազատամարտիկներին: Ինքնապաշտպանության համար հայերը ստիպված էին ձևավորել խմբեր, ջոկատներ, որի հիմքի վրա ստեղծվում էին Հատուկ գնդեր, Հայոց բանակ, ՀԱԲ:

Նստացույցի ընթացքում ծանոթանալով, ճանաչելով միմյանց, իրար անվանակոչելու համար ընտրեցին մականունները՝ Արմեն Բաբայանը՝ «Ծռամ», որի երեսին կար շռամ, հետագայում ջոկատը կոչվեց «Ծռամ», Մուշեղ Մխոյանը՝ «Վոժդ», Կորյուն Ղումաշյանը, Արտակ Կարապետյանը՝ «Բյուրականցի Արտակ», Արտաշատցի Սոս, Գդլյան Հարութը, գուսան Արտակ, «Արջ Աշոտ», «Կուզիկ Բաբո», «Չելենտանո Արթուր», «Չելավեկ Մրդո», «Սևո Արմեն», Կապանի և Զաբուխի Կառաներ, Աբովյանի Էրիկ, Քանաքեռի Ֆրունզ, «Քառասունհազար Ռաֆո»:

Նստացույցին միացավ Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի Միշան, որը տղաներին բացատրում էր գյուղի սահմանամոտ լինելը և ազգաբնակչության ծանր վիճակը: Խնդրում և կոչ էր անում տղաներին օգնության գնալ:

Եվ 1989թ. աշնանը մեկնում են Թալիշ, տեղի բնակիչների հետ կազմակերպում ինքնապաշտպանություն: Թուրքերը իրենց ավանդույթներին հավատարիմ՝ զբաղվում են սպանությամբ, մարդագողությամբ, անասնագողությամբ ու վերավա-

Նստացույց «Չվարթնոց» օդանավակայանում, 1988 թ. հուլիսի 6:
Այստեղ 80-90 հոգով փակել էին «Չվարթնոց» օդանավակայան մտնող ճանապարը:
Մի ավտոմեքենայից դիմահար կրակոցից զոհվեց լուսանկարիչ Խաչիկ Զաքարյանը

ծառքով, ոսկի դիզելով: Եվ ձգտում են խոր արմատներ գցել զավթած հողերում, ինչպես արեցին, օրինակ՝ Նախիջևանում՝ նմուշի համար չթողնելով ոչ մի հայ: Նույնիսկ վերացրին հուշարձանները, գերեզմանները, հային վերաբերող ամեն բան վերածեցին մոխրի ու փոշու:

Ըստ Ծոպենհաուերի՝ մարդը ցավ է պատճառում ուրիշներին սեփական ցավը մեղմացնելու համար: Այդ դեպքում վայրագությունը մի տեսակ դարման է սեփական ցավի դեմ:

«Ծռամը» առաջին անգամ Թալիշի Արեգսարի բարձունքից նայում էր թուրքական Թափկարակոյնլու գյուղի թուրքերին, հիշում անցյալը, թալանը, ավերը, կոտորածը, տեղահանությունը, ցեղասպանությունը: Ահա թուրքը՝ սոված գազանը, արթնացել է:

Հիշեց Լենինի խոսքը՝ «Սպանի՛ր մեկին, ահաբեկած կլինես շատերին»: «Սպանիր հազարին,- բոլշևիզմի քրմից շատ առաջ ասել է թուրքը,- և ահաբեկված կլինի ժողովուրդը»: Ահա Հայաստանը հարկադրված է պատերազմով կանգնել թշնամու դեմ: Դարեր շարունակ թուրքական պետության կառավարելու միակ մեթոդն ու զենքը ահաբեկումն է: Ադրբեջանցիները կիրառեցին նույն ձեռագիրը՝ հայերին ներքաշելով հարկադրված պատերազմի մեջ:

ՀՀ ԳԽ շենքի անվտանգության պահպանումը ցուցարարներից, 1988 թ.

Թուրքը իր ցավը մեղմելու բնազդով իր տկարության վրեժը պիտի լուծեր անզեն հայից, որին վտանգավոր էր համարում իր գոյության համար: Մարտակերտի Արեգսարի բարձունքին նստած՝ Ծռամը նայում էր հայկական ու թուրքական հողերում աշխատող մարդկանց: Ինքն իր հետ խոսում. թուրքերը հայերից այս անգամ ի՞նչ են ուզում:

Քոչվոր-թափառական թուրքերը թաթար-մոնղոլական սելջուկների մնացորդներ են եղել, չունեն հայրենիք, զավթել են բյուզանդական, հունական, հռոմեական, բուլղարական, ասորական, հայկական հողերը, հարստությունը, ապրում են ուրիշների հաշվին: Ահաբեկումով, ավարով սնուցել են իսլամի խուժան մոլեռանդությունը: Ապրելու համար սկսել են կոտորածից:

Ծռամը այդ մտորումների մեջ՝ փայտով փորում էր հողը, կարծես ճանապարհ էր հարթում բլոճին, որը թրիքի մի ահագին գունդը հրելով՝ առաջ էր տանում: Միշան ձայնեց, որ շտապեն Մատաղիս գնալու համար:

- Միշա՛, դու ինձ լսո՞ւմ ես, հայ առյուծները լեռներում մռնչում են, նայի՛ր այս սարերին, նայի՛ր թուրքի գյուղերին, երդիկներից ծուխ չի ելնում, նայի՛ր հայկական գյուղերին, ինչպես է ծուխը գալարվում երկինք: Թուրքերը հիմա պատրաստվում են հարձակվել, հայի օջախների ծուխը մարել:

Հայերս պիտի արհամարհենք, մահվան երեսին ժպտանք, դիմադրենք խուժանին: Հայ ժողովուրդը ելել է իր իրավունքները պաշտպանելու: Նստացույց կազմակերպեցինք,

Վրաստանում խաչքարի տեղադրում. Ծռամ. Թբիլիսի 1989 թ

ոչնչի չհասանք: Թուրքերը շարունակում են իրենց հետադիմական ծրագրերն ու նպատակներն իրագործել:

Բարբարոս է թուրքը, տգետ ու վախկոտ: Նայում ես թուրքական գյուղերին, զգում ես նրանց վախը, կրոնական մոլեռանդությունը, կեղծիքով են օրորել մարդկության պատմությունը: Դաստիարակվել են թալանով, գողությամբ, ստով ու կեղծիքով: Եվ սնվել է վախի ու տգիտության արմատներով, որոնց պտուղները ծնում են գազանություն, մարդակեր բռնակալություն: Ճշմարիտ պատմությունից խուսափելով՝ ճշմարիտ խոսելու պակասության պատճառով իրենց զրկում են ընկերային, մարդկային, բարեկամական արդար գաղափարներից:

Հայն ունի հայրենիք, բնահող, իր արմատները ամենանվիրական, ամենավսեմ ձգտումով հսկում և պահպանում է իր համամարդկային արժեքները: Սակայն թուրքը չունի հայրենիք, հիմա ապրում է ուրիշներից թալանած-զավթած հարստությամբ:

«Ծռամ» ջոկատի ազատամարտիկները. Գորիս, 1993 թ.

Ավելացնենք նաև, որ 1604թ. պարսիկ Ծահ Աբասը 350 հազար հայեր տեղահանեց, քշեց Պարսկաստան: Օսմանյան Թուրքիայում 19-րդ դարավերջում հայկական բնահողում՝ իր օրրանում ապրում էին 3,5 միլիոնից ավելի հայեր: 1914 թ. օգոստոսին առաջին աշխարհամարտում 6000 հայ զինվորագրվեց թուրքական բանակ, Թալեաթի հրամանով բոլորին ոչնչացրին և մշակվեց հայերի բնաջնջման ծրագիրը:

1915 թ. Մեծ եղեռնը իրականացվեց ամբողջ Օսմանյան կայսրության 800.000 քմ ընդգրկող տարածքում, որից 400-500 հազար քառակուսի կիլոմետրը Հայաստանն էր: Հոշոտվեց 500.000 հայ ընտանիք:

Մոտ 2 միլիոն հայերի թուրքերը բնաջնջում են: Թուրքացնում են 200 հազար հայերի: Ոչնչացնում են 66 քաղաքներ ու 2500 հայկական գյուղեր՝ իրենց բնակիչներով: Թալանվում են և ավերվում 2350 եկեղեցիներ ու վանքեր, 1500 դպրոցներ ու վարժարաններ: Ոչնչացվեց 20.000 ձեռագիր մատյան, գաղթական դարձան 2 միլիոն հայեր: 500.000 հայ բռնի կրոնափոխվեց: Մեծ եղեռնի ընդհանուր վնասն այն ժամանակվա դրամական փոխարժեքով կազմել է 20 միլիարդ ֆրանկ, իսկ այսօրվա փոխարժեքով՝ 60 միլիարդ դոլար: Իսկ զավթած հողերի արժեքը անգնահատելի է:

Եվ այսպես՝ վերհիշելով անցյալը, տեղեկագրական աղբյուրներից Մարտակերտի ազգաբնակչության վիճակը գրի առնելով՝ վերադարձան Ազատության հրապարակ, իրադրության մասին հաղորդեցին միտինգավորներին, շարունակեցին նստացույցը: Այդ ժամանակ Կոռնիձորի Ջիջիմլի գյուղում տեղակայվում էր ադրբեջանցիների հետ համագործող խորհրդային 4-րդ բանակի ստորաբաժանումներից մեկը: 1989թ. դեկտեմբերին տղաները արագ կազմակերպում են առաջին խումբը և մեկնում Կոռնիձոր, որտեղ ձևավորվում է կառնիձոր ջոկատը: Ինչպես ասել ենք, Արցախյան պատերազմի առաջին մարտը, առաջին զոհը՝ ուջանցի Նորիկը, եղել է Կոռնիձորում:

Ազատագրական պայքարի առաջին մարտը և առաջին զոհը Ուջանցի Նորիկը, 1989թ, Կոռնիձոր

Ազատամարտիկների ճակատներին կապած ժապավեն-

ների վրա պատկերված էր Արցախյան քարտեզը, իսկ վրան գրված է ԱՄՋ սկզբնատառերը՝ Ազգ, միացիալ ջոկատ: Ձևավորվում է Դեշեբե, հետո «Կոռնիձոր» ջոկատը: 1990թ. հունվարի 17-ին սկսվում է Երասխավանի մարտերը, «Ծռամ» ջոկատը համալրվում է, մասնակցում այդ մարտերին. Արմեն «Ծռամ», Արմեն «Բղդո», Արմեն «Տոգ», Արմեն «Իվան», Արմեն «Չաղ», Արմեն «Հավ», Արմեն «Ծերուկ», Արմեն «Սպո», Արմեն «Ալիկ», Արսեն «Չախկալ», Սահակ «Հիսուս», Գևորգ «Ճուտ», Սամո «Ճուտ», Հովո «Ջունգլի», Անո «Սատանա», Արեգնազ «Աղվես», Նորիկ «Ճուտ», Կամո «Ճուտ», Սամո «Պոնչ», Աշոտ «Տոտիկ», Ռուբո «Կլուբ», Արտուշ «Չելո», Սարո «Քաչալ», Գագո «Լոռեցի», Ռաֆո «Ծմոբիլ», Մելքոն «Փոթ», Անդո, Արթուրիկ, Հարութ, Լյուդվիկ, Գուգո, Պետրոս:

Երբ 1991թ. դեկտեմբերին վարչապետ Վազգեն Մանուկյանի որոշումով ընդունվեց և Հայաստանում ձևավորվեց պաշտ-

Կոռնիձոր, 1989 թ. պաշտպանական դիրքերում, առաջին մարտ Կոռնիձոր ջոկատի հրամանատար Արայիկ Խուդավերդյան

պանության նախարարությունը, հանձնարարեց մեկ ամսվա ընթացքում կազմակերպել կառույցներ և ստորաբաժանումներ: Կոռնիձոր, Խնձորեսկ գյուղերի հարևանությամբ Ջիջիմլի և Գյուլիբերդ թուրքաբնակ գյուղերի համար մղվող մարտերի ժամանակ որպես փորձառու ջոկատ «Ծռամ» ջոկատը 8 հոգով կռվում էր 70 թուրքերի ուժեղացված գումարտակի դեմ: Դաժան, անհավասար մարտերում զոհվեց Արթիկցի Վաղինակը՝ Ռեմբոն: Իսկ Արմեն Բաբայանը՝ Ծռամը, Գյուլիբերդ գյուղի մոտակա սարի բարձունքից թղթին հանձնեց իր սրտամոտ բանաստեղծությունը.

Ես լեռան բարձրությունից տեսնում եմ հողն հայրենի,
Ուր օտարն է ոտնակոխ ավերում...
Անկարող ես հայոց հողին տիրանալ
Այնտեղ իմ նախնիներն են հանգչում,
Զոհվում են իմ ընկերները, Արցախի հողին բարի,
Քամին է շոյում գերեզմանին ծաղկած
ծաղիկների վարսաթերթերին:

Այդպիսի դժվար օրեր էին նաև Վարդենիսի, Կրասնոսելսկի, Իջևանի, Ծամշադինի սահմանների ինքնապաշտպանության ժամանակ: Ռազմագծի մեր հատվածը ծառաշատ էր,

Ծամշադինի Մովսես գյուղի ինքնապաշտպանները 1990թ:

քարքարոտ, տեխնիկան անհնար էր գործադրել, իսկ ձեռքով խրամատներ փորելը շատ դժվար: Ոմբակոծության ժամանակ թաքնվում էինք պատահական փոսերի մեջ, իրար վրա լցվում, որը ծիծաղելի էր և թշնամու համար խոցելի:

Չի կարելի բռնի ուժով հավատ ներշնչել ուրիշներին: Ով իր տունը պաշտպանում է, տաս անգամ ուժեղ է: Հայրենի հողի կանչը համախմբում է մարդկանց: Երբ ազատամարտիկը կամավոր զինվորագրվում է հայրենիքի պաշտպանության սուրբ գործին, այդ դեպքում սրտից բեռ կախված չէ:

Հատկապես դժվար էր հայկական այն բնակավայրերը՝ Կոռնիձոր, Բարձրունի, Խաչիկ, որոնք սլաքաձև սահմանագիծ էին Ադրբեջանին: Դրանց պաշտպանությունը թեև դժվար, այնուամենայնիվ գտնում էին հնարքներ:

1989թ. պատմում է Աշոտ Կարապետյանը.

- Գտանք հնարք. ուսումնական ՀՀՄ-ի վրա 2 մետր խողովակ հարմարեցրինք, հակառակորդին տեսանելի դիրքերում՝ սար ու ձոր, լեռների, բլուրների վրայով վերուվար շարժեցինք: Թշնամին այդ տեսնելով կարծեց զենիթային զենք է, դադարեցրեց հրաձգությունը:

Վազգեն Սարգսյանի ներկայությունը Աշոտին ավելի էր ոգևորում, բարձրացնում էր ազատամարտիկների ոգին: «Էրեբունի» օդանավակայանում ուղղաթիռով զենք ու զինամթերք էինք տեղափոխում Արցախ: Ինձ տված գրության մեջ ասված էր. «Մեկ փամփուշտ կորցնելու դեպքում պատասխան ենք տալու կյանքով»:

Աշոտ Կարապետյանը Խնձորուտ գյուղի երեխաներին, անչափահասներին տեղափոխեց անվտանգ վայր: Առաջին մարդագողությունը՝ 60 անց հովվի մարտական գործողությունների սկիզբը հանդիսացավ: Գյուղի ելումուտը ուներ միայն մեկ ճանապարհ, իսկ ձորից թուրքերը գաղտագողի «Կամազ» մեքենայով գողանում էին հայերին: Հայ հովվին դաժանորեն ծեծել էին, շատ բան թաքցնում էր: Գյուղապետի թույլտվությամբ գյուղից մարդիկ հաց, ձու, կաթ էին բերում ազատամարտիկներին: Ինքնապաշտպանության համար հայերը ստիպված էին ձևավորել խմբեր, ջոկատներ, որի հիմքի վրա ստեղծվում էին Հատուկ գնդեր, Հայոց բանակ, ՀԱԲ:

ՀԱԲ-Ի ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ. ԿՈՏԱՅՔԻ ՀԱԲ-Ի ԳՈՒՆԴԸ

Հավեն Ոսկանի Ասատրյանը ծնվել է 1947թ. Ալավերդի քաղաքում: 1965թ. ապրիլի 24-ին մասնակցել է Մեծ Եղեռնի 50-ամյակի ցույցին և անցել ընդհատակ: Մովսես Գորգիսյանի հետ թռուցիկներ է տարածել անկախ Հայաստան ստեղծելու համար, իսկ սև, վրան «ՀՈՂ» գրած դրոշը տանում էին Մարտին Բաղդասարյանը և Գառնիկը:

Հավեն Ասատրյան

1988թ. փետրվարի 20-ին օպերայի Ազատության հրապարակում բազմահազարանոց միտինգ էր: Հավենը Մովսեսի հետ կանգնած լսում էր Իգոր Մուրադյանի բացատրությունը փետրվարի 12-ին Ստեփանակերտում կայացած ժողովրդական առաջին զանգվածային ցույցի մասին: Վերհիշեց 1965թ. ապրիլի 24-ը՝ Մեծ Եղեռնի 50-ամյակի ցույցը: Ժողովուրդը ալեկոծվում էր, փոթորկվում. մի ողջ ժողովուրդ ելել էր պայքարի և այսօր կարծես պատրաստվում էր վճռական գրոհի:

Արցախյան առաջին ցույցը և Երևանի օպերայի Ազատության հրապարակի ցույցը ընթանում էին զուգահեռաբար: Հավեն Ասատրյանի, Մովսես Գորգիսյանի ուրախությանը չափ ու սահման չկար: Նրանց երազները իրականություն էին դառնում: Երբ լսում էին Իգոր Մուրադյանի ելույթը, ժամ առ ժամ հաղորդում էին ժողովրդին թե ինչ է կատարվում Ստեփանակերտում:

Օր օրի ժողովրդական ալիքը մեծա-

նում էր, ընդգրկելով սփյուռքը: Այն դուրս գալով սահմաններից՝ ընդգրկեց աշխարհը: Բայց Մոսկվան թաքցնում և շեղում էր՝ անվանելով ծայրահեղականներ: Խորհրդային ղեկավարները անտարբեր էին, աշխարհի աչքերին փոշի էին փչում՝ շեղելով հայ ժողովրդի արդարացի պայքարը, որպեսզի աշխարհի ժողովրդավար երկրները ուշադրություն չդարձնեն:

Կոմունիստական գաղափարախոսության հիմնադիրներն անհայտ պատճառներով առանձնապես հարգանք չէին տածում Ռուսաստանի նկատմամբ և նրան անվանում էին «Եվրոպայի ժանդարմ»: Մարքսը անգլիական և ֆրանսիական կառավարություններին խորհուրդ էր տալիս հողին հավասարեցնել Կրոնշտադտը, արգելակել Պետերբուրգի ջրային դարպասները և այդ դեպքում Ռուսաստանը կնմանվի «Կռնատ և կույր հսկայի»:

Էնգելսը հետ չէր մնում ավագ ընկերոջից. «Ռուսական բանակը» աշխատության մեջ նա գրել է. «Ռուս զինվորներն ամբողջ աշխարհում ամենածանրաշարժն են: Նրանք պիտանի չեն ոչ թեթև հետևազորի, ոչ էլ թեթև հեծելազորի համար: Որքան էլ որ դրական լինեն կազակների մարտական որակները, այնուամենայնիվ, հարբեցողության ու ավարառության հետևանքով հրամանատարների համար նրանք դառնում են շատ անհուսալի... Ռուս զինվորին, երբ հրամայեն, նույնպիսի հնազանդությամբ կգնա ջուր կրելու կամ իր ընկերոջը թրատելու:

Ինչը նրան անհրաժեշտ է, հրամանն է, հստակ հրամանը և եթե այդ չի ստանում, ապա թեև չի դիմի փախուստի, բայց և առաջ էլ չի շարժվի, չի գործի սեփական խելքով»:

Սլավոնական մյուս ժողովուրդներն էլ դուր չէին գալիս կոմունիզմի «դասականներին», որոնք չեխերին, բուլղարներին, սերբերին՝ ավազակներ, իսկ բոլոր սլավոններին միատեղ «ազգություններ» էին կոչում, որոնց մասին դժվար է ասել, թե նրանցից ով է առավել ընդունակ առաջադիմությանն ու քաղաքակրթությանը:

Մարքսի բացահայտ ռուսատյացությունը վրդովել էր ինքնակալության դեմ պայքարի այնպիսի մարտիկի, ինչպիսին Միխայել Բակունինն էր: Անարխիզմի հայրը նույնիսկ Մարքսին մենամարտի էր հրավիրել, բայց վերջինիս վախկոտության պատճառով այն չկայացավ: Ո՞վ գիտե, գուցե այդ մենամարտի ելքը շատ բան փոխեր համաշխարհային, այդ թվում և ռուսական պետության մեջ, և Ռուսաստանը չընտրեր բոլշևիկյան ուղին: Եկեղեցի քանդող բոլշևիզմին Վազգեն Սարգսյանը մի առիթով ասել է.

Ես վախենում եմ չվախեցողներից,
Ես վախենում եմ Աստծուց,
Վ.Ս.

Ակտիվանում էին ադրբեջանցիները: Հայրենասեր որձ տղաները նստեցին ցույցի, Զավենը ծանոթացավ Ծռամի և տղաների հետ և օգոստոսին հայտարարեցին սարսափելին՝ հացադուլ ու նստեցին մեծ բանաստեղծի՝ իր երկրացի Հովհաննես Թումանյանի՝ լոռեցու արձանի մոտ: 22 օր հետո առողջական վիճակը վատացավ, շտապօգնության մեքենայով տեղափոխեցին հիվանդանոց: Կազդուրվելուց հետո վերադարձավ պայքարի:

1988թ. նոյեմբերի 24-ի գիշերը խորհրդային բանակի ներքին զորքերի ստորաբաժանումը հայ ուժերի հետ գրավեցին, շրջապատեցին օպերայի շենքը: Լույս 25-ի առավոտյան Զա-

Ցուցարարները ՀՀ Գխ շենքի առաջ. Ազատություն «Ղարաբաղ» կոմիտեին, 1989 թ. ապրիլի 24 Ձախից երրորդը՝ Կոռնիձորի Արո, Սարգիս Սաֆարյան, Արջ Աշոտ բանտարկյալների հագուստներով

վենին ձերբակալեցին, տարան ՊԱԿ: Միտինգը տեղափոխվեց Երևանի կենտրոնական փոստ, հետո՝ Մատենադարանի փոքրիկ հրապարակ:

Զավենը ՊԱԿ-ում ականջներով լսում է, թե ինչպես է խորհրդային գեներալ Սամսոնովը ուղիղ կապով խոսում մի գնդապետի հետ, որը կատարում էր Յազովի և Գորբաչովի հրամանները, որտեղ ասվում էր, թե Երևան քաղաքում պետք է հայտարարել պարետային ժամ և ուժեղացնել հակաօդային պաշտպանությունը: Եվ դեկտեմբերի 10-ին ձերբակալեցին Ղարաբաղ կոմիտեի 11 անդամներին:

1989թ. գարնանը Մատենադարանի առաջ Գ. Նժդեհի գաղափարակիցն էին Զավեն Ասատրյանը, Ռազմիկ Վասիլյանը: Երկու անծանոթ երիտասարդներ կողք-կողքի կանգնած՝ լսում էին ելույթ ունեցողներին: Անկախ իրենցից, միաձայն արտասանեցին՝ ստեղծել Հայոց բանակ: Այդ պահին ստեղծվեց նրանց ծանոթությունը, որոնց միացան 17 հոգի, գնացին հաղթանակի զբոսայգի՝ բանակցելու: Խորհրդին մասնակցում էին Գյումրեցի Ռուբոն, Սահակը, Կամոն («Ապեր»), Մանվել Ղազարյանը «Արաբոն», Արամ Բաբայանը («Ծռամ»), Արսեն Գևորգյանը: Գրվեց երդման սևագիր տեքստը, որտեղ ասվում էր նաև՝ հայի վրա զենք չբարձրացնել: Այդ ժամանակ կազմակերպվեց ՀԱԲ-ի կորիզը:

Գաղտնի խորհրդակցությունները հիմնականում ընթանում էին Ռազմիկ Վասիլյանի բնակարանում:

Մատենադարանի միտինգը գեներալ Սամսոնովը իր զորքով շրջապատել էր: Զավենը նախօրոք բենզինի շիշը թաքցրել էր ծոցում, մոտեցավ Սամսոնովին, պահանջեց երեք րոպե. եթե չհեռանա ինքն իրեն կհրկիզի: Ծոցից հանելով բենզինե շիշը, ցուցադրելով՝ լուցկին վառեց:

Գեներալը, տեսնելով այդ հանդգնությունը, զորքին հրամայեց հետդարձ քայլով մարշ հրահանգը:

Միտինգն անցկացնում էին Դավիթ Ծահնազարյանը, Սմբատ Հակոբյանը: Նրանց օգնում էր Մարտին Բաղդասարյանը, Սուրիկ Սարգսյանը.այն տևեց 2 ժամ:

Զավենի հարցադրումը՝ ՀԱԲ ստեղծելու գաղափարը համարվում էր դեռ վաղ: 1990թ. մայիսի 10-ին Կոմիտասի այգում մի խումբ տղաներով երդման արարողությանը հավատարիմ մնալու համար դանակով կտրում են երակները, արյունները խառնում իրար:

1990թ. օգոստոսի 4-ին, երբ ձևավորվեց Հայաստանի Գերագույն խորհուրդը, նախագահ ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը: Ըստ Գերագույն խորհրդի որոշմամբ բոլոր ջոկատները պիտի միավորվեն և կատարեն Գերագույն խորհրդի որոշումները: ՀԱԲ-ը չենթարկվեց և հոկտեմբերին լուծարվեց:

Մինչ լուծարվելը՝ Զավենը Հայաստանին վերաբերող պետական փաստաթղթերը և թռուցիկները կապոցներով ինքնաթիռով տեղափոխեց Մոսկվա: Նրան օգնում էին Չարենցավանի «Ղարաբաղ» կոմիտեի ակտիվիստ եղբայրներ Վարդանը, Մարատը, որոնք սքանչելի աշխատանք կատարեցին: Կարմիր հրապարակից՝ երթով եռագույն դրոշը ծածանելով, պաստառները ցուցադրելով՝ հասան ԽՍՀՄ Գերագույն խորհրդի շենքի առաջ: Ճանապարհին բաժանում էին թռուցիկներ: Այս ամենը կատարում էին Մովսես Գորգիսյանի ղեկավարությամբ: Շենքի առաջ մոտ 600 հոգով կազմակերպեցին միտինգ, շատ ռուսներ միացան հայերին:

Միտինգի պահանջը Արցախյան հարցն էր և ԽՍՀՄ-ից համաշխարհային ժողովրդավարություն վայելող ԱՄՆ վտարված Պարույր Հայրիկյանի վերադարձը հայրենիք՝ Հայաստան:

Կազմված էր երկու պլան, առաջինը՝ ուշադրություն գրավել, երկրորդը՝ ենթարկվել մահակներով ծեծին:

Երկու «պազիկ» ավտոբուսներ, ներսից սև կտորից վարագույրներով ծածկված, եկան կանգնեցին: Վարագույրների արանքից հետևում էին դրսի գործողությանը: Սպասում էին իրենց վերադասի հրամաններին: Որոշ ժամանակ հետո հարձակվեցին միտինգի մասնակիցների վրա: Ֆիզիկական կոշտ ճնշումներով նրանց հրում էին Լենինի անվան ազգային գրադարանի մետրոյի թունելը: Այդ ժամանակ լրագրողները դուրս թռան իրենց թաքստոցներից ու սկսեցին նկարահանել: Ջարդատար զինվորները փախան իրենց մեքենաներով:

Զավենը գոռաց. «Դուք ֆաշիստ եք: Ադրբեջանը Հայաստանին հարկադրել է պատերազմ, դուք այստեղ մեր բողոքն եք բռնաբարում, ծեծում ու ջարդում»:

Սախարովը, որը տեղյակ էր, հայտնվեց, ժողովուրդը ուրախացավ: Նա ավելի բարձր գոռաց. ավելացրեց՝ ոչ թե ֆա-

շիստներ են, այլ՝ իտալական ֆաշիստական խունտա: Մեկ շաբաթ հետո Սախարովը մահացավ: Ակտիվիստներին ենթարկեցին ծեծ ու ջարդի, 9 հոգու ձերբակալեցին Մարտին Ճերմակյանին, Զավեն Ասատրյանին, Նորայր Զատիկյանին՝ Պարույր Հայրիկյանի քրոջ որդուն:

«Չընկճվեցինք, մեր դիրքերից չնահանջեցինք, չստորագրեցինք մեզ մեղադրանք ներկայացրած փաստաթղթերի տակ»:

Մովսես Գորգիսյանը նորընտիր ՀՀ Գերագույն խորհրդի նիստում հայտարարեց. «Մոսկվայում մեր տղաներին ծեծում են, իսկ դուք այստեղ ջուր եք ծեծում»:

Այսպիսով հրաշքով պրծանք կոմունիստական բռնապետական ճիրաններից: Մեր առջև դրված խնդիրները համարելով որոշակիորեն լուծված՝ Պարիս Հերունու մտքերը վերհիշելով, վերադառնում էինք Երևան:

ՀԱԲ-ի շտաբը տեղավորված էր Էրեբունի հյուրանոցի դիմացի սև շենքում: Հարևան շենքից 1990թ.-ին 15 տարեկան Նունե Խաչատրյանը սրտի թրթիռով հետևում էր քաղաքի ներքին ընդվզումներին: Հայրը թարմ մսով կերակրում էր Առյուծի 2 ձագերին: ՀԱԲ-ի լուծարման ժամանակ փոքրիկ աղջնակը կպել էր լուսամուտի շրջանակին, ականջը սրած լսում էր ավտոմատի կրակոցները: Վախեցած է հոգին, մինչ օրս ապրում է այդ տպավորություններով:

Երկրագնդի հին ազգերից հայերը բնակվել են Միջագետքում, Անատոլիայում, Ասիայում, կարելի է ասել միակ բնակիչները (Նվարդ Քոչարի գրքում կարդալ Ուրարտուն. գերմանացի Ռիմշտենելը Ուրարտուն անվանել է Արարատ և եղել է Ուրարտական թագավորություն):

Արգիշտին կառուցել է Երևան՝ Էրեբունի քաղաքը:

Բիհայնա՝ նշանակում է կրկնակի հայկական թագավորություն. Բի՝ նշանակում է երկու, կոչվում է կրկնակի հայկական:

Մեծ Հայքի մեջ եղել է 10 հայկական թագավորություն:

Տրոյան, Միջագետքը, Անատոլիան, Ասիան, Փյունիկիան, Կիլիկիան ունեն նույն թագավորությունը:

Կեսար-Ցեզար, ցար նույն հայկական անուններ են:

Մ.թ.ա. 450 տարի առաջ Հայ թագավորը, որը կոչվում էր

նաև Կեսար Հռոմում, Հունաստանում այն անվանեց Կեսար, իսկ Ռուսաստանում Ցար:

Հայկը գնացել է Եգիպտոս, կառուցել բուրգեր: Եգիպտական փարավոնների մինչև 19-րդ դինաստիան եղել են հայերը:

Երբ Աքիլլեսին հարցնում են՝ ինչո՞ւ չես կռվում (խոսքը հայերի մասին է) նա պատասխանում է. «Ես ձիեր ընտելացնողների հետ չեմ պատերազմի»: Տրոյայի մասին հարգանքով էր խոսում:

Երկրորդ դարում հույն փիլիսոփա Լուկյանոսը Հոմերոսին հարցնում է, թե ի՞նչ է նրա անունը և որ քաղաքից է, որ երկրից: Հունական 7 քաղաքներ վիճում են այդ հարցի շուրջ: Սակայն Հոմերոսը պատասխանում է. «Ես Բաբելոնից եմ, անունս Տիգրան է»:

Հայկը նաև կեսար էր, որ նշանակում է կես Աստված. կեսը՝ երկնքում, կեսը՝ երկրում: Հայկը հսկայական քարեր է տեղաշարժում և կառուցում Բաբելոնը:

Բելի հետ վեճ է առաջանում, Հայկը իր 300 հոգով վերադառնում է Հայաստան: Աշխարհի առաջին պատերազմը Հայկի և Բելի պատերազմն էր: Հայկի՝ Բաբելոնից հեռանալու ժամանակ Բելը նրան նամակով հաղորդում է, որ վերադառնա, որտեղ և ինչպես ուզում է, թող ապրի, միայն իր կամքը լինի: Սակայն Հայկը չի հանձնվում, պատերազմում են, Հայկը հաղթում է Բելին և նետահարում:

«Ովքե՞ր են Ծումերները»,- բանավիճում են անգլիացիները: Պեղումների ժամանակ գտել են 7 քաղաք, դրանք եղել են Հայկական քաղաքներ: 19մ խորությամբ փորում են, հասնում տիղմի, որտեղ 12 հազար տարի առաջ եղել է ջրհեղեղ, խորանում են և հայտնաբերում այդ 7 հայկական քաղաքները: Քանի որ այդ ժամանակ հայերը տեղաշարժվել են, ինչ-որ ցեղ եկել բնակվել է, դրանք կոչվել են Ծումերներ, որը նշանակում է (այդ ցեղերը եկան խանգարեցին) Ծումեր-սամեր, այսինքն սա մերն է՝ Ծումեր: Նրանց կուլտուրան հայերի թողած կուլտուրան է:

Կիլիկիան և Փյունիկիան ունեցել են նավատորմ, մեծ նավեր: Կիլիկիայի 6-րդ հայ Լևոն թագավորը թաղված է Ֆրանսիայում:

Ալեքսանդր Մակեդոնացին միշտ շրջանցել է Հայաստանը, սակայն երկու գեներալի է ուղարկում Հայաստան, որոնց հայերը բռնում են և ծառից կախում: Արաքս գետը չի հանդուրժում ոչ մի կամուրջ:

Եգիպտոսում գտել են մի նավ, որը կառուցվել է 6000 տարի առաջ, նրանով նավարկել են դեպի Ամերիկա: Այնտեղ կա հին մի ժողովուրդ, որ կոչվում են Ամարներ, նրանց լեզուն շատ հին լեզու է՝ 600 բառից 60-ը հայկական բառեր են, իսկ մնացածը նման են:

Անիի Մայր տաճարի պատին (ժայռապատկերներ էլ կան) Ադամն ու Եվան են նկարված: Հերունին բացատրում է, որ Ադամ նշանակում է Արամ, որը կոչվում է Արի՝ որդի: Դա հին հայկական լեգենդ է:

Երկրագունդը, ըստ հաշվարկի, ասում են 4 միլիարդ տարեկան է:

Ասենք որ Եվրոպայից Երուսաղեմ են արշավում խաչակիրները, որը կոչվում է խաչակրաց արշավանք: Իսկ 1412թ. մոնղոլ թաթարների առաջնորդը՝ Լենկ-Թեմուրը, մեծ հաղթական նվաճողական արշավանքներից հետո մահանում է:

Արմեն Ավետիսյան՝ Հայ Արիական Միաբանության առաջնորդ

Իրեն շրջապատող իսլամական մահմեդական ծովում Հայաստանը դառնում է փոքրիկ կղզյակ:

Եվ այսպես, պատմական վերհուշումներով հասանք Երևան:

Չնայած այն իրողությանը, որ Հայոց Ազգային Բանակ ստեղծելու կոչեր ու քայլեր արվել են դեռևս 1988թ. մարդաշատ հանրահավաքներում, այն հիմնադրվել է 1989թ. ապրիլի 24-ին՝ Հայոց Մեծ եղեռնի 74-րդ տարելիցի կապակցությամբ անցկացված համաժողովրդական մեծ սգո երթից հետո, քաղաքամայր Երևանի երկրորդ հեղափոխական ոստանում՝ Մատենադարանի հրապարակում: Ազատության հրապարակը շրջապատված էր խորհրդային զինվորներով...

Կոտայքի շրջանում՝ Աբովյան քաղաքում, ՀԱԲ-ը հիմնադրվել է 1990թ. փետրվարի 16-ին, չնայած հունվարի 17-ից արդեն գնդի հիմնադիրները կամավորական ջոկատներով մասնակցում էին ՀԱԲ-ի կողմից իրականացվող ռազմական գործողություններին, ՀՀ սահմանամերձ շրջանների ինքնապաշտպանական մարտերին:

1989-1990 թվականներին հայ ազգային ազատագրական պայքարը ինչպես Հայաստանի, այնպես էլ Արցախի անկախության համար թևակոխեց նոր փուլ՝ առավել դժվարին ու

Արմեն Ավետիսյանը կենտրոնում կքանստած իր մարտական ընկերների հետ Եահումյան 1992թ

վճռորոշ: Քաղաքական եռանդուն գործունեությանը զուգակցվեց զինված պայքարը, որն էլ հիմնարար դեր խաղաց Հայաստանի Հանրապետության վերաստեղծման, ռազմաքաղաքական ակնառու հաջողությունների, ինչպես նաև միջազգային թատերաբեմում մեր խարխլված, գրեթե չգոյ հեղինակության նկատելի բարձրացման համար:

Եվ ազգն ընտրեց այդ պահին ամենադժվարին, բայց պատվաբեր ու միակ ճշմարիտ ուղին՝ զինված պայքարը: Այն պարտադրվեց մեզ ինչպես խորհրդային բանակի, այնպես էլ ադրբեջանական զինված կազմավորումների սադրիչ գործողությունների միջոցով և ի պատիվ մեզ, մենք համառորեն դիմադրեցինք ու հերոսաբար հաղթանակեցինք դժվարին ու դաժան պատերազմում...

Սումգայիթյան ցեղասպանությունը, հայերի ջարդերն ու տեղահանություններն Ադրբեջանի տարածքում (հիմնականում պատմական Հայաստանի գրավյալ տարածքներում), ստիպե-

ՀԱԲ-ի մի խումբ ազատամարտիկներ Ծուշիի առաջին գումարտակում, Ծուշի 1992թ

ցին ավելի լրջորեն մտորել ու խորհել մեր հետագա գործունեության, ազգային կեցվածքի և առաջնային կարևորության անելիքների հստակ վերագնահատման ու համակարգման մասին: Եվ անսալով մեր նախնյաց գենի իմաստուն ու հզոր ձայնին՝ հայ ազգն անմիջապես կարողացավ իր մեջ ուժ գտնել ու վերահաստատել մեր գոյատևման իրավունքը նախնյաց հայրենիքում՝ Արեգակի և Արարատի հովանու ներքո:

Որպես ճշմարիտ այլընտրանք, արդեն անօգուտ ու հոգնեցուցիչ մի քանի հարյուր հազարանոց (ինչպես ժամանակին ասվում էր՝ միլիոնանոց) հանրահավաքներին ու բողոքի ցույցերին, շատ հայորդիներ ազգային ազատագրական պայքարում հաջողության հասնելու համար, որպես ինքնապաշտպանական արդյունավետ միջոց, ընտրեցին զինված պայքարը և շուտով Հայաստանում ու Արցախում առաջացան

Աջից երրորդը՝ Արմեն Ավետիսյան: Զինակից ընկերներով մարտից առաջ, Եահուսյան Գաղթոտ գյուղ, 1992թ

ռազմապաշտպանական կազմավորումներ՝ տարբեր անվանումներով, հնարավորություններով ու նպատակներով...

ՀԱԲ-ի կարգավիճակի կտրուկ փոփոխություն տեղի ունեցավ 1990 թվականի հունվարին, Երասխի հայտնի մարտական գործողություններից հետո, երբ ՀԱԲ-ը լրջորեն սկսեց զբաղվել զենք-զինամթերքի, զինվորական հանդերձանքի հայթայթումով, կամավորներին ռազմաճակատ ուղարկելով, սահմանամերձ բախումնային գոտիներում նրանց տեղավորելով և տեղերում ինքնապաշտպանությունը կազմակերպելով:

Ընթացքում, որպես ռազմապաշտպանական կազմավորում, ՀԱԲ-ն իր կառույցները հիմնեց Հայաստանի բոլոր տարածաշրջաններում, փուլ առ փուլ ձևավորելով ու ներմուծելով բանակին բնորոշ և հատուկ բոլոր անհրաժեշտ պարագաները:

ՀԱԲ-ի տղաները, Կոռնիձոր 1990թ

Մինչև Երասխի դեպքերը Աբովյանում արդեն նկատվում էր ազգային-քաղաքական կազմակերպությունների համախմբման ու համագործակցության միտում՝ ազգային ծավալուն, բազմաշերտ խնդիրների շուրջ: Եվ շուտով այն ձևավորվեց ու 1990 թվականի հունվարի 16-ին հռչակվեց (համապատասխան հռչակագրով և կոչ-հայտարարությամբ) Ազգային Կազմակերպությունների Միացյալ Խորհուրդը (ԱԿՄԽ)՝ նմանակը Երևանում գործող Նախախորհրդարանի, Ազգային Միացյալ ճակատի (ԱՄՃ) և այլն: ԱԿՄԽ-ում ընդգրկվեցին Հայ Ազգային Կուսակցությունը (ՀԱԿ, նախկինում՝ (ՀԱԱԿ)), «Ազատ Հայք» կազմակերպությունը և «Գոյատևում» գոյապահպանական միությունը: Հետագայում այն ստորագրեց նաև «Ավարայր» ակումբը, որն արևելյան մարտարվեստների պարապմունքներ էր կազմակերպում: Աբովյանում գործող կազմակերպություններից հռչակագրին չմիացան Ազգային Ինքնորոշում Միավորումը (ԱԻՄ), Հայոց Համազգային Ծարժումը (ՀՀԾ) և իհարկե՝ Կոմկուսը:

ԱԿՄԽ-ի անդամներն էին. ՀԱԿ-ից՝ Արմեն Ավետիսյանը, Վլադիմիր Քերոբյանը, Ժորա Ֆարյանը, «Ազատ Հայք»-ից՝ Ռոբերտ Աղաջանյանը, Հովիկ Մեսրոպյանը, Առաքել Բալասանյանը, «Գոյատևում»-ից՝ Ռոլանդ Բաբայանը, Վաչագան Սարգսյանը, Սմբատ Կարախանյանը: Փոխարինաբար ԱԿՄԽ-ի նիստերին մասնակցում էին նաև Սամվել Քոչարյանը, Վիտալի Ստեփանյանը, Ռոբերտ Մանուկյանը, Արայիկ Անտոնյանն ու Արմեն Բաբայանը (ՀԱԿ), Ոսկան Գյուլումյանը, Սահակ Մկրտչյանն ու Կարեն Ղազարյանը («Ազատ Հայք»), Գոռ Գասպարյանը, Գրիգոր Ներսիսյանը, Նիկոլայ Վարդանյանը, Արթուր Ասատրյանն ու Հրաչ Ավետիսյանը («Գոյատևում»): ԱԿՄԽ-ի գործունեությունն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով նրա անդամներից կազմավորվեցին քաղաքական, ռազմական և դրամամիջոցների հանձնախմբեր, որոնք գործում էին նպատակաուղղված ու բացահայտորեն:

Սակայն զենք-զինամթերք չունենալու պատճառով անհրաժեշտություն առաջացավ արագորեն կապվել որևէ ռազմական կազմավորման հետ: ԱԿՄԽ-ի որոշմամբ նախապատվությունը տրվեց ՀԱԲ-ին, որ Երասխի ճակատամարտն ավարտվեց մեր աշխարհազորայինների փառահեղ հաղթանակով և միայն

խորհրդային բանակի միջամտությունը կանգնեցրեց կամավորներին, խանգարեց արժանվույնս պատժել հակառակորդին և ազատագրել մեր նախնյաց հողը:

ՀԱԲ-ին տրամադրելով իր առաջին շուրջ չորս տասնյակ կամավորներին, ԱԿՄԽ-ն սկիզբ դրեց երկկողմանի համագործակցության, որը հետագայում հնարավորություն տվեց Աբովյանում հիմնել ՀԱԲ-ի Կոտայքի շրջանի և Աբովյան քաղաքի Կոտայքի գունդը: Ստեղծվեց Ռազմական խորհուրդը և գլխավոր զորակայանը: Կոտայքի գնդի գլխավոր հրամանատար նշանակվեց անձամբ ՀԱԲ-ի գլխավոր հրամանատարի կողմից, զինվորագրվածների գերակշիռ մասը որևէ հասարակական-քաղաքական կազմակերպության անդամ չէր և ազատ էր իր քաղաքական-գաղափարական հայացքներում: Դա 1990 թվականի փետրվարի 15-ն էր, երբ ՀԱԲ-ի գլխավոր հրամանատար, Ռազմական խորհրդի նախագահ Ռազմիկ Վասիլյանի թիվ 16 հրամանի համաձայն, ԱԿՄԽ-ի կողմից ստեղծված առաջին ջոկատի հրամանատար Արմեն Ավետիսյանը նշանակվեց ՀԱԲ-ի Կոտայքի շրջանի և Աբովյան քաղաքի Կոտայքի գնդի գլխավոր հրամանատար՝ հարյուրապետ (հետագայում՝ հազարապետ և ՀԱԲ-ի գլխավոր հրամանատարի տեղակալ՝ քաղաքական-գաղափարական աշխատանքների գծով): Նշանակումը տեղի ունեցավ այն օրը, երբ ԱԿՄԽ-ի կողմից ՀԱԲ-ին տրամադրվեց առաջին ջոկատը՝ հրամանատար՝ Արմեն Ավետիսյան, ավագ՝ Վաղինակ Զաքիյան և շարքայիններ՝ Սամվել Անտոնյան (հետագայում քաջաբար զոհվեց Արցախում՝ զինված ընդհարման ժամանակ), Վարուժան Մարգարյան, Նորիկ Խուդավերդյան, Սյոմա Առաքելյան, Արթուր Հալաբյան, Սամվել Ղազարյան, մի քանի օր անց նրանց միացած՝ Առաքել Բալասանյան, Վրույր Բայբուրդյան, Համլետ Աբրահամյան, Ոսկան Գյուլումյան, Կարեն Ղազարյան: Հաջորդ օրը ՀԱԲ-ի Կոտայքի գնդի հրամանատարական կազմը հանդես եկավ ինքնուրույն հայտարարությամբ և ՀԱԲ-ը Կոտայքի շրջանում ու Աբովյան քաղաքում սկսեց իր գործունեությունը: Գլխավոր զորակայանի պետի գլխավորությամբ ու հսկողությամբ նրանք զբաղվում էին զենք-զինամթերքի, զինվորական հանդերձանքի, ավտոմեքենաների, վառելիքի, սննդամթերքի և զինվորներին անհրաժեշտ այլ պարագաների ձեռքբերմամբ ու պահեստավորմամբ: Գնդի գլխավոր հրամանատարի բացակայության դեպքում (երբ գտնվում էր ՀԱԲ-ի սահ-

Զինավարժության ժամանակ:

Արմեն Ավետիսյան՝ Հայ Արիական Միաբանության առաջնորդ, Վայքի Խնձորուտ գյուղ, 1990թ

մանամերձ ճամբարներում և այլն) նրան փոխարինում էր գլխավոր զորակայանի պետը՝ Ռոբերտ Աղաջանյանը:

Գնդի գլխավոր զորակայանում, բացի կամավորների հավաքագրումից, կազմակերպվեցին նաև խորհրդային բանակից փախած զինծառայողների և զինակոչային տարիքի երիտասարդների պաշտպանությունը և հետագա ծառայությունը ՀԱԲ-ում, իսկ ՀԱԲ-ի Ռազմական խորհրդի կողմից լիազորված Արմեն Շահբազյանի օժանդակությամբ՝ Աղանստանում խորհրդային բանակի կազմում ծառայած հայորդիների հավաքագրման ու ՀԱԲ-ում նրանց նպատակային ծառայության անցնելու աշխատանքները:

...Շուտով տարբեր զինված խմբավորումներ և քրեական տարրեր սկսեցին հանդես գալ ՀԱԲ-ի անունից, կատարել թալան, անկարգություններ և հակահասարակական այլ արարքներ:

Կենտրոնում Արմեն Ավետիսյանը: Շամշադին, Այգեձոր հենակետում, 1990թ:

Հայկ Հարությունյան, Արաբ Հորադիզ, 1992 թ.

Այսպես, բոլոր դժվարությունների հետ մեկտեղ որոշ զինված խմբավորումներ էլ փորձեցին Կոտայքի գնդին ներքաշել կասկածելի զինված միավորումների մեջ և իրենց նպատակին հասնելու համար ակնհայտորեն գործադրեցին նաև ուժային միջոցներ, որոնք ոչ միայն հաջողությամբ չպսակվեցին, այլև արժանի համարժեք հակահարված ստացան, իսկ Ռազմիկ Վասիլյանի և Արմեն Ավետիսյանի համատեղ ջանքերով, ինչպես նաև ՀԱԲ-ի հրամանատարական կազմի անմիջական միջամտությամբ այդ փորձերը կասեցվեցին, ու Կոտայքի գունդը կարողացավ պահպանել իր ամբողջականությունն ու մարտունակությունը:

Այս ընթացքում պաշտոնական գրություն ստացվեց գնդի գլխավոր հրամանատարի անունով, որտեղ Շամշադինի Այգեձորի գյուղխորհրդի նախագահը խնդրում էր ստանձնել գյուղի և հարակից տարածքների պաշտպանությունը՝ խոստանալով անձամբ կարգավորել ջոկատի տեղավորման ու սննդի մատակարարման հոգսերը: Պատասխանը չուշացավ, և շուտով

Սուսաննա Կոստանյան

Գագիկ Մինասյան, 1993թ
Մեծ Հայք ջոկատի հրամանատար

Սուսաննա, Չարենցավան

Կոտայքի գնդի ծամբար ստեղծվեց նաև Այգեձոր գյուղում: ՀԱԲ-ի գլխավոր հրամանատարի հրամանով ջոկատներ ուղարկվեցին նաև Իջևանի շրջանի Կայան ավան և Կրասնոսելսկի շրջանի Թթուջուր գյուղ՝ ՀԱԲ-ի ռազմական ու նաև թիկունքային անհրաժեշտ հանձնարարություններ կատարելու նպատակով:

Կոտայքի գնդի գլխավոր հրամանատարն անձամբ էր պաշտպանում կապը բոլոր ծամբարների և ծակատների հետ ու տեղական իշխանությունների հետ կարգավորում փոխհամագործակցությունը, սննդի և այլ անհրաժեշտ ու հրատապ հարցեր: Ռազմիկ Վասիլյանի կողմից Արմեն Ավետիսյանին տրված լիազորագրերը, համապատասխան գրությունները օժանդակում, թույլատրում էին Կոտայքի, Վայքի, Գորիսի, Իջևանի, Նոյեմբերյանի և այլ շրջաններում ՀԱԲ-ի համար ձեռք բերել անհրաժեշտ նյութական միջոցներ և կազմակերպել ինքնապաշտպանական աշխատանքներ:

Կոտայքի գնդի զինվորներն էլ հսկողության տակ վերցրին Աբովյանի կողմից Երևան մտնող ճանապարհները, հատկապես Երևան-Սևան մայրուղու արդեն մայրաքաղաք մտնող ճանապարհահատվածը, տեղակայվելով ոստիկանական կենտրոնական հենակետի շրջակայքում: Իսկ ճանապարհները դժվարանցանելի դարձնելու համար Աբովյանի տարբեր հիմնարկ-ձեռնարկություններից (հիմնականում «Անդրնավթագազշին-Պրոմեթևս» հիմնարկի ավտոպարկից, վարիչ՝ Աշոտ Հակոբյանի գլխավորությամբ. այստեղ էր գտնվում նաև Կոտայքի գնդի վառելիքի պահեստը) արագորեն բերվեցին ծանրաքարշ ինքնաթափ մեքենաներ և վեր բարձրացված թափքերով ու մի քանի շարքով կանգնեցվեցին ճանապարհների երկայնքով: Ծուտով գնդի զինվորներին օգնության եկան բազմաթիվ կամավորներ Աբովյանից, Երևանից և շրջակա գյուղերից՝ զինված բենզինով լցված շշերով, պայթուցիկ նյութերով, նռնակներով, ինքնաշեն զենքերով և նույնիսկ անզեն:

Կոտայքի գնդի մարտիկները Գեղազնիկ Միքայելյանի (Չավուշ) ջոկատի հետ միասին մասնակցել են նաև Նոր-Հաճնի ուսումնամարզական օդակայանի պաշտպանությանը, որին փորձում էին տիրապետել խորհրդային բանակի զինվորները...

1988թ. փետրվարի 18-ից Հայ Ազգային Զարթոնքի և Արցախյան Ծարժման մասնակիցներից է Արմեն Ավետիսյանը, որը կազմակերպել էր գործադուլներ, հանրահավաքներ, բողոքի երթեր: Նա եղել է Աբովյանի «Ղարաբաղ» կոմիտեի խորհրդի անդամ, մասնակցել Երասխավանի, Խնձորուտի և Բարձրունիի, Կոռնիձորի, Այգեձորի (Տավուշի շրջան), Ոսկևանի, Բարեկամավանի, Կոթիի, Կիրանցի, Ոսկեպարի, Բաղանիսի (Նոյեմբերյանի շրջան) ինքնապաշտպանական մարտերին: Նա ամուսնացած է, ունի երեք դուստր՝ Անին, Արաքսը եւ Արփին: Կինը՝ Արևհատ Ավետիսյանը, տնային տնտեսուհի է: Հայրը՝ Վանիկ Մինասի Ավետիսյանը, 1915թ. Հայոց եղեռնից մազապուրծ կարսեցու՝ Մինասի շառավղից է:

Այսպիսով, «Ղարաբաղ» կոմիտեն Վ.Սարգսյանի քրտնաջան աշխատանքով ձևավորվում էր ինքնապաշտպանական ջոկատները՝ դիմակայելու Ադրբեջանի կողմից սանձազերծված հարկադրված պատերազմին:

Գրիգոր Մելքոնյան՝ Ծուռ Գոքոր, Մարտակերտ 1992

ՎԱԶԳԵՆ ՍՊԱՐԱՊԵՏԻ ԵՎ ԴԱՎԻԹ ՁԱԴՈՅԱՆԻ ԾՐԱԳՐԱԾ ՆՅՈՒ-ՎԱԴԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

1992 թ.-ի մարտի 3-ին Ծահումյանից 50 ուղևորներով Երևան եկող ուղղաթիռը թշնամին խփեց, 2 հոգի վառվեցին, մոխրացան: Ռաֆիկ Խաչատրյանը, Ալեքսան Հակոբյանը, Գաբոն, Միքայելը իրենց հատկացված ուղղաթիռով մեկնեցին օգնության: Առաջին օրը փրկեցին 28 հոգու, երկրորդ օրը՝ 6-ի, հրաշքով փրկված հղի կնոջն Ալիկ Պետրոսյանը և Ալեքսան Հակոբյանը պատգարակով հասցրեցին ուղղաթիռ, որն էլ նրան տարավ հոսպիտալ:

Մեկ ամիս առաջ փետրվարի 28-ին Մի-8 ուղղաթիռով Շուշիի ազատագրման համար նախապատրաստական ստուգողական օդային հետախուզություն կազմակերպեց Կոմանդոսը, որի նպատակն էր օդից բացահայտել Շուշիում տեղակայված ռազմական կրակակետերի տեղերը:

Ռուբիկ Բաղդասարյանի հուղարկավորությունը, 1992 թ. հունիսի 13

Հետախուզությունը բացահայտում և ոչնչացնում է այդ մահաբեր 3 կրակակետերը:

Դա ՀՀ պաշտպանության նախարարության կից հատուկ նշանակության ջոկատ էր (հանձնարարությունների հետախուզական ջոկատ) Արցախի գծով:

1992թ. մարտի 30-ին Ալեքսան Հակոբյանը Կրկժանի մարտերում վիրավորվում է: Այնտեղ միասին մարտնչում էին Ծենգավիթի «ՄԵԳՎԱԽ» ջոկատի հերոս քաջորդիները:

Այս բոլոր անմեղ զոհերի ու արյան պատճառը լենինյան անհեռատես ազգային քաղաքականության պտուղներն էին: Եվ միանգամայն տրամաբանական էր ու արդարացի, որ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի որոշմամբ անօրինական ճանաչվեց ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի 1921 թվականի հուլիսի 5-ի որոշումը, համաձայն որի Լեռնային Ղարաբաղը բռնակցվել էր Ադրբեջանին:

Ինչպես ասել ենք, Կոռնիձոր ջոկոտը եղավ ինքնապաշտպանական ջոկատների ջահակիրը և 1990թ. հունվարին մասնակցեց Երասխավանի մարտերին: Արայիկ Խուդավերդյանը մեծ նպաստ բերեց ապրիլի 10-ին հանրապետությունում Երկրապահ կամավորական ջոկատների կենտրոնական շտաբի ձևավորմանը, որը ընդգրկեց հանրապետությունում գոյություն ունեցող զինված կազմակերպությունների գրեթե 80-տոկոսը:

Ատոմ Մխիթարյան, զոհվել է 1992 թ. հունիսի 13-ին

Ապրիլի վերջին կենտրոնական շտաբի անդրանիկ նիստի ժամանակ ընտրվեց ռազմական խորհուրդ՝ յոթ անդամով: Հրամանատար ընտրվեց Վազգեն Սարգսյանը:

Հետո Հայաստանի Երկրապահ ջոկատների լիազոր ներկայացուցիչների ժողո-

վում ընդունվեց հռչակագիր, որով 30-ից ավել ջոկատներ դրվեցին ՀՀ գերագույն խորհրդի ստեղծած պաշտպանության խորհրդի ենթակայության տակ: Միաժամանակ կոչ էր արվում մյուս ջոկատներին հանուն Հայաստանի պետականության գաղափարի՝ հետևել երկրապահ կամավորականների օրինակին, քանի որ դա այն հիմքն էր, որի վրա հետագայում ստեղծվելու էր հանրապետության միասնական բանակը՝ համապատասխան ռազմական կառուցվածքով ու կանոնակարգով:

ՀԱԲ-ը 1990թ. հոկտեմբերին լուծարվեց, որի վերաբերյալ բանակցություններն ընթանում էին Հանրապետության հրապարակի Էրեբունի հյուրանոցի փոքր հրապարակում, որի կենտրոնով անցնում էր ծոպանատիպի թել՝ որպես սահման: Վազվզում, խոսում, վիճում էին թելի աջ ու ձախ մասերում հավաքվածները:

Այնտեղ էին Իգոր Սուրադյանը, Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԸ, Բաբկեն Արարքցյանը, Մարտին Բաղդասարյանը, Մայիսը՝ Ճայը և այլոք:

Այնուհետև որոշվեց ստեղծել ՀՀ պաշտպանության կոմիտե:

1991թ. կոմիտեի նախագահ նշանակվեց Վահան Ծիրխանյանը: Նա իր աշխատանքները համադրեց պաշտպանության և ներքին գործերի հանձնաժողովի նախագահ Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻ հետ:

Այդ օրերին էր, որ ՊԱԿ-ը խորհրդային 4-րդ բանակի ուժերով Ադրբեջանի հետ կազմակերպեց «Կոլցո» օպերացիան:

Ադրբեջանի կողմից պարտադրված պատերազմին ԼՂՀ-ում կազմակերպվեցին ինքնապաշտպանական շրջանների մեկական վաշտերին ամրացված գումարտակներ: Հզորացվեց Ստեփանակերտի շրջանը, ուր արդեն գործում էր ուժեղացված գունդ: ՀՀ զինված ուժերի ստեղծումը դարձել էր ծայրահեղ անհրաժեշտություն: Արդեն հրամայական պահանջ էր պետական բանակի սեփական պաշտպանական համակարգի ստեղծումը:

Դա էր նորանշանակ պաշտպանության նախարարի խնդիրը, որն արձանագրվեց 1992թ. հունվարի 28-ի առաջին հրամանով, որով ստեղծվեց չորս հիմնական գունդ (այդ օրը պետական բանակի ծննդյան օրն է): Զուգահեռաբար ուժեղացվեց երկրապահ ջոկատների միացյալ կենտրոնական շտաբը,

որը գործում էր մեկ ընդհանուր հրամանատարության տակ. հրամանատար՝ Վ.ՍՊԱՐԱՊԵՏ:

Ընտրվեց 7 հոգուց բաղկացած գաղտնի ռազմական խորհուրդ: Ետաբն իր որոշակի խնդիրներն ուներ՝ ջոկատների գրանցում, զենքերի հայթայթում և արտադրություն (ինչպես ասել ենք զենքի առաջին արտադրությունը կազմակերպվել է Չարենցավանում):

Որոշվեց նաև շտաբի ենթակայության տակ ունենալ հատուկ ծառայության ջոկատ, որի կորիզը կազմեցին սահմանամերձ մարզերում աչքի ընկած ազատամարտիկներ Վարդան Հովակիմյանը, Մարտին Ղազարյանը, Գագիկ Կիրակոսյանը, Սասուն Բարբարյանը, Արայիկ Ղազարյանը, Սերժիկ և Սարո Մանասյանները, Ջիվան Վարդանյանը, Սամսոն Աթոյանը, Մկրտիչ Ստեփանյանը, Սեյրան Առաքելյանը, Արսեն Գևորգյանը, Սուրեն Սահակյանը, Վարդան Վարդանյանը, Լյովա Մանվելյանը, Աշոտ Ծահնազարյանը, Սամվել Սողոմոնյանը, Մամիկոն Բոթոյանը, Սամվել Խաչատրյանը, Ալեքսան Հակոբյանը, Նորիկ Սարգսյանը, Գրիշա Ջալալյանը և այլոք՝ թվով 27-հայորդիներ: Ասենք, որ Խոջալուն ազատագրվելուց հետո առաջին գրադը, որի կազմակերպիչները եղել են Արա Խուդավերդյանը, Սամսոն Աթոյանը և Ալիկ Պետրոսյանը, Վարդենիսից ուղղաթիռով տեղափոխեցին Արցախ:

Հատուկ նշանակության ջոկատի ուղղաթիռը օդ բարձրացավ կարևորագույն առաջադրանք կատարելու՝ թշնամու կարևորագույն հենակետերը ռմբակոծելու համար. այն Քոլատակի Սարսանգ ջրամբարի տարածքում էր: Անձնակազմը՝ Վարդան Հովակիմյանը, Ռուբեն Բաղդասարյանը, Ատոմ Մխիթարյանը, Ռաֆիկ Խաչատրյանը, Խաչիկ Միրզոյանը, Արմեն Ծահնազարյանը, հերոսաբար զոհվեցին՝ հետմահու արժանանալով «Արիության» մեդալի:

Ունենալով տարբեր մասնագիտություններ՝ նրանք կարող էին և զենք-զինամթերք պատրաստել, փորձարկել, նորոգել ու անհրաժեշտության դեպքում վարորդություն անել, զինտեխնիկան տեղ հասցնել, անգամ՝ փոխարինել ուղղաթիռի օդաչուին:

Զենք ու զինամթերքի փոխադրումը մարտական գործողությունների շրջանում ստանձնել էր այս ջոկատը: Իր վրա դր-

ված պարտականությունները ջոկատը փայլուն էր կատարում: Հատուկ բեռներն ու օգնությունները հասցվում էին Մեղրիից մինչև Նոյեմբերյան, Արցախ Յակ-40, Մի-26, Մի-24 ինքնաթիռներով և ուղղաթիռներով ջոկատի ուղեկցությամբ երբեմն մինչև 5-6 թռիչք էր կազմակերպվում, հաճախ մետաղե բազեները վերադառնում էին խոցված, վիրավոր, սակայն վերադառնում էին, որովհետև օդաչուները՝ Ռաֆիկը, Արմենը, Էդիկը, Գեղամը, Հովիկը, Ղարիբը, Ստյոպան, դեռ հատուկ բեռ ունեին հասցնելու, վիրավորներ՝ թիկունք տեղափոխելու:

Ովքե՞ր էին ազատամարտիկ կոչված մեր տղաները՝ պատմում են հատուկ ծառայության ջոկատի մարտիկներ Ալեքսան Հակոբյանը, Սուրեն Սահակյանը, Սամսոն Աթոյանը: Արտաքուստ լռակյաց, հոգով ամուր, կայունությամբ համարձակ, անշահախնդիր, սակայն կրակի կտոր տղաներ: Կոռնիձորյան երդվյալներ:

Ամեն ջոկատ իրեն հոգեհարազատ անուն էր կրում՝ հայաշունչ ու սրբազան: Ավագ լեյտենանտ Խաչիկ Նազարեթյանի

Նյուվադիի պաշտպանները, ձախից երկրորդը՝ Եերուկ Գագոն, Միլվան մարտական ընկերների հետ Եվանիձոր 1991թ

որդին՝ Սաշիկը, վիրավորվեց Երևանի կայարանի ռուսական բանակի դեմ մարտնչելիս, Վրեժը՝ Իջևանի սահմանագծի ինքնապաշտպանական մարտերում: Խաչիկը զենքի վրա երդվեց վրեժխնդիր լինել: 1992թ. Հանգակատան դիրքերի մարտերում նա վիրավորվեց և հոսպիտալում մահացավ:

- Մեր ջոկատն անուն չուներ. այն պարզապես ՀՀ պաշտպանության նախարարության հատուկ ծառայության ջոկատ էր կոչվում, որը երկու ջոկատների միավորման արդյունք էր և միացավ Վարդան Հովակիմյանի ջոկատին, որն օգնում էր Արցախին,- պատմում է Ալեքսանը,- զենք ու զինամթերքը, օգնությունը տեղ էր հասնում ժամանակին, սակայն ի՞նչ գնով:

Կենտրոնում՝ Արջ Աշոտը, Կորյուն Ղումաշյան, 1989 թ. Մարտական ընկերներով

Պատերազմը հապաղել չի սիրում, այն պատժում է դանդաղաշարժներին:

Մենք, հայթայթելով այս ամենը և տեղափոխելով, ակամա մասնակից էինք դառնում օդային մարտերին:

Խաղաղ օրերի համար ստեղծված ուղղությունները պաշտպանել էր պետք, իսկ թե վառելիք տեղափոխող «Բորտը» օդում խփվեց, հոգ չէ, էլ գերեզմանն ինչի՞դ է պետք, իսկ թե զինամթերք տեղափոխող ավտոշարասյունը ռմբակոծվող ճանապարհով տանելը ջրի ճամփա ես սարքել (այլ ելք ու միջոց չկա) ուրեմն պիտի վարորդ լինես, ու եթե մեքենան շուռ եկավ, հավաքես գետի մեջ, ձորում ցրիվ եկած զինամթերքը, ուժասպառ տեղավորես մյուս մեքենայի մեջ, ու թե բեռը շատ եղավ, երբեմն «ոտքի տրանսպորտը» գործի դնես: Ժամանակը թքած ունի՝ կհասցնե՞ս, թե ոչ: Չէ՞ որ այնտեղ՝ մարտադաշտում, քո երդվյալ եղբայրներն են:

Այդ ժամանակ բոլորը մեկ մարդու պես, այդ թվում նաև Կոռնիձորի ջոկատը միացյալ ուժերով, Ծահումյան, Էրքեջ, Մանաշիդ, Ղարաչինար և այլ շրջաններում մարտնչում էին թշնամու դեմ: Հասնել, օգնել էր պահանջվում:

Թե վերադառնալիս կարողացար գոնե մի քանի րոպեով ննջել, ուրեմն բախտավոր աստղի տակ ես ծնվել:

Քաշաթաղի ու Ծուշվա արանքում ծվարած՝ հայ փախստականների համար շարասյունը պիտի կանգնի, որպեսզի իջեցնես սեփական ուժերով հայթայթած հացի հերթական բաժինը, իսկ թե Ստեփանակերտում քեզ առաջինը չդիմավորեցին, թուրքալեզու հրետանին ու ավիացան, ուրեմն տրորիր զարմանքից չռված աչքերդ ու աշխատիր տեսքի գալ, պաշտպանության կոմիտեի շենքից հնարավորինս հեռու կանգնեցնել շարասյունը և շտապիր զեկուցել գլխավոր հրամանատարին, նա անկախ իրավիճակից, բարդություններից, լարված բոլոր զգայարաններում կծգնի բացել հոգնած կոպերը, սիրալիր կժպտա ու քո հասցեին ասված գովեստների մեջ կտա ամենակարևոր հարցը. «Ի՞նչ ես պերալ, քե մատաղ»:

Հետո կմտնես ոչ բոլորին թույլատրվող սենյակը և ուղիղ կապով կզանգես նախարարություն ՍՊԱՐԱՊԵՏԻՆ՝ քո անմիջական հրամանատարին, և հայտնես, որ ամեն ինչ կարգին է:

Հիշում եմ ձմեռային պայծառ օր էր, Կոռնիձորի դիմացի թուրքական Ջիջիմլի գյուղի անցուդարձը պարզ երևում էր: «Կոռնիձոր» ջոկատի ազատամարտիկները մեծ ֆիդայապետ Արաբոյի մաուզերի վրա երդվում էին: Սոսը պատմում էր:

Բաղդադի խալիֆը դեսպաններ է ուղարկում Հայաստան, որոնք նրա անունից պահանջում են Գագիկ թագավորի դստերը՝ գեղեցկուհի Ծովինարին և սպառնում՝ չտալու դեպքում պատերազմի դուրս գալ: Խալիֆը կռապաշտ էր, մահմեդական, իսկ աղջիկը՝ խաչապաշտ: Ծովինարն ինքը միանում է այն մարդկանց կարծիքին, ովքեր գտնում են, որ ավելի լավ է տալ աղջկան, որ խալիֆը չգա Հայաստան, երկիրը մոխիր դարձնի, խլի հազարավոր մարդկանց կյանքը: Այս է պատճառը, որ հայ ժողովրդի ծոցից ծնվում են Դավիթներ և պայքարում սեփական ժողովրդի ազատության համար: Եվ այսպես ծուռ Դավիթն ասաց.

Յոթ տարվա խարջը ոսկին ես պիտի չափեմ
Դավիթը հերստավ, էլավ կանգնավ,
Կոտ վերցուց ասաց.
Յա հացն ու գինին, տեր կենդանին,

Նյուվադիի պաշտպանները՝ Սիլվան ու ծերուկ Գագիկը 1991 թ.

Մարութա բարձր Աստվածածին:
Ասաց, կոտ զարկեց Կոզբադինի գլխին:
Կոզբադինին բռնեց էնոր ատամները
Քաշեց շարեց ծակատին:
Էլան քոռ ու փոշման Բադին, Կոզբադին,
Սուդին, Շարխադին, իրենց զորքը թողին
Փախան Մսրա էրկիր:

Հայաստանի ու Պարսկաստանի սահմանագծում՝ Մեղրիի՝ Արաքս գետի հարևանությամբ թուրքաբնակ հայկական Ծվանիձոր և Նյուվադի գյուղերը իրենց տան մեջ խաչված գերության մեջ ցավից տնքում էին:

Պարսիկները մարդկանց խստագույնս պատժելու համար խաչում էին՝ ոտքերը հողից կտրված, այսինքն՝ մարդը պիտի երկրի կյանքից կտրված մեռնի:

Խաչելությունը հռոմեացիները պարսիկներից են վերցրել: Քրիստոնեությունն ընդունելու և այն երկրում տարածելու համար Պարսից Անաստասը ենթարկվեց մահապատժի:

Աղվանական ջոկատը՝ շուրջ 80 հոգի, որի հրամանատարն էր Սմբատ Հակոբյանը մարտի 15-ին հաղթարշավով հասավ



Տաթևի վանք

Մեղրիի հարևանությամբ թուրքերից ազատված մի փոքրիկ գյուղ: Նստեցին կարծատև հանգստի: Երասխավանի ինքնապաշտպանական մարտերից հետո 1989 թվականին Դավիթ Զադոյանը թիկունք կանգնեց Վազգեն Սարգսյանին, Արարատի ջոկատը համալրվեց 700 հոգով, որոնք համագործակցում էին Արամ Անդրանիկի Բալոյանի (Դավալլու գյուղի ջոկատի հրամանատար), Գասպար Ավետիսի Գրիգորյանի (Վանաշեն գյուղի ջոկատի հրամանատար), Կարո Հովհաննեսի Խալաթյանի՝ Ժորայի (Ավշար գյուղի ջոկատի հրամանատար), Տիգրան Հովհաննեսի Գևորգյանի (Երասխ ջոկատի հրամանատար) և մյուս կամավորական ջոկատների հետ: Վազգեն Սարգսյանի ղեկավարությամբ կազմակերպում են Երասխավանի ինքնապաշտպանությունը, որը հիմք դրեց Վազգեն Սարգսյանի ոդիսականին և կնքվեց «ՍՊԱՐԱՊԵՏ» անունը: Իսկ մինչ այդ հունվարի 14-15-ին ազատագրել են Քարքի գյուղը, բայց Նախիջևանի Գյուլլեբյուտ գյուղից ռմբակոծում էին Զանախչին՝ Պարույր Սևակի գյուղին, որը Հ. Ալիևի ու Դավիթ Զադոյանի բանակցություններից հետո դադարեցվեց:

Ռոմիկը՝ Բուդոն, ռադիոկապով իրավիճակի մասին ծածկագիր ուղարկեց Երևան: Նյուվադի ազատագրման օպերացիան սկսելու համար, որը նախօրոք Դավիթ Զադոյանի և Վազգեն Սարգսյանի կողմից արդեն կազմված էր: Դավիթ Զադոյանը, ծանոթանալով խորհրդային անվտանգության ծառայության բարձրաստիճան մի աշխատակցի հետ, կանչում է Հրազդանի ձորի ամառանոց: Վազգեն Սարգսյանի վերջնական համաձայնությունից հետո մեկնում են Մոսկվա՝ Կրուշկովի օգնական Ճիրինի հետ մշակում Նյուվադի ազատագրման օպերացիան:

Երևանից հարցրեցին՝ «Առաջինը» զանգե՞լ է Մեղրի, թե՝ ոչ: «Ում որ ուզում եք, այստեղ չէ»,- պատասխանեց Ռոմիկը: «Առաջինը» Մեղրի էր ժամանելու, որպեսզի մշակեին Նյուվադիի ազատագրման ծրագիրը: Կանաչ «Նիվայով» ղեկին նստած Հմայակ Զոհրաբյանի հետ եկավ:

Գյուղից գյուղ գալով՝ երկու շարքով երկար ու ձիգ իրար կողքով քայլող ազատամարտիկները կայտառ ու զվարթ էին, կարծես պարահանդեսի էին մեկնում: Անհոգ կատակում էին, անեկդոտներ պատմում:

Հագներին խորհրդային բանակի զինվորական համազ-

գեստ էր՝ աղվանկաներ, ծտքակոշիկներ, շատերը բեղ-մորուքով, ուսապարկերը մեջքներին կապած, երկու տեսակ ավտոմատները ուսերից կախած: Կալաշնիկով ձևափոխված ավտոմատ, ԿՁԱ-7.6 մմ և ԿԱ74-5.4 մմ տրամաչափի, նռնականետերով, Ֆ-1 տիպի ձեռքի բեկորային նռնակով, զինամթերքներով ծանրաբեռնված քայլում էին սարալանջի քարքարոտ հողի խորդուբորդ ճանապարհով:

Տղաների բարոյահոգեբանությունը բարձր էր, հավատով գոտեպինդ, իրար նկատմամբ հոգատար: Հարգալից սիրով լեցուն, անշահախնդիր գնում էին մահին ընդառաջ:

Բոլորը նույն տարիքի, նույն հասակի երիտասարդ տղաներ էին: Նրանց շարքերում էր Կոռնիձորի Արաբոյի մաուզերի վրա երդվյալ, Եղեգնաձորի Գանձակ գյուղի, խորհրդային բանակում ծառայած լեյտենանտ Վարդգես Սմբատյանը: Տանկիստի կապիշոնը, սաղավարտը գլխին, երեսը բրդոտ՝ կատարում էր հետախուզական աշխատանքներ: Տեղ-տեղ մոտենում էր շարասյան կողքով երբեմն վազող Սմբատ Հակոբյանի ականջին ինչ-որ բան փսփսում ու նորից անհետանում:

Սմբատը՝ ուսապարկը մեջքին կապած, ավտոմատը ուսից կախած, մետաղե պահպանիչ վահանակը կրծքին ամրացրած, գրպանիկների մեջ պահեստատուփեր և նռնակներ էր լցրել: Երեսը մազակալած էր, գլխաբաց, ծխախոտը ծխելով՝ հրահանգներ էր տալիս և հետևում շարասյան առաջխաղացմանը: Նա վերջից բեռի տակ վազեց, շարասյան առաջատարին հրահանգեց դիմացի բլուրի մոտ խաչվող ճանապարհների մոտ հասնելուն պես կարճատև հանգիստ ընդունել: ՍՊԱՐԱՊԵՏԸ մեզանից շուտ արդեն ուսումնասիրել էր տեղանքը և այնտեղ մեզ էր սպասում:

Այդ ժամանակ տղաները կատակեցին. «Արաբական նժույգի պես երկրի մի բևեռից մյուսն ես թռչում, մտքումդ ես խոսում, ինչու՞ բարձրաձայն չես հայհոյում թուրքերին, որ այս լեռները արձագանքեն Գանձասարի Սուրբ Խաչին, թուրքերը գան հավատի»: Տղաները հայոց սրբավայր աշխարհում, այս գեղատեսիլ բնության գրկում հայհոյանք չեն անում: Գիտենք, որ Վ. Սարգսյանը, ինչպես նաև զորավար Անդրանիկը, պահանջում էին, որ մեր զինվորները չհայհոյեն. պատշաճ է, որ երգելով պատերազմեն: Պատճառը պարզ է, մեզ զորակցում

են ավտոմատները, հեռահար արկերը, որոնք հայհոյանք չեն ընդունում:

Ուրեմն, դիմենք Սասնա ծուռ Ալֆրեդ Ներսիսյանին՝ ԱՖՕյին, թող այդ գործը գլուխ բերի:

ԱՖՕյի երգը ավելի շատ հաղթական մարտ էր, քան երգ: Եվ Աստծո շնորհիվ ու զորությամբ կարողանում էր ԱՖՕն մեր ապուպապերի շունչը հաղորդել մեզ: Կենդանություն ու ոգի էր արթնացնում շատերի թմրած հոգիներում:

Մեր մեծերը ոգի են մեր մեջ, մեր արյան գնդիկներին ջերմություն տվողներն են, որովհետև նրանք մեռած, սակայն հոգով կենդանի են մեր արյան զարկերակների մեջ:

Ազգի համար արված անփոխհատույց արժանավոր գործը հասարակ ժողովուրդը չի մոռանում, սրտում պահում է և այն սրբորեն հաղորդում սերունդներին: Իսկ հարուստ շահամոլները այն խժռում են ու թքում:

Հասնելով բլրալանջի խաչմերուկին՝ գարնան կանաչազարդ հողին խումբ-խումբ փռվեցին՝ ազատվելով մեջքներին կապած ուղեբեռներից:

Ծունչ առնելուց հետո ֆուտբոլի սիրահարները բաժանվեցին երկու խմբի: Խտացրած կաթի դատարկ բանկան օգտագործելով որպես գնդակ՝ սկսեցին ֆուտբոլ խաղալ: 2:0 հաղթեց Նվերի թիմը: «Սասունցիներ» ջոկատի հրամանատար ԱՖՕն չէր մոռացել, պահն է մարտից առաջ երգել ու պարել: 12 հոգի ուս ուսի տված, ձեռքերը ընկերոջ թիկունքում խաչած, իրար ամուր կպած՝ պարում էին դանդաղ, համաչափ: Պարի առաջատարը,օդում թափահարելով աջ ձեռքը, մի պահ ոտքերը գամում է հողին, մարմինը ցնցում ու փոքրիկ ձգումով մարմինը ժամսլաքին հակառակ՝ տանում առաջ: Եվ այսպես ծովի փոթորկող հուժկու ալիքի պես սահելով՝ հաղթական մի ձայն էր ծորում կապուտակ երկնքին:

Պարի առաջատարը պարի ռիթմը ավելի համահունչ դարձնելու համար ուշադիր հետևում է երգչի ձայնային նոտաներին: Ծրջապատող լեռների արձագանքից թնդում էր երկինքը, անգամ լսողի մարդկային սիրտը հպարտությունից ուռչում էր: Այս ամենը մնաց պատմության բնական ու բացօթյա գանձարանում, տղաները շարժվեցին առաջ: Նրանց միացան Մեղրու (հրամանատար՝ Ղևոնդ Հովհաննիսյան), Սասունցիների

(հրամանատար՝ ԱՖՕ, Լենդրուշ), Վեդու (հրամանատար՝ Կամոն) ջոկատները:

Նյուվադին Մեղրու թուրքաբնակ գյուղ է, ժամանակին թուրքերը, հավատարիմ իրենց զավթողական քաղաքականությանը, հասցրել էին իրենց ածի շնորհիվ տեղավորվել և արմատավորվել հայկական տարածքներում՝ լավ իմանալով, որ տարիներ հետո բազմանալով՝ Հայաստանը կնվաճեն, որովհետև Հայաստանի ամբողջ սահմանագծով բնակվում և ածում էին թուրքերը: Աստծո օրհնությամբ հայ ժողովուրդը բռունցքվեց՝ ազատագրվելու թուրքական այդ ժանտախտից:

Սմբատը բաժանեց զինամթերքը, տղաները կանգնեցին դեմ-դիմաց, նայեցին միմյանց աչքերի մեջ՝ ասելով. «Քո հույսով եմ մարտի գնում: Չլինի այնպես, որ 100 հոգի շարվենք կողք կողքի և 10 կմ ռազմագիծը պահելու համար յուրաքանչյուրն ինքն իրեն ներքուստ ասի. «Ես մտնեմ փոսի մեջ, թաքցնեմ մարմինս, կին ու երեխա ունեմ»: ԱՖՕն ասի. «Ես քարի տակ մտնեմ, թող Սմբատը կրակի», Սմբատը այդ պահին մտածի. «Մայրս կմնա անխնամ, ես թաքնվեմ գետնատան մեջ, թող Վարդգեսը կրակի»: Եվ այսպես, եթե 100 հոգին էլ մտածեին իրենց կաշին փրկելու համար, թշնամին անարգել կգար ու բոլորին հատիկ-հատիկ կգլխատեր: Փառք Աստծո, այդպիսի բան չէր կարող լինել, քանի որ ջոկատի մեջ ընդգրկվելը ազատամարտիկի մոտ ուրախություն էր, մարտի մեջ՝ պատիվ, զոհվելը՝ փառք:

Վա՛յ էն ազատամարտիկին, եթե նրան ասեին՝ զենքը վայր դի՛ր ու գնա տուն. դա ազատամարտիկի համար ինքնասպանություն էր, անպատվաբեր դավաճանություն:

Նայելով իրար աչքերի՝ շարժվեցին առաջ:

Արաքսի ափով անցնելու ժամանակ սահման հսկող մետաղյա փշալարերը անզորությունից սատկած հավի վզի պես կախ էին ընկել: Իսկ Արաքսը, գարնան անձրևաջրերից պղտորված, փնչալով վազում էր Կասպից ծով: Հայ-պարսկական սահմանագծի փշալարերը էլ ուժ չունեին, խոնարհվել էին ազատատենչ հայ ազատամարտիկների ոգու առաջ:

Այդտեղ տեղակայված սահմանապահ զորքերը համագործակցում էին ադրբեջանական խաժամուժի և Ադրբեջանում տեղակայված խորհրդային 4-րդ զորամիավորման հետ:

Հասնելով Նյուվադի Կոչ -1028 մ, Չամբակի-1231 մ բարձրություն ունեցող սարերին՝ թուրքական ուժերը դիրքավորվեցին: Ծվանիձոր գյուղի միջով հոսում էր Ծվան գետակը, իսկ Մասրիկ փոքրիկ գետակը անցնում էր Նյուվադի գյուղի միջով և նշված սարերի հարմարավետ տեղերում հայկական ուժերը դիրքավորվեցին՝ նախապատրաստելով նախապես ընթացքում փոփոխված մարտական հարձակման ծրագիրը:

Գարնան արևից տաքացած հողը ջերմություն տվեց քարտեզին, ուժ ու հավատ հաղորդեց հաղթանակի համար: Այս բոլորին տեղյակ էր Վազգեն Սարգսյանը, որ նստած, ավտոմատը քունքին հենած՝ հետևում էր հրամանատարների ռազմական դաշտային քարտեզագրմանը: Կային առաջարկություններ, և վեճերին ու քննարկմանը լուռ ու մտածկոտ հետևում էր: Պիտի քաջ լինենք, հավատանք, վստահենք Աստծուն, առանց առևտրի ու երկմտանքի ասենք միաձայն. «Աստված է, որ մղում է մեզ սքանչելի հաղթանակների: Այս ջոկատը վաղը դառնալու է հայոց բանակի հիմքը: Չենք հասցրել, որ ջոկատները ունենան հոգևոր առաջնորդներ, բժշկական ծառայության համար նորմալ պայմաններ»:

Նյուվադիի պաշտպանները. ձախից՝ Սամսոն Աթոյան, 1991 թ.

ՍՊԱՐԱՊԵՏԻՆ մի պահ թվաց, թե վերջին անգամ է տղերքին մարտի տանում, մտատանջություններից սթափվեց, երբ լսեց «Ուրալ» ավտոմեքենայի հաղթական փնչոցը, որ տեղ հասցրեց զինամթերքը:

Բռունցք արած ձեռքը բացեց, ափը պարզեց առաջ Սուրբ Ավետարանից, թող ափի մեջ կաթի Աստծո օրհնանքը:

«Ուրալ» ավտոմեքենայով զինամթերքը, զենիթահրթիռային ալազանի արկերը բերեցին, իսկ ինքնաշեն ալազանի սարքը հարմարեցրին «Կամազ» ավտոմեքենայի թափքի վրա հետընթացով բարձրացավ լեռան կատարը, ուր հայերի դիրքերն էին տեղակայված:

Արկերի փամփշտակալների տրամագիծը մեծ էր փողի տրամագծից: Կրակելուց հետո ընդարձակվում և լռվում էր փողի մեջ, դուրս չէր գալիս, իսկ մնացորդ վառոդը բոցավառվում էր, որը խանգարում էր անհրաժեշտ հերթական կրակոցներին: Մարտը լինում էր անարդյունք: Վարդգես Սմբատյանը ալազանի հաշվարկի ջոկի հրամանատարն էր, այդ մասին տեղյակ էր պահել հրամանատարությանը:

Այս տղաները 1989 թ. Օպերայի հրապարակից մեկնեցին Կոռնիձոր: Չախից կքանստած ծերուկ Գագիկը: Նյուվադի պաշտպանները, 1991 թ.

Մարտական օպերատիվ գործողությունները ղեկավարում էր Նվերը, իսկ ընդհանուր հրամանատարն էր Սմբատ Յակոբյանը:

Մարտը սկսվելուց առաջ հրամանատարական անձնակազմը նստեց ռազմական խորհրդի: Արմեն Սարգսյանը, աջ ձեռքը պարզած, ցուցամատով օդում գծագրելով, ցուցադրում էր գյուղի հարավային ուղղության հարձակման տեղանքով անցնելու հնարավորությունը:

Վազգեն Սարգսյանի շուրջն էին հավաքվել Աֆօն, Ջիվանը, Մանվել Մահտեսյանը, Ռոմիկ-Բուդոն, Սմբատ Յակոբյանը և այլ հրամանատարներ, որոնք ուշադիր հետևում էին Վազգեն Սարգսյանի մարտավարության, տեղագրման, քարտեզագրման, հարձակման, պաշտպանական, խուսանավելու և այլ նախազգուշական մեթոդների ու ձևերի կիրառմանը:

Տղաները ձևակերպում և նշումներ էին կատարում իրենց փաստաթղթերում:

Վ. Սարգսյանի դեմքը մազակալած էր, բրդոտ, հագին զինվորական հագուստ էր՝ առանց կոչումի: Ավտոմատը ձեռքին՝ մի պահ նստեցին Սմբատ Յակոբյանի հետ, լուռ ծխում էին: Յուրաքանչյուրի կյանքը թանկ էր... Մտածկոտ էր, հանգիստ ու ինքնամփոփ: Ծանր մարտ էր լինելու, թշնամին մինչև ատամները զինված էր, թիկունքից՝ խորհրդային 4-րդ բանակի զինանոցից ընտիր զենքերով ու զինամթերքով: Լավ սնվում էին, որը առաջնահերթ պայման էր զինվորի համար: Պատահական չէ Նապոլեոնը ասել. «Զինվորի ճանապարհն անցնում է ստամոքսի միջով»: Նվերը ներկայացրեց իրավիճակը և հետևանքները: Տրվեցին հանձնարարականներն ու հրահանգները կարգապահական կանոնների պահանջները պահպանելու մասին: Արտասանեց 27, 37, 21 և այլ թվեր: Ճանաչել իրար ըստ պայմանական ազդանշանների: Մարտից առաջ և վերջում ստուգել բացական, ներկան:

- Իմ թանկագին եղբայրնե՛ր, կանաչ հրթիռը նշանակում է մարտը դադարեցնել, կարմիրի մեկ-մեկ կրակոցները նախազգուշական են, դեղինի 2-3 անգամ օդ կրակելուց հետո՝ հետ քաշվել: Կատարել ստուգում ինչպես զենք ու զինամթերքի, այնպես էլ վիրավորների ու զոհվածների քանակի:

ԱՖՕն առաջարկեց՝ հրամանատարը թող մարտը վարի, իսկ

գործողության մեջ կլինենք բոլորս: Յուրաքանչյուրը թող հետևի իր անվտանգությանը: Գնդացրորդը թող խնայի փամփուշտները, մենահատով կրակի: Կան մարդիկ, որ առաջին անգամ են մարտի մեջ մտնում, ամոթ չէ, թող յուրաքանչյուրը հաշվարկ կատարի, հաղթանակից հետո ուրախ գնա տուն:

Սմբատը բարձրաձայն կանչեց Մրդոյին: Նա ներկայացավ: Չի բացառվում, որ սահմանապահ զորքերի հետ բախվենք:

Վ. Սարգսյանը արդեն հաստատել էր հարձակման ծրագրերը, ավելորդ էր համարում խոսելը:

Ծարվեցին, կատարվեց ստուգում: Էգ շունը ծծերը կախ վազեց տիրոջ մոտ, դունչը հպեց զենքին, երկար լեզուն հանելով՝ լիզեց տիրոջ ձեռքը: Մարմինը շարժելով՝ պպզեց հետևի թաթերի վրա:

Նվերը հայտարարեց.

- 4-րդ խումբը մերն է, Վրեժինը և Ղևոնդինը՝ 5-րդը, Մարտինինը՝ 6-րդը:

Նյուվադի գյուղը նման էր Արարատ լեռան հյուսիսային կողմի ձեղքվածքի մեջ ծվարած Ակուռի գյուղին՝ 120 ընտանիքով, որը երկրաշարժի հետևանքով ամբողջովին ավերվել էր:

Կոռնիձորի երդվյալներ Վարդգեսն ու Արմենչոն

Նյուվադին թրքաբնակ հայկական գյուղ է՝ իրար զուգահեռ ձգվող լեռների գրկում ծվարած, երկար ու ձիգ մի գյուղ:

Ազատամարտիկները թուրքերից խլել էին կարևոր հենակետերը, որտեղից լավ երևում էր ամբողջ գյուղը իր շրջապատով, ուր տեղանքին լավ ծանոթ էին տեղաբնակ թուրքերը:

Դա 1990թ. մարտի 22-23-ն էր:

ԱՖՕՆ իր խոսքում ասաց.

- Եկել է պահը, շատ չենք, մեկը՝ տասի դեմ: Բայց ձեզի մեռնեմ, հայոց քաջեր, մարտից առաջ եկեք պարենք հայկական հաղթական, ավանդական քոչարին:

Երգեցին, պարը շաղախվեց երկնքի հետ ու շղթայի նման ձգվեց պատմության գիրկը: Երգում էին «Մախլուտոն», «Հայ կտրիճներ»-ը: ԱՖՕՆ շարքի 4-րդն էր, վերջում՝ Կարենը: Վազգեն Սարգսյանը և Սմբատ Հակոբյանը դիտում էին պարը:

Նորիկը փորձարկում էր ռադիոկապը: Նա հաղորդեց.

- Տեղ հասնելուն պես տեղեկացրեք, որ հասել եք:

Թուրքերը տեղանքը լավ գիտեն, նախօրոք ամուր դիրքավորվել էին:

Նյուվադիի պաշտպանության ժամանակ,
հրամանատար Մարտին Ղազարյան (կենտրոնում կքանստած), Սամսոն Աթոյան
Եվանիձորի բնակիչների հետ, 1991 թ.

Թշնամու կրակակետերից, դզոտներից ուղիղ հայկական դիրքերի վրա էին թռչում արկերը: Սմբատ Հակոբյանը հրահանգավորվեց. «Հարկավոր է շտապ կատարել դիրքերի տեղափոխություն, որը այնքան էլ դյուրին չէր: Սակայն պատերազմը մնում է պատերազմ, որն իր բնույթով ուշ թե շուտ մահ է: Մնում է արագ կողմնորոշվել»:

Վազգեն Սարգսյանի հաշվարկը նորից ճշգրտում էր հարվածի ճիշտ տեղանքը: Ալազանի արկերը թռչում էին աննպատակ, պահանջվում էր ճշգրիտ հաշվարկ, ուղղությունը սխալ էր: Թշնամին ավտոմատային կրակահերթով անցավ գրոհի:

Հայ ազատամարտիկները չերերացին, դիմակայելով՝ պաշտպանությունից անցան հակահարձակման: Գյուղը շրջապատեցին: Դեպի Պարսկաստան, դեպի Հորադիզ թողնելով միջանցիկ ճանապարհ՝ ազգաբնակչության անվտանգ նահանջի համար:

Ալազանի երկրորդ արկը պայթեց գյուղի կենտրոնում, այն, ինչին ձգտում էին հայերը, իրականացավ: Փամփուշտը փողից դուրս չէր գալիս, բոցավառվեց: Վարդգեսը տղաների օգնությամբ կարողացավ հանգցնել կրակը: Ռուսները մեզ վրա չէին կրակում:

«Մեղրի» գումարտակի հրամանատար Սմբատ Գրիշայի Համբարձումյան, Նյուվադի 1991 թ.

Հրամայված էր՝ դիրքերից դուրս չգալ, թշնամին կատաղած էր, բնակիչները խուճապահար փախչում էին գյուղից:

Թուրքերի առաջին դիրքերում 4 հոգի զոհվեցին: Գյուղ մտնող բոլոր ճանապարհները թուրքերը ականապատել էին: Ռազմատեխնիկան չէր գործում, ճանապարհ չկար:

Մարտը սկսված էր, հաղթանակն՝ ապահովված: ՍՊԱՐԱՊԵՏԸ ուղղաթիռով եկավ Երևան: Դիրքային կռիվ էր ընթանում հայերի ու թուրքերի միջև: Սարից սար՝ մոտ 2-3 կմ, լուսածիրային գնդակները թռչում էին՝ օդը լուսավորելով:

Մարտը թեժացավ ժամը 18.00-ին, ավարտվեց լուսաբացին հայերի հաղթանակով, թշնամու արկից զոհվեցին Կարենն ու Վարդանը, իսկ Սմբատն ու Նորիկը վիրավորվեցին:

Աֆղանստանի կռիվներում կոփված, փորձառու, խելացի, հմուտ, ընտիր տղաները՝ Կարենն ու Վարդանը ընկան այնպիսի հատվածում, ուր դժվար էր ընկերների օգնությունը: 4 հերոսներին մի կերպ հասցրին Մեղրու հիվանդանոց: 1990թ. փետրվարի 22-ն էր:

Ազատագրելով Նյուվադին՝ տղաները շտապ հավաքվեցին Մեղրու հիվանդանոցում: Բակում հավաքված՝ սրտատրոփ սպասում էին: Վիրավորներին ուղղաթիռով ուղարկեցին Երևան:

Ի նշան հարգանքի՝ զոհվածների դիակները առանց դագաղի, պատգարակով երկու «Ուազ» ավտոմեքենաներով ուղևորվեցին Երևան: Սգո թափորը Մեղրու Կուլտուրայի տնից շարժվեց: Քաջարան, Գորիս, Սիսիան, Վայք, Եղեգնաձոր քաղաքներում դիմավորում էին հերոսներին և հարգանքի տուրք մատուցում: Նրանց հիշատակը հավերժացնելու համար գլուխները խոնարհելով, ձեռքները բռունցք, երկինք պարզած՝ ոգեկոչում էին՝ չընկճվել, երդմնազանց չլինել, շարունակել պայքարը ընդդեմ ոխերիմ թշնամու:

Նշված քաղաքները պատվով և հարգանքով քաղաք մտնող երկկողմանի ճամփեզրով կանգնած, զինվորական շարասյուներով, ավտոմատների կրակոցներով դիմավորում էին զոհվածներին: Եռագույն դրոշը ծածանվում էր ավտոմեքենայի վրա: Մտնելով Կապան՝ 1990թ. փետրվարի 23-ին Վարդգեսը Կարենի դիակից չէր կարողանում հեռանալ. մտածկոտ էր, աչքերն արցունքակալած:

Վարդանը մորուքով էր, Կարենը սափրված պառկել էր դագաղի մեջ հավերժ քնով: Ռոմիկը՝ Բուդոն, Վարդանի դագաղի կափարիչը տանող տղաների հետևից գլխիկոր ու լուռ քայլում էր:

Ավտոշարասյունը դիակները հասցրեց Երևան, օպերա՝ Ազատության հրապարակ: Լեփ-լեցուն հրապարակը մի ակնթարթում հետ սահեց՝ ճանապարհ բացելով հերոսների համար: Դագաղների առջևից քայլող ազատամարտիկները ամրակուռ, դանդաղ ընթանում էին առաջ: Մի պահ քար լռություն տիրեց, լսելի եղավ Սմբատ Հակոբյանի ձայնը: Մեղրու հիվանդանոցից մինչ Ազատության հրապարակ ժողովուրդը հոգու խորքում հեկեկում էր կորստի համար: Պաստառների վրա գրված էր. «Կյանքս՝ ազատ Հայաստանին»: Այն փակցրին ավտոմեքենայի առջևից, որի հետևից տանում էին զոհվածների դագաղները:

Սգո թափորը շարժվեց Նոր Նորք, հոգևոր առաջնորդ Տեր-Հուսիկը հոգեհանգստի համար Աստվածաշունչ էր կարդում՝ «Հայր Մերը»:

Գերեզմանոցը լայն էր ու երկար: 4 ազատամարտիկ կարողանում էին փոսի մեջ շարժվել: 2 մարտական ընկերներին

Ձախից Սամսոնը՝ մարտական ընկերների հետ, Նյուվադի 1991 թ.

կողք կողքի հանձնեցին հողին: Հողը ձեռքերով լցրեցին, ծածկեցին դագաղները, գերեզմանաթմբին շարեցին պսակներն ու ծաղիկները:

Ռոմիկ-Բուդոն կքանստած էր գերեզմանաթմբին, Վարդգեսը և բոլոր ազատամարտիկները հեկեկում էին: Ծատերի արցունքները քթի խոռոչով, շնչափողով կուլ էին գնում: Եղերական էր պահը, սահմռկեցուցիչ: Ոմանք ծխախոտի օգնությամբ շեղում էին մտքերը, վերհիշում ալազանի բոցավառ ծրթծրթացող վառոդի ուժգնությունը: «Եթե մի քանի ավել արկեր ունենայի ու կրակեի, միգուցե թշնամին չէր հասցնի ռմբակոծել մեր դիրքերը, չէին զոհվի իմ ընկերները»: Եվ այսպես անհեթեթության մեջ խծծված՝ տղաները Վարդգեսի ուսին բոթեցին, որ վեր կենա, գնում են:

1990թ. աշնանը Վազգեն Սարգսյանի կարգադրությամբ մեկնեցինք Քաշաթաղ, Բերդաձոր, որտեղ Վարդգեսը վիրավորվեց, և ուղարկեցին տուն՝ բուժվելու: Երկփողանի ալազանով՝ զենիթային զենքով ռմբակոծում էինք Բերդաձորի մոտերքի թշնամու դիրքերը:

Վազգեն Սարգսյանը Կոռնիձորում էր, ինձ կանչեց իր մոտ: Ներկայացա, վատառողջ էի: Տեսավ վիճակս վատ է, նստեցրեց կողքին, թեյ ու պեչենի հյուրասիրեց, ուրիշ ուտելիք չկար: Այդ պահին եկավ Լաչինի ռուս պարետը՝ Վ. Սարգսյանի հետ բանակցելու: Նրան էլ եղածից բաժին հանեց, ասաց.

- Ախպե՛ր, անուշ արեք, ունեցածներս սա է:

ՍՊԱՐԱՊԵՏԸ բացատրեց, որ Մարտակերտի վիճակը ծանր է: Զոհվածների փաստը շատ ծանր էր տանում, չէր հաշտվում, որ մեծ գործերը զոհեր են պահանջում: Մեկնեցինք Վաղուհաս:

Երկու օր հետո եկավ:

- Վարդգե՛ս, շուրջդ դիակներ են, անշնչացած մեզանից շունչ են ուզում, քարացել է սրտներդ այդպես,- ասելով՝ վիրավոր վագրի պես մի քանի անկանոն շարժումներ կատարեց ու ձուլվեց մթությանը:

Միրբաշիրի ուղղությամբ թեժ մարտեր էին ընթանում, մարտից հանել էին մեզ, զենք ու զինամթերք էինք վերանորոգում, յուղում, պատրաստում:

Վազգեն Սարգսյանը հայտնվեց, ասաց.

- Ուստա Վարդգե՛ս, ի՞նչ կա-չկա, հարսանիքի ե՞րբ ենք գնալու:

Ասացի՝ մեկ ժամ հետո, այսինքն՝ մարտական գործողությունները կսկսվեն 1 ժամ հետո: Ձեռքը խփեց ուսիս, աջ աչքը կկոցեց ու գնաց: Մինչ Վաղուհաս մեկնելը, ջոկատով մասնակցեցինք Քաշաթաղի (Լաչինի) ազատագրմանը: Ջոկատները խառը մարտնչում էին թշնամու դեմ, 26-ամյա Յուրան ղեկավարում էր մարտը: Կրակոցներով կարողանում էինք իրար հետ խոսել, հատկապես հետախույզներս հազվագյուտ պահերին էինք օգտագործում օդային կրակոցներից օգտվելը: 2 կրակոցը Վարդգեսն էր, 3 կրակոց՝ Դուշման Վարդանը, Սմբատ Հակոբյանը: «Լեգեոն»-ի հրամանատարն էր Մասիսի Լյովան: Մարտերով հասանք Հագարի գետի վտակներից մեկի վրա ծվարած Զաբուխ-Աիմավան գյուղը: Մեզ աղ ու հացով դիմավորեցին: ՍՊԱՐԱՊԵՏԸ՝ զինվորական հագուստով, ավտոմատը ուսից կախ՝ շնորհավորեց մեզ հաղթանակի կապակցությամբ: Գոտեպնդելով՝ բացատրեց, որ այստեղից Քարվաճառով մինչ Օմար հարկավոր է մարտական գործողություններով մաքրել, ազատագրվել թուրք ահաբեկիչ-բռնակալներից: Ուտելիքներս հաց, պանիր, գառան մսից խաշլամա էր, կուշտ կերանք, գնացինք հանգստի: Մինչև լույս լսվում էր տղաների ուրախ հաղթական երգն ու պարը: Չորս կողմից կրակների բոցերը երկինքն էին լուսավորում:

Հիշեցինք, որ 1992թ. օգոստոսին 500 մահապարտներից մայրաքաղաքային գնդում հավաքվեցին 275 հոգի, որից կազմավորվեց «Արծիվ-1» մահապարտների առաջին գումարտակը: Ղեկավարում էր Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԸ, հրամանատարն էր Ալիկ Պետրոսյանը, տեղակալը՝ Հովսեփ Հովսեփյանը, հրետանու դասակի հրամանատարն էր Արթուր Ալեքսանյանը՝ Ամարասի Արթուրը:

Մասիսից ուրախ-զվարթ, երգով-պարով ճանապարհվեցինք Մարտակերտ, Վաղուհաս, Գանձասար: ՍՊԱՐԱՊԵՏԻ դեմքին թախիծ, դժգոհություն չնկատեցինք. նա երգում էր... Դեշեկան ուսիս դրած՝ քայլում էի և հանկարծ ոտքս հայտնվեց հակատանկային ականի վրա: Քարացա, ծնկներս դողացին, թուքը բերանումս չորացավ, լեզուս կապ ընկավ: Մի կերպ հասկացրի, որ կանգնած եմ ականի վրա: Զգուշորեն սակրավորը ականազերծեց, շունչս եկավ տեղը: Մահից փրկվելով՝ չէի կարողանում ուշքի գալ:

Կասկած կար, որ Վաղուհասի տեղաբնակներից լուսարձակով գիշերները թշնամուն ինֆորմացիա էին հաղորդում: Վերադառնում էին ցախը էշի վրա բարձած՝ իբրև զբաղված ենք ցախ ծմեռելու աշխատանքով:

Օպերայի ազատության հրապարակի նստացույցի մի խումբ տղաներով տեղափոխվեցինք ՀՀ Գերագույն խորհրդի շենքի առաջ, նստեցինք հացադուլի՝ պահանջելով Ղարաբաղի անջատումը Ադրբեջանից, Մայր Հայաստանին միանալու հարցը:

Ռուսաստանի կողմից գաղութացված Հայաստանը, առանց Մոսկվայի թելադրանքի, ոչինչ անել չէր կարող: Սահմաններում ակտիվանում էին թուրքերը:

Նշված խումբը մեկնում է Կոռնիձոր՝ մասնակցելու սահմանամերձ գոտիների ինքնապաշտպանությանը: Այնուհետև մեկնում են Կապան, այնտեղ բացահայտ, առանց վախենալու մեծ օգնություն է ցուցաբերում Կապանի տեքստիլ կոմբինատի տնօրեն Դերո Մարգարյանը, որի մասին կխոսենք հետո:

Իսկ երբ մասնակցում էին Նյուվադի ազատագրմանը,

Մուշեղ Մխոյան՝ Վոժդ, «Մուշ» ջոկատի հրամանատար, Երևան, նրա հուղարկավորությունը, զոհվել է 1991 թ. մայիսի 4-ին,

նրանք դիրքավորվում են Ծվանաձորում: Ջոկատի հրամանատար Մարտին Ղազարյանը Հայզամիում էր:

Օգնության էին եկել Ղևոնդ Հովհաննիսյանը, Համլետ Քոչարյանը, Ռոլանդ Քելեշյանը, կապանցի Նորիկը 1991 թ. գարնանը իրենց ջոկատներով՝ Սամսոնը, Թաթուլը, Արոն, Սասունը, Հայզամիը գերեվարվեցին, որը ցուցադրեցին Մոսկվայի կենտրոնական հեռուստատեսությամբ: ՀՀ ՆԳՆ գնդապետը կոտրում է Սամսոնի բնակարանի դուռը՝ պահանջելով հանձնվել օրենքի դատին: Սակայն Սամսոնին ազատել էին գերությունից և հայտնել Վազգեն Սարգսյանին: Նա հրահանգում է Մարտին Ղազարյանին՝ շրջապատել ՀՀ ՆԳՆ շենքը՝ պահանջելով վերջ տալ այդ անկարգություններին, դադարեցնեն հետապնդումը Սամսոն Աթոյանի նկատմամբ:

Դավիթ Հադոյանը Վազգեն Սպարապետի հետ Նյուվադի ազատագրման օպերացիայից հետո

Սամսոնը ծանր տարավ Վարդան Հովակիմյանի և «Աֆղվանցիներ» ջոկատից Կարենի, Վարդանի զոհվելը: Նրանք կողք կողքի թաղվեցին Նոր Նորքի գերեզմանատանը: Հուղարկավորությունից հետո խումբը համալրվեց, կազմավորվեց և անվանվեց «Վարդան Հովակիմյանի անվան ջոկատ», հրամանատար՝ Մարտին Ղազարյան: Նա անմիջապես մեկնեց Բերդ (Ծամշադին) Մովսես գյուղի ինքնապաշտպանությանը մասնակցելու համար, որտեղ զոհվեց «Վոժդը»՝ Մուշեղ Մխոյանը:

Մովսես գյուղի չորանոցի բարձունք, որը գտնվում էր սահմանագծի վրա՝ թուրքական Թովուզ գյուղի դիմաց, 1991թ. մայիսի 4-ին եկավ Հրաչը՝ «Հարլին» իր երեք ընկերներով, և «Մուշ» ջոկատի հրամանատար Մուշեղ Մխոյանի հետ մեկնեցին հենակետերը ստուգելու: Երկու ժամ հետո նրանք վերադարձան առանց Մուշեղի: Հետախուզությունից եկած մարդիկ չթողեցին պարզել միջադեպը և տարան Մուշեղի դիակը: Հկար նագանը, ոսկե մատանին մատին էր, մի ձեռքում նռնակը, մյուսը՝ օղակը բռնած:

Ծամշադինից մեկնեցինք Ծահումյան, Վերին Ծեն, Ղարաչինար գյուղերի ինքնապաշտպանական մարտերին մասնակցելու:

Մինչև Ծահումյանի անկումը Արցախի գծով ջոկատը ընդգրկվեց ՀՀ ՊՆ համակարգում՝ որպես հատուկ նշանակության ջոկատ, փոխնախարար Ալիկ Պետրոսյանի ղեկավարությամբ հատկապես Արցախին օգնելու մտադրությամբ:

Եվ այդպես հատուկ հանձնարարությամբ զենք-զինամթերքը հասցվում էր Ծահումյան կամ այլ վայրեր: Օդում ուղղաթիռը կանգնած դատարկվում էր, հանձնվում հրամանատարական անձնակազմին, կատարվում էր հանձնման-ընդունման փաստաթղթերի ձևակերպումը, դրանք բերվում էին Ստեփանակերտ, հանձնվում էին ԼՂՀ ՊԲ-ի համապատասխան բաժին: Ասենք, որ Արթուր Մկրտչյանը՝ ԼՂՀ-ի նախագահը, Հայաստան գալով՝ ապրում էր «Պրագա» հյուրանոցում: Երեք օր հյուրընկալվեց Սամսոն Աթոյանին: Նույն սենյակում ապրում էին Ստեփանակերտի գլխավոր բժշկի հետ: Առևտուրն անում էին իրենց ձեռքով և ծաշում միասին: Աշխատանքային մատյանը մոռացել էր Սամսոնենց տանը: Սամսոնը թռավ Ծահումյան: Այնտեղից ուղարկեց Ստեփանակերտ. երկու օր հետո լսվեց մահվան լուրը: Բժիշկը կասի ճշմարտությունը: Արթուրի մահից հետո, ինը թեկնածուներից, ԼՂՀ-ի նախագահ ընտրվեց Ռոբերտ Քոչարյանը:

Եվ այդպես շարունակ՝ հարյուրավոր պատասխանատու թռիչքներ: Գորտի, շան, կատվի միս ենք կերել, չենք տրտնջացել: Կարգն էր այդպես: Համագործակցել ենք «ՄԷԳՎԱԽ», «ԾԱՂԿԱՀՈՎԻՏ», «ԿՈՏԱՅՔԻ», «ԷՋՄԻԱԾՆԻ» և այլ ջոկատների հետ:

«ՄԷԳՎԱԽ» ԳՈՒՄԱՐՏԱԿԸ

Երգահան, երաժիշտ, ազատամարտիկ Ռոմիկ Մխիթարյանը անսովոր ճանապարհի, անսովոր ճակատագրի տեր մարդ էր: Նրան երբեմն թվում էր, թե դա շատ վաղուց էր:

- Երգում էի: Երգը սեր է, կարոտ, կորցրած հայրենիք: Երգը՝ ընդվզում: Երգը պապերիս անկատար երազն է: Ցեղիս ապստամբ ոգին է,- խրամատի մեջ այսպես էր մտորում Ռոմիկ Մխիթարյանը:

- Իմ առաջին կռիվը և վերջինը, բոլորը, հիշում եմ: Բայց թույլ տվեք ոչինչ չպատմել: Գիտե՞ք, հոգու սպիները չեն երևում: Իսկ ես չափել եմ տառապանքի անդունդը:

Ազատագրած ամեն թիզ հողի համար մենք դաժան էինք վճարում:

Ես չէի ուզենա և ատում եմ, երբ Արցախյան պատերազմի մասին, հայրենիքի մասին գրում են ու կգրեն նույն նրանք, ովքեր կռվի դժնդակ օրերին իրենց տաքուկ անկյուններում նըստած, մի ձեռքում սիգարետ, մյուսում սուրճ՝ կեղծ ու սրբաբիղծ տողեր էին շարում թղթին: Եկել է ժամանակը առաջինը մարտնչել հայրենիքի համար: Արտերկիր փախածներն իրենց գրպանի պարունակությամբ մեզ հայրենասիրական դասեր են տալիս, ցավալին դա է»:

Լոռվա աշխարհից եկավ՝ Թումանյանի շնչով, խորհրդային բանակի տանկիստ Սիրեկան Քոչարյանը՝ «Աշոտ-Չուգունը» երեք երեխայի հայրը:

Երդվեց... զոհված ընկերների սուրբ շիրիմների առաջ. անմնացորդ նվիրվել հայրենիքի պաշտպանության ու վերածնման սուրբ գործին:

«ՄԷԳՎԱԽ» երկրապահ ջոկատի զինվոր գրվեց, ինքնապաշտպանական մարտեր էր մղում Վայքի շրջանի Բարձրունի և Հնաբերդ գյուղերում:

Նախիջևանի վերջին հայկական գյուղը, զինամթերք չունենալու պատճառով նոր Հնաբերդ հիմնեց այստեղ:

Այդ օրը զորքի ու զրահատեխնիկայի վտանգավոր կուտակումներ էին նկատվում Գյալմաշտաղ, Ծադա, Աշաղի Բուզգով

ադրբեջանական սահմանամերձ գյուղերում: Կասկածները հաստատվեցին: Վաղ առավոտյան սկսվեց հայկական գյուղերի գնդակոծությունը: «ՄԷԳՎԱԽ» երկրապահ ջոկատը Ռոլանդ Քելեշյանի հրամանատարությամբ, որին օգնում էր Վայքի Վարդան Գևորգյանը, նետվեց անհավասար կռվի:

- Մեզ հանձնարարված էր պահել թիկունքը.- պատմում է Ռոմիկը,- տղաները առաջ էին շարժվել: Հանկարծ նկատեցին, որ թշնամին օղակման մեջ առավ մերոնց: Հրամանատարը որոշեց ութ հոգանոց խմբով շրջանցել լեռն ու, անսպասելի հարձակումով իր վրա վերցնելով հարվածը, թուլացնել ադրբեջանցիների ուժերը, հնարավորություն տալ տղաներին՝ ձեղքելու շրջափակումը: Մեր հանկարծակի գրոհին թշնամին արձագանքեց պատասխան կրակով: Փոխհրաձգությունը տևեց մի քանի ժամ: Հանկարծ ադրբեջանցիները լռեցին: Մենք ենթադրեցինք, որ տղաները կամ նահանջել են, կամ այլևս անկարող են դիմադրել: Հետդարձի ճանապահին, այրելով թուրքական շտաբը, ոչնչացնելով ութ օմոնականների, մեր խումբը փորձում էր աննկատ մոտենալ սահմանին: Ես ու եղբայրս՝ Ռոլանդը, հետևում էինք խմբին: Հանկարծ մի քանի

«ՄԷԳՎԱԽ» ջոկատի տղաները

մետր հեռավորությունից թշնամին դիմահար կրակով փակեց մեր ճանապարհը: Ծուղակի մեջ ընկանք: Փրկության հույս չկար: Միակ մխիթարությունը այն էր, որ չէինք հասցրել օգտագործել բոլոր նռնակներն ու կարող էինք ինքնասպանությամբ խույս տալ գերի ընկնելու վտանգից: Ռոլանդը հրամայեց սեպ կազմել, մխրճվել առաջ: «Գերի չվերցնե՛լ,- գոռում էր նա,- բոլորին կոտորե՛լ անխտիր»:

Հանկարծ մառախուղ իջավ, ու անթափանց խավարը ծածկեց ամեն ինչ: Կորանք ամպերի խորքում:

Թուրքերը կորցրին մեզ:

Իսկ երբ ոտք դրինք մեր հողի վրա, զգացինք փրկության բերկրանքը և մեզ համար պահած վերջին փամփուշտով տոնեցինք հաղթանակը: Կարողացանք դուրս պրծնել դժոխքից:

Երգեցինք ֆիդայական երգեր, անպարտ մեր ջոկատով՝ խրոխտ, ուժեղ: Մեզ հետ էր Դերոն: Վիրավոր, հաշմանդամ, բայց արիասիրտ այդ զինվորն իր ներկայությամբ գերբնական ուժ էր ներշնչում բոլորիս: Մեզ հետ էր նույն Խաչիկը՝

«ՄԷԳՎԱԽ» ջոկատի տղաները

մեր վաթսունն անց բիձան: Որդու՝ Սաշիկի հետ միշտ տաք գծում էր: Մոսոն, Էդոն, Գարիկը, Վազգենը, Արսենը, Խաչիկը Երևանի երկաթգծի կայարանում 1990թ. մայիսի 27-ին նահատակվեցին: Այս սուրբ անունների առաջին տառերով է կազմվել ջոկատի անունը՝ «ՄԷԳՎԱԽ»: Թող լույս իջնի նրանց հոգիներին: Նրանք առաջիններն էին, որ թաղվեցին Եռաբլուրում:

Ի դեպ, ազատամարտիկների շիրիմները Եռաբլուրում հանգրվանելը եղել է Վահան Զատիկյանի, Հակոբ Հակոբյանի, Վրեժի, Ռազմիկի, Մայիս Միրզոյանի՝ Ճայ, Կարո Կարապետյանի՝ Մուրուք, նախաձեռնությունը՝ մի ծերունու առաջարկով: Եռաբլուր է կոչվել Կարմիր բլուրը, Փարոսը և դիմացի բլուրները միասին:

Ծենգավիթի ջոկատը կազմավորվեց օպերայի ազատության հրապարակում, հրամանատար նշանակվեց Ռոլանդ Քելեշյանը:

Նրանք երեք եղբայրներ էին՝ Ռոլանդ, Ռոմիկ, Ժան Քելեշյաններ: Վերջինս, ինչպես ասում էինք, «մոզգ» էր, «ուղեղ». մեզ մանկապարտեզի երեխաների պես սովորեցնում ու դաստիարակում էր: Նրանք ծնվել էին մի մոր արգանդից: Թուրքերի դեմ կռվում էին, իրենց վարքով գերազանցում մեկը մյուսին, մենք էլ նրանցից օրինակ էինք վերցնում:

Սիրեկան Քոչարյանը՝ «Չուգուն Աշոտը», պատմում է.

- Գիտակցել ենք, թե ո՞ր ենք գնում, ի՞նչ ենք ուզում, մեր առջև ի՞նչ խնդիր կա դրված, ի՞նչ պատասխանատվություն ենք վերցրել մեր ուսերի վրա: Գերիների նկատմամբ եղել ենք բարի, նրանց ուղարկել ենք հատուկ նշանակության զորամասեր: Մեր ջոկատի առաջին զոհը հերթափոխության ժամանակ Մանվել Ասլանյանն էր, շատ ծանր ազդեցություն ունեցավ բոլորիս վրա:

Զինամթերքը կամ սննդամթերքը վերջանալու դեպքում չենք կառչել ազգի վզից: Չենք տրտնջացել, չենք խուսափել, փախել, մնացել ենք դիրքերում: Կարողացել ենք ցուցաբերել տոկունություն, հաղթել դժվարությունները: Թշնամուն ապացուցել ենք մեր պայքարի արդարացի լինելը և ազատագրել մեր պապենական հողերը, թշնամու դեմ օգտագործել իր իսկ, իրենից խլած զենքը:

Օգանովի հետ վիճաբանում էինք: Քարտեզի վրա նշումները չէին համընկնում ականապատված տարածքի հետ: Հետագայում պարզվում էր, որ սխալ է: Ունենում էինք անիմաստ զոհեր:

«Չուգուն Աշոտը» 1993թ. ապրիլի 2-ին Մարտակերտի շրջանի Միրբաշիրի դիմացի գյուղերի ազատագրման ժամանակ վիրավորվեց: Հաշմանդամ է. մարմնի մեջ 60 բեկորները հանգիստ չեն տալիս, ավտոմատի չորս գնդակ, ոսկորներն իրար ամրացրած մետաղե ամրակները չարչարում են ազատամարտիկին: Նա պատմում է.

- Մարտակերտի Հակոբ Կամարի գյուղի տարածքում գերեցի երկու թուրքի: Մինչ մարտական գործողությունները՝ կատարում էինք հետախուզական աշխատանքներ:

Հետևակային մարդատար մեքենան՝ ՀՄՄ-ն, ուրալ ավտոմեքենաները ծանապարհով անցան, հետո ես՝ տանկով, հակատանկային արկը չպայթեց:

Հինգ հոգով վիլիսով անցնելու ժամանակ ականը պայթեց, և բոլորը օդ բարձրացան, ջախջախված, հասած տանձի նման՝ գետնին թափվեցին:

1992թ. օգոստոսին մահապարտների կոչով ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Վազգեն Ա-ի օգնությամբ գնվեց 32 տանկ: Տանկերի հետ օծեց մեզ և բարի ճանապարհ մաղթեց դեպի Արցախ:

Հասանք Ստեփանակերտ, մեզ դիմավորեց Սերժ Սարգսյանը, հրավիրեց բաղնիք: Բաղնիքից դուրս գալուց հետո տանկերն անհետացել էին:

Գեղամը, Համոն, Ղարիբը, Ռաֆոն, Հովիկը, Մանվել Սամվելյանը ողջ օդաչուական անձնակազմը հերոսական գործ կատարեցին: Վ.ՍՊԱՐԱՊԵՏԻ թիկնապահ Մոսոյի քեռի Կարո Պետրոսյանը պատմում է օդաչու Ստյոպայի և Ռաֆայելի օդում և ցամաքում գործած քաջագործությունների մասին: 1992թ. վերջին Խոջալուի ազատագրման ժամանակ օդաչու Ստյոպը զենք ու զինամթերք էր սպասարկում:

- Մի անգամ ուղղաթիռով օդ բարձրացանք, թշնամին ավտոմատային կրակահերթով ծակծկեց ուղղաթիռը: Օդաչու Ստյոպան չկորցրեց իրեն, չընկավ խուճապի մեջ, սառնասրտորեն կարողացավ վայրէջք կատարել: Ավտոմատը խլեց ինձնից ու մտավ մարտադաշտ: Ռազմական ունակություններով կողմնորոշվելու հմտությամբ զարմացնում էր: Ապշում էինք, թե ոնց էր նա տեղանքները ճշգրիտ հայտնաբերում քարտեզի վրա, արագ-արագ նշումներ կատարում, թշնամուն մոլորեցնում: Հպարտանում էինք նրա պատրաստակամությամբ: (1999թ. հոկտեմբերի 27-ին Ստյոպը ուղղաթիռով Գորիսից Երևան էր բերում ՀՀ Ազգային Անվտանգության նախարար Սերժ Սարգսյանին, երբ դավադիրների գնդակից արդեն սպանվել էր Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԸ...):

Յուրա Հովհաննիսյանի «Յուրա-26» զորամասում Կարո Պետրոսյանը Կրկժանի ազատագրմանը որպես հետախույզ՝ մի քանի կարևոր առաջադրանքներ կատարեց: 1991թ. Կիչան-Սրխավենտի համար մղվող մարտերի ժամանակ վիրավորվում և կոնտուզիա է ստանում:

Նա 1992թ. մասնակցում է Ստեփանակերտում Վ.ՍՊԱՐԱՊԵՏԻ մշակված Խոջալուի ազատագրման օպերացիային:

Ուղիղ կապի միջոցով կարողանում է հատուկ տեղեկություններ ստանալ և հաղորդել Վ.ՍՊԱՐԱՊԵՏԻՆ:

Վ. Սպարապետը դաշտային զինվորական խորհրդակցության ժամանակ:

Արցախից Հորադիզով գալու ժամանակ ուսումնասիրում էինք Ծենգավիթի, Կոռնիձորի և այլ ջոկատների անցած մարտական ուղին:

Հասանք Արտաշատ: Ջոկատի հրամանատար Լայերտը հիվանդանոցում բուժում էր թշնամու արկի բեկորներից ստացած վերքերը: Կապվեցին կապի զորամասի հրամանատար փոխգնդապետ Գրիգոր Կիրակոսյանի հետ՝ որոշ տեղեկություններ ճշտելու համար:

Այցելեցինք նրան: Հոգնած էր: Նա լավ որսորդ էր: Եկել էր դիրքերից: Այդ պահին եկավ զորամասի թիկունքի գծով տեղակալը՝ Ռոբերտ Ավետիսյանը: Մեծահոգի հայրենասեր հայորդին Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻ դավադիր սպանությունը հիվանդագին տարավ: Հայրենիքի ընդհանուր շահերի ձախողման մտավախությունը անկումային տրամադրություն էր ստեղծել բոլորիս, Կարոյի, Ստյոպի, Լայերտի, առավել ևս Ռոբերտի մոտ:

Նրա հետ զրուցելու ժամանակ սիրտդ լցվում էր բերկրանքով.

- Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԸ 1995թ. եկավ զորամաս, զորքը կազմ պատրաստ սպասում էր:

Զորամաս մտնելու ժամանակ անսպասելիորեն ես հայտնվեցի նրա տեսադաշտում: Ակամա ինձնից անկախ՝ զորամասին տվեցի «Զգա՛ստ» հրամանը: Հինգ քայլ անելով առաջ, երեք քայլ հեռավորությունից՝ ըստ կանոնակարգի, պատիվ առա ու զեկուցեցի: Աջ ընդունելով, շուռ եկա, որ չխանգարեմ Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻՆ, առաջ քայլելու հնարավորություն ունենա:

Մանրակրկիտ զննեց զորամասը, հրավիրեց զինվորական խորհրդակցություն: Իմ զեկուցման համար, - պատմում է Ռուբենը,- արժանացա գովասանքի: Պարգևատրեց իր գրպանից հանած սեփական գրիչով:

Իմ կյանքի ընթացքում ստացած ամենաթանկ նվերը Վ.ՍՊԱՐԱՊԵՏԻ պարգևած գրիչն է, որը գուրգուրանքով կպահեմ ու կփոխանցեմ սերունդներիս:

Դավադիր սպանությունից 10 օր առաջ երազում տեսա՝ Արտաշատի Թուխմանուկ եկեղեցում մենք մոմ էինք վառում, ու աղոթում, նա եկեղեցի չմտավ:

Մահից 10 օր հետո երազումս ձյուն էր գալիս: Մասիսի կողմից թռչող ուղղաթիռը կրակում էր Վ.ՍՊԱՐԱՊԵՏԻ ուղղությամբ: Ես, հովհարը ձեռքիս, վազեցի պաշտպանելու նրան: Ծոցագրպանից հանած իր նվիրած գրիչով գծեց ծովից ծով Հայաստանի սահմանները և պատվիրեց պահպանել: Արծվի թևերին նստած՝ թռավ նստեց ուղղաթիռի վրա, գնաց Մասիսի գագաթին ծվարեց: Արթնացա, տեսա երազ էր: Շատ ափսոսացի, որ այն իրականություն չէր:

Այս մղձավանջային իրողության ժամանակ մեզ միացան նույն զորամասի ազատամարտիկները՝ մեր վաղեմի մարտական ընկերներ կապիտան Դավիթ Մկրտչյանը և Աշոտ Արևշատյանը:

Աշոտի, Դավիթի հետ գովեստով խոսեցինք ՀՀ պաշտպանության նախարարության պատվո պահակային ծառայության պետ, փոխգնդապետ Աշոտ Հակոբյանի մասին:

1992թ. ավարտելով Մոսկվայի համազորային հրամանատարական ռազմական ուսումնարանը՝ գեներալ լեյտենանտ Նորայր Տեր-Գրիգորյանի հետ վերադառնում են Հայաստան, լծվում նրա պետականության և բանակաշինության մեծ գործին:

ՀՀ ՊՆ կապի զորամասում, որի հրամանատարն էր Պանդուխտ Գալստյանը, զորամասին զուգահեռ կազմավորվեց սահմանապահ զորքերի մոտոհրաձգային վաշտ: Հրամանատար նշանակվեց Աշոտ Հակոբյանը, իսկ ընդհանուր հրամանատար՝ Յուրա Խաչատուրովը:

ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով Աշոտ Հակոբյանին հատուկ իրավունք վերապահվեց. բոլոր զորամասերից հավաքագրել 1.80 սմ հասակ ունեցող, ֆիզիկապես առողջ, արտաքնապես գեղեցիկ կազմվածքով զինվորներ, կազմակերպել պահակային ծառայության վաշտ: Այն հետագայում դարձավ ՀՀՊՆ առաջատար զորամաս՝ իր կարգապահությամբ և կուլտուրայով, որի մասին պարծանքով և հպարտությամբ է խոսում ամեն հայ մարդ:

Դավիթ Մկրտչյանը և Աշոտ Արևշատյանը առաջինը ընդգրկվեցին: Սակայն պատերազմական իրավիճակը տղաներին ձգում էր դեպի ռազմադաշտ, որտեղ զենքի խիստ կարիք էր

զգացվում: Դավիթը մեծ չարչարանքի գնով ձեռք բերեց գնդացիր: Ծատ էր սիրում այդ զենքը:

1992թ. դեկտեմբերի 4-ին վաշտը ժամանակավոր բաժանվում է Հայոց բանակի ստորաբաժանումների վրա՝ մարտական գործողություններին մասնակցելու համար: Բաժանման պահին հրամանատարը իր զինվորների առաջ խոստացավ՝ կենդանի վերադառնալ և զորամասը համալրել:

Ենթասպա Աշոտ Արևշատյանը 20 հոգու հետ մեկնում է Ոսկեպար՝ դիրքային մարտերին մասնակցելու (հրամանով ասված էր հերթափոխով օգնել ֆիդայիներին):

Ոսկեպարում ինքնապաշտպանության ծակատի հրամանատարն էր «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Սամսոն Ղազարյանը: Ժամանակավոր զինվորական պարետ Ռազմիկ Վասիլյանը, մարտական գծով նրա օգնական Ալբերտ Բաղդասարյանը թուրքերի ներկայացուցչի հետ նստեցին բանակցությունների: Առաջադրանքն էր՝ հարյուր մետր շառավղով անցնել հարձակման, եթե տրվի ազդանշան՝ օդում սուրա կարմիր հրթիռը (լուսածիր գնդակը): Ալբերտ Բաղդասարյանը և թուրք հետախուզության ներկայացուցիչը Ղազախստանի Բայկանուր ստրատեգիական հրթիռային ուսումնարանում սովորել և ծառայել էին միասին: Գրկախառնվեցին, որը շփոթություն առաջացրեց: Հարձակումը հետաձգվեց:

Աշոտ Հակոբյանը, Ալբերտ Բաղդասարյանը, Ռոմիկ Մարդանյանը բնության սիրահարներ էին, ահա ինչ վերհիշեցին Ռոլանդ Քելեշյանի Վ. ՍՊԱՐԱՊԵՏԻ Լաչինում եղած ժամանակ:

Ռոմիկ Մարդանյանի հանձնարարականով, Աշոտ Պետրոսյանի զեկուցումով գնդի հրամանատարությունը ստանձնեց Ռոլանդ Քելեշյանը: Օգոստոսին Քաշաթաղի Կոբրայի պաշտպանական դիրքերում էի: ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը կանչեց Գորիս խորհրդակցության, միասին վերադարձանք ռազմագիծ: Պատմում է Ռոլանդ Քելեշյանը:

Մի քայլ առաջ ընթանալով ասենք, որ Քաշաթաղի ծակատամարտը վճռորոշ էր: Թիղիկ 2-րդ, Թիղիկ-1 ուղղությամբ թուրքերը դիմադրում էին: Հայկական ուժերը քիչ էին: Գունդը դիրքավորված էր խճուղու մոտ: Աջ թևում «Սասունցի Դավիթ» ջոկատը (հրամանատարը Աշոտ Մանուկյան) ինձ օգնել չէր կարող: Աբովյանի Վովայի 100 հոգի տղաները դժվարությամբ

էին մարտնչում թուրքական զավթիչ ուժերի դեմ: Ծակատ առ ծակատ մարտական գործողությունները շատ ծանր էին, գիշերը թափանցիկ չէր: Ցերեկը հաղթելու միակ ելքը խուսանավելն էր, հարմար պահին հետախուզության տվյալների հիման վրա հակառակորդին մասնատելը և առանձին-առանձին ոչնչացնելը:

Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԸ ուզում էր իրավիճակի մասին մանրամասն տեղեկանալ: Պահանջեց գնալ դիրքերը՝ սեփական աչքերով տեսնելու, և մտավ գետնատուն, ստուգեց ազատամարտիկների քնելու, հանգստանալու, ճաշելու, թերթ-գիրք կարդալու պայմանները: Ճաշի կաթսայի կափարիչը կիսով չափ բաց էր, ճաշի հոտը գրգռեց ՍՊԱՐԱՊԵՏԻ ախորժակը և մի աման բորշ ճաշակեց: Անուշ անելուց հետո օրվա թերթերը շուռումուռ տվեց, իրեն հետաքրքրող թեմա չգտավ: Դա Քաշաթաղի Խանլայար կոչվող բարձունքում էր, ուր թշնամու դիրքերից երեք ուղղություններով թաքստոցներից աննկատ աշխատում էին նշանառուները: Փոքրիկ անզգուշությունը վերջանում էր կորստով: Յուրաքանչյուր վայրկյանը վտանգավոր էր: Ոչ ոք համարձակություն չուներ փոխելու նրա մտադրությունը: Ռոլանդ Քելեշյանը անհանգիստ, շփոթ տեսքով հետևում էր ՍՊԱՐԱՊԵՏԻՆ: Նա հագել էր շարքային զինվոր-ազատամարտիկի համազգեստ, ավտոմատը՝ ուսից կախած: Հասավ բարձունք, կարծես պարահանդես էր գնում: Կատակելով քաջալերում էր և մատնացույց անում, թե որտեղ և ինչ ինժեներական սարքավորումներով կառուցել պաշտպանական դիրքերը, հատկապես օդային ռմբակոծություններից, հրետանային հրետակոծությունից պաշտպանվելու համար:

Բարձունքի դիմաց՝ հարթավայրում, կակաչների ալ վարսաթերթերը ծփում էին թեթև քամու շնչից: Բնության ասեղնագործ գեղեցկությամբ որդան կարմիր գույների պատկերով վարսաթերթիկները քամու թևին պարում էին բնության յոթ գույների արտացոլանքով: Վան Գոգն ասում էր. «Իմ տեսածը հրաշալի պատկեր է, տեսնում եմ, որ բնությունը խոսել է ինձ հետ, ինչ-որ բան է ասել, և կարծես, ես սղագրել եմ նրա խոսքը: Սղագրության մեջ կարող են լինել բառեր, որոնք ես անկարող եմ վերծանել»:

Վազգենը՝ վերհիշելով ձևակերպեց իր զգացածը, ինձ

պատմում է բնությունը, ինձ հետ խոսում են այս ծաղիկները, դա սերտած արտաքին վարքագծի պայմանական դժգույն լեզուն չէ, այլ հենց բնության խոսքը: Այս կակաչների գորգանախշը ամբողջ գեղեցկությամբ մարդու հինգ զգայարանները ձգում է իրեն: Նայելով մարդը չէր կշտանում: Ոտքերը հողին գամած, հմայված՝ անշարժ ծուլվում էր բնության բազմազանությանը: Երիտասարդ գրող Վազգենը կարծես յոթերորդ երկնքում էր, հափշտակված, տարված էր երազ-մուրազներով, սիրած աղջկա պատկերը նմանեցնում էր հրակակաչների գորգանախշին, գծագրում հոգու մեջ:

Թուրք նշանառուները մի պահ խառնվեցին իրար, չհավատացին տեսածներին: Դա անհնար է, հայոց նախարար Վազգենը ռազմաճակատի առաջին գծո՞ւմ, երևի մղձավանջ էր, պատրանք, բայց փաստը փաստ էր...

Համենայնդեպս տեսածները հաղորդեցին վերադասին՝ սպասելով պատասխանի: ՍՊԱՐԱՊԵՏՆ ասաց. «Սրանք հոգու ծաղիկներն են, որ մարդուն նայում են միայն բարի աչքով»:

Թուրքերը հրակակետերից կրակ բացեցին հայերի դիրքերի վրա: Երբ ՀՄՄ-ը և ՀՓ-ը թաքստոցներից ելան սահմանված բնագիծ, զինվորները ցած թռան մեքենաներից և գրավեցին իրենց դիրքերը: Տարբեր տեղերից լսվեցին կրակոցներ, թուրքերը ուզում էին ռազմական նախարարին ցույց տալ իրենց բանակի զորությունը և այլանդակորեն հայհոյում էին հայ ղեկավարներին: Եղավ պատասխան...

Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԸ սթափվելով մինչև շուռ կգար, Ռոլանդ և Ռոմիկ եղբայրները, խախտելով կարգապահության կանոնները, Վազգենի թևին կպած՝ քաշեցին, գցեցին ցեխաջրի փոսը: Վազգեն Սարգսյանը բարկացավ, սակայն համոզվեց, որ Քաշաթաղը այդ պահին շատ վտանգավոր ռազմագիծ է: Այն խոչընդոտում էր Քարվաճառի ազատագրմանը: Քաշաթաղը և Քարվաճառը լեռնոտ, խոր ձորերով, կիրճերով, բլուրներով, ժայռոտ ու քարքարոտ, անգամ անանցանելի ճանապարհներով շրջաններ են, որոնք շատ անգամ ռազմական տեխնիկայի տեղաշարժման համար վտանգավոր էին:

- Ուզում էր, որ մեկնեմ Դեյխան,- պատմում է Ռոլանդը:

Այնտեղ էին Հովսեփ Հովսեփյանը, Սեյրան Աթանեսյանը, ովքեր երկար դիմադրել էին թուրքական ուժերին և նահանջել, թուրքերը գրավելով կարևոր հենակետեր՝ կատաղի դիմադրում էին:

Լիսագորից դեպի Քաշաթաղ՝ լեռների գրկում, ծվարել էր Բերդաձորը՝ իր հարևան հայկական գյուղերով, որոնց պաշտպանում էին 20 ազատամարտիկներ՝ 400 թուրք հրոսակների դեմ: Այդ էր պատճառը, որ հայերը նահանջել էին՝ պահանջելով օժանդակ ուժեր:

Դեյխան գյուղը պատված էր մառախուղով, անտեսանելիությունը 20 մ էր, առաջխաղացումը՝ շատ դժվար, մանավանդ խիտ անտառներով, որ անանցանելի էին: Սարերին և ձորերին, կիրճերին անծանոթ լինելով՝ մարտ վարելը դժվարանում էր, ՀՄՄ վարորդը մեքենան չէր կարողանում վարել: Պատին հենված՝ թուրք նշանառուն նռնականետը ուղղել էր մեզ վրա: Ինձ ձայնից ճանաչեցին՝ Սուրմալու և Ապարան ջոկատի երկու Արթուրներն էին: Այսպիսով, պատահմամբ փրկվեցինք:

Կոբրա բարձունքը ազատագրեցինք թուրքերից: Ապարանցի Սրդոն աչքի ընկավ իր հնարամտությամբ:

Հավաքեցինք 400 շինել ու սաղավարտներ, ուտելիք, զենք ու զինամթերք: Այդ բոլորը մեզ շատ էր անհրաժեշտ:

Մի անգամ Ալեքսանդր Մակեդոնացին կարգադրել է զորքերին՝ ինչ ունեք, կերեք: Երբ հարցրել են՝ վաղն ի՞նչ ենք ուտելու, պատասխանել է՝ կուտենք հակառակորդի բանակում:

1993թ. նոր տարին մոտենում էր: Լավ նոր տարի անցկացրեցինք խրամատի մեջ:

Ինչ խոսեի, Վազգեն Սարգսյանը չէր նեղանում. կատակով ասացի՝ ես պարտք ունեմ Ղուբաթլուի ազատագրման նախագծի իրականացման գործում, ով առանց ինձ ազատագրի Ղուբաթլուն՝ դավաճան է: Համաձայնեց և թույլատրեց իմ ջոկատով մասնակցել:

Տղաներից կային գինու սիրահարներ, 7 հոգի օղի էին օգտագործել: Ծշուկներ կային, որ ծխախոտի հետ կանեփի սերմ են խառնում, ծխում, որը մթագնում և թմրեցնում է մարդու ուղեղը: Այն վատ ազդեցություն է ունենում մարտի, ինչպես նաև խաղաղ պայմաններում մարդու առողջության վրա:

Այն պետք է արմատախիլ արվեր: Ես հայտնաբերեցի և բոլորին պատժեցի, որպեսզի նման արարք չթափանցեր զորքի մեջ: Որոշ ժամանակ անց Գարիկը, Վաչոն հանգստացրին

զայրույթս, սաստեցին երևույթը, խնդրեցին, որ տղաներին թույլատրեմ մասնակցելու առաջիկա մարտական գործողություններին:

Բացառության կարգով թույլատրեցի, տղաները ընդունեցին, որ նման արարքը հակասում է զինվորական կարգապահական կանոնադրությանը: Եվ մարտից հետո սահմանված պատիժը պիտի կրեն կալանատանը:

Ջոկատի ամենափոքրիկ տղան, որին բոլորը սիրում էին, խնդրեց տուն գնալ, «վախը չափել» ու վերադառնալ: Գնաց ու չվերադարձավ:

Մեծ շեն գյուղում 300 հոգուց մնացինք 130 հոգի: Ծատերն, ինչ-որ պատճառներ հորինելով, լքում էին մարտադաշտը, ծլկում անհայտ ուղղությամբ:

Լաերտի ջոկատը Ումուդլուում էր: Վարդանը խնդրեց իրեն օգնել, մինչև համալրի, կազդուրի նոսրացած շարքերը:

Այս բոլոր գործողությունների ժամանակ ցայտուն կերպով արտահայտվում էր ազատամարտիկների ատելությունը բռ-



Վ. Սպարապետը և գ.լ. Գ.Դալիբալթայանը խրամատում:

նակալ ու բռի թշնամու դեմ, որոնք և իրենց նախնիները անցյալում զրկել էին նրանց տնից ու քնից:

Եվ այսօր ելել են իրենց ազատությունը խլած թուրք գազանից հետ առնելու իրենց ոտնահարված իրավունքները: Թշնամու դեմ թափում էին իրենց մաղձը, վրեժխնդրությամբ արտահայտում ատելությունը բռնության հանդեպ, որոնք հայերից խլել էին նրանց կյանքը, օդը, ջուրը, հողը, անտառը, սար ու ձորերը, գետերն ու լճերը, ծովերն ու տարածքները, ուրախությունը և ժամանակը: Խանգարել են ու հարամել հուղարկավորությունը, հարսանիքն ու խաղաղությունը, քանդել, ավերել են եկեղեցիներն ու հուշարձանները, խաչքարերն ու գերեզմանները, կոթողները: Ավերել են հայկական չքնաղ երկիրը:

Վազգենի գանգուր մազերը, ջլապինդ բազուկներով հուժկու մարմինը, ջլուտ, մկանոտ, արևախանձ, քամահար դեմքը Աստծո սիրո և զորության խորհրդանշով ձուլվում էր նրա քաղաքական, մարտական գործունեությանը: Սատանան հաշվարկներ է կատարում ճշտորեն. հարկավոր է արթուն մնալ, միաբան լինելու խորհուրդ ունենալ, քանի դեռ այն գործում է: Թալեաթ փաշան հայերին կոտորելու հրաման տվեց 1915թ փետրվարի 28-ին, Սումգայիթի ջարդերը կատարեցին 1988 թ.այդ նույն օրը: Կարծես 5.000 տարվա մեր նախնիների հնադարյան վրեժխնդրության շունչն ու ջերմությունն էր փչում նրա թե արտաքին, թե ներքին զուլալ հոգեկան մեծ ուժից: Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԸ հասկանում էր՝ հաղթանակին անհրաժեշտ են ամուր հիմքեր, որոնք անմնացորդ, անշահախնդիր իրենց կյանքն են զոհաբերում պետականաշինությանը, բանակաշինությանը, որոնց հենքի վրա կառուցվելու էր հայոց անկախությունը:

ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ԳՈՒ-ՄԱՐՏԱԿ

- Պետնախարար եղած ժամանակ Վազգեն Սարգսյանը կանչել էր: Վիժել էի Ալիկ Պետրոսյանի հետ ազատամարտիկների, հատկապես զոհվածներին կարգավիճակ տալու հարցով,- պատմում է Մացակ Սողոմոնյանը: Մտքումս որոշել էի, որ տեղյակ պահեմ Վազգեն Սարգսյանին:

1993 թ. փետրվարն էր, գնացի մոտը, օգնական գնդապետ Գագիկ Գևորգյանը զեկուցեց, ստացա ներս մտնելու թույլտվություն: Ասացի՝ կարելի՞ է: Ասաց՝ ոտքերիդ տակ խալի է փռած, ճանապարհը կանաչ է: Մոտեցա, զեկուցեցի: Այնպիսի ջղային դեմքով ընդունեց, որ մոռացա ասելիքս ու արագ զեկուցեցի.

- Ջոկատը մարտունակ է, պատրաստ սպասում է Ձեր հրամանին:

Եղավ կտրուկ պատասխան.

- Վաղը չէ մյուս օրը ժամը 13^{00}-ին լինեք Քարվաճառում:

Մենք ճիշտ ժամանակին տեղ հասանք, բայց մեզանից շուտ այնտեղ էր Վազգեն Սարգսյանը: Գրկախառնվեցինք, ուսիցս բռնեց, ցնցեց մարմինս, ուրախությունից սկսեց կատակել:

Յուրի Խաչատուրովին կարգադրեց. «Մացոն մեր ախպերն

Սպիտակի գումարտակը, որը համագործակցում էր Ծաղկահովտի գումարտակի հետ, մարտի գնալուց առաջ

է, շատ է տաքարյուն: Նրա կամքը մեզ շատ է անհրաժեշտ»,- այս ամենը ռուսախոս Խաչատուրովին ասաց ռուսերեն լեզվով:

1992-ի օգոստոսին Վ. Սարգսյանի կոչով 500-անոց հայ մահապարտների կամավոր ջոկատ կազմվեց, որ չկար կյանքի ապահովության երաշխիք: Ես նորից մտա Ա. Պետրոսյանի աշխատասենյակ, ՀՀ ՊՆ տասներեք հարկանի բարձրահարկ, երկու-երեք հարկանի տուֆակերտ շենքեր էին: Երրորդ հարկը զբաղեցնում էր նախարարը՝ Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԸ, իսկ հինգ տեղակալները իրենց անձնակազմով զբաղեցնում

Արայիկ Խանդոյան, Արմեն, ուղեկալ 1993 թ.

էին մյուս հարկերը: Գլխավոր շտաբը գտնվում էր Մոնումենտում: Ա. Պետրոսյանն ասաց. «Գնանք Վազգեն Սարգսյանի մոտ, նա ուզում է քեզ տեսնել»: Մտանք մոտը: Ասաց. «Պատրաստվիր, ջոկատով մեկնելու ես Արծվաշեն»: Ես թեթևակի զգուշորեն առաջարկ արեցի, որ ջոկատը ցանկանում է մեկնել Մարտակերտ: Լուրեր կան, որ այնտեղ ավելի ծանր է:

Այդ խոսքիս վրա բարկացավ ու կրկնեց. «Գնում ես Արծվաշեն: Ինձ պետք է ջոկատ, որը պատերազմելիս մարտեր վարելու գիտակ է, տղայավարի կռվել գիտի և շատ կարգապահ է:



Ծաղկահովիտի ջոկատը Նորայր Բաբայանի հուղարկավորության ժամանակ, 1994 թ.

Այդ ջոկատների թվում է նաև քո ջոկատը: Հե՛տ դարձ, քայլով մա՛րշ»:

Մացակ Սողոմոնյանը եկավ Արծվաշեն: Այնտեղ էր նաև Վազգեն Սարգսյանը: Զարմանալի էր. մի ծակատից հայտնվում էր մի այլ ծակատում: Ստուգեց հանձնարարականը, ես կազմ ու պատրաստ զեկուցեցի իմ անելիքների մասին և ավելացրեցի. «Սպարապե՛տ, պարտադիր օրենք է՝ զորավարը 40 կմ ռազմագծից պետք է հեռու լինի: Գալիս ես մեր կողքին կանգնում. եթե քեզ հետ մի բան պատահի, մենք անտեր ենք մնալու: Թշնամու բոլոր զինատեսակները աշխատում են: Դու



Արաբոյի ծուտ Արմենը խրամատում

այստեղ ես, թշնամին կուժեղացնի ռմբակոծությունը, մեր վիճակն ավելի կծանրանա: Քո գալը ռազմագիծ մեզ վնաս է»: Ջղայնացավ, վիճեց հետներս, գիտեի՝ զորավար Անդրանիկն ինչ է ասել. «Իմ Ավետարանը ինձ է պահպանում, ես էլ իմ սրով պահպանում եմ Ավետարանը»: Իսկ Գարեգին Նժդեհը Սուրբ գրքից գիտեր, որ «Աստծով են ծնվում բոլոր հաղթանակները»:

Քահանայի որդի ու քահանայի թոռ Գարեգին Նժդեհը «Վարդանանց նման մտածելու, պատերազմելու» քարոզիչ եղավ: Երեսը խաչակնքեց՝ կրկնելով. «Թեկուզ բանակներ ելնեն իմ դեմ, սիրտս չի վախենա, քանի որ ինձ հետ ես, Տե՛ր»:

Արկադի Տեր Թադևոսյանը՝ Կոմանդոսը, սակավ բանակով՝ 2004 հոգով, բայց Աստծո զորությամբ սքանչելիորեն ազատագրեց մեր Շուշին: Աշխարհը տեղեկացավ, որ Շուշվա հաղթանակը հայ ազատագրական պայքարի ծաղիկն է:

Սուրբ Նշան, Սուրբ Հակոբ եկեղեցիները, Սուրբ Խաչը մեզ պահապան:

Երգ արդար, երգ հաղթանակի, հավատք մեր նախնիների կանչի գնով, արծվի թռիչք թշնամու ուժերի վրա: Անարդարության ջախջախմանը հասնելու համար պետք է Աստծու զորությամբ միշտ առաջ սլանալ:

«Ծաղկահովիտ» գումարտակը (Արագածի ջոկատ), կենտրոնում հրամանատար Մացակ Սողոմոնյանը

- Իմ արյունը նույնն է, ինչ որ ձերը, երեկ և այսօր միասին խրամատի մեջ ենք եղել, ինձ ինչի եք անջատում: Ես կռվող տղա եմ, ազատամարտիկ, շատ հարցեր իմ մեջ են ֆիքսվում, միգուցե դուք դա նկատի ունեք: Ցանկացած պահին ես լինելու եմ այնտեղ, ուր դժվար է, զինվորը իմ կարիքն է զգում: Պատահականորեն կամ հետին մտքով չեն ասվել գրող Վարդգես Դևրիկյանի այս խոսքերը. «Վազգենը անձամբ էր Էրեբունի օդանավակայանում կարգավորում տարբեր ուղղություններով



Ծաղկահովտի՝ Արագածի Արտյոմ Սահակյան՝ Ճուտիկ, Վահան գյուղի ուղեկալ, 1993 թ.

թռչող ուղղաթիռների երթը»: Երբ արդեն բարձրացել էի այն ուղղաթիռը, որը պետք է իջներ Ծահումյանի անտառային բացատներից մեկում, օդաչուի հետ գրկախառնվելուց հետո Վազգենը՝ կատակելով օդաչուի խցիկի ներսում գոռաց. «Վարդա՛ն, զգույշ կլինես, ուղղաթիռը քեզ համար Ստեփանակերտ թռչելու համար «Յակ» չէ»: Հաջորդ անգամ ասաց. «Զգույշ կլինես, ինքնաթիռը քեզ համար ուղղաթիռ չէ»: Ընդհանրապես, զարմանահրաշ, ֆենոմենալ երևույթ է այն իրողությունը, որ ստանալով մարզիկի կրթություն՝ իր ներքին էությամբ լինելով ստեղծագործող, պատմության մեջ նա մնաց որպես ՍՊԱՐԱՊԵՏ Հայոց:

Ծաղկահովիտի Արտյոմ Դերենիկի Սահակյան՝ «Ճուտ»: Ֆեդյա Տոնոյանը խոստացավ լինել Արտյոմի հարսանիքի քավորը:

Ֆեդյան զոհվեց, 1992 թվականին Հոչազում: Բայց իր որդիները՝ Մուշեղը և Վարդանը հոր փոխարեն հարսանիքի և երեխաների քավոր եղան:

Հատուկ գնդից տեղափոխվեց Արագած-Սպիտակ ջոկատ, որի հրամանատարն էր Մացակ Սողոմոնյանը:

Այսպես ենք գնում մարտի. Արայիկ Խանդոյան՝ Միայնակ Գայլ:

Արտյոմը, որը Ֆեդիայի ջոկատի ճուտն էր, տղաներին պատմում էր.

- 20 տարեկան էի, երբ մայրս՝ տիկին Թամարը, հեռուստատեսությամբ նայում էր ֆիդայիների մասին հաղորդումը, թե ինչպես են նրանք սարերից իջնում: Մայրս կանչեց և ասաց. «Արի՛, արի՛, տես, ֆիդայիները բուշլաթով, յափնջիներով, բեղ-մորուքով իջնում են: Երանի դրանց տիրոջը, նրանց կերած կաթը հալալ լինի»:

Ես այդ ժամանակ միայն զգացի պարտքի զգացումը հայրենիքիս հանդեպ և առանց վարանելու հայտնվեցի ռազմադաշտում: Հովիկի (Մացակի մարտական անբաժան ընկերը) հետ Վահան գյուղում 1993թ. թուրքերի հետ պայմանավորվեցին բանակցել: Թուրքերը խախտեցին պայմանը, Արտյոմը ուզեց պատժել: Սարից կայծակի արագությամբ 30 մետր իջա ձորը, որ մի թուրք գողանամ, ծամոնս գրպանիցս թռավ խոտերի մեջ, ինձ գցեցի փոսը: Հովիկը փորսող, սողեսող գնաց գտավ-բերեց, թուրքը արդեն տեղից շարժվել էր: Առանց ծամոնի Արտյոմը մարտի դուրս չէր գալիս:

1994թ. Օմարի գագաթ բարձրացավ ՀՀ Աժ նախագահ Բաբկեն Արարքցյանը, Ռեմբո Լյովան նրա ձեռքից խլեց ծխախոտը, կատակեց՝ սա ֆիդայու ծխախոտ է:

Մարտական ընկերների հետաքրքրությունը շատ բարձրացավ, աշխատեցին մեկը մյուսից առաջ ընկնել Մացակը, Հովիկը, Արտյոմը, Արայիկը, Լյովան, Ռուբոն:

1994թ. Հորադիզում կենաց-մահու մարտեր էին ընթանում: Արայիկ Խանդոյանը (Միայնակ գայլ) դիրքավորվել էր և գնդացիրը ուղղել թշնամու կողմը: Սակայն չէր նկատել, որ թշնամու նշանառության տակ է գտնվում: Թուրք նշանառուն իր առավելությունը ցույց տալու համար գնդակը անցկացրեց Արայիկի գնդացրի ձագարաձև փողի մեջ: Փողը ճաքեց, վարդի պես բացվեց: Արայիկը, այդ տեսնելով, սփրթնեց. մի՞թե հնարավոր է այդքան ճշգրտությամբ, թե՞ պատահականություն է ստացվել, և իր կյանքն է փրկվել: Հավատաս թե ոչ, փաստը մնում է փաստ: Այս դեպքի կապակցությամբ շատ տեղերում են խոսել: Մի խորհրդակցության ժամանակ ես փառաբանեցի Աստծո օրհնությունը, որ փրկվել է իմ մարտական ընկերը՝ Արայիկը: Նրանք հինգ եղբայր են. չորսը մասնակցում

են կռվին՝ Արայիկ, Հունան, Արթուր, Արմեն, Արարատ, որի որովայնի միջից հանեցին ավտոմատից արձակած 5 գնդակ, զոհվեց Հունան Խանդոյանը Օմարի դիրքային կռիվների ժամանակ:

Արայիկը կատակում էր Մացակի հետ: ՍՊԱՐԱՊԵՏԸ Մացակին փող հատկացրեց հանձնարարեց Արագածի փեշերին բերրի սևահողով տարածքներ գնի, հացահատիկ ցանի, որ հաց ու ալյուր հասցնեն ազատամարտիկներին:

Երկրապահի ժողովից հետո Մացակին հարցնում է՝ ինչպե՞ս է հացահատիկի գործն ընթանում, Մացակը պատասխանեց. «Պարոն նախարար, նաև լոբի եմ ցանել»: «Այ խենթ արարա՛ծ, Արագածի գագաթին լոբի ե՞ն ցանում, ուզո՞ւմ ես աստղերը նվաճել լոբի ցանելով»:

Բոլորը փռթկացին վարակիչ ծիծաղով: Զարմանալի էր՝ այդ պահին որտեղի՞ց հիշեց այդ հնացած հարցը:

Տղաներից մեկը լուծ էր, փորը բռնած, ոտքերը հողին դոփելով՝ կուզեկուզ վազում էր դեսուդեն: Վազգենը ՍՊԱՐԱՊԵՏԸ նկատեց՝

Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին 1-ինը և իր մայրը Վազգեն Սարգսյանի հետ

- Ի՞նչ է կատարվում, ափ նետած ձկան պես թպրտում ես: Կողքից հուշեցին, որ լուծ է, 2 օր է, չի անցնում:

- Աղ ու օղի, 100 գրամ, խառնի իրար ու կոնծի:

Եվ, իրոք, մեկ ժամ հետո անցավ: Վ. Սարգսյանը ուշադիր հետևում էր սննդի, կերակրման հարցերին, եղել են դեպքեր, ինչի համար Իջևանի զորամասի թիկունքի պետի ուսադիրները պոկել էր: Պատերազմի, հաղթանակի արգասիքը թիկունք հասկացողությունն է, որը աշխատացնում է օրգանիզմը, կառուցում ապագան:

Առաջ շարժվիր, երբ ապահովել ես երեխաների ապագան
Վազգեն Սպարապետը իր պայծառ մտքերի հետ

ԹԻԿՈՒՆՔ ԵՎ ՍՊԱԳԱ

ԹԻԿՈՒՆՔ ԵՎ ՃԱԿԱՏ ՀԱՎԱՍԱՐ Է ՄԱՀԱՊԱՐՏՆԵՐԻ

Սենիկ Գևորգյան

Սենիկին թվում էր, թե նստած է շիկացած վառարանի վրա: Խուսանավում էր, բայց դեմքից չէր հեռանում մտատանջության արտահայտությունը: Նախնիների վրեժի կանչն էր ներսում մռնչում, դարավոր ցավը նորից արթնացել էր: Սիրտը տնքում էր, հոգին՝ փոթորկվում: Հայոց տառապանքի ու ցասման զգացմունքն արտացոլող նշույլների արտահայտությունն ակնհայտ էր ու հնարավոր չէր թաքցնել, քանի որ այն յուրահատուկ, արտակարգ երևույթ էր:

Օպերայի Ազատության հրապարակում հայոց համազգային շարժումն էր խմորվում, կանչում էին միաբերան. ովքեր իրենց հայրենասեր իմաստուններ են կարծում՝ եկել է հատուցման պահը, պետք է հայրենիքը կործանումից փրկել, նրա վերքերը բուժել:

1894-1922 թթ. ցեղասպանությունից հետո (ու դրանից ավելի վաղ) հայկական ազգային ոգին ցասման, վրեժի ու հաղթանակի գիտակցմամբ առաջին անգամ էր այդպես առկայծում: Եվ այդ էր բուն պատճառը, որ Սենիկը ինչ-որ բան զգում էր ներսում, բայց երբեք մտքով չէր անցել, որ իր սրտում տրոփում էր պայքարելու կռվելու, իրեն կրակի ու բոցերի մեջ նետելու արյան կանչի ազնիվ մոլուցքը:

Մերօրյա սերունդն ականատես չի եղել այդ մահասարսուռ կոտորածներին: Այսօրվա հայն ինչպե՞ս է զգում անցյալում եղեռնի զոհ դարձած հայերի ցավը, ինչպե՞ս է իրեն նույնաց-

Վազգեն Սպարապետ

Գեներալ Ստեփան Միրզոյան

Անուշավան Սուրենի Հովսեփյան՝ Գրադ Գարունի մարտական ընկերը

նում նրանց: Միանում են, ովքեր զգում են հայության հոգու վիշտը:

Պետական գործչի համար իշխանության մամլիչ դարբնոցում աշխատելն արդեն վտանգավոր էր, իսկ տարիներով ձգտող, անհամբեր սպասող ազատատենչ հոգուն սանձելը դժվար էր, ուստի իշխանավորը պատրաստ և ընդունակ էր ցանկացած մարդուն խժռել:

Սենիկը՝ մտատանջություններին գամված, լուսամուտից դուրս էր նայում. գարնան մեղմ անձրևի կաթիլները սահում էին թափանցիկ ապակու վրայով: Հոգին անձրևում էր: Այդ կաթիլները՝ օդում միաձուլվելով չինարի ծառի լայն տերևներին, շարժվելով, արցունքի շիթի պես թրմփալով ընկնում էին բազալտե ծիլ քարին ու փոշիանում: Անիմաստ խոսելը, ինչպես գրքային գիտելիքները, ոչինչ չարժեն առանց պայքարի:

Եվ այսպես, թուրք բարբարոսը ոտնակոխ է անում հայոց սուրբ հողը: Կուսակցական տո՞մս, փա՞ռք ու պաշտո՞ն, թե՞ Արցախ. ո՞րն է հոգեպես ավելի ազնիվ ու հարազատ: Իհարկե, առանց երկմտելու ընտրել Արցախը և ղեկավարել պաշտոնա-

ՀՀ ՊՆ ռազմական ակադեմիայի առաջին շրջանավարտները, 1998

տար մարդու իրավունքով, կիսով չափ հնարավորության սահմանում, մեղմել չարիքը: Իսկ ինչու՞ ոչ լիարժեք. չէ՞ որ բարին երկինքն ու երկիրը կապող սնունդ է: Բարի գործը մարդու խիղճն է: Հայաստանը հին աստվածների արևի երկիր է: Այսօր այս ոտնաչափ հողակտորը խլելու համար Ադրբեջանը հայերին բացահայտ հարկադրելով՝ ներքաշում է պատերազմի մեջ, և սկսվում է մարդը մարդուն ոչնչացնելու գազանությունը: Ֆրանսիացի գիտնական և փիլիսոփա Պասկալն ասել է, թե՝ մարդը ոչ հրեշտակ է, ոչ՝ գազան, սակայն դժբախտությունն այն է, որ շատ կամենալով հրեշտակ դառնալ՝ նա գազան է դառնում:

Սենիկի երակներում զրնգաց իր պապերի հոգու կանչը: Կանչ, որի ժառանգն ինքն է, որը պատմական ճշմարտությունը շաղախել է նախնիների նյութական, տարածքային, մարմնական ու իդեալական ճշմարտությանը:

Այդ պատճառով աշխարհի կասկածը ծնում է վերլուծականը, որը մարդուն մղում է ընտրություն կատարելու, ընթանալ ճշմարիտ ճանապարհով, ուղղորդվել անսխալական: Քանի որ ամեն ինչ քայքայվում է, փոխարինվում մյուսով, դառնում պատմություն, մարդկանց լավ ու վատ գործերի մասին խոսում են ամեն օր: Եվ այս անցման ժամանակ թույլ ճարպիկները շարունակում են պահպանել իրենց անունը լուծվող հարցերի արանքում, որոնք յուրաքանչյուր քայլափոխի հանդիպելու են դիմադրության:

Ինչպես պետական, այնպես էլ անձնական խնդիրներում մինչ որոշում կայացնելը՝ խղճին հաշիվ տալու համար աղոթում են Աստծուն, մեղքերի թողություն խնդրում: Այսպես էր մտածում այդ պահին «Չակնեֆտեգազտրոյ Պրոմեթեյ» ԲԲԸ խորհրդի նախագահ Սենիկը:

Նրա մտքերը խառնվել էին, նման բան չէր եղել իր կյանքում: Ընկավ երկմտրանքի գիրկը. մահից առաջ մարդու հոգին համբարձվում է երկինք, որտեղ գոյում է անսահմանությունը: Ժամանակ չկա ծանր ու թեթև անելու, հայրենիքը կանչում է:

Եկել է պահը գործելու, ցեղասպանության պատմական ուժը հասցնելու ճշմարտության սեղանին:

Սենիկը ընտրեց կատարյալը՝ օգնել Արցախին, ապահովել Հայաստանի անվտանգությունը, հարցը հասցնել միջազգային ատյաններին:

Վատ մտքերը չարիք են ծնում, ինչպես վատ գիտությունը մարդկությանը տանում է կործանման: Սակայն կան թաքնված ուժեր, որոնք իրենց կամքի ուժով նետվում են տանջանքի ու տառապանքի հորձանուտը՝ հանուն սեփական ժողովրդի:

Մարդն ազատ է իր որոշումների մեջ: Երջանիկ է նա, ով ընկնում է մարտադաշտում: Ահա Սենիկը ընտրեց այդ ծանապարհը, հանուն իր խղճի ու զավակների ապագայի: Եվ եռանկյունու կառուցման ծրագիր մշակեց. գնալ աղետին ընդառաջ, մխրճվել Արցախի ազատագրման և Հայաստանի սահմանների պաշտպանության ծրագրի իրականացման գործի մեջ:

Գիշեր ու ցերեկ աղետի գոտուց տուն չէր գալիս: Անքուն, անդադար կառուցեց բազմաթիվ բնակարաններ, կազմակերպեց Գյումրիի, Սպիտակի, Ստեփանավանի, Ղուկասյանի շրջանների, Վանաձորի ջրատարի վերականգնման, հատկապես Պուշկինի թունելի շրջանցիկ շինարարական վերականգնման աշխատանքները:

Ակտիվորեն իրականացրեց Ղարաբաղի ներքին հաղորդակցման ճանապարհների կառուցումը՝ անհատույց տրամադրելով հզոր շինարարական ծանր տեխնիկա ու մեխանիզմներ, բուլդոզերներ, տարբեր մակնիշների 6 հատ ծանրագույն ժամանակակից շինարարական տեխնիկա:

Օմարի լեռնանցքի պաշտպանական դիրքերի ամրացման համար հատկացվել է Կոմացու Դ-355 Ա «Կրազ», «Կամազ», ավտոբուս, քարշակներ, ավտոկռունկ, վառելիք, սնունդ, արտահագուստ, պահեստամասեր, դրամական միջոցներ, զենք ու զինամթերք:

Այս բոլորը Սենիկն իրականացրել է իր ընկերության բազմաթիվ աշխատողների հետ, այդ թվում Գեորգի Թաթարյան, Ալեքսանդր Չարչուղյան, որոնք ղեկավարում էին Ստեփանավանի, հատկապես բնական ֆոնդի վերականգնման գործընթացը, որոնք իրենց լուման ներդրեցին Արցախի և նրա 7 շրջանների ազատագրման սուրբ գործին: Հատկապես կարելի է առանձնահատուկ շեշտել Սենիկի, Գրադ Գարունի, Ժորայի, Սաքոյի ընկեր Անուշավանին, ինչպես նաև հինգ եղբայրներ Սարգիս, Սուրեն, Սամվել, Մանվել, Արմեն Բենիկի Հովհաննիսյան երբայրները, որոնք թիկունքում և ծակատում մեծ հայրենասիրական գործ էին կատարում: Նրա աջ աչքի ունքի աղեղնաձև

սպին միշտ հիշեցնում է, որ 1991թ. գարնանը թուրքերը ինչպես էին փորձում գրոհել Ծահումյանի Մարտունաշեն գյուղը: Սպիտակ տանը տեղավորվել էին Արաբոյի, Թաթուլ Կրպեյանի ջոկատների շտաբ-զորանոցները:

Ռմբակոծության ժամանակ թշնամու արկի բեկորից Անուշավանը գլխից վիրավորվեց: Ուշագնաց, անօգնական պառկած էր ցեխաջրի մեջ: Աստծու կամքով, նրա օրհնությամբ շարժվեց, ենթագիտակցորեն մշուշի մեջ ձեռքը շարժեց, ծակատից հոսող արյունը հոսելով կոկորդի մեջ, ծարավը հագեցնելով՝ լերդանում էր շնչափողի մեջ:

Ուշքի գալով՝ հասկացավ, որ մեռած չէ, դեռ շնչում է, գիտակցությունը տեղն է: Ուստի հասկանալ է պետք՝ ինչ է կատարվում: Խնդիրներ կան, պիտի լուծել, ժամանակը չի մեռել, դեռ վաղ է:

Ընկերները հասան օգնության, տեղափոխեցին դաշտային բուժկետ:

Գարուն Աբգարյանը ընկերոջն արյան մեջ շաղախված չէր տեսել, որպեսզի ցավը մեջը խեղդի, կատակեց.

- Այ տղա՛, թշնամու գնդակները կարծում ես հասած ծիրան է, գլուխդ պահում ես տակը, որ ընկնի բերանիդ մեջ:

- Հալիս հետ գնա, Գարուն,- նախատեց Անուշավանը ընկերոջը:- Երկու արկն ափսոսում ես լեռան կատարին թառած թշնամու տեղակայված կրակակետերը ոչնչացնելու համար ու խոսում ես:

- Արկ չկա, Անուշավա՛ն, հասկանու՞մ ես, արկերը աշխարհի ծայրից են բերում, այն էլ շատ թանկ գնով,- արդարացավ Գարունը:- Հանգիստ քո քեֆին պառկել ես, վրաս մուննաթ ես գալիս, որ այդքան հեշտ է, գնա՛, թշնամուց պարտքով ուզի՛ր, բե՛ր, ես նրանց մաման լացացնեմ:

Անուշավանը ձեռքը տարավ դեպի քունքը, մատները սեփական արյան ջերմությունից տաքացան: Աչքերը մթնում էին, միտքը դանդաղ սուզվում էր քնի մեջ, ծարավը՝ տանջում:

Վիրավոր սիրտը հովացնելու համար սեփական արյունը կուլ էր տալիս: Անուշավանը դեղերի ազդեցության տակ քնեց:

Գարունը՝ մտատանջ, լուռ դուրս եկավ բուժարանից, քայլերը ուղղեց դեպի գրադները՝ զենիթահրթիռային զինակայան, զենք, որի արկի հարվածից քարուքանդ է արվում շրջապատը, վերածվում ավերակի:

Ինչքան նվիրված ընկերներ, անգամ հարազատ եղբայրը Գարունի ձեռքերի մեջ անշնչացան, հոգիներն ավանդեցին: Հորաքրոջ որդին՝ ջերմուկցի Բաբկեն Վարդանյանը, զոհվեց Չլդրանում՝ աչքերի առաջ: Գարուն Աբգարյանը հրամայեց.

- Լիցքավորե՛լ համազարկային կրակի ռեակտիվ համակարգը՝ ԲՄ-21-ը (Գրադները) և սպասել հրամանի:

ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը իմն ու քոնը չէր ասում, այլ՝ մերն է, և նա ձևակերպեց՝ 21-րդ դարը մերն է լինելու:

1566 թ. պետականությունը կորցրած հայ ժողովուրդը ազատագրեց հայկական բնահողերը՝ Արցախն իր 7 շրջաններով: ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանի մեջ կար վիթխարի մեծություն, նրա տիտանական աշխատանքի շնորհիվ կառուցվեց աստիճաններ՝ վերադառնալ մեր նախնիների թողած ժառանգությանը՝ ծառայելու ծովից ծով Հայաստանին, իրականացնել հողահավաք վերականգնման ծրագիրը: Ահա ում կարելի է երկրպագել:

Գյուտարար էր, երբ արտահայտում էր իր լուսավոր մտքերը՝ իմաստուն, գիտության վիճակին ծանոթ մարդիկ քիչ էին զարմանում: Նրա մեջ տեսնում էին ներկայի ու ապագայի այնպիսի

Զորավարժություններ Օմարի ստորոտում Վազգեն Սպարապետի մասնակցությամբ, 1997 թ.
Ամենակատարյալ ստեղծագործությունը ազատագրված հողն է,- Վ.Ս:

անհատի, որ գալիք սերնդի համար ձևակերպելու էր պատմության միջով հոսող կենսահյութի շարժումը, որից զգում էին ձևավորվող հայ ժողովրդի շահերը: Նա հայտնվում էր խաչմերուկում այն պահին, երբ ավարտվում և սկսվում էին նոր ուղիներ, նոր ոլորտներ բացող որոշակի ճանապարհներ:

Նա գերմտքի շարժիչ ուժ էր, հետևաբար, միայն մեկ քայլ էր անում: Նպատակին մոտենալով՝ սկսում էր ճանապարհվել մարդու մեջ, հոգու մեջ, մտքի մեջ: Մենք այն տեսնում էինք. անընդհատ աճ, հաջողություն, տեղի զարգացում:

Գիտնականներն ուսումնասիրել են ֆիզիկոս և մաթեմատիկոս Ալբերտ Էյնշտեյնի ուղեղը (որը պահվում է հատուկ լուծույթում 1955թ. ի վեր): Հայտնաբերել են, որ այն ունի մեծ քանակությամբ այնպիսի բջիջներ, որոնք լցնում են նյարդային բջիջների՝ նեյրոնների միջև ընկած տարածությունները: Գիտնականի գլխուղեղը մեծ հզորություն ու մտավոր ուժ ուներ: Եթե համեմատենք ժամանակակից համակարգչի հետ, Էյնշտեյնի ուղեղն ավելի շատ միկրոպրոցեսներ և դրանց միջև կապեր ուներ, ինչը բազմակողմանի մեծացնում է ողջ համակարգի աշխատանքի հնարավորությունը:

Զորավարժություններ Օմարի ստորոտում Վազգեն Սպարապետի մասնակցությամբ, 1997 թ.

Հողին հանձնեցին՝ առանց ուսումնասիրելու նրա ուղեղը, ուղեղի կարողություններն ու աշխատանքները, որպեսզի իրազեկ պահեին հետագա սերունդներին:

Սպանող դավաճան ծիվաղը՝ Կարեն Հունանյանը թշնամու թելադրանքով սատանայի միջոցով արտահայտիչ չարությամբ ավտոմատի կոթով հարվածեց նրա դեմքի ձախ գանգոսկրին, բայց ՍՊԱՐԱՊԵՏԸ նստած էր անշունչ և չսասանվեց:

Օ, ժամանակ, դանդաղի՛ր, դանդաղի՛ր մի ակնթարթ, թեկուզ մի անգամ, մի ակնթարթ...

Ինչպես նիզակի ծայրի գեղարդով խոցեցին Հիսուս Քրիստոսին, ստուգելով մահացած է, թե ոչ, այնպես էլ այդ ծիվաղն էր վախից հարվածում. եթե աչքը բացեր, այդ ծիվաղի սիրտը կպայթեր: Ճիվաղի համար հայրենիք չկա, ՍՊԱՐԱՊԵՏԻ մահից հետո մի բևեռում տեսնում եմ միայն բռնակալի, մյուսում՝ ստրուկի:

Կամ ի՞նչ իմաստ ունի հիշել Ալեքսանդր Նիկոլաևիչ Ռադիշչևի՝ մատերիալիստ փիլիսոփայի 200 տարի առաջ գրած այս բառերը. «Հավատա, մահը քեզ համար անցնում է, և հոգին քո անհետանում է, ահա՛, ճշմարտությունը»:

Սենեկան ասել է. «Մահվան համար ամեն ինչ ոչինչ է, մահն ինքը ոչինչ է»:

Հանուն ինչի՞ պետք է մարդը ապրի:

- Հանուն հայրենիքի փառքի:

Հանուն ինչի՞ մահը սարսափելի չէ:

- Հանուն հայրենիքի փառքի:

Ինչպես չհպարտանա մարդն իր ուժով, ինչպես չսավառնի հակառակորդի բարձունքները, երբ մեր միջից լույս աշխարհ եկավ արարածներից կատարելագույնը, հայ ժողովրդի առաջնորդ արքան՝ սպարապետը, որը ենթարկվում է հողի վրա ծնվածների հետ նույն օրենքին, նույն բնական կարգ ու կանոնին:

Անգո՛ւթ: Դու նույնիսկ հույսից ես զրկում չար բախտի կամոք լլկված հոգուն, և տխրությունների խավարում նրան լուսավորող ծառագայթն այս միակ հանգցնում ես:

Զգացմունքներն ու մտքերը երբեմն մեզ մոլորության մեջ են գցում, բայց բնությունը մեզ չի խաբում: Մարդն օժտված է իրերը ճանաչելու կարողությամբ:

Պայքարի ուղին նրան տանում էր ժողովրդի արդարացի պայքարի արդյունքից ծնված անկախ թագավորելու կամքին, որը խեղդում է հոգեկան ցավը, սրտի մեջ ներարկում դաշնակցելու ժողովուրդների բանականությունը: Ուզում էր, փորձում էր օգնել սրտին՝ հենվելով ժողովրդի օգնությանը, որովհետև բանականությունը սնուցում է ոչ թե հույսը, այլ՝ ճշմարտությունը, ոչ թե ցանկալին, այլ անխուսափելին:

Ասում են՝ գեղեցիկը կփրկի աշխարհը:

Վ. Սարգսյանը, լիներ տանը թե տարածության վրա, մեզ հետ էր: Վախ չուներ, տանջանքների մեջ անհոգ էինք, անկախ: Հայաստանը Ադրբեջանի կողմից հարկադրված պատերազմական գործողությունների մեջ, հոգսերով բեռնված՝ մոռացել էինք՝ հոգսը ինչ էր: Թեթև էինք տանում մեր ուսերին դրված ծանրությունը: Ազատ էինք զգում:

ՍՊԱՐԱՊԵՏԸ, որտեղ էլ լիներ, նահանջ չկար, նրա ներկայությունը հաղթանակ էր: Ով բախտ է ունեցել լսելու, շփվելու, խոսելու, մարտական գործողություններ վարելու նրա հետ, չի կարող չհիշել հատկապես նրա լիաթոք բարձր ծիծաղը, որը շրջապատին մատուցում էր տիեզերքից ծուլվող փառահեղ կյանքի կենսահյութը:

Էությամբ պարզ էր, հասարակ, իր պարզությամբ՝ մեծ: Նրա աչքերում արցունք կար, հոգում՝ անտես տառապանքի թախիծ: Անարատ սրտում զրնգացող զուլալ արյուն, վրնջացող, սրտաբուխ, խոստումնալից ապագա, որը 1999թ. հոկտեմբերի 27-ին իշխանությունը զավթած բռնակալների զոհը դարձավ: Նրանց դավաճանական, դավադիր ավտոմատից արձակած գնդակից օդը կայծակաձիչ շանթեց ազգասիրտ, պետականություն կառուցող, բանակաշինարար, զինվոր ՍՊԱՐԱՊԵՏԻՆ, հայրենասեր մարդուն, զրնգացող, զուլալ վրնջացող արյունը լափեցին:

Նա գեղեցիկ էր, ինչպես բնությունն իր բազմազանությամբ, լի էր աստվածային գաղափարներով: Համամարդկային էր, համազգային, ազգօգուտ ծրագրերի ջահակիր: Սեփական հողին քրտնաջան, անմնացորդ, անշահախնդիր, արժանավոր, հարազատ մարդ:

Իրավական, օրինական անկախ երկիր էր կառուցում, որ հայ մարդը ազատ շնչեր, լավ ապրեր, անվտանգ հողում ամուր կառչեր սեփական հողից:

Իր ուսերին վերցրեց առաջատարի ու առաջնորդի պատասխանատվությունը, ահա նրա անսասան ուժը:

Պատերազմում էինք կամավոր, հոգով, սրտով: Երբ ընդգրկվում էինք ջոկատում, հարսանիք էր, զոհվելը՝ պատիվ: Վայ էն մարդուն, ում ասում էին՝ զենքդ վայր դիր ու հեռացիր մարտադաշտից, դա նրա համար դավաճանություն էր, մահ:

Վազգեն Սարգսյանը ժողովրդին պարգևված ընծա էր: Աստվածատուր:

Երբ Հայաստանի սահմանների որևէ հատվածին վտանգ էր սպառնում, նա այնտեղ Չինական պարիսպ էր: Կան մարդիկ, որ ազգասեր են, բայց ոչ մարդասեր կամ հակառակը: Իսկ նա և՛ ազգասեր էր, և՛ մարդասեր:

Այս է տարբերությունը մահկանացուների: Հավերժական շարժումը պետություն է ստեղծում, որ մարդը արժանապատիվ, ազատ, անկախ ապրի: Չապրի օրինազուրկ, իրավազուրկ չլինի, այլ օրինաց երկիր, բարեկեցիկ երկիր դառնա: Անբեկանելի՝ ճշմարտություն, որը նման է երկրագնդի գոտուն՝ ծիածանին, որը երկնակամարում շողշողում է իր յոթ գույներով:

Բալահովիտի ջոկատ

Վազգեն Սարգսյանի առողջությունը գերազանց էր: Օրգանիզմը դեղորայք չի ընդունել: Հասակը՝ բարձր, ամուր, թիկնեղ: Ունակ էր, ուներ փայլուն ընդունակություն և աշխատասիրություն: Նրա սառը, նպատակասլաց դատողությունը, դիպուկ հիշողությունը, արթուն, պարզ հաստատակամ վարվելաձևը, գրելկարդալու մեջ՝ մտքերն անսխալական, իրականացնելու ժամանակ հստակ էին, առանց դժվարությունների: Վարքը լավ, աշխատասիրությունը՝ հետևողական, հետաքրքրությունը՝ պրպտող, շարժուն, աննահանջ: Ֆիզիկական զարգացվածությամբ՝ բարձրագույն մարզիկ: Աստվածահավատ՝ հոգով, չի զբաղվել պերճախոսությամբ: Առանց ջանասիրության իրեն որպես մեծ հռետոր չի դրսևորել, թեկուզ իրականում մեծ հռետոր էր:

Հանգիստ էր, փափուկ, երբեմն՝ կոպիտ ու կոշտ, բայց այն կիրառում էր բարեհաճ, պարզ ու հասարակ խոսելու և վարվելու տերմիններով՝ դեպի նպատակը, ընդհանուրի օգտին:

Նրա բարձր ու բամբ, հազվագյուտ Աստվածահաճո ծիծաղը



Պարգև սրբազան, Գարեգին II կաթողիկոս, Սեյրան Օհանյան

նրա ժամանակակիցների համար եղավ մի գեղեցիկ ակնթարթ: 1998թ. գարնանը ՀՀ ՊՆ շենքի մուտքի աստիճանների վրա, դեմ-դիմաց հանդիպեցի, զգաստ կեցվածք ընդունեցի, շուռ եկավ դեմքով դեպի ծիրանի ու չինարի այգիները, ծիծաղեց. նրա այդ հազվագյուտ ծիծաղի նոտաները... Կապուտակ-ծերմակ աղավնիները երկինք խոյացան, շրջապատը լցվեց կյանքով: Յուրաքանչյուր շնչավոր կենդանի զգաց այգու ծառերի միջով հոսող կենսահյութի շարժումը և այն ինչպես է արձագանքում ՍՊԱՐԱՊԵՏԻ ծիծաղի քաղցր ելևէջներին, ձուլվում երկնքի աստվածների՝ Անահիտի, Աստղիկի, Արամազդի սիրո և ռազմական արվեստին:

Խոշոր, սևահոն, խորունկ աչքերի փայլի նստվածքը արտացոլում էր երբեմն քաղաքացիական, երբեմն մարտական խաղաղության ձգտումին: Նա շարքային հագուստի մեջ խնամքով հարդարված, ծնոտը ծերմակած, կարճ, բրդոտ մորուքով, դեմքի իր արտահայտությամբ զգաստացնող էր: Համենայնդեպս, ոգի ու հավատ էին ներշնչում, անվախ նվիրվել հաղթանակի նպատակին:

Այդ ծիծաղը, տղամարդկային ծիծաղը... այդ ծիծաղի մեջ բռնկվող ցավ կար, մեր կյանքում անզուգական էր, նման էր ջրով հագեցած սրտի և հոգու զովությանը: Այն նման էր գորշ ամպերի ծեղքից զիգզագաձև շանթող կայծակին, որը լուսաշող ծառագայթներով պատմական անցյալի ակնթարթը դարձնում էր ծիրանավառ տեսանելիին, ուր աչքիդ առաջ պատկերները ձգվում էին կյանքի սկզբից մինչև վերջ:

Եվ այդ պահին կթվա, որ մի քանի վայրկյան հետո կթափվեն երկնքից իջնող անձրևի կաթիլները կամ մանանա կնստի ծաղկուն դաշտի վարսաթերթերին ու բարի կժպտա երկնքին, նայողը կվայելի բնության տված պարգևը: Ջերմ ապրումներով կմաքրի մարդկային հոգիներին նստած պատերազմի հետքերը, տառապանքների շղթայված թիթեղաշերտ ցավը: Մարդու առողջ զգայարանների վրա ազդելով՝ այդ ծիծաղի հնչյունները նրան ներքաշում էին հպարտության զգացումի անհուն եթերը:

Ծիծաղի ճշմարտությունը մարդուն ուղի է հարթում դեպի կյանքի բարի գործերը, անլուծելի գաղտնի խնդիրների բացահայտման էությունը: Իսկ այդ ծիծաղ չընկալողները մնում են հավերժ չհասկացողներ:

Բարոյազուրկ, պատերազմ ու կյանք չհասկացող կամ դրա հետ կապ չունեցող, խարդախ ու չարագործ, զգուշորեն գոյող մարդիկ, որոնք ծարպկորեն օգտագործում են կռվող տղաների արգասիքը: Խարդավանքը նրանց մեջ արագ է աճում, որն էլ հասցնում է բարոյական անկման, նրանց գործը դառնում է անպտուղ, յուրաքանչյուր քայլափոխի անգիտակցորեն հանդիպում են դիմադրության: ՍՊԱՐԱՊԵՏԸ՝ կերտած իր մարտական, քաղաքական ուղին, ծիծաղով թերթում էր անցած պատմության էջերը:

Թաքնված կյանքի կոչով՝ գաղտագողի զբաղվածները, նենգափոխվածները, քաշքշուկով ձգվում են ազգային կործանարար, դրսից ծրագրված գործողության մեջ: Անգիտակցորեն կատարում թշնամու թունավոր նպատակները, որը քայքայում է ազգի օրինավոր հիմքերը, որի դիմաց խրախուսվում են և ավտոմատորեն ընտրվում լրտեսական կառույցի մեջ, որոնք խարսխված չար ծրագրերով՝ ծծմբաթթվի պես քայքայում են Հայաստանի ազգային-ազատագրական պայքարում ձեռք բերած հաղթանակը:

Լյուդվիգ Ֆոյերբախը ասում է. «Ընտրյալ մարդն առավել քան մեկ ուրիշը, ծնվում է կյանքի և այն վայելելու համար, ոչ թե կյանքը, այլ՝ հասարակությունն է մեղավոր նրանում, որ դեռ նոր ծնվելով՝ նա պայքարով պետք է նվաճի նույնիսկ օդը շնչել կարողանալու համար»:

Հատուկենտ են, որ մահանում են, որ ապրեն ողջերի մեջ, նրանց ճանապարը լուսավորեն: ՍՊԱՐԱՊԵՏԸ հայ ժողովրդի այցեքարտն է, նրա կյանքի պատմության իմաստը: Իսկ չարագործները՝ ձեռքերը ծալած կրծքներին, ապրում են լռակյաց, չարիքներին անարգել գոյատևելու հնարավորություն տալով, ինչպես սատանան:

Կոպիտ, անհավատ, շահամոլ, ագահ, չար մարդն այնպես է, ինչպես սատանան և նրա ծառաները, որոնք ամենասարսափելին են շողոքորթության, քծնանքի մեջ, նրանց գլխում ամեն ինչ խառնված է, սրբապիղծ դառնալով՝ իրենց մեջ կրում են չարիքի սաղմը, զգուշանալով ճշմարտությունը ճանաչելուց:

ՍՊԱՐԱՊԵՏԻ կյանքը պատկանում է հայ ժողովրդի պատմությանը, որը շաղախված է համաշխարհային մշակույթով: Հերոսական մի քանի հարյուր ընտրյալ հայ ազատամարտիկներ,

որոնք ոգևորությամբ ու էներգիայով, անձնազոհությամբ ու քաջությամբ արդարության էին ձգտում, հայ ժողովրդին հասցրին այնտեղ, որտեղ զտվում էր կեղծիքը ճշմարտությունից:Այժմ խաղաղության թվացյալ ազատության մեջ կաշկանդված ենք, շնչահեղձ ենք լինում: Կյանքի բերումով ազատամարտիկները դարձան հոգսաշատ, սոցիալապես անապահով, խեղճացան, խեղճությունից շփոթվում էին պաշտոնատարի, իշխանավորի, պատգամավորի և այլ բարձրաստիճանավորի առջև, որոնցից շատերը կիսաուսյալ, տխմար մարդիկ են, բացի պոզերից՝ ունեն երկար ականջներ՝ պատահականորեն վերևներում հայտնված:

ՍՊԱՐԱՊԵՏԸ Աստծո հավատով իր ճանապարհը լուսավորեց հայ ժողովրդի պատմությամբ, այն շաղախելով ներկայի իրականության հետ և կառուցեց լուսավոր, անվտանգ, գեղեցիկ ապագա: Ընկերներին սովորեցնում էր 20-րդ դարից 21-րդ դար անց նելիս տեղափոխել այն լավագույնը, ինչ կարող ենք՝ լուսավորն ու գեղեցիկը:

Ծիծաղն ու երգը ծնում են նորանոր հաղթանակներ և այդ ծիծաղով ՍՊԱՐԱՊԵՏԸ հայտնվեց Արծվաշենում:

Վ. ՍՊԱՐԵՊԵՏԸ ռազմագծում քաջալերում է զինվորներին

ԳԱՐՈՒՆ ԱԲԳԱՐՅԱՆ՝ ԳՐԱԴ ԳԱՐՈՒՆ

Կենտրոնում՝ Գրադ Գարուն, 1994 թ.

1992 թ. օգոստոսի 8-ին գտնվում էինք Արծվաշենի ինքնապաշտպանական մարտերի մեջ: Թշնամին լայնածավալ հարձակում էր կազմակերպել: Խրամատի մեջ խառնվել էին տարբեր զորամասերից անփորձ զինվորներ՝ 9 հոգի: Թշնամու հեռահար ռմբակոծությունից համարձակ ու քաջ Մկրտիչի ձվերից մեկը արկի բեկորից ջախջախվեց, մյուսը արագորեն ֆուտբոլի գնդակի մեծությամբ ուռեց: Սակայն ան շտապեց օգնել մի քանիսին, հասցրի անվտանգ վայր: Մեկի ոտքը չկար, մյուսի՝ ձեռքը, մեկը գայլի պես ոռնում էր, մյուսը՝ անասունի պես բառաչում: Այդ վիճակից վախ զգացի: Զինվորներից մեկը՝ վզին ուլունքներ կախած, անկանոն շարժումներ ու տարօրինակ ձայներ էր հանում, խելագարվել էր:

Վախեցել եմ. Քարվաճառում 30 հոգով ընկանք վատ կացության մեջ, մոտենում էինք գյուղի գոմերին: Ձայներ լսեցինք, ականջ դրեցինք՝ խոսում էին հայերեն, կարծեցինք թշնամին հայերին գերեվարել է ու թակարդ պատրաստել՝ այդ ձգող ձայներով մեզ նույնպես գերեվարելու: Պահակակետեր չկային, կասկածներս ավելի մեծացան:

Քոռ Սուրոն և Աշոտը՝ Գրաղ Գարունի ընկերները մարտական դիրքերում, 1994 թ.

Երկու հոգի հետախուզեցին, պարզվեց՝ հայեր են:

Վերջին զինվորին էի օգնում, 9 զինվորի արդեն տեղափոխել էի անվտանգ վայր: Թշնամու արկը հարվածեց խրամատի թմբին, հարվածի ալիքը հողախառն՝ ինձ լեշի պես շպրտեց հեռու փոսի մեջ,- պատմում է Սաքոն:

Աջ աչքս դուրս էր թռել, ենթագիտակցությունս էր, թե գիտակցությունս, չգիտեմ, մթության մեջ աշխատում էի ինչ-որ տեղը դնել: Այդ վիճակով ինձ տարել են Կրասնոսելսկի հիվանդանոց: Եղել եմ ուշագնաց վիճակում, ընկել եմ շոկի մեջ: Տեսնելով անհուսալի վիճակս՝ տեղափոխում են դիահերձարան, մեռելների մոտ:

Գարունը Ծմավոնին, ով զոհվեց Օմարում 1994թ., հանձնարարում է՝ մի հարմար դագաղ տանի, դիակը տեղափոխի, և պատրաստվեն հուղարկավորության: Ծմավոնը դիակների միջից գտնում է ընկերոջ դին, շարժելով այն՝ զգում է, որ մարմինը փայտացած չէ: Ականջ է դնում սրտին, լսում է, որ աշխատում է, ուրախությունից բացականչում է, որ Սաքոն կենդանի է ու ցատկում օդ՝ ներկաները վախից փախչում են դուրս:

Սաքոյին շտապ տեղափոխում են Երևան, շարունակում բուժումները: Աջ աչքը պրոթեզավորում են, Սաքոն կատակում է: 3-րդ կարգ են ձևակերպում: Երբ վիրահատարանից ուրախ-զվարթ պալատ է մտնում, բացատրում է, որ փող է տվել, տեսնող աչք են դրել: Իմ վիճակում մեկը կար, հարցրեց, ինչպե՞ս ես, ասացի՝ բժշկին փող եմ տվել, նրա գլուխը մտավ և սկսեց բարձրաձայն լացել: Աչքս հանեք, տեսանելի պրոթեզավորեք: Ծիծաղից թուլացել էինք: Հետագայում Սաքոն կատակում էր՝ լավ էր, որ մեռած էի, կենդանի լինեի, դագաղս տեսնեի, վախից կմեռնեի:

Գարունը մի առիթով ասել է. «Տղաները մահի մեջ կյանք էին փնտրում»: Պատերազմի ընթացքում կան երեք տեսակի հատկանիշներով օժտվածներ. առաջինը՝ համարձակ հայրենասերների խումբ, որոնք ունեն ռիսկի գործոն, երկրորդ՝ թիկունքում աշխատող հոգեհարազատներ, օգնում են ռազմաճակատին, երրորդ՝ ոչ թիկունքից, ոչ ճակատից չեն օգնում, զբաղված են շահերով, ճարպկորեն տեղավորվում են թիկունքում լուծվող հարցերի արանքը:

Արծվաշենի դիմաց՝ Մուդութարա թրքաբնակ գյուղում, թուրքերը մեր դիմաց ուժեր էին կուտակում: Մեր դեմ-դիմաց տեղադրում էին ականանետ զենքեր, որից պրծում չկար, միայն գետնատունն էր ապահով:

Թուրքերը տանկի վրա նստած՝ գրոհում էին հայկական դիրքերի վրա: Սաքոն՝ գնդացրին կպած՝ ուզում էր կրակահերթով կասեցնել թշնամու առաջխաղացումը: Այդ հանդգնությունը կանխելու համար տանկի փողը հարվածեց նրա ուղղությամբ: Խրամատը քարքարոտ էր և խորը չէր փորված: Արկի հարվածից աջ թևը ջախջախվեց, ականջից արյուն ցայտեց: Ցավից ջրամանի միջի օղին քաշեց գլխին: Զինբաձկոնն ու գնդացիրը քաշելով՝ աջ ձեռքը կախ՝ հասավ բուժկետ:

Բուժքույրը տեսնելով գզգզված, արնաշաղախ վիճակը՝ ձեռքերը խփեց ծնկներին ու բացականչեց. «Թուրքերի արևը թաղեմ, էս ի՞նչ օրի են հասցրել Սաքոյին»: Իրոք, նրա վիճակը ծանր էր: Աջ թևն ուզում էին անդամահատել, եթե չլիներ



Գրադ Գարունի մարտական ընկերներ Ավոն և Սմբոն Լենինավանում

բժիշկ Բունիաթյանի համառությունը: Նստատեղից՝ հետույքից միսը կտրելով՝ պատվաստեցին ձեռքի վրա՝ փրկելով աջ ձեռքը: Տղերքը կատակում էին՝ վրայիցդ քամակի հոտ է գալիս: Բանակցությունների ժամանակ Գարունը ձեռնափայտով չէր ուզում ներկայանալ: Թաքուն, գաղտնի պատրաստվում էին, որ Սաքոն գնա:

Առավոտյան ջոկատը շարժվեց: Գարունը ստուգողական աշխատանքից հետո անցկացրեց ծառայողական քննություն՝ ասելով, որ Սաքոն իր պարտականությունները լավ չի կատարում: Սաքոն նեղանում և քիթը կախ, խռոված՝ առանձնանում է: Գարունը մոտենում է, բացատրում, մի կերպ հասկացնում, որ այս բոլորը արվում է, որ թշնամին նախօրոք չիմանա՝ ով է գնում բանակցությունների: Սաքոյի ժպիտը գալիս է տեղը:

Միրբաշիրի դիմաց հայկական Չայլու գյուղը թուրքերը գրավել, դիրքավորվել էին: Հարևան գյուղի առաջին դիրքերում ի նշան հաղթանակի, քեֆ-ուրախություն էին կազմակերպել:

Հոկտեմբերյանի ԵԿՄ բաժանմունքից 21 հոգի՝ խալաստո-

Կենտրոնում՝ Գրադ Գարունը, Ռաֆիկ Սարյանը՝ Մուրուք Ռաֆոն, Քոռ Սաքո, կքանստած ձախից՝ Մկո Մարտիրոսյանը, մարտական ընկերների հետ, Կապան

յի, Մուրուք Ռաֆոյի, Սաքոյի տղաները հետախուզության ժամանակ մի թուրք խփեցին, զենքը վերցրին: Այդ ժամանակ «Վիլիս»-ով բարձրաստիճան սպաները, նրանց հետ Գարունը եկան դիրքերը, քաջալերեցին, որ մի կերպ թշնամուն դիմադրեն, շուտով լրացուցիչ ուժերը կհասնեն օգնության, ու գնացին:

Թուրքերը՝ կերած-խմած հարձակվեցին հայկական սակավաթիվ ուժերի վրա: Հայրոն խենթացել էր, գնդացրին կպած՝ կրակում էր տանկի վրա:

Սաքոն ընկերների հետ հետևում էր իրավիճակին, մշակում ծրագրեր, թե ինչպես կարելի է դիմակայել:

Աշոտ Ղուլյանին «ասկոլկեն» վիրավորել էր: Թուրքի արկը հարվածել էր բարձրաստիճան սպաների վիլիսին: Դասավորեցինք դիմադրության համար որոշ պայմաններ, հասանք օգնության: Երբ պատգարակը բարձրացնում էի, նկատեցի, որ վրան պառկած էր Գարունը: Աչքերս սևացան, չհավատացի: Սիրտս ճմլվեց, չկարողացա ինձ տիրապետել իմանալու՝ մեռած է, թե կենդանի:



Ձախից Գարուն Արգարյանը՝ Գրաղ Գարունը Գորդենկոյի հետ

Արցախի լեզվով լավ էր խոսում, տեղացիներին դիմեցի, նրանք ինձ շատ էին հարգում, տանում տուն, պատիվ տալիս: Հոռաթաղում մարտի ժամանակ ֆիդայական մի լավ հարսանիք կազմակերպեցինք: Թուրքերը աջ ու ձախ ռմբակոծում էին Հոռաթաղը, սակայն չկարողացան հարսանիքը փչացնել: Քավորն ու հովանավորողը Մուրուք Ռաֆոն էր: Այդ խառը, գեղեցիկ պահին թռա դիրքերը, մի ամբողջ գնդացրային ժապավեն դատարկեցի թշնամու վրա՝ ասելով. «Դուք այդտեղ զբաղվեք ձեր գործերով, մենք՝ մեր»:

Եկանք Քարվաճառ «Նիվա» ավտոմեքենայով, հողե ճանապարհը քարքարոտ էր: Մառախուղ էր, տեսանելիությունը՝ 4-5 մ: Մի կերպ առաջ էինք ընթանում: Աչքս նոր էի փոխել, ՍՊԱՐԱՊԵՏԸ կատակով ասում էր՝ մի աչքով ինչպե՞ս ես տեսնում: Ես պատասխանում էի. «Հոգով եմ տեսնում: Երկու աչքը գեղեցկության համար է. մեկ է, կրակելիս մեկը փակում եմ»: Եվ իրոք, «Նիվան» կախվում էր ձորի պռնկին, անդունդ էինք գլորվելու: Ձեռքս գցեցի ղեկին, արգելակեցինք մեքենան: Նստեցի ղեկին: Գարունին, որ ձեռնափայտով էր, Թարթառ գետը գրկած անցկացրի, հետո մեքենան անցկացրինք:

Քաշաթաղում «Լաչին» պաշտպանական դիրքերում կարճատև հանգիստ էր, շունչ էինք առնում, զենք ու զինամթերքը ստուգում, հանդերձանքներս կարկատում:

Վազգեն Սարգսյանը անսպասելի մտավ վրան: Վառարանը վառվում էր, հագուստներս էինք չորացնում: Պատրաստվում էինք թեյ խմել:

Ասացի. «Պարոն նախարար, սուրճ կխմե՞ս»: Ասաց՝ մեծ հաճույքով: Բայց թեյ պատվիրեց: Զինվորական բաճկոնը թաց էր, անձրևի տակ էր մնացել: Վառարանի ծխից երկաթե բաժակը սևացել էր, մտքումս ասացի. «Հիմա բաժակը գլխիս կկոտրի»: Երևի զգաց պայմանները, մեր վիճակը, կատակեց, հավեսով, ասել-խոսելով խմեց: Ինչ Աստված տվել է, օգտվի՛ր: Մարտադաշտում զինվորը ունենում է 5 աչք: 2-ը նայում են ռազմաճակատին, 2-ը՝ թիկունքին, առաջինը թիկունքը կապում է ճակատին, որը ապահովում է հաղթանակը: Իր ազնվաբարո վարքագծով, ծառայության կատարյալ իմացությամբ հետևում է, որ ստորադրյալների մեջ սեր ներշնչել, ոգևորել և խրախուսել նրանց՝ իրենց պարտականությունները կատարե-

լու, նախարարին զինվորից չտարբերելու, արատավոր վարքուբարքից հեռու մնալու համար:

ՍՊԱՐԱՊԵՏԸ չէր ծխում, նկատեց, որ «Պրիմա» եմ ծխում, ու հայացքը ընկավ հնամաշ ոտնամաններիս, նայեց աչքերիս մեջ, ոտքի կանգնեց, ձեռքը գցեց ավտոմատին ու դուրս թռավ: 2 քայլ արեց, շուռ եկավ ու ասաց.

- Իմացի՛ր քո ուժերը և թշնամու թույլ տեղերը, արկդ ուղղիր այնտեղ, որտեղ անհանգստացնում են խաղաղ մարդկանց, խանգարում աշխատանքը: Նա է մեզ կերակրում: Զինվորը թշնամի չէ: Նա թշնամի է այն ժամանակ, երբ իրականացնում է թշնամությունը: Հիմար և թույլ է այն հրամանատարը, որ իր զորախմբին թշնամություն է ներարկում...

- Հողը սուրբ է, զինվորը պետք է լինի արթուն, հավատով զինված, քաջասիրտ, մարդասեր, հայրենապաշտ, գործողություն կատարելուց առաջ աղոթի Աստծուն, նրանից խնդրի հաղթանակ: Նա՝ ամենակարողը, նա է գերագույն ՍՊԱՐԱՊԵՏԸ, մենք՝ հնազանդներ: Կարգապահությամբ, արիությամբ պահպանենք հաղթանակը:

Գորիսից ուղարկեց ծխախոտ, Գարունին՝ մի զույգ բոթաս:

Քաշաթաղից մեկնեցինք Արծվաշեն:

- Թրքաբնակ Սուդութարա գյուղում մի արկ թողել ես, կաշիդ կհանեմ,- Գարունին հրամայեց ՍՊԱՐԱՊԵՏԸ և ավելացրեց.- կյանքի գնով այդ զինամթերքի վերջին հատիկը կհասցնես ռազմաճակատ: Եվ մեջբերեց Սուվորովի խոսքերը. «Ով վախեցած է, նա կիսով չափ պարտված է: Եղիր ուշիմ և զգույշ, ունեցիր որոշակի նպատակ: Ահա քեզ ծրագիր, մի արկ չմնա թշնամուն, գործիր համարձակ»:

1993 թվական: Հատուկ գնդի երկրորդ տարեդարձն էր: Գարունը՝ ոտքից վիրավոր, ձեռնափայտով, կանգնած էր շարքում: Վ. Սարգսյանը նկատեց, մոտեցավ, գրկախառնվեցին: Տղաները կատակեցին. «Պարոն ՍՊԱՐԱՊԵՏ, ձեռնափայտը ստուգիր»: Հետաքրքրությունից դրդված՝ ՍՊԱՐԱՊԵՏԸ վերցրեց ձեռնափայտը, շուռումուռ տվեց, հանկարծ միջից ցցվեց սվին-դանակը: Բարձր ծիծաղեց՝ օդում թափահարելով՝ Վանո Սիրադեղյանին պատվիրեց ձերբակալել Գարունին,- ահա՛, հանցագործը բռնվեց: Բոլորը ծիծաղեցին:

Առաջատար հրամանատարներն են, որ անկեղծորեն սի-

րում են իրենց ենթականերին, հոգ տանում նրանց հոգեկան հանգստության մասին, հնազանդեցնում և ուսուցանում, որ թշնամու դեմ հավատով պայքարեն: Թշնամուց զորեղ թշնամին ծուլությունն է և անտարբերությունը: Առողջությանը չհետևելը, ինքնակրթությամբ չզբաղվելը մարդու առաջին կործանումն է:



Գրադ Գարունի մարտական ընկերները՝ ՄՅՈՒԲ ջոկատի ազատամարտիկները աջից՝ Քոռ Սուրոն

Վանոյան Ժորա՝ Գել Ժորո

Եվ այդպես ավարտեց իր կարճ ելույթն ու սովորականի պես մտավ ազատամարտիկների հետ շփման մեջ:

Նայում էր մարդկանց աչքերին, անմիջապես կռահում նրանց հոգեվիճակը. եթե ընկճված էին կամ իր ներկայության ազդեցությունից շփոթվում, հայտնվում էին ցայտնոտի մեջ, անմիջապես այդ ճնշվածության վիճակից հանում էր ու ոգևորում: Ընդունում էր, որ դիմացինը խելացի է, ունակ ու կարող: Շատ սուր հիշողություն ուներ, բոլորին ճանաչում էր՝ թփի կամ քարի տակ թաքնված, հեռու կամ մոտ լիներ, հասարակ ու պարզ, մատչելի լեզվով հաղորդակցվում էր: Այդպես էր պահվածքը, որ իր արժեքը հասկանում, գիտակցում և ընդունում էր: Խորհրդակցությունների ժամանակ, մարտի կամ հատկապես գրոհի ընթացքում շեշտը դնում էր խիզախության և ինքնագիտակցության վրա: Այդ բառերը արտահայտում էր շեշտադրումով՝ միշտ ձգտելով պահպանել զինվորի առույգությունը, նրա իմացությունը դեպի թիրախը, ռացիոնալ օգտագործել քաջությունը և արիությունը:

Աշխատասենյակում գծագրում, պլանավորում էր ճակատամարտը, զինվորների օգնությամբ զորավար էր դառնում ճակատամարտում:

Ճակատամարտում խոսում էր թիկունքի դերի և նշանակության մասին, թիկունքում՝ ռազմաճակատի մասին, երկուսն էլ հավասար են, բայց ոչ՝ համազոր:

Բոլորից շատ թե քիչ տարբերվում էին իրենց բարեպաշտ հոգատարությամբ, ճակատ-թիկունք կապող անհրաժեշտության արժեքով: Առաջինը՝ մարտնչել, քրտնաջան ձեռք բերել աշխատանքի արգասիքը, երկրորդ՝ մեծագույն վտանգով անգամ ճակատ հասնել: Անցնել և վերադառնալ այն կամրջով, որ ականապատված է սննկացման և մահվան ականներով:

Այդպիսին էին Սենիկ Գևորգյանը, Ժորա Վանոյանը (Գել Ժորան), որը մեզ հետ կամ առանձին 3-4 «Կամազ» ավտոմեքենայով, բեռով-բարձով՝ թել-ասեղից մինչ դիզվառելիք, բենզին, սնունդ, զենք ու զինամթերք բարձած, գիշեր թե ցերեկ, հասցնում էր ռազմաճակատ: Գիշերվա որ ժամին լիներ, բարձրանում էր դիրքերը, որի շուրջը մեղվի պես հավաքվում էին ազատամարտիկները, իրար հալուքեֆ հարցնում, խոսք ու նամակ, ծխախոտ, հագուստ էր բաժանում տղաներին, Գել Ժո-

րային հայտնում իրենց շնորհակալությունը, քաղաքացիական կյանքից, թերթերից ստանում ինֆորմացիա: Բայց Գել Ժորան խնդրում և պահանջում էր, ով հոգնած է, թող իջնի գետնանտուն, հանգստանա, ինքը կփոխարինի: Այդպիսին էր Գել Ժորան՝ Գարունի մտերիմը, և ազատամարտիկները նրան շատ էին հարգում:

Հասանք Կիչան, Սրխավենդ: Ադրբեջանցիները հրազենային կրակ բացեցին 50-10 ԱԴԳ Վիլիսի վրա: Գնդակները խրվել էին պահեստային ավտոդողի մեջ: Ամարասի Արթուրը ղեկավարում էր մարտը: Ղարաբաղցիները հայաստանցիներին կռռ էին ասում, հատկապես՝ մեր երկուսին:

Մի տիկին մոտեցավ Բորյային և հարցրեց. «Ո՞վ է կամանդիրը»: Բորյան ոչ տարավ, ոչ բերեց, ցույց տվեց զորամասի ամենակարճ հասակ ունեցող Ավոյին: Տիկինը ձեռքով փակեց բերանը և ասաց. «Վույ, քոռանամ, էս թզուկն է՞, սրանից ի՞նչ կամանդիր,- և արագ խոսքը փոխեց,- այս կարճահասակից ամեն ինչ հավատալի է: Կեսը գետնի տակն է»:

Ծրջափակման ժամանակ Քեռին՝ Սամոն, բյուրեղավանցի Արցախ գնդի առաջին հրամանատարը կրծքով փակեց հայ հղի կնոջ մարմինը, բայց հետո թուրքերի լրացուցիչ ուժերի շնորհիվ գերեվարեցին կնոջը, որավայնը ծղեցին, արգանդից հանեցին երեխային, պարանոցից կախեցին: Վրեժի ցասումից Մայիս Կյուրեղյանը, որ վեց աղջկա հայր էր, կեսլուրջ, կեսկատակ՝ կնոջը պատվիրեց՝ արու զավակ լույս աշխարհ կբերես, որ շարունակի ինձ, թուրքերից վրեժ լուծի: Այդ դեպքում կհաղթեմ թշնամուն ու կվերադառնամ ընտանյաց գիրկ, եթե ոչ՝ կգնամ թուրքերի մոտ՝ գերեվարվելու: Մայիսի կամքը Աստված կատարեց: Ծնվեց նրա արու զավակը, որի անունը կնքեցին 1994թ. զոհված ընկերոջ՝ Ծմավոնի անունով:

Տղաները շատ էին սիրում Վաչոյի մեծ եղբայր, մարզիկ, գնդացրորդ Ռոմիկին. գնդացրի կրակահերթով, հատկապես գիշերները, կարծես դաշնամուր էր նվագում Արծվաշենի դիմաց թուրքաբնակ Սութուդարայի գյուղի համար մղվող մարտերի ժամանակ, պաշտպանական դիրքերում Ծմավոնը, Արտակը, Հենոն, Մայիսը սպասում էին հարձակման հրամանին: Ռոման Ռոմիկին հրում է՝ մի կողմ քաշվի, որ իր համար նստելու տեղ բացվի: Այդ պահին թշնամու արկը քարուքանդ արեց

նրանց պաշտպանական դիրքերը: Ծատերի հետ վիրավորվեց նաև Ռոմիկը, նրան տեղափոխեցին հիվանդանոց: Վերքը ծանր էր, մարմինը՝ ջարդուփշուր, արյունը բեկորից պղտորվեց:

1994թ. հրադադարից հետո բուժվելու համար դրամ չուներ, մեկնեց Ռուսաստան՝ վաստակելու: Ռուսների ու թաթարների ազգամիջյան բանավեճից ծագում է ծեծկռտուք, մեղադրում են Ռոմիկին և դատապարտում ազատազրկման: Ազատամարտիկներից շատերն ունեցան նմանատիպ ճակատագիր:

Ծատերի սիրելին էր Աֆղանստանում կռված Արտակ Մակարյանը, ընդգրկվեց ՀԱԲ-ի կազմում: Խորհրդային ռազմական ավտոշարասյունը ռազմամթերք էր տեղափոխում ազերիների ռազմաճակատ: Արտակին մնում էր օգտագործել ճարպկությունը և հնարամտությունը: Թաքնված տեղից կապկի ճարպկությամբ ցատկեց վերջին ավտոմեքենայի մեջ և 70-80 մ հեռավորության վրա դատարկեց ավտոմեքենան: Համո Բալայանը՝ Ջերմուկի Համոն, Մարտակերտի սահմանամերձ Թալիշ գյուղի մոտակայքում թշնամու ստեղծած նեղ կացությունից դուրս գալու համար դիմում է Արտակին, օգտվում նրա մեծ փորձառությունից:

Կապավոր Բորյա Բալբաբյանը ուտող-խմող, կատակասեր էր և շատ բան իմացող: Սակայն նրանից բառ պոկելը շատ դժվար էր, ոչ մեկի չէր վստահում, շատ անգամ խռովում էին: Բորյան միշտ կատակում էր, եթե կապավոր եմ, ուրեմն՝ փակ սեյֆ եմ, բանալին ինձ մոտ չի, որ բացեմ ձեզ տամ:

Վազգեն Սարգսյանին շատ էր հարգում ու նրա կյանքով երդվում: Վերջում ասում էր, թե սպարապետի արևով եմ երդվում, ոչ տեսել եմ, ոչ՝ խոսել: Բերաններդ փակ պահեք, որ 21-րդ դարը մերը լինի:

Մի անգամ տղաների վեճը տաքացել էր: Արցախ գնդի հրամանատար Միքայել Ապրեսյանը թույլատրեց, որ Ապարանի տղաների հետ գրազով ղայիշտանոցի խաղան Ստեփանակերտ քաղաքում, ժողովրդի աչքի առաջ: «Արցախ» գունդը հաղթեց, և այդ հաղթանակը համարեցին մարտական ոչ-ոքի:

Վահան գյուղի ուղեկալում գնդի տղաները դիրքային հերթափոխություն էին կատարում: Սաքոն վիրավորվել էր, դիրքերից չէր նահանջում:

Խրամատի թմբին պառկած Հենրիկ Ներսիսյանն ասաց. «Քաղցած եմ, գնում եմ հաց հայթայթելու»: Բորյան համամիտ էր առաջարկին: Տղաներից եղան հակառակվողներ. կռիվ մեկնելու պահին ինչի՞ մասին եք խոսում: «Ես չեմ մեռնի, իմ ետևից պարտքատերերը հերթով կանգնած են: Նրանք ինձ օրինում են, որ կենդանի վերադառնամ, պարտքերը վճարեմ»:

Կամո Ղազարյանը և կապավոր Բորյա Բալբաբյանը, վտանգելով իրենց կյանքը, անցան ձեռնամարտի, Սաքոն չէր հասցնում պահեստատուփը լիցքավորել, շտապելուց փամփուշտը թարս մտցրեց, և դա լռվեց, Սաքոն խառնվեց իրար: Թուրքի տանկը գրոհում էր հայերի դիրքերի վրա, փողի նշանառությունը ուղիղ տղաների դիրքերի վրա էր: Խուճապ էր, խառնվել էին իրար, տանկի արկը խփեց խրամուղու թմբին, արկից ընկերոջս՝ Արթուրի թևը ջախջախվեց, ժգուտով կապեցի, արյունը պզզում էր:

Արթուրի ձեռքի ոսկորները փշրված էին, կատակեց. «Ոսկորներ ո՞վ է ցանկանում»,- փշրված ոսկորները անջատում էր ցեխաշաղախ մսից, վերքը մաքրում կեղտից, որ արյունը չվարակվի: Այդ ամենն անում էր սառնասրտորեն, նայողի մարմինը փշաքաղվում էր ու սրթսրթում, ցավից դողում:

«ՄՀՈՒԲ» ջոկատի Հմայակ Պետրոսյանի հուղարկավորությունը

Քարվաճառի դիրքերում կրակի շուրջը տղաները տաքանում էին, Սաքոյին տեղ չտվեցին: Նա մի բուռ պարկուճ՝ փամփուշտ, առանց գնդակների, արագ ցույց տվեց ու լցրեց կրակի վրա, բոլորը մի ակնթարթում վախից փախան՝ ում ինչպես հաջողվեց: Սաքոն հանգիստ, լեն ու բոլ նստեց, տաքացավ: Կրակի մոտ մի դեպք պատմեց Սաքոն.

-Բորիկի, Ամարասի, Արթուրի և հոգևորականների հետ գնում էինք Արցախ: Բորյան հաջողացրեց Սրբազանի ճամպրուկը գողանալ, միջի փողերով զենք գնել: Ճամպրուկը բացեցինք, տեսանք փարաջային խնամքով դրված արծաթազարդ խաչը: Համբուրեցինք այն, տեղը դրեցինք, աղոթեցինք մեղքերի համար:

Սարոյան Սեյրանը, Հայրապետյան Գևորգը՝ Գևորգ 4-րդ, Նահապետ Թումանյանը՝ ՆՀՕՆ, Սարգսյան Սուրիկը, Գարուն Աբգարյանը՝ Գրադ Գարուն, Արկադի Տեր-Թադևոսյանը՝ Կոմանդոսը, որը ծառայել և ռազմական կրթությունը ստացել է նախկին խորհրդային բանակում: Հայերենին լավ չէր տիրապետում, ռուսախոս էր և նշված հրամանատարների պես յուրահատուկ սրտամոտ, հարգված հրամանատարներ էր: Նշված հրամանատարները թունդ հայհոյողներ էին:

Գրադ Գարունը զենիթահրթիռային զինատեսակի՝ գրադների դասակի հրամանատարն էր: Հանգիստ, խաղաղ վիճակում թեթևակի հայհոյում էր, իսկ մարտական գործողությունների ժամանակ, հատկապես երբ նպատակակետին չէին հասնում արկերը, հայհոյանքը չափազանց թունդ էր:

1990 թ. աշնանը Կապանում Վ. Սարգսյանը նախատում էր Գարունին հայհոյելու համար: Արկերի ձեռքբերման արժեքը և անիմաստ վատնելը ստիպում էին թունդ հայհոյել թշնամուն: Վ. Սարգսյանը բարկանում էր նաև զինամթերքն անօգուտ օգտագործելու համար, ավելացնում՝ դիպուկ կրակել:

Հայկական ուժերը կռվում էին ադրբեջանական և Ադրբեջանում գործող խորհրդային 4-րդ բանակի ստորաբաժանումների դեմ, որոնք ունեին անթիվ արկեր և օգտագործում էին անխնա:

ՍՊԱՐԱՊԵՏԸ հազար անգամ նախազգուշացրել էր՝ սպիտակ աղվեսների վրա մի կրակեք, քանի որ նրանց տված կեղծ խոստումներին ծանոթ էր հետախուզությունը, որ հայե-

րի վրա չեն կրակի, բայց քարը քարին չէին թողնում: 1991թ. Վազգեն Սարգսյանը մեզ հետ Դիլիջանում էր: Հայաստանում գործող ռուսական զորքը լքեց Իջևանի, Նոյեմբերյանի պաշտպանական դիրքերն ու նահանջեց Երևան: Նրանց զինվորական բազան տեղակայված էր Սովետաշենում:

Վազգեն Սարգսյանը, լինելով պաշտպանական կոմիտեի ՀՀ ներքին զորքերի հանձնաժողովի նախագահ, հրաման տվեց փակել նահանջի ճանապարհը: Այնտեղ էին Մասիսի գնդի, մայրաքաղաքային գնդի մի-մի վաշտ, Իջևանի և Դիլիջանի երկրապահ տղաները: Խորհրդային T-72 տանկը պատրաստվում էր ճեղքել պաշտպանական գիծը: Գեղամը թռավ տանկի վրա:

ՍՊԱՐԱՊԵՏԸ մոտեցավ, ռուս հրամանատարի ուսադիրներից բռնեց, թափահարելով՝ պահանջեց վերադառնալ ելման դիրքերը և որպես պատիժ 86 հոգու պատանդ վերցրին, պահանջեցին դիրքերը լքելու համար ներկայացնել գրավոր բացատրություն: Հրամանատարը հրաժարվեց:

Բռնագրավելով ռազմական տեխնիկան և ռազմամթերքը՝ ազատ արձակեցին: Նրանք դատարկածեռն վերադարձան Սովետաշեն՝ իրենց ռազմաբազան:

Դրա պատճառներից մեկն էլ այն էր, որ 1991թ. մայիսի 6-ին Նոյեմբերյանի Ոսկեպար գյուղի մոտ խորհրդային և ադրբեջանական միացյալ հրոսակախմբի (հրամանատար՝ Դյոմին) դարանն ընկավ 24 հայ միլիցիոներներից բաղկացած ինքնապաշտպանական ջոկատը: 14-ը գազանաբար սպանվեցին, 10-ը գերեվարվեցին: Նշված օրերին Ծահումյանի վիճակը, ծանր կացությունը պատճառ եղավ, որ տղաները Վազգենի ցուցումով 2 օր հետո մեկնեն Ծահումյան: Ջիվան Աբրահամյանի վաշտը այնտեղ էր: Վերին Ծեն գյուղի Ծամփրապտուկ բարձունքում 2 ընկերների հետ անհավասար մարտում 1991թ. հուլիսի 20-ին ընկավ Հայաստանի ազգային հերոսը: Ջիվանը ապահովում էր Գարունի թիկունքը: Գյուլստանից դեպի Հաթերք տանող ձորակով մտանք Մաղավուզ, Մատաղիս՝ ապահովելով ազգաբնակչության տեղահանման անվտանգությունը: Առաջին գրադը վերանորոգվեց, թշնամին հայտնաբերեց և ոչնչացրեց այն: Վերիշենի Պրիսի արխում թշնամուն էրքեջ գյուղը գրավելու օրը ազատամարտիկները վերադարձել էին մարտից, 2 խմբի բաժանված՝ նստել էին կարծատև հանգստի: Հոգնած հավաքվել էին փոքրիկ առվակի շուրջը, հաց, պանիր, գառան մսից խաշլամա էին ուտում: Առվի վերևի մասում առաջին խմբի տղաները շոգից քրտնած ոտքերը լվանում էին սառնորակ ջրում: Ներքևի խումբն անտեղյակ ծաշում էր, զուլալ ջուրն անուշ անում, բացում ախորժակները, պապակած սրտները հովացնում:

Գեղամն այդ իմանալով՝ իր սովորության համաձայն, թունդ հայհոյանքի շարքը ուլունքի պես շարեց: Խմբի մեջ էր Վազգեն Սարգսյանը, ավտոմատը ձեռքին՝ նայում էր արևմուտք, հորիզոնը նստել էր Մռավ սարի լեռնակատարին, շիկացած աչքերով կրակ էր թափվում երկնքից, ցորենի հասկերը գլխիկոր սպասում էին հրդեհի բոցին, որը շուտով լափելու էր իրենց, դառնալու էին մոխիր, քամու թևին՝ փոշու հատիկներ, նստելու զոհված ազատամարտիկների սառած շուրթերին: Ահա ուր է հասցնում հացի խնդիրը: Սթափվելով՝ ոգևորվեց ու հուսադրեց տղաներին՝ ասելով՝ կարծատև անհաջողությունն ավելի լավ է, քան կարծատև հաջողությունը: Կգա հաղթանա-

Աջից՝ գեներալ մայոր Մելս Չիլինգարյանը մարտական ընկերների հետ

կի օրը, այս նահանջը ինքնին ոչինչ չի նշանակում, հաղթանակը արդարության կողմն է. մերն է լինելու:

Ազատամարտիկները հարգում և ընդունում, հավատում էին արդեն ճանաչված Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻՆ: Նրա հետ լինելը պատիվ էր և հարգանք:

1992 թ. հունիսին Քաշաթաղի «Կոբրա» պաշտպանական դիրքերի համար մղվող մարտերի ժամանակ գրադների դասակի հաշվարկվող տղաների արձակած արկերը նպատակին չէին հասնում:

Ձախից՝ գեներալ մայոր Մելս Չիլինգարյանը գնդապետ Արթուր Սիմոնյանի հետ

Գարուն Աբգարյանը հայհոյանքի տարափ տեղաց և իր քարտեզագրման տեղագրության շնորհիվ համոզեց, թե հակառակորդի ռազմական կարևոր նշանակություն ունեցող օբյեկտներն ինչպես կարելի է խոցել:

Այդպես բացատրելով՝ օրինակ ծառայեց՝ ասելով. «Այսօրվա դրությամբ զինամթերքը թանկ է մեր ընտանիքից, ամեն ինչից: Մի արկը պահում է յուրաքանչյուրիս կյանքն ու մեր ընտանիքների անվտանգությունը, անկախ Հայաստանի Հանրապետության պետական սահմանները»: Նախընտրեց Գեղամ Հակոբյանին, որի արմատները Ալաշկերտից էին: 1 ամիս հետո Մարտակերտի Փափրավենի ազատագրման ժամանակ թշնամու արկից փշրվեց Գեղամի գանգի ոսկորը, որը վիրահատման շնորհիվ փոխարինվեց պլաստմասայով:

Անարատ էր Գարունի և Գեղամի ընկերությունը. երկուսն էլ թունդ հայհոյող էին, ազնիվ ու շիտակ, աղ ու հացով՝ մարտադաշտում երդվյալ: Նրանց հավատարմության դաշտը տարածվում էր շրջապատող տղաների վրա: Ծատ անգամ դա էր տանում դեպի հաղթանակ: Գարունի մտերիմ ղեկավար ընկերը՝ Մելսիկ Արտակի Չիլինգարյանը, որ բոլորել էր 32 տարին, Արցախի Մարտակերտի Վանի գյուղում էր: Արցախյան շարժմանը նվիրված միտինգում չդիմացավ 80 տարեկան հոր՝ Արտակի սիրտը, ճաքեց համազգային ցավից ու ժողովրդի վիճակից: Մինչև Ղարաբաղյան շարժումը Մելսիկը ծառայում էր ՀՀ ներքին զորքերում, որպես ջոկի հրամանատար:

1992թ. փետրվարին նորաստեղծ ՀՀ Պաշտպանության նախարարի առաջին թիվ 20 հրամանով 32 տարեկան կապիտանին նշանակում են առանձին պահպանման վաշտի հրամանատար:

Զինված ուժերի գլխավոր շտաբի պետ գեներալ Գուրգեն Դալիբալթայանի հրամանով, պահպանական վաշտը կազմակերպեց զենքի ու զինամթերքի փոխադրական աշխատանքներ: Օգտվեցինք «Սոյուզգազհայ» գրասենյակից, նրանց տրամադրած ծանրաքաշ տրաքլերներ փոխադրական միջոցներից: Եվ առաջին տանկերը տեղափոխվեցին Արցախ:

Արցախում արգելված էր քրիստոնեությունը, այդ պատճառով էլ Ադրբեջանի հայերը կնքված չէին: Եվ 1992թ. մայիսի 20-ին Պարգև Սրբազանը շատերի հետ Գանձասարի վանքում

կնքեց նույն Մելսիկին: Նա առաջին ավտոշարասյունը զինամթերքով հասցրեց Արցախ: Ժամանակ գտնելով՝ շտապում է հայրենի Վանի գյուղ՝ մորը տեսնելու: Թուրքերի հարձակումից գյուղերը դժվար կացության մեջ էին: Մելսիկը գյուղի տղաների հետ որոշում է հարձակվել Խանլալո, Ենիքենդ, Նարիրշթար գյուղերի վրա, ոչնչացնել այնտեղ տեղակայված թուրքական ուժերին, որոնք հայկական գյուղերին ահ ու սարսափի մեջ էին պահում: Եվ չունենալով օգնող, օժանդակ ուժեր, հայտնվում են թշնամու ուժերի ճնշման տակ՝ շրջափակման մեջ: Երեք օր դիմադրելուց հետո՝ անբարենպաստ եղանակի, մառախուղի օգնությամբ կարողանում են դուրս պրծնել այդ դժոխքից:

«Մարտակերտի անկման ժամանակ հինգ գյուղեր՝ Առաջաձոր, Ծմակահող, Ծահիմասուր, Գառնաքար և Վանք, մնացին անսասան: Մարտակերտի անկման ժամանակ բոլորը փախել էին, մայրս՝ ոչ, ասելով. այստեղ ծնվել եմ, այստեղ էլ կմեռնեմ:

Երկու ՍՈՒ-25 ռմբակոծիչներից մեկը ռումբը նետեց Առաջաձորի Ծմակ տարածքի վրա: Երկրորդ ռումբը ընկավ Վանք գյուղի մեր տանից վերև: Սիրտս ճմլվեց, ինձ թվաց մեր տան վրա ընկավ, մայրս բոցերի մեջ խորովվեց: 20 րոպե հետո հասա գյուղ: Այդ ժամանակ մորս գոռոցի ձայնը հասավ ականջիս. «Պաշտպանվե՛ք, ո՛վ հայ ժողովուրդ: Անիծվե՛ն թուրքերը. դրանք այս երկրի չարիքն են, դժոխքի ստեղծողները, անիծվե՛ն այդ թուրքերը»: Ինքնաթիռները կատարեցին երկրորդ կիսաշրջան պտույտը, ևս երկու ռումբ նետեցին: Այս անգամ Գանձասարի վանքից 100մ հեռու ընկան: 1993թ. Վազգեն Սարգսյանը ինձ ուղարկեց ռազմական ակադեմիա, իսկ 1994թ. սեպտեմբերին նշանակեց էվակոբատալյոնի հրամանատար: Ախալքալաքի խաշուրից 100 ավտոմատ, 25 տանկ, զենք, զինամթերք տեղափոխեցին Արցախ»:

Վազգեն Սարգսյանի մասին անսահման կարելի է խոսել: Նա համամարդկային էր, հայրենասեր, հայ մարդ: Նրա գործերը հանուն մարդկության էր, նա սիրված և հարգված էր բոլորի կողմից,- և այդ պահին Մելսիկ Չիլինգարյանը խոսքը փոխեց, գոհունակությամբ նայեց գեներալ Վլադիմիր Հայրապետյանին:

ՀՐԵՏԱՆՈՒ ԱՍՊԵՏԸ

ՀՀ ՀՈՒ Հրթիռահրետանային զորքերի պետ, գեներալ-մայոր Վլադիմիր Ասատուրի Հայրապետյան

1942 թ. Կապանի Ծիշկերտ գյուղում ծնված Վլադիմիր Ասատուրի Հայրապետյանը, ստանալով ռազմական բարձրագույն կրթություն, հրետանային մասնագիտությամբ ծառայում էր խորհրդային բանակում:

Ղարաբաղյան շարժումը նրան ստիպում է վերադառնալ Հայաստան: Անդրանիկ Քոչարյանի, Գուրգեն Դալիբալթայանի հետ ներկայանում է ՀՀ Պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանին, առաջարկում իր ծառայությունը հայրենիքին: Մինչ այդ Վ. Սարգսյանին զեկուցում են, որ ռուսական բանակի մի բարձր աստիճանավոր սպա ուզում է խոսել իր հետ:

Այդ ժամանակ ձևավորվում էր հայոց բանակի հրթիռահրետանային վարչությունը: Վ. Սարգսյանը, լսելով գնդապետին և նշված զինվորական ներկայացուցիչներին, միանգամից բոլորի ներկայությամբ հայտարարեց.

- Քեզ նշանակում եմ ՀՀԶՈՒ հրետանային վարչության պետ:

- Ես այդ պահին շփոթված էի, ականջներիս չէի հավատում: Ժամանակ խնդրեցի Ռուսաստան մեկնելու և աշխատանքից ազատվելու համար,- ասում է Վլադիմիր Հայրապետյանը: Վ. Սարգսյանի շուրջ հավաքվում էին նվիրյալներ՝ ոչ իրենց շահերի համար, այլ՝ հայրենիքի:

Այդ միջադեպը իմ մեջ տպավորվեց, ամբողջ էությամբ զգացի՝ նրա դեմքից կրակ էր թափվում, հայրենասիրության բոցը էնպես էր շողշողում աչքերում: Հենց դա էր, որ ինձ ստիպեց լինել կայուն ու հաստատուն: Երբ ազատման դիմումզեկուցագիր ներկայացրի ՌԴ զինված ուժերի նախարար՝ Շապոշնիկովին, ստացա մերժում: Սակայն հիմնավորեցի, որ իմ հայրենիքը պատերազմի մեջ է, ես պիտի գնամ օգնեմ իմ ժողովրդին: Լինելով իմ դիրքերում հաստատուն, ինձ գործուղման հրաման տվեց ՀՀ ՊՆ աշխատելու: Եվ 1992թ. հունիսի 13-ին ՀՀ Պաշտպանության նախարարի հրամանով անցա աշխատանքի: Եթե ուզում ես հայրենիքդ պաշտպանել, բարձրանաս, դժվարություններից չպիտի վախենաս: Պայքարը դեռ գաղափար չի, այլ մի հին ժողովրդի անվտանգության վերականգնում: Իմ նշանաբանն էր՝ «Մի գործ վերցրու մինչև վերջ կատարի»:

Անմիջապես անցա գործի: Սկզբնական շրջանում կային

անթիվ դժվարություններ: Այդ կարճ ժամանակահատվածում պատերազմի թոհուբոհով անցած գնդապետը, Քարվաճառի ազատագրման ժամանակ Չապլի գյուղում Արթուր Սիմոնյանի աշխատասենյակ-բնակարանում ինձ հատկացրեց քնելու մահճակալ: Գիշերը հոգնած, ջարդված ինձ գցեցի մահճակալի վրա, դեռ շունչ չէի քաշել, մահճակալիս տակ շարժում լսեցի: Վեր կացա, տեսնեմ մահճակալիս շղթաներով կապած մի մարդու: Արթուրին հարցրի, գնդապետի մահճակալին մարդուն շղթայել եք, այս ինչ երևույթ է: Նա պատասխանեց գերավարվածը թուրք է, որին պիտի փոխանակենք: Գերին ինձանից լավ էր ապրում: Հանկարծ շղթաներից ազատվի, ավտոմատը ձեռն առնի, բոլորիս վերջը կտա: Ես զարմացած էի. ինչպե՞ս կարելի է թուրք գերուն այս պայմաններում պահել, մի՞թե անհրաժեշտություն է: Սիմոնյանն ասաց.

- Մեր կռիվը գերիների, խաղաղ բնակիչների դեմ չէ, այլ բռնակալության, անարդարության դեմ:

Ես հիշում եմ, որ գեներալ-մայոր Հրաչ Հմայակի Անդրեասյանը համարձակորեն դիմադրում էր Վ. Սարգսյանին՝

Ապագայի հերոսները՝ Տիգրանը, Կարենը, Ռազմիկը, Համլետը ընկերների հետ, 1994 թ.

ասելով՝ այդպես չի կարելի և առաջ էր տանում սկզբունքորեն առաջ քաշած հարցերը: Կային մարդիկ, որ անհաս էին գործին, առանց հիմնավորելու, գլուխները կախ, առանց հասկանալու կատարում էին առաջադրանքը, որն անարդյունք էր լինում: Մեղքի որոշ բաժին իրենք չէին վերցնում:

Այս քաղաքական կույր դաշտում մթագնում էր բանականությունը, այնքան մթագնում, որ ճշմարտություն տեսնելու, փրկություն հուսալու համար այս բոլորը վերագրվում է արտաքին աշխարհին՝ օգնություն աղերսելով: Այդ պատճառով է, որ հայը զրկվեց, անարժան եղավ իր բնաշխարհին: Այս ամենի առանցքը հայկական պետական դրոշն է, որի շուրջը հավաքվել է մի բուռ ժողովուրդ:

Հայոց դրոշի եռագույնը խորհուրդ ունի: Կարմիրը՝ նահատակների արյան գույնն է, կապույտը՝ երկնքի և ծովի անսահման վկան է հայ ոգու, իսկ նարնջագույնը՝ ցորեն-հասկի և աշխատանքի խորհրդանիշը:

Մարդու կյանքը երկրի վրա նման է երկնքից սրընթաց գահավիժող պայծառ աստղի պես մարող ակնթարթին: Հողը մնայուն է, հայրենիքը, մշակույթը՝ համամարդկային, մարդը՝ ակնթարթ, գործը՝ մնայուն: Իմիջիայլոց հիշեցնեմ, որ վիճում են թույլերը, իսկ զիջել կարող է միայն ուժեղը:

- Մեծ կապավոր, ռազմագետ՝ Ալեքսանդր Բալբաբյանի հետ,- պատմում է Վ. Հայրապետյանը,- գիշերով գնում էինք հենակետերը ստուգելու: Հանդիպեցինք նահանջող մի խումբ ազատամարտիկների, նրանք 20 հոգի էին: Իմ հարցին, թե՝ ո՞ւր են փախչում տղաները, նրանք ամոթից շիկնեցին: Այդ պահին եկավ երկրորդ խումբը: Կիրովականից էին, կես ժամ հետները զրուցեցի, պահանջվեց ՀՀՊՆ-ից երկու գնդապետների՝ Կիմ Ելոյանին, Էմիլ Միրզոյանին գործուղել տղաների հետ դաստիարակչական աշխատանքներ անցկացնելու համար:

Անատոլի Զինևիչը մի խումբ տղաների առջևից գնում էր հենակետերը: Չորս կամ վեց հրանոթներից կազմված մարտկոցը Սեյիդլարում թողել էին ու փախել: Թուրքերը մարտերով առաջ էին գալիս, դեռ չէին հասել Սեյիդլար: Այդ կարճ ժամանակահատվածում հասցրեցի «Կամազով» քաշել, տեղափոխել: Սկսեցի փնտրել դասալիքներին: Գտա երկուսին, ասացի՝

գնացե՛ք, բերե՛ք երկու հրանոթներ: Արտակը և հրետանու պետը քարի տակ, փոսի մեջ նստել էին, հրամայեցի հետևել ինձ: Գնացինք ութ թնդանոթ անվտանգ տեղափոխեցինք: Հասցրեցի վերանորոգել թնդանոթներից երկուսը: Նահանջի ժամանակ հատուկ նշանակության զինվորները կրակել էին նշանոցների վրա, փչացրել, որպեսզի թուրքերի ձեռքը չընկնի: Գնացի Սիմոնյան Արթուրի մոտ, նա ինձ համար, իր, այսպես կոչված, աշխատասենյակ-բնակարանում, մահճակալ էր հատկացրել: Գիշեր էր, հոգնած պառկեցի քնելու:

1994թ. հունվարին Օմարից նահանջում էին, հանդիպեցի Արամայիս Բաղդասարյանի մի խումբ դասալիքների: Սամվել Բաբայանին, Վլադիմիր Հայրապետյանին, Միքայել Գրիգորյանին, Միքայել Հարությունյանին 1994թ. մայիսին շնորհեցին գեներալ-մայորի կոչում:

Հարավային ուղղությամբ հրամանատար Յուրի Խաչատուրովը, իսկ Վարդենիսի ուղղությամբ հրամանատար՝ Ֆելիքս Գզոյանը, ընդհանուր հրամանատար, ՀՀ ՊՆ գլխավոր շտաբի պետ՝ Հրաչ Անդրեասյանը, տեղակալ գնդապետ՝ Միքայել Հարությունյանը, Գյումրիի մարզպետ Արարատ Գոմցյանին ուղարկեցին Վարդենիս՝ թիկունքի գծով կազմակերպելու թիկունքային կարևոր աշխատանքներ:

Գեներալ մայոր Վ. Հայրապետյանը իր հետ վերցնում էր համապատասխան սարքավորումներ, որտեղ էլ որ լիներ, այնտեղից կարողանում էր ղեկավարել հրետակոծությունը:

Սեյիդլարում ձյուն էր՝ բուք ու բորան: Տեխնիկան բարձրիկ ոլորապտույտ, գահավիժող, սառցակալած ճանապարհներով դժվար էր անցնում: Ձյունն ու տեխնիկան սահում էին: Առավոտյան սկսվեց հեռահար ռմբակոծությունը: Օգնության եկան Հենրիկ Մուրադյանը, Հովսեփը, ադմիրալ Սամվելը:

Նահանջի խառնաշփոթ վիճակ էր, թնդանոթները տեղափոխելուց հետո ժամանակ գտանք հանգստանալու: Գիշերը Հ. Անդրեասյանը՝ մեջքի վրա պառկած, ձեռքերը կրծքին խաչած, խոսում էր ինքն իր հետ ու մատները իրար տմբտմբացնում: Մտատանջությունների մեջ՝ չէր կարողանում քնել: Երկու ժամ կիսաքնած՝ գեներալ մայոր Վ. Հայրապետյանը Ալեքսանդր Բալբաբյանի հետ գիշերով գնաց հենակետերում տեղադրված թնդանոթների վիճակը ստուգելու: Երկու մարտա-

կան բարձրաստիճան սպաները զրուցելով անցյալի մասին, հիշեցին, որ 1896թ. Բազկի սիոնիստական կոնգրեսի հանձնարարությամբ պատգամավորություն էր ուղարկվել սուլթան Համիդին, Պաղեստինը՝ որպես հրեաների պատմական հայրենիքը, իրենց վաճառելու առաջարկով, սակայն սուլթանը նրանց վռնդել էր պատասխանելով. «Արյամբ նվաճված հողերը դրամով չեն վաճառվում»: Սիոնիստական կոնգրեսը որոշում է կայացնում. ավերել Օսմանյան կայսրությունը, ներսից մասնատել այն, դրանով նրա կողմից հանելով նույն Պաղեստինը, որտեղ որոշված էր վերականգնել հրեական պետությունը:

«Ես պատմության գիտակ եմ,- պատմում է Վլադիմիր Հայրապետյանը,- նման ձեռնարկումը՝ Սողոմոնի տաճարի (այսինքն պետականության) վերականգնումը գերագույն նպատակ էր, բայց ստիպված լինելով շարժման մեջ դնել նյութական ու դավադրական ահռելի միջոցները, դարերով ստուգված քաղաքական նենգախաղերի փորձը, ինչո՞ւ չվերաձևել աշխարհին ընդհանրապես, հատկապես նյութական ծախսերի

Գեներալ մայոր Վլադիմիր Հայրապետյանը և ՀՀ ՀՈՒ ռազմաարդյունաբերության վարչության պետ Ռադիկ Թումանյանը, կենտրոնում ՌԴ ՀՈՒ ռազմաօդային ուժերի հրամանատար Կոռնուկովը, 1996 թ.

99 տոկոսը: Հրեաները լուրջ են վերաբերում այս հարցին: Նշենք, որ հրեաները զերծ են սենտիմենտալիզմից»:

Տեղին է հիշել Մարտին Բաղդասարյանի խոսքերը,- եթե ռազմագծի երկարությունը խրամատի երկարությամբ շարված է 100 կամ 1000 ազատամարտիկ, նրանցից մեկը ասում է. «Ես կաշիս փրկեմ, թող ուրիշները կրակեն»: Եվ բոլորը այդպես էին մտածում, կրակող չեղավ: Թշնամին անարգել եկավ ու բոլորին ոչնչացրեց:

Մեզ կարող են առարկել՝ ասելով, որ քրիստոնեությունից, ուտոպիական սոցիալիզմից, լուսավորչական հումանիզմից, վերջապես կոմունիզմից առավել ինչ կա սենտիմենտալ... բայց չէ՞ որ դրանք բոլորը հրեական աստվածներ են: Եվ ահա իրենց հատուկ գործնականությամբ ձեռնարկեցին Օսմանյան կայսրության փլուզումը:

19-րդ դարի վերջին այդ կայսրության մեջ մտնող Հունաստանի Սալոնիկ քաղաքում, որի 140 հազար բնակիչներից 80 հազարը հրեա էր, սիոնիստական կոնգրեսի որոշմամբ 200 հրեա ընտանիքներ փաստաթղթերով ձևակերպվեցին որպես թուրք-մահմեդական և դրանց համապատասխան ներկայացուցիչներից կազմավորվեց «Գրանդ Օտոման» մասոնական օթյակը, որն աշխարհին և թուրքերին ներկայացավ որպես «երիտթուրքերի» կուսակցություն՝ հայտարարեց «ազատություն, հավասարություն, արդարություն» բարիքները:

Սիոնիստները սթափ քաղաքագետներ են, նրանք խաղում են միայն շահելու համար՝ բացառելով տանուլ տալու բոլոր հնարավորությունները:

Կապանը, Զանգեզուրը, Արցախը իր բնական կառուցվածքով, տեղաբնակներով արտահայտում են այդ երկրների ծարտարապետության հիասքանչ հուշարձանները, պալատները, ամրոցները, տաճարները և վանքերը, որոնք վեհաշուք բազմած են իրենց լեռնային գահերին ամբողջ իրենց մշակութային շրջապատով, այսօր ավերակներ են՝ թաղված հողում:

Հայաստանը Մարիամ Աստվածածնի պատկերն է՝ շրջապատված ոչ քրիստոնեական աշխարհով: Նրանց գիշատիչ քաղաքականության պատճառով հայկական եկեղեցիները վերածվել են մզկիթների: Հայաստանը չի կարող մոռանալ իր անցյալը կամ հրաժարվել իր պատմությունից, բոլոր քաղաքա-

կիրթ երկրների պես միասնական օրգանիզմ է: Հայաստանը վիրավորվել է, եղել է արյունաքամ, բայց երբեք չի ծնկել:

Թուրքերի ողջ նպատակը մեկն է եղել՝ քարտեզի վրայից ջնջել Արմանիստան անունը՝ փոխարինելով այն Քրդստանով: Թուրքերը Հայաստանը գրավել են 1514թ.: Պարսիկներին, նրա տիրակալ շահ Իսմայիլի զորքերին պարտության մատնեցին շնորհիվ իրենց հրետանու, որն այդ ժամանակ առաջին անգամ էր կիրառվում: Եվ քրդերին բնակեցնում են զավթած հողերում, հայկական տարածքներում:

Արցախյան պատերազմում մեր հրետանին այս անգամ ուժեղ և ըստ նպատակի էր գործում: Այն պարտադրում էր մեզ վերականգնված պետականությունը ամրապնդել համաժողովրդական գաղափարների շնորհիվ, որպեսզի չկրկնվի պատմությունը՝ ինչպես եղավ 100 տարի առաջ: Հայկական կոտորածներն սկսեց Աբդուլ Համիդը, շարունակեցին Երիտթուրքերը, վերջացրեց Քեմալ Աթաթուրքը: Եփրատի արևաբույր ալիքները դեռ հայերի դիակներն էին ափ հանում, իսկ Թալեաթ, Թուրքիայի նախկին վարչապետ՝ Սաիդ Հալիմ, նախկին ռազմական նախարար՝ Ջեմալ, Տրապիզոնի նահանգապետ՝ Ջեմալ Ազիմին և շատ ուրիշ փաշաներ՝ Բեռլինում, Փարիզում, Հռոմում, Բաքվում ու Թիֆլիսում խրախճանքների էին տրված: Հայ վրիժառուները կարողացան վրեժխնդիր լինել:

Նախաձեռնող Ծահան Նաթալին, միայն մի նախադասություն ասաց.

- Քայլը, որին դիմում ենք մեր ցանկությամբ չէ, այլ երկու միլիոն նահատակների պահանջով է: Ապա կարդաց 200 գլխավոր հանցագործների ցանկը: Ցուցակում առաջինը Թալեաթ փաշան էր: Նա հենց այդպես էլ կոչվում էր «թիվ 1»:

Նաթալին մոտեցավ մի գունատ, հրաբորբ հայացքով երիտասարդի, ում անունն այդ ժամանակ դեռևս ոչ ոք չգիտեր, ձեռքը ուսին դրեց՝ հանձնարարեց. «Կպայթեցնես գանգը, ոտքդ ստահակի վրա կդնես ու կսպասես, որ գան քեզ ձերբակալեն, դատեն: Դատարանում դու ոչ թե մեղադրյալ, այլ մեղադրող կդառնաս»: Հիշենք որ 200 արևմտահայ մտավորականների, որոնց խողխողեցին Չանդրիում ու Այաշում, նահատակներից մեկը սեփական արյամբ, բանտի պատին գրել էր. «Դուք հայուն մարմինը կրնաք մեռցնել, ոգին՝ երբեք»: Թուրքերը մեզնից խլեցին մեր հայրենիքը, գլխատեցին մտավորականությանը, ժողովրդի կեսից ավելիին ոչնչացրին, բայց ոգին սպանել չկարողացան: Իսկ դուք այս օրհասից փախչում եք: Ո՞ր է կորել ձեր ոգին, մեր պապերի ձայնը ինչպե՞ս կարելի է մոռանալ: Երիտասարդ տղաները իրենց անձնական կյանքը զոհելով, վրեժխնդիր են լինում, ինչպես.

Որոտաց 21-ամյա Արշավիր Ծիրակյանի գնդակն ու Հռոմում ընկավ Թուրքիայի մեծ վեզիր Սաիդ Հալիմին:

Որոտաց 20-ամյա Արամ Երկանյանի գնդակն ու Թիֆլիսում ընկավ մուսավաթական Ադրբեջանի նախագահ, Բաքվի հայերի ջարդարար Խան-Խոյսկին:

Որոտաց 25-ամյա Սողոմոն Թեհլերյանի գնդակն ու Բեռլինում ընկավ Թալեաթ փաշան:

Որոտաց 33-ամյա Միսաք Թոռլաքյանի գնդակն ու հենց Ստամբուլում ընկավ մուսավաթական Ադրբեջանի ներքին գործոց նախարար, Շուշիի հայության ջարդարար Բեհբուտ խան Ջիվանշիրը:

Պետրոս Տեր-Պողոսյանի, Արտաշես Գևորգյանի, Հակոբ Մելքումովի, Գրիգոր Թաթուլյանի՝ Շեկ Առյուծի գնդակներից ընկան Բեհաեդդին Շաքիրը, Ջեմալ Ազիմին, Ջեմալ փաշան, Էնվեր փաշան: Այս քաջամարտիկների անունները մի՛ պղտորեք, վերադարձեք ձեր դիրքերը հայրենանվիրումով ու հաղթակամարներով հավերժացրեք, վերջին գրոհը, վերջին հաղթանակը Օմարի գագաթին եռագույն դրոշի ծածանումն է: Հայաստանը չունենալով ռազմաարդյունաբերություն՝ ծանր ու դժվար մարտերով հասավ Օմար:

ՌԱԶՄԱՍԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

1993թ. հոկտեմբերին ԱՄՆ-ի Լոս-Անջելեսի Գլենդել քաղաքում կազմակերպվեց համայն հայության համահավաք, շուրջ երկու հազար հայերի և Կալիֆոռնիայի նահանգապետի և ղեկավար աշխատողների մասնակցությամբ:

Գեներալական համազգեստով Սամվել Սաֆարյանը ներկայացավ ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանին, մոտեցավ, ոտքից գլուխ չափեց ներկաներին իր յուրահատուկ ազդեցիկ նայվածքով: Նաև հայացքով ցանկացավ սասանել գեներալին՝ ստուգելու՝ արդյո՞ք հարմար է, որ ՀՀ ՆԳՆ առաջին գեներալը անփորձ է, թե ոչ: Ձեռքով շոշափեց օձիքս, զննեց ուսադիրներս, շքանշաններս ու կոճակներս, հագ ու կապս, ինչպես նաև տեսքս: Այս բոլորը նրան դուր եկավ: Գեներալ Անդրանիկից հետո, երկրորդ զինվորական գեներալն ես, բայց առաջին գեներալը, որ պաշտոնական այցով ոտք ես դնում օտար հող՝

Ռազմաօդային ուժեր: Կործանիչներ:

Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ ԱՄՆ: Զեկուցման տեքստը չստուգեց, վստահեց:

Այս պայմաններում,- ասվում է զեկուցման մեջ, հույս ունենանք հզոր ղեկավարի ուժով, որը արդեն ծնունդ էր առել ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյան անունով, Արաքսի ափից կհասնենք Եվլախ, Քուռի ափերով՝ նրա հակառակ հոսանքով դեպի Սև կամուրջ: Իսկ ապագայում, Աստված օրհնի, Արևմտյան Հայաստան, մեր Սուրբ Արարատ բիբլիական սարը: Աստծու կամքով, հայ ժողովրդի սրբազան պայքարով, աշխարհի առաջավոր մարդկության օգնությամբ հողը կվերադառնա իր սեփական տիրոջը:

Դահլիճից լսվեց բուռն, երկարատև ծափահարություններ, Վանկարկում էին Տի՛գ-րա՛ն, Տի՛գ-րա՛ն, այսպիսով սփյուռքահայության մեջ ամրացավ Տիգրան Մեծ անվանումը (այս ամենը նկարահանված է):

Անհրաժեշտ հարցեր կային, Հայաստան վերադառնալը հետաձգվեց: Ամարասի Արթուրը ԱՄՆ եկավ 1993թ. հոկտեմբերի 3-ին: ԱՄՆ-ի հայ համայնքը կազմակերպեց հանդիպում իրենց հետաքրքրող հարցերի շուրջը՝ Ամարասի Արթուրի, գեներալ Սամվել Սաֆարյանի հետ: Հանդիպումը անցավ շատ ջերմ մթնոլորտում: Նրանց շատ էր հետաքրքրում, թե ի՞նչ առաջխաղացում կա ռազմաճակատում:

Երկուսով պետք է կազմակերպեին Էկոնոմտրաս չվերթով զենք ու զինամթերք Հայաստան ուղարկելը, որը չստացվեց:

Հայաստան ուղարկեցին զինհագուստ, այն վերամշակվեց Սիգար-Գոքոր մեր հայրենակցի մասնակցությամբ ու բարեգործությամբ:

Ամարասի Արթուրը ուրախությունից բացականչեց՝ շուտով պարելու ենք Եվլախում:

ՍՊԱՐԱՊԵՏԸ Վազգեն Սարգսյանը ծաշասեղանին դրված ծաշատեսակները ուտում էր ախորժակով, առանց ընտրության, առանց ձևեր թափելու:

Բաժակաճառում նույնիսկ խոսում էր մարտերից և հիշեցնում, որ գերիներին, վիրավորներին հատուկ խնամք է պետք՝ միջազգային ռազմական նորմերին համապատասխան: Չէր ընդունում դաժանությունը, չարության մասին խոսելը կտրուկ արգելում էր, գերիների նկատմամբ վատ վարվողներին պատ-

ժում: Եվ բացատրում էր՝ ձեռքերը մեջքին կապած մարդուն հարվածելը թուլություն է: Հաղթանակի կամ պարտության մասին, երբ զեկուցում էին, անմիջապես հարցնում էր՝ զոհեր հո չկա՞ն, վիրավորներին խնամելու աշխատանքներն ինչպե՞ս են կազմակերպված:

Եվ հուսադրում էր՝ շուտով... կամ ինչու չունենանք այնպիսի զենք, որ 90-100 կմ շառավղով հարվածենք թշնամու ուժերին, ոչնչացնենք նրանց մահաբեր զենքերը: Ավտոմատը խոցելի է 1000-1500 մ, այն այսօր չի բավարարում: Այսպես էր, որ ծնվեց ռազմական արդյունաբերության խորհուրդ կազմակերպելու գաղափարը:

Ռազմական արդյունաբերության հանձնաժողով կազմավորվեց 11 հոգուց՝ Ռաֆայել Ղազարյան, Ալեքսանդր Բալբաբյան, Սամվել Սաֆարյան, Գուրգեն Դալիբալթյան, Թելման Տեր-Պետրոսյան, Գագիկ Մարտիրոսյան, Ռադիկ Թումանյան՝ «Ապեր», Վահան Ծիրխանյան, Վահան Մելքոնյան, վարչապետ Հրանտ Բագրատյան:

1992թ. Ծուշիի ազատագրումը գարնան զարթոնքն էր ռազմական խորհրդից հետո, ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը, Վանո Սիրադեղյանը, որ պատրաստել էր սեղանը մածունով, ԱՖՕն, Սամվել Սաֆարյանը, մի շարք ղեկավար անձանց հետ մեկնեցին Հադիս սարի ստորոտում գտնվող Կապուտան փոքրիկ լճակ, որի ափին կար խորհելու հնարավորություն՝ շարունակելու համար: Կիսատ թողած խորհրդակցությունը, որտեղ քննարկվում էին տարբեր խնդիրներ: Կարծես թե արդեն ձևավորել էր ռազմական շտաբը:

ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանի սիրած տեղն էր, հատկապես երեկոյան ժամերին: Քարանձավի մեջ երկաթյա դռներով փակված սառնորակ աղբյուր կար: Ասում էր՝ մտքներս պայծառանալու համար գնանք խմենք այդ անմահական ջուրը, այդ դեռ լույս չտեսած ջուրը: Անտարբեր չէր դոդոշ գորտերի կռկռոցին: Ինչպես միշտ, սեղանապետը Սամվել Սաֆարյանն էր: Խմում էին ԱՖՕյի կենացը: ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը միշտ ավելացնում էր. «Աստված մեզ օգնական, զոհեր չլինեն»: Հասունացնում էր այն հարցը, որ ռազմաարդյունաբերության համար անհրաժեշտ է արտասահմանից մասնագետներ հրավիրել:

Գագիկ Կարապետյան

Սկզբնական շրջանում գրասենյակը Ծահումյանի անվան համագումարների պալատի շենքում էր, որ հետո տեղափոխվեց Նոր-Նորքի թաղապետարանին կից երաժշտական շենք: Արդեն լիարժեք գործում էր 1991 թվականի մայիսի 4-ից ՀՀ Կառավարության որոշմամբ: Կառավարությանը կից ստեղծվեց պաշտպանական կոմիտե: Պաշտկոմի նախագահը Վազգեն Սարգսյանն էր:

Խորհրդային զինկոմիսարիատների ակտիվ մասնակցությամբ՝ 1991 թ. հոկտեմբերի 3-ին կազմակերպվեց զորահավաք, որին ակտիվորեն մասնակցում էր գնդապետ Գագիկ Կարապետյանը: Առաջին զորակոչիկների՝ 240 հոգու երդման արարողությունն էր, որի տեքստը համաձայնեցված էր Վազգեն Սարգսյանի հետ՝ ավելացրած «Աստծո դատին արժանանալ»: Արարողությունը կատարվում էր հանրապետության անկախության հրապարակում, խանդավառ ժողովրդի աչքի առաջ: Իսկ նոյեմբերի 28-ին Կապանի Գ. Նժդեհի արձանի առաջ 120 հոգի երդվելուց հետո մեկնեցին պաշտպանական դիրքերը:

Վազգեն Մանուկյանի, Սամվել Սաֆարյանի, Գևորգ Բաղդասարյանի նախաձեռնությամբ ՀՀ ՆԳՆ պահպանության վարչության ստորաբաժանումներից մեկում ձևավորվեցին զորանոցային պայմաններ:

Կես մետր սրածայր արմատուրաները, հաց կտրելու երկար դանակները, տոգ, որսորդական հրացաններով, Չարենցավանի ինքնաշեն ձեռքի նռնակներով, հայթայթած ավտոմատներով հայ ժողովուրդը ազգային-ազատագրական պայքարը հասցրեց հաղթանակի: Խոսք չկար զենքի արտադրության

մասին: Ցույցեր, երթեր, միտինգներ, գործադուլներ, ընդհարումներ, ապա պատերազմ: Այսպես արմատուրաներով հասան ռազմի դաշտ, կանգնեցին փաստի առաջ:

1992թ. ռազմաարդյունաբերության միության հանձնաժողովի նիստերից մեկի ժամանակ, որին մասնակցում էին ակադեմիկոս Ռաֆայել Ղազարյանը, Թելման Տեր-Պետրոսյանը, Ալեքսանդր Պետրոսի Բալբաբյանը, Սամվել Սաֆարյանը, առաջարկեցին կազմակերպել ուլտրաձայնային զենքի արտադրություն: Այդ առաջարկը ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանին մտատանջությունների մեջ գցեց. դրա համար պահանջվում էր 8 միլիոն ԱՄՆ դոլար: Դա այնպիսի զենք էր, որ երբ տանկերը սրընթաց-գաղտագողի անցնում են այն գիծը, որը անսպասելի է, սարքը բաց է թողնվում, նա հետապնդում է տանկին կամ գրոհող որևէ ռազմական տեխնիկային և հարվածում նույնիսկ օդում ճախրող ուղղաթիռներին և ինքնաթիռներին:

Սակայն Ս. Սաֆարյանը, մասնագիտությամբ լինելով կիբեռնետիկ, առարկեց ակադեմիկոս-ֆիզիկոս Ռ. Ղազարյանի առաջարկին՝ վիճաբանելով, որ ուլտրաձայնային սարքեր մեծ հեռավորության վրա չեն ազդում, այլ բան պետք է մտածել:

Ազատամարտիկներն օգտագործում էին Չարենցավանում արտադրված առաջին ինքնաշեն նռնակները, ականանետային արկերը, «Ծմայս» ավտոմատները, որոնց փամփուշտները «Մակարով» ատրճանակի փամփուշտներ էին: Թնդանոթներն էլ կարկուտ ցրող 8-10 կմ հեռավորությամբ կրակող ձևափոխված թնդանոթներ էին: Շատ գլուխգովաններ, պարծենկոտներ հասկացան, որ առանց հայոց բանակի ոչինչ չի ստացվի: 1991թ. դեկտեմբերի 5-ին Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրամանագրով Վազգեն Սարգսյանը նշանակվեց ՀՀ Պաշտպանության նախարար: Դեկտեմբերի 27-ին սկսվեց ՀՀ ՊՆ ձևավորումը, այդ ժամանակ Վազգեն Սարգսյանը հանդիսանում էր ՀՀ պաշտպանության և ներքին զորքերի հանձնաժողովի նախագահ: Մեկ ամիս հետո՝ 1992թ. հունվարի 28-ին ՀՀ Գերագույն խորհրդի նախագահի հրամանագրով ստեղծվեց Պաշտպանության նախարարություն: Առաջին նախարար նշանակվեց Վազգեն Սարգսյանը: Տարբեր ժամանակներում այդ պաշտոնը զբաղեցրել են

նաև Վազգեն Մանուկյանը, Սերժ Սարգսյանը, Վաղարշակ Հարությունյանը: 1988թ. Վաղարշակ Հարությունյանը Լենինգրադում ցույց կազմակերպեց՝ պահանջելով բանտարկված ՀՀ «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին ազատել:

ՀՀ ՊՆ, հետագայում ռազմաարդյունաբերության վարչության պետ Հրանտ Կոստանյանը պատմում է, որ ամիսը երկու անգամ լինում էր առանձնահատուկ խորհրդակցություն: ՍՊԱՐԱՊԵՏԸ ուշադիր, մանրակրկիտ հետևում էր արտադրության գործընթացին: Նրա նշանակումից անցել էր երկու շաբաթ, կանգնեցրեց զինվորական հագուստի արտադրությունը. թույլ կտոր էր, փող շորթելու համար անորակ էին կարում:

Հրանտ Կոստանյանը նոր պետ էր, կաշառք էին առաջարկում, մերժում էր: Հրանտի հայրը՝ Երանոսը, 1941-1945թթ Կերչում մարտնչել էր ֆաշիզմի դեմ, վիրավորված գերեվարվել, ուղարկվել Լեհաստանի Պուլավա համակենտրոնացման ճամբար: Գերիների հաղորդակցման ձևից օգտվե-

Խաչիկ Իսախանյան՝ «Վարուժան» Մի-24 կրակադիլ / կարգի օդաչու, տիրապետում է բոլոր տիպի ուղղաթիռների, պատրաստել է 20-ից ավելի օդաչուներ: Մարտակերտ, 1993 թ.

լով՝ բարձրանում և բարձրաձայն հաղորդում է իր ով լինելը: Կապանի անունը լսելով՝ եղբայր Դավիթը Ֆրանսիա տեղափոխելու ժամանակ փախչում է, սակայն նրան էլ են գերում և բերում են ճամբար: Դավիթը ընդգրկվում է ճամբարի ընդհատակյա կազմակերպության մեջ:

Երկու եղբայր գրկախառնվում են:

1944թ. փախչում են Ֆրանսիա, նրանց մի ֆերմեր մեկ ամիս պահում է, մինչև նրանք կարողանում են ընդգրկվել Ֆրանսիայում գործող առաջին սովետական պարտիզանական գնդի մեջ, որի հրամանատարն էր Ալեքսանդր Ղազարյանը, շտաբի պետը՝ Բարթուղ Պետրոսյանը, որի աղջիկը ժամանակակից գրող, ՀՅԴ անդամ Ալվարդ Պետրոսյանն է:

Հրանտի հայրը գնդի պատմաբանն էր: 1945թ. վերադառնում է հայրենիք, ընտանիքով աքսորում են Սիբիր՝ Ալթայի երկրամաս:

Սելեկտորի երկրորդ մասն էր, ուշ երեկո պայմանավորվեցինք քիչ խոսել, որ շուտ վերջանա, գնան տուն: ՍՊԱՐԱՊԵՏԸ կռահել էր: Զեկուցում էր կապիտան Հ. Կոստանյանը: ՍՊԱՐԱՊԵՏԸ դեմքը խոժոռեց. «Հրանտին մայորի կոչում շնորհեք»:

Հակահետևակային ականների փորձարկման «Կոթի» ջոկատ, ձախից երրորդը՝ Ռադիկ Թումանյան, Ապեր, 1995 թ.

Մեկ օրվա մեջ հրամանը ձևակերպեցին: ՍՊԱՐԱՊԵՏԸ թացը չորից արագ ջոկում էր:

ՍՊԱՐԱՊԵՏԻ հարցերին պատասխանում էր վարչության պետի տեղակալը.

- Ես տեղյակ չեմ, կուրսի մեջ չեմ, չգիտեմ: Տո հայվա՛ն, բա ինչի՞ն ես տեղյակ: Պահի տակ, այս ասելով՝ զգաց, որ վիրավորեց, աշխատեց սիրաշահել.

- Ա՛յ տղա, նա զինվորական է, որ ասում է, մի բան կա:

ՍՊԱՐԱՊԵՏՆ ասաց.

- Դեմքներդ ծռմռելով ի՞նչ եք խոսում: Ձեր բոլորին Օմարի գագաթ կուղարկեմ, ո՞ւր է ռազմաարդյունաբերության վարչության պետը: Հրանտը վեր կացավ, որ զեկուցի, ՍՊԱՐԱՊԵՏԸ չթույլատրեց: Գլուխն օրորեց ասելով՝ թող պետը կախվի: Վահան Գրիգորի Ծիրխանյանն ասաց.«Ով փող է կորզում, թող նա կախվի»:

Խորհրդակցությունից հետո Վահան Գրիգորիչը Հրանտ Կոստանյանին ասաց. «Հրանտ ջան, մեզ ավելի բարդ է հայհոյում, այնպես որ, մի նեղացի»:

Մահապարտների հավաքագրման ժամանակ տղերիս հեղինակն անձամբ հագել է այդ զինհագուստը: Մայրաքաղաքային գնդում զինվարժությունների ժամանակ տղաները, երբ քրտնում են, ներկը պատում է նրանց, դառնում են Նոր տարվա Ձմեռ պապ, ինձ ցույց տվեցին: Փայտյան Արշոն ՀՀ ՊՆ-ն ռազմական ինստիտուտի ռեկտորն էր: 1998թ. ռազմական կոլեգիայի նիստ էր, նախագահությունում երկար սեղանի շուրջը բարձրաստիճան հրամանատարները անհանգիստ էին, սպասում էին ՍՊԱՐԱՊԵՏԻՆ, նա ուշանում էր:

Ծշուկ ալիքվեց, իբր Վազգեն Սարգսյանին տեղափոխել են այլ աշխատանքի: Եկավ 20 րոպե ուշացած՝ մի խումբ ծնողների հետ: Նախագահության սեղանի շուրջ նստածներին իջեցրեց դահլիճ, ծնողներին նստեցրեց նրանց տեղը, դիմեց դահլիճին. «Դե, պատասխանեք այս ծնողներին, իսկ ինձ բոբոյի կերպար եք ստեղծել: Ծնողների բողոքին թող զորամասի հրամանատարները պատասխան տան»:

Այդ պահին Երևան քաղաքի Սպանդարյան շրջանի նախկին կոմունիստական կուսակցության երրորդ քարտուղարը իր

բացատրությունում բողոքեց ու թունդ հայհոյեց՝ ասելով. «Ես ձեր մերը»՝ տալով զորամասի անունը, Կիրակոսյան Մուրադը, որը այդ ժամանակ գտնվում էր զորամասում: ՍՊԱՐԱՊԵՏԸ խոժոռեց դեմքը:

Հաջորդ սելեկտորային խորհրդակցության ժամանակ ասաց. «Մինչ այսօր ասում եք մեր դեմ խաղ չկա, միգուցե: Բայց այս պահից թող բոլորիդ գլուխը մտնի, որ օրենքի դեմ խաղ չկա: Սկզբից զեկուցում էին զորամասի հրամանատարները, վարչության պետերը, պարզում, թե հիմնականում ինչ է հարկավոր»:

Ճակատագիրը հային՝ որպես նահատակ հանել է թուրքի դեմ: Աշխարհի այս հատվածը դարձնում են դժոխք: Հայը զոհվում է, որ վերանա չարիքը, փրկի մարդկությանը տրված բանականությունը: Թուրքը միայն որոճում է:

ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը բնավ չէր ուզում՝ մարդ մեռներ, վիրավորներ լինեին կամ պղտորվեր մարդկանց կյանքը:

Նա կարողանում էր հասուն դատել մարդկության պատմության մասին, ընթացքից ելք էր որոնում: Մտորում էր այն մասին, թե ինչպես են տանջանքն ու տառապանքը եռում պատմության կաթսայում: Հիշում էր, թե ինչպես Լոնգենը գեղարդը խրեց Հիսուս Քրիստոսի կողքը՝ ստուգելու՝ նա մահացա՞ծ է, թե՝ ոչ:

Նա ասում էր, որ այս աշխարհում անհատույց ոչինչ չի մնա: Այս ամենը վկայություն է Տեր Աստծու առաջ: Թուրքի շահադիտական մարդակեր քաղաքականությունը ժանտախտի բացիլ է: Մեզ հիշեցնում էր, թե ինչպես Զեյթունի ջարդերի ժամանակակից, Ամերիկայի դեսպան պարոն Մորգենթաուը՝ լինելով հրեա, հայ ժողովրդի բարեկամ Լեփսուսին բացատրում էր, որ հրեաները պաշտպանում են փոքր ազգերին: Այդ ասելուց հետո Էնվեր փաշան մտնում է Թալեաթ Բեյի գրասենյակը: Երկու ժանտախտ տարածող մարդակերները Լեփսուսի երեսին շարտում են «Հայկական հարց այլևս գոյություն չունի»:

Այս ամենից հետո որպես դաս, մենք մեր ձեռքերով սկսեցինք կառուցել մեր երկիրը՝ հույսը դնելով մեր սեփական ուժերի վրա, ռազմաարդյունաբերությանը զուգահեռ ՀՀ ԶՈՒ-ում ստեղծեցինք կապի միջոցներ:


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վազգեն Սարգսյանի հապշտապ գրություններից, 1992, Քաշաթաղ

ՀՀ ՁՈՒ ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Գնդապետ Ալեքսանդր Բալբաբյան, ռազմաճակատում, Քարավաճառ, 1994 թ.

Ալեքսանդր Պետրոսի Բալբաբյանը՝ ավարտելով Լենինգրադի ռազմական կապի ակադեմիան, ծառայում է Խորհրդային բանակում: Կատարելով մի շարք պատասխանատու զինվորական պաշտոններ՝ շուրջ 10 տարի ղեկավարել է կապի գունդը, 3 տարի՝ Տոմսկի բարձրագույն ռազմական կապի ուսումնարանը: Գալով Հայաստան՝ լծվում է Ղարաբաղյան շարժման սուրբ գործին:

1991-1992թթ. հատուկ գաղտնի պայմաններում՝ ռազմաարդյունաբերության խորհրդի կազմում, Հայաստանում կազմակերպում է զենքի արտադրություն:

Հմուտ, փորձառու, ռուսական զինվորական բարձրագույն կրթություն ստացած Ալեքսանդրը այս բոլորին զուգահեռ՝ կազմակերպում ու զարգացնում է հեռախոսային ցանցը, հատկապես Հայաստանի ու Արցախի, ինչպես նաև ռազմագծի ռադիոկապը: Այդ ծանր աշխատանքում ներգրավվել էին կապավորներ Արթուր Փափազյանը, Վոլոդյա Մկրտչյանը, Արսեն Ազարյանը, Գևորգ Ամալյանը:

Ջոկատների, շտաբների և հրամանատարների հետ կապը ինչ-որ ձևով պահպանում էր, սակայն դաշտային կապի միջոցների բացակայությունն անհնար էր դարձնում կապի կազմակերպումը ջոկատների ներսում և հատկապես ջոկատների միջև:

Պաշտպանության կոմիտեի շտաբի պետ, գեներալ Գ. Դալիբալթայանը կապի ապահովման և դրա գործողությունները կոորդինացնելու խնդիրը հանձնարարեց Ալեքսանդր Բալբաբյանին՝ որպես համապատասխան ռազմական կրթություն և խորհրդային բանակի զորքերում աշխատանքի փորձ ունեցողի, հաշվի առնելով նույն այն հանգամանքը, որ Ալեքսանդրը ընդգրկված էր կոմիտեի կազմում և միաժամանակ զբաղեցնում էր Կապի նախարարության երկրորդ բաժնի պետի պաշտոնը:

1991-1993թթ. Հայաստանի Հանրապետության սահմանամերձ քաղաքներն ու գյուղերը և հատկապես Գորիսը, Կապանը, Ստեփանակերտը մշտապես ենթարկվում էին թշնամու ավիացիայի ռմբակոծությանը: 1993թ. սկզբում որոշվեց ծավալել և տեղադրել ՀՕՊ-ի հրթիռային կոմպլեքս, որը պետք է սպասարկվեր Կապանում տեղակայված ՀՕՊ-ի գնդի կողմից: Թվում էր՝ թշնամին այլևս չէր համարձակվի ռմբակոծել այդ քաղաքները: Սակայն հաջորդ օրվա առավոտյան ժամը 7-ին թշնամու երեք ինքնաթիռներ ռմբակոծեցին Կապանը, իսկ ՀՕՊ-ի միջոցները չգործեցին և ժամանակին չահազանգեցին այդ մասին: Եղան ավերվածություններ ու զոհեր խաղաղ բնակչության շրջանում: ՀՕՊ-ի միջոցների չգործելու պատճառները քննարկումներից հետո պարզվեց:

Հրթիռային կոմպլեքսի անձնակազմը դեռ լավ չէր պատրաստված և չուներ մարտական փորձ:

Այդ կոմպլեքսի և ԼՂՀ-ի ՀՕՊ-ի միջոցների համագործակցությունը թույլ էր կազմակերպված, քանի որ ԼՂՀ-ի կողմից օդային վտանգի մասին ահազանգ չէր ստացվել:

Կային «Ալենկո» տիպի ռացիաներ, որոնք թեթևացրեցին զորքերի մատակարարման վիճակը: Սակայն այդպիսի ռադիոկապեր ուներ նաև թշնամին, ինչը հնարավորություն էր

տալիս նրանց հեշտությամբ հայտնաբերել մեր հաղորդագրությունները և տիրել տեղեկատվությանը: Ստիպված էինք պատրաստել խոսակցական աղյուսակներ և հրամանատարներին ու կապի պետերին սովորեցնել դրանցով տեղեկատվություն հաղորդել: Կապին զուգահեռ համալրվում էր սպառազինությունը թարմ երիտասարդ կադրերով: ՌԴ քաղ. Ռոստովի հրթիռային զորքերի հրամանատարական ինժեներային ուսումնարանը ավարտելուց հետո Հովիկ Ժուլվերի Կարապետյանը 1992թ. հունվարից անցնում է ծառայության նորաստեղծ ՀՀ ՊՆ սպառազինության վարչությունում՝ որպես ավագ սպա:

Սեպտեմբերից մինչև մարտ Քաշաթաղի ազատագրման ռազմաճակատի սպառազինության պետն էր, որի տրամադրության տակ կային որսորդական, տիր, ինքնաշեն ձեռքի նռնակներ, ականներ, որոնք հետագայում փոխարինվեցին ավտոմատներով, գործարանային ռազմական արտադրության նորմաներին համապատասխանող զենքերով:

Ահա այն անսխալ ճեպագրությունները, որոնցով ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը գրավոր կարգադրություններ է արել ենթականերին՝ Տալյանին, քսան տարին չբոլորած երիտասարդ Հովիկ Կարապետյանին, որը բարձր էր գնահատում ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանի մտքերը, նրա ռազմական տաղանդը, որը զգացել է իր երիտասարդ կաշվի վրա: Նրա առաքելությունը համեմատում էր Ալեքսանդր Մակեդոնացու գործունեության հետ՝ համամարդկային ուժով բուժելու վերքերը մարդկային:

Սոկրատեսի աշակերտ Պլատոնը ուսուցանել է Արիստոտելին, որ եղել է Ալեքսանդր Մակեդոնացու դաստիարակը և ուսուցիչը: Ալեքսանդրը ճանաչվեց, բացահայտեց այդ աշխարհահռչակ երեք հանճարեղ փիլիսոփաներից ստացած գիտելիքների նոր ճշմարտությունը, որ հաստատվեց պատմությամբ: Նա հեծավ այն ձին, որ ոչ ոք չէր կարողանում հեծնել: Բոլորին վայր էր գցում: Ալեքսանդրն ասաց. «Դա հենց այն ձին է, որով կհասնեմ մտքի հետևից»: Եվ նրա աչքերը փայլեցին անհամբերությունից: Խլեց ձիու սանձը, գլուխը շրջեց դեպի արև, շոյեց բաշը, դեմքին՝ Արիստոտելի հպանցիկ քաջալերող ժպիտը և այդ ակնթարթին թամբին էր: Քառատրոփ արշավող ձին շրջան

Կենտրոնում Ալեքսանդր Բալբաբյանի որդին՝ գնդապետ Արմեն Բալբաբյանը զինակից ընկերների հետ: Ավարտել է Դոնեցկի ռազմական-քաղաքական ուսումնարանը: Ծառայել է Կուբայում, ԽՍՀՄ-ի 7-րդ բանակում: Նոր Նորքի զինվորական կոմիսար:

արեց: Ձգեց սանձը, ծառս եղավ նժույգը: Ալեքսանդրը թռավ գետնին, թփթփացրեց ձիու գավակին: Արիստոտելը ձեռքը դրեց նրա ուսին, շնորհավորեց հաղթանակն ու ավելացրեց. «Որոշ փիլիսոփաներ հաստատում են, որ բազմաթիվ աշխարհներ կան»:

ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանի յուրաքանչյուր գրություն Ալեքսանդր Մակեդոնացու նժույգի պես թռչում էր անդունդների վրայով: Մակագրելու ժամանակ մտածում էր. միայն պատերազմի հետևանքով կարելի է որոշել, թե որ ժողովուրդն է բարձրագույն, որը ստորագույն: Հաղթողները բարձրագույն են, նրանք ստեղծում են պետություն: Բոլոր մարդկանց բարորության մասին հոգալն է նրանց խնդիրը, մարդկանց անվտանգությունը, նրանց դաստիարակությունը, կրթելու միջոցով ընթանալը դեպի համաշխարհային զարգացումը:

Քանի որ գերբնական ամեն ինչ էլ առաջ է եկել անհասկանալիի հանդեպ ունեցած վախից, թուրքերն իրենց տգիտությունն ու վախը ապացուցեցին 1915թ-ին, ինչպես ադրբեջանցիները իրենց կողմից 1988-1994թթ հայերի նկատմամբ հարկադր-

ված պատերազմում, որը նույնպես ունի թուլություն և ամբողջությամբ տգիտության պատճառ է:

Ալեքսանդրը նպատակ ուներ Արևելքը միավորել Արևմուտքին՝ ցանկանալով բոլոր ժողովուրդներին միավորել միասնական ընտանիքում և տալ նրանց ապրելու հնարավորություն:

ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը՝ քաղաքական ու մարտական նժույգին նստած, իր աստվածային ծիծաղով՝ նման երկնքից շանթող կայծակաուժ ամպրոպի, որը գորշ ամպերի միջից լուսաշող արտացոլումով կարողանում է ապացուցել, որ տեսանելի է մի ողջ ժողովուրդի հնամենի լինելը, ցույց է տալիս նրա ապագան, ճանապարհը, ելքն ու մուտքը, վերհանելով ու դաստիարակելով ազգերի մոլորությունը, հետադիմությունը, նրանց սպառողի դիրքում հայտնվելը, քանի որ նրանք մտածելու ընդունակ չեն: Ծրագրում են ուրիշի ունեցվածքը գողանալ, խժռել, իսկ այս անգամ չհասցրին, միայն կծեցին հայի կրունկը: Դա ապացուցեց, որ տգետները միաբան են, իրենց գոյի համար ցուցաբերում են մեծ ակտիվություն:

ՍՊԱՐԱՊԵՏԻ յուրաքանչյուր գրություն թելադրում և նախազգուշացնում էր. պատերազմը չէ, որ գիտակցություն է ծնում, բայց կա պատերազմ, որ գիտակցության կարիք ունի: Քանի որ

Հովիկ Կարապետյանը (ձախից) իր զինակից ընկերների հետ

բարու և չարի ցանկությունը չէ, այլ չարի գիտակցությունն է, որ սնում է օրգանիզմը, խեղդում բարին սով ու մահի մեջ:

Գրություններով պարիսպ էր կառուցում, անդրկովկասյան բուրգ, Հայաստանը՝ անդրկովկասյան պալատ, երեք ազգերին բարեկեցիկ, անվտանգ ճանապարհ՝ որ վերադառնան իրենց հնամենի պատմության գիրկը:

Պատերազմի մասին մտածելու համար կան տարբեր եղանակներ և տարբեր բաներ: Նրա մեծ գործը ցանկալին իրականացրեց, Հայաստանը հանեց պատմության նեղությունից: Այս է հաստատում ակադեմիկոս Բորիս Միսակի Հերունին՝ Պարիս Հերունին, նա հիմնավորում է, որ մ.թ.ա. 23 հազար տարի առաջ հայերը ունեին արևի ժամացույց: Բնության արյունն արևն է:

ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանի ծիծաղը Աստծու և արևի կողմից պարգևած արյունն է, որ ժայթքում էր աշխարհի կյանքից, ծիածանի գոտի կապում, կյանքի կոչում հարավից հյուսիս, արևելքից արևմուտք ձգվող այդ ծիծաղը՝ հայ ժողովրդին մղելով համաշխարհային մշակույթի կառուցման, բարի ապրելու կամքի հորձանուտ:

Աստծու կամքով Ալեքսանդր Մակեդոնացուն, ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանին, նրանց երիտասարդ կյանքը երկրի մարդկության համար ենթարկելով փորձության՝ իր մոտ է հրավիրում որպես ընտրյալների, որոնք դառնում են սրբեր:

Եվ այսպես, Ալեքսանդր Բալբաբյանի առաջադրանքով Ռուսաստանից հարկավոր էր բերել կապի միջոցներ և այն պատք է կազմակերպեր Վ. Ծիրխանյանը:

Մասիս Բաղդասարյան

Արմեն Ավետիսյան, զոհված 1992 թ.

Գրիգոր Խաչատրյան «Լույս» ջոկատի հրամանատար, 1992թ.

ԿԱՊԱՎՈՐ 18 ՏԱՐԵԿԱՆ ՄՈՐԵԽԻԿ



Հարութ Բալոյանը գինակից ընկերների, Տեղ գյուղի Գագիկի հետ, 1991 թ.

Հարություն Շահենի Բալոյանի նախնիները Մշեցի էին: 18 տարին չբոլորած պատանին արդեն աչքի էր ընկել իր չարաճճիությամբ: Թռուցիկներ էր տարածում, երթերի, գործադուլների կոչեր անում: 1990թ. Վազգեն Սարգսյանը կանչեց ամառանոց իր մոտ: Պատանիները շատ դեպքերում աննկատ են լինում: Նա ասաց.

- Քո ավտոմեքենայով զենք բարձի՛ր, ծածկի՛ր կարտոֆիլով և շուտ հասցրու Ոսկեպար:

- Ա՛յ ճուտիկ, զենք ունե՞ս,- հարցրեց Վազգեն Սարգսյանը: Ասացի՝ ոչ: Գոտկատեղից նագանը հանեց, ինձ տվեց:

- Նրա համար եմ տալիս, որ մենակ ես գնալու, ահա՛, քեզ օգնական: Ով խոչընդոտի ընթացքդ՝ դեմ կտաս ծակատին:

Հարությունը առաջին անգամ էր զենք տեսնում, այն էլ նվիրեց Վազգեն Սարգսյանը, պատկերացում չուներ զենքից, ուզում էր ասել՝ ինչպե՞ս կրակեմ, ամաչեց: Ի՞նչ պատասխանատվության առաջ եմ կանգնած, վստահել են ինձ, աշխարհի ամենալավը ինձ են նվիրել:

Նագանը գոտկատեղս կապած գնում էի՝ չգիտակցելով ու՞ր, պատկերացումս կինոֆիլմերում տեսած կադրերն էին, պատերազմի դրվագներ, հրդեհ, ավերակ, գերի, լաց ու կոծ, դիակ ու վիրավորներ, իմ պատկերացումից ուղեղս դժժում էր: Այս բոլոր պատկերացումներս տեսածիցս պակաս չէին: Հասա տեղ, զենքերը հանձնեցի, ոգևորությունս այնքան շատ էր, որ տղաների հետ մտա մարտի:

Նոր էր կազմավորվել պաշտպանական կոմիտեն: Հրատապ պահանջեցին վեց քաջ տղաներ: Վահան Շիրխանյանի կապավորից ստացա երկտողը: Գնացքով պետք է մեկնեին Կրասնոդարի մարզ, վեց հատ ГАЗ-66 կապի ավտոմեքենաները հասցնեին Հայաստան՝ Արցախի ազատագրման ռազմաճակատի ռադիոհաղորդման կապն ապահովելու համար:

Տղաները ուշացումով հասան երկաթգծի կայարան, գնացքը շարժվեց: Պատանի Հարութը արդեն վագոնի մեջ էր: Ուղեկցողը տղաներին զգուշացրեց, որ շտապելն անօգուտ է, այդպես կարող են մինչև Թիֆլիս հասնել, քանի որ կուպեի տեղերը բրոնյա է արված:

- Աստված մեզ հետ,- խաչակնքելով ասացին տղաները:

Թիֆլիսում դրամի օգնությամբ տեղավորվեցին վերնահար-

կի ծամպրուկների կողքին: Հասան Կրասնոդար: Երկու օր հետո գնդապետ Մկրտչյանը՝ «Պանիմայեշ», Երևանից ինքնաթիռով հասավ տղաներին:

Ստանալով հատկացված ավտոմեքենաները՝ ճանապարհ ընկան: Աբխազիայում տղաներին ձերբակալեցին, մինչ ձերբակալվելը տղաները հասցրել էին մոտների ինքնաշեն զենքերը դեսուդեն թաքցնել:

Մկրտչյանը որպես Խորհրդային բանակի բարձրաստիճան սպա՝ գնդապետն ինքնավստահ ներկայացավ աբխազների հրամանատարին: Հեռվից եկող սպան գոռաց գնդապետի վրա, հրամայեց որպես պատիժ երկու ժամ կանգնել մեկ ոտքի վրա: Մարտինը՝ «Չելավեկը», որոշեց մտնել դերի մեջ, սկսեց բանակցությունները: Աբխազներին բացատրեց, որ մի ողջ ժողովուրդ պայքարում է անարդարության, բռնության դեմ: Այս Ռադիոկապի ավտոմեքենաները օդի, ջրի պես անհրաժեշտ են: Իսկ տղաները Ղարաբաղյան շարժման մասնակիցներ են:

Աբխազների հրամանատարը հարցրեց, թե ինչու ենք ռուս սպային բերել մեզ հետ: Դուք էլ մեզ պես ազատության համար եք պայքարում, դուք գայիք ավելի լավ կլիներ: Եվ մեզ ճանապարհեց, թաքցրած զենքերը, հանեցինք թաքստոցներից: Հրամանատարը ի նշան բարեկամության՝ իր զենքը նվիրեց ու պատվիրեց մինչև Հայաստան ով խանգարի՝ չենթարկվել, կապ հաստատել իրենց հետ, հակառակ դեպքում՝ կրակել ու անցնել. իրենք պատասխանատու են:

Հարութը՝ խմբի փոքրը լինելով, խոսում էր կիսառուսերեն-կիսահայերեն, դրանից շրջապատն աշխուժանում էր, նա ուշադրություն էր գրավում, արժանանում հարգանքի:

Այդ էր պատճառը, որ փոքրիկ պատանին ճանապարհ էր հարթում: Ճանապարհի մի հատվածում Հարութը նկատեց, որ իր ավտոմեքենայի վրա խոշոր տառերով գրված է «Մորեխիկ»: Լուսաբացին հասան Երևան՝ Նոր Նորքի թաղապետարանին կից երաժշտական շենքի առաջ, ուր տեղակայված էր պաշտպանական կոմիտեի շտաբը, ավտոշարասյունը կանգնեց: Նրանց դիմավորեցին գեներալ Գ. Դալիբալթայանը, Ալիկ Պետրոսյանը: 1991թ. մայիսի 4-ին կառավարության որոշմամբ, կառավարությանը կից ստեղծվեց Պաշտպանության կո-

Հարութ Բալոյան

միտե (Պաշտկոմ): Կոմիտեի նախագահ Վահան Ծիրխանյանը զարմացած հարցրեց, թե ի՞նչ է գրված ավտոմեքենայի վրա: Մարտինը պատմեց ամբողջ եղելությունը: Եվ այդպես Հարութի մարտական անունը կնքվեց «Մորեխիկ»:

Նա պատմել էր, որ երբ առաջին անգամ գնում էր ռազմաճակատի գիծ, մարմինը փշաքաղվեց, ամբողջովին դողաց և որոշեց վերջնականապես գնալ մինչև վերջ, պապերի վրեժը լուծելու:

Վ. Ծիրխանյանի միջնորդությամբ ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանի հրամանով Հարութին շնորհվեց լեյտենանտի կոչում: Հավաքվեցինք, որ շնորհավորենք:

Սևանցի Սուրիկից երկտող ստացա: Մեկնեցի Նուբարաշենի 5-րդ բանակային զորամիավորում, մարտական գծով փոխհրամանատար գնդապետ Սուրիկ Սարգսյանի մոտ: Մինչ Սուրիկին տեսնելը գալիս էի Օմարից՝ Գևորգ 4-րդի մոտից: Ճանապարհին Վարդենիսում հանդիպեցինք երկրորդ աստիճանի մարտական խաչով պարգևատրված գնդապետ Հենրիկ Մուրադյանին՝ շնորհավորելու համար:

Հերթապահ զինվորը ուղեկցեց Սուրիկ Սարգսյանի, մեր մարտական ընկերոջ մոտ: Աշխատասենյակում՝ նստաթոռի

Ենորհավոր ամանոր, ձախից Եահեն, Գևորգ

գլխավերևում պատից կախված էին Մոնթեի և 26-ի Յուրայի, ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանի՝ ՀՀ ազգային երեք հերոսների դիմանկարները:

Գրկախառնվեցինք, նստեցինք: Ես որպես ՀՀ ՊՆ ներկայացուցիչ մեկնում էի զորամասեր ստուգումների, մեծամասամբ հրամանատարները ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանի դիմանկարը սենյակներից հանել էին ու թաքցրել, որ չերևար Սերժ Սարգսյանի և Ռոբերտ Քոչարյանի աչքին: Իսկ մինչ այդ նկարը համբուրում էին ու կեղծ կոկորդիլոսի արցունքները մաքրում աչքերից, արտահայտում իրենց հավատարմությունը:

Հիմա չկա, հերն էլ անիծած, բա իմ պաշտոնը, իմ փառքը...

Սուրիկը մեզ լավ էր ճանաչում, ասացի՝ չե՞ս վախենում, ու ձեռքս պարզեցի պատից կախ նկարներին:

- Իմ սեփականությունն է, իմ ունեցվածքը, անբաժանը, այն պետք է լինի իմ գլխավերևում, իմ աչքի առաջ, դա իմ հպարտությունն է, պահում եմ հոգով, սրտիս մեջ:

- Ուզում են թող կախեն, իրենց մաման... թող լացի,- ու թունդ հայհոյեց: Հայրացավ, դատապարտեց ներկա իշխանություններին:

Հատուկ վերահսկողություն կա վրաս: Գնում եմ զուգարան կամ անտառ, բնական պահանջ է՝ հետևում են: Մի տեղ մի առիթով ասացի՝ թույլ տվեք հեռուստատեսությամբ ելույթ

ունենալ, ասել կռվող տղաներին կորցրին, չթողեցին:

Այն վատ է անդրադարձել երիտասարդ սերնդի ռազմահայրենասիրական գործընթացին: Վաղը չեն հաշտվի պատմության հետ, հակասություն կառաջանա, սերունդը չի կարողանա մարսել, կխուսափեն պատերազմից...

Միջնադարյան մուրճով՝ «կվալտով» խփում են գլխիս և ասում մածունը սև է, վեցը հավասար է յոթի: Դաշնակցությունը սպանում է Հայաստանը: Դաշնակները հայ ազգի համար խորթ են: 20-րդ դարասկզբին Հայաստանի հարստությունը թալանեցին, Հայաստանը փոշիացրին, թողնելով անտեր՝ փախան այլ երկրներ, սկսեցին հարստություն դիզել և հայրենասիրություն խաղալ:

Այսօր փողով գալիս տեղավորվում են պաշտոնատար աթոռների վրա, ղեկավարվում դրսից, լոբու պես փաթաթվում իշխանություններին, Հայ դատի դիմակի տակ գողանում են վերջին պատառը: Թիմով վազում են մի խուրձ խոտի, փողի, դրամի հետևից: Կյանքն են տալիս գրամ-գրամ, որ առնեն դրամ-դրամ:

Սուրիկն այդպես զայրացած շարունակեց.

- Տղաներով հավաքվեցինք. Մանվել Գրիգորյանը մեզ հետ էր, Ռոստոմ Գասպարյանին ասացի՝ այս երկիրը կործանվում է: Ինձ հրեք առաջ, իմ միջոցով Ադրբեջանից 600 հազար հայ փախստականներին, որոնք ունեն Ադրբեջանական անձնագիր, կազմակերպենք ազատագրված տարածքներում նրանց բնակեցումը: Տիգրան Մեծն իր ժամանակին բնակեցրել է ազատագրած տարածքները:

Հոգով և գործով ապացուցեմ, որ ճիշտ եմ, ինձ հետո որպես ըմբոստի, խռովարարի՝ ինչպես կուզեք ձևակերպեք հրապարակորեն բարձրացրեք կախաղան: Այնպես արեք, որ դուք և Հայաստանը արդարանաք Եվրոպայի առաջ:

Ես մարդկանց կհավաքեմ, Մարտինը վկա է, թե ինչպես էինք միտինգներ կազմակերպում, ժողովրդին բացատրում, նույնն էլ հիմա կանեմ: Այսօրվա ծրագիրը կիրականացնեմ, էլ ի՞նչ իմաստ կար արյուն թափել, զոհեր տալ: Ես ձեր թալանած փողերը..., կերածը հարամ, շան միս լինի: Բերաններդ ջուր առած էգի պես գլուխներդ կախ ժողովրդի անեծքի տակ ջայլամի քաղաքականություն եք վարում: Թքել եմ նման կյանքի և հարստության վրա:

Պարոն ընդհատակ համաձայնողականները, որոնք իրենց բուրժուա-շահադիտական հանցագործ քաղաքականությամբ կործանում են, մոռացել և ոչինչ չեն անում ազատամարտիկներին, հաղթող տղաներին կարգավիճակ տալու համար:

Չտես բուրժուաների պես, որ նշանակում է մասնավոր սեփականատերեր, իրենց շահի հետևից ընկած՝ մեկուսացել են հայ ժողովրդից: Չեն համախմբվում, որ այս վերջին մեզ հասած հնարավորությունը՝ այս մեկ ոտնաչափ հողակտորը կործանումից փրկեն:

Չենք կարողանում մի քիչ հրեական խաղ խաղալ: Այսօրվա ղեկավարները նշանակովի են դրսից, Հայաստանում ընտրություն չկա: Կա նախօրոք գրված ցուցակ, համաձայնեցված արտաքին հովանավորող ուժերի հետ: Այն կարդում են ընտրություններից հետո և վավերացվում դրսի թելադրանքով: Ես կոչ եմ անում, եկեք միավորվենք դառնանք ղեկավարելի:

Մենք կարող ենք, դա ապացուցվեց 1988թ. Ղարաբաղյան շարժման ժամանակ, որի նշանաբանը եղավ՝ «Պայքա՛ր, պայքա՛ր մինչև վերջ», դա տևեց 2-3 տարի, ոչ պաշտոնական, բայց մեծ օգուտ տվեց խոսքը, իսկ դրանից առաջ մեր պետականության զինանշանի վրա գրված էր՝ «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» անիմաստ բառերը: Ֆրանսիայինը «Ազատություն, հավասարություն և եղբայրություն»: ԱՄՆ՝ «Միասնականություն՝ բազմազանությամբ»:

Հայաստանի անկախացումից հետո Հայաստանի դպրոցները ստացան Ազգային դիմագիծ. հայազգի բոլոր երեխաների համար առաջին դասարանից սկսվեց հայեցի կրթությունը: Հիմա կարող ենք վստահորեն ասել, որ հայերենը դառնում է Հայաստանի պետական լեզուն, մինչ անկախությունը այն ձևականորեն էր համարվում պետական: Հայերենը հզորացնում է Հայաստանը: Արտերկրին ներկայանում ենք Հայաստանը հայանում է նշանաբանով:

Մի բան ավելացնեմ, մարդը աշխարհից ոչ-ոքի, զրո է հեռանում: Ամբողջ կյանքում երեխայի մասին ցավում ենք, նրա ապագայի մասին՝ ոչ: Մրցապայքարի մեջ ստեղծում միջուկային, ատոմային, քիմիական, կենսաբանական զենքեր, լցնում երեխաների գլուխը, սպանում, թունավորում նրանց կյանքն ու բաժակաձառերում իրար գովում: ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը սրան կտրականապես դեմ էր:

Յու. Խաչատուրովը Ծամշադինում ժամանակավոր ինչ-որ գործողություն էր կատարում ուղղաթիռով, հարձակվեց իմ ջոկատի վրա, կազմակերպեց, որ ինձ ձերբակալեն: Ինչպես չասեմ, որ նա իմ թիկունքից իմ դեմ էր կռվում, ծակատից՝ թուրքերը: Ինձ ձերբակալեցին, տարան, որ պատժեն: Փառք Աստծուն, բացահայտվեց իմ ով լինելը:

Մենք արդեն ձեռնամուխ էինք ջոկատների միավորմանը և 1990թ. սեպտեմբերի 20-ին ստեղծվեց ՆԳՆ-ը կից «Հատուկ գունդը», որը դարձավ ապագա հայկական կանոնավոր բանակի կորիզը: Գնդի կազմի մեջ մտան հանրապետության շրջաններում և Երևանում գործող 26 վաշտեր: Գնդի առավելագույն կազմը՝ 2300 հոգի (տված զոհերի քանակը 159) մարտնչեց ՀՀ և ԼՂՀ բոլոր ռազմաճակատներում:

Գնդի երդման արարողությանը ներկա էին ՀՀ ԳԽ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, Պաշտպանության խորհրդի նախագահ Վազգեն Սարգսյանը, Վազգեն Մանուկյանը, օրհնության խոսք ասաց Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը...

1991թ. հուլիսի 15-ին մեծաքանակ օդուժի և զրահատեխնիկայի օգնությամբ խորհրդա-ադրբեջանական միացյալ ուժերը (Կիրովաբադի 23-րդ դիվիզիա) ծանր կորուստների գնով (72 սպանված, 3 միավոր զրահատեխնիկա) գրավեցին Ծահումյանի Էրքեջ գյուղը: Նախորդ օրը ընկել էին Մանաշիդ և Բուզլախ գյուղերը:

Ժամանակակից մարտի հիմնական հատկություններից են խուսանավելը, շարժունակությունը, իրադրության արագ և կտրուկ փոփոխումը, անհամաչափ մարտի զարգացումը ծակատում և խորությամբ այն վարելու ձևերի բազմազանությունը, անձնակազմի բարոյահոգեբանական և ֆիզիկական լարվածությունը, փոխգործողությունը և փոխօգնությունը:

Ես, որպես մարտական գծով փոխհրամանատար, կարողանում եմ տիրապետել և կիրառել Հայաստանի պետական շահերը: Լարվածության ժամանակ ցաքուցրիվ զեկուցումներ չէին ներկայացրել ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանին: Նա պատերազմից հետո իմ ներկայությամբ անունս գրեց պարգևատրման ցուցակի մեջ՝ «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի: Պաշտպանության փոխնախարար Ալիկ Պետրոսյանը իր

Արմեն և Վազգեն եղբայրները Սևանում

օգնական Հասմիկի հետ դավադրաբար ցուցակի 70%-ը փոխեցին և առաջինն իմ անունը ջնջեցին: Հարցը ճշմարտության մասին է, որը յուրաքանչյուր քայլափոխի թուլանում է, հարցերը խճճում են, գարին ցորենից չեն կարողանում ջոկել և այդ պատճառով տուժում է արդարությունը:

Չեչենները հարևանների վրա ահ ու սարսափ տարածեցին, որ տիրեն և տարածվեն, զարգանալով արմատավորվեն ձեռք բերած տարածքներում: Մասխադովը կռվում էր իր ժողովուրդի համար, գնդակահարվեց որպես ահաբեկիչ: Հայերս պայքարում ենք մեր իրավունքների ազատագրման համար: Թող ինձ էլ գնդակահարեն, բայց ազատագրված բնակավայրերում բնակեցնեն գաղթականներին, կանգնեցնեն սպիտակ գենոցիդը, արտագաղթը արգելեն:

Ռուսաստանի հետ պետք է ունենալ լայն կապեր (դրանք կյաժ թուրքեր են):

Ծառուկյան Գագոն թող փողերը չվատնի, միացյալ ուժերով կազմակերպեն այդ հայրենանվեր գործը: Ուղղաթիռով մեկ տարում կատարում է հինգ թռիչք: Թռիչքի մեկ արժեքը կազմում է մոտ 25.000 ԱՄՆ դոլար: Նայեք ինչ է կատարվում: Դեռ չեմ ասում ազատամարտիկների սոցիալական ծանր պայմանների մասին, որոնցում շատերը հայտնվել են:

Հայերը ուխտի ականջին քնած են: Միայն կորցնում են, իրենց փորձի ու պայքարի շնորհիվ պետք է հմուտ լինեն, պահպանեն առավելությունը:

Իսկ հարևան պետությունները ավելի ակտիվ են, իրենց շահերն են առաջ տանում: Մենք այդպես իրար վրա ցեխ ենք շպրտում, հարյուրավոր կուսակցություններ ստեղծում, օր օրի թուլանում: Մի օր կասենք մեր շերեփը թղթից է:

- Մարտի՛ն, հիշո՞ւմ ես, Սևանի ափին հայոց պատմության ծալքերն էինք թերթում: Երեք ծովերից մնացել է մի փոքրիկ լճակ, Զոդից թշնամու հեռահար արկերը հասնում էին Սևանա ջրերին:

Ադրբեջանի նախագահ Էլչիբեյը հեռուստատեսությամբ իր

Ժիրայր Սեֆիլյանի «Ծուշվա» գնդի 4-րդ վաշտ. հրամանատար Ժիրայր Մկրտումյան

ելույթում պոռնկորեն ինքնավստահ, հպարտորեն հայտարարում էր, որ շուտով Սևանա լծում գարշահոտ մարմինը կօծի: Կվայելի ծովի մակերևույթից 2000 մ լեռների գրկում ծվարած Սևանի անդորրը: Ի լուր աշխարհի՝ թնդանոթային համազարկով կշնորհավորի հաղթանակը:

Սամվել Գևորգյանը, Սուրիկ Սարգսյանը, Մարտին Բաղդասարյանը վերհիշում էին հայանուն նավերը: Տիգրան Մեծ արքայից արքան կառուցել է տվել «Նետ» անունով մի նավ, որը լողացել է Միջերկրական ծովում: Իսկ Հնդկական օվկիանոսում և Պարսից ծոցում շրջում էին հնդկահայերի՝ «Հայկ», «Արամ», «Տիգրան» անուններով նավերը, Բիրմայում՝ «Արարատ», «Զուղա» և այլ նավեր: Ֆրանսիայի Մարսել քաղաքում գործում է շոգենավի «Արամյան» ընկերությունը, որն ուներ երկու շոգենավ՝ «Հայաստան», «Արարատ»: Կասպից ծովում (Բաքվի նավահանգիստ) գործում են «Արմենիա», «Վան»,

ՀԱԲ-ի «Ղարս» ջոկատ. ձախից երկրորդ կանգնածը Հովհաննես Բաղդասարյանը մարտական ընկերների հետ. Կոթի 1991 թ.

«Վասպուրական», «Արամյան»: «Երևան» շոգենավը լողում է խաղաղ և Հնդկական օվկիանոսներում:

Ալեքսանդր Մանթաշովը սեփական առագաստանավը կոչել է «Հուսիկ» իր Նադեժդա դստերի անունով, որը լողում էր Սև ծովում:

Նայեցինք ափ վազող ալիքներին, Սուրիկը ասաց. «Աշոտ երկաթ», «Զորավար Անդրանիկ» ձկնորսանավը: Ուր էլ լինենք, տանը, թե տարածության վրա, Սևանը Հայաստանի փարոսն է, ձգում է բոլորիս:

Ամառ էր, շոգ էր, Սևանի ափին մարդիկ հանգստանում էին, կանգնած մարտական ընկերներով, գամված նայում էինք այդ գեղեցկությանը:

Բժիշկ Աշոտ Զոհրաբյանը Արամ Պողոսյանի հետ, 1996թ

Ծփում էր Սևանը: Արևի ուլտրամանուշակագույն ճառագայթների շողերը շոյում էին ափի տաք ավազին պառկած կանանց ստինքները: Կրծքի երեխան անուշ ու խաղաղ ուտում էր մայրական կաթը: Երեխաները ալիքների փրփուրը կուլ տալով՝ լողում էին, անփորձ ձեռքերով չփչփացնում ջուրը:

Ես, Սուրիկը, Սամվելը նայեցինք իրար: Եկել էինք պատերազմի դաշտից: Հաճելի գրավիչ տեսարան էր. նման կյանքին մենք անսովոր էինք: Տարված, հմայված նայում

էինք թևաթափ վազող երեխաներին: Լսում թաթիկների չլփոցի ձայնը թափանցիկ ջրի ալիքներին: Նրանք՝ մանկական անհոգ ժպիտը երեսին, ապագային թևանցուկ՝ լողում էին, նավակները թիավարելով, չանցնելով սահմանված կարմիր արգելագիծը:

Այդ պահը մեզ ձգում էր պատերազմի դաշտ, որպեսզի պաշտպանենք այս պահը, քանի դեռ Ադրբեջանի զավթող քաղաքականության վերջը չի տրվել: Կարիք չկա մնալ թիկունքում և հայտնվել քաղաքական խաղերի մեջ:

Քանի որ իշխանությունների և նրանց նկատմամբ ատելությունը այնքան մեծ էր, որ գարշահոտությունը երկինք է բարձրանում, մենք այստեղ անելիք չունեինք:

Ճանապարհին Սուրիկը ֆիդայիների մասին արտահայտվեց.

- «Տղե՛ք, առանց հացի մնացեք, առանց զենքի մի՛ մնացեք»: Ֆիդայիների սկզբունքներից մեկն է՝ չմոռանալ, իսկ նախապես ամուսնացած լինելու պարագային՝ հեռու մնալ իրենց ընտանիքից: Եվ ավելացրեց. «Արցախ ժողովրդի օրհնանքերն ու անեծքները. «Մորուքդ սպիտակի», «Խաչը քեզ պահապան լինի»: Անեծքներից՝ «Ծան հափռավը ծյուր խըմիս», «Աստված գլխիդ խռով կենա»:

Աշոտ Երկաթը Յուսուֆի զորքը ջարդելիս խռոված Սևանա կղզում էր, աշխարհից խռով փակվել էր այնտեղ: Արաբական խալիֆան՝ զորավար Բեշիրի գլխավորությամբ, պաշարեց կղզին: Սակայն Աշոտ Երկաթն իր 70 զինվորներով լաստանավերով, որոնց մեջ կար մեկական զինվոր, գրոհեցին և նետահարեցին Բեշիրին, նա խուճապահար փախավ:

Աշոտ Երկաթը կոմանդոսյան մարտեր էր վարել. մեկ այստեղ է կոտորել թշնամուն, ու հանկարծ անհետացել, մեկ էլ հայտնվել երկրի այլ կողմում: Նա անակնկալ հարձակվել է թշնամու վրա և հանկարծ անհետացել: Պարզվում է, որ հաղթանակների համար պարտական ես հետախուզական մարտեր վարելու արվեստին:

Հաղթանակին հասնելու համար կա երեք պայման. հրամանատար, բժշկություն և հետախուզություն:

ՀՀ ՆԳՆ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՎԱՇՏԸ

Գագիկ Բոյաջյանը ոտքերն այնքան զգույշ էր դնում հողին, որ աղմուկը չէր լսվում: Մոլոր-խառնափնթոր մտքերը նրան շեղել էին նպատակակետից:

- 1993 թ. հունվարի 24-ին,-հիշում է Բոյաջյանը,- հետախուզությունից Քաշաթաղի ռազմական շտաբ վերադարձա: Հեկուցելուց հետո կռացա, որ թրջված ու պատռված ծտքակոշիկիցս դուրս ցցված մերկ բութ մատս ծածկեմ: Ձեռքի նռնակը գրպանիցս ընկավ ցած, գլորվեց առաջ: Տղաները դես ու դեն թռան: Գնդապետ Ֆելիքս Գզողյանը ցատկեց, կպավ պատին: Նռնակի ձգանը տեղում էր ամրացված: Հանգիստ կռացա, վերցրի հատակից, դրեցի գրպանս ու կոծկեցի: Ֆելիքս Գզող-

Աջից փ.գ. Գագիկ Բոյաջյանը Սամվել Անոյանի հետ,1994թ:

յանը տեսավ վիճակս, ինձ նվիրեց իր հոգեպահուստ ֆրանսիական արտադրության ծտքակոշիկները: 3 տարի ծառայության ընթացքում հագա:

«Ուրալով» խորդուբորդ, քարքարոտ ճանապարհով մի կերպ առաջ էինք ընթանում: Թշնամին նկատել էր, «գորշ գայլերը», մոտ 300 հոգի հարձակվեցին հենակետերի վրա, որտեղ գտնվում էր Արսեն Ֆիդանյանի վաշտը: Չհասցրինք թաքնվել լեռան հակառակ կողմը, արձակած արկի բոցից բռնկվեց ավտոմեքենան: Ալիքի հարվածից տղաները դեսուդեն թռան և սողալով արագ հավաքվեցին ժայռափոսի մեջ: Գնդակների կարկուտի տարափ տեղացին այդ հատվածում: Մենք արագորեն հարմարվում և ընտելանում էինք, վիճակից անվտանգ դուրս գալու ելքեր որոնում: Ծիտիկների կռիվ չէր, հարձակում էր մարտերով, միայն ավտոմատով չես կարող դիմակայել: Կրակահերթը ճտճտոցի ձայներ էր հանում: Գնդակը՝ դիպչելով քարին, նորից պայթում էր: Նոր զենք էր, անունը չգիտեինք: Անունը դրեցինք ճտճտոց: Հետո պարզվեց, որ թուրքական ռազմական արտադրության էր: Քարի տակից դուրս թռա դեպի 6-րդ հենակետ, այնտեղից էլ՝ 4-րդ:

ՀՀ ՆԳ սահմանամերձ գոտիների պաշտպանության վաշտ, Հոդ, 1991 թ.

Այստեղ խուճապ նկատեցի: Իմ ներկայությունը գոտեպնդեց: Այդպես կանխվեց թշնամու առաջխաղացումը:

Գագիկի հետ հետախուզության գնալը Արամ Գևորգյանի համար նման էր պարահանդես գնալուն: Քարի տակ թաքնված տղաները՝ Լուսաբեկ Սամվելյանը, Գագիկ Բոյաջյանը, Արամ Գևորգյանը, փոքր Լյովա Կարապետյանը, Վրեժ Խաչատրյանը, պարեկային վաշտի հրամանատար Հունան Պողոսյանը կլանված լսում էին հայկական ռազմաարդյունաբերության ծրագրերի իրականացման մասին, երբ թշնամու գնդակը խրվեց Լյովա Կարապետյանի կողքից կախված ջրամանի մեջ, տղաները նայեցին իրար՝ քարացան:

Քարի տակից՝ ավտոմատից մի քանի անիմաստ կրակոցներից հետո Լուսաբեկ Սամվելյանն առաջարկեց վախը չափելու համար Մալբորո ծխել, որը հազվագյուտ թանկ ծխախոտ էր մեզ համար:

- Ի՞նչ ծխելու ժամանակ ես գտել, թշնամին պատրաստվում է մեզ գերեվարել, դու ծխախոտից ես խոսում: Եթե գերի ընկնեմ, մախորկա էլ չեն տա, ծխենք,- կողքից նրան պաշտպանեց Արամը:

- Ուրեմն, չկորցնենք հնարավորությունը,- շարունակեց Լուսաբեկն ու վառեց ծխախոտը: Հաճելի բուրմունքը ներքաշեց թոքերի մեջ:

Արամ Գևորգյանը սաղավարտն ավտոմատի ծայրին բարձրացրեց, թշնամին անմիջապես խփեց: Արամ Գևորգյանը հետախուզական ջոկի հրամանատարն էր, հետո նշանակվեց Լուսաբեկ Սամվելյանը, իսկ Գագիկը՝ տեղակալը: Քաշաթաղի թշնամու դիրքերը հետախուզելու ժամանակ շրջանցելու հնարավորություն եղավ: Նշանառուն նկատելով՝ հետևում էր: Ժամանակ ունեցա գծագրելու բոլոր տեղանունները և այդ տեղագրությունները հերթականությամբ հաղորդել: Հեռադիտակով հետևում էին մեր քայլերին, շատ անգամ ձեռքի շարժումներով ըստ պայմանանշանների՝ ծշգրտությամբ քարտեզագրում էին՝ թե քանի ՀՄՄ, տանկ կա: Մինչև հունվարի 31-ի հարձակման օրը պիտի հասցնեինք հետախուզական տվյալները հաղորդել, կուտակումներ կային, բայց չգիտեինք հարձակման պլանի ստույգ ժամանակը: Մի բաժակ սպիրտ էի խմել՝ տաքանալու համար:

Գագիկը սողալով անցավ 100 մ տարածք, մոտեցավ թշնամու դիրքերին, ձեռքի նռնակը նետեց խրամուղու մեջ: Եվ նույն արագությամբ իրեն նետեց փոսի մեջ, շունչ քաշեց, ոլոր-մոլոր ճանապարհներով հասավ ձորապռնկին: Ձորով հասավ հայկական պաշտպանական դիրքերին:

Լուսաբեկ Սամվելյանը, Գագիկ Բոյաջյանը զենքի բոլոր տեսակներից գլուխ էին հանում, վերանորոգում էին ԱԳԱԷՄ՝ հաստոցավոր ավտոմատ նռնականետը, ԴԷԵԷԿԱ՝ հաստոցավոր գնդացիրը, հին կամ խափանված ու ժանգոտած զենքերը: Ասենք, որ ՀՀ ՆԳ նախարար Վանո Սիրադեղյանի 1992թ. նոյեմբերի 2-ի N668 հրամանով 1993թ. հունիսի 17-ից 168 հոգի գործուղվեցին Գորիս: 1993թ. հունվարի 31-ին Լուսաբեկ Սամվելյանը թշնամուն մոլորեցնելու համար կազմակերպեց կեղծ հետախուզական մարտեր: Ձյան վրա պառկած պատրաստվում էր դիմակայել թշնամու գրոհին: Ասված է փորձված զինվորը երբեք չի շփոթվում, առավել ևս՝ հետախույզը: Մշեցու թոռը, արագությունը համարելով պատերազմի էություն,

ՀՀ ՆԳ սահմանամերձ գոտիների պաշտպանության վաշտ, Զոդ, 1991 թ.

սողալով ընթացավ առաջ: Թշնամու գնդացրային լուսածիր գնդակները Սամվելյանին գամեցին հողին: Ծուռ եկավ մեջքի, աստղազարդ երկինք էր, մարմնին դադար տալով՝ ընկավ մղձավանջի մեջ: Աչքերի առաջ չորս տարեկան տղան՝ Էդգարը, վազում էր իր գիրկը: Հետախույզի կոպերը անքնությունից ծանրացել էին: Երբ լսեց տղաների գոռում-գոչյունը, ժպտաց, խորը շունչ քաշեց. թշնամին նահանջում էր, հայերը գրոհում էին: Այդ առիթով Սամվելյանը ծոցատետրում գրեց. «Պատերազմի արվեստը մեզ սովորեցնում է հույսը դնել ոչ թե թշնամու չհարձակվելու վրա, այլ նրան դիմավորելու պատրաստակամության և դիրքերն անառիկ պահելու վրա»: Հետագայում կոնտուզիա ստացած Սամվելյանին վիրահատում էր Իջևանի սևքարեցի բժիշկ Գագիկ Խառատյանը, որը մի ձեռքին նշտարը, մյուսին ավտոմատով տասնյակ ազատամարտիկների կյանքեր է փրկել, համեստորեն ասում էր. «Ավելի լավ է անմիջապես խրամատում օգտակար լինել, քան թիկունքում սպասել...»: Բժիշկը չնկատեց նարկոզի մեջ

Լուսաբեկ Սամվելյանը որդու՝ Էդգարի և կնոջ՝ Գայանեի հետ

Բժիշկ Գագիկ Խառատյանը ընտանիքի հետ

Սամվելյանի աչքերի արցունքը, որ նա իր երազում տեսավ սոսկալին, հոգում մրմռացող անտանելի ցավը ՀՀ ՀՈՒ ծառայության ժամանակ մահանում է իր որդի Էդգարը, ծնվում է թոռնիկը՝ Լևոնը: Որդուն հուղարկավորելուց հետո գերեզմանատանը կառուցում է մատուռ:

Գագիկը հետախուզությունից վերադարձավ Մոլալար՝ («Մենթավանի») շտաբ: Երկար, դաժան մարտ էր ընթանում, հեռուստատեսությամբ այն հաղորդում էին: Թուրքերը լայնամասշտաբ, լուսածիր գնդակներով կրակում էին: Օդը կարմիր շիկացել էր:

Հրամանատարն էր Վալերի Պետրոսյանը: Մարտերի մեջ կոփված ու թրծված Գագիկը՝ սողալով մոտեցավ թուրքերի դիրքերին, մոտ 15 մետրից ձեռքի նռնակը նետեց թշնամու վրա՝ առաջացնելով սլաքաձև ծեղքում: Տղաները թափանցեցին թշնամու թիկունքը և սկսվեց ձեռնամարտը:



Մամիկոնյան Վարդան, Ճավաղյան Վարդան, հենակետերում, Հոտք, 19991 թ.

Խրամատի մեջ 4 ժամ տևած մարտում Գագիկը կարողացավ մարտը շեղել մեր կողմը, տղաներին ազատեց այդ դժոխքից: Հինամթերքը վերջացել էր: Միքայել Հարությունյանը Ֆիդանյանի ցուցումով գրադների արկերի տարափ տեղացրեց թշնամու վրա: Տղաները փրկված էին: Հայերն ունեցան 2 զոհ և 8 վիրավոր: Մարտից հետո կարծես գետնի տակից հայտնվեց ՍՊԱՐԱ-

ՊԵՏԸ: Աղասի Ֆիդանյանը արագ մոտեցավ Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻՆ, զեկուցեց իրավիճակի մասին՝ թշնամին գտնվում էր հազար մետրի վրա, և ուղեկցեց դիրքերը: ՍՊԱՐԱՊԵՏԸ մտավ թշնամու թիկունքը, դա 1993 թվականի փետրվարի 4-ն էր: Մենք անհանգիստ ու զարմացած զգուշացրինք: Նա պատասխանեց, որ Հայոց բանակը ուժեղ է, պատերազմականի ողջ գործը հիմնված է խաբկանքի վրա ու դիմեց մեզ.

- Հը, տղանե՛ր, հո դիրքերը չե՞ք տվել:

- Չէ՛, շեֆ ջան, դեռ մի բան էլ ավելացրել ենք,- պատասխանեցին տղաները և արագ ավելացրեց,- կարո՞ղ է պրամիդոլ, դիմիդրոլ, ցավազրկող լինի մոտդ:

- Դեղորայք, մի բան էլ ավելի բերել եմ վիլիսով, վիրավորներին իջեցրեք Զաբուխ-Ամիմավան, այնտեղ կանգնած է շարժական բուժսանմասը:

Գագիկը կատարեց հրամանը: Վարդանին, Խաչիկին, Հունան Պողոսյանին և մյուս վիրավորներին տարավ: Առաջին բուժօգնություն ցույց տալուց հետո տեղափոխեցինք Գորիսի

Մարտական անբաժան ընկերներ Լուսաբեկ Սամվելյանը և Արսեն Ֆիդանյանը հրադադարից հետո

հիվանդանոց: Ես վերադարձա դիրքեր, մարտից հետո ավտոմատի կրակահերթով օդում լուսածիր գնդակներով լամբադա նվագեցի: ՍՊԱՐԱՊԵՏԸ շատ ուրախացավ:

Իր վարորդ Մոսոյի հետ վերադարձավ Ղազնաֆար: Հոչազի ազատագրման մարտերի ժամանակ Աիմավանում տեղակայված թնդանոթները հեռահար հարվածով պետք է աջակցեին մեր առաջընթացին, սակայն դա տեղի չունեցավ: ՍՊԱՐԱՊԵՏԸ զայրացել էր, բոլորի ուսադիրները պոկեց: Եղիշը գինու հետ սեր ուներ: Հաղթանդամ էր, 2 թևերի տակ պահած՝ զենքով լի արկղերը տանում էր գոռալով.

- Գալիս եմ, տղանե՛ր, դիմացե՛ք, փամփուշտ եմ բերում:

Խմելու ժամանակ լավ խմում էր: Մարտից առաջ մի-մի բաժակ օղի էինք կոնծում: Մի անգամ տուշոնկա, վերմիշել՝ ինչ ունեինք, լցրինք ղազանի մեջ, դրինք կրակին: Կափարիչը գոլորշու ճնշումից բարձրանում էր, վերմիշելը ուռչում էր և միջից թափվում: Այդպես ջուրը գոլորշիացավ, վերմիշելը թափվեց, չորացավ, փչացավ:

ՀՀ ՆԳ համակարգի մայոր Լյովա Մնացականյան՝ Լուսաբեկ Սամվելյանի և Արսեն Ֆիդանյանի մարտական ընկերը

Փորձեցինք թեյել, թեյամանի մեջ ջուր լցնելու ժամանակ տեսանք, որ մուկը մնացել է մեջը: Միջից մասուրի հատիկները կերել վերջացրել էր, սովից սատկել: Թեյամանը մաքրեցինք ջրով, դրինք կրակին: Ինչ արած, զզվելու ընտրություն չկար, պայմաններն էին այդպիսին, պատերազմ էր, խրամատի կյանք:

Հոչազում մնացինք մեկ ամբողջ օր: Հետախուզություններից մեկի ժամանակ, երբ կիրճն էինք անցնում, ձյունն անսպասելի փլվեց մեզ վրա՝ մոտ 3 մ խորությամբ: 3 հոգով մնացինք ձյան տակ: Գիշեր էր, անծանոթ վայր, օդը չէր բավականացնում: Դժվարությամբ հաղթահարեցինք, ծանկռելով ծակեցինք ձյունը, իրար ձեն տալով, մեկս մյուսին քաշելով՝ դուրս պրծանք այդ սառը գերեզմանից: Շարժվեցինք առաջ, մոտեցանք մեր դիրքերին:

Հոչազի դիրքերի ձագարաձև տարածքում հայ ազատամարտիկները շրջափակման մեջ ընկան: Թշնամին բոլորին անխնա ոչնչացրեց: Որպես ռազմական ավար՝ հայկական տանկը դարձրել էին հուշարձան, նրա վրա կանգնում, ի նշան հաղթանակի լուսանկարվում էին և ուղարկում հարազատներին: Թուրքը բարձրացավ տանկի փողի վրա, Գագիկը նշանոցը նշանակետին ուղղելով՝ գնդակահարեց թուրքին: Նա հավի պես գլորվեց ցած, նկարողը վախից տանկի տակ թաքնվեց:

Հակագրոհով ազատագրեցինք թշնամու կողմից գրավված դիրքերը: Մեր հաղթանակի վրա կասկածելով, մտածելով, որ չենք կարող այն պահպանել, դիրքեր եկան ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը, Կոմանդոսը, Ֆելիքս Գզողյանը:

Հեռախոսակապը ռազմադաշտի հետ խափանված էր: Որոշել էինք գրադի հեռահար հարվածներով հողին հավասարեցնել թշնամու կրակակետերը, ամրացնել Ստեփանակերտ, Շուշի, Լաչին, Գորիս, Քարվաճառ, Վարդենիս մարդասիրական ճանապարհների անվտանգությունը, միաժամանակ խանգարել-խափանել թշնամու մարտական գործողությունները, քայքայել ծրագրերը, վիժեցնել հաղթանակները: Այդ բոլորը իրականացրինք:

Այս հաջողությունների կապակցությամբ ՀՀ ՆԳՆ փոխնախարար Հայկ Հարությունյանից հետախուզության վաշտի պետ Լուսաբեկ Սամվելյանը ստացավ սնունդ և դիզվառելիք, որը Տեղ գյուղում փոխանակեց ուլի ու գառի հետ, բերեց, մատաղ արեցին ու շնորհավորեցին ձեռք բերած հաղթանակը:

Թշնամու նահանջի ընթացքում մեր հետախուզության տվյալներով արդեն գիտեինք և ռազմական շտաբին հաղորդեցինք, որ թշնամու ծամբարում կուտակումներ կան, որոնք նախապատրաստվում են ռևանշի: Ինձ չհավատացին: Մշակվում

էր Քաշաթաղ-Հոչազ-Քարվաճառ-Օմար ռազմական ծրագրի իրականացման գործընթացը, որից պիտի ստանայինք պատասխան: Պատասխան չեղավ: Մարտի ժամանակ կապը կտրվել էր: Թեժ մարտեր էին ընթանում: Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԸ անձամբ ուզեց ստուգել՝ պահե՞լ էին դիրքերը, թե՞ ոչ: Դիրքերն ամուր էին, շատ ուրախացավ: Գրկախառնվեցինք:

Իմանալով ականապատված տարածքները՝ գաղտագողի մոտեցա, շրջանցեցի դիրքերը, անցա ժամապահի թիկունքը, զենքը պահեցի քունքին, պահանջեցի՝ ձայն չհանել, այլապես կգնդակահարեմ: Թևերը ոլորեցի՝ ասելով՝ Գագոն եմ: Նա վախեցել էր: Իմ ձայնից եկան տղաները:

Ուխտասարին եռոտանիով տեղադրված էր շեյթան նռնականետը, որին ավելացված էր շարժվող խողովականման նավակատիպ սարք, որի օգտագործումը նման էր աֆղանական զենքին. այն օգտագործվել էր աֆղանական պատերազմում: Գագիկի հմուտ կրակոցով ոչնչացվեցին նրանց դիրքերը: Կանգ առավ «Ուրալ» ավտոբուսը, որով ուժեր էին տեղափոխում: Գագիկը կրակեց ավտոբուսի լուսարձակների ուղղությամբ:

Հետախուզական վաշտը մարտից առաջ

Լաչին-Հոչազ-Քարվաճառ ռազմագծի ուղղությունը ապահովելու համար մեծ ջանքեր էին պահանջվում: Գագիկ Բոյաջյանը արդեն նշանակվել էր Նոյեմբերյանի պարետ: Վազգեն Սարգսյանը հեռախոսակապով կապիտանին ասաց.

- Շտապ կապվիր Աթանեսյան Սեյրանի հետ, գնալու ենք մսաղաց:

Երկու մարտական ընկերներ հանդիպեցին Կողբ գյուղում: Երբ Արծիվ 1, 3 մահապարտների ջոկատները Եռաբլուրից 1992 թ. օգոստոսի 27-ին 375 հոգով մեկնեցին Գանձասար, նրանց հետ էին օգնության եկած 110 կազակներ: Նրանցից 1994թ. փետրվարի 17-ին ՍՊԱՐԱՊԵՏԻ հրամանով կազմվեց մահապարտների վաշտը, որի հրամանատարն էր Աթանեսյան Սեյրանը, շտաբի պետը՝ Գագիկ Բոյաջյանը և շտապ մեկնեցին՝ մասնակցելու Օմարի գրավմանը: 18 հոգի հետախուզական մարտերով առաջ անցան: Դրա մասին գիտեին միայն Սեյրան Աթանեսյանը, Գագիկ Բոյաջյանը, Օմարի մարտական գործողությունների հրամանատար Սարոյան Սեյրանը և Անատոլի Չինևիչը: Գիշերով ձյան, բքի միջով, մեկ շարքով նրանք ձգվում էին սարն ի վեր: Ոռնում էր քամին, հեռվից ռումբերի, արկերի բոցավառ լույսից շրջապատը նշմարելի էր դառնում: Տղաները շտապում էին:

Ֆիդանյան Արսեն, Գրիգորյան Սաշիկ, Հող 1991 թ.

Արշալույսին մեր գլխավերևում պտտվեցին ադրբեջանցիների «ՍՈՒ-25» ինքնաթիռները: Սեյրան Սարոյանը հրամայեց թաքնվել, մտնել ձյան մեջ, որպեսզի թշնամին չնկատի: 6 հատ կարմիր կասետային-սկավառակային ռումբեր թափեցին պաշտպանական դիրքերի վրա ու այնքան արագ անհետացան, որ չհասցրինք գոնե մի կրակոց անել:

Վարդենիսի ուղղությամբ սլացող ինքնաթիռի ծուխը հեռվից գալարվեց երկինք: Թաթար օդաչուն հասցրել էր օդապարիկով թռչել ինքնաթիռի խցիկից դուրս, սակայն հողին իջնելու ժամանակ հայ հետախույզները հասցրել էին գերի վերցնել:

Մարտը դաժան էր: Ձեռնամարտի ժամանակ երկու թուրք գերեցինք, ուղարկեցինք շտաբ Սեյրան Սարոյանի մոտ՝ քննության:

Չոփռլուից երկու ձյուղով հոսող գետակները, որոնց շուրջը ականապատված էր, լեռների ծեղքից դուրս գալով, խառնվում էին Ուրտու վտակին, որը միանում էր Թարթառ գետին, որի ափին Գնդապետ Ալիկ Պետրոսյանի վիլիսը թշնամու ականից

Կանգնած ձախից 2-րդը՝ Արսեն Ֆիդանյանը իր մարտական ընկերների հետ, ՀՀ ՆԳ սահմանամերձ գոտիների պահպանման վաշտ, Հոդ. 1991 թ.

վառվել էր: Վիլիսի ղեկին նստած քաջասիրտ Վրեժը սլանում էր Չապլի: Ոլորապտույտ խաչմերուկում՝ ժայռի տակ, վիլիսը դեմ-դիմաց հանդիպեց թուրքական տանկին: Մեր հետախուզական խումբն անտես շարժվում էր առաջ: Տղաները, չհասցնելով մեքենան շրջել, թռան վիլիսից, անցան սառցակալած գետի միջով, թաքնվեցին անտառում: Հենց այդ հատվածում էր, որ թուրքերը խփեցին հայկական տանկը, որի աշտարակը 10 մ թռել էր հեռու: Հայկական տանկի հրամանատարը, լինելով կուրսանտ, անփորձության պատճառով խփվեց:

Սակրավորները գետակների չորսբոլորը ականազերծելով՝ դանդաղ առաջ էին շարժվում: Նրանց հետևից ընթանում էր քարշատար տրակտորը, որի շերեփով նույնպես հայտնաբերվում էր ականների տեղը: Երկու ական պայթեց: Գետի եզրից տրակտորը գլորվեց ձորը: Իսկ շերեփը շուռ եկավ գետակի մեջ:

Նահանջող թուրքը չէր հասցրել իր ավարը տեղ հասցնել: Ճանապարհի աջ ու ձախ մասերում վառված տանկեր կային: Հետևակային, մարտական ՀՄՄ և վառված, խափանված տեխնիկա: Տեղ-տեղ թափված էր սննդամթերք, հանդերձանք, զի-

ՀՀ ՆԳ սահմանամերձ գոտիների պահպանման վաշտ. Կանգնած չորրորդը՝ Ա.Ֆիդանյան, Հոդ. 1991 թ.

նամթերք, զենք և այլ իրեր: Յանշակը գրավեցինք առանց արգելքների, թուրքերը խուճապահար նահանջում էին՝ Օմարի գագաթում ամրանալու: Ցավազրկող դեղեր չկային, նեղվում էինք: Օմարի գագաթից իջանք Յանշակ՝ շունչ քաշելու, տոնելու հաղթանակը:

Գագիկը ձյան վրա հոգնած պառկած էր, քունը տանում էր: Ձյունով երեսը շփեց, սթափվեց, սպիտակ մասխալաթը խառնվել էր ձյանը: Այդ պահին կարմիր լուսածիր գնդակները՝ վստվստալով, ոտքերի տակ թշշալով, խրվեցին ձյան մեջ: Այստեղ էր, որ չիմացավ՝ ինչպես հաստիքացուցակային Մակարով տիպի ատրճանակն ընկավ ձյան մեջ: Դա 1993թ. հունվարի 31-ն էր: Նռնականետի արկից վիրավորվեց նրա աջ ձեռքը: Վիրավորված մարտնչում էր Մենթավան գյուղի տարածքում: ՍՊԱՐԱՊԵՏԸ Կոմանդոսի հետ եկավ ստուգելու ռազմաճակատի վիճակը: Վազգեն Սարգսյանի կանգնելու տեղը անհարմար էր, ոտքը հարմարեցնում էր հանգիստ, ամուր կանգնելու համար: Ոտքով մաքրում էր կանգնած տեղի ձյունը, հանկարծ դեմ առավ կոշտ առարկայի ու միանգամից բացականչեց. «Էս ո՞ւմ ատրճանակն է»: Հաստիքացուցակով

Ռ. Եահմուրադյան. ընկավ դավադիր գնդակից:
Հայաստանին օգնելու խորհրդակցության ժամանակ, 1994թ.

ՌԴ Նախարար, մարշալ Պավել Գրաչովը և ՀՀ ՊՆ նախարար
Վազգեն Սպարապետը մշակում են Հայաստանի ապագայի ծրագրը

պարզվեց, որ Գագիկ Բոյաջյանինն է: Իմացավ պատճառը, հանձնեց Ֆիդանյանին, վերադարձրին Գագիկ Բոյաջյանին:

- 1991 թվականին,- պատմում է գնդապետ Արսեն Ֆիդանյանի կինը՝ տիկին Քնարիկը,- Արմենս սովորում էր 5-րդ դասարանում, միասին գնացինք Քարվաճառ՝ Զոդ ռազմագիծը: Ֆիդանյանը խաբել էր ինձ: Տեղանքն ինձ անծանոթ էր, խորթ: Երեք օր մնացի որդուս հետ, աշխատեցի գլխի ընկնել՝ շուրջս ի՞նչ է կատարվում: Միայն լսվում էին ահավոր դղրդյուն, հեռու թռչող ռումբերի պայթյունների ձայներ, գիշերները օդում երևում էին շողացող, փայլատակող լույսեր: Այդպես օրերը հաջորդում էին իրար: Անցավ մեկ շաբաթ: Նույն գիշերը, նույն առավոտը, նույն մռայլ մայրամուտը:

Աստիճանաբար դողը պատեց մարմինս, շշուկներից հասկանում էի, որ ծանր կացության մեջ եմ ընկել: Առավոտյան լսեցի, որ Ֆիդանյանը՝ ամուսինս, ընկել է շրջափակման մեջ, խնդրում է հասնել օգնության: Ինձ սովորական երևույթ թվաց, Արմենս լացում էր: Լացը սիրտս շանթեց, ինչ-որ բանից սկսեց թրթռալ ու արագ աշխատել:

Մտքովս ինչ ասես, որ այդ վայրկյանին չանցավ, աչքերս մթագնեցին: Արմենիս ուժեղ գրկեցի, վախից մարմինս դողաց, զգացի, որ ձեռքերս թուլանում են, Արմենիս դեպի ինձ ձգեցի: Արմենս, տեսնելով վիճակս, ենթագիտակցորեն ճչաց՝ խնդրելով օգնել հորը՝ շրջապատումից ազատվելու: «Գազ 31»-ով եկավ Վարդենիսի ՆԳ բաժնի պետ Ցականը, Մարկոսի և Օնիկ Խաչատրյանի, Երջանկ Պողոսյան, Կառլեն Թորոսյանի, Տարոն Բաղդասարյանի և Եվրախորհրդի դիտորդական խմբի հետ բարձրացան հայկական պաշտպանական դիրքերը: Դանդաղ խորանալով մթության մեջ, որ նման էր դժոխքի, անհետացան: Առավոտյան վերադարձան հաղթանակած:

1993 թ. հունվարին Գորիսից հետախույզ Սամվել Հովհաննիսյանը, Աղասի Ֆիդանյանին և Վալերի Պետրոսյանին ուղեկցում էր Հոչաս-Մոլալար-Մենթավան, որտեղ տեղակայված էր շտաբը, հրամանատարն էր Գրիգոր Գեորգի Գրիգորյանը: Նիվան թաղվեց ձյան մեջ, մեքենան թողեցին, ոտքով քայլեցին շտաբ: Լաչինից երկու դիակ ուղարկեցին Երևան:

Արամ (կանգնած ձախից չորրորդը), Վազգեն (կենտրոնում), Արմեն (կքանստած) Սարգսյան եղբայրները, Մոսոն՝ կանգնած աջից երկրորդը, պայքարի ընկերներով, Խոր Վիրապ, 1987 թ

1994 թ. փետրվարի 12-ին՝ երեկոյան ժամը 17-ին, սկսվեց Օմարի գրավման օպերացիան: Ուղղաթիռը նստեց Յանշակից ներքև՝ սարերի գրկում, գետակների ափերին փռված Չոփռլու գյուղում:

Ես էի, Սևանի Սոկրատը, հրամանատար Աթանեսյան Սեյրանը: Եզդի «Արաբը» և Հայկը՝ Պերեբոն, նստեցին վիլիս, հասել էին թշնամու դիրքերին: Գրոհի ժամանակ Արաբը ոտքից վիրավորվեց: Գագաթ բարձրացող տանկի վրա նստեցրինք, «Վիլիսը» իջեցրինք ներքև՝ Յանշակ: Գագոն ներքևից նստեց տանկի վրա, Գրիշա Դավթյանը՝ մյուս տանկի վրա: Այնտեղից երկու տանկով սրընթաց գրոհով հասանք Օմարի գագաթը: Թշնամին ջանք ու եռանդ չէր խնայում, օգտագործում էր ժամանակակից բոլոր մարտական զենքերը:

Հայերն իրենց անելիքը գիտեին, հետախուզության տվյալները արդյունավետ էին, մարտերը հաջողությամբ էին ավարտում: Չապլիի ուղղությամբ ընթացող մարտերի ժամանակ օդի պես անհրաժեշտ էր թշնամու լեզուն, որից շատ բան էր կախված՝ հետախուզության համար հավաքված տվյալները ստուգելու և հակառակ մարտավարություն վարելու համար: Հետախույզ Գագիկ Բոյաջյանը այս օպերացիան կատարեց փայլուն կերպով, երկու օրվա տառապանքից հետո կարողացավ գիշերով երկու թուրքի՝ գլխներին պարկեր քաշելով, գողանալ, նրանց հասցնել ռազմական շտաբ:

Պարզեցինք, որ Օմարի գագաթին գերեվարած թուրքերի մոտ փողի պակասություն չկար: Գերիները չէին թաքցնում, որ վարձկաններ են, ստացած գումարները հարազատներին չէին կարողանում ուղարկել:

Այդ ժամանակ Օմարի գագաթին եռագույն դրոշը բարձրացրել էին Սարոյան Սեյրանի տղաները՝ Գևորգ 4-րդը, որը թուրքական կիսալուսնով դրոշը վրանից պոկել, դեն էր շպրտել: Ես մի սպայի գերեվարեցի ու իջեցրի ներքև:

Հրադադարից հետո Գագիկ Բոյաջյանը նշանակվել էր Դիլիջանի զորամասի փոխհրամանատար: ՍՊԱՐԱՊԵՏԸ մտավ Դիլիջանի զորամաս, չէի սպասում. նա միշտ մեզ հանկարծակիի էր բերում: Վազգեցի, տեղեկացրի: Նայեց փայլուն սև կո-

շիկներիս, ոլորեց աչքերը. երբ հրամանատարը խախտում է զինվորական կանոնադրությունը, զինվորից էլ ի՞նչ պահանջես: Գետինը մտա: Զորամասը վերականգնվել էր: Աշխատասենյակի դռան պատի անկյունը ծաքել էր. կարգադրեց Արմեն Սարգսյանին՝ վերանորոգել: Հետո եկավ ստուգեց. փառք Աստծո, կատարել էինք:

Ալիկենց տանը հավաքված զրուցում էինք, Վանիկ Մամիկոնյանը խոսելով «Հրայր Դժոխք» ջոկատի և 5-րդ բրիգադի մասին, հիշեցրեց, որ 1990թ. Վարդենիսի վերին Ծորժայում 11 ամիս պաշտպանական դիրքերից չեն հեռացել: Այդտեղ՝ գյուղում, թուրք հոր և որդու գերեվարեցի ու խիղճս տանջեց. հայրը թուլակամ էր ու հիվանդ, որդուն պատվիրեցի հորը բուժի, հեռանան, հիվանդանոց տանի հորը: Վազգեն Սարգսյանն իմացավ, ջղայնացավ, ասաց. «Ինչո՞ւ եք խաղաղ բնակիչների նկատմամբ կոշտ ու կոպիտ վարվում»: Առանց հրամանի, առանց տեղեկացնելու, առանց գրավոր զեկուցման բաց թողեց:

1992 թ. մահապարտների կոչին առաջինը ես արձագանքեցի և ներկայացա Վազգեն Սարգսյանին: Խանդավառությամբ դիմավորեց Սեյրան Աթանեսյանի առաջին գումարտակի 2-րդ դասակում, որի հենքի վրա կազմավորվեցին «Արծիվ-1»-ից մինչև «Արծիվ-33» մահապարտ ջոկատները: Նրանց կազմավորման ու ղեկավարման գործում Ալիկ Պետրոսյանի դերն ու նշանակությունը մեծ էր:

Ջոկատը ընդգրկվեց հատուկ գնդի, ապա՝ ՄՀՕՋ-ի կազմում, որի ռազմական շտաբը գտնվում էր Երևանի առաջին մասի ԴՕՍԱՖ-ի շենքում: Ինչ-ինչ պատճառով սպարապետ Վազգեն Սարգսյանը եկավ ջոկատը զինաթափելու, փախա: Հետո հանդարտվեց, գրավոր ու բանավոր զեկուցեցի հանգամանքների մասին, տեղեկացավ և հրամայեց շտապ մեկնել Մարտակերտի 5-րդ բրիգադ: «Մեծ Հրաշք» ջոկատը՝ թվով 50 հոգի, կազմ ու պատրաստ սպասում էր հրամանի՝ Սեյրանը, հրամանատար Վանիկ Մամիկոնյանը, որ ծնվել է 1958թ. Ապարանում, անկախության բանակի հիմնադիրներից էր, հանձն է առնում շտաբի պետի պաշտոնը և մեկնում Մարտակերտ, ընդգրկվում 5-րդ բրիգադի Ջերմուկի Համոյի գումարտակի կազմում՝ որպես հետախույզ: Հակոբ-Կամար գյուղի համար մղվող մարտերում զոհվում է Հայրապետ Օհանյանը:

Չարենցավանի «Հրայր Դժոխք» ջոկատը տեղավորվեց Իջևանի Սևքար գյուղի անտառներից մեկում: Հետախուզության ժամանակ Սարի գյուղի՝ (Ծարուք քարի հատվածում), տղաները հայտնվում են շրջափակման մեջ:

Տղերիս հեղինակը և Գագիկ Գաբրիելյանը դեղին վիլիսով Գյումրիից՝ Վազգեն Մանուկյանի, Վազգեն Սարգսյանի հանձնարարականով, զինամթերք և սնունդ էինք բերում: Տեղ հասնելուն պես իմացանք, որ Ղարաբաղյան շարժման նվիրյալ Գրիգոր Սարիբեկյանը (Գրիշա) հայրական կողմից լինելով սևքարեցի՝ տեղանքին և շրջապատին լավ ծանոթ էր, իր հեղինակության շնորհիվ կարողանում է տղաներին՝ Արամ Կոնջորյանին, Ասատուր Ասատրյանին, Խաչիկ Խաչատրյանին, Վալերիկ Մամիկոնյանին և այլոց օգնեց դուրս գալու այդ օղակից:

Մայրը՝ տիկին Կիման, գիշերը չքնեց, խնամում էր տղաներին, կերակրում: Առավոտյան այդ չքնաղ կինը բոլորի հագուստները լվացած, կարկատած, արդուկած հանձնեց տղաներին:

Գրիգոր Սարիբեկյանը, Սեյրան Օհանյանը, Գևորգ Բաղդասարյանը, Խաչիկ Գալստյանը (4-րդ շարքում աջից առաջինը) ԵԿՄ համագումարում

Մուշեղ Քրիստափորի Մխոյանը (Վոժդ), ղեկավարում էր միացյալ ուժերի շտաբը: «Մուշ» միսկոմբինատի արտադրամասի պետն էր, նույն կոմբինատի Ծիրազական Վաղարշակ Սուքիասյանի՝ արիկոմի նախագահ Գրիգոր Սարիբեկյանի քաղաքական ու մարտական ընկերը:

Ղարաբաղյան շարժման ժամանակ Մուշեղը պնդում էր, որ հարկավոր է ինքնապաշտպանության համար պատրաստել ձեռքի նռնակներ, ականներ, հետագայում «Ծմայս» տիպի ավտոմատներ՝ Մակարով տիպի ատրճանակի փամփուշտներով:

Բոլորի կողմից հարգված Վազգեն Սարգսյանին համոզելով՝ տողերիս հեղինակի, գլխավոր կոնստրուկտոր հրազդանցի Ռազմիկի և Սամվել Գևորգյանի օգնությամբ Չարենցավանի կենտրոնաձույլ գործարանում իրականացրեցինք ձեռքի նռնակի ձուլման արտադրություն: Այդ ժամանակ ձևավորվում էին կամավորական ինքնապաշտպանական ջոկատները: Ղարաբաղյան շարժման նվիրյալ Գրիգորը՝ ՀՀ Ղարաբաղ կոմիտեի հանձնարարականով, Արարատում առաջին անգամ

«Հրայր դժոխք» ջոկատի մի խումբ ազատամարտիկներ, 1990 թ.

մասնակցում է ժողովի, որին մասնակցում էին Դավալու, Արարատ, Արգավան, Վեդու, Ավշար և այլ ջոկատներ, որտեղ առաջարկվում է գրողների միության անդամ, որոշ չափով ճանաչված Վազգեն Սարգսյանին ընտրել «Արարատ» ջոկատի հրամանատար:

Գրիգոր Սարիբեկյանը, պատրաստի հոդվածը Վազգենի միջոցով ցանկանում էր «Գարուն» ամսագրում տպագրել: Մերուժան Տեր-Գուլանյանը դիմադրում էր: Պայքարը թեժանում էր: 1990թ. հունվարին Երասխավանի կռիվների ժամանակ ձեռքի բեկորային նռնակներն իրենց արդարացրին: Այդ մարտերի ղեկավարման փուլում բնածին իր տաղանդով, կազմակերպչական ունակություններով փայլեց Վազգեն Սարգսյանը: Այստեղ Դավիթ Հադոյանը խոսեց Վազգենի գրագետ ու զարգացած, բանիմաց լինելու մասին, ով խոսում էր գրողի-արձակագրի լեզվով: Դա վերահաստատվեց նրան շրջապատող գրող, բանաստեղծ, փիլիսոփա, դերասան, կոմպոզիտոր, քաղաքական, ինչպես նաև մարտական գործիչների կողմից: Աշոտ Նավասարդյան, Գևորգ Բաղդասարյան, Սամվել Գևորգյան, Գրիգոր Սարիբեկյան, Դավիթ Ծահնազարյան, Հակոբ Մովսես, Մովսես Գեորգիսյան, Աշոտ Մանուչարյան, ովքեր հռետորական առումով զիջում էին Վազգեն Սարգսյանին. վերջինս էմոցիոնալ հռետոր էր, լավ շարադրում էր մի ողջ ծրագիր, համոզիչ, մատչելի, որից երբեք չէին ձանձրանում: Նույնիսկ ՀՀ Ղարաբաղ կոմիտեի գաղափարախոս, իմաստուն Լևոն Տեր-Պետրոսյանին Վազգեն Սարգսյանը կարողանում էր հասնել այս հսկային, նույնիսկ կարելի է ասել՝ նրան հավասարվում էր:

Հրուցում էինք Գրիգոր Սարիբեկյանի աշխատանքային ընկերոջ՝ Գագիկ Սահակյանի հետ. Գագիկը վերհիշեց 1992թ. ծանր, մութ ու ցուրտ օրերը: Քաջության ու արիության շնորհիվ՝ կարողանում էին թիկունք-ճակատ կապը ամրացնել: Չորս տոննա շաքարավազը Բալահովիտի բանասեր Իսոյի օգնությամբ, ինչպես նշված է «Ազատագրում» երկրորդ հատորում, հասավ խրամատ: Վրաստանի տարածքում 20 տոննա շաքարավազը թալանելու համար հրազենից կրակեցին. Գագիկի բաճկոնը ծակելով, քերծեց որովայնի մաշկը, ապա հարվածեց ավտոմեքենայի շարժիչին, որը խափանվեց, սակայն կարճ ժամանակում վերանորոգվեց, և բեռը հասավ Հայաս-

տան:

Եվ այսպես Վանիկ Մամիկոնյանը լավագույն տղաներին վերհիշելով խոր հոգոց հանեց: Իսկ Արսեն Ֆիդայանը, Լուսաբեր Սանվելյանը առաջարկեցին մեկնել Աշտարակի Տեղեր գյուղի երեք երեխայի հայր Գուրգեն Մկրտիչի Գաբրիելյանին հյուր: Նա Պռոշյան սովխոզի տասնմեկ ազատամարտիկներից մեկն էր: Ռուբենի, Սարոյի, Ավետի հետ եռաբլուրում ազգի արժանավոր զավակներ են թաղել: Աստվածածին եկեղեցու ամենօրյա աղոթքով բուժում էր հոգու ցավը: Մենք էլ ուզեցին լինել մասնակից, իսկ Կոտայքի մարզի Զովք գյուղի Թադևոսյան Ազատը պատմեց, որ միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ծառայել է Խորհրդային բանակում, հետագայում ավարտում Երևանի Մանկավարժական ինստիտուտի պատմության իրավունքի ֆակուլտետը, աշխատել է բանվոր, հետո ուսուցիչ, աշակերտներին տալով իրավական գիտելիքներ: Մասնակցում է Հայաստանի սահմանների ինքնապաշտպանության Արցախի ազատագրման գործընթացին: ԵԿՄ-ի կողմից պարգևատրվում է՝ հանդիսանալով Ազգային Անվտանգության հիմնադիր: Միջազգային ակադեմիայի գլխավոր մասնագետ, արժանանում է Գեներալ-լեյտենանտի կոչմանը: Նշանակվում է ՀՀ Քրեափորձագիտական միության վարչության նախագահ: Նա էլ իր հերթին զանգեց Կոմանդոսին, որ միանա մեր խմբին:

Ազգային ազատագրական շարժման և հետանկախության առաջին տարիներին (1989-1992թթ) Հայաստանում ժողովրդաիրավական պետության ձևավորմանը և կայացմանը որոշակի նպաստ բերեց Հայոց Համազգային Շարժման համակարգում հասարակական հիմունքներով գործող իրավաբանների հանձնախումբը: Շուրջ 20 նվիրյալ իրավաբաններից և այլ մասնագետներից բաղկացած այս հանձնախումբը (Հայկ Մարգարյան, Նորիկ Եղիազարյան, Ռուբեն Աահակյան, Մհեր Խաչատրյան, Տիգրան Ջանոյան, Վովա Հախվերդյան, Աղասի Արշակյան, Անդրանիկ Արշակյան, Ռուբեն Ոշտունի, Գագիկ Սոլոմոնյան, Հովհաննես Ասրյան և այլոք), բացի հազարավոր քաղաքացիներին ու կազմակերպություններին բազմաբնույթ անշահախնդիր իրավաբանական օգնություն մատուցելուց, գործուն մասնակցություն ցուցաբերեց նաև Արցախի ազատագրման և Հայաստանի սահմանների պաշտպանության գործընթացներին: Այս վերջին առումով ընդգծելի է Հայկ Մարգարյանի և Աղասի Արշակյանի գլխավորությամբ ստեղծված երկու կամավորական ջոկատների (առաջին ջոկատի կազմում էին նաև Ջիվան և Պետրոս Աբրահամյանները) գործունեությունը:

Առանձնապես արդյունավետ էր հանձնախմբի կողմից «Հայք» շաբաթաթերթում պարբերաբար հրապարակվող «Իրավական պետության ճանապարհին» հոդվածաշարը: Այստեղ զետեղված, տարբեր իրավապահ մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության նեգատիվ կողմերը վեր հանող հոդվածները ինչ-որ չափով նպաստեցին նշված մարմինների ու անձանց զգոնության բարձրացմանը, նրանց աշխատանքի որակի բարելավմանը, հատկապես կադրային խնդիրների հնարավորինս օրինական ու արդարացի լուծմանը:

Հանձնախմբի անդամներից թերևս միայն Նորիկ Եղիազարյանն ու Հայկ Մարգարյանն էին, որ երկրի համար օրհասական պահին իրենց մասնակցությունը բերեցին 2007թ. նոր, հզոր թափ ստացած համաժողովրդական շարժմանը և ներկայումս էլ շարունակում են ազգանվեր գործունեությունը:

ՌԴ ՀՌԻ նախարար Պավել Գրաչով և Մուրադ Կիրակոսյան

Իրավաբանների ջոկատ. հրամանատար՝ Հայկ Մարգարյան (աջից առաջինը), Նոյեմբերյան, 1990 թ.

Լևոն Տեր-Պետրոսյանի անվտանգության վարչության ջոկատի հրամանատար Գևորգ Տեր-Գևորգյան (ձախից կանգնած առաջին շարքի երրորդը)

ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԳՈՒՄԱՐՏԱԿ

Եղեգնաձորի գումարտակի հրամանատար Ռուբեն (աջից) և փոխհրամանատար Արամը մարտական դիրքերում. 1989 թ.

Հայտնի ճշմարտություն է, որ կռվի դաշտում զորքի հաջողության գործոններից մեկը զինվորի հոգեբանական-կամային պատրաստությունն է, որը ենթադրում է ամուր կարգապահություն և դասալքության բացառում: Ըստ Գ.Նժդեհի «Հոգեբանական գերադասությունը բարոյական ուժ է»:

Հիշենք՝ Ավարայրի ճակատամարտում հայոց բանակը տարավ բարոյական հաղթանակ:

Եղեգնաձորի հիմնադիրներից են եղել Ավագյանները (Ավոները): Արմենակի պապը՝ Արշակը, Գ.Նժդեհի զինակից Յապոնի հետ կազմակերպում և զորագունդը տեղափոխում է Եղեգնաձոր (Քիշիշքենդ), որը եղավ Դարալագյազի կայազորի հիմքը: Մեծ աշխատանք են կատարում, յոթ թնդանոթ մեկ օրում ուղարկում են Գ.Նժդեհի տրամադրության տակ, որի անբաժան զինակիցն էր նույն գողթնցի Ռուբենը: Խրիմյան Հայրիկի հետ ունեցել են ամուր պապենական կապեր: Բոլշևիզմի հալածանքներից մազապուրծ՝ պատսպարվել են Պարսկաստանում: Սա մոտիկ անցյալի անցուդարձից մի փոքր հատված է: Այս անգամ էլ Ղարաբաղը Հայաստանին միացնելու սուրբ գործին անմասն չմնացին եղեգնաձորցիները: Վահան Սաղաթելյանի՝ Երվանդի Ռուբոյի գլխավորությամբ (որի մասին հարկ եմ համարում խոսել առանձին) Արմեն և Արամ Ավագյանների, Սուրեն Ախնազարյանի, Դավիթ Հարությունյանի, Կոլիկ Հախնազարյանի և այլոց նախաձեռնությամբ կազմավորվեց Եղեգնաձորի կամավորական ինքնապաշտպանական գումարտակը, որի հրամանատար ընտրվեց Երվանդի Ռուբոն:

Այդ խիզախ տղաներից Արամը, Համլետը, Հարեն, Գագոն Հաղթանակի զբոսայգու հուշարձանին կանգնած տանկի մասերը գիշերով գողանալու ժամանակ ծերբակալվում են: Տղաները յուղոտ ու մրոտ՝ չգիտեն՝ ինչպես արդարանան: Ինչ-որ ձևով խաբար են ուղարկում Վազգեն Սարգսյանին, որը պահանջում է շտապ ազատել:

Տղաները լողանում են, նոր հագուստներ հագնում, մասերը տեղավորում են փայտե արկղի մեջ, հասցնում Եղեգնաձոր և վերանորոգում են T-34 տիպի տանկը: Այն մասնակցում է մարտական գործողություններին: Եղեգնաձորում ի նշան հաղթանակի՝ կանգնեցվում է հուշարձանի պատվանդանին՝ փողը ուղղած թշնամուն:

1990 թ. հունվարի 23-ին Եղեգնաձորը ունեցավ առաջին զոհը՝ Արենի գյուղի ջոկատից Վարուժան Ոսկանյանը, վիրավոր՝ Նազար Կարախանյանը:

Առավել աչքի ընկան Խաչիկ Ռուբենի Գրիգորյանը, Վարուժան Մուշեղի Մարգարյանը, Համազասպ Սուրիկի Արսենյանը, Գոհար Արտուշի Հայրապետյանը, Նորիկ Ֆելիքսի Ղազարյանը, Վրույր Արտաշի Մարտիրոսյանը, Սերյոժա Արսենի Արզումանյանը, Հեղինե Երեմի Հակոբյանը, Արսեն Բաբկենի Աղաբեկյանը, Միսաք Ավետիքի Քոչարյանը, Սամվել Հակոբի Գրիգորյանը և այլ ազատամարտիկներ: Արամ Վոլոդյայի Ավագյանը ծառայել է խորհրդային բանակում՝ որպես դեսանտ գրոհային:

Հերոսաբար զոհվեցին Հունանը և Գալուստ Բախշիի Բաղդասարյանը, ով վիրավորված գիշերն անօգնական էր մնացել: Առավոտյան իրեն մոտեցող թուրքերի վրա Գալուստը նետում է ձեռքի երեք նռնակները և զոհվում: Իսկ Նորայր Ջիվանի Սարգսյանը, Արծրուն Մարատի Հակոբյանը, Գագիկ Պողո-

Եղեգնաձորի գումարտակ, Կորբա, 1992 թ.

սի Միքայելյանը, Մեհրաբ Հակոբի Գրիգորյանը մարտնչեցին անմռունչ:

Գումարտակի կազմում Գոհար Հայրապետյանի («Գուգուշ»), Հեղինե Հակոբյանի՝ որպես բուժքույր, ընդգրկման կապակցությամբ ջոկատի հրամանատար Խաչիկ Ավագյանն առարկում էր: Աղջիկների համառությունը կոտրեց նրա դիմադրությունը:

Սիրակը և Դերոն իրենց խմբերով ընդգրկվեցին գումարտակի կազմում 1992 թ. Ծուռնուխի ինքնապաշտպանական մարտերի ժամանակ (սև զինվորական համազգեստ հագնում էին միայն «Արաբո» ջոկատի ազատամարտիկները): Գիշերը կատարվում էր հերթափոխություն: Առիթ կար խնջույք կազմակերպելու: Ռադիոկապով թուրքերի հետ պայմանավորվեցին փոխհրաձգություն չլինի, համաձայնվեցին:

Լուսաբացին Արթուրը՝ «ձուտը», խրամատի մեջ ննջում էր: Մուկը բարձրացել էր նրա սաղավարտին, նստել, արշալույսն

Սիրակ Բաբայանը (աջից երրորդը) մարտական ընկերների հետ

էր վայելում: Դերո Զաքարյանին տեսնելով՝ փախավ մտավ հացի «բուռում»ի մեջ: Արթուրը տեղից վեր թռավ, ձեռքը տարավ հացին, ցույց տալով, որ քնած չէ, հաց է ուտում: Մուկը հացի միջից գլուխը հանեց, սուր աչքերով ծիկվիկ արեց, ցատկեց փախավ թաքստոցը:

Տղաները ծիծաղից թուլացել էին: Արթուրը հացի փոխարեն պատիժ կրեց: Դերոն գնաց թշնամու դիրքերը հետախուզելու: Գնդացրորդ Անյան կրակահերթով շեղեց թշնամու ուշադրությունը՝ ապահովելով Դերոյի անվտանգ նահանջը:

Թշնամու հետախույզները վխտում էին, գողանում անփորձ ու պարծենկոտ մեր հետախույզներին: Մի անգամ մեկի ձին եկավ առանց տիրոջ, նրան գողացել էին:

Մնացել էր հինգ մետր, որ Միշիկը հասներ թշնամու խրամատին, վիրավորվեց, նրան Սամվելի հետ գողացան: Ձեռքերի մատները մամլիչի տակ ճզմել էին, ենթարկել կտտանքների, տանջամահ արել: Դիակը Մեծ եղեռնի օրը՝ ապրիլի 24-ին «նվիրեցին»: Ցինիկաբար հայհոյելով՝ ասում էին իբրև Ծուռնուխը իրենց հողն է, լկտիաբար գոռում էին. «Է՛յ, էրմենիներ, հեռացեք մեր հողից, եթե ոչ բոլորդ կարժանանաք ձեր ընկերոջ ճակատագրին»:

Կար 7 զոհ և 9 վիրավոր, Զաբուխի Կառան նույնպես վիրավորվել էր, եկավ շտապ օգնության ավտոմեքենան, բժշկուհին հղի էր: Գոհարը ամուսնացել էր, երեխա չէր ունեցել: Տեսավ, զարմացավ, հարցրեց. «Բժշկուհի՛, ի՞նչ ռիսկի տեր մարդ եք, որ այդ վիճակով եկել եք ռազմաճակատ»: Բժշկուհին պատասխանեց.«Իմ գործը այդպիսին է, թող իմ երեխան ծնվի պատերազմի դաշտում»: Դեղորայքը վերցրին, բժշկուհուն ճանապարհեցին Գորիս:

Զանգեզուրի երրորդ գումարտակի հրամանատար Սուրեն Խաչատրյանը Գոհարի և Հեղինեի բուժաշխատանքները բարձր էր գնահատում, գովեստի խոսքեր ասում: Այն շատ անգամ հաղորդվում էր Գորիսի ռադիոհաղորդումներով;

Մի անգամ կռվի թոհուբոհի ժամանակ Գոհարը ղազանով գառի խաշլամա բերեց: Ուրախ զվարթ գոչեց. «Տղանե՛ր, տաքտաք անուշ արե՛ք»: Մինչ խաշլաման իրար մեջ էին բաժանում, թշնամու գնդակները հասնում էին հայկական դիրքերը: Տղաներից մեկի հետույքից մտել, մնացել էր հաստ աղիքի

Աջից Միրակ Բաբայանը զինակիցների հետ

մեջ: Գոհարը վազեց վիրակապելու. վիրավորը ամաչում էր: Կոլիկը ձայնեց. «Մի ամաչիր, տղա՛ս, մեր աղջիկներից: Հետույքներդ բուժեք, առաջներդ պարզեք թշնամուն»: Այդ խոսքերին հաջորդեց Ալազան տիպի հեռահար հրթիռների ռմբակոծությունը: Կոլիկը բղավեց.

- Աղջիկնե՛ր, թողեք այդ հետույքային գործերը, թշնամին գրոհում է, անցեք գրավեք պաշտպանական դիրքեր:

Տղաներից մեկը խոսքը շեղեց.

- Մեզ վրա 36 ոտանի ոջիլ կա, գնանք օճառով լողանանք, շուտով հարսանիք է լինելու, խաշլամի ջրով կենաց ասենք ու մի լավ քեֆ անենք, թշնամուն մի լավ դաս տանք:

Գետաշենի հարևան Կամո գյուղից Միքայել Մովսեսյանը ֆագոտայով երեք տանկ, երեք ՀՄՄ էր ոչնչացրել: Խմիչքի հետ սեր ուներ, խոսքի մեջ մտավ, տաք-տաք զրուցում էր:

- Քառասուն հոգով կռվում էիք ութսուն թուրք բաշիբոզուկների դեմ:

Ծինուհայր գյուղի Ռազմիկի ոտքը ջախջախվել էր, վիրակապում էին: Հալիձորի ջոկատի հրամանատար Միշիկը քափ ու քրտինքի մեջ էր:

Մի անգամ հետախուզության ժամանակ թուրքերը դեմառ-

դեմ աշխատում էին գերեվարել հայ հետախույզներին: Դերո Զաքարյանը կրում էր ծալովի կարճ կոթով դեսանտային ավտոմատ, ճարպիկ շարժումներով ոչնչացրեց հակառակորդին: «Գուգուշի տղան»՝ Սաշիկը, Դերոն կարողանում են ճեղքել թշնամու օղակը, դուրս գալ մոտակա անտառ: Երեք օր անջուր, անսնունդ, սնվում էին մասուրով, անտառի հատապտուղներով:

Հոչազի ծանր մարտերի ժամանակ ԱԻՄ-ի Հովիկ Հովհաննիսյանի խումբը, որ անծանոթ էր տեղանքին, տխրահռչակ վախճան ունեցավ. ընկան շրջափակման մեջ, բոլորին դաժանորեն կոտորեցին: Նրանցից երկուսը կանայք էին՝ Աղունը Երևանից, Ալվարդը՝ Մարտունիից: Տղաների առնանդամները, աղջիկների ստինքները և բոլորի ձախ ականջները կտրել էին: Գոհարը Հեղինեի հետ՝ դիակները տեսքի բերելու ժամանակ, այդ զարհուրելի տեսարանից սրտխառնոց են ունենում: Ապարանցի Ֆեդյան ջոկատով գնում է օգնության, ընկնում է նեղ դրության մեջ: Օգնության է գնում Դերո Զա-

Սյունիքի աշխարհազոր, 9-րդ ջոկատ, հրամանատար Նորայր Խանզադյան (նստած 2-րդ շարք երկրորդ, Սիմավան 9-րդ գյուղ, 1992 թ.

քարյանը, որ հայտնվում է խառնաշփոթ կացության մեջ: Տեղ գյուղի ջոկատի հրամանատար Մելոն՝ «Ուրալ» ավտոմեքենայի վրա տեղադրած «Շիլկա» զենքը ՀՄՄ-ի հետ ուղարկում է օգնության: Ճանապարհին զոհվում է մեխանիկ վարորդը: Վիրավորվում է զինվոր Արսեն Աղաբեկյանը:

Վիրավորներին մարտադաշտից աննկատ հանելու համար ավտոմեքենան՝ լապտերներն անջատած, դանդաղ ընթանում էր արագաքայլ Պարույր Հայրիկյանի հետևից:

Սեպտեմբերի 29-ին հրազենի գնդակից՝ արկի բեկորից վիրավորվում է Դերո Հաքարյանը: Ռուբո Մարկոսյանը նրան գբրկած կարողանում է հանել կրակագծից: Տեղափոխում են Երևանի «Էրեբունի» հիվանդանոց: Կնոջ՝ Կարինեի մարմնով դող է անցնում: Նա զենքերը թաքցրել էր բազմոցի մեջ: Ֆեդյան գնում է այցի, վերադառնում է ռազմադաշտ և զոհվում:

Հարենցավանի «Հրայր Դժոխք» ջոկատը այդ ժամանակ Հոչազի Հագուրի գետի մյուս ափի Քաշաթաղի Տիգիք-1, Տիգիք-2 բարձունքների համար էր մարտնչում: Տողերիս հեղի-

Չախից երրորդը ԳՄ Յուրի Խաչատուրովը, Սիրակ Բաբայանը զինակից ընկերների հետ, 1995թ.

Համազասպ Արսենյանն իր մարտական ընկեր Կոլիկ Հախնազարյանի հետ

նակը՝ Ալբերտ Մուսինյանի հետ գեներալ Մուրազ Սարգսյանի մոտ իմացանք այդ չարաբաստիկ լուրը:

Քաշաթաղի ունիվերմագի շենքում էր տեղավորված ռազմական շտաբը. քափ ու քրտինքի մեջ՝ ներս մտավ եղեգնաձորի գումարտակի փոխհրամանատար, ազնիվ ու քաջ հոգու տեր Արամ Ավագյանը: Քարտեզագրել էր «Կոբրա 2» բարձունքի հարձակման պլանները: Քննարկման համար ներկայացրել էր գեներալներ Հրաչ Անդրեասյանին և Մուրազ Սարգսյանին:

1992 թ. օգոստոսի 20-ին «Կոբրա 2» բարձունքում Եղեգնաձորի գումարտակը թեժ մարտերի մեջ էր:

- Արզումանյան Սերգեյը, Բագրատ Մաթևոսյանը մեզ ոգևորում էին, 10 օր քուն ու դադար չունեինք,- պատմում է Համազասպը,- թրջված, հոգնած մտա խրամատ՝ շունչ քաշելու: Վարդան Օհանյանն իրեն գցեց խրամատ, ոտքով հարվածեց կոնքիս, բղավեց՝ քնելու ժամ ես գտե՞լ, վեր կաց, թուրքը հեռահար ռմբակոծում է: Ուշադրություն չդարձրի, գերհոգնած էի, կիսաքուն ննջում էի, նորից բոթեց, մղձավանջի մեջ էի: Տեղափոխվեցի, հեռու փոսի մեջ պառկեցի: Լսվեց պայթյունի ձայն, ռումբը հարվածեց իմ առաջվա պառկած տեղին, Վարդանը վիրավորվեց: Հասա օգնության, Վասյան՝ «Ուրալի» վարորդը, ուզում էր «Ուրալով» Վարդանին տեղափոխել: Ես առարկեցի. թիկունքից հաց բերող էշի վրա դրեցինք, հասցրինք դաշտային բուժկետ:

Վերադարձանք խրամատ, խոսում էինք դեսից դենից: Աֆղանստանում կռված ռուս մայորը ասաց.

- Տղանե՛ր, ես վաղը մարտնչելու եմ, դուք պիտի մնաք կենդանի:

Ազդեցիկ էին նաև գնդապետ Ռոմիկ Մարդանյանի խոսքերը.

- Զոհվելն արգելվում է:

Այնպես հանդիսավոր, բեմական արտասանեց, որ մեզ բոլորիս ոգևորեց:

Երեկոյան որոշեցինք 50 գրամ խմել, մոտներս Ղարաբաղի 40 լիտր կոնյակ կար, խմեցինք, բան չհասկացանք: Առաջարկեցի 50 գրամ էլ խմել ու բաժակաձառում շարունակեց զարգացնել ասելիքը.

- Վաղը փառավոր որս է լինելու, բայց մի ժամ հետո թուրքերը մեր հենակետերին խփելու են:

Եղեգնաձորցի նկարիչ Ասատրյան Սամվելը նախատեց.

- Էլի կռկռացի՞ր: Ինչ ասում ես, կատարվում է:

Այդ պահին թշնամու ռումբերը թռչում էին մեր գլխավերևով:

- Տեսա՞ր, Համազասպ,- ասաց Սամվելը,- կռկռոցդ գորտնուկի պես ինչի՞ հասցրեց:

Վերակարգ նշանակելուց հետո գնացինք զինվորների մոտ՝



Սիրակ Բաբայանը, Խաչիկ Մալխասյանը մարտական դիրքերում

հանգստանալու: Տրվեց տագնապի նշան, թշնամին անցել էր գրոհի: Համազասպը քնած էր, արթնացավ: Սև համազգեստով «Գորշ գայլերը» մոտ 800 մետրից 4 տեխնիկայով, 2 ՀՄԱ-ով, 2 տանկով ուռա գոռալով՝ գրոհում էին:

Զայնեցինք ֆագոտչիկ Տիգրանին ու արագ դիրքավորվեցինք: Տիգրանը խփեց տանկը. այն բոցավառվեց, կորավ ծխի մեջ: Անձնակազմը դիմեց փախուստի: Այս տեսարանը տղաներին ոգևորեց:

Վանկարկեցինք՝ Տիգրա՛ն, Տիգրա՛ն: Խփեց երկրորդ տանկը: ՀՄՄ-ն թեքեց ուղղությունը՝ դեպի անտառ թաքնվելու: Տիգրանի 4-րդ հարվածից ՀՄՄ-ն անշարժացավ: Հարվածից առջևի մասը պոկվեց, գլորվելով իջավ ձորը: 2-րդ ՀՄՄ-ի արկերը վերջացել էին, ծողոպրեց, գնաց լիցքավորելու: Նրա հարվածներն անարդյունք էին:

Մեր զինամթերքը վերջանում էր: 3-րդ մարտն էր: Սեպտեմբերի 24-ից անցել էր 10 օր, խրամատից դուրս չէինք գալիս: Թալինի նշանառու Ջոնը մտավ խրամատ, պարծենալով դիմեց Համազասպին.

- Տեսնու՞մ ես ՀՄՄ-ի վրա նստած թուրքին: Հասած տանձի պես գցեմ ներքև:

Հարվածեց, թուրքը վեր թռավ, ընկավ, անշարժացավ: ՀՄՄ-ն փախավ:

Օդում երևացին երեք ուղղաթիռներ: Մեկը թռչում էր առջևից՝ որպես հետախույզ: Արամը հրաման տվեց թաքնվել: 27 հրթիռ բաց թողեց, արագ շրջվեց ու անցավ լեռան թիկունքը: Հայտնվեցին երկու ուղղաթիռներ, կասետային ռումբեր թափելով մեր դիրքերի վրա, անարդյունք անհետացան:

Ծուրջ մեկ ամիս «Կոբրա-2» բարձունքի մարտը վարում էր Ռոմիկ Վարդանյանը, այն ձեռքից ձեռք էր անցնում: «Գորշ գայլեր» խմբավորումը գրավել էր բարձունքը, առավելությունը վերցրել իր ձեռքը:

Եղեգնաձորի գումարտակը «Ուրալ» ավտոմեքենայի մեջ դիակներ ու վիրավորներ, մարտեր վարելով՝ նահանջում էր: Մարտերը ղեկավարում էր գումարտակի հրամանատար Արամ Ավագյանը:

Հոկտեմբերի 6-ին Վ. ՍՊԱՐԱՊԵՏԻ առանձին հրամանով

գումարտակը անցավ հակահարձակման:

«Գորշ գայլերը» մեկ շաբաթվա մեջ կարողացել էին ամրանալ իրենց հենակետերում Ստրոյկա կոչվող բարձունքում: Օգնության եկան Գորիսի, Մալիշկայի, Արենիի, Սիսիանի, Աբովյանի ջոկատները: Ուղտասարից, Բերդաձորից, Կոբրայից դեպի Գյուլիբերդ երեք ուղղություններով կազմակերպվեց եռանկյունաձև հարձակման օպերացիա:

Միքայել Գրիգորյանը ընտանիքի հետ, 1992 թ.

Կոբրայից դեպի ներքև՝ Մուզուրտլուի ուղղությամբ ընթացող մարտերի ժամանակ գտան Արենիի ջոկատի զոհվածներից հինգերորդի՝ Գալուստի վառված դիակը, որն արդեն նեխում էր: Արամ Ավագյանի կարգադրությամբ դիակը հասցնում են հարազատներին:

Արամ Ավագյանը Սովետաշենի զինվոր Կարենի վիրավոր մարմինը տեղափոխելու ժամանակ վիրավորվում է, կոնտուզիա ստանում: Բեկորները մինչև օրս աչքի և թևի մեջ շարժվում են: Բեկորները հարվածում են պահեստատուփին, կտորկտոր անում, իսկ սվին-դանակին հարվածելով՝ չեն խրվում մարմնի մեջ:

Արամի մարմնի ջերմությունը հասնում էր 41 աստիճանի: Բուժքույր Գոհարը մերկանում է և փաթաթվում Արամի մեջքին, բուժում:

Արենի ջոկատի կազմավորող, 4 երեխայի հայր՝ Միքայել Անուշավանի Գրիգորյանը, Ղարաբաղյան շարժման ժամանակ գյուղխորհրդի նախագահ էր, ջոկատի շտաբի պետ Մասիս Ղազարյանի հետ, որը թև ու թիկունք եղավ Միքայելին, խրամատի մեջ հարձակման քարտեզագրում էին կատարում:

Միքայելի պապը Խաչիկ գյուղից էր: Երեք եղբայր էին, կուլակաթափ արեցին, աքսորում սպանեցին: Իր նախնիներին հավատարիմ մնալու համար ջոկատի տղաներով համախմբվեցին ու ազդարարեցին.«Կանք ու կլինենք, այլևս նահանջի տեղ չկա, կորցնում ենք և՛ երկիրը, և՛ ժողովուրդը»: Այս նշանաբանով հետևեցին Եղեգնաձորի տղաների օրինակին և սկսեցին խորհրդային բանակի զորամասերից մասեր հայթայթել Т-55 տանկի համար:

Հավաքվեցին գյուղի տրակտորիստ-մեխանիզատորները, տանկիստները: Անդրանիկի խափանված տանկը վերանորոգեցին:

Տանկը փորձարկելու համար սլացավ Նորավանքի ձորը: Գյուղի ողջ ժողովուրդը խանդավառության մեջ էր: Ահել ու ջահել զուռնա-դհոլով հավաքվեցին տանկի շուրջը, որի փողից արձակած արկը դիպավ թիրախին: Գյուղի ծեր, ազդեցիկ մարդիկ օրի բացեցին, կենաց խմեցին՝ մաղթելով խաղաղություն: Տանկը իր երթով սլացավ Խաչիկ գյուղ և մասնակցեց ինքնապաշտպանական մարտերին: Երկրորդ արկը ուղղեց թշնամու դիրքերի վրա, վերջինս հանկարծակիի գալով՝ ընկավ ահուսարսափի մեջ:

Միքայելն այդ ժամանակ հասցրեց 40 տոննա վառելանյութ ուղարկել Արցախ: Տանկը Խաչիկ գյուղից չկարողացան տեղափոխել «Կոբրա 2»:

Սեպտեմբերի 29-ին «Կոբրա 2» պաշտպանական դիրքերում վիրավորվեց քաջազուն, խիզախ Միքայելը: Թշնամու հրազենի գնդակը ծակել էր սաղավարտը և ցնցել Միքայելի գլուխը, որից նա անուժ ընկնում է մոշի քոլերի մեջ. ընկերները նրան հասնում են օգնության:

Կինը՝ Սոնան, այդ օրն անհանգիստ էր, լուր եկավ, որ Արենու ազատամարտիկներն ընկել են շրջափակման մեջ, հինգ հոգու վիճակը ծանր էր՝ Բաղդասարյան Գալուստի, Գրիգորյան Մեհրաբի, Հակոբյան Արծրունու, Միքայելյան Գագիկի,

Սարգսյան Նորայրի: Այդպես էին հայտարարել, որպեսզի այդ մեծ կորուստից գյուղի սիրտը չծաքեր: Հինգը զոհ, ասելը հեշտ է... Սոնան պատկերացրեց, որ ամուսնու ոտքը և ձեռքը կտրվել է, մի ձեռքը պարզած իրենից ջուր է խնդրում: Այդ մղձավանջը ցնցեց նրան:

Չորս ամիս առաջ մայիսի 8-ին ուղղաթիռը իջավ Արենի մարզադաշտում: «Արաբոյի» տղաները հայտարարեցին Ծուշիի ազատագրման հաղթանակի լուրը, ոչ ոք չհավատաց, ինչպես նաև խաչիկցիներին և մեզ անհավատալի թվաց: Պատմում էին, որ Ծուշիի Ղազանչեցոց եկեղեցին վերածել էին «Գրադ» կայանքի ու հրանոթային արկերի զինապահեստի:

Խաչիկ գյուղի սովխոզի նախագահ Վաչագան Պողոսյանը իր երախտագիտությունն էր արտահայտում եղեգնաձորի Ռուբոյին, որը կազմակերպել էր Խաչիկ գյուղի ինքնապաշտպանությունը: Նրա 94 տարեկան պապը՝ Ռուբենը, ասել էր՝ սովետը կքանդվի, ես կենդանի չեմ լինի, Արևմտյան Հայաստանը կմիացնեն Արևելյան Հայաստանին: Վաչոն շատ էր ուրախացել, պապի ասածները մասամբ կատարվում էին:

Միքայելը հրադադարից հետո ձեռնարկեց զարգացնել Արենու գինու արտադրությունը և տնտեսած գումարից բաժին հանել Ազատագրում գրքի 3-րդ հատորի հրատարակման համար:

Աղդամում տեղակայված խորհրդային բանակի զինապահեստներից առանց դիմադրության ադրբեջանցիները զավթել էին 728 վագոն հրետանային, 245 վագոն հրթիռային արկեր, ավելի քան 130 վագոն հրաձգային զենք ու զինամթերք և ակտիվորեն Արցախի մայրաքաղաքն ու նրա հարակից շրջանները հրետակոծում էին: Այդ արկերից ինձ էլ բաժին հասավ, փառք Աստծու, ձեռքս, ոտքս չկտրվեց: Կինս՝ Սոնան էր պատմում իրեն հայտնված այդ մղձավանջի մասին:

Մեր յուրաքանչյուր ազատամարտիկ մի վայրի ժայռի է նման, նրանց տաշել, ծռել, ձև տալ դժվար է:

Կարելի է միշտ կրկնել. Վազգեն Սարգսյանը միակ ՍՊԱՐԱՊԵՏ զորավարն է, ինչպես Սուվորովն է եղել, որը ոչ մի զինվոր չի սպանել, գնդակահարման հրաման չի տվել:

Պատմաբաններ Ավետ Հայրապետյանը, Արմեն Կարապետյանը ջերմ զրուցում էին Միքայելի հայրենի գյուղի տանը: Թշնամին ռմբակոծում էր գյուղի դպրոցը և մանկապարտեզը: Երեխաները ահուսարսափի մեջ՝ նկուղներից դուրս չէին գալիս:

Միքայելի տունը Արենի-Արցախ գնացող ճանապարհի խաչմերուկի վրա էր, որտեղ իջևանում, հավաքվում, հանգստանում էին մարտական ընկերները և շարունակում է ճանապարհը:

«Արցախ գնալու ճանապարհին հանդիպեցի Նշանին, գնում էր Երասխավան: Նայեցինք Սուրբ Նշան սրբավայրին, երեսներս խաչակնքեցինք: Այնտեղ էր Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԸ 1989 թ. նոյեմբերի 15-ին երդում տվել: Իր ջոկատով մայիսի 18-ին հավաքվում են Սուրբ Նշան սրբավայրում և տոնում յոթ շրջանների ազատագրման հաղթանակը, երդվում հավատարիմ մնալ սպարապետի գործին Աստծուց խնդրել՝ պահպանել հայ ժողովրդին»...

Նշանի պապը՝ Ռաֆայելը, մատաղ է անում, որդուն՝ Սերոբին, պատվիրում սեղան սարքել և տեղադրել այդ սրբավայրում: Որդին կատարում է հոր խնդրանքը:

Սրբավայրը պահպանող Օնիկը երազում տեսնում, Սերոբին օրհնում է և Սուրբ Նշանից խնդրում, որ նրան արու զավակ պարգևի: Ծնվում է Նշանը: Հետագայում նա մասնակցում է Երասխավանից մինչև Օմարի գագաթի մարտական գործողություններին: Թշնամու նշանառուի գնդակից վիրավորվում է երեսի աջ այտը, իսկ ականանետի արկից՝ որովայնը: Եվ այդպես Սուրբ Նշանը նրան փրկում է մահից:

1993թ. Արամ Ավագյանը իր 12 արծիվներով Մարտակերտի պաշտպանական գումարտակի կազմում, որի հրամանատարն էր Նորիկ Դանիելյանը, մարտնչում էր Սարսանգի ջրամբարի պաշտպանության համար;

Հորադիզի ծանր կռիվների ժամանակ առաջին եռամսյա հավաքին 96 հոգուց 60 ազատամարտիկ ԵԿՄ-ի անդամներ, ուսումնամարզական պարապմունքից հետո մեկնեցին առաջին ռազմագիծ՝ Արաքսի ափից մինչև Հորադիզ Մարջալու: Այդ ժամանակ չորս խոզ էինք խփել, հյուրասիրեցինք: Բոլորիս առանձին-առանձին ծանաչում էր: Սրտանց հարգում, սիրում էինք ՍՊԱՐԱՊԵՏԻՆ: Նա ասաց.

- Մեր խաչը ոչ ոք իր ուսին չի վերցնի, բացի մեզանից: Մինչև վերջ պիտի տանենք: Կան շահամոլներ, որոնք թիկունքում լուծվող հարցերի արանքում իրենց փառքն ու շահն են աշխատում տեղավորել: Այդ բառերի վրա Արամն ավելացրեց.

- Լողված, ձեռնպահ մարդկանց չեմ հարգում: Ներոնը ձեռնպահ մարդկանց գնդակահարում էր:

Խոսքի մեջ մտավ Համազասպը.

- Սպարտակի մենամարտն եմ սիրում, կամ վահանի վրա, կամ վահանը ձեռքին:

Հորադիզ գնալուց առաջ Արենիում տարաձայնություն սկսվեց, եկավ Սուրեն Խաչատրյանը, հարթեց այդ խոչընդոտը: Համազասպը այդ ջոկի հրամանատարն էր, զինվորական կարճ բահը կողքից քարշ էր տալիս, տղաները ծիծաղում էին: Մարջալուի ուղղությամբ դիրքավորվեցինք, ռմբակոծության ժամանակ բահով խրամատ փորեցինք, կյանքներս փրկեցինք:

Փետրվար ամիսն էր՝ օդի էինք թորում: Կոլիկ Հախնազարյանը մոտեցավ, կքանստեց, ուզեց քամած օդուց մի բաժակ

Եղեգնաձորի գումարտակ: Խաչիկ գյուղի ինքնապաշտպանության ժամանակ, աջից՝ Եղեգնաձորի Ռուբեն, 1990 թ.

համտես անել: Թշնամին Գրադ կայանքից ռմբակոծում էր: Կոլիկը սաղավարտը գլխից հանեց, օդու բալոնով շիշը ծածկեց: Բոլորը ծիծաղեցին.

- Կոլիկ ձյաձյա, բա որ ասում են գինին շառ է: Օդին թույլերին կյանքից դուրս է շպրտում: Երբ գինովնում ես, գլուխն օդուց չես տարբերում:

Հունանը և Սաշիկը ձեռքով-ոտքով խոսում էին Կոլիկի դատավարության մասին: Սաշիկը մատների վրա ցույց տվեց՝ երեք, հետո՝ զրո, տղաներն ասացին.

- Դա արդեն լուրջ գործ է:

Իրար հետ խոսում էին դեմքի միմիկայով և ձեռքերի մատների շարժումներով: Կոլիկը նստած էր ավտոմեքենայի ղեկին:



Սիրակը մարտական ընկերոջ հետ

Արամ Ավագյան

1999 թ. ՍՊԱՐԱՊԵՏԸ եղեգնաձորում էր, ջղայնացած էր, նկատեց Արամին.

- Ի՞նչ կա չկա, Արա՛մ:

- Պարոն Սպարապե՛տ, հավաքվածներից շատերը հաշմանդամներ են, պրոտեզավորման կարիք ունեն:

Կանչեց ֆինանսների նախարար Վարդան Խաչատրյանին ու կարգադրեց 10-15 հազար ԱՄՆ դոլարին համարժեք դրամ հատկացնել մեկ շաբաթվա ընթացքում: Հարցը լուծվեց նշված ժամկետում:

Չանցած մի քանի օր՝ գնացի մոտը, հետաձգեց հոկտեմբերի 29-ին: 27-ին գնացինք որսի, նապաստակը մեր առջևից փախավ, ընկանք հետևից, «Վիլիսն» ընկավ ջրափոսի մեջ: Այդ օրը լսեցի, որ Վ.ՍՊԱՐԱՊԵՏԻՆ խփել են, չհավատացի: Եղբայրը՝ վարչապետ Արամ Սարգսյանը, կանչեց մոտը, տվեց հրամանը, ասելով.

- Վ.ՍՊԱՐԱՊԵՏԻ արձանագրության փաթեթի մեջ նշված էր, որ դու նշանակված ես Եղեգնաձորի անտառտնտեսության պետ: Ահա՛, հրամանը, գնա՛ աշխատանքի: Հայրս ասում էր. «Որդիս՝ Արամը բնության սիրահար է: Բնություն սիրողը վատ բան անել չի կարող»:

Լաչինից հասա Երևան, ՍՊԱՐԱՊԵՏԸ զարմացավ և ասաց.

- Դու հո Թուլաթը չես: Ես Վազգեն Սարգսյանի խոսքը գետնին չեմ գցել, ձեռքը վիրակապած էր, հարցրի՝ ի՞նչ է եղել, ասաց՝ ոչինչ մեքենան շուռ եկավ:

Սուրենավանի Դուշման Կարոն առաջինը հասավ ավտովթարի վայրը: Ալ կարմիր «Մերսեդես» ավտոմեքենան էր:

Սենիկը մի առիթով բաժակաճառում ասաց. «Արմինե Գրիգորյանի և Վազգեն Սարգսյանի թևերը կապենք, տանենք տանք Գրետա մայրիկին»:

Երկիրը միլիարդ տարեկան է, արևի շառավիղը՝ 300 մլն. կմ, բոլոր մոլորակները պտտվում են արևի շուրջը: 19 միլիոն աստիճան ջերմություն ունի, երկրից հեռու է 150 մլն.կմ: Արեգակի կյանքի տևողությունը 5 միլիարդ տարի է: Արեգակը բազմագույն է, 90 %-ը ջրածին է: Եվ Հայաստանը պետք է վերականգնի իր հզորությունը:

1990թ. նոյեմբերի 20-ին Եղեգնաձորի գումարտակին օժանդակելու նպատակով կազմավորվեց 15 հոգուց բաղկա-

Մանվել Եղիազարյան. «Արաբո» 1992 թ.:
Լուսանկարը՝ կինոռեժիսոր Ռուբեն Հովհաննիսյանի:

ցած «Արաբո» ջոկատը: Հրամանատար նշանակվեց Դերենիկ Հրաչի Զաքարյանը, թիկունքի գծով ընտրվեց կինը՝ Կարինեն՝ երեք երեխաների մայրը:

«Միշտ մտածել եմ՝ այս բոլորը թող հիշողություն լինի: Վ. Սարգսյանին շատ եմ հարգել: Բոլոր կանանց կոչ էի անում գալ մարտադաշտ, թիկունք կանգնել իրենց ամուսիններին: Ամուսինս՝ Դերոն, փխրուն սիրտ ունի: Հուզվեց, երբ 1992թ. Հոչազում թշնամու քթի տակից կրակների միջից, կյանքը վտանգելով, հանեց ընկերոջ դիակը և ուղարկեց Երևան: Կանանց ու երեխաների եմ փրկել»,- պատմում է Կարինեն:

Մարտական ընկերներով՝ տանկիստ Սահակը, Մարտինը, պատմաբան Արմեն Կարապետյանը, Արամ Ավագյանը, ճշմարտախոս Արմենը, Արսենը, Եղեգնաձորի քաղաքապետ Սիրակը, հավաքվել, վերհիշում էինք պայքարի ծանր ու թեժ օրերը: Վարդան Խաչատրյանի և Սիրակ Բաբայանի կանայք հղի էին: Չարենցավանում արտադրված ձեռքի նռնակների և հա-

կատանկային նռնականետերի արկերի փորձարկման ժամանակ Վարդանի մեծ եղբայրը՝ Արմենը, ասաց.

- Դուք երեխաների եք սպասում, թողե՛ք փորձարկումը ես կատարեմ: Հակատանկային նռնականետով փորձարկելուց, թռչող նռնակի արձակած բոցից բռնկվում է Արմենի բամբակե բաճկոնը: «Հոչազից թուրքերը ռմբակոծում էին,- պատմում է ճշմարտախոս Արմենը,- մեր դիրքերը ժայռոտ ու քարքարոտ էին, խրամուղիներ պատրաստել դժվարանում էինք: Այնքան շատ արկ էր թափվում մեր գլխին, որ բեկորները ծակծկում էին մեր հագուստները:

Սիսակը, լինելով պատմաբան՝ հիասթափվել էր Խորհրդային պետությունից, լցվել ատելությամբ, երբ աստղանիշով ուղղաթիռը ռմբակոծում էր հայկական խաղաղ բնակավայրերը և դաժանաբար քարուքանդ անում հայկական պաշտպանական հենակետերը:

Եղեգնաձորի ջոկատների հիմնադիրներից Արամ Ավագյանի հայրը թաքուն զենքեր էր վերանորոգում: Մոսին հրացաններ նվիրեց Սիրակին, որդուն՝ Արամին, Արմենին: Դա

Սևաղա, Գոհար, Մելիքսեթ, Գորիս, 1992 թ.

«Արաբո» ջոկատի Դերո

Վեղու «Անդրանիկ» ջոկատի հրամանատար Առաքել

1990թ. էր: Մալիշկա գյուղի անվտանգ հատվածում թաքուն փորձարկում էինք զենքի հզորությունը: Խոսակցության մեջ Դերոն Սիսակին և Արմենին հիշեցրեց թե ինչպես իրենց ջոկատը 23 հոգի էին՝ Սաշիկ, Արթուր՝ «Ճուտ», Մարտիկ, Արսեն Աղաբեկյան, ռուս Սանյան, Արթուրը, Բուրթել Վարյամ, Յուրան և այլն, Հոչազի շրջափակումից ապարանցի Ֆեդյան՝ դաշնակների, Արաբոյի, ԱԻՄ-ի ջոկատների օգնությամբ կարողացավ Արշո Փայտյանի հետ թշնամու ծուղակից ազատվել: Տեղ գյուղի ջոկատի հրամանատար Մելոն էլ էր օգնող ջոկատների մեջ: «Ուրալ» ավտոմեքենայի վրա տեղադրել էին «Ծիլկա» զենիթային ինքնագնաց կայան և գրոհով իրականացրին այդ խելացի օպերացիան:

1992 թ. գարնանը Վ. Սարգսյանը եկավ մեզ մոտ՝ Հոչազ և ասաց.

- Բոլոր ջոկատներն այսուհետև ըստ հրամանի՝ որպես պայմանագրային ջոկատներ, մտնում են նորաստեղծ ՀՀ ԶՈՒ կառույցի մեջ և ենթարկվում են ՀՀ պաշտպանության նախարարությանը: Նախարար ինձ են նշանակել: Մի բռունցք պիտի դառնանք՝ ուժեղ ու միասնական: Տղե՛րք ջան, բոլորս մեկ

ենք, լինի զինվոր, թե նախարար, բոլորս հավասար ենք հայրենիքի առաջ: Մեր սուրբ հողի համար լինենք թև ու թիկունք և Ադրբեջանի կողմից հարկադրված պատերազմում հաղթած դուրս գանք:

Դերոն այս պատմելով՝ ավելացրեց նաև, որ կինը զենքը թաքցնում էր բազմոցի մեջ: Մայրը՝ Լենան, կնոջը նախատում էր, թե ինչի՞ են բազմոցների շորերը պատառոտված:

«Վիլիս»-ով զենք էինք տեղափոխում: Չիման գյուղի անցագրային կետում կանգնեցրին: Հայաստանում այդ օրերին պարետային ժամ էր: Հսկիչ պահակները ռուսներ էին: Հարցրին՝- հայ եք և բաց թողեցին՝ ասելով. «Չվեք այստեղից քանի վերադասը չի իմացել»: Անձը հաստատող փաստաթղթերով փրկվեցինք:

Պատմաբան և հրապարակախոս Արմեն Կարապետյանը 1987 թվականից, երբ դեռ Համալսարանի պատմականի 5-րդ կուրսի ուսանող էր, ակտիվ վերաբերմունք է դրսևորել հայկական հարցի և հայ ազգային ազատագրական շարժման հանդեպ: Նա ամբողջ հոգով ողջունեց 1988 թ. փետրվարյան ազգային զարթոնքը և հանդես եկավ որպես նրա եռանդուն պաշտպան ու քարոզիչ:

Պատմաբան Արմեն Կարապետյան

1988-1994 թթ. պատմաբանը հանրապետական և այլ կարգի պարբերականներում մշտապես ակտիվորեն պաշտպանել է արցախահայության քաջարի պահվածքն ու վարքագիծը, հայկական հերոսական անցյալի ուսանելի դասերով ոգևորել Արցախի մարտադաշտերում մաքառող հայ քաջամարտիկներին:

Նա այն պատմաբաններից է, որոնք ոչ միայն գրչով, այլև անձնական օրինակով են քաջալերում հայրենի հողի պաշտպաններին:

1991-94 թթ ծանրաշունչ ժամանակներում, երբ վճռվում էր հայոց նորօրյա ազատամարտի բախտը,

պատմաբանը մի կողմ դնելով գիտական աշխատանքն ու գիտաշխատողի պարտականությունները, իր ժամանակի հիմնական մասը անցկացրեց հայրենի Հանգակատուն գյուղում, իր նպաստը բերելով սահմանամերձ գյուղի ինքնապաշտպանության գործին:

Նրա բազմաթիվ հոդվածներն ու ակնարկները՝ նվիրված մեր պատմության բարդ, առեղծվածային հանգույցների լուսաբանմանը, հայոց ազգային-ազատագրական շարժման խորքային պարզաբանմանը, այսօր էլ ունեն արդիական և հրատապ նշանակություն:

Ինչի մասին էլ գրում է պատմաբանը, անպայման շաղախված է ազգային հպարտության խորին գիտակցումով, հայոց դարավոր արժեքների, վարք ու բարքի, կորուստների և հաղթանակների, գտածի և կորցրածի, հայոց թափված արյան հանդեպ մեծագույն պատասխանատվության ու ինքնայրումի զգացումով: Պատերազմի ահեղ պահին, 1992 թ մայիսին, նա «Երկիր» թերթում հանդես եկավ «Սևակի գյուղն անպաշտպան է» զգաստության կոչող հրապարակումով, որից հետո առավել անհրաժեշտ քայլեր ձեռնարկվեցին գյուղի ինքնապաշտպանությունը ուժեղացնելու ուղղությամբ:

Հայրենիքի երդվյալ պաշտպանն է պատմաբան Արմեն Կարապետյանը՝ Պարույր Սևակի համագյուղացին, որը միշտ հանդես է եկել ընդդեմ պարտվողական տրամադրությունների: Դրա վկայությունն է 1997թ. «Գոլոս Արմենիի» պարբերականում նրա հրապարակած ծրագրային հոդվածը: Պատմաբանը նույնպես մտահոգ էր: Նախիջևանի Գյունուտ գյուղից ռմբակոծում էին Պարույր Սևակի Հանախչի գյուղին, որտեղ մեծ դեր խաղաց Դավիթ Հադոյանի հեղինակությունը՝ Հեյդար Ալիևին ստիպելով, որ զերծ մնա այդ գյուղի ռմբակոծությունից: Եղեգնաձորի Երվանդի Ռուբոն, նույնպես նրա համարձակությունը, անվախ գործեությունը մեծ դեր խաղաց, որ մարտական գործողություններով լռեցնեն Գյունուտ գյուղին: Նույնիսկ երկու թուրքի դիակները փոխանակեցին դիզվառելիքով: Այդպիսով, ստիպեցին Ալիևին, որ հաշվի նստի հայերի հետ:

ՎԱՀՈՒՆ ՁՈՐԻ ԵՐՎԱՆԴԻ ՌՈՒԲՈՆ



Երվանդի Ռուբո, Եղեգնաձորի գումարտակի հրամանատար, 1989թ.

Եղեգնաձորում իրարանցում էր: Բարձունքի, խաչիկ գյուղերի հովիվներին թուրքերը գողացել էին: Օպերայի ազատության հրապարակում ի՞նչ էր կատարվում մարդիկ տեղյակ չէին: Վահան Երվանդի Սաղաթելյանը՝ «Երվանդի Ռուբոն», իր սովորության համաձայն, գնացել էր անտառ՝ որսի: Օդում թռչող կաքավին, վազող նապաստակին իր նշանառու դիպուկահարությամբ խփում էր: Համբավը մեծ էր: Փորձառու Ռուբոն ծանոթ էր ծառ ու թփին, լեռ ու սարին, գետ ու անտառներին, լավ ճանաչում էր բնությունը: Նույնիսկ թռչունների չուն, տարվա եղանակներին, ինչպես նաև նույն կենդանիների շարժման ուղղությունները գիտեր: Նա ծնվել է Եղեգնաձորում, նախնիները Էրզրումից էին: Հայրը՝ Երվանդը, որդուն շատ էր պատմել Մեծ Եղեռնի, թուրքերի գազանությունների, փրկված մի բուռ հայերի մասին: Ծանոթ էր հայ ժողովրդի այսօրվա պոռթկումներին, որ նույնությամբ կրկնվում էր: Թուրքերի գազանությունը արթնացել էր. Նախիջևանը հայերի աչքի առաջ խժռեցին, հերթը Ղարաբաղինն էր:

Ռուբոյի հոգին մղկտում էր, որսի էր գնացել բնության գեղատեսիլ վայրերով բուժելու հոգին, սակայն տանջվում էր: Որոշ տեղեկություններ իմանալով՝ ցավը ներսից կրծում էր: Ծտապում էր կապ ստեղծել, օպերայի Ազատության հրապարակում հավաքված միտինգավորներից իմանալ՝ ինչ ծրագիր է դրված հայ ժողովրդի առաջ:

Տղաները այս բոլորին տեղյակ էին, սպասում էին Ռուբոյին: Նա ուշանում էր: Ղարաբաղյան շարժումը լայն թափ էր ստանում:

Մինչ ղարաբաղյան շարժումը, Եղեգնաձորի Ռուբոն ճանաչված էր և մեծ հեղինակություն էր վայելում: Նրա հետ բարձր ձայնով չէին համարձակվում խոսել:

Իրավիճակը արագ զարգանում էր և գնալով դառնում անկառավարելի: Ծատին գյուղի հարևանությամբ՝ Հոստուն գյուղում, ճանապարհը փակել էին հայերը, իսկ հայկական Ալայազ, Կաբախլու և Կավուշուղ թուրքաբնակ գյուղերը կապող ճանապարհը՝ ադրբեջանցիները: Քարվաճառից ձիերին բարձած զենքերը տեղափոխել էին նշված գյուղեր և զինել բնակիչներին:

Գիշերով տղաները «Նիվա» ավտոմեքենայով մոտեցան Ալագյազ գյուղին: Ազերիները մոտ 1 մետր տրամաչափի խողովակը տրակտորով քաշել-բերել էին՝ գյուղ մտնող ճանապարհը փակել: Սահմանել էին անցագրային կետ, նշանակել պահակներ:

Երբ մոտեցան խողովակին, Ռուբոն, որի ձեռքին կար փամփշտանոցում լիցքավորված որսորդական հրացան՝ 5 փամփուշտով, աշխատեց շրջանցել, դիմացի ընկույզի ծառից կրակեցին: Ռուբոն կատվի ճարպկությամբ թռավ ճամփեզրի ցեխաջրով առվակի մեջ և կրակեց ծառի ուղղությամբ: Ընկույզի ծառից մեկը թրմփալով ընկավ ցած, սկսեց խռխռացնել, մնացածը փախան գյուղամեջ: Ծները տարբեր տեղերից սկսեցին հաչել: Գյուղը խառնվեց իրար: Մարդիկ տներից դուրս թափվեցին: Լսվեցին հայերի հասցեին հայհոյանքներ ու կրակոցի ձայներ: Ռուբոն մթության մեջ մենակ 800 մետր խորացավ գյուղամիջում՝ դեպի դիմացի վառվող լույսը, հասնելով հավաքվածներին, օդ կրակեց՝ պահանջելով իր վրա կրակողին:

Աջից՝ Երվանդը, Արուսյակը և Արտակը իրենց քաջագուն հորը՝ Երվանդի Ռուբոյին ճանապարհում են ռազմաճակատ, 1988 թ.

Մի թուրք կուզեկուզ մոտեցավ Ռուբոյին ու փաթաթվեց ոտքերին, կամաց բացատրեց, որ կրակողը ինքը չէ՝ Մուրադն է: Նա փախել է անտառ: Ռուբոն՝ պահանջելով բացատրագիր, թե Քարվաճառից բերված զենքերը որտե՞ղ են թաքցրել, հրացանի խզակոթով հարվածեց թուրքի ուսին:

- Ապրում եք հայկական հողում, զենքը ուղղում նրա ճակատին և եղբայրությո՞ւն քարոզում:

Կանայք ծղրտալով վազվզում էին դես ու դեն՝ բացատրելով, որ գյուղում զենք չկա, զենք չեն բաժանել, տեղյակ չեն: «Գյուղապետը վախից փախել էր, երևի զենքերն էր թաքցնում»,- անցավ Ռուբոյի մտքով: Սակայն այդ մթության մեջ խառնափնթոր իրավիճակից գլուխ չհանելով՝ վերադարձավ տղաների մոտ: Լույսը բացվում էր: Հայերը աղմուկ-աղաղակով գալիս էին ընդառաջ, տեսան Ռուբոն կենդանի է, խաղաղ-

Եղեգնաձորի Ռուբոն գումարտակով առաջնորդում է ռազմագիծ. 1989 թ.

ված վերադարձան տուն: Եվ ինչ իմանար, որ մի քանի ամիս հետո թշնամու գնդակից երկու ոտքից կվիրավորվեր:

Երվանդի Ռուբոն, Սուրիկ Հախնազարյանը, Քաչալ Հրաչը հանդիպեցին փախստականների ավտոշարասյանը՝ «Վիլիսին»: Ռուբոն կասկածելով, որ Մուրադը այդ «Վիլիսի» մեջ կարող է լինել, կանգնեցրեց: Մոտեցավ, որ դուռը բացի, դիմացի նստարանին նստած կնոջ ոտքերի տակ մի կապ 8 հատ կացին նկատեց: Թուրքերը իրենց հագուստների տակ թաքցրած փայտերով հարձակվեցին տղաների վրա: Նրանցից մեկը հարվածեց Սուրիկի գլխին, շուռ եկավ ինձ: Ես փայտը դեմ տվի ճակատին, խլեցի կացինը ու հարվածեցի ուսին, թուրքը ընկավ ցած: Տեսնելով Սուրիկի վիճակը՝ արյունը խփեց գլխիս: Վիճակը անկառավարելի էր, թուրքերը օգտագործել էին թմրադեղեր: Այդ պահին բախտներս բերեց, հայտնվեցին հատուկ մարմինների աշխատակիցները: Ֆելիքս Ցոլակյանի ցուցաբերած արիության և հմտության շնորհիվ կարողացանք կանխել այդ միջադեպը:

Եղեգնաձորի Ռուբոն ցուցումներ տալու ժամանակ՝ դիրքերն ամրացնելու համար 1989 թ.

Կնոջ ծոցից հանեցին նարկոտիկի մեծ պաշար, մեկ անգամ սրսկվող ասեղներ և այլ պիտույքներ: Կատարեցին հարցաքննություն, կազմեցին ակտ, ռադիոկապով հաղորդեցին ուր որ հարկն էր, ու ճանապարհեցին:

Այս միջադեպերը անմիջապես գունազարդելով ծուռ հայելու պատկերով՝ հեռագրել էին Մոսկվա: Հեռագրում ասվում էր. «Հայերը ավազակային հարձակումներ են կատարում ադրբեջանական գյուղերի վրա, ազգաբնակչությանը կոտորում են ունեցվածքը թալանում: Կան զոհեր, վիրավորներ, հասեք օգնության, մեզ փրկեք հայերից»:

«Անցավ մեկ ու կես ամիս, խրամատի մեջ էի,- պատմում է Երվանդի Ռուբոն, կապավորը հաղորդեց՝ Մոսկվայից մարդիկ են եկել, քեզ են հարցնում: Իջա շտաբ, երեք ռուս էին: Հաղորդեցին, որ Սումգայիթից հեռագրել են Մոսկվա, որ Ռուբո Սաղաթելյանը իր «Նիվա» AP 77-55 ավտոմեքենայով կազմա-

Եղեգնաձորի Ռուբոն մարտից առաջ

Հանուն բոլոր երեխաների խաղաղության Եղեգնաձորի Ռուբոն թոռնիկի հետ

Եղեգնաձորի Ուրոն մոր՝ Արուսյակի (ձախից), կնոջ՝ Անֆայի (աջից) , քրոջ՝ Սոնայի, եղբոր՝ Ալբերտի և մյուս հարազատների հետ, Նորավանք. 1989 թ.

կերպել է ահաբեկչական հարձակում թուրքական գյուղերի ազգաբնակչության վրա:

Ես բացատրեցի, որ նշվածները հայկական թուրքաբնակ հարևան գյուղեր են: Նրանք գողացել են մեր հովիվներին ու անասուններին, գնացել էինք պարզելու: Իսկ «Վիլիսի» վեց թմրամոլ թուրքերը հարձակվեցին մեզ վրա: Մենք պարզապես հարցրել ենք՝ ո՞վ է Մուրադը: Իսկ նրանք, թմրադեղերի ազդեցության տակ, սպանում էին Սուրիկին, մենք պարզապես հաշտեցնողի դերում էինք: Օգնության եկած վերադաս մարմինների աշխատակիցները կարգ ու կանոն սահմանելով՝ կարողացան հարցը խաղաղորեն լուծել:

Այս բոլորը նրանց չբավարարեց: Պահանջեցին ենթարկվել օրենքներին, մեկնել Նախիջևան՝ առերեսում կատարել և քննություն: Երկու օր հետո «ՈՒԱԶ» ու «Նիվա» ավտոմեքենաներով մեկնեցինք Երասխավան գինու գործարանի մոտերքում գտնվող Սադարակ կոչվող տարածքի չեզոք գոտի: Այդտեղ միլիցիոների շենքի մի խոնավ խցում դուռը վրաս կողպեցին: Որոշ ժամանակ մնալուց հետո ձայների ուղղությամբ նայեցի լուսամուտից դուրս: Մարդկանց բազմությունը քլունգ, բահ

Կանգնած աջից երրորդը Երվանդի Ուրոն մարտական ընկերների հետ, Խաչիկ. 1990 թ.

ձեռքներին, արշավում էր դեպի միլիցիայի շենքը՝ պահանջելով հանցագործին իրենց հանձնել:

Առանց վարանելու լուսամուտի ծաղերից մի կերպ թռա դուրս: Թաքնվեցի բակում՝ գինու նեխած տակառի մեջ, վրաս ծածկելով խոտի, ոջլոտ, յուղոտ ու կեղտոտ լաթի կտորներով: Ռուս միլիցիան տեսնելով, որ դա փրկություն չէ, օգնեց ինձ վայրկյանաբար տեղավորվել «ՈՒԱԶ» ավտոմեքենայի մեջ, ու ծլկեցինք դեպի հայկական սահմանները:

Թուրքերը իրենց բարբարոսությունը թափել էին չեկիստ ռուսների վրա: Մահից փրկված ռուսները ջարդուփշուր «Նիվայով» հազիվ կարողացան հասնել հայոց հողը: Այդպես, պրծնելով ազերիների ծիրաններից, արունլվա, պատառոտված շորերով, մտքումս մխիթարական խոսք ասացի. «Այս բոլորը կարող եք հեռագրել Մոսկվա»:

Կազդուրվելուց հետո մեկնեցի մարտադաշտ: Խաչիկ գյուղի սահմաններում կարծատև անդորր էր տիրում: Արամը մնաց շտաբում՝ ջոկատի համալրման աշխատանքները ղեկավարելու: Վեց հոգով՝ Թաթոյի, Կամոյի, Դավիթ Հարությունյանի, Կոլիկ Սուրենի հետ «Վիլիսով» մեկնեցինք Գորիս: Տեղեկա-

Ձախից երկրորդը Երվանդի Ռուբոն, չորրորդը՝ Արամ Ավագյան, Սոնա, Խաչիկ գյուղ, 1990 թ.

ցանք, որ Արամուս գյուղի վիճակը վատ է: Ֆիդայիները տեղ չունենալով՝ գյուղի գոմերը ծառայեցնում էին որպես զորանոցներ: Հատակին՝ որպես անկողին, օգտագործում էին խոտը: Գիշերը ժամը 1-ին բարձրացա դիրքերը, տղաների մոտ, քնած էին խրամատի մեջ լցված սալոմի վրա: Ռուբոն ժամապահից իմացավ, որ դիմացի սարի գլխին վառվող լույսը թշնամու հենակետն է:

- Իսկ ինչո՞ւ չենք գրավում,- հարցրեց ժամապահին:- Դուք հրամանատարներով որոշում կայացրեք, մենք կգրավենք,- եղավ խելացի պատասխանը, ավելացնելով, որ Արամուսի ջուրը գալիս է այդտեղից, թուրքերը կարող են թունավորել:

Առաջարկվեց լուսաշաղին հարձակվել և գրավել բարձունքը, երբ թշնամին քնաթաթախ է: Սեպտեմբեր ամիսն էր, մինչ լույսը կբացվեր, Ռուբոն պատրաստվեց կատարել հետախուզություն: Վերցրեց որսորդական հրացանը, պատրոնդաշը կապեց մեջքին, ձորով քայլեց դեպի լույսը: Նահանջողները ավելի շատ են կոտորվում, քան հարձակվողները: Այս նշանաբանով շարժվեց առաջ: Մոտենալով կրակի շուրջը նստածներին՝ ձայնեց՝ չկրակեք: Չարձագանքեցին, մեջս կասկածանք առաջացավ,- պատմում է Ռուբոն,- Ձայնեցի երկրորդ անգամ, պատասխան չկար: Թուրքերը, լսելով հայերեն խոսելու ձայն, մինչ կպատրաստվե-

Կենտրոնում նստած Երվանդի Ռուբոն մարտական ընկերների հետ «Սուրբ խաչ» եկեղեցում երդման պահին, 1988 թ.

ին ինձ վրա կրակել, ես մոտ երեսուն մետր հեռավորությունից փամփուշտները բաց թողեցի այդ ուղղությամբ: Ոմանք ընկան, ոմանք փախան՝ չհասցնելով վերցնել իրենց զենքերը:

Ես ինձ գցեցի փոսի մեջ, զենքս խափանվել էր, մեծ դժվարությամբ լիցքավորեցի: Թուրքերը տագնապ բարձրացրին: ՀՄՄ-ի լապտերներով լուսավորեցին շրջապատը, ոչինչ չհայտնաբերեցին: Ես սվաղվել էի հողին, խոտով ինձ ծածկել: Մոտ երեսուն րոպե չդադարեցին երկկողմանի կրակոցները: Ես, հետընթաց սողալով, հասա ձորակին, նրանց քթի տակով անցա աննկատ, հասա հայկական դիրքեր: Տղաները իմացել էին, թե խփվել կամ գերեվարվել եմ:

Սուրիկ, Անուշավան Հախնազարյանները, Արամ, Արմեն Ավագյանները, Դավիթ Հարությունյանը, Սիրակ Բաբայանը՝ այս քաջասիրտ հայորդիները իրարից անբաժան էին, նրանք հարգում էին միմյանց, սիրում էին հրամանատարին Ռուբիկ Սաղաթելյանին:

Բարձրունի գյուղի Գյարմշթաղ բարձունքի համար ընթանում էին թեժ մարտեր: Այդ ժամանակ «ԲԹՄ» ջոկատը օգնությունի էր հասել, քանի որ թուրքերը նույնպես ակտիվացել էին Բարձրունի գյուղի շրջանում: Ռուբիկ Սաղաթելյանը պաշտպանական մարտեր էր մղում ոսոխի դեմ:

Երբ քայլում ես արահետով, օգնության հույս չկա, վտանգի մեջ ես՝ եղիր մարդիկ: Տեսնում ես թշնամու բաց դուռը՝ պետք է գրոհես... Սու Արմեն, 1994թ

Ռուբոն հարմար տեղ գտնելով՝ թաքնվեց քարերով լի խոտերի մեջ: Քաշեց ձեռքի նռնակի օղը, գերեվարվելուց շատ էր վախում, գերադասեց մահը, զգուշորեն սողաց առաջ: Մի փոքրիկ անզգույշ քայլ՝ կանշնչանար:

Թուրքերից մեկը՝ քարի տակից ծնկած առաջ եկավ, ես քթի տակ պառկած, ինձ չէր նկատել, շունչը պահած, լուռ հետևում էի: Թուրքը երեք մետր առաջ գնաց ավտոմատից կրակեցի խոզի պես խռխռալով ընկավ ցած: Քարի տակից չորս թուրք ելան ու փախան: Ծնկած կրակեցի, թուրքերը՝ մերթընդմերթ կրակելով, ծառերի արանքներով փախչում էին: Գնդակս կպավ փախչող թուրքից մեկի թիկունքին, նա բերանքսիվար ընկավ: Երկուսը ծլկեցին: Նրանց հասնող օժանդակ ուժերին Ռոլանդ Քելեշյանը կրակոցներով կարողացավ շեղել՝ կրակի ուղղությունը իր վրա վերցնելով: Սողեսող մոտեցա սպանված թուրքին, ավտոմատը վերցրի: Օգնության եկած թշնամու ուղղաթիռը կանգնեց իմ գլխավերևում, առանց խուճապի անշարժացա, մոտ 30 մետր հեռավորության վրա զբաղվեցի իմ զեն-

Գրադ Կայանք

քի լիցքավորման գործով: Նրանք կարծեցին թուրք եմ՝ զբաղված իմ զենքով: Երեք հոգի արագ-արագ հավաքեցին դիակները ու քարշ տալով՝ հասցրին ուղղաթիռ, բարձրացան օդ:

Երկու ավտոմատ ձեռքիս՝ ուրախ-ուրախ վերադարձա ծամբար: Ռոլանդը և մյուսները չէին հավատում, որ կենդանի եմ, սակայն փաստը մնում է փաստ: Ռոլանդը զարմացած, չհավատալով աչքերին, ուրախ բացականչելով՝ գրկեց ինձ: Օդում պտտեցնելով՝ գլորվեցինք գետին: Հաջողված գործը կարծես անհավատալի լիներ, ուզում էի վիրավորվել, որ արյունս խառնվեր հողին, ջերմություն ու հարազատություն սերմաներ, ցավից տնքացող հողը բուժեր, որ չխորթանար կանչը մեր նախնիների: Ահա Նարբոն ու Աշոտ Թովմասյանը ինչ են պատմում. «ՀՀ Սահմանների ինքնապաշտպանության համար Եղեգնաձորի Ռուբոն տղաներին ի զեն կոչ արեց: Նրա կողքին կանգնեցին Նարբոն և Աշոտը, որը հետագայում կազմավորեց Վայքի ջոկատը:

Վայքում Վարդիթեր Գևորգյանի «Սոսե» ջոկատի, Ստեփան Ստեփանյանի, Նարիբեկ Հակոբյանի, Վայքի ջոկատի հրամանատար Օնիկ Խաչատրյանի, Խնձորուտի հրամանատար Սամվել Ավագյանի, Ազնաբերդի Վաչիկ Կարապետյանի, Բարձրունու Զորիկ Ալեքսանյանի, Սուրիկ Մկրտչյանի, Ժորա Մարգարյանի նվիրվածության, հերոսական պայքարի շնորհիվ 1990 թ. կազմակերպեցին Վայքի վաշտը, ընդգրկվեցին Հատուկ գնդի կազմի մեջ: Անմնացորդ մասնակցեցին ՀՀ սահմանների պաշտպանության և Արցախի ազատագրման մարտերին:

Եղեգնաձորի Ռուբոն մեզ տարավ մարտադաշտ: Այդ ժամանակ շատերը թերահավատ էին՝ ասելով, որ հնարավոր չի հաղթել ադրբեջանցիներին: Բայց Ռուբոյի համարձակությունը հաստատակամությունը, սկզբունքայնությունը անհնարինից հասցրեց հնարավորին: Կազմելով 200 հոգանոց գումարտակ՝ անբաժան մարտական ընկերներ Սուրեն Հախնազարյանին (Կոլիկ Սուրենը), Դավիթ Հարությունյանի, Արամ Ավագյանի (Մուրուք), Թաթոյի Կամոյի, Սիրակ Բաբայանի, Ռուբենի Խաչոն, Հայկ Բայաթյանի, Քաչալ Հրաչը: Թուրքերը Նախիջևանի Աուշ սարի կատարին ուժեղ հենակետ էին ստեղծել: Մոտ երեսուն հոգով Խաչիկ գյուղին, շրջապատին առել էին կրակի տակ: Ռուբոն նշված չորս փորձառու ազատամարտիկների՝ Կոլիկ Սուրենի, Ավոյի Արամին, Արմեն Ավագյանին, Դավիթ Հարությունյանին (Հելսիկի Դավիթ) գիշերով ժամը 2-ին Խաչիկ գյուղից ճանապարհ ընկան: Լուսաբացին մոտեցան այդ մահասարսուռ բարձունքին: Իրարից մոտ 40-50 մետր հեռավորության վրա դիրքավորվեցին: 4 ուղղությամբ գրոհեցին թշնամու վրա: Քնաթաթախ թշնամին չիմացավ ինչ է կատարվում: Հուժկու հարվածից ընկան խուճապի մեջ և դիմեցին փախուստի՝ թողնելով մեծաքանակ զենք, զինամթերք, սնունդ, հանդերձանք: Չորս հոգով, առանց զոհերի գրավեցին թշնամու կրակակետը: Ռուբոն գրկախառ շնորհավորեց ընկերների հաղթանակը»

1992թ. մահապարտների կոչին իմ գումարտակի քաջերից ընտրեցի լավագույն 11 ազատամարտիկների, ուրախ-զվարթ գնացի պաշտպանության նախարարություն՝ սպարապետ Վազգեն Սարգսյանին զեկուցելու, որ կազմ-պատրաստ սպասում եմ իր հրամանին՝ ամենաթեժ կետեր մեկնելու համար: Ուրախ էի, որ կարժանանամ գովեստի, սակայն եղավ հակառակը, նախատեց, զայրացավ՝ ասելով. «Հույսս, հավատս դու ես Նախիջևանի սահմանագծում»:

Վիճեցինք: Բացատրեց, որ կոչը վերաբերում է նրանց, ովքեր թեժ կետերում չեն: Այս բոլորը արվում է, որ ուժեղացվի ռազմաճակատի առաջին գիծը: Նրանք, ովքեր մարտադաշտում չեն, պիտի հավաքագրվեն և համալրվեն այդ կառույցներում՝ թշնամուն չթողնելով ձեղքում կատարել որևէ ռազմաճակատում: Եթե քո պաշտպանական գիծը թշնամին ձեղքի, ի՞նչ ենք անելու, ո՞վ պիտի դեմն առնի»:

Հասկացա իսկությունը, վերադարձա ռազմագիծ:

Ռուբոյի մարտական ընկերները հարգանքով էին խոսում նրա հերոսական կերպարի մասին՝ հաճախակի անդրադառնալով Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻՆ: Ռուբոն խաչակնքելով՝ Հայաստանին և համայն մարդկությանը խաղաղություն է ցանկանում: Երվանդի Ռուբոն փառաբանելով Գորիսի, Սիսիանի, Արարատի, ԼՂՀ-ի, Արմավիրի, Էջմիածնի, Գարդմանցիների, Մեծն Տիգրանի, Իջևանի, Կոտայքի, Վայքի ջոկատների և նրանց հրամանատարների սխրանքները, հաջողությունը կապում էր Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻ խելացի աշխատանքների հետ:

1990 թ. սեպտեմբերի 20-ին ստեղծվեց ՀՀ ՆԳՆ-ին կից «Հատուկ գունդը», որը դարձավ ապագա հայկական բանակի կորիզը: Գնդի կազմում ընդգրկվեցին Հայաստանի շրջաններում և Երևանում գործող 26 վաշտեր, առավելագույն կազմը՝ 2330 ազատմարտիկ: Գունդը ունեցել է 159 զոհ:

«Հատուկ գնդի» ռազմական հաջողություններում մեծ ներդրում ունեն 1990-94 հրամանատարներ գնդապետներ Սերգեյ Առաքելյանը, Աշոտ Պետրոսյանը, Վոլոդյա Կարապետյանը (զոհվել է Մարտակերտում, 1990 թ.), Գուրգեն Մելքոնյան:

Գնդի մարտական ուղին եղել է ՀՀ սահմանների ինքնապաշտպանության և Արցախի ազատագրման ռազմական բոլոր գործողություններում:

«Հատուկ գնդի» հրամանատար կենտրոնում կանգնած Գուրգեն Մելքոնյանը մարտական ընկերների հետ: Քաշաթաղ, 1993 թ.

Մհեր Մկրտչյանը «Հատուկ գնդի» ազատամարտիկների հետ, 1993 թ. դեկտեմբեր (մահից երկու շաբաթ առաջ)

Ի հիշատակ ՀՀ ազգային հերոս Ջիվան Աբրահամյանի, նրա զոհված վայրում մարտական ընկերները՝ Վարդան Սարգսյանը, Բաղդասար Վարդանյանը, Աշոտ Սուքիասյանը (Ծո), Ռուբեն Պողոսյանը եղևնու ծառ են տնկում: Ծահումյանի շրջանի Վերին Ծեն գյուղի Ծամփրապտուկ բարձունք, 21 հուլիս 1991 թ.

ԻՋԵՎԱՆԻ ՋՈԿԱՏԻ ԱՋԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԸ

Հրաչիկ Քալանթարյան

ՀՀ ՀՈՒ N զորամասի հրամանատար Օնիկ Վիկտորի Գասպարյան:

Իջևանի գումարտակ, մարտական դիրքերում:

«ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆ» ԱՇԽԱՐՀԱԶՈՐԱՅԻՆ ԳՈՒՆԴ

Մինչ «Հատուկ գնդի» ստեղծումը 1989 թ. Երևանի «Հայէլեկտրո» գործարանում Խաչիկ Գալստյանի, Վովա Առաքելյանի, Լևոն Սիսակյանի, Լևոն Մայսուրյանի, Սմբատ Այվազյանի, Արմենակ Արմենակյանի, Կորյուն Ղումաշյանի, Քարակերտի Ռուբոյի (Սիդո), Թալինի, Նալբանդի, Սպիտակի, Աբովյանի, Ֆանտանի, Գետաշենի, ընդհանուր առմամբ 25 ջոկատների նախաձեռնությամբ կազմավորվեց «Մեծն Տիգրան» աշխարհազորային գունդը:

Ընդհանուր հրամանատար ընտրվեց Արմեն Արմենակյանը, շտաբի պետ՝ Տիգրան Սարգսյանը, ասոցիացիայի նախագահ՝ Սմբատ Այվազյանը, ռազմական խորհրդի նախագահ՝ Խաչիկ Գալստյանը: Գունդն Հայաստանում և Արցախի մի շարք շրջաններում ունեցավ իր ստորաբաժանումները՝ հետախուզական՝ Ռաֆիկ Սիմոնյան, Սուրիկ Կարապետյան, Մանվել (Մախնո), թիկունքի գծով՝ Լյովա Սիսակյան, հրետանու պետ՝ Դնեպրիկ Բաղդասարյան:

«Հայէլեկտրո» գործարանում Սեյրան Գուրգենի Մաթևոսյանի աջակցությամբ շարունակեցին կազմակերպել զենքի սերիական արտադրություն, որոնց նախաձեռնողները տարբեր տեղերից հավաքված խմբերն ու անհատներ էին՝ Տիգրան Հարությունյան, Ստյոպա Ջամվելյան, Գեղամ Օհանյան, Խաչիկ Գասպարյան, Գրիգոր Գևորգյան, Ժորա Սարգսյան: Ղարաբաղից մասնակցում էին Արկադի Կարապետյանը՝ Ագոն, Աշոտ Ղույլանը, Բժիշկ Մելսիկը, Ռուսլանը, Պարգև Սրբազանը, ով ֆինանսավորում էր:

Շենք ու զինամթերք տեղափոխող ուղղաթիռը:
Կենտրոնում՝ Սմբատ Այվազյանը, Խաչիկ Գալստյան, Եահումյան, 1989 թ.



«Հիմնադրամ Ղեմ» ազգամարտական կազմակերպության

Սիսիանի Սոֆլի գյուղում տեղի ունեցավ երդման արարողություն և ընդունվեց «Մեծն Տիգրան» գնդի հռչակագիր-ծրագիրը:

«ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆ» ԳՆԴԻ ՀՌՉԱԿԱԳԻՐ – ԾՐԱԳԻՐԸ

Ծնելով Հայ ժողովրդի ազգային ու պետական ժամրզությունները ապառնաքաղ ներկա վտանգային իրավիճակից և այն համապմանքից, որ առանց արտաքին ուժերի հրահանգների, միայն հայն է ներկա իրադրությունում շահագրգռված մտածելու իր ժողովրդի և պետության անվտանգության մասին, ստեղծվում է «Մեծն Տիգրան» գունդը, որի նպատակն է՝

1. Կազմակերպել Հայաստանի, Արցախի և Հայկական այլ բնակավայրերի սահմանների պաշտպանությունը, անհրաժեշտության դեպքում հակահարված տալ նաև այդ սահմանների վտանգ ստեղծող ուժերին։

2. Գնդի մարտիկները չպետք է լինեն որևէ կուսակցության կամ քաղաքական կազմակերպության անդամ։

3. Եթե որևէ քաղաքական կազմակերպություն օրինական դեմոկրատական ճանապարհով հասնի իշխանության, կազմի կառավարություն և եթե այդ կառավարությունը կպաշտպանի Հայ ժողովրդի շահերը, գունդը կնախաձեռնի նրա օրինականությունը, գործունեությունը կարամադրվի համապատասխան պետական մարմնին և կհնազանդի իր հավատարմությունը։

4. «Մեծն Տիգրան» գունդը պատրաստ է համագործակցելու հայկական եռանդամյա մյուս կազմակերպությունների և ուժերի հետ, եթե վերջիններս հետևողականորեն և անշահախնդիր կերպով պաշտպանում են Հայաստանի պետականությունը և Հայ ժողովրդի առանձին հատվածների անվտանգությունը ապրելիության, հարկ եղած դեպքում նաև պատսպարել ուժերից։

«Մեծն Տիգրան» գնդի մարտիկները երդվում են մարտական սուրը գրչի և ավետարանի առաջ՝ ներդնել հոգին, մտավոր և ֆիզիկական կարողությունները, բարոյական և կամային հատկանիշները Հայ ժողովրդի գոյապայքարի սուրբ գործին։

«ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆ» գնդի ՌԱԶՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Երևան, 16 փետրվարի 1990 թ.

1989-94 թթ. գունդը մասնակցել է Երասխի, Վայքի, Նոյեմբերյանի, Իջևանի, Եղեգնաձորի, Գորիսի, Սիսիանի, Կապանի, Մեղրու, Ճամբարակի, Վարդենիսի, ԼՂՀ Ծահուքյանի, Մարտակերտի, Աղդամի, Լաչինի, Ասկերանի, Մարտունու շրջանների, Բերդաձորի ենթաշրջանի ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին:

Գնդից զոհվել են 32 ազատամարտիկ: Նրա գումարտակներից մեկի 13 հոգանոց գրոհային ջոկատը շեշտակի գրոհով ջախջախեց ԼՂՀ-Ծահուքյանի շրջանի Թուդան գյուղում տեղակայված ադրբեջանական 450 հոգանոց կայազորը: Ծահուքյանից վերջինը դուրս եկավ «Մեծն Տիգրան» գունդը:

«Հատուկ գունդ», «Մեծն Տիգրան» գնդերը, «Կոռնիձոր» ջոկատը, Կոտայքի ջոկատները ՀՀ պատականության և բանակաշինության գործում ունեցան իրենց ուրույն տեղը:

Այս բոլորը փաստեր են: Ես հպարտանում եմ, թող մեր մասին էլ ուրիշները խոսեն:

«Ազատություն» ջոկատի հրամանատար Վովա Առաքելյան (կանգնած), խաչիկ Գայստյան (աջից երկրորդը) Ստեփան Պետրոսյան (ձախից երկրորդը)

Լևոն Սիսակյան (դատախազ) «Մեծն Տիգրան» գնդի առաջատարներից

«Հատուկ գունդն» իր գինանշանով

ԿՈՏԱՅՔԻ «ԱԼԱՇԿԵՐՏ»

«ՍԱՍՈՒՆ», «ԿՈՃՈՒ», «ՀՐԱՅՐ ԴԺՈԽՔ», «ՄԵԳՐԱՁՈՐ-ՅԱՇՇ» ԳՈՒՄԱՐՏԱԿՆԵՐԸ

«Ալաշկերտ» ջոկատի հրամանատար Աբել Հարությունյանին Ղարաբաղյան շարժման առաջին օրվանից բոլորը ծանաչում էին: Ծամշադինի Բերդի շրջկոմի շենքի գագաթի՝ արևից ու քամուց ծղծղված, գունաթափ դրոշը, միտինգի մասնակիցների, ազգաբնակչության պահանջով գիշերով փոխարինվեց եռագույնով: Միտինգն անցկացնում էր տողերիս հեղինակը: Երբ առավոտյան ծածանվեց եռագույն դրոշը, իշխանությունները մնացին զարմացած, թե ՊԱԿ-ի հսկողության տակ ինչպես են կարողացել կատարել այդ վտանգավոր աշխատանքը:

Վարիկ Հակոբյանը և Աբել Հարությունյանը, «Ալաշկերտ» ջոկատ, 1990 թ.

Երևանի Օրբելու կուրորտաբանության ֆիզիոթերապիայի բժշկական գիտահետազոտական ինստիտուտի 530 համարի սենյակի մահճակալին պառկած արիասիրտ Աբելը մարտնչում էր մահվան դեմ: Այդ քաջասիրտ հրամանատարի շուրջն էին հավաքվել հարազատները, մտերիմները, մարտական ընկերները՝ Ներսես Հրաչի Հարությունյանը, Սիսիանից Արմեն Ղուրյանը, Ռիտա Մամիկոնյանը, Մարտին Բաղդասարյանը: Հիշեցին «Ալաշկերտ» ջոկատի առաջին զոհին՝ Հարզանդ Դանիելյանին (Հրաչը), առաջին վիրավոր

Աբելը՝ նստած, Վարիկը, Վարուժանը, Վահանը, Եահումյան, 1990 թ.

Ծավարշ Ղազարյանին, որը այդ պահին գտնվում էր Հունաստանում և այնտեղից հեռախոսակապով խոսեց Աբելի հետ: Աբելը ցավերից ազատվելով՝ վերհիշեց, թե ինչպես Ներսեսը մեկնեց Արցախ՝ «Ալաշկերտ» ջոկատը փնտրելու:

Ալաշանի, Գետաշենի, Ծահումյանի մարտերից հետո Պուշկին-Յալի կռիվների, Քարվաճառի-Չարեքթաթի օպերացիայի ժամանակ գլխավոր ուժերից էին հանդիսանում Սոնթեի և Աբելի «Ալաշկերտ» ջոկատները, որոնց աջ թևից մարտնչում էր Ներսեսը: Երջապատելով ազերիներին՝ նրանց առան աքցանի մեջ: Աբելն ու Ներսեսը ելան իրար դեմ-դիմաց: Երկու տարի չէին տեսել միմյանց, կրակների տարափի տակ կարոտի տենչով գրկախառնվեցին: Արհամարհելով մահը՝ այդ երկու խելահեղ մարտիկները երկար զրուցում էին: Աբելին հաղորդել էին, որ Ներսեսը զոհվել է:

Ես կարդացի Վանաձորից ստացած նամակը, որի մեջ Ալբերտ Սարգսյանը գրում է. «Պուշկին-Յալի գրոհը սկսվեց 1993թ. մարտի 22-ին, առավոտյան ժամը 6-ին, ազերիների Նովրուզ բայրամի օրը: Գրոհին մասնակցում էին երեք տանկ և երեք զրահապատ ռազմական փոխադրիչ մեքենաներ:

Օպերացիայի ղեկավարներն էին Ժաննա Գալստյանը (Պալ-

«Կծուղուտ» ջոկատ, ձախից կանգնած երրորդը՝ Ներսես Հարությունյան, Քարվաճառ, 1993 թ.

«Մեղրաձոր» ջոկատի հրամանատար Գնելը և Վաչոն, 1991թ.

կովնիկ ժաննան), Մոնթեն, Լեոնիդ Ազգաղալյանը, Ադմիրալ Սամվելը, Աբելը և այլ հրամանատարներ: Կես ժամվա ընթացքում գրավեցին Բարձունքը: Մարտը շարունակվեց ընթանալ Մարտակերտի ուղղությամբ: Նահանջող ազերիները կուտակվում էին հեռուստաաշտարակի մոտ: Լրացուցիչ ուժերի շնորհիվ՝ ամրապնդվեց հաղթարշավը: Հայերը երկու տանկ կորցրին, կային երկկողմանի շատ զոհեր, մարտերը նմանվեցին դժոխքի: Գյումրիի գումարտակից աչքի ընկան տանկիստներ Արտոն, Գևորգը, Ղարաբաղից՝ Վարդանը, Կամոն և այլոք: Երկու տարի եղել եմ մարտերի մեջ, երկու անգամ վիրավորվել եմ, կորցրել աջ աչքս, ձախ աչքս չի տեսնում, արդեն կուրանում եմ, բուժումս անբավարար է: Սիսիանցի Արմեն Ղուրյանը Ալաշկերտի ջոկատի հրամանատար Աբելին հիշեցրեց, թե Մարտակերտի Սարսանգ ջրամբարի կռիվների ժամանակ ականների պայթյունների ցանցի մեջ վազքի ընթացքից ինչպես կտրուկ կանգնեց, կարծես մեկը գլխից բռնեց: Ծուրջբոլորը պայթող

«Ալաշկերտ» ջոկատ, ձախից կանգնած՝ Աբել Հարությունյան, աջից՝ Մխիթար Հարությունյան, մարտական ընկերներով, Գետաշեն, 1991թ.

ականների տարափի տակ կենդանի մնացին: Զարմացել էին, որ կենդանի են:

- Աստծու պահած զավակներն ենք,- ավելացրեց Ներսեսը:

Ռիտա Մամիկոնյանն իր մարտական ընկերոջը և հրամանատարին կերակրելով՝ պատմում էր Վայքի եռամսյա հավաքների հրամանատար Թարո Ավետյանի մասին.

- Դիրքերում եղած ժամանակ, լինելով կին, անվախ էինք: Նայում էինք իրար, վախը ցնդում էր, մեր միջից դուրս էր գալիս:

ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը հավատարիմ էր, շիտակ, ազգին անմնացորդ նվիրված: Ամուսնացած չէր, ուշք ու միտքը Հայաստանի շահերի ամրապնդումն էր: Նրա առնական տեսքը բավական էր ցանկացած հաղթանակի համար: Մարտունու թուրքաբնակ Կարադաղլուի ազատագրմանը մասնակցում էին Ադմիրալ Սամվելը, Արաբոյի ջոկատը: Սկսվեցին թեժ մարտերը: Այդ ժամանակ ծանոթացա Աբելի հետ: 1992թ. փետրվարի 17-ին էր:

Աբել Հարությունյանը շատ էր հարգում ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանին. նրա նմանակն էր, բոլորին օգնում էր, մեծ ու փոքր չկար, հավասար էին, բացակայում էր խտրականությունը: Առաջնային էր համարում թիկունքային աշխատանքները: Ռազմավարական ձկունությունը կախված էր թիկունքից: Կարելի է ասել՝ թիկունք-ճակատ միասնությունը ատոմային ռումբից ուժեղ էր, այն զերծ էր կեղծ մարտավարությունից:

Ծահումյանի ինքնապաշտպանության դիրքերում, ձախից Աբել Հարությունյանը մարտական ընկերոջ Համազասպ Աշոտի հետ, 1991թ.

Ճակատի ազատամարտիկը, երբ հասկանում է, որ թիկունքում հարգում, գնահատում և վստահում են, ավելի եռանդով է կռվում: Երեք միլիոնը հաղթեց 7 միլիոն ազերիներին. ահա հայ ժողովրդի թիկունքի ուժը և հզորությունը:

Մի առիթով սպարապետ Վազգեն Սարգսյանն ասել է. «Ես ասում եմ՝ դավաճանություն է ժողովրդին ներշնչել, թե ինքը փոքր է ու անզոր: Երեք միլիոն, թե երեք հարյուր միլիոն՝ օրհասի պահին պայքարողը շատ-շատ մեկ միլիոն է: Իսկ մեկ միլիոն անձնուրաց պայքարող ազգն իր միջից կարող է վախը հանել: Ապացուցված բան է, որ այլևս ոչ ոք չի կարող մեզ շեղել, արյունով ներկված հաղթանակները խլել: Ո՛չ ոք: Հասել է ուժեղի, ոգով ուժեղի ժամանակը: Ով ամուր եղավ, նա էլ հաղթելու է: Մեզանի՛ց, միմիայն մեզանից է կախված, թե ի վերջո ինչպես է լուծվելու Ղարաբաղի հարցը»:

Թուրքիայի կողմից Ադրբեջանին ռազմական օգնություն ցուցաբերելու մասին առաջին պաշտոնական տեղեկությունը տարածվեց 1990թ. հունվարի 24-ին՝ Խորհրդային Միության հեռագրային գործակալության՝ ՏԱՍՍ-ի հաղորդագրության միջոցով, որով թուրքական կողմին նախազգուշացում էր արվում՝ Նախիջևանին զինամթերք մատակարարելու համար: Բայց Թուրքիան թքած ուներ. 1991-1992թթ. Ադրբեջանին զենք ու զինվորական հանդերձանք մատակարարեց: Երկու օդային չվերթի արդյունքում Նախիջևան հասցվեց 5000 ինքնաձիգ, մեծ քանակությամբ զինվորական հանդերձանք ու ականանետ:

Թուրքական բանակի մոտ 150 բարձրաստիճան սպա, այդ թվում՝ 10 գեներալ, ակտիվորեն մասնակցեցին ադրբեջանական բանակի ռազմական օպերացիաների մշակմանն ու գրոհային ստորաբաժանումների ուսուցմանը: 1992թ. մարտին թուրք ռազմական հրահանգիչները՝ մոտ 450 ադրբեջանցի զինակոչիկներով մարտեր մղեցին Գաբալայի ռադիոլոկացիոն կայանի տարածքում:

Նախիջևանում և Ադրբեջանի մյուս շրջաններում տեղաբաշխված էին թուրքական 3000 վարձկաններ ու կամավորներ: Ռուսական մամուլի տվյալներով 1992 թ. վերջում Թուրքիան Ադրբեջան է ուղարկել 5-6 հազար զինվոր ու սպա:

Արևմտյան ռազմական վերլուծաբանների կարծիքով 1992թ. ամռանը ադրբեջանական բանակի լայնամասշտաբ հարձակման ընթացքում ռազմական հաջողությունները պայմանավորված էին թուրք կամավորների մասնակցությամբ:

Թուրքական «Միլլիեթ» թերթի (21.06.1993թ.) հաղորդմամբ

«Գորշ գայլեր» կազմակերպության 300 զինյալներ ուղարկվեցին Ադրբեջան: Ծախսերը հոգաց թուրքական MIT հետախուզական ծառայությունը: Թուրքական «Gercek» շաբաթաթերթի տվյալների համաձայն՝ նույն տարվա հունիսին Թուրքիան Ադրբեջանին է մատակարարել 5000 «Սթինգեր» հրթիռ, հրթիռային կայանք, ական ու ականանետ:

ՀՊՀ ինքնապաշտպանական ուժերի՝ Քարվաճառի գործողության ժամանակ ամեն օր Թուրքիայից Նախիջևան էին անցնում 30 բեռնատար թուրք կամավորներ, որոնք հետո Հայաստանի օդային տարածքով տեղափոխվում էին Գանձակ («Նեզավիսիմայա գազետա», «Յուրիթեթ»):

Տիգրան Մեծի կառուցած չորս քաղաքներից Աղդամի շրջանի Ծահբուլաղ գյուղի մերձակայքում ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը հայտնաբերեցին թուրքական արտադրության գնդացիրների ու ականանետների պահեստ, որը, որպես իրեղեն ապացույց, ներկայացվեց Ստեփանակերտում գտնվող ԵԱՀԿ Մինսկի խմբի նախագահ Մարիո Ռաֆա Էլլիին:

Հայկական ուժերի հակահարձակման ժամանակ, թուրքական «Յուրիթեթը» հունիսի 24-ին գրեց, որ Թուրքիայում ռազմական պատրաստություն անցած ադրբեջանցի զինվորների մեծ մասը, տուն վերադառնալով, խուսափում էր ռազմական գործողություններին մասնակցելուց: Երրորդ բանակի զորամասերում պատրաստության անցած ադրբեջանցի սպաներն ու զինվորները, վերադառնալով հայրենիք՝ կամ փախչում էին ռազմաճակատից, կամ զբաղվում գործերով, որոնք զինվորական գործի հետ ոչ մի առնչություն չունեին:

Նույն թերթը (23.06.1993թ.) Ադրբեջանում Սուրեթ Հուսեյնովի խռովության առթիվ գրեց. «Թուրքիան ադրբեջանցիներին զենք տվեց, որպեսզի կռվեն հայերի դեմ, իսկ նրանք այդ զենքն ուղղում են միմյանց վրա»: «Յուրիթեթը» եզրակացնում էր. «Հայկական ուժերին մի քանի անգամ գերազանցող ադրբեջանական զինված կազմավորումների պարտության համար Թուրքիան պատասխանատու չէ»: Այս բոլորը կատարվում էր աշխարհի աչքի առաջ, ԱՄՆ-ի դեսպան Ջոն Էվանսը համարձակորեն արտահայտվեց Հայ Ցեղասպանության տեսակետի մասին:

Ադրբեջանի ներքին զորքերը, Սաբաիլի շրջանի գործադիր իշխանությունը և Ադրբեջանի պետական տնտեսական համալսարանը Նյուքեդի գյուղում ստեղծել են «Ծահին» ռազմական ճամբար՝ սոցիալապես անապահով և որբ երեխաների համար: Ճամբարում արդեն կար 113 երեխա: Ճամբարի ստեղծման

Հայաստանում ԱՄՆ նախկին դեսպան Ջոն Էվանսը և Արամ Անանյանը: Դեսպանը պաշտոնը զոհելով՝ բարձրաձայնեց Հայոց ցեղասպանությունը՝ դատապարտելով Թուրքիային: Փակագիծ թերթում տպագրվեց Նահապետ Թումանյանի՝ ՆՀՕ հարցազրույցը «Մի թիզ հող չենք զիջի: Չգիտեմ ի՞նչ բան է սեփական ձեռքով ընկեր թաղելը. Չգիտեմ ի՞նչ բան է անհայտ կորած եղբորը սպասելը»,- Ջոն Էվանսը այդ թերթը հետը տարավ ԱՄՆ:

նպատակը երիտասարդության հայրենասիրական ոգին բարձրացնելն էր և զինվորական մասնագիտության հանդեպ հետաքրքրություն առաջացնելը:

Ըստ այդմ՝ հարց է ծագում, թե ադրբեջանա-թուրքական ռազմական սերտ համագործակցությունն արդյոք նշանակո՞ւմ է, որ Թուրքիան այսուհետ պատրաստ է ընդունելու պատասխանատվության իր մասնաբաժինը՝ ադրբեջանցիների նոր սերնդի պարտության համար:

Խոջալուի, Աղդամի ազատագրման մարտերին ուս-ուսի տված կռվում էին Ստեփանավանի «Սասուն» և «Ալաշկերտ» ջոկատները, որոնց մասին ասված է երկրորդ հատորում, լինելով առաջատար ջոկատներ, կատարենք որոշ լրացումներ: Հրաչ Նվերի Ծահվերդյանը Աֆղանստանում մարտական մկրտությունը ստանալուց հետո գործուղվում է հայրենի քաղաք Ստեփանավան՝ այնտեղ տեղակայված Խորհրդային բանակում ծառայությունը շարունակելու: Արցախյան գոյամարտի ժամանակ Հրաչը Գյառգյառ գյուղի տղաների հետ հավաքագրում և կազմավորում է 100 հոգանոց Ստեփանավանի գումարտակը: 1991թ-ին 15 հոգով Սասունը՝ 23, Սևանի Սուրիկը՝ 26, Մանվելը՝ 17 ազատամարտիկներով միացյալ ջոկատ կազմելով մեկնում են Հաթերք: Մարտերից մեկի ժամանակ գերեվարում են

Ադրբեջանի և Խորհրդային բանակի 32 զինվորականների: Ինչպես ասել ենք այս գրքի երկրորդ հատորում: Տղաներն ունենում են 24 կտոր շաքար, այն էլ բաժանում են գերիներին:

1992թ մայիսի 13-ին Նոյեմբերյանի Ասքեպատ գյուղի ինքնապաշտպանության ժամանակ թշնամու նշանառուի հրազենային գնդակը Հրաչի աջ ականջից մտավ, ձախ աչքից դուրս եկավ: Սակայն Հրաչը չլքեց մարտադաշտը: Մայիսի 18-ին 26 յուրայինների հետ մասնակցեցին Քաշաթաղի ազատագրմանը: Հադրութի Խլմջու գյուղում հյուրընկալվեցինք մի տատիկի տանը,- պատմում է Հրաչը, որի պատին շրջանակի մեջ կախված էր 12 տղաների նկարները, հարցրեցի՝ ուր են որդիներդ, ասաց՝ Երևանում են: Բայց ինչու չեն գալիս միացյալ ուժերով գյուղը և ձեզ պաշտպանենք թշնամուց,- ասացի: Այստեղ կռիվ է, ինչո՞ւ գան,-պատասխանեց տատիկը: Ողջ Եվրոպան շրջել եմ, խաղաղություն եմ սիրել: Մտանք թուրքի տունը: 85 տարեկան թուրքի կնոջ ոտքից արյուն էր գալիս, ցավից լացում էր, թևակապս հանեցի ոտքը կապեցի, ցույց տվեցի առաջին բուժօգնությունը, հանգստացավ: Ղարաբաղցի մի տղա խփեց, ամոթանք տվեցինք ու ստացավ իր տուժը: Երբ մարտի էինք գնում կամ վերադառնում մեզ ժպիտով, երգով, պարով ճանապարհում էին, նույնպես դիմավորում: Չէինք հասկանում, որ ծարպիկները շարժուձևերով մարտական կեցվածքով նկարահանվում էին և հիմա էկրաններում իրենց ցուցադրում: Հրաչի անբաժանելի մարտական ընկեր Անդրանիկ Ավետյանը ցավով էր տանում այս բոլորը և հպարտությամբ խոսում լեգենդար հրամանատարներից Սասունի, Սմբատ Այվազյանի, Մուշեղ Սաղաթելյանի մասին, որոնց բանտել են: Ժիրո Սեֆելյանին վտարում՝են Հայաստանից, Սամվել Բաբայանը՝ Իժոն, Ղարաբաղին դավաճանեց և փախավ Երևան, կաշառվեց տախտակի բիզնեսով և իր ծառոմաբանությամբ պաշտպանում է Սերժ և Քոչոյի զավթած նախագահի աթոռը, որոնք վերադարձրին ազատագրված հողերը, ստեղծեցին պատմաբանների հանձնաժողով, որ ապացուցեցին 1915 թ. հայոց եղեռնը: Եվ ստորագրելով մադրիդյան փաստաթուղթը՝ կնքեցին հայ-թուրքական սահմանների բացման պայմանագիրը, Հայաստանի հասցրին կործանման եզրին: Հայկական հեռուստատեսություն չեմ նայում, մամուլը թույն է թափում սեփական ժողովրդի վրա, սպուտնիկով նայում եմ անցյալի անցուդարձը:

ՍԱՍՈՒՆ ՋՈԿԱՏ «ՍԵՎ ԿԱԿԱՉ»

Կոտայքի մարզի առաջատար ջոկատներից են «Հրայր դժոխքը», «Ալաշկերտը», «Կոծոռը», և հատկապես «Սասունը», որի հրամանատար էր Սասուն Միքայելյանը՝ Սև կակաչը: Ջոկատը կազմավորվել է 1989 թ. Հրազդանում: Մինչև 1994 թ. մասնակցել է Երասխի, Նոյեմբերյանի, Բաղավան, Բաղանիստ, Ոսկեպար, Տավուշի և ԼՂՀ Շահումյանի, մարտակերտի (Հաթերք, Ումուդլու, Սրխավենդ), Ասկերանի (Խոջալու), Ֆիզուլիի, Քարվաճառի, Օմարի շրջանների և Շուշիի ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: Ունեցել է 5 զոհ:

Կենտրոնում Սասուն Միքայելյան՝ Սև կակաչ: 1990թ.:

«Սասուն» գումարտակ: Երկրորդ շարքի աջից երրորդը՝ Սասուն Միքայելյան: Մեջտեղի շարք ձախից երրորդը՝ Աբրահամյան Գեղամ: Մարտակերտ 1992թ.: «Սև կակաչ» գումարտակ

«Ացախ» ջոկատի հրամանատար Յաշա Մելքոնյան (աջից երրորդ նստածը)

1991թ. փետրվարի 25-ին ազատագրվեց Խոջալուն:
«Սասուն» գումարտակի մի խումբ ազատամարտիկներ:
Աջից երկրորդը կանգնած Սասուն Միքայելյան: Նստած Վրեժ (Դեղ):

Ջրառատ գյուղի Եռոյի Աբոյի ջոկատը
Երասխավանից Գետաշեն մարտի մեկնելիս: 1991թ.:

«Հրայր Դժոխք» գումարտակի հրամանատար Ալբերտ Մուսինյան

Կազմավորվել է 1989թ: Մասնակցել է ՀՀ սահմանների ինքնապաշտպանության և Արցախի ազատագրման մարտական գործողություններին: Անցել է փառավոր ուղի: Կազմակերպել է զենքի արտադրություն, համագործակցել է «Մարալիկ», «Չաուշ», «Հրազդան», «Կոռնիձոր», «Բալուջա» և այլ ջոկատների հետ: Ջոկատի անդամներից ութը զոհվել են:

ՀՀ ՊՆ հատուկ նշանակության գնդի կազմում, որի հրամանատարն էր Մեժլում Մանուչարյանը, շտաբի պետ Արթուր Սիմոնյանը գոհունակությամբ նշեցին Հրայր Դժոխքի մարտական ուղին, Իջևանի Գյուղազ, Տավուշի Այգեձոր, Այգեպար, ԼՂՀ-ի Հադրութի, Ծուշիի, Մարտակերտի, Լաչինի, Կրասնոսելսկի Վահան գյուղի, Քարվաճառի-Օմարի ազատագրման մարտերում:

1992 թ. հունիսի 5-ին «Հայր Վահան»-ի հրամանատար Վիլենը ջոկատով մեկնեց Մարտակերտ, Լենինական՝ Կարմրավանի ինքնապաշտպանության մարտերին մասնակցելու համար: Վիրավորվել է Չափառ գյուղում, ստացել կոնտուզիա:

«Հրայր Դժոխք» գումարտակ, հրամանատար՝ Ալբերտ Մուսինյան
(աջից կքանստած 8-րդը) 1989թ, մարտից առաջ



«Հրայր դժոխք» գումարտակ: Ձախից երկրորդ՝ Մարտին Բաղդասարյանը հրազդանցի ազատամարտիկների հետ, Քաշաթաղի, Թիղիք 2, Թիղիք 1 գյուղերի ազատագրման օրերին, 1992 թ.

«Հրայր դժոխք» գումարտակ:
Արսեն Զաքարյանը (ձախից առաջինը) և Ջոն Նիկողոսյանը (ձախից երրորդը) մարտական ընկերների հետ, Օմարի ազատագրումից առաջ, Քարվաճառ, 1994 թ.

1994 թ. «Հայր Վահան» ջոկատը ընդգրկվեց «Սասունցի Դավիթ» գումարտակի կազմում:

Մարտական ընկերներն են Հովհաննես Հեքիմյանը, Գագիկ Աբրահամյանը, Մաթևոս Մուսախանյանը, Վոլոդյա Մաթևոսյանը:

Մարտնչող ոգու տեր քաջ ազատամարտիկները դժվարությունների մեջ անգամ կատակող, ընկածվողներին գոտեպնդելու աստիճան բարի, ընկերասեր էին: Նրանց հոգու խորքում աներևույթ մի ուժ կար, որ փոխանցվում էր բոլորին:

Մեր ջոկատի թուրքմենը՝ Նեպեսով Գորբանմուրատ Բազարբաևիչը մուսուլման էր: Հայաստանում է ծառայել, ու երբ շարժումը սկսվեց, միացավ մեզ: Հավատարիմ տղա էր, թասիբով: Չորս ամիս չէին թողնում Եռաբլուրում թաղեինք: Ասում էին. «Դրա համար մի հատ փոս փորեք, գցեք մեջը, բայց հերոս ա՝ էդ ոնց ա, 2000թ. աղջիկների հետ հարբած մեկը Սևանից գալուց ավտոմեքենայով ընկնում է ձորը, բերում Դեդի կողքին եք թաղում: Էդ տղեն հայի համար մեռավ ու հազար հատ էսօրվա նախարար արժեր»: Տղաների ջանքերով թաղվեց Եռաբլուրում:

Հայր Վահան, զոհվել է 1989 թ. դեկտեմբերին, Իջևանում

Հրաչի խոսքին ես կավելացնեի, բացի ռազմահայրենասիրական ոգու և ազգային գաղափարախոսության թեմաներին «Գարդման» ջոկատի կոմիսար Կարենը հաճախակի էր անդրադառնում:

Վոլոդյա Յուրիկի Սաթևոսյան՝ «Ապարանցի Վլե»

Ազգությամբ թուրքմեն Նեպեսով Գորբանմուրատ Բազարբանիչը՝ (Բաչմանը), որ կռվել է հայերի կողմից: Թաղված է Եռաբլուրում

Վազգեն Սարգսյանը զինվորների հետ պարելիս 1998 թ.

ՅԻԿ ԳՈՒՄԱՐՏԱԿ,

ԳԱՐԴՄԱՆՑԻՆԵՐ

Կարեն Ներսիսյան, «Գարդման» ջոկատի կոմիսար

Գեղարքունիք, Արցախ, Ծամխոր, Թովուզ, Խանլար մինչև Գանձակ ընկած տարածքը անվանվել է Գարդման աշխարհ:

1992թ օգոստոսի 14-ին ձևավորվեց Գարդման ջոկատը: Հրամանատար ընտրվեց Աշոտ Ժորայի Աստաբատյանը, անձնակազմի գծով տեղակալ՝ Կարեն Արշավիրի Ներսիսյանը, Առաքել Մխիթարյանը, Մայիս Պետրոսյանը, Մանվել Մխիթարյանը, Աշոտ Քեռին ջոկատի ազատամարտիկներն էին:

Ծանր մարտերը շարունակվում էին Կրասնոսելսկի (այժմ Ճամբարակի) վարչական տարածքի երկայնքով մեկ, Վահան գյուղի ուղեկալի բոլոր պաշտպանական հենակետերի ուղղությամբ: Հայերը անսասան կանգնած էին այդ սահմանագծում՝ հաստատակամ, իրենց վայել զորությամբ, քանի որ դիմացը Արծվաշենն էր գերեվարված:

Հայրենիքի սահմանների պաշտպանության համար մղվող ծանր մարտերը շարունակվում էին: Ադրբեջանցի հրոսակները, անտեսելով մարդկային կորուստները, համառորեն ջանում էին թափանցել մեր սահմաններից ներս: Առանձնակի դաժան և անզիջում էին բախումները Կրասնոսելսկի վարչական տարածքի երկայնքով մեկ: Առանձնակի վայրագությամբ գրոհներ էին կազմակերպում Վահան գյուղի վրա: Ռազմաճակատի գիծն ամեն վայրկյան կարող էր տեղաշարժվել: Այդ օ-

րերին թուրքերը որոշ հաջողություններ ունեցան, որը, թերևս, ԽՍՀՄ-ից մնացած զենքի և մարտական տեխնիկայի շնորհիվ էր և գուցե բարին էլ հենց այդ էր, քանի որ այդ երևույթների շնորհիվ տեսանք, հասկացանք և ճանաչեցինք թուրքական, միայն թուրքին հատուկ սադիզմը: Միայն արծվասիրտ մարդիկ կարող էին աներեր կանգնել ոսոխի գրոհների դեմ:

Ահա հենց այդ օրերին էլ ծնունդ առավ «Գարդման» հասարակական ինքնապաշտպանական կազմակերպությունը: 1992 թվականի օգոստոսին գարդմանցիները Կրասնոսելսկի զինկոմիսարիատին կից կազմավորված ինքնապաշտպանական գումարտակի հետ, որի հրամանատարն էր Սուրիկ Սարգսյանը, տեղակալ Հայկ Լազարյանը, վստահաբար պաշտպանեցին մեր սահմանները: Անբեկանելի վճռականությամբ մեր շարքերը սկսեցին համալրվել իմացյալ մահվան ճանապարհով թուրքի մուտքը դեպի մեր հայրենիքի սահմանները փակող, արի, առյուծասիրտ տղաներով: Ինչպե՞ս կարելի է չհիշել, թե այն ժամանակ զենք-զինամթերքի պակասությունը, ձմեռային հագուստի նկատելի սակավությունը ինչպես էր փոխհատուցվում տղաների արիությամբ: Հենակետերում մեծ դժվարությամբ կատարվող հերթապահությունը, արտաքուստ ոչ դժվարին, բայց իրականում ամեն պահ պատերազմի մեջ գտնվել էր նշանակում:

«Գարդման» ջոկատի կոմիսար Կարեն Ներսիսյանը (կենտրոնում), Սարգսյան Գրիշը՝ Ժարիտ Գրիշը, ձայը մարտական ընկերներով

Դիրքերը բարձրանալիս բոլորի աչքերում մահն ընդունելու պատրաստակամություն կար, բոլորի մաշկի տակ մահվան սարսուռ կար, բոլորի մեջ մահվանը մահով հաղթելու գաղափար կար, գիտակցելով, թե ով է կողքինդ: Մի պահ նայում էինք իրար աչքերի, փնտրում ու գտնում վստահություն: «Եթե խփվեմ՝ նա կիջեցնի» և այդ ոգով բարձրանում դիրքերը:

1992 թվականի դեկտեմբերի 30-ն էր, երբ թշնամին, թարմ համալրում ստանալով, միաժամանակ գրոհի նետվեց հինգ պաշտպանական հենակետերի ուղղությամբ: Մերոնք, ինչպես միշտ, անսասան էին, քանզի հայրենիքին երդվել էին մարտնչել առյուծին վայել զորությամբ: Այդ մարտերում թշնամու գնդակից զոհվեցին բազում քաջ հայորդիներ՝ Գոռ Հակոբյան, Գրիգոր Ճաղարյան, Կորյուն Ոսկանյան, Կարո Խաչատրյան, Ստեփան Առաքելյան, Գուրգեն Դանիելյան, Մանուչար Ապրեսյան, Նորիկ Դալլաքյան, Սերգեյ Մարկոսյան, Դավիթ Թորոսյան, Մամիկոն Զաքարյան, Սասուն Սարիբեկյան, Մակիչ Անդրյան, Վարդան Կիրակոսյան, Անդրանիկ Կիրակոսյան և շատ ուրիշ քաջեր:

Վիրավորվեցին Նորայր Մխիթարյանը, Կարեն Ներսիսյանը, Արմեն Հակոբյանը, 16-ամյա Հայկ Գրիգորյանը, և շատ արծվասիրտ ազատամարտիկներ:

Այդ օրերին, երբ զենքը ձեռքին թշնամուն հալածելու պահին ընկավ Գոռ Հակոբյանը, 3 օր անց ծնվեց նրա դուստրը, որը գարդմանցիների միահամուռ ցանկությամբ անվանվեց Գոռինե:

Տարիներ են անցել, գարդմանցիները անցել են խաղաղ ստեղծագործ աշխատանքի, սակայն հերոսական ոգին ամեն օր, ամեն ժամ նրանց հետ է:

Եվ երիցս թանկ ու անգնահատելի է այդպես ձեռք բերված հաղթանակը, որի երաշխավորը, բարեբախտաբար, այլևս կայացած մեր պետական բանակն է: Սակայն Աստված մի արասցե, երբ էլի վտանգ սպառնա մեր խաղաղությանը, «Գարդմա-

նի» տղաները միշտ էլ պատրաստ են անձնվիրաբար պաշտպանել մեր հողը՝ սուրբ հայրենին:

Ավտոմատների կրակոցները, վիրավորների հառաչանքները, զոհվածների անշունչ ցավը հայի ոգին չընկճեցին: Հայի հողը թույլ չի տալիս ծնկել, աղերսել հնուց եկած զավթիչի, արնախումի, մարդասպանի առջև, որն իր զավթողական ոճին հատուկ՝ կանանց բռնաբարող, մանուկներին սրի քաշող, դիակները լափող, մարդկանց այրող, մսահոտից բուրմունք քաշող արարած է, չեմ կարող չհիշել,- ավելացրեց Կարենը,- որպես ականատես ու մասնակից հարկ եմ համարում նշել հերոսաբար մարտնչող ազատամարտիկների Միրզա Ծուշանյանի, Սամվել և Մանվել Մխիթարյանների, Սերյոժա և Վրեժ Երիցյանների, Մայիս Պետրոսյանի, Համբարձում Բալյանի, Հրաչիկ Գևորգյանի, Սարգիս Ղումալյանի և այլոց մասին:

- Այո՛, հիշում եմ քո հերոսական գործերն անգնահատելի են, Կարե՛ն: Դու, որպես «Գարդման» ջոկատի կոմիսար, կարողացար քո հայրենասիրության օրինակով վարակել բոլոր ջոկատներին:

Տարիներ են անցել, գարդմանցիները խաղաղ իրենց ստեղծագործ աշխատանքով են զբաղված, սակայն հերոսական ոգին ամենուր և ամեն ժամ նրանց հետ է, նրանց սրտում անթառամ է հաղթանակի ծանապարհին ընկած նահատակների անունները ու երբ հիշում են նրանց կատարած սխրանքները մի պահ լռում, նայում ենք իրար աչքերի ու հասկանում, որ միշտ պատրաստ ենք անձնվիրաբար պահել հողը հայրենի:

Կարեն Ներսիսյանը զինակից ընկերոջ՝ Մայիսի հետ

ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը հայոց հողերի ազատագրմանը

Գարդմանցիները մարտական ընկերներով (ձախից երրորդը՝ Կարեն Ներսիսյան)

նվիրվեց ամբողջ էությամբ: Չնվիրվեց հարուստներին, քանի որ նրանք ոսկուց դիզած բուրգերի հետևում անխոցելի են նաև բռնակալների իշխանության մեջ:

Հայ ժողովուրդը դեպի տանկերն էր գնում ոչ թե հանուն զավթելու, այլ քաղաքական ազատություն իրականացնելու համար, բռնակալությունից, անարդարությունից հոգեբանորեն դեմոկրատական կարգեր ստեղծելու անհրաժեշտ պայմաններ ձեռք բերելու համար:

Այս հարցում ակտիվ է ժողովրդի համախմբվածությունը, նրա միասնական ուժը, նրա առողջ բանականության սկզբունքները:

Իսկ շահամոլ անձին գիրացնելու տգետ քաղաքականություն վարող վախկոտները, որոնք, հրաշքի սպասելով, անիմաստ պարփակված կյանք են անցկացնում, պատահականության կուռք՝ բախտ հորինում միայն նրա համար, որ դրանով սքողեն իրենց տգիտությունը, ծածկեն թալանած հարստությունը: Եվ նմաններն այդպես անգիտակցորեն ապրում են անհասկանալի վախի մեջ, որի պատճառը տգիտությունն է: Տգիտությունը հզոր զենք է, որի պատճառով խաչվեց Հիսուս Քրիստոսը, որ երկիր եկավ Աստծու պատվիրանով:

Հորդանան գետում, որ սկիզբ է առնում Կեսար քաղաքի մոտակայքից, մկրտվեց Հիսուս Քրիստոսը: Նա՝ շրջանցելով

Գալիլիայի ծովը, թիավարելով Մեռյալ ծովը, Երուսաղեմից Սուրիա, Անտիոք՝ հասավ Կիլիկիա, Տարսոն, այնտեղից Կապադովկիա, ուսուցանելով իր գաղափարները՝ լուսավորեց աշխարհը: Հիսուս Քրիստոսը ծնվեց Բեթղեհեմում՝ մսուրքի մեջ, ավանակի՝ էշի վրա նստած՝ երկրից-երկիր կյանքը պայծառացրեց, ժողովուրդների մեջ քարոզեց Աստծու՝ Հոր պատվիրանները:

Հրեա հոգևորականները դեռ շատ հնում հին կտակարանի 48 գրքեր են հավաքել ու միավորել որպես մեկ ամբողջական գիրք:

Հիսուս Քրիստոսի ծննդից հետո քրիստոնյա հոգևորականները հավաքել, ստուգել են 27 գրքեր և մի գիրք կազմել:

Եվ ահա Հին և Նոր կտակարանները միասին կազմում են մի ամբողջականություն: Հայերն այն անվանել են Աստվածաշունչ մատյան. այն մարդկային քաղաքակրթության մեջ մեծ նշանակություն ունի և նրան սրբորեն հետևում է հայ ժողովուրդը:

Հույներն այն անվանել են հենց գիրք, հունարեն՝ Բիբլիա: Իսկ հայերը գիրքը կոչեցին ճիշտ անունով, ինչպես ասացինք Աստվածաշունչ:

Աներևելի ժամանակներից մինչև մեր օրերը և ապա աշխարհի ստեղծումից մեր նախնիների անցած պատմության կենսափորձը փիլիսոփայությունն է, որ հաճախ սերտորեն խաչվում է երկնքի և երկրի հետ, առնչվում գիտական տվյալներին: Ամբողջ Աստվածաշունչը կազմված է 75 գրքից, այն թարգմանվել է 1700 լեզուներով: Սահակ Պարթևը և Վարդապետ Մեսրոպ Մաշտոցը սկսած 405 թվականից շուրջ 30 տարում ամբողջությամբ թարգմանեցին Հին ու Նոր կտակարանները:

Աստվածաշունչը հայերեն առաջին անգամ տպագրվել է 1666թ. Ամստերդամում, Ոսկան Վարդապետ Երևանցու կողմից:

Հիսուս Քրիստոսի խոսքն էր՝ երկնքից իջա, որ նրա կամքը կատարեմ:

ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը հայոց հողի մաքուր ծնունդն էր, ազնիվ կյանքով մնաց անարատ: Մեր օրերի ծուռ Սասունցի Դավիթն էր, որ իր ձեռքով իրագործեց Հայաստանի անկախության, պետականության, բանակաշինության ծրագիրը:

Նա էր, որ ազատագրեց թուրքերի կողմից զավթած Աղդամը՝ Տիգրան Մեծի կառուցած վեց քաղաքներից մեկը, ինչպես նաև Հորադիզը, Ֆիզուլին, Զանգելանը, Ղուբատլուն, Քաշաթաղը, Քարվաճառը, Շուշին, և, ամենակարևորը՝ Արցախ երկիրն իր յոթ շրջաններով, ամրացրեց հայոց սահմանների անվտանգությունը և անդորր հաստատեց, ուր հսկում են հայ ժողովրդի ծոցից ծնված իր զավակները՝ զինվորները:

Մուշեղ սպարապետը թույլ չէր տալիս, որ թեկուզ մի թիզ հող Հայոց սահմաններից խլվի: ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը հետևեց Մուշեղ սպարապետին, հավատարիմ մնաց ծուռ Դավիթին, արքայից արքա Տիգրան Մեծին, ինքն իրեն ու պատժեց բռնակալին:

- Եթե որևէ մեկը կասկածում է, թող թերթի պատմության էջերը, նրա անցած ուղին դնի կշեռքի նժարի վրա,- ավելացրեց գնդապետ Հենրիկ Մուրադյանը,- և խոր հոգոց հանելով՝ քաշվեց մի անկյուն, թիկնեց աջ թևին ու գլուխը դրեց քարին. հոգնած ննջում էր:

Պատմությունը կբացի նրան շրջապատող բարեկամների չարակամ դեմքերը, որոնք հանուն շահի ու փառքի գայթակղեցին որոշ մարդկանց: Խառնակիչները դիմակված խաթարում են թշվառ Հայաստանի խաղաղությունը: Անվերջ կասկածները այդ են ցուցանում: Քանի դեռ կան մեր մեջ ամենանենգ դավաճաններ, որոնք ձևանում են իբրև անկեղծ բարեկամներ, սակայն իրենց սարսափեցնող նենգ դիվանագիտությամբ վիժվածք են, բնության ստրուկ, դժոխքի բիծ, իրենց մոր արգանդի ոջիլ, անամոթ, կրծքի կաթի փոխարեն թարախ կերած:

Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԸ պատերազմում էր իր ժողովուրդի անվտանգության և նրա հարևան ժողովուրդների խաղաղ աշխատանքի համար:

- Հիշենք բարու և չարի կերպարները, - խոսքի մեջ ավելացրեց տողերիս հեղինակը:- Ժողովուրդների կողմից հաստատված այս գեղեցիկ բառերը, որի կենտրոնում չարին գրկող սատանան է:

Սպարտակը մարտնչում էր ազատության համար: Հռոմի

կոնսուլը ազատությունը ճնշող, խեղդող բռնակալ էր, չար, մարդակեր գազան: Նա մոտեցավ Սպարտակին, շղթայված պոետ Անտոնիոսին, հեգնանքով ասաց.

- Ի՜նչ երկար է ձգվում գիշերը: Իսկ Սպարտակին, որից զավթել էին ստրուկ կնոջը, վախի զգացողությամբ աշխատեց բացատրել, ասելով. «Չէ՞ որ դու ես գլադիատորը, իսկ ես Հռոմի Կոնսուլը՝ Մարկոս Կրասոսը»: Հոգեբանորեն թույլ զորապետը նայեց Սպարտակի աչքերին, վախից բարձրաձայն բղավեց ու աջ ձեռքով ուժգին ապտակեց Սպարտակի դեմքին:

Ձեռքերը շղթայված Սպարտակը ազատության թուքը թքեց բռնակալ չար Կրասոսի երեսին: Կրասոսը կատաղած հրամայեց պահակազորին շրջան կազմել՝ ստուգելու ստրուկ եղբայրների առասպելը, որպեսզի նրանք մենամարտեն և իրենց ձեռքերով սպանեն մեկը մյուսին, հարազատ ընկերոջը:

Ահա տեսնում եք ինչպիսի դաժանություն կա աշխարհի երեսին: Եվ ավելացնում է. ով կենդանի մնա՝ խաչի հանել, որ հողից վերև օդում կախված՝ տանջամահ լինի, հետո դիակը վառել, մոխիրը քամուն տալ: Այս հրամանից հետո թռավ ձիու վրա ու սլացավ առաջ՝ թագավորին, իր վերադասին զեկուցելու, քծնելու, նրանից շնորհում, պարգևներ ստանալու համար: Ազատությունը խեղդվեց, հաղթեց ժանդարմական կոպտությունը:

Բազմիցս մեր աչքերով տեսել ենք, շփվել, կիսվել Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻ հետ: Գտնվելով ռազմաճակատում՝ խոսքի մեջ ընկավ հետախույզ Սամվել Հովհաննիսյանը, որ խրամատի մեջ էր, առաջին գծում: Նա ասաց.

- Վազգեն Սարգսյանը՝ ստեղծելով պայմաններ, կազմակերպելով, ստուգում էր իր իսկ հրամանների ուժը, դերը և արդյունքը, ազատամարտիկի, զինվորի, ենթակայի նվիրվածությունը իրեն և իր հրամանների կատարմանը:

Չի եղել մի դեպք, որ լինի ռազմաճակատից տունդարձի ճանապարհ: Ոչ ոք սվիններով ուժով չի պարտադրվել մեկնել ռազմաճակատ:

Հանուն ազատության՝ բոլորը մեկնում էին կամավոր՝ հետևելով միջազգային ռազմական նորմաներին, պահանջվող օրենքներին: Ոչ մի ջարդ, վրեժխնդրություն չէր լինում գերիների, խաղաղ բնակիչների նկատմամբ: Հատկապես երեխաների ու կանանց հանդեպ մեծ ուշադրություն կար:

Գինի կամ օղի արգելված էր օգտագործել Հայոց բանակում. լինում էին բացառություններ, այն էլ հատուկ հսկողության և ուշադրության պայմաններում:

Չէր բացառվում, որ լինեին գործակալներ ու ենթարկվեին պրովակացիայի, որոնք ավելի նրբանկատ էին իրենց հաշվարկների և գործողությունների մեջ:

- Ես մի քանի հետախույզների անուններ թվարկեմ՝ Արթուր Ալեքսանյան՝ Ամարասի Արթուր, Աղվանցի Սամվել, Գորիս-Զանգեզուրի Սամվել Հովհաննիսյան, Արմեն Ղևոնդյան, Խաչիկ Սիմոնյան, Լուսաբեկ Սամվելյան, Սեյրան Աթանեսյան, Գագիկ Դանիելյան, Գագիկ Բոյաջյան, որոնց մասին հարկ եմ համարում խոսել առանձին: Մեծ է նրանց կատարած աշխատանքները, ծառայությունը հայ ազգին, կարևոր և նշանակալից:

Կանգնած աջից երրորդը «Գարդման» ջոկատի Աշոտը, ձախից երրորդը՝ Դերոն 10 տարեկան որդու հետ, ձախից առաջին կքանստածը՝ Գիժ Արմեն Սարգսյան մարտական ընկերներով, մարտից առաջ, Ծիծեռնակաբերդ, 1993թ

ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԱՏՄԱՐՏՈՒՄ ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արթուր Ալեքսանյանը՝ Ամարասի Արթուրը, ծնվել է 1957թ. Ստեփանակերտում: Տեղյակ լինելով Արցախ երկրի ներքին ու արտաքին կյանքին՝ հայրենասիրական մղումներով երիտասարդ Արթուրը ձգտում էր կապեր ստեղծել Մայր Հայաստանի հետ: Այդ կապակցությամբ հայտնվում է «Գարուն» ամսագրում՝ հանդիպելու երիտասարդ գրող Վ. Սարգսյանի հետ, որը «Հացի փորձություն» գրքի հեղինակն էր: Թեթևակի ծանոթ էր: Ցանկություն կար մոտիկից շփվելու, դարդերը պատմելու, փրկության եզրեր գտնելու, կործանման եզրին հայտնված Արցախ երկրին սատարելու:

Վ. Սարգսյանը սկզբում ցանկություն հայտնեց կազմակերպել հարցազրույց, բայց Արթուրը համառեց՝ առաջարկելով սեփական աչքերով տեսնել Արցախի վիճակը. հարցազրույցով վերքին դեղ ու դարման չի արվի:

Եվ այդպես Արցախ մեկնելու ծրագիրը կազմվեց: 1987թ. վերջին Վազգեն Սարգսյանը, Վրեժ Իսրայելյանը, Սպարտակ Ղարաբաղցյանը, Ծուշան Ղազարյանը, Սարգիս Դավթյանը մեկնեցին Ստեփանակերտ, այնտեղից՝ Գանձասար: Թուրքերը այդ փառահեղ հնամենի սրբավայր հուշակոթողի ելումուտը ծեփել էին, դուռ-լուսամուտ գերաններով, տախտակներով երկու-երեք շերտ մեխել-փակել էին: Ցանքի անունը փոխել դարձրել էին Ցանքլու: Վազգենը բազալտե սուր քար ճարեց «լու» տառերը ծեծելով վահանակի վրայից ջնջեց, տաշեց: Մինչ այդ Վ. Սարգսյանին խնդրեցինք, որ այդպիսի փոփոխություններ չանի. թուրքերը սկանդալ կբարձրացնեն:

«Փակ դռները լոմով կոտրեցինք, մտանք ներս, աղոթեցինք,- պատմում է Արթուրը,- շունչ տվեցինք տարիներով մամռակալած կանգուն սյուներին: Բորբոսնած առաստաղը, պատերը խոնավությունից սևացած՝ մթագնել էին: Համբուրեցինք կամարների, խոյակների ու նախշերի վրա տարիներով նստած սառը փոշին: Մոմ վառեցինք, լուսավորեցինք մութ

Ամարասի Արթուրը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը հայոց նախարարների հետ Գանձասարում, Դադիվանք, 2006 թ.

անկյունները՝ ջերմություն տալով, հույս ու հավատ ներշնչելով, ուժ ու եռանդ ստանալով՝ գոտեպնդվեցինք, ծնկաչոք աղոթեցինք ու երդվեցինք մինչև մահ ու գերեզման պայքարել Հայաստանի հողերի ազատագրման համար: Վազգեն Սարգսյանը ջերմեռանդ աղոթում էր. այդ ժամանակ խոսք անգամ չկար Ղարաբաղյան շարժման, հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի մասին:

Առաջին հոգեհարազատ երդումը կայացավ Գանձասարի Սուրբ Վանքում: Այդ պահին Վազգենն Արթուրին խոստացավ, որ հստակ պատկերացում չի ունեցել Արցախի, այդ չքնաղ հայ աշխարհի մասին: Նա իր սեփական աչքերով տեսավ, հոգով սրտով ընկալեց, ամբողջությամբ հավատաց և Արթուրին ասաց՝ Արցախի և Հայաստանի փրկությունը մեր միասնության մեջ է:

Եվ այդպես սկսվեց այդ փոքրիկ խմբի գործունեությունը: Այն 1988թ. ընդգրկվեց Ղարաբաղյան շարժման, Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մեջ: Արցախ-Երևան կապը ամրանալով՝ սկսեց գործել: Այդ ժամանակ Արթուրը լայն կապեր ստեղծեց Ստեփանակերտի, Երևանի, Գյումրիի, Աբովյանի, հատկապես Չարենցավանի «Ղարաբաղ կոմիտե»-ի հետ, Մարտին Բաղդասարյանի հետ հանրահավաքներ, գործադուլներ կազմակերպեցին: 1988թ. փետրվարի 12-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ ժողովրդական առաջին զանգվածային ցույցը՝ ԼՂՀ-ն Հայաստանին վերամիավորելու պահանջով:

Իսկ փետրվարի 20-ին ԼՂՀ ժողովրդական դեպուտատների մարզային խորհուրդը որոշում ընդունեց անջատվել Ադրբեջանից և վերամիավորվել Մայր Հայրենիքին՝ Հայաստանին: Երևանում տեղի ունեցավ Ղարաբաղյան առաջին ցույցը: Հայ ժողովուրդը գարնան հորդառատ անձրևից առաջացած առվակների պես հավաքվեց օպերայի Ազատության հրապարակում:

Մարտի 28-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը մերժեց Հայաստանի հետ միավորվելու ԼՂՀ մարզային խորհրդի որոշումը: Գործի բերումով հիմնադրվեց «Ամարասը» ամենախոշոր հասարակական կազմակերպությունը, որի միջոցով Արցախում իրականացվում էին քաղաքական, ժողովրդատնտեսական և բազմաթիվ ծրագրեր: Բորիս Դադամյանը հետո Ամարասի Արթուրի նախագահությամբ ամենակարևոր ուղղությունը «Միացում» ընդհատակյա քաղաքական շտաբի որոշումների իրականացումն էր, այն նպաստում էր ինքնապաշտպանական ջոկատների կազմավորմանը, ֆինանսավորում և զինում էր նրանց, ինչպես նաև Արցախի բոլոր շրջաններում ստեղծում գաղտնի նյութատեխնիկական բազաներ:

«Ամարաս» բարեգործական միության նախագահ Բորիս Դադամյանը և Ամարասի Արթուրը ԽՍՀՄ պետանվտանգության և ներքին գործերի օրգանների կողմից մշտապես ենթարկվել են հետապնդումների ու ձերբակալման: Սակայն այդ ամենը չեն կարողացել կոտրել այս խիզախ հայորդիների կամքը: Շարունակել են զենք, զինամթերք հասցնել թե՛ օդով, թե՛ ցամաքով: 1989թ. հուլիսի 8-ին Ստեփանակերտի Կրկժան արվարձանում տեղի ունեցավ առաջին արյունալի բախումն ադրբեջանցիների և հայերի միջև: Իսկ 1989թ. հուլիսի 26-ին Ադրբեջանի կազմում գտնվող Շահումյանի շրջանի ժողովր-

Ամարասի Արթուրը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը հայոց նախարարների հետ ազատագրված հայոց հողերում, 2006թ

Ձախից օրենքի ջահակիր, քաջ ասպետ Գագիկ Ջհանգիրյանը Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻ հետ, մայիս, 1998թ

դական դեպուտատների շրջխորհրդի արտահերթ նստաշրջանը որոշեց շրջանը վերամիավորել ԼՂՀ-ին: Ասենք, որ 1991թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում ԼՂՀ մարզային և Ծահումյանի շրջանային խորհուրդների նիստում հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ):

Այդ օրերին Ամարասի Արթուրը Սուրբ Էջմիածնում ծանոթանալով Պարգև Սրբազանի հետ՝ նրան համոզում և աջակցում էր, որ նա անմիջականորեն օգնի Արցախի հայկական թեմի ստեղծմանը: Եվ այդպես նա նշանակվում է Արցախյան թեմի գործերի կառավարիչ: Ստեղծելով նյութատեխնիկական բազա, ավտոպարկ և շինարարական բրիգադաներ՝ սկսվում են Արցախի և Ծահումյանի շրջանի եկեղեցիների նորոգման ու վերականգնման աշխատանքները: Այդ աշխատանքի արագացված տեմպերը, եկեղեցիների առաջին արարողությունները Արցախում բարձրացրին արցախցիների ազատագրական

պայքարի ոգին: Գանձասարում մատուցած առաջին պատարագը արցախցիների մարտական և հոգևոր հաղթանակների սկիզբ դարձավ:

Ամարասի Արթուրը լավ հասկանում էր, որ պատերազմն անխուսափելի է: ԽՍՀՄ-ը փլուզվում էր: Ադրբեջանը, օգտվելով իր տարածքում գործող խորհրդային 4-րդ բանակի հնարավորություններից, կարող էր ցանկացած ագրեսիա կազմակերպել Արցախի դեմ: Արթուրը Վազգենից հուսալի ճանապարհով ստանում էր զենք ու զինամթերք: Նա նախազգուշացրել էր, որ Նախիջևանի ուղղությամբ լինելու է երասխի վրա հարձակում: Այն սկսվեց 1990թ. հունվարի 18-20-ին:

Հեռահար ռմբակոծությունը ավերեց սահմանամերձ հայկական բնակավայրերը:

«Վազգեն Սարգսյանը զանգեց Ստեփանակերտ,- պատմում է Ամարասի Արթուրը,- կասկածանքներդ իրականացան, օգնության հասի՛ր: Հոգեպահուստ գնդացիր ունեի, այդ ժամանակ ատոմային ռումբին համարժեք զենք էր: Իմ օգնականներ Ռազմիկ Դանիելյանի, Տիգրան Պետրոսյանի հետ առանց հապաղելու հասանք, կանգնեցինք Վազգենի կողքին»:

Հունվարի 18-20-ը հայ-ադրբեջանական լայնածավալ բախման սկիզբն էր: Երասխավանի մատույցներում հաղթական աշխարհազորը Վազգեն Սարգսյանի ընդհանուր հրամանատարությամբ եռօրյա մարտերում ջախջախիչ հակահարված հասցրեց ադրբեջանական հրոսակախմբին, ետ շպրտեց բորենի ելուզակներին:

Այս բոլորին զուգահեռ՝ կտրուկ վատացավ Ղարաբաղի վիճակը: Վազգեն Սարգսյանը Արթուրին ասաց. «Այստեղ գլուխ կհանենք, շտապ մեկնի՛ր Ստեփանակերտ: Վերցրի ուսապարկս, օգնականներիս հետ վեց ժամ հետո հասանք տեղ: Գնդացիրը թողեցի Վազգեն Սարգսյանի մոտ՝ հուսալով, որ կուղարկի:

Վազգեն Սարգսյանը իր կողքին կանգնած Հատուկ գնդի առաջին վաշտի հրամանատար Տիգրան Հովհաննեսի Գևորգյանին կարգադրեց առանց իմ հրամանի լազեր չմիացնեն, սպասեն, կլինի հատուկ որոշում: Վազգեն Սարգսյանը Երասխավանի կռիվների ժամանակ աչքի ընկավ իր զորավարական կազմակերպչական ունակություններով և դարձավ ՀՀԾ-ի

ջոկատների միավորման ղեկավար: Կատարելով ՀՀ նորաստեղծ Գերագույն խորհրդի որոշումները, որը պահանջում էր բոլոր ջոկատները միավորել մի կառույցի մեջ և ենթարկել այդ որոշումներին: Միայն ՀԱԲ-ը չենթարկվեց:

Արցախում որոշակի հարցեր կարգավորելուց հետո Արթուրը վերադարձավ Երևան: Նրան դիմավորեց Վ. Սարգսյանը:

Աստիճանաբար մտերմանում, ամրանում էր Արթուրի և Վազգենի ընկերական կապը: Յուրաքանչյուր հարց դառնում էր խորհրդակցության առարկա:

«Այդ էր հիմնական պատճառը, որ Վազգենը սկսեց իմ գաղափարական ծրագրերի վրա մեծ ուշադրություն դարձնել: Այնքան հարազատացանք, որ կարծես 100 տարվա ընկերներ լինեինք»:

ՀՀԾ-ի հնարավորությունն ու հեղինակությունն արժեքավորվեց հատկապես ՀՀԾ-ի առաջին համագումարից հետո: Այդ խմորումների ժամանակ ժողովուրդը միանշանակ հասկացավ, որ միակ ուղին պատերազմն է, հարկադրված պատերազմը: Ցույցերի ժամանակ համարձակ հարթակ էր բարձրանում, շիտակ խոսք ասում հանրությանը: Սակայն շատ շուտ հասկացավ, որ ազգային հարցերը լուծվելու են ոչ հանրահավաքի, այլ մեզ պարտադրած պատերազմով:

Արթուր Ալեքսանյան (Ամարասի Արթուր), 1990թ

Ամարասի Արթուրը կնոջ և դուստրերի հետ

Վազգեն Սարգսյանի շնորհիվ հասկացանք ու նախապատրաստվեցինք դիմակայել: Նա կարողացավ ապացուցել, որ հայ ժողովրդին միայն զենքով կա փրկություն: Ընդունելով Արթուր Ալեքսանյանի խոսքերը՝ նա կրկնում էր. «Ցանկացած ազգային-ազատագրական պայքար ստորագրվում է արյան և միասնության ջանքերով»:

Արթուրը գիտակցում էր, որ միայն Հայաստանի ամուր միասնությամբ, նրան նվիրված ազնիվ մարդկանցով, հավատարիմ առաջնորդներով կարելի է հասնել հաջողության, օգնել Արցախին: Արթուր Ալեքսանյանը ստեղծել էր Ամարասի բարեգործական կազմակերպություն՝ փող, զենք ու զինամթերք ձեռք բերելու համար: Այդ օգնությամբ, ֆինանսներով սատար էին կանգնում ԼՂՀ-ի ինքնապաշտպանական ջոկատներին: Սերժ Սարգսյանը այդ ժամանակ ԼՂՀՄ մարզի քարտուղար Հենրիկ Պողոսյանի օգնականն էր:

Արկադի Կարապետյանի («Ագո») գաղափարներով կազմավորվեց Արցախի ինքնապաշտպանական ռազմական խորհուրդը: Սերժ Սարգսյանը ընտրվեց խորհրդի կազմում, հետո

դարձավ նախագահը: Հետագայում խորհուրդը վերանվանվեց ռազմական, Ռոլես Աղաջանյանն ինքն էր կազմակերպում ռազմական կոմիտեի աշխատանքները:

Երբ 1990թ. ձևավորվեց պաշտպանության կոմիտե, Ամարասի հայրենասիրական բարեգործական կազմակերպությունը լուծարվեց (իրեն արդեն սպառել էր): 1991թ. դեկտեմբերի 12-ին անցկացվեց ԼՂՀ անկախության հանրաքվե: Բնակչության ավելի քան 99%-ը կողմ քվեարկեց Արցախի անկախությանը:

Երևանում կազմավորվեց հատուկ ծրագրերի «Արցախ կոմիտե»: 1991թ. սկսվեց գործընթացը: Այդ ժամանակ Ս. Սարգսյանը Արցախի ինքնապաշտպանական ուժերի խորհրդի նախագահն էր: 1992թ. սեպտեմբերի 1-ին ստեղծվեց ԼՂՀ պաշտպանական պետական կոմիտե, որի նախագահը Ռոբերտ Քոչարյանն էր: Բոլոր ջոկատները միավորվեցին:

Վ.Սարգսյանը խնդրեց, որ Ամարասի Արթուրը իրականացնի թիկունք-ծակատ մատակարարման, կազմակերպչական աշխատանքները: Այդ աշխատանքներում մեծ էր Բորիս Դադամյանի, Աշոտ Նավասարդյանի, Դավիթ Ծահնազարյանի, Միշա Մեխոյանի (Վոժդ) դերը:

Այս բոլորին զուգահեռ՝ գրողները, արվեստագետները, լրագրողները, կինոնկարահանողները աշխատում էին նյութեր հավաքել հետագա սերունդների համար: Վազգենը համամարդկային ճշմարիտ ուղղություն էր տալիս բոլորին, ինչքան որ կարող էր:

Մի անգամ Զորի Բալայանը կինոռեժիսոր Ռոման Բալայանի և մի քանի նշանավոր մարդկանց հետ հանդիպեց Վազգեն Սարգսյանին, որը կանգնեց, մոտեցավ, օղու բաժակը խփեց կինոռեժիսոր Ռոման Բալայանի բաժակին և ասաց. «Աշխարհի հետ քո ֆիլմերով ենք շփվում, ճանաչվում և գնահատվում»: Ռոմանը խոստովանեց, որ մի անգամ Ստեփանակերտից վերադառնալիս ճանապարհին վարորդին խնդրեց դիմացի մեքենայից առաջ անցնել, չկատարեց: «Ծտապում էի, զգուշացրի երկրորդ անգամ. վարորդը բացատրեց. մեր առջևից ընթանում է ՍՊԱՐԱՊԵՏ Վ. Սարգսյանը, չեմ կարող խանգարել, ճանապարհը նեղ է: Երբ ճանապարհը լայնանա, հարմար պահին կվազանցեմ»:

1992թ. հունիսի 11-ին ձևավորվեցին ՀՀ ԶՈՒ ռազմաօդային զորքերը: 1992թ. հունվարի 6-ին ԼՂՀ-ի Գերագույն խորհուրդը, հաշվի առնելով անկախության հանրաքվեի արդյունքները, Գերագույն խորհրդի կողմից ԼՂՀ-ն հռչակվեց անկախ պետություն: ԼՂՀ-ի Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց Արթուր Մկրտչյանը:

Սկզբում մեզ հաջողվեց ստեղծել միավորված ուժերի ջոկատների «ՄՈՒՋ» շտաբը, որտեղ ես վերահսկում էի արցախյան հարցերը: Հետագայում այն լուծարվեց և դարձավ «Երկրապահ Կամավորական Միություն», որի նախագահը Վազգեն Սարգսյան էր, իսկ տեղակալը՝ Ամարասի Արթուրը:

Երբ 1991թ. մարտին նշանակվեցի ՀՀ Պաշտպանության պետական կոմիտեի գլխավոր շտաբի պետի տեղակալ՝ տնտեսության և մատակարարման բաժնի պետ, կարճ ժամկետում խորհրդային բանակից մեզ մոտ եկած արհեստավարժ կադրային սպաներով կազմավորվեց տնտեսության և մատակարարման բաժինը: Հայաստանի ողջ տարածքով ստեղծվեցին պաշտպանության կոմիտեի թիկունքի ապահովման բաժիններ:

Առաջին անգամ կենտրոնացված և ժամանակին սկսվեց նյութատեխնիկական և մարտական միջոցներով ինքնապաշտպանական բոլոր ջոկատների ապահովումը, որոնք գրանցված և հաշվառման էին կանգնած ՀՀ ՊՊԿ գլխավոր շտաբում, ԼՂՀ-ում և Ծահումյանի շրջանում:

Դրանով մենք վերջ դրեցինք անկարգությանը, անարխիային, զինված կազմավորումների և ջոկատների կամայականություններին, որոնք ընդհանուր որևէ բան չունեին ո՛չ Արցախի, ո՛չ էլ Հայաստանի սահմանամերձ շրջանների ինքնապաշտպանության հետ: 1991թ. սեպտեմբերի 23-ին ՀՀԳ խորհուրդը ընդունեց ՀՀ անկախ պետություն դառնալու հռչակագիրը:

Ծուշիի գրավումից առաջ թողնելով զբաղեցրած պաշտոնս՝ կամավոր մեկնեցի Արցախ, և իմ խնդրանքով ինձ նշանակեցին գումարտակի հրամանատար Յուրի Հովհաննիսյանի տեղակալ՝ Ստեփանակերտ քաղաքի 26-րդ պաշտպանական դիրքերում:

Կարճ ժամկետում ինձ հաջողվեց կազմակերպել թիկունքի տնտեսությունը, կառուցել պաշտպանական կառույցներ ամ-

բողջ ծակատային գծում՝ Կեսալարից մինչև Արմենավան, դաշտային հոսպիտալ, ճաշարան և, ամենակարևորը, ճանապարհային հաղորդակցման ուղիներ, դրանով բարենպաստ պայմաններ ապահովելով ԼՂՀ ինքնապաշտպանական հիմնական ուժերի առաջխաղացման համար՝ ազատագրելու Լաչին և Հաբուղ բնակավայրերը:

1992 թ. կեսերին Մարտակերտ քաղաքի և Ծահումյանի շրջանի անկումից հետո հակառակորդն սկսեց մեծամասշտաբ առաջխաղացումը Հաթերքի կիրճով, որը հղի էր անկանխատեսելի հետևանքներով և մարտական գործողությունների հետագա բարդացմամբ:

Սերժ Սարգսյանի հանձնարարությամբ մեկնեցի Հաթերքի կիրճ և կազմակերպեցի նոր շտաբ՝ տարանջատված, խուճապային տրամադրությամբ և գործնականորեն անկառավարելի տեղական ջոկատներից: Սակայն հակառակորդը ուժի և մարտական տեխնիկայի առումով գերազանցում էր, և մենք մեծ կորուստներ տվեցինք: Օգոստոսի 27-ին Վաղուհասում Արա-

Աջից՝ Արարատ Խանդոյան: Պարգևատրվել է մարտական ծառայության «Գարեգին Նժդեհ» մեդալով, Իջևան 1996 թ.

ռատ Խանդոյանը օգնեց գրադի արկից վիրավորված Ամարասի Արթուրին: Նրան հանեց մարտադաշտից: Բուժքույր Աիդան շարունակեց բուժումը՝ Ամարասի Արթուրին տեղափոխեցին Երևանի Լեչկոմիսիայի հիվանդանոց, ուր բուժվում էր «միայնակ գայլ» Արայիկ Խանդոյանը՝ Արարատի եղբայրը:

1992 թ. աշնանը Վազգեն Սարգսյանը հանուն Արցախի պաշտպանության՝ Հայաստանում հայտարարեց «Մահապարտ կամավորների» նոր զինակոչ: Այդ ակցիան դարձավ Ղարաբաղյան ազատագրական շարժման պատմության բեկումնային իրադարձությունը: «Մահապարտների» մեկամսյա նախապատրաստությունից հետո Վազգեն Սարգսյանը երկու հարյուր կազակների՝ Ռուսաստանի կամավորականների հետ եկավ շտաբ՝ Մարտակերտի շրջանի Վանք գյուղը: Նոր համալրումը շատ տեղին էր, և ինձ հաջողվեց միավորել արցախյան ջոկատներին, կազմակերպել հուսալի պաշտպանություն Գանձասարից մինչև Չլդրան գյուղը: Չլդրանից մինչև Դրմբոն՝ Մեգմանա հատվածի հրամանատարն էր Հայկազ Բաղրամյանը: Նրա հետ մենք բաժանեցինք նոր համալրումն ու զինամ-

Աջից՝ Արարատ Խանդոյանը զինակից ընկերոջ հետ, Իջևան, 1996



Արթուր Խանդոյանը որդու՝ Անդրանիկի հետ, 1992թ.

թերքը, սատար եղանք մեկմեկու, ստեղծեցինք հզոր պաշտպանական պատնեշ և, անցնելով հակահարձակման, ազատագրեցինք ամբողջ Հաթերքի կիրճը մինչև Սարսանգի ջրամբարը:

1993թ. գարնանը Սերժ Սարգսյանը ինձ և Մոնթե Մելքոնյանին հանձնարարեց հետախուզական օպերացիաներ կազմակերպել թշնամու թիկունքում՝ Քելբաջարի շրջանում: Կարճ ժամկետում արդեն կատարված էր տվյալ հանձնարարությունը՝ զեկուցման նախապատրաստման մասով, որը բովանդակում էր հետախուզական տեղեկատվություն և Քելբաջարի շրջանն ազատագրելու առաջարկություն:

1993թ. հոկտեմբերի 8-ից մինչև 1993թ. նոյեմբերի 15-ը զբաղեցրել եմ ԼՂՀ հրետանային զորամիավորումների հրամանատարի տեղակալի պաշտոնը: Այդ պաշտոնում մասնակցել եմ Քելբաջարի, Մարտակերտի, Կուբատլիի, Ջաբրայիլի, Ֆիզուլու, Աղդամի շրջանների ազատագրման բոլոր մարտական գործողություններին: Զբաղվել եմ հրետանային կրակի հաշվարկով, անձնակազմի մարտական պատրաստությամբ, թշնամու մասին հետախուզական տվյալների ապահովմամբ և կատարել եմ վարչության պետ Ժորա Գասպարյանի ու ԼՂՀ պաշտպանության նախարարի տեղակալ Իվան Քրիստաֆորի Իվանյանի հատուկ առաջադրանքները:

Այդ գործողությունների հաջող ավարտից հետո հինգերորդ պաշտպանական շրջանի հրամանատար Աշոտ Առուշանյանի խնդրանքով նշանակվել եմ թիկունքի գծով նրան տեղակալ: Ղեկավարելով գնդի թիկունքը՝ միաժամանակ օգնել եմ Մարտակերտի շրջանի գործադիր կոմիտեի նախագահին՝ վերականգնելու շրջանի տնտեսությունը: Հայաստանում իմ ծանոթների միջոցով հայթայթել եմ և կազմակերպել հատիկային ու լոբազգի կուլտուրաների, դիզելային վառելիքի, գյուղտեխնիկայի համար պահեստամասերի, բնակիչների ավերված տների վերականգնման համար շինանյութի առաքումը:

Ադրբեջանի հետ հաշտության համաձայնագիր կնքելուց հետո, բուժվելով՝ նորից անցա ծառայության, բայց այս անգամ արդեն Հայաստանում:

1994թ. մայիսին նշանակվեցի ՀՀ Ազգային պետական անվտանգության վարչությանը կից հատուկ մարտական ստորաբաժանման վարչության (ՀՄՍՎ) պետ: Այստեղ կազմավորեցի

հատուկ նշանակության մարտական ստորաբաժանման (կարմիր բերետներ) լիովին նոր կառուցվածք»:

ՀՄՍՎ-ի հրամանատար լինելու ընթացքում Գագիկ Դանիելյանը կատարել է տասնյակ մարտական հանձնարարություններ՝ ՀՀ և ԼՂՀ պետական սահմանների անվտանգության, պետական նշանակության հաղորդակցման միջոցների՝ երկաթուղու, գազամուղի, ԱԷԿ-ի, ԼԷՊ-ի, տրանսպորտային մայրուղիների անխափան աշխատանքի ապահովման ուղղությամբ: Իրականացվել են միջոցառումներ, որոնք նպաստել են ՀՀ զինված ուժերի հատուկ ստորաբաժանման մարտական պատրաստականության մակարդակի բարձրացմանը: Երեք անգամ վիրավորվել է, տարել բարդ վիրահատություն՝ երկու ինֆարկտ և սրտի վիրահատություն: Ամուսնացած է, ունի չորս երեխա, մեկ որդեգրած տղա:

1996թ. ՀՀ և 2000թ. ԼՂՀ-ի նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով, պատվոգրերով, զենքերով, որոնց այնքան նշանակություն չէր տալիս՝ ասելով, դեռ արցունքները հայ ժողովրդի աչքերից չենք մաքրել»: Վազգենի երիտասարդության օրերից պատմեց հետևյալը. «Մի անգամ գործի բերումով Վազգենը եկել էր մամուլի շենք: Մուտքի մոտ կանգնած սպասում էր՝ աչքի պոչով հետևելով կանանց: Նրանց հայացքներից շիկնում, շփոթվում էր: Պահի տակ կլանված, աննկատ մոտեցավ վերելակին: Վերելակում չորսի փոխարեն վեց հոգի էին, թաթերի վրա ձգված, անշարժ, շունչները պահած: Վազգենը մեջքով պատին էր հենված: Մի չքնաղուհի պատահական շարժումով կրծքերը հպվեց Վազգենի ուսին: Վազգենը շիկնեց, թվաց, թե այդ հսկան հիմա կհալչի:

Վազգենի մեջ նա ամբողջ էությամբ, տեղով մեկ ամբողջություն էր, Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻ լիարժեք ուղեղ ուներ: Նա ինձ համար և ընդհանրապես առաջին մարդն էր՝ ազգի ծակատագիր որոշող: Նա ազգային մարդ էր, դրա համար նրան ՍՊԱՐԱՊԵՏ էին ասում: Նա պետական գործիչ էր, բայց հիմնականում ազգային մարդ էր: Վ. Սարգսյանը գիտեր ամեն ինչ: Նման էր Նապոլեոնին, բոլոր մահկանացուների նման ուներ թերություններ, բայց չէր հաշտվում կեղծիքին, ստին, ստորաքարշությանը, կաշառքին, անարդարացի արարքներին:

1977-80 թվականներին Գագիկ Դանիելյանը իրենց թաղի

տղաների հետ հավաքվում էին Կոմայգում: Այնտեղ էին գալիս նաև մի խումբ այլ տղաներ: Գիտեինք, որ Երևանի ֆիզկուլտուրայի ինստիտուտի ուսանողներ են:

Մի գեղեցիկ օր թաղի տղաներով պայմանավորվեցինք մի լավ ջարդել, թաղից քշել գյուղից եկած ուսանող տղաներին:

Վեճի ժամանակ տղաները խառնվեցին իրար: Վազգենը, որին իր անունով էինք կոչում, մեջ ընկավ՝ ասաց. «Տղաներ, մի բոպե սպասեք, կռվից բան դուրս չի գա, հայի արյուն է թափվելու»: Բոլորս մի պահ զարմացանք: Ով է այս համարձակը, որ գլխից ձեռք է քաշել, մեզ դաս է տալիս:

«Եկեք ախպերանանք: Դուք էլ կարող եք մեզ հետ համագործակցել, իրար հասկանանք, կարող ենք իրար օգնել: Առաջինը՝ պարզենք թե իրարից ինչ ենք ուզում: Տղաներից մեկը՝ Գագոն ասաց,- «Մեր ուզածն է՝ այս թաղից չքվեք, մաքրվեք, թողեք սուսուփուս գնացեք, էլ չերևաք, քանի որ վերջը վատ է լինելու»:

Վազգենը համառեց, այդ ժամանակ նա «Գարուն» ամսագրի թղթակից էր: Ցույց տվեց ֆիդայիների նկարներ և բացատրեց, որ փոքրիկ հայրենասիրական խումբ են կազմել, ուսումնասիրում են 1915թ. 2 միլիոն հայերի կոտորածը, Մեծ Եղեռնը, Հայ դատի պաշտպանության գործը: Կարող են իրենց խմբով ընդգրկվել, եթե հավատում են իրենց ուժերին և հավատարիմ ու գաղտնի կմնան ՊԱԿ-ից: Հայրենասիրություն քարոզելու համար ձեզ պես տղաների «կարիքը մեծ է»: Ֆուտբոլիստների խմբակը այդ ժամանակ գաղտնի գործում էր. եթե բացահայտվեր, կհամարեին հակախորհրդային, հակապետական քայքայիչ խմբակ և բոլորին կձերբակալեին:

Վազգենը մեզ համոզեց, և մենք՝ խուլիգաններս, ընդգրկվեցինք այդ կառույցում:

Վազգենը մեզ հաղթեց իր համարձակության, անմիջականության, ազդեցիկ հայացքի, զսպող բնավորության շնորհիվ:

Երբ սկսվեց Արցախյան պատերազմը, Գագիկ Դանիելյանը զինվորագրվեց ՀԱԲ-ի կազմում և որպես փորձառու, հմուտ ազատամարտիկ հայտնվեց Արծվաշենում՝ իր պապենական գյուղում:

Մինչ այդ խորհրդային բանակում մարզիչ աշխատելու ժամանակ, զորամասից զենք-զինամթերք տեղափոխելիս իրեն

օգնել է իր 10-ամյա որդին՝ Հարությունը, որն այժմ ծառայում է ՀՀ Զինված Ուժերում որպես սպա:

Գագիկ Դանիելյանը իր ընկերների հետ ընկավ շրջափակման մեջ: «Դեմ-դիմաց հայտնվեց ռուս սպան, ավտոմատը պահեց ճակատիս,- պատմում է Գագոն,- զենքը ակամայից վայր գցեցի, ձեռքերս վեր բարձրացրի: Հարցրեց՝ տեղացի՞ ես, գլուխս վերուվար շարժեցի պատասխանելով՝ այո, տեղացի եմ: Նա արագ ճանապարհը շեղեց: Փախա դիմացի երկու հարկանի տան գոմը, որ թաքնվեմ: Առաջին հարկը նման էր նկուղի: Իմ հետևից ներս մտավ մի թուրք, եկել էր թալանի: Երեք մետր հեռավորության վրա գտնվող խալին պատից պոկեց: Ես թաքնվել էի տակառի հետևում, արագ-արագ իրերը հավաքեց խալու վրա: Ինձ նկատեց. զենքը պահեց վրաս՝ ստուգելու, թե ով եմ ես, օդում գծագրելով ինչ-որ անհասկանալի բաներ, խուլ ու համրի տպավորություն թողեց վրաս: Զենքս վայր դրեցի, ձեռքերս վեր բարձրացնելով աշխատեցի ցույց տալ, որ հանձնվում եմ: Մոտեցավ ինձ...

Լավ է մեռնել, քան վախկոտի տիտղոսով ապրել. դիմեցի ռիսկի: Կատվի ճարպկությամբ ցատկեցի և երկու ձեռքով կոկորդից բռնեցի ու դեմ տվի պատին: Մահվան, վախի, չգիտեմ՝

ՀԱԲ-ի Ռազմական խորհրդի գլխավոր հրամանատար Ռազմիկ Կասիյանը Գագիկ Դանիելյանի հետ

ատելության զգացումով, ամուր կառչեցի կոկորդից այնքան ժամանակ, մինչև թրմփալով ընկավ ոտքերիս տակ: Մինչև ընկնելը ինձ թեթև էր թվում նրա մարմինը ընկնելու ժամանակ շատ էր ծանր:

Մտքումս ասացի, խլել են մեր ազատությունը, հայի արյունն են հեղում և երեսս խաչակնքեցի ու Աստծուն աղերսելով՝ մրմնջացի. «Ով Աստվա՛ծ, հայ ժողովրդին տուր զորություն, որ նա վերականգնի Հայաստանի պետական սահմանները»: 1992 թ. օգոստոսի 7-ին Արծվաշենի անկման ընթացքում վիրավորվել է ձախ ոտքից: Ապաքինվելուց հետո 1993-94թթ մեկնում է Նոյեմբերյան, Ռազմիկ Վասիլյանի հատուկ հանձնարարությամբ, որտեղ մարտերի ժամանակ կրկին վիրավորվում է:

Արծվաշենի անկումից հետո խումբը մեկնեց Ղարաբաղ: Այնտեղ էին Շենգավիթի տղաները՝ Ռոմիկ Մխիթարյանը և ուրիշներ:

Հանուն հայրենիքի ազատագրման, զրկվեց երկու ոտքերից: Բժիշկները Գագիկի վիրավորված, ջարդուփշուր մարմինը փրկելու համար ստիպված էին անդամահատել ոտքերը:

Աջից՝ Համլետ Վարդանյան, ԼՂՀ ՊԲ նախարար Մեյրան Օհանյան, Գագիկ Դանիելյան, Աշոտ Ներսիսյան մարտական ընկերների հետ

Հրադադարից հետո Գագիկ Դանիելյանին մարտական ծառայության համար ներկայացրին կառավարական պարգևի՝ մեդալի:

Ժամանակները խառնվեցին իրար: Գագիկը իր ծոցում պահած նամակը չհասցրեց տալ ՍՊԱՐԱՊԵՏԻՆ, որի մեջ ցուցակով նշված էր Հայաստանում բնակվող այլազգիների, հատկապես կազակների մասնակցությունը Արցախյան պատերազմին, որոնցից շատերը իրենց կյանքը զոհաբերեցին Հայաստանի անվտանգության գործընթացում:

Վազգեն Սարգսյանի՝ մահապարտների կոչին արձագանքեցին «Հայ-կազակական միջազգային բարեկամության և համագործակցության միավորման» նախագահ, «Աշոտ Երկաթ» ջոկատի հրամանատար Կարապետ Զադոյանը, շտաբի պետ Նվեր Թորոսյանը, որոնք ղեկավարում էին «Հայաստան-Կազակներ» միությունը: Նրանց մասնակցությամբ և աջակցությամբ Ղարաբաղյան շարժման (Հայաստանում ծնված 4-5 հազար կազակներ կան և 20 հազար ռուսներ, որ Հայաստանի քաղաքացիներ են) 200 հոգի մահապարտների հետ Վազգեն Սարգսյանի ուղեկցությամբ մեկնեցին Մարտակերտ:

Ցավոք սրտի, Հայաստանում բնակվող այլազգի ներկայացուցիչները՝ ռուսները, կազակները, եզդիները, հույները, ասորիները, նաև շատ հայեր Հայաստանից մեկնեցին արտերկրներ՝ իրենց գոյությունը պահպանելու համար: Հույս ունենանք՝ կգան, սպասում ենք նրանց վերադարձին: Այդ գործին մեծ աջակցություն է ցուցաբերում «Հայ-կազակական» միությունը:

Կարապետ Զադոյանը, Նվեր Թորոսյանը բազմիցս կատարել են ՍՊԱՐԱՊԵՏ Վ. Սարգսյանի հանձնարարականները: 1992թ. 40-50 «Կամազ» ավտոմեքենաների ավտոշարասյունը իր հերթական այցն էր կատարում ռազմադաշտ՝ բեռով-բարձով, տարբեր ապրանքներով, զենք ու զինամթերքով: Քաշաթաղի մարդասիրական ճանապարհով բեռներ տեղափոխելու ժամանակ ենթարկվում են թշնամու ռմբակոծությանը: Ունենում են զոհեր ու վիրավորներ: Կ. Զադոյանը ստանում է վնասվածք: Տիգրան Շուբերտի Գասպարյանը՝ Աֆղանստանում կռված, մեծ փորձ ունեցող, նշանակվում է Կ. Զադոյանի օգնական: Նա վիրավորվեց գլխից: Դեմքի սպին հուշ մնաց

գեներալին: Հայաստանի սահմանի վերջին Տող գյուղի միջով ճանապարհը միանում էր Գորիսի Կոռնիձոր գյուղին՝ մոտ 240 տնտեսությամբ, սահմանակից է Ադրբեջանին: Ձորի պռնկին դեմ-դիմաց նստած՝ նայում է թուրքական Ջիջիմլի գյուղին: Այդտեղ էր տեղակայված խորհրդային 4-րդ բանակի ստորաբաժանումներից մեկի ռազմական շտաբը՝ Ռաֆ, Գյուլիբերդ, Կյազդարա, Խնձորակ գյուղերի հարևանությամբ:

1989թ. Կոռնիձոր գյուղի կոլտնտեսության նախագահ Սմբատ Կարապետյանը պահանջում էր, որ գյուղից ֆիդայիները հեռանան: Ադրբեջանը բացահայտ սպառնում էր և բացատրում, որ ազատամարտիկների ներկայությունը անհանգստացնում է ադրբեջանցի աշխատավոր ժողովրդին, խանգարում նրանց խաղաղ կյանքը:

Գյուղի չորս Կամոների, Վարդան Բալյանի օգնությամբ Մարտին Բաղդասարյանը միտինգ կազմակերպեց: Բացատրեց օպերայի ազատության հրապարակում հավաքված հայության ազգային-ազատագրական պայքարի բուն պատճառները, գերեվարված Արցախ երկրի ոչնչացման ծրագիրը և այլն:

Գեներալներ Կարապետ Զաղոյան, Նվեր Թորոսյան կոզակ ատամանների հետ ՌԴ Կրասնոդարի մարզ, Կարենովսկ, 1997թ

Երբ Սումգայիթում սկսվեցին հայկական ջարդերը, Կոռնիձորում արագորեն կազմավորվեց Կոռնիձոր գյուղի ինքնապաշտպանական ջոկատը, որը հետագայում համալրվեց 60 ազատամարտիկներով: Հրամանատար ընտրվեց Կամո Գալստյանը (Չոպո Կամո), իսկ հետախուզական 12 հոգանոց խմբի ղեկավար նշանակվեց Վարդան Բալյանը (հիշեցնենք, որ 1918-1919թթ. Բաքվում 30 հազար հայ կոտորեցին ու մարսեցին, այսօր Բաքվում կոտորում են 210 հազար հայերի):

Ջոկատը տեղակայված էր գյուղի Ուշկան կոչվող երկհարկանի քարե շենքում, որ ծառայում էր որպես զորանոց, (այս մասին տես «Ազատագրում» I-II գրքերում):

Հետախուզական խմբի հիմնական աշխատանքները կատարվում էին գաղտնի: Այն սկսվում էր Տեղ գյուղից մինչև Սև Քերծի հատվածներում, Զաբուխ-Սիմավանի լեռների ու անտառների միջով խորանալով մինչև Բերդաձոր (հայաբնակ

ՀՀ ՊՆ հատուկ նշանակության գումդ, սպաների ուսումնամարզական հավաք Ձախից կանգնած երկրորդը՝ Արամ Գրիգորյան (Խիշնիկ, ինը անգամ վիրավորվել է). չորրորդը՝ Արթուր Սիմոնյան, 1998 թ.

Վարդան Բալյան

գյուղ), որի ուղղությամբ Սեյրան Օհանյանի հրամանով Արթուր Ալեքսանյանը (Ամարասի Արթուր) ղեկավարեց՝ Չառուլու, Լիսագոր, Բերդաձոր այս երեք գյուղերի ազատագրման մարտական գործողությունները:

Կոռնիձորին հարակից վերին և ներքին Ջիջիմլի, Կյազ Դարա գյուղերը կապված են Քաշաթաղի «Լաչին»-ին, որը Հագուրի գետով ձգվում է դեպի Գյուլիբերդ և այլ գյուղեր հասնող տարածքները:

Ինչպես ասել ենք, Ղուբաթլու, Գորիս, Քաշաթաղ, Բերդաձոր, Լիսագոր, Ծուշի, Ստեփանակերտ, շրջաններն ու գյուղերն իրար կապող ճանապարհների Ստրոյկա կոչվող խաչմերուկում Ադրբեջանի Կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար, խորհրդային տասնհինգ հանրապետությունների կարկառուն կոմունիստ Վեզիրովը, մի գիշերվա մեջ 15 մոնոլիտային սալիկներով տնակներ կառուցեց՝ փակելով նշված շրջանների շփման և հաղորդակցման ճանապարհները: Եվ մինչև ատամները զինված վիշապի նման նստեցին խորհրդային 4-րդ բանակի մի այլ ստորաբաժանման հետ համագործակցելով՝ ամրացան այդ հատվածում: Որպես քույր ու եղբայր իրենց ձեռքը վերցրին չորս կողմի վերահսկողությունը:

Հետախույզ Վարդանը Գեղազնիկ Միքայելյանի (Չաուշ)-ի սիրելի և մտերիմ ընկերն էր: Վարդանին հանդիպելիս միշտ կրկնում էր. «Էս խոխան կնիկ է ուզում»:

1989թ. գարնանը Ջիջիմլի, Կազդարա հատվածում կատարում էինք հետախուզական, տեղեկագրական քարտեզագրումներ՝ Վազգեն Սարգսյանի հանձնարարությամբ, որին օգնում էին Մուրադ Կիրակոսյանը, Սմբատ Հակոբյանը, որոնք նստած էին Կոռնիձոր գյուղի նախկին գրասենյակի շենքում: Վ. Սարգսյանի միակ պահանջն էր, որ ադրբեջանցիները դադարեցնեն ռազմագործողությունը: Այդ էր պատճառը, որ Վարդանը 10 րոպեն մեկ Վ. Սարգսյանին հետախուզական տվյալներ էր հաղորդում. թշնամու կենտրոնական ուժերի քանակը, կենդանի ուժերի դասավորությունը, զինատեսակները, ռազմական տեխնիկայի քանակն ու տեսակները, հենակետերի դասավորությունը, խրամատների երկարությունը և հեռավորությունը պաշտպանական և հարձակման գծերից և այլ տեղեկություններ: Վ. Սարգսյանը հայրական սիրով և ջերմությամբ էր վերաբերվում մարտիկներին:

Վ. Սարգսյանի անմիջականությունը մտերմության հնարավորություն էր տալիս գործին ամբողջությամբ նվիրվելու. գոհ էր հետախույզ Վարդան Բալյանի աշխատանքից:

Կազմեց Ջիջիմլի գյուղում տեղակայված թշնամու հիմնական հենակետերի ոչնչացման ծրագիրը: Առաջին գործողության ժամանակ այն լիովին չհաջողվեց, և թշնամին դա օգտագործեց. խորհրդային 4-րդ բանակի ստորաբաժանումը առանց արգելքի մտավ Կոռնիձոր գյուղը՝ հայ ֆիդայիներին զինաթափելու:

Վարդանն այդ մասին նախօրոք նշել էր գրավոր զեկուցման մեջ :

Ջանիկ Նիկողոսյանը՝ Դարբին Ջանիկ: Վազգեն Առաջինի պատվերով Երիրակի թեմի առաջնորդ Միքայել Սրբազանի հետ Գանձասարի գմբեթից կախում են 29 մետրանոց ջահը: Թշնամին կրակում էր: Ջահը ընկավ կոտրվեց, վերանորոգեցին: Մասնակցում էր Ամարասի Արթուրը:

Վ. Սարգսյանը Կիրակոսյան Մուրադի, Սմբատ Հակոբյանի, Կամո Գասպարյանի հետ նախապես գիշերով կատարել էին հետախուզություն, որի մասին խրամատի մեջ շշուկով էին խոսում: Վ.Սարգսյանը գիշերով խորացել էր թշնամու թիկունքը. Վարդանի հաղորդագրությունները համապատասխանում էին իրականությանը: Վ. Սարգսյանը հնարավորություն տվեց Ստրոյկա կոչված խաչմերուկում տեղակայված տնակներն ու թշնամու կողմից ուժեղացված հենակետերը ոչնչացնել:

Այդ ծրագրի կատարման առաջին փորձը տվեց շոշափելի արդյունք: Այն պահանջեց լրացուցիչ ուժերի համախմբում և ժամանակ:

1991թ. ապրիլի 12-ին Լաչին, Սումգայիթ մեկնող «Իկարուս» ավտոբուսը մի քանի ուղևորներով քողարկված զենք ու զինամթերք էր տեղափոխում Սումգայիթ: Վարդան Բալյանն իր խմբով ականապատել էր ճանապարհը: Ավտոմեքենան անցավ, ականները չպայթեցին:

Գորիսի կամավորական ջոկատների և Կոռնիձոր գյուղի ջոկատի (հրամանատար՝ Կամո Գալստյան) հետախուզական խումբը պայմանավորվել էր «Չաուշի» ջոկատի հետ. տղաները պայմանավորված տեղում անհամբեր սպասում էին: Սակայն օպերացիան չկայացավ, հոսանքի թույլ լինելու և չիմացության պատճառով:

Երեք հետախույզ ընկերներով՝ Վարդանը, Մարտինը («Չոպոն») և Համբարձումը, անմիջապես Հագուրի գետի վարար ջրերը ճեղքելով անցան: Գնդակոծեցին ու արագ թաքնվեցին փոսի մեջ՝ շունչ քաշելու, հետդարձի համար նախապատրաստվելու:

Այդտեղ տեղակայված խորհրդային 4-րդ բանակի ստորաբաժանումը հարձակվեց տղաների վրա: Թշնամու գնդակից Համբարձում Դավթյանը գլխից վիրավորվեց: Չաուշի ջոկատի շտաբի պետ շարքային Հովիկ Պողոսյանը իր սպիտակ «Նիվայով» նրան հասցրեց Տեղ գյուղի հիվանդանոց:

1992թ. ՍՊԱՐԱՊԵՏ Վ. Սարգսյանի հրամանով Մոնթե Մելքոնյանի (Ավո) օգնությամբ Վարդան Բալյանի հետախուզական հաղորդագրության վրա հենվելով՝ մշակվեց օպերացիա՝ գրավելու Ստրոյկա կոչված տարածքում տեղավորված թշնամու ռազմական բազան: 50 հոգով օպերացիան կատարեցին

գերազանց, բայց երկար չկարողացան պահել, թշնամու լրացուցիչ ուժերի դեմ ստիպված նահանջեցին: Հակահարձակման ժամանակ վիրավորվեցին Յուրա Հարությունյանը, Գրավիկ Դանիելյանը:

Քաշաթաղի ազատագրման ժամանակ հինգ հոգի՝ Վարդանը, Նորիկ Սաֆյանը՝ խրամատից Դէշէկա, Ագաէս, Կապէվէդէ զենքերով դիմադրում էին գրոհող թշնամու ուժերին: Թուրքերի զենքն ու զինամթերքը տեղափոխող ավտոմեքենան կրակով բռնկվեց, բոցն ու ծուխը երկինք գալարվեցին: Մոտ մեկ ժամ տևեց մարտը: Թշնամու տանկը բացահայտեց տղաների դիրքավորման հենակետերը, ճիշտ նշանառությամբ հողաթումբը շուռ տվեց փոսի մեջ՝ տղաների վրա:

Արկի բեկորից զոհվեց արտաշատցի Նշանը, վիրավորվեց երևանցի մեր ընկերներից մեկը, կոնտուզիա ստացան Վարդանը և Նորիկ Բալասանյանը:

Այդ օրերին Վարդան Բալյանի եղբայրը՝ 16 տարեկան Գևորգ Բալյանը, հերթապահում էր Տեղ գյուղից Կոռնիձոր տանող ճանապարհի պահակային հսկիչ կետում: Ժամապահ Գևորգը կատարելով իր պարտականությունները և հետևելով զինվորական կանոնադրությանը, պահակային ծառայության կանոնագրքի պահանջներին՝ կանգնեցնում է ավտոմեքենան՝ չիմանալով, որ «Վիլիսի» մեջ նստած են ՍՊԱՐԱՊԵՏ Վ. Սարգսյանը բրդոտ մորուքով և Սուրեն Խաչատրյանը: Ղեկին Համայակ Զավենի Զոհրաբյանը՝ հավատարիմ անբաժան թիկնազորը, պահանջեցին ըստ կարգի մեքենայի զննում, անձը հաստատող և մուտք գործելու թույլտվության փաստաթուղթ:

Վ. Սարգսյանը իջնում է մեքենայից՝ շարքային զինվորի համազգեստով, ավտոմատը ուսից կախ, ենթարկվում կարգապահական կանոնադրությանը: Գևորգը առաջին անգամ չէ, որ տեսնում է նման սովորական հագուստով, մորուքով, ավտոմատով ատազամարտիկի, գլուխը կախ կատարում է իր պարտականությունը: Կողքից հասցրին Գևորգին հուշել, որ այդ մարդը ՍՊԱՐԱՊԵՏ Վ. Սարգսյանն է: «Գլուխս մի արդուկեք, այդպես կարող են բոլորը ներկայանալ, ինձ թույլտվության անցագիր է հարկավոր: Ես կատարում եմ իմ պարտա-

կանությունը»: Զեկուցում է հրամանատարին, ստանում բաց թողնելու թույլտվություն: Հրամանատարը քափ ու քրտինքի մեջ հասնում է հսկիչ անցագրային կետին՝ տալիս է զգաստ հրամանը և զեկուցում է ՍՊԱՐԱՊԵՏԻՆ:

Վ. Սարգսյանը մոտենում է Գևորգին, սեղմում ձեռքը, համբուրում ճակատը և հրամայում է ներկայացնել պարգևատրման: Հրամանատարի շունչը տեղն է գալիս, գույնը վերականգնվում է, ուրախությունից գրկախառնվում է իր ենթակային՝ 16 տարեկան պատանուն՝ Գևորգին, հայտնում իր շնորհակալությունը, 10 օր արձակուրդ ձևակերպում:

Երբ հանդիպեցինք Վարդանին, նա ուներ չորս երեխա, բնակվում էր իր ազատագրած Ծաղկահովիտ՝ Գյուլիբերդ, գյուղում, նոր տնտեսություն էր կառուցում, զբաղված էր անասնաբուծությամբ և հողագործությամբ: 15 խոշոր եղջերավոր անասուններ կթում. կաթ, մածուն, պանիր, յուղ էր արտադրում, վաճառում և դրանով կերակրում իր ընտանիքը:

Մեզ հյուրասիրեց կաթ ու մածուն, որի յուղայնությունը բարձր էր: Մի մեծ գունդ պանիր լավաշի մեջ փաթաթելով՝ տվեց մեզ: Ներկայացրեց իր հարևան Սերգեյ Գալստյանին, որի տանը գիշերեցինք. այնտեղ ապրել էր մի թուրք բժիշկ: Ցույց տվեց, թե ինչպես է գրադը լուսամուտից հարվածել ներսի պատին, քանդել անցել, գոմի ձեղնահարկը ավերել:

1993թ. ապրիլին Մլախալաֆ տարածքում մարտերի ժամանակ էջմիածնի խումբը ղեկավարում էր Հովիկ Ազոյանի եղբայր «Արջը»՝ Սիսիանի Աշոտ Մինասյանը: Հայերի հակահարձակման ժամանակ 7 հոգի զոհվում են, երկու օր տանջանքով ու տառապանքով այդ դիակները պահպանում են Վարդան Բալյանը տասներկու հոգանոց հետախուզական խմբով, որպեսզի դիակները թուրքերը չգողանային, չխոշտանգեին, չվառեին, մոխիրը չվաճառեին հարազատներին:

Այդ խիզախության շնորհիվ դիակները հասցրին իրենց հարազատներին: Օգոստոսին Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻ հրամանով Կամո Գալստյանը իր և այլ ջոկատների միացյալ ուժերով, Վարդան Բալյանի հետախուզական տվյալների հիման վրա, կազմակերպեց Հագուրի գետափի սարալանջին տարածված Գյուլիբերդ գյուղի ազատագրման օպերացիան:

Կոռնիձոր գյուղում մի պահ գժտություն, խռովություն եղավ:

Թշնամին օգտվելով այդ իրավիճակից՝ երեք ամիս ռմբակոծում էր գյուղը, որը դժվարեցնում էր ռազմական գործողությունները: ՍՊԱՐԱՊԵՏ Վ. Սարգսյանի հրավերով տեղի ունեցավ խորհրդակցություն:

Հանձնարարվեց Կամո Գալստյանին բոլոր ազատամարտիկների ուժերը համախմբել, կազմակերպել և նպաստել օպերացիայի կատարմանը:

Այդ տեղանքում օձերը, կարիճները վխտում էին, որոնք, հատկապես գիշերային մարտերի ժամանակ, անհանգստացնում էին կռվողներին:

Օպերացիան սկսելուց առաջ խոստումներ եղան, բայց հաղթանակից հետո դրանք չիրականացան: Օգտվեցին նրանք, ովքեր անցուդարձից անտեղյակ էին և թաքնված: Մարտերի ժամանակ թաքնվում էին, պարգևատրման պահին ծարպկորեն ներկայանում: Նրանց մեղադրել դժվար էր. նրանք այդպիսին են:

Մինչև Հորադիզ ընկած տարածքը ազատագրվեց: Մենք նվիրված կամավոր ազատամարտիկներ էինք, մենք չէինք հասկանում շահը, հարստությունը, պաշտոնը. Ղարաբաղի անտառներից փախած վախկոտներն այսօր կարևոր պաշտոններ են զբաղեցնում:

Իմ պապը՝ Ներսես Բալյանը, Թամանյան 89-րդ դիվիզիայի գլխավոր հետախույզն էր: Մենք մեր պապերի արյունն ենք և նրանց շունչը: Հիմա բոլոր կադրերը աչքիս առաջ են, մեր ներքին հոգեբանությունը մեզ պարտավորեցնում է, որ խտանանք, պայքարենք, պահպանենք: Թշնամին կաշառում է, զավթում: Մեր դիվանագիտությունը երկու ոտքից կաղ է, նրա օրգանիզմը թույլ է: Մեր դրածո ղեկավարները ինչ-որ տեղ զիջում են: Սրիկաները խլում են, մենք ճշմարտություն ենք պահանջում՝ մեր պապերի վրեժը լուծելու:

Պարանը անցկացնում են ասեղի անցքով, սա է ամենամեծ սուտը և կործանումը:

Երբ ՍՊԱՐԱՊԵՏԸ ընթանում էր զորքի առջևից, ողջ բանակը աստղի պես փայլում էր:

Վարդանի հարևան ղարաբաղցի Սերգեյ Գալստյանը, որը նույնպես ապրում էր Գյուլիբերդ գյուղում, պատմում է. «Մարտակերտի Մաղավուզ գյուղի բնակիչ 16 տարեկան որսորդ

Գրիգոր Բաղալյանի եղբայր Իվանը մի կնոջ հետ Մարտակերտը Հաթերքին կապող ճանապարհի Քարաղբյուր հատվածում նկատում են թուրքի «Բելարուսը»: Երկու կցորդ սայլակներով հայերից թալանած ավարը բարձած՝ բեռով-բարձով երկու թուրք տղամարդ, հինգ կանանց հետ երգելով գնում են:

Երկու եղբայր շրջապատում են ավտոմեքենան, բոլորին գերավարում:

Կանայք ծնկաչոք աղաչում են և բացատրում, որ տանը փոքրիկ երեխաներ ունեն և մեջները նորապսակ հղի կին կա՝ ձեռք չտան: Նրանք ալլահին կաղոթեն, որ հայերը վատ օրի չարժանանան:

Գրիգորը տեսնելով կանանց աչքերից թափվող աղերսագին արցունքները, հիշում է հայերի նկատմամբ թուրքերի վերաբերմունքը, որոնք չէին ներում:

Գրիգորը բաց է թողնում կանանց: Իսկ թուրք հորն ու որդուն շղթայում: Հայրը տեսնելով Գրիգորի գթասիրտ լինելը, հետևելով կանանց օրինակին, լացով դիմում է, որ ինքը մեղավոր չէ, հայերին ձեռք չի տվել, լքված տներից է բարձել

Բժիշկ Աշոտ Զոհրաբյան՝ մի ձեռքում ավտոմատ, մյուս ձեռքում՝ նշտար
Առողջապահության ազգային ինստիտուտի մասնագիտական խորհրդի որոշմամբ շնորհվեց բժշկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան 18.07.2009թ
Պայքարի ուղին՝ Չարենցավան-Կոմնիձոր-Օմար

ավարը: Թոշակառու է, թոշակի ժամանակն է, բաց թողնեն, գնա թոշակը ստանա:

Գրիգորը զարմանում է, որ այս մարդը իր մասին է մտածում, թքած ունի որդու ճակատագրի վրա: Երկու եղբայր առաջարկում են, որ որդու հարցը հայրը լուծի: Հայրը պատրաստվում է որդուն սպանել: Այդ տեսնելով՝ Գրիգորը երկուսին էլ գնդակահարում է ու վերադառնում տուն: Տեսնում է 80 անց պապին՝ Բաղալյան Անդրանիկին, որը հայտարարել էր՝ կմեռնեմ իմ տան մեջ, չեմ փախչի իմ բնակարանից: Թուրքերը նահանջի ժամանակ սղոցով կտրել էին ծերունու գլուխը, երկու ձեռքերը: Արնաքամ ծերունու մարմինը շոգից նեխում էր:

Բակի թթի ծառի տակ երկու եղբայր փոս են փորում, իրենց պապին նույն անկողնով թաղում: Եվ զենքը վերցնելով՝ հետապնդում նահանջող թուրքերին:

Ծնողազուրկ 20 տարեկան Բաբկեն Ազարյանը և Սերգեյ Գալստյանը Հաթերքի Զագլիկ գյուղից էին. նրա պապերը 1919թ. Ծահումյանի Զագլիկ գյուղից էին տեղափոխվել և այդտեղ նոր գյուղ կառուցել, կոչել Զագլիկ: Այդտեղ էր ծնվել Բաբկենը: Վերջինս Ծահումյանում, Գետաշենում, Մարտունաշենում, Բուզլուխում կռվել է խորհրդային 4-րդ բանակի դեմ: Նահանջի ժամանակ փախել են անտառները, պարտիզանական ջոկատ կազմել:

Բաբկենը Սարուշենի բարձր դիրքերից հետևում է, թե ինչ է կատարվում իրենց Զագլիկ գյուղում, հատկապես իրենց տանը. թե ինչպես են 7 թուրք խորոված անում, բակում նստած քեֆ անում: Սպասում է մութն ընկնելուն: Գալիս է գյուղ, մոտենում պատուհանին, տեսնում է՝ թուրքերը հարբած քնած են: Ձեռքի երկու նռնակ նետում է թուրքերի վրա ու փախչում:

Հեռվից երևում էր, թե ինչպես իրենց տան բոցը լուսավորում էր շրջապատը: Եվ իր աչքերի առաջ հայրենական մեկ հարկանի քարե տունը մոխրի է վերածվում: Բաբկենը լավ արհեստավոր էր, հյուսն և լավ որսորդ: Նրան բոլորը հարգում և սիրում էին:

82 տարեկան Սերգեյ Գալստյանն իր նոր կառուցած տան պատշգամբին նստած՝ պատմում էր այս բոլորը ու խոր հոգոց հանում: Մի՞թե բոլոր հայերիս ճակատագիրն այդպես է. տուն վառելով, քանդելով, նոր տուն կառուցելով ու վաղվա օրվա անհայտությամբ էլի հայտնվում ես փախուստի մեջ:

Ստեփանակերտում աշխատեցի հանդիպել Բաբկենին, չհաջողվեց: Բաբկենն էլ Սերգեյին հարց ու փորձ անելով գտավ: Գրկախառնվեցին երկու ընկերներ: Այդ պահին Սերգեյը նկատեց, որ Բաբկենի աջ աչքը չկա, նորից գնալու է բուժվելու Երևանի 8-րդ հիվանդանոցում: Պահը հարմար չէր զրուցելու: Հիվանդանոցում այցի գնալու ժամանակ միայն զրուցեց:

Սարսանգ ջրամբարի համար մղվող մարտերի ժամանակ 8վետանա Պասկալևան ցանկացել է հանդիպել այդ հերոսին: Հանդիպման ժամանակ թշնամու արկի բեկորից վիրավորվում է Բաբկենը, կորցնում աջ աչքը: Մարտակերտի Ումուդլու գյուղում ապրում էին թուրքեր: Ազատագրումից հետո վերաբնակվեցին հայեր, գյուղը վերանվանվեց Կարմրավան:

Մարտակերտի թուրքաբնակ Ումուդլու գյուղի մի թուրք հարևան Դրմբոն գյուղից փախցնում է մի հայ աղջկա, ամուսնանում, ունենում է երկու արու զավակ: Կրտսերը մեկնում է Բաքու՝ սովորելու: Բարձրագույն կրթություն ստանալուց հետո աշխատում է որպես դասախոս: Աչքի է ընկնում իր դասախոսական, գիտական աշխատանքներով:

Ղարաբաղյան շարժման ժամանակ Բաքվում սկսեցին 200-հազարանոց հայկական ջարդերը: Իմանալով, որ մայրը հայ է, մորթեցին:

Ավագ եղբայրը՝ Մերուժանը, երդվում է եղբոր վրեժը լուծել, միանում է հայ ազատամարտիկներին: Հաճախակի անցնելով թուրքերի թիկունքը՝ շփվում է նրանց հետ, ձեռք է բերում նրանց վստահությունը: Ահավոր վնասներ պատճառելով նրանց՝ օգնում է հայ ազատամարտիկներին: Մինչև հրադադար անզիջում մարտնչեց. ճանաչողները նրա մասին գովեստով են խոսում՝ ասելով՝ թուրքերի սարսափ:

Հետագայում նշանակվում է Սարսանգ ջրամբարի բնապահպանության նախագահ: Արգելում է ձկնորսությունը, ձեռնամուխ լինում ձկնարտադրության, ձկնաբուծության զարգացմանը:

Կարո Հակոբի Կարապետյանը 1988թ. փետրվարի 21-ից մասնակցել է Ղարաբաղյան շարժմանը: 1989թ. եղել է Կոռնիձորում, նրան շատ էր մտահոգում Բերդաձորի ազատագրման խնդիրը: Կազմակերպում է խումբ:

1992թ. կազմավորվում է «Կողբ» ռազմամիավորումը. այն

գրանցվում է ՀՀ ՊՆ կողմից և ընդգրկվում Արծիվ-23 ջոկատի կազմում: Որոշ ժամանակ անց լուծարվում է:

1988թ. Բերդաձորը հայտնվեց շրջափակման մեջ: Դադարեցին Ադրբեջանից եկող բոլոր մատակարարումները, ավտոբուսային երթևեկությունը, անջատվեց հեռախոսային կապը: Հայաստանից մի խումբ նախկին բերդաձորցիներ՝ գիտակցելով վտանգը, ընտանիքներով վերադարձան հայրենի գյուղ:

Հարմար պահին 16 տարեկան Գևորգ Բալյանի բախտը բերեց: Երկար սպասումից հետո հնարավորություն տրվեց մի քանի անգամ անտառների նեղ ու դժվարին արահետներով ձիով զենք ու զինամթերք հասցնել Բերդաձոր, որին օր ու արև չէր տալիս Լիսագոր թուրքական գյուղը:

1989թ. մայիսին թուրքերը վերջնագրով պահանջեցին դատարկել գյուղը: Օգնության կանչերն ուղղեցին Հայաստան, և հենց այդ ժամանակ մենք հայտնվեցինք Բերդաձորում:

Բերդաձորում, որտեղ տղաներին ընդունեցին մեծ հանդիսավորությամբ՝ համալրեցին փրկիչներ: Նրանք զինված էին ինքնաշեն նռնակներով, որսորդական հրացաններով, մարտական մոսիներով, կարճ փողով կարաբիններով, ՏՕՋ-երով: Այս նվիրվածությանը և հաղթանակին տոգորված հավատը աննկարագրելի մեծ տպավորություն էր թողնում տեղաբնակների վրա, նրանց սպասումները երազանքից փոխվում էին իրականության: «Քաչալ» Արմենը, «Կիրովաբադ» Կամոն, «Բիձա» Հայկազը, Անդրանիկ Հարությունյանը աչքի ընկան իրենց սխրագործություններով: Իսկ ուսուցիչ Առնո Մկրտչյանը հետագայում հայտնվեց Բաքվի բանտում և նրա ճակատագիրը մինչև օրս անհայտ է: Եկան նորանոր խմբեր: «Տիգրան Մեծ», «Հատուկ գունդ», «Վարդենիսի պայմանագրային գումարտակ», «Վարդենիկ» ջոկատ, «Արցախ» գունդ, Ապարանի «Ավետիք» խումբը: Այս բոլորը միավորվեցին զորամասերում:

Էրեբունի օդանավակայանում ուղղաթիռներով ռազմամթերք կամ սննդամթերք տեղափոխելու ժամանակ «Հոպարը»՝ Ծիրակ Գյունաշյանը, մեռնելուց առաջ էլ կրկնեց իր թանավոր խոսքը «Հիրուր հետ եղեք»: Մարտին Ղազարյանը բերդանկան պահեց Բերդաձորում, հետագայում ավտովթարի զոհ դարձավ:

ՆԱԻՐԻ-ՋՈՎՈՒՆՈՒ ԽԱՉԻԿ

Զովունու խաչիկ

Զովունու ջոկատը կազմավորվեց 1989թ.: Հրամանատար ընտրվեց Խաչիկ Մամբրեի Սիմոնյանը՝ ծնված 1954թ.: Ջոկատը մասնակցում է Երասխավանի, Վարդենիսի, Իջևանի, Կիրանց, Նոյեմբերյանի, Բարեկամավան, Ոսկեպար գյուղերի ինքնապաշտպանական մարտերին, հետո Մարտակերտ, Հորադիզ, Ֆիզուլի:

ԵԿՄ-ի հատուկ հանձնարարությամբ 1991թ. սեպտեմբերի 10-ին ջոկատը մեկնում է Ծահումյան՝ ինքնապաշտպանական մարտերին մասնակցելու:

Սակայն զենքի ու զինամթերքի անբավարարության պատճառով վերադառնում է Երևան, լծվում այլ սուրբ գործերի: ՀՀ նորաստեղծ Պաշտկոմիտեի կողմից համալրվում և զինվելուց հետո Վանաձորը Երևանին կապող Ապարանի միջով անցնող խճուղու ելումուտն է փակում: Այնտեղ տեղակայված խորհրդային 7-րդ բանակից գավթում են ռազմական տեխնիկան՝ 21 միավոր ՀՄՄ: Ծուրջ մեկ ամիս պահպանելուց հետո դրանք տեղափոխում են ռազմաճակատ:

ԵԿՄ՝ թիվ 08 վկայականը Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻ ստորագրությամբ:

Նշանակվելով Նաիրիի շրջանի Երկրապահ կամավորների միության բաժանմունքի շտաբի պետ, միաժամանակ ՀՀ ՊՆ պարետային ծառայության պետ: Նրանց է տրվում Վ. Սարգսյանի կողմից հատուկ հանձնարարություն՝ արագ ու մեծ ճշգրտությամբ երկտող գրությունները, որոնք գրվում էին գաղտնի և տրվում էին միայն վստահելի հրամանատարներին, հասցնել տեղ:

Այդ խմբին է հանձնարարվում հմտորեն, գաղտնի պայմաններում գործել, տիրանալ Պռոշյան սովխոզին հարակից Հայգյուղմեխանիզացիա փորձարարական ինստիտուտին իր համալիրով: Այս համալիրի կառույցները հիմք հանդիսացան ձևավորվելու ՀՀ ՊՆ կառույցը՝ իր ստորաբաժանումներով: Առաջին նախարար նշանակվեց Վազգեն Զավենի Սարգսյանը՝ 1992թ. հունվարի 28-ին: Պատերազմի բովից ծնված նախարարությունը բլանկ չուներ: Նախարարն էր փաստաթղթերը գծագրում, տեղեկագրում, անսխալական գրում էր ու ստորագրում, նշանակում տարեթիվը: Բոլորը ճանաչում էին նրա գրությունները, կեղծել չէին կարող:

1999թ. հոկտեմբերի 27-ին ՀՀ ԱԺ շենքի նիստերի դահլիճում տեղի ունեցավ իր նախադեպը չունեցող ոճրագործություն: Զոհ դարձան ՀՀ ԱԺ նախագահ Կարեն Դեմիրճյանը, ՀՀ վարչապետ և ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը և վեց պետական ու քաղաքական գործիչներ: Կարեն Հունանյանը՝ մարդկության այդ վիժվածքը, ավտոմատի դավադիր կրակահերթից զոհ դարձած Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻ անշունչ մարմնին հարվածեց ավտոմատի խզակոթով: ՍՊԱՐԱՊԵՏԸ մահացած վիճակում էլ չերերաց: Հարվածի տեղում՝ ձախ քունքի մեջ արյունը լարդացել էր: Դիակին ոչ ոք չհամարձակվեց մոտենալ: Մոտեցավ միայն Մյասնիկ Մալխասյանը: Ծատ-շատերը վախից հատակին պառկած, լեզուները դուրս հանած հատակն էին լիզում, ստոր, դավադիր, տականք դավաճաններին առաջարկելով իրենց ծառայությունները, որ արժանանան նրանց դավաճան հայացքին:

Մի քանի ժամ հետո թույլատրվում է դիակին մոտենալ:



Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻ հրատապ գրությունները Զովունու Խաչիկին, 1991թ

«Զովունի» ջոկատ, ձախից երկրորդ նստածը՝
հրամանատար Խաչիկ Սիմոնյան՝ Զովունու Խաչիկ, Երասխավան, 1991թ

Առաջինը մոտենում է Մյասնիկ Մալխասյանը, հետո Ռուբո Գևորգյանը՝ «Ծաղիկ Ռուբոն», և տեղափոխում են Երևանի պետական բժշկական համալսարանի դիահերձարան:

Մուշեղ Սաղաթելյանը՝ «Զաուշ» ջոկատի հրամանատարը, Ռոբերտ Քոչարյանի աշխատասենյակում, Սերժ Սարգսյանի ներկայությամբ համարձակորեն ասաց, որ Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻ սպանությունն իրենք են կազմակերպել, որի համար էլ դատապարտվեց:

Կյանքը պարզ ցույց տվեց, որ Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻՆ շրջապատող պորտապարողները զուգարանի թուղթը ձեռքներին պատրաստակամություն էին դրսևորում, հերթ չտալով մեկը մյուսին: Կեղծ շինծու մարդիկ, որ կուրծք էին ծեծում, արտահայտվեցին, բացահայտվեցին իրենց շահամոլ դավաճանությամբ: 28-ի առավոտյան Խաչիկ Սիմոնյանը՝ «Նաիրի» ջոկատի ընդհանուր հրամանատարը, Հուսիկ Բաղդասարյանը, ՍՊԱՐԱՊԵՏԻ թիկնապահներ Մոսոն, Հակոբ Համբարձումյանը նախապատրաստվում էին դիակը դիահերձարանից տեղափոխել Արարատ՝ նրա ծննդավայրը: Ժամը 13-ին Արարատից ե-

Զովունու Խաչիկը մարտական ընկերների հետ մարտից առաջ. քննարկում են առաջիկա մարտը:
Մարտակերտ, Լենինական, 1992 թ.

Ձախից Զովունու Խաչիկը Վազգենչիկը գրկին նայում է կնքահորը՝ Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻՆ: Յակոբ Յակոբյան (Լեգենդ), Գագիկ Գևորգյան, Ռուբո Գևորգյան, Սասուն Միքայելյան, մարտական ընկերներով Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻ հետ: Հրադադարից հետո-1995թ.

կան տղաները, Վ. ՍՊԱՐԱՊԵՏԻ քեռին, ժամը 15-ին դիակը տարան տուն: Խաչիկը հոգու խորքում ասաց. «Նա ամեն օր Արարատի համն էր առնում, խոսում Տիգրան Մեծի հետ»: Մտքում նա իր համար Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունը կրկնեց.

Արարատի ծեր կատարին դար է եկել վայրկյանի պես ու անցել,
Անհուն թվով կայծակների սուրն է բեկվել ադամանդին ու անցել,
Մահախուճապ սերունդների աչքն է դիպել լույս գագաթին ու անցել,
Հերթը հիմա քոնն է մի պահ, դու էլ նայիր սեգ ճակատին ու անցիր:

Նա մտաբերեց նաև Կիլիկյան Հայաստանի Ռուբինյան Հեթում ՍՊԱՐԱՊԵՏԻ կին Զարմանուհուն, որ 1363թ., երբ պաշարվում է Սիս մայրաքաղաքը, կռվում է ամուսնու կողքին, որին դավադրաբար սպանվելուց հետո իր Գևորգ զավակի հետ ապաստանում է Կոկիսոնի և Ուլինայի լեռներում: 300 խիզախ լեռնականներով ազատագրում է Կազան ամրոցը, նոր հայկական իշխանություն հիմնում և գոյատևում է շուրջ 65 տարի:

Ադրբեջանի կողմից հայերի նկատմամբ վայրագությունները թելադրում էին, որ առանց զենքի ու պայքարի խնդիրը չի լուծվի: Հողը նվաճում են, ոչ թե փոխանակում:

Նաիրի շրջանը լիովին ընդգրկվեց շարժման մեջ: Պայքարը բաժանվեց երկու մասի՝ քաղաքական և ռազմատնտեսական:

1992թ. հունիսի 11-ին չորս դուստրերից հետո ծնվեց Խաչիկի արու զավակը՝ Վազգենը, կնքահայր եղավ Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԸ: Նաիրիի ԵԿՄ-ի նախագահ Խաչիկ Սիմոնյանը (Զովունու Խաչիկը):Փորձությունը ցույց է տվել և հուշում էր, որ թիկունքում անհրաժեշտ է որոշակի ռեզերվ թողնել՝ բուժսպասարկման կետով: Ովքեր շփվում էին Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻ հետ, իրենց հոգու խորքում անձայն բացականչում էին... Օրհնյալ է Աստված...

Հայոց պատմության մեջ հայ զորավարներից բացառիկ դեմքերից է Վազգեն Սարգսյանը, որն օժտված էր աներևակայելի անհատականությամբ, անսպառ գիտելիքներով, ռազմական-ստրատեգիական խորաթափանցությամբ:

Մարդկային հարաբերությունների, միմյանց գաղտնիքների մեջ խորանալու նրա վարպետությունը արտահայտվում էր ռազմական խորհրդակցություններում: Նրա յուրաքանչյուր բառ իմաստուն էր, սթափեցնող, ոգևորող: Այդ ուժը արտահայտվում էր նրա հոգեկան ապրումների, հույզերի, վշտերի, մտորումների մեջ: Նա բնականից խելոք, զգաստ, հեռատես, ներողամիտ և բարի էր, ինչը հատուկ են մեծ հոգու և խելքի տեր մարդիկ:

Իր անմիջականությամբ, քաղցրությամբ, ջերմությամբ, գործուն եռանդով ապշեցնող տպավորություն էր թողնում: Հայ ժողովրդի դաժան կյանքի հարվածներից իմաստացած, անսահման եռանդով լեցուն ամենաներող հայացքից զգում ես նրա բարեհամբույր, խոնարհ բնավորությունը, որը համբերությամբ տարել, տանում էր կյանքի հարվածները իմաստնացած, անսահման, խոսուն ու ազդեցիկ լռությամբ:

Եվ թողնում է այն տպավորությունը, որ քո հարազատն է, մտերիմ ու ջերմ բարեկամը, որի հոգին լցված է անհուն վշտով ու թախիծով, հայրենիքի տառապանքով:

Բարեմասնությունները ճշմարիտ հայերի ժառանգությունն են. Արարատի հողում է սնուցվել նրա կյանքը:

Նա գիրք էր, որը էջ առ էջ բացվում էր կարդացողի առջև: Բացատրում էր հոգու մաքրությունը, որը չի փշրվել դաժան պատերազմի ու կյանքի հարվածների տակ: Հենց դա է իսկական ճշմարիտ ՍՊԱՐԱՊԵՏԸ: Նա եզակի դեմք էր մեր իրականության մեջ: Այս մտորումներով Զովունու Խաչիկը կանգնեց, դեմքն ուղղեց Մասիս սարին:

Գեղամ Ֆահրադի Հակոբյանը ծնվել է 1956թ. Աշտարակի Կոշ գյուղում: Ընդգրկվում է Զովունու ջոկատում: Խորհրդային բանակի 18-ամյա դեսանտային Գեղամը երևի թե վերահաս իր մահկանացուն կնքեր, եթե նախախնամությունը նրան 17 տարի հետո անմահություն չխոստանար:

Երասխավանից հասնելով Ոսկեպարի պաշտպանական մարտերին՝ կարաբինը ձեռքին տղաների հետ թաքնվեցին անտառում: Դա 1991թ. ապրիլի 21-ին էր, երբ վերստին սկսվեց Ծաղկավան-Կիրանց-Ոսկեպար ուղղությամբ խորհրդաադրբեջանական համատեղ հարձակումը: Մայիսի 6-ի առավոտյան արդեն լայնածավալ հարձակում էր գյուղի վրա: Գյուղն օղակի մեջ առան տանկերը:

Գեղամ Ֆահրադի Հակոբյան

Գեղամ Ֆահրադի Հակոբյանի հուշաքարը:

Պարաշյուտը չբացվեց: Մահը խենթ արագությամբ ձգում էր դեպի երկրային թանձր գորշություն: Խորհրդային բանակի 18-ամյա դեսանտային Գեղամը երևի թե վերահաս իր մահկանացուն կնքեր, եթե ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹՅՈՒՆԸ նրան 17 տարի հետո անմահություն չխոստանար

Կրակահերթի իսկական տարափ տեղաց հարակից անտառների վրա, որտեղ և զոհվեց քաջասիրտ բազեն՝ Գեղամ Հակոբյանը: Թշնամու գնդակից Գեղամի կուրծքը տաքացավ: Բարձրահասակ, թիկնեղ, նման կաղնու, երերալով հենվեց կաղնու հաստաբնին:

Աչքերը մթագնեցին, ձեռքերը թուլացան, կարաբինը ձեռքից սահեց ցած, ծնկեց, որ վերցնի, ուժը չպատեց: Ուսով հենվեց կաղնուն, արյունոտ շուրթերը խրեց կարոտից ծաքած կաղնու կեղևի մեջ, համբույրով հովացրեց սիրտը, շունչը տվեց կաղնուն: Կաղնու ծառերը այդ շունչը հաղորդեցին անտառին: Լեռները հասկացան, որ ոչ թե ցավից, այլ արմատներից են ծաք տվել:

Տղաները վազեցին օգնելու Գեղամին: Մտածում էր արտասահմանում գտնվող եղբոր՝ Կարապետի մասին, գնդացրին կպած՝ պոկ չէր գալիս, փամփուշտը վերջանում էր: Հաղթանդամ մարմնից դուրս թռչող բամբ ձայնով գոռաց՝ փամփուշտ հասցնե՛լ: Ավա՜ղ, տղաները վազում էին Գեղամին օգնելու: Ինչ-որ հոսանք կարոտի սիրտը շանթեց, ցավով կծկվեց, ի՞նչ է կատարվում, տեր Աստված... Երկու կաղնի իրար գրկել էին: Տղաները մի պահ ահից քարացան, տեսածներին չհավատացին: Գեղամը կաղնու հետ խոսում էր: «Տղերք, իմ հոգին այս կաղնու մեջ է, սիրտս՝ Արա լեռան կատարին արծիվների պես լեռների ծերպերին թառած՝ որպես տիրակալ, իր շուրջն է իշխում: Տղերք, մի կանգնե՛ք, հետապնդե՛ք թշնամուն, գրոհե՛ք, կայծակ ու որոտ թափեք թշնամու գլխին»: Ու այդպես շունչը տվեց հողին: Հետմահու պարգևատրվեց արիության մեդալով:

Քարվաճառի վիճակը ծանրանում էր: 1994թ. հունվարին մի պահ նահանջ եղավ:

«Նաիրի» ջոկատը ժամանակին հասավ օգնության: Ձմեռ էր, սառնամանիք: Բուք ու բորանը փակել էր Հոդ-Քարվաճառ ճանապարհը, Սեյիդլարի վտանգավոր ոլորապտույտով. անցումները դարձել էին անմատչելի:

Յոթ դիակ մնացել էր մարտադաշտում, հապաղել չէր կարելի: Ձմեռային դիզվառելիք չկար: Ձյուն մաքրող տրակտորը առանց վառելիքի թաղվել էր ձյան մեջ ու լռել: «Ռուբո», Վարդան Գրիգորյանը և Սամվելը, Կարո Հակոբյանը սնունդ

էին հասցնում, Վարդանը շվարած կանգնել էր: Եկավ ՍՊԱՐԱՊԵՏ Վ. Սարգսյանը: Զեկուցեցին իրավիճակի մասին. հանդարտ էր: Երբ ասացին ձյան տակ մնացած 7 զոհված մարտիկների դիակների մասին, փոթորկվեց:

Ահով ու դողով գնդապետ Վովա Գասպարյանը մոտեցավ ու պատրաստվեց զեկուցելու: ՍՊԱՐԱՊԵՏ Վ. Սարգսյանը Գասպարյան Վովային հանձնարարեց և տվեց երեսուն րոպե ժամանակ: Կես ժամ հետո ձմեռային վառելիքը տեղ հասցվեց: Տրակտորը բացեց ծանապարհը, դիակները հանեցին մարտադաշտից, հասցվեցին հարազատներին:

Ձյուն մաքրող տրակտորի սև ծուխը ամպի քուլաների պես բարձրանում էր կապուտակ երկինք, երկիրը սև ծխից սևանում էր ու թշնամու համար դառնում նկատելի: ՍՈՒ-25 ռմբակոծիչ ինքնաթիռը հեշտությամբ ռմբակոծում էր:

Կարապետ Հակոբյան, Արամ Սարգսյան

«ԱՐՑԱԽ» ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԸ
Հրամանատար՝ Միքայել Ապրեսյան

Լևոն Կարապետյան, 1991 թ. Վերիշեն

Նիկոլ Վանյան, 1991 թ. Կրկժան

Եմավոն Բեգլարյան,
զոհվել է 1994 թ. Մարտակերտում



Սամվել Անտոնյան,
զոհվել է 1991 թ. Ղարադաղլուում

Մարտինը, Գագոն, Մայիսը մարտական ընկերների հետ:
Արաքսի ափին, Հորադիզ, 1994թ:

Գագիկ Հովհաննեսի Ստեփանյան՝ «Հեթանոս Գագո», Մայրը Շարդախլուից էր: Նրա վեց զավակներից՝ Բագրատը, Էմմա, կապավոր օգնում էին թիկունքից, Արայիկը ընդգրկվեց ցեղակրոն ջոկատի կազմում, Գագիկը Թայֆուն կամավորական ջոկատում: Նորածին դստեր բարուրը գրկից դրեց օրորոցի մեջ, մեկնեց Քարվաճառ: 1994թ մարտի 16-ին Օմարի ազատագրման ժամանակ զոհվեց հերոսի մահով: Պարգևատրվեց Արցախի առաջին ՀՀ երկրորդ մարտական խաչ շքանշաններով և մի շարք մեդալներով: Ժողովրդի պահանջով հուշարձանը բացվեց Նոր-Նորքի 2-րդ զանգվածի Թոթովենց փողոցի նրբանցքում և 135 դպրոցը անվանվեց Գագիկ Ստեփանյանի անունով:

Արկադի Հաքարյան,
Վ. Սպարապետի համհարզը:
Հոկտեմբերի 27-ին առաջինը համարձակ մտավ Աժ և կրակեց թշնամու վրա

ՎԱՐԴԵՆԻՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԳՈՒՄԱՐՏԱԿ

1989-1991թթ. Ծահումյանի, Մարտակերտի հայահալած քաղաքականության շրջանում Հենրիկ Մուրադյանը ճակատ առ ճակատ կանգնեց բաղիրա-ալիևյան ոհմակների դեմ: Մեծ Մասրիկ գյուղում (Վարդենիսի շրջան) 1964 թ. հոկտեմբերի 4-ին ծնված Հենրիկը՝ Տարոն աշխարհից, թուրքի ջարդից

Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԸ նարդի խաղալիս, Մեղրի 1994 թ.
Մեղրու տարածքային դատախազ Սամվել Գոգինյանի հետ

փրկված Մուրադենց Կարոյի որդին էր: Նա տվել էր ֆիդայական երդում: Դա նրա առաջին երդումն էր՝ տրված Վարդենիսի սահմանների ինքնապաշտպանական մարտերում: Ժողովուրդը նրան վստահեց, ընտրեց ՀՀ Աժ պատգամավոր: Նա այդ ժամանակ ՀՀ սահմանապահ զորքերի վարչության Ազիզլու-Քարվաճառի ինքնապաշտպանական, տարածքի զինհրամանատարն էր: Իսկ 1993թ. մայիսին ՀՀ ՊՆ հրամանով նրա ղեկավարած ջոկատի բազայի վրա կազմավորվեց պայմանագրային գումարտակ՝ Հենրիկ Մուրադյանի հրամանատարությամբ: Օգոստոսին Վարդենիսի զորագունդը կազմակերպեց Քարվաճառի հյուսիս-արևմտյան սահմանների պաշտպանությունը:

1993թ. Քարվաճառի Իստիբուլաղ գյուղի տների ձեղնահարկերից կրակում էին: Նահանջած թուրքերը կուտակվել էին գյուղում, ցուցադրում էին համառ դիմադրություն: Հայկական ուժերի հրամանատար Հենրիկ Մուրադյանի առաջարկով դիմեցին խորամանկության: Տարբեր հեռավորության վրա գտնվող տներից հատուկ պարտիզանական խումբը վառեցին: Թշնամին հոգեբանորեն խճճվեց, ընկավ խուճապի մեջ: Մենք ուժեղացրինք ճնշումը, գյուղը առանք օղակի մեջ և աստիճանաբար ներխուժեցինք գյուղ: Գերեվարեցինք 17 հոգու, որից երկուսը՝ սպա: Գերիներին գնդակահարելու փոխարեն ուղարկեցինք ռազմական շտաբ: Մերոնցից զոհվեցին՝ Աշոտը (Կամոյից) և Սերոբը:

Ջոկատի մարտիկ Արկադի Պետրոսյանը հսկա էր. հետախուզական աշխատանքների ժամանակ ծանրաքարշ մարմինը դժվարանում էր շարժել: Արթուր Պողոսյանը, հակառակը, անթերի կատարում էր առաջադրանքները, որի հետախուզական տեղեկագրությունների շնորհիվ հայերը հասնում էին հաջողությունների:

Ապրիլի 7-ին Քարվաճառի Կալինինքենդ գյուղում առաջին մարտական գործողությունների ընթացքում Հ. Մուրադյանի ղեկավարած գումարտակը հյուսիսային հատվածում հասավ հաջողության: Երեք օրվա ծանր մարտերից հետո թուրքերից խլեցին 1 հատ ՊՇՇ-2-րդ, 6 հատ էնտելբե, 6 հատ Ա-30 122 մմ թնդանոթներ, 2 հատ կամազորից մեկը, զինամթերք: Գերեվարեցինք չորս թուրքի:

Գարնանամուտին հասել էր թշնամուն վռնդելու ժամանակը հայկական հողերից: Օրեցօր աճում էր հայերի մարտական հզորությունը, բայց լեռնային պայմաններում դժվարանում էր գործի դնել ռազմական տեխնիկան: Միայն կենդանի ուժով էր հնարավոր պաշտպանել Քաշաթաղից նահանջող ազգաբնակչությանը, որոնց զանգվածային կուտակումները խանգարում էին հայերի առաջխաղացմանը: Մեր կռիվը խաղաղ ժողովրդի դեմ չէր, այլ առաջացած չարիքի դեմ:

Հատկապես Սարիթաղ գյուղում թուրքերը մինչև ատամները զինված էին, բայց հայերի կողմից շրջափակման օղակի սեղմումից անձնատուր եղան: Մութն ընկնելու ժամանակ աշխուժացան, հույս ունենալով, որ մթությունից օգտվելով՝ կկարողանան օղակը ծեղքել ու ծողոպրել: Սակայն լուսադեմին հանձնվեցին:

Այն, ինչ անհրաժեշտ էր գալիք պատերազմի ավարտական օպերացիայի համար, զորքերը ստանում էին: Մայոր Հ. Մուրադյանը ՍՊԱՐԱՊԵՏ Վ. Սարգսյանին հանդիսավոր խոստացել էր, որ վստահեն իրենց ուժերին, թշնամուն թույլ չեն տա որ պայքարի դաժանությամբ: Այս հարցում մեծ աշխատանքներ կատարեցին՝ Խոջաբեկյան Արմենը, Արամյան Գեղամը, Պետոն, Ռազմիկը, որոնք աչքի ընկան իրենց բարի, մարդասիրական դրսևորումներով, իրենց քաջությունը արտահայտելով գերիների և խաղաղ բնակիչների նկատմամբ:

Գագիկ Մելքոնյանը, Հենրիկ Մուրադյանը, Մորուք Ռաֆոն մշակում են Օմարի գրավման ծրագիրը, 1994 թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՎԱՀԵՆ Զ. ՍԱՐԳՍՅԱՆ
МИНИСТР ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ВАЗГЕН ЗАВЕНОВИЧ САРКИСЯН

Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻ հապշտապ գրություններից: Հենրիկ Մուրադյան

Դիակները, որոնք թփերի տակ, քարերի, փոսերի արանքներում աչքից հեռու, մնացել էին անտես, ժամանակի սղության պատճառով հողին չէին հանձնվում, մնում էին բաց երկնքի տակ, նեխում էին կամ գազանների կեր դառնում: Գարշահոտությունը ապականում էր շրջապատը, դառնում հիվանդությունների պատճառ:

Գեներալ Գ. Դալիբալթայանը Հ. Մուրադյանի ուշադրությունն էր հրավիրում այս իրողության վրա՝ կարևորություն տալով հարցի լուծմանը:

Գերիները շատ էին, նրանք ժամանակ և ուժեր էին խլում, նրանցից ազատվել էր պահանջվում: Օժանդակ ուժեր չլինելու պատճառով հարցը ձգձգվում էր:

Օմարի ազատագրման պայքարի լարվածությունը պայմանավորված էր քաղաքական-տնտեսական մի շարք խրթին, անլուծելի հարցերով:

Նշված տղաները՝ Աբրահամյան Գեղամ, Բաբայան Արմեն Ռազմիկի (Գյուղակադեմիայի դասախոս), Գրիգորյան Օնիկ Գրիշի՝ զոհված, Խուջաբեկյան Արմեն Արբիկի (Գյուղնախարարությունում գյուղտեխնիկ, ջրերի բաշխման պետ), Վարդանյան Արթուր Իշխանի, Մկրտչյան Գրիգոր Գուրգենի (երկուսն էլ ծառայում են ՀՀ ԶՈՒ-ում), եղբայրներ՝ Խաչատրյան Վարդգես Տիգրանի, Խաչատրյան Հուսիկ Տիգրանի, որ զոհվեց 1993թ.: Մուրադյան Արտյոմ Աշոտի, Պողոսյան Էդվարդ Վոլոդյայի, որ զոհվեցին Օմարի գրոհի ժամանակ 1994թ-ին:



Քելբաջարի ազատագրման մարտական քարտեզը, 1993 թվականի ապրիլի 1-19

Նրանք իրենց ամբողջ կյանքը, իրենց բախտը կապեցին Հայաստանի ազատության, անկախության, Արցախի ազատագրման գործի հետ: Նման մարդիկ հայրենիքի նկատմամբ խրամատային ազատամարտիկի նվիրվածությամբ որպես պաշտպաններ, հաղթանակին նպաստող ուժեր, դարձան նրա շահերի անկեղծ արտահայտիչներ:

Ահա այդ էր պատճառը, որ գլխավոր հրամանատարությունը վստահում և հանձնարարություններ էր տալիս նմանատիպ քաջորդիներին:

Գեներալ Անդրեասյանը ՀՀ ԶՈ գլխավոր շտաբի պետն էր, նստում էր Վարդենիսում: ՍՊԱՐԱՊԵՏ Վ. Սարգսյանի հրամանով Անդրեասյանի համաձայնությամբ նախօրոք մշակված պլանով, նրանց հատուկ հանձնարարականով պետք է կատարեինք հատուկ ու գաղտնի առաջադրանքը, կամուրջների պայթեցման ծրագիրը՝ թշնամուն կտրելով նահանջի և խմբավորվելու հնարավորությունից, մինչև խոշոր օպերացիայի իրականացումը:

Քսանչորս հոգի էինք՝ սպիտակ մասխալաթներով, Թեքստկայան սարի վրա առաջին անգամ խմբով ռադիոհաղորդումով կատարեցինք «Դաշնակ Դրո» երգը: Մեր պահանջով այն լսեց ամբողջ ռազմաճակատը: Թշնամին գազազել էր, պատրաստվում էր հակահարված տալ, սակայն չհասցրեց:

1994թ. հունվարի 4-ին Օմարի լեռների ստորոտներում դեպի խորքերը, անտառապատ հարթավայրերը ու ձորերը, ձնծաղիկը տեղ-տեղ բուսնել էր և բարի ժպտում էր աշխարհին: Մինչդեռ ազատամարտիկների արյան ցողը նստում էր թերթիկների վրա ու շիկնում: 50 մետր բարձրության վրա տեղի ունեցան դաժան մարտեր: Այնքան մոտ էինք, որ ձեռքի նռնակները արագորեն իրար վրա էինք նետում: Վա՜յ նրան, ով ծարպկորեն և հնարքներով չէր վարում մարտը: Նույնիսկ տեղ-տեղ ձեռնամարտի հասանք, որը սոսկալի էր: Թուրքերից սպանվեցին ութ հոգի: Հայերից զոհվեց Էդվարդ Պողոսյանը, վիրավորվեցին երկուսը, չորսը անհայտ կորան:

Ծովինար գյուղից Դանիելը (Պեպոն) գրոհի ժամանակ ընկավ հոգեբանական մղձավանջի մեջ: Հոգեբանորեն ներշնչվելով, այդ պահին պատրաստ չէր հաղթահարել ինքն իրեն: Նրան մոտեցավ հրամանատար մայոր Հենրիկ Մուրադյանը: Ավտոմատի պահեստատուփի 30 փամփուշտներից 27-ը տեղում էին, իսկ պահեստատուփերը՝ լիցքավորված: Նա չէր կարողացել մարտի մեջ մտնել, հոգեբանորեն պատրաստ չէր: Գտնվում էր հոգեկան ներշնչանքի մեջ:

Հրամանատար Հ. Մուրադյանը մի ուժգին ապտակ հասցրեց Պեպոյի դեմքին, Պեպոն սթափվեց: Հրամայեց Պեպոյին մոտենալ թուրքի դիակին, ինչ-որ գործողություն կատարել, քանի որ այդ նույն թուրքը մի քանի ժամ առաջ ցանկանում էր գլխատել Պեպոյին, բայց հայտնվել է այդ վիճակում:

Պեպոն մոտեցավ դիակին, զգաց խղճի խայթ, ու՞մ զարմացել, ինքը հո թուրք չէր: Դիակի աչքերը խնամքով փակեց, ավտոմատը դրեց կրծքին, մարմինը ծածկեց սավանով, մոտեցավ հրամանատարին ու զեկույցից:

- Հրամանատա՛ր, ես դրան եմ ընդունակ:

Հրամանատարը սեղմեց Պեպոյի ձեռքը և պատվիրեց շարք կանգնել:

Վարդենիսի ջոկատը ձևավորվեց, կամավորականների 164

հոգանոց գումարտակի հրամանատար նշանակվեց մայոր Հենրիկ Սուրադյանը՝ ՀՅԴ անդամ:

1994թ. փետրվարին Օմարի հատվածում Սուզուլու-Քյորօղլու սարերի տարածքում գոմերի մոտ թեժ մարտեր էին ընթանում: Այդ գործողության ժամանակ հայկական ուժերը, որը ղեկավարում էր մայոր Հ. Մուրադյանը, թուրքական ուժերին առան շրջափակման մեջ: Չորս ժամ թուրքերը ցույց տվեցին համառ դիմադրություն, սակայն հայերի խելացի գործողությունների շնորհիվ հանձնվեցին: Կենդանի մնացածներից յոթ շարքային, մեկ ավագ լեյտենանտ գերեվարվեցին, որոնց միջոցով հիմնավորվեց, որ Օմարի ռազմաճակատի թուրքական պաշտպանական ռազմական բազան գտնվում էր այդ տարածքում:

Մարտին մասնակցող հիմնական ուժերի հետ մասնակցում էին նաև եռամսյա հավաքի մասնակիցներ Մարտունուց, Սևանից, Կամոյից, Վարդենիսից՝ թվով 300 հոգի, որոնք բաժանվեցին երկու խմբերի՝ տարբեր ուղղություններով մարտնչելու համար:

Այդ մարտերում կրծքավանդակից միջանցիկ գնդակով ծանր վիրավորվեց Էդիկ Բաղդասարյանը, Էրքեջից Պապոն, Կամսարը: Լսեցինք նաև, որ Կամաշի հատվածում մարտի ժամանակ վիրավորվել էր նաև Ամարասի Արթուրը, այդ հրաշալի հայը:

Գերիներին տեղափոխեցինք կենտրոնական ռազմական շտաբ՝ հանձնելով հակահետախուզությանը, որոնք սողալով անցան երկու մասի բաժանված հայկական զորքերի մեջտեղով՝ եռամսյա հավաքի մարտերին մասնակից տղաները իրենց սեփական աչքերով տեսնեն, թե ովքեր են նրանց դեմ կռվողները:

Հիշենք, որ հունվարի 26-ին Օմարի ուղղությամբ ռազմական ճակատը թշնամու ուժերի առաջ հայկական ուժերը նահանջել էին: Ադրբեջանցիները ձեղքեցին պաշտպանական գիծը: Իրադրությունը բարդանում էր, պահը կրիտիկական էր:

ՍՊԱՐԱՊԵՏ Վ. Սարգսյանի հրամանով Կոմանդոսը, Ս. Միրզոյանը, Էդվարդ Գևորգյանը, Էմիլ Միրզոյանը ուղղաթիռով ուղևորվեցին ռազմաճակատ: Այդ ժամանակ 3-րդ բանակային զորամիավորումը՝ «Բրիգադան», խուճապի էր մատնված:

ՀՓՄ ջոկատը Հ. Մուրադյանի գումարտակի կազմում: Ձախից կանգնած՝ Ջիվան: Քարվաճառ, Մարիդաշտ 1993թ.:

Լքում էին ռազմաճակատը, կորցնում հիմնական ուղղությունը: Հարկավոր էր շտապ միջոցներ ձեռնարկել, կազմակերպել բրիգադի հետագա ծառայության հարցը:

Մեկ շաբաթում կարողացանք Անատոլի Հինևիչի, Կոմանդոսի միջոցով ռազմաճակատում բոլորի կողմից հարգված ու սիրված, ռազմագետ գնդապետ Ստեփան Միրզոյանի քրտնաջան աշխատանքի շնորհիվ համախմբված ուժերով վերակազմավորել և համալրել 3-րդ բրիգադան: Հրամանատար նշանակվեց գնդապետ Արտյուշա Միքայելյանը, շտաբի պետ՝ փոխգնդապետ Բորիս Ալախվերդովը: Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԸ պարզ էր ու հասարակ, միաժամանակ՝ խիստ ու պահանջկոտ: Լինելով ընկեր՝ կաշկանդվածություն չէինք զգում:

ՍՊԱՐԱՊԵՏ Վ. Սարգսյանի հրամանով սկսվեց Օմարի լեռ-

նանցքի ազատագրման օպերացիան: Մինչ խորհրդակցությունը՝ այն ղեկավարում էր ՀՀ ՊՆ գլխավոր շտաբի պետ գ.մ. Անդրեասյանը, տեղակալն էր գ.տ. Միքայել Հարությունյանը: Օմարի լեռնանցքի ռազմաճակատի ընդհանուր հրամանատար նշանակվեց ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, Վարդենիսի կամավորական ջոկատների ընդհանուր հրամանատար մայոր Հենրիկ Մուրադյանը:

Ադրբեջանցիները ամբողջ զինուժով գրոհեցին հայկական սահմանների, հատկապես Օմարի պաշտպանության համար մարտնչող հայկական ուժերի վրա: Գործի անցան թշնամու հրթիռահրետանային, հակաօդային զենիթահրթիռային ստորաբաժանումները՝ հայերի պաշտպանական նշանակետերը ոչնչացնելու: Ռուսական ցուրտն ու սառնամանիքը, բուքը պարում էին լեռնագագաթում: Երեք օր թուրքերը Cy-25 ռմբակոծիչ ինքնաթիռով ավերեցին ընդհանուր ռազմաճակատի ամբողջ տարածքը, որից թուրքերը անցան լայնածավալ հակահարձակման Քյորոօղլի գյուղի տակից, Սուզուլու, Թեքայկայա ուղղությամբ, մինչև ապրիլի վերջը: Հայկական ուժերի կուռ դիմադրությունից թուրքերը թուլացան: «Չնահանջել ոչ մի թիզ հողակտոր» նշանաբանով հայերը անցան հակահարձակման:

Կազմակերպվեց հաղթարշավ: Ձախ թևում հակահարձակման անցան մայոր Հենրիկ Մուրադյանը, փ.գ. Սեյրան Սարոյանը, Ռոստոմ Գասպարյանը, որը մեր խնդրանքով և միջնորդությամբ ՍՊԱՐԱՊԵՏԻ օգնությամբ ազատվեց ՊԱԿ-ի զնդանից, մեկնեց Հորադիզ, «Տիգրան Մեծ» գնդի ասոցիացիայի նախագահ Սմբատ Այվազյանը, Զովունու Խաչիկը, «Արաբոյի» Մանվել Ղազարյանը, Սուզուլու սարի ուղղությամբ՝ Գագիկ Մելքոնյան-մայրաքաղաքային գունդը, ԼՂՀ-ի ինքնապաշտպանական բանակի ներկայացուցիչ Սամվել Կարապետյանը, Մուրուք Ռաֆոն, Շուշիի գումարտակը, Պռոշյան սովխոզի Պետոն, Վարդան Այվազյանը, Հովսեփ Հովսեփյանը, ՀՀ ներքին զորքերից Արծրուն Մարգարյանը:

Առաջին անգամ ՍՊԱՐԱՊԵՏ Վ. Սարգսյանը 1994թ. հունվարին Քարավաճառ եկավ ալ կարմիր «Ջիպ» ավտոմեքենայով, զորքի իրավիճակին ծանոթանալու, մարտունակությունը ստուգելու համար: Երկրորդ անգամ 1994թ. մարտին Վանո Սիրադեղյանի, Բաբկեն Արարքցյանի, Սամսոն Ղազարյանի,

Արծրունի Մարգարյանի հետ եկան ուղղաթիռով, Ստեփանակերտից ավտոմեքենայով եկավ Ռոբերտ Քոչարյանը: 1994թ. փետրվարի 17-ին ուղղաթիռով Օմար եկան ՍՊԱՐԱՊԵՏ Վ. Սարգսյանը, ՀՀ Աժ նախագահ Բաբկեն Արարքցյանը, Վանո Սիրադեղյանը: Ստեփանակերտից Ռոբերտ Քոչարյանը մասնացում էր խորհրդակցությանը:

Երրորդ անգամ 1994թ. մարտի վերջին նույնպես եկավ ուղղաթիռով, բոլոր նախարարների մասնակցությամբ հրավիրեց խորհրդակցություն, որը ցուցադրվեց «Լրաբերով»: Մայոր Հենրիկ Մուրադյանին նշանակեցին Քարվաճառ-Օմար ռազմաճակատի հրամանատար: Չորրորդ անգամ 1994թ. մայիսի 19-ին եկավ ուղղաթիռով, հրադադարից հետո:

Ստեփան Միրզոյանը Քաշաթաղում մեզ խրամատներ փորել սովորեցրեց: Նա 1990թ-ից ընդգրկվել էր Ղարաբաղյան շարժման մեջ. խորհրդային բանակի ռազմական դպրոցն էր ավարտել՝ որպես կադրային սպա: Իր գիտելիքները ներդրեց

Վ.ՍՊԱՐԱՊԵՏԸ սպայակազմին տեղեկացնում է հետագա ծրագրերի մասին

այդ սուրբ գործին: Որպես մարտական ընկեր՝ զանգահարեց, գնացի մոտը: Նա ՀՀՊՆ կադրերի վարչության պետն էր: Անտրամադիր էր: Խոսեցինք առօրյա հարցերի շուրջ, անցած օրերի մասին, թե ինչպես էր գտել 500 գրամ ձիու գլուխ՝ ոսկուց, ու Քաշաթաղ մտնող աղբյուրի մոտ շպրտել: Ջուր խմելուց հետո զգացել էր, որ ջուրը իր հետ խոսում է, կյանքը և իմաստը ջրի մեջ է: Դեն էր նետել այդ ոսկու կտորը:

Այդ օրերին մի քանի քայլ հեռավորության վրա ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը դաշտային պայմաններում խորհրդակցություն էր վարում: Հիշեցինք, որ նա ուժեղ էր ու փխրուն: Լինում էր այնտեղ, որտեղ վտանգավոր, չափազանց խոցելի էր: Մահից չվախենալով՝ փախչում էր կյանքից:

Շուտ կարողանում էր ըմբռնել և կողմնորոշվել: Լինելով զգայուն ու մեծ կամքի տեր մարդ՝ նա իր կողքին պետք է ունենար մարդիկ, որոնք կարող էին հուշել իրենց մասնագիտական խելացի խորհուրդները, բացել ռազմական արվեստի գաղտնիքները: Ստեփան Միրզոյանը հետագայում պիտի ասեր. «1996թ.-ին իմ և ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանի միջև գժտություն ծագեց: Դիմումի համաձայն՝ ազատվեցի աշխատանքից. այն ցավով ընդունեցի: Առաջարկում էի կատարել կադրերի ճիշտ ընտրություն: Վեց ամիս հետո ապացուցվեց, որ ես ճիշտ եմ: Կանչեց մոտը, ընդունեց իր սխալը, վերականգնեց իմ նախկին աշխատանքին»:

Նա մեծ էր այն այն բանի համար, որ ընդունում էր բացթողումները և արագ ուղղում: Մեծ ունակություն ուներ, հասկանում էր հարցի էությունը: Որպես ռազմագետ, ռուսական բանակի դպրոցով անցած՝ պիտի ասեմ, որ ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը տակտիկայից թույլ էր, ավելի շատ ստրատեգ էր և դրա գիտակն ու վարպետը: Զգուշորեն ստրատեգիական հարցեր լուծելով՝ մեզ գերազանցում էր և հասնում հաջողությունների, արագորեն ապահովում հաղթանակը, որը որոշ մարդկանց կարող էր թվալ կույր քաջություն: Ես կասեի, որ այդ բոլորը զուգորդվում էր ռազմական արվեստի հետ:

Նա շատ արագ կարողանում էր հասկանալ մարդկանց: Մենք հայոց բանակի կայացման համար զինվորական կադրերի պակաս ունեինք, հատկապես բարձր զինվորական կրթություն ստացած սպաներ: Այս բոլորը լրացնում էին քաղաքա-

ցիական բարձրագույն կրթություն ստացածները, խորհրդային բանակում ծառայածները, Աֆղանստանում կռված տղաները, միջնակարգ կրթություն ստացածները: Գրագետ էր, արագորեն տիրապետում էին մարտավարական պահանջներին:

Այս ամենը նպաստում էր 6 տարվա պարտադրված պատերազմում հաղթել:

Հրադադարից հետո ՀՀ ԶՈՒ հզորացման հարցով առաջարկ արեցի: Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏՆ ընդունեց և 1997 թ. մարտին փորձության կարգով հրամանով նշանակվեցի Վանաձորի բանակային կորպուսի հրամանատար: Այդ հիմքի վրա 5 կորպուս ձևավորվեց, որ շատ կարևոր էին հասկանալու, օրինականացնելու կորպուսի դերը ռազմական արվեստում:

Հետագայում գեներալ-լեյտենանտ Ստեփան Միրզոյանին վստահվեց ղեկավարել ՀՀ ԶՈՒ ռազմական ինստիտուտի ռեկտորի շատ կարևոր ու պատասխանատու պաշտոնը:

Հայոց պատմությունը անավարտ վեպ չէ, այլ չավարտված ճակատամարտ: Առանց հայրենիքի ազգ չկա, իսկ ազգի գոյատևման հիմնական պայմանը անկախ հայրենիքի առկայությունն է, նրա նկատմամբ անսահման սերը: Նրա հետ զրույցի ժամանակ ես մի քանի պատմական փաստեր բերեցի:

1053 թ. հայ ժողովուրդը հերոսական պայքար մղեց Հայաստան ներխուժած թուրք-սելջուկների հարյուր հազարանոց բանակի դեմ:

1236 թվականին Թաթար-մոնղոլական, տասնչորսերորդ դարավերջին Հայաստանը ենթարկվեց մոնղոլ առաջնորդ Լենկ Թեմուրի ավերիչ արշավանքներին:

1375 թ. Կիլիկյան Հայոց թագավորությունը ենթարկվեց Եգիպտոսի սուլթանական մամլուքների հզոր արշավանքին, տեղաբնիկներին բերեց մահ ու կոտորած՝ կործանելով Հայոց Կիլիկյան թագավորությունը:

Եվ այսպես, 1914թ. հոկտեմբեր-նոյեմբերին Թալեաթի և Էնվերի նախագահությամբ գումարվեց գաղտնի խորհրդակցություն, ստեղծվեց հատուկ կոմիտե՝ Արևմտյան Հայաստանը մաքրելու հայերից:

1915 թ. ապրիլի 24-ին կազմակերպվեց 800 հայ մտավորականների ձերբակալումը, մինչև 1921թ. իրականացվեց հայկական կոտորածի ամենադաժան ու վերջին փուլը:

16-50 տարեկան հայ տղամարդկանց զորակոչեցին թուրքական բանակ, առանձնացնելով, տեղափոխեցին Անկարայից ոչ հեռու գտնվող «Չանկր» քաղաքի մոտակայքը և բոլորին գազանաբար հոշոտեցին:

Գոյության պահպանության միջոցներից զուրկ հայ ազգաբնակչության քարավանները, հարյուրավոր կիլոմետրեր անցան Դեր-Զորի, Ռասուլ Այնի և Ռաքայի անապատներով, թուրք մարդակեր գազանները հայերի ոսկորներից գերեզմանոցներ ու բուրգեր կառուցեցին: Օսմանյան կայսրությունում ապրում էր երկու միլիոն հայ, հայերի կոտորածից փրկվեց 600 հազարը: Ըստ Կոստանդնուպոլսի եկեղեցու տվյալների՝ 300 հազարը բռնի ուժով մուսուլմանացան, կրոնափոխվեցին: Դա կատարվեց Եվրոպայի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի աչքերի առաջ:

Օսմանյան Թուրքիան հայերից խլեց ծովից ծով Հայաստանը: Իսկ Հայոց Մեծ Եղեռնը՝ ցեղասպանությունը, աշխարհի աչքի առաջ Թուրքիայի ծակատին դաջվեց որպես սև խարան: «Հայկական հարցը և Հայ դատը» 1965 թ. արթնացավ և 1988 թ. Ադրբեջան-թուրքերի կողմից հարկադրած պատերազմում հայերը հասցրին միջազգային կազմակերպություններին:

1941-1945 թթ. Հայրենական Մեծ պատերազմին մասնակցեց ին 500.000 հայեր՝ 63 գեներալ, 5 մարշալ, 115 հերոսներ, 200 հազար զոհեր, 80 հազար հոգի սփյուռքից:

1988-1994 թթ. Հայաստանի սահմանների պաշտպանության և Արցախի ազատագրման համար մղվող մարտերին Հայաստանից զոհվել են 3290 հոգի, ԼՂՀ-ից՝ 2719 հոգի, ընդամենը՝ 6009 հոգի, իսկ մինչև 2004թ.՝ Հայաստանից՝ 1479 հոգի, ԼՂՀ-ից՝ 292 հոգի, ընդամենը՝ 2771 մարդ: 1992-1994թթ զոհերի թիվը հասնում էր 5000-ի:

Ազատամարտիկների հիմնական զենքն էր՝ ձևափոխված ավտոմատ Կալաշնիկով ԿՁԱ, 7.62 մմ, Կալաշնիկով ավտոմատ ԿԱ-74՝ 5.45 մմ տրամաչափի:

Ավտոմատից հրաձգությունը կատարվում է տարբեր դիրքերից, հարկավոր է պահպանել անվտանգության կանոնները:

Բացի այս զենքերից, օգտագործվում էին թնդանոթներ, որոնք կազմված էր հրետանային դիվիզիոններից: Ինչպես նաև կառավարման հաղորդման կետերով, ռադիոխմբերով, ռադիոտեղորոշման կայաններով, վալտերով:

ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը որոշ հարցերում թվացյալ չոր կոպտություն ուներ, բայց դա բխում էր ազգի շահերից: Եթե նա կենդանի լիներ, Հայաստանը կշահեր:

16.09.2006 թ. Մոսկվայի հեռուստատեսությամբ հաղորդեցին, Գերմանիայում Հռոմի Պապ Բենեդիկտոս 16-րդը իր ելույթում կատարում է մեջբերում. «Ցույց տվեք. ի՞նչ լավ բան է արել Մուհամմեդը՝ բռնություններ, կոտորած, սպանություններ»:

Ամբողջ մուսուլմանական աշխարհը ոտքի ելավ, Պաղեստինում ի նշան բողոքի խրտվիլակով խաչը վառեցին:

Այս ամենի սկիզբը եղան 1988 թ. հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարը, Արցախի ազատագրման հարկադրված պատերազմը: Այն ռազմադաշտ ձգեց կամավորական ջոկատներ, ինքնապաշտպանական ուժերից, ձևավորվեց Հայոց բանակը, որն առաջնորդում էր հաղթանակի ուղիները: Յուրաքանչյուրս կրկնենք.

Եվ թույնն առավել ազնիվ հեղուկ է,
Քան խղճահարույց արցունք...
Որի ափի մեջ սրի տեղ խունկ է,
Իսկ կոկորդի մեջ տենչ է ոռնոցի:
Պատիժ է կորած երկիր ունենալ
Ոձիր է լինել լոկ հուղարկավոր
Եվ փառք է հողի վրեժով զինյալ
Հաղթել-հռչակվել Հայքի թագավոր:

1994 թ. փետրվարի 19-ին ՍՊԱՐԱՊԵՏ Վ. Սարգսյանը ուղղաթիռով իջավ Չապլի գյուղ: Դիմավորեցին Հենրիկ Մուրադյանը, գնդապետ Աղաջանյանը («Ծամխալիչը»), սակրավորները, հրետանավորների Հայրապետյանը, Ալբերտ Մկրտչյանը, Վագիֆ Նագյանը: Հենրիկ Մուրադյանին հարցրեց «Վարդենիկ» ջոկատի մասին:

1994թ. հունվարից մայիս չորս անգամ ուղղաթիռով ՍՊԱՐԱՊԵՏ Վ. Սարգսյանը իջել է Օմարի ռազմաճակատ:

ԱՊԱՐԱՆԻ ՎԱՐՈՐԴ – ԿԱՊԱՎՈՐ ԱՎԵՏԻՔԸ

Աղարեկ Հայրապետի Գալստյան, Ավետիքի հայրը, 1918թ.

Ավետիքն «Ուրալ» ավտոմեքենայով նամակներով, սնունդով, վիրավորներով, հետախուզական տվյալներով Հոչազից վերադառնում էր Քաշաթաղ: Ավետիքի փափագն էր, որ 1918թ. հայ-թուրքական պատերազմի ժամանակ գործող Ապարանի 70 ֆիդայիների մասին գրվի առանձին աշխատություն, որոնք մինչ այսօր մնացել են անհայտ:

Հովհաննես Գևորգի Թադևոսյանից երկտող ստացավ:

Ավետիքը շատ էր պատմել Թադևոսյանի մասին: Հավաքվել էինք նրա մոտ: Երևանի հեռուստաընկերության տնօրեն Թադևոսյանը ոգևորված էր և ուրախացած, որ հանդիպեց իր վաղեմի ընկերներ Ավետիք Հայրապետյանի, Արմեն Կարապետյանի, Խաչիկ Մարգարյանի, Մարտին Բաղդասարյանի հետ: Կանչեց փոխտնօրենին և հաղորդավարին՝ Դիաննա Գրիգորյանին: Ասաց, թե Վահան Զատիկյանի զայրույթը ինչու չի ձայնագրվել ու նկարահանվել, և նմանատիպ շատ բաներ, որոնց պատմական արժեքը մեծ է:

Վահան Զատիկյանը պարտադրեց Թադևոսյանին մարտադաշտից վերադառնալ դպրոց և զբաղվել շուրջ 1000-ից ավել աշակերտների կրթությամբ, կազմակերպել նրանց սնման ու պահպանման գործը: Արձակուրդներին դպրոցը կազմակերպում էր մրգահավաք, ծիրանը ուղարկում էին ռազմաճակատ: Ծանր տարիներին հացի կտրոնները առաջին հերթին բաժանում էին պատերազմի մասնակից ազատամարտիկների ընտանիքներին, որպեսզի նրանց երեխաները սոված չմնային, հաճախեին դպրոց:

Պատերազմից վերադարձած Ավետիքը օգնում էր Թադևոսյանին և կարևորում նրա թիկունքային աշխատանքների դերն ու նշանակությունը: Սնունդ, հագուստ էր հայթայթում և բոլորը ժամանակին հասցնում ռազմագիծ: Պատմում էր ռազմադաշտի պահանջների, նրա դաժան օրենքների մասին: Բոլոր դեպքում նրա համար առաջնային էր թիկունք, ճակատ, մա-

Աջից երկրորդը Ավետիք Հայրապետյան: Զինակից ընկերների հետ: Սարդարապատ, 1998 թ.

հապարտներ հասկացողությունը: Գլխավորը համարում էր ապագա սերնդի դաստիարակությունը:

Թադևոսյանը, վեր հանելով անցած օրերի պատմական հաճելի ու տհաճ հուշերը, շրջապատված ցանկալի մարդկանցով, զգում էր իր կատարած աշխատանքների կարևորությունը, ոգևորված պատմում էր այն դժվար, մութ ու սոված տարիների մասին, պատասխանում աշակերտների սրամիտ հարցադրումներին՝ հատկապես դասարանային պարապմունքների թեման յուրացնելու ժամանակ, որը վերաբերում էր մետաքսի արտադրությանը, հայրենիքին և Արցախին:

Թադևոսյանի հետ այս հարցադրումներին պատասխանում էինք սիրով:

Թթենու հայրենիքը, ինչպես հայտնի է, Չինաստանն է: Բնականաբար, առաջին անգամ մետաքս ստացել են հենց չինացիները: Ավանդության համաձայն՝ Չինաստանի թագուհի Սայ-Լանկ-Չին այն առաջին կինն է, որ հագել է մետաքսե հագուստ: Դա եղել է մեր թվարկությունից առաջ: Չինացիները մետաքսի ստացման գաղտնիքը, ինչպես ասում են, պահել են յոթ փակի տակ, գաղտնիքը չեն բացել:

Աջից երկրորդը Ավետիք Հայրապետյան: Ցրտադիմացկուն ապարանցիներ: Հոչազ, 1993թ.

Կենտրոնում՝ գեներալ Հայկազ Բաղմանյան

Պատմագիտության մեջ շրջանառվում է այսպիսի փաստ, եվրոպացիների համար մետաքսի ստացման գաղտնիքը բացել է Կիլիկիայի հայոց թագավոր Լևոն Ա-ն (13-րդ դար): Նա էր, որ Չինաստան է ուղարկել երկու քահանաների, որոնք ծպտյալ հետևել են մետաքսի ստացմանը, գաղտնիքը բացել են և Կիլիկիա վերադարձել՝ իրենց հետ բերելով թթենու սերմ և շերամի հունդ: Եվ մետաքսի արտադրությունը այդուհետ տարածվել է Եվրոպայում:

Իսկ հսկա արևելյան սոսին՝ տնջրին, գտնվում է ԼՂՀ Մարտունու շրջանի Սխտորաշեն գյուղում: Ավելի քան 2000 տարի բնության արհավիրքներին դեմ հանդիման հզորացել է ծառը: 30 մետր բարձրություն ունի, 5 մետր տրամագիծ:

Ըստ ավանդության՝ այս ծառի ստվերում նստել, հանգստացել են հայոց մեծերը՝ Մեսրոպ Մաշտոցը, Մովսես Խորենացին, Սայաթ-Նովան, Ռաֆֆին, որոնց մասին պատմաբանները գրի են առել. այն հասել է մեզ:

Մարտունու ազատագրումից հետո Մոնթեի կինը՝ Սեդան, պատմում էր, որ այդ ծառը չի տեսել, գալով Հայաստան՝ ապրել են ծանր օրեր, սակայն հայրենիքը քաղցր լինելով, չեն տրտնջացել: «Եղել են օրեր՝ գոյություններս պահպանելու հա-

մար փողոցներից դատարկ շշեր էինք հավաքում, վերադարձնում խանութ՝ օրվա հացի խնդիրը լուծում, որպեսզի քաղցից չմեռնեինք: ՀԱԲ-ի ազատամարտիկ Ավետիս Վիլենի Հակոբյանը պատմում է՝ Մարտունուց հետո հաղթական գրոհի թափով ազատագրեցինք Աղդամը: Կրակի շուրջը նստած՝ խոսում էինք մեր մեծերի, սոսի ծառի և այլ տիպի բաների մասին»:

ՍՊԱՐԱՊԵՏ Վ. Սարգսյանը «Վիլիսով» եկավ, միջից չէր իջնում: Ասացինք, թե Սպարապե՛տ, իջիր նժույգից, արի կարտոֆիլ կեր, հետո կխոսես, ինչ ասելու ես, կասես: Օշականցի Տիկոն ասաց. «ՍՊԱՐԱՊԵՏ մենք տրակտորին համոզում ենք աշխատում է, տանկի չափ գործ է անում, ինչ մնաց մի նախարարի չհամոզենք, որ նա գա ու կարտոֆիլ ուտի»: «Ուտելը կուտեմ, բայց... ուր լինում եմ, ինձանից ձեր կերած-խմածի պարտքերն են պահանջում»:

Գառնիի ճաշարանում հաց էին կերել: Մատյանի մեջ պարտքերի ցուցակում գրված էր ՍՊԱՐԱՊԵՏԻ անունը: Ճաշարանի կողքով անցնելիս ՍՊԱՐԱՊԵՏԸ առաջարկեց մտնել գարեջուր խմելու: Բուֆետապանը դրան էր սպասում. «Ա՛յ դու բարով ես եկել, քեզ էինք սպասում, պարտքերը վճարիր»: Վճարում է, մնացորդը չի պահանջում: «Ես գիտեմ՝ այս խեղթերը վաղը էլի կգան գարեջուր խմելու»:

ՍՊԱՐԱՊԵՏԸ կարող էր կռվել, առանձնանալ, մենակ նստել ու լացել: «Էրեբունի» օդանավակայանում ապտակեց ռուսական գեներալին, ապա առանձնացավ, լացեց:

1992 թ. հունիսին Քաշաթաղի «Լաչին» Ամիավան գյուղում իրարանցում էր, ազատագրված էր Շուշին: Լիսագորից, Քաշաթաղից, Հոչազից թուրքերը նահանջելով ամրանում էին Քարվաճառում:

Ապարանցի Ավետիք Հայրապետյանը «Ուրալ» ավտոմեքենայով սնունդ էր բաժանում խրամատում մարտնչող ազատամարտիկներին: Որդին՝ Պարույր Հայրապետյանը, թշնամու գնդակից վիրավորվել էր, վիճակը ծանր էր, ապաքինվում էր: Մտատանջությունների մեջ խեղդված՝ ավտոմեքենայով սլանում էր առաջ:

Անբարենպաստ եղանակ էր, երկնքից անձրև էր մաղում: Գյուղատնտեսության ինստիտուտն ավարտած Ավետիքը անձրևի կաթիլների հետ սուզվեց հողի մեջ՝ ներծծվելով նրա կենսահյութի խառնարանում, շունչ տվեց իր երակներին: Մտքով թռավ Կարս, Մուշ, Սարիղամիշ, Էրզրում, Ալաշկերտ, Արևմտյան Հայաստանի զավթած անմշակ հողերը կենդանացնելու, մշակելու ցանկություն եռաց մեջը:

Մտքում կազմավորեց իր մարտական ընկերներից մի գունդ, ընտրեց Հուսիկ Բագրատի Սարգսյանին, Վաչագան Բենիկի Խաչատրյանին, Զարզանդ Հրանտի Հարությունյանին, Սամվել Վաչագանի Սարգսյանին, Սմբատ Սուրենի Հակոբյանին, Ապարանի ջոկատի հրամանատարներ Ռազմիկ Պետրոսյանին, Մարտին Ղազարյանին, Մյասնիկ Մալխասյանին և այլ ընկերների, որ մարտնչեն, զավթած հողերը ազատագրեն, հայրենանվեր աշխատանքով շունչ տան հողին ու ջրին, իրենց պապերի գերեզմաններին:

Քաշաթաղի ռազմական շտաբից ստացած սննդամթերքը հասցրեց ռազմաճակատ, բաժանեց ազատամարտիկներին: Անձրևը կտրվել էր, ցեխաճանապարհով դժվարությամբ վերադարձավ:

Օշականցի քեռի Արարատ Հակոբյանն ու Ավետիքը 60-անց էին: Երբ հանդիպեցինք Ավետիքին, նա պատմում էր. «ՍՊԱ-

ՀՀՊՆ հետախուզության վարչության պետ Բ.Ազոյանը Ջոն Նիկողոսյանի, Հրաչ Աճեմյանի, Արմեն Ղևոնդյանի և այլ մարտական ընկերների հետ:

ՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը, երբ մեզ տեսավ, բարձրաձայն ասաց՝ ջահել հոպարները եկան, ի՞նչ կա-չկա,- դիմեց զորավարը Ավետին»:

Մինչև 500 մահապարտների կոչի օրը զորավար էին ասում, հետո աստիճանաբար ձևավորվում էր ՍՊԱՐԱՊԵՏ անունը:

Ես շփոթվեցի զորավարի այդ անմիջականությունից, երբ տվեց երկրորդ հարցը. «Ձեր ձեռքի «Ծիլկան» (զենիթային ինքնագնաց կայան ՋՍՈՒ-23) երկու փողանի զենիթահրթիռային զենք է. աշխատու՞մ է, թե՝ ոչ»: Ես ակամայից խառնվեցի իրար, հավաքելով ինձ՝ պատասխանեցի՝ աշխատում է, զորավար: «Քանի՞ գյուղ եք գնացել, սնունդ բաժանել: Սոված ենք, մի բան չեք տա ուտենք»: Կռացավ, խոտերի միջից սինձ պոկեց, աղ պահանջեց, անուշ արեց: Ես թռա աղ, հաց, պանիր, լավաշ բերեցի, խտացրած կաթն էլ քեռի Արթուրը ուսապարկից հանեց: «Անուշ արա, Զորավա՛ր: Թուրքերը նահանջելու ժամանակ կամուրջները պայթեցրել էին: Մահը աչքներիս առաջ Հոչազի ճանապարհով հասնում ենք Գյուսուլա և Լենքիանդ, գյուղերը սնունդ բաժանում»:

Հրաչ Աճեմյանը (կենտրոնում) մարտական ընկերների հետ Հատուկ գործողություններից առաջ

Իսկ ՀՀ ներքին զորքերի տղաները Հոչազի՝ Սուսումի առաջին գծում Հովիկը, Անաստասը, Վահանը, Ժարիտ Գրիշը, Կրակեմ Սամվելը և այլոք պահպանում էին ռազմագիծը:

Միշնին Փիջիխանին կապող ճանապարհը մոտ 50 կմ է, անանցանելի, խորդուբորդ, քարքարոտ, անցումներին ավտոմեքենան վառելիք շատ է օգտագործում, չի բավականացնում: Այդ բառիս վրա զարմացավ, անմիջապես կարգադրեց 160 լիտր դիզվառելիք հատկացնել: Ուրախությունից լեզուս կապ ընկավ: Ուզեցի խոսել, չկարողացա, հենց այդ պահին ծիծաղեց: Մեզ շրջապատող սարերը կարծես ծափ տվեցին, ծիծաղի ձայնին համահունչ այնպես արձագանքեցին, թվաց, թե ծափ ու ծիծաղ խառնվեցին իրար: Բոլորիս թվաց, թե հայկական զուռնադոլի հաղթական մեղեդին անտառների ծառերի հետ պար բռնեց:

Հաջորդ օրը ՍՍ-25 կործանիչ ինքնաթիռը խոյացավ օդ, մեր գլխավերևում պտույտ գործեց: Մի քանի վայրկյան հետո նետելու էր մահաբեր ռումբը: Այդ ակնթարթին մենք հասցրեցինք թռչել մեքենայից, թաքնվել հանպատրաստից թաքս-

Լեռնիկ, Հրաչ Աճեմյանը և Ջոն Նիկողոսյանը (ձախից երրորդը) մարտական ընկերներով, 1995թ հատուկ հետախուզություն թշնամու թիկունքում

տոցում: Ռումբը նետեց, պայթունից երկիրը դղրդաց, երկրաշարժի ուժգնությամբ ցնցեց սար ու ձոր, շուրջը ավերելով՝ մոխրի վերածեց: Այդպես, մահը մեջներս՝ ահ ու դողով հասնում էինք դիրքեր ու վերադառնում:

Ցերեկը լավ էր, գիշերը՝ վատ: Երբ վառվում էին ավտոմեքենայի լույսերը, թշնամու համար լինում էր տեսանելի, դառնում էինք թիրախ, հեշտ խոցելի:

Երբ ընդգրկվեցի 5-րդ զորամասի «Բրիգադի» կազմում, գումարտակի հրամանատարն էր Ջերմուկի Համոն: Ինձ ճանաչում էր և շատ հարգում: Վստահելով՝ դժվար առաջադրանքներն ինձ էր հանձնարարում: Կատարում էի անթերի, առանց տրտնջալու:

1993թ. դեկտեմբերին Ստեփանակերտում զորքը շարված պատրաստվում էր մեկնել Մարտակերտ: Եկավ ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը: Նրան տեսնում էի երրորդ անգամ: Զորքին բացատրեց Մարտակերտի ազատագրման ծրագիրը: Ծիծաղը շուրթերին՝ ասաց. «Լավ է լինելու, հաղթանակը մերն է լինելու»: Զորքը միաձայն գոչեց. «ՍՊԱՐԱՊԵՏԸ ողջ լինի»:

Երեկոյան մի կին եկավ (Խանումը), առանձնացված մեր խմբին ասաց. «Պատրաստվե՛ք, մեկնելու ենք Սարսանգի ջրամբար, այնտեղ ընթացող մարտերին մասնակցելու»:

Սարուխանյան Աշոտը՝ Քեռին, մեզ հետ էր: Տեղ հասանք: Այնտեղ էր ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը: Նրա անհանգիստ տեղաշարժը ռազմաճակատից ռազմագիծ, դիրքերում, խրամատներում զարմացնում էր:

Խճճված՝ բարդ ու խրթին հարցերը լուծում էր ուրախ ու կայտառ, շատ անգամ՝ հումորով:

Անդրանիկ Օգանյանի ոսկորներն ու հագուստը, սապոգները թարմ էին, չէին փտել: Եռաբլուրում վերահուղարկավորման ժամանակ ասաց. «Մենք շատ քաջեր և հրամանատարներ ենք ունեցել: Այսօրվա ազատամարտիկներն իրենց մարտերով, իրենց կրթությամբ, գրագիտությամբ ցույց տվեցին, որ արժանի զավակներ են՝ կատարելու Անդրանիկի կիսատ թողած պատգամները:

Պապս՝ Գալստյան Հայրոն, ունեցավ 120 որդի, թոռ ու ծոռ: Նրա Աղաբեկ որդին՝ Ավետիքի հայրը, եղել է Անդրանիկի զինվորը: 1918 թ. մասնակցել է Ապարանի, Սարդարապատի ճակատամարտերին:

Հայրս՝ Աղաբեկ Հայրապետի Գալստյանը, ունեցել է 9 երեխա, արժանացել Անդրանիկի խրախուսանքին ու գովեստին:

Որդիներս ու թոռներս ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանի զինվորներն էին: Թոռս՝ Մանվելը, ծառայում էր զինված ուժերում: Մի անգամ, երբ գիշերը Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԸ մաս էր գալիս և ստուգում հենակետերը, նրա ծառայողական մեքենայի անվադողը գողացան: Նա պատժեց պահակապետին: Երբ Օմարի գագաթին որդուս՝ Պարույրի հետ մարտերի մեջ էինք, նա արժանացավ ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանի խրախուսանքին:

Թոռս՝ Վռամ Խաչատրյանը, զորակոչվեց ԼՂՀ-ի պաշտպանական բանակ՝ մեր ազատագրած հողերը պաշտպանելու:

Թշնամու արկի բեկորից վիրավորված՝ հոսպիտալում բուժվում էի, լսեցի ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանի մահվան չար լուրը, որ ընկավ հայի դավադիր գնդակից: Զգացի, որ հայ ազգը գլխատվեց, հիվանդանոցից փախա: Չէի ուզում ապրել, համարում էի անիմաստ: 80 տարեկան եմ հիմա: Արծաթասիրությունը ավելի հարգալից է, քան Աստվածասիրությունը»:

Ավետիքը հարգանքով խոսեց զորավար Անդրանիկի զինակից Ալեքսան Գասպարի Զաքոյանի մասին, որ Խոյ գավառից, հայկական ցեղասպանությունից մի կերպ փրկված՝ բնակություն է հաստատել Կամո քաղաքում: Սակայն խորհրդային չեկիստների կողմից 1937թ. բռնադատվում է և աքսորվում Սիբիրի խորքերը՝ Գուլակ կալանավայրը, մինչև 1954թ.: Որպես ժողովրդի թշնամի՝ նրա 8 երեխաներից երեք արու զավակներին արգելում են ծառայել խորհրդային բանակում:

Խորհրդային պետության փլուզումից հետո հետմահու Ալեքսանյանը արդարացվում է: Նրա թոռ Կարապետին հաջողվում է զորակոչվել խորհրդային բանակ: Իր բնածին խելքի ու շնորհքի պատճառով նրան վստահում են ծառայել հատուկ ստորաբաժանումներում: Երեք բարձրագույն ուսումնական հաստատություն ավարտելուց հետո 23 տարեկան երիտասարդը հասցնում է ստանձնել կարևոր պատասխանատու պաշտոններ, օգտակար լինել Ղարաբաղյան շարժմանը:

Կինը՝ Իդան, 450 զույգ բրդյա գուլպաներ, շուրջ 500 զույգ ձեռնոցներ է ուղարկել ռազմաճակատ՝ չարժանանալով Կո-

Ազատամարտիկ
Ավետիք Աղաբեկի Հայրապետյան
և ամուսիներ
Կարապետ Ռաֆիկի Զաքոյան
Իրա Մերուժանի Հակոբյան

մանդոսի ուշադրությանը: Կոմանդոսը պահանջում է այդ բոլորի փոխարեն մարտադաշտ ուղարկել զինամթերք: Երբ ձյունը փռում էր իր սառը թևերը, ծմռան ծքծքան բուք ու սառնամանիքին հագնում էին այդ բրդյա գուլպաները, խնդրանքով դիմում, կոչ անում հայ կանանց՝ ազատամարտիկներին ուղարկել տաք հագուստ, նրանց փրկել ցրտահարությունից:

1990թ. ծնվեց նրա արու զավակ Հայկը: Կարապետը հատուկ հանձնարարությամբ գտնվում էր Վայքի սահմանամերձ գոտում՝ պահպանելով նրա անվտանգությունը: Գործի բերումով նա չկարողացավ ներկա լինել որդու ծննդին:

1993թ. Սանկտ-Պետերբուրգից Կարապետը հաղթահարում է դժվարությունները, Հայաստան է ուղարկում սննդամթերք և այլ ապրանքներ: Վահան Զատիկյանի և Աղվան Գրիգորյանի օգնությամբ տեղափոխվում է Շահումյան, արժանանում գովեստի ու շնորհակալության: Գնահատվում է ազատամարտիկների կողմից: Նման հայրենասեր մարդիկ օդ ու ջրի պես անհրաժեշտ են հայրենիքին:

Կարապետ Ռաֆիկի Զաքոյանը պրոֆեսոր է, Մ.Լոմոնոսովի անվան դափնեկիր, պարգևատրվել է ՄԱԿ-ի պատվոգրով ռուսաստանյան տարածաշրջաններում էկոլոգիական անվտանգության ամրապնդման համար: Շարունակում է կապը և նույն ոճով օգնում Հայաստանին, պահպանելով նրա անվտանգությունը:

Ավետի ընկերուհի ուսուցչուհին ականատեսի աչքերով պատմում է. «Մարտակերտի Չայլու գյուղի մոտ 70 հայերի խաբում բերում են Հոչազի Միշնի գյուղ: Ծերերին և երեխաներին լցնում են քարանձավ, մուտքը քարերով փակում են և գազով խեղդում: Կանանց բաժանում են գյուղի բնակիչներին, որոնց բռնաբարելուց հետո գլուխները հողից դուրս կենդանի թաղում: Երբ հայերն ազատագրում են այդ գյուղը, տեսնում են այդ սոսկալին: Գյուղի փողոցներից խնամքով հավաքում են մարդկանց ոսկորները, փոքրիկ երեխաների գանգերը, լցնում են արկղերի մեջ, հանձնում հողին»: Խոսքի մեջ մտավ «Սև Հովազ» ջոկատի մարտական գծով փոխհրամանատար Արամ Գրիգորյանը. «1992 թ Հադրութում Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԸ ձիուց իջավ, իմ ուսապարկը շալակեց, ոտքով քայլեցինք, մոմի լույսով դուրս եկանք անտառից,

Արամ Գրիգորյան, «Սև Հովազ» գումարտակի փոխհրամանատար

ինձ տվեց մի զույգ բոթաս, որը եղավ իմ կյանքի ամենաթանկ նվերը: 1993թ Ղուբաթլուի մարտերի ժամանակ հակատանկային ականի պայթյունից աջ ոտքիս կեսը կտրվեց, բոթասի հետ մնաց դաշտում, հետո կորավ:

Կոմանդոսը անտառի միջով մտատանջ քայլում էր, գլուխը երկու անգամ կպավ ծառի ճյուղին, մաշկը քերծեց, ես ծիծաղեցի, ասաց. «Այ բիձա, ինչի՞ ես վրաս ծիծաղում». ասացի Վանո Սիրադեղյանը տխուր էր, գնաց Բագարան, Արաքս և Ախուրյան գետերի խառնարանի մոտ մտավ ջուրը, նստեց քարին, ասաց. «Անցնեմ հայկական պատմական հողերը, որտեղ թուրքեր են, թե՞ մնամ այստեղ, թուրքական գործակալները հալածում են, ի՞նչ անեմ»:

Վ. ՍՊԱՐԱՊԵՏԻ հրամանով 52-հոգով՝ Ծաղափ գյուղի Արթուր Նիկողոսյանը, Էդիկ Միրզոյանը» Նարիկ Կարապետյանը, Գագիկ Սեդրակյանը, Ատոմ «Ասկյար» Արարատի վաշտի կազմում ընգրկվեցին Հատուկ գնդի մեջ:



Հատուկ գնդի ազատամարտիկ Արթուր Վոլոդյայի Նիկողոսյան, 1992 թ.

ԱՆՆԱՀԱՆՋ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետախույզ Արմեն Ղևոնդյան, Ֆիզուլի 1993 թ.

1993թ. դեկտեմբերի 18-ին ադրբեջանական 6000-անոց բանակն աֆղան մոջահիդների (1500) և այլ վարձկանների օգնությամբ լայնածավալ հարձակման անցավ Արցախի և Հայաստանի 1200 կմ ռազմաճակատի ողջ երկայնքով: Երկուսուկեսամյա դաժան մարտերում (մինչև 1994թ. մարտի վերջը)

Ձախից երկրորդը՝ Արմեն Ղանդյանը, զինակիցների հետ խրամատում, 1993թ. Ֆիզուլի:

հայկական կողմը ջախջախիչ հակահարվածով թշնամուն հետ շպրտեց ելման կետից:

Պատերազմի հաղթանակը ապահովում են հետախուզությունը, հրամանատարի իմացությունը, կապի անխափանելիությունը: Այս երեք կարևոր պայմանները նպաստում են հաջողության հասնելուն:

1991թ. Թուրքիայից ադրբեջանցիներին օգնության եկած «Գորշ գայլեր» խմբավորման մարդակեր ահաբեկիչները նույնպես խոշոր պարտություն կրեցին: Հատկապես առաջին անգամ հանդիպելով Տիգրան Մեծ, Սասուն, ԼՂՀ-ի, Արաբո ջոկատների տղաներին՝ ճաշակեցին պարտության դառնությունը: Զոհեր տալով՝ ետ նահանջեցին: Մեր հետախուզությունը բացահայտեց նրանց մարտավարությունը: Հետագայում ուսումնասիրելով մարտավարությունը՝ կարողացան պայքարի միջոցներ մշակել:

Թուրքերի հետախուզությունը հայկական հետախուզության

Ձախից՝ Արմեն Ղանդյան, Գեղամ, Կարինե, Բագրատ. Ֆիզուլի՝ 1994թ.:

համեմատ թույլ էր: Մարտական պրակտիկան ցույց տվեց, որ ռազմական գործողությունների ժամանակահատվածում հայկական ուժերը ավելի արդյունավետ էին գործում: Երևի ազգային որակն է խոսում կամ անհատի գրագիտությունն ու ընդունակությունները, նաև դրական հատկությունները:

Հայերի դժվարությունը եղել է այն, որ մարդկային թվաքանակով զիջել (հայերը՝ 3 միլիոն, թուրքերը՝ 7 միլիոն) են թուրքերին: Եվ այս հանգամանքը ստիպել է հայ հրամանատարներին՝ վարել ճկուն մարտավարություն:

Հայ մարդուն մարտի մեջ ներքաշելը շատ դժվար է, իսկ եթե նա մտնում է մարտի մեջ, ետ քաշելն ավելի դժվար է:

Արմեն Ղևոնդյանը ՄՕՀՋ-ի (Միլիցիայի օպերատիվ հակազդման ջոկատ) կազմում հիշում է մի դրվագ, որը թրի պես կտրող, բայց քաղցր էր ու բուժիչ. գնում էին մարտի՝ չմտածելով՝ մահը ինչ է:

1992թ. ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԸ հերթական դժվար առաջադրանքն էր թելադրում: Վերլուծությունից բացա-

Հետախուզական վաշտ: Կենտրոնում՝ Լևոն Գևորգյան:

հայտ երևում էր, որ ամբողջ գիշերվա ընթացքում աչք չէր կպցրել, գերհոգնած էր: Ծանրացած կոպերի միջից նայեց իրեն շրջապատած անհամբեր սպասող տղաներին, ոգեկոչող հուսադրող խոսքեր չասաց, փոխարենը արտասանեց երկու հասարակ բառ. «Տղանե՛ր, պետք է, ու վերջ»: Եվ այս երեքու բառով ասաց ավելին, քան կասեր մի ամբողջ ճառ ասող հռետոր:

«Մենք կռվելու ենք ոչ թե մեռնելու համար, այլ՝ ապրելու ու հաղթելու»:

Հոգնած ու տանջված՝ ուժասպառ ես լինում, բայց երբ խոսքը գնում էր մեր նախնիների մասին, նրանց հերոսական գործերի մասին, վայրկենապես մոռանում էինք հոգնածությունն ու դժվարությունները: Հետախույզ ես, քայլում ես ականների վրայով:

Առաջին զոհերի ժամանակ բավականին դժվար էր: Հաղթահարելով առաջ պիտի գնաս, առաջադրանքը կատարես, որին սպասում է մի ողջ զորամաս, թե՞ դիակդ շալակած վերադառնաս, կյանքդ փրկես:

Հանդիպում ես հոգեբանական արգելքների. ինչպե՞ս շրջանցես, հաղթահարես: Մեկս մյուսին գոտեպնդում էինք՝ թույլ չտալով՝ որևէ մեկը թուլանա: Առաջին պայմանը՝ սառնասիրտ լինել, թիկունքում մի ողջ ժողովուրդ է սպասում: ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը պահանջում էր ստույգ զեկուցել փաստերով, կարճ ու կոնկրետ տեղագրական քարտեզ, պայմանական նշաններ՝ իրենց բովանդակությամբ:

Սամվել Մուրենի Հակոբյան՝ Աֆղանցի Սամվել, 1992թ:

Ռազմական տեղագրությամբ ձեռք բերված գիտելիքները և ունակությունները հնարավորություն էին տալիս մարտը հաջողությամբ վարել, ճիշտ գնահատել իրադրությու-

Արմեն Ամասիկի Հակոբյան

ը, ընդունել առավել նպատակահարմար որոշում, լավ կազմակերպել դիտարկումը, կրակի համակարգի և ստորաբաժանումների կառավարումը մարտում, լիարժեք օգտագործել տեղանքի մարտավարական և պաշտպանական առանձնահատկությունները:

Ռազմական տեղագրության ուսուցումը նպաստում է անձնակազմի մեջ այնպիսի կարևոր հատկությունների զարգացմանը, ինչպիսիք են դիտողականությունը, ճշգրտությունը, դիտարկումների արդյունքները վերծանելու ունակությունը և մարտական խնդիրների լուծման վրա տեղանքի ազդեցության գնահատումը, ռելիեֆի բնույթը՝ հարթավայրային, բլրային և լեռնային, իսկ բուսածածկույթը՝ անտառ, ճահիճ, անապատային տարածք, ելնելով նրա չափերից, ծառերի խըտությունից, հաստությունից, բարձրությունից և նույնիսկ ծառատեսակներից, հեշտացնում է պաշտպանությունը և խիստ դժվարացնում թշնամու հարձակման գործողությունները:

Լեռնային տեղանքը համարվում է փակ և մասնատված: Սա անչափ դժվարացնում էր միասնական ճակատի ստեղծումը, մարտի ժամանակ տեխնիկայի խուսանավումը:

Լինում են մարդիկ, որ հարց են տալիս և զարմանում, ինչպես է, որ թշնամուց թվաքանակով քիչ, անբավարար զինված՝ կարողանում ենք հասնել հաջողության և դիմակայել թշնամուն:

Զարմանալի ոչինչ չկա. հայերը արիական ցեղ են, հոգով ուժեղ են, դաստիարակված, համամարդկային արժեքները հարգող և ընդունող: Քարից, հողից հաց քամող, մշակույթ կերտող ժողովուրդ, անշահախնդիր հայոց հողի անվտանգության համար: Առանց ուրիշինը զավթելու, հնամենի ազգ լինելով՝ զբաղվել է իր ցավերը հոգալով: Մենք մեզ հարց ենք տալիս, մի՞թե կարելի է պարտվել, երբ հոգով ես մարտնչում:

Սամվել Հակոբյան՝ Աֆղանցի Սամվել, հետախույզ, ծնվել է Երևանում 1967թ.: Նախնիները Երևան են տեղափոխվել Մեծ Եղեռնի տարիներին Սուրմալուից:

Ծառայել է Խորհրդային բանակում, մասնակցել Աֆղանստանի պատերազմին՝ որպես հետևակային մարտական մեքենայի (ՀՄՄ)-ի և զրահապատ մեքենայի (ԶՓ)-ի մեխանիկ-հրամանատար:

«Զինկոմիսարիատում ծառայողական անձնական գործերիս մեջ այս բոլորը գրանցված են,- պատմում է Սամվելը,- գիշերով եկան տուն, ասացին՝ Սամվե՛լ, Նորագավիթում ավտոտեսչության պահակային ծառայության հսկման պահակակետում կանգնած են երկու նմանատիպ մեքենաներ, բանալի չկա՝ շարժիչները աշխատեցնենք: Երկու կոճակներ են և երկու վարդակ. միացնում ենք իրար, շարժիչը աշխատում է:

Աֆղանցի Սամվելն իր որդիների հետ

Այստեղ դժվար խնդիր չկա, բացատրեցի, մեքենան աշխատեցրի: Բոլորը ուրախությունից գլխարկները երկինք նետեցին: Չիմացողների համար դա մեծ գաղտնիք էր: Նշված ռազմական տեխնիկան շատ բենզին էր ծախսում: Հայաստանը չուներ, խեղճանում էր, թուրքերը, շռայլորեն օգտագործում էին նավթը, նրանց համար դժվարություն չկար:

Իմ հրամանատար Կլուբ Բրյանցովը Աֆղանստանում ծառայելու ժամանակ զգուշացրեց, որ հայերը թուրքերի հետ բախվելուց խուսափեն:

Թիֆլիսից, Երևանից նամակներ էինք ստանում, զգուշացնում էին, որ Բաքվում, Սումգայիթում, Կիրովաբադում հայերին կոտորում են, հատկապես երեխաներին, կանանց չեն խնայում՝ մորթում են: Մենք մարտի մեջ էինք, պատկերացում չունեինք, որ կռված տղան երեխայի ու կանանց վրա ձեռք բարձրացնի: Այդ էր պատճառը, որ Բրյանցովը զգուշանում էր պահպանել զինվորական կանոնադրությունը:

Եվ այսպես թույլ, տգետ, անպաշտպան մահկանացուն ցանկանում է ամենաուժեղը, ամեն ինչին իշխողը, ամենակարողը դառնալ: Թուրքերը եկան և ինձանից ներողություն խնդրեցին, իսկ այստեղ ինչպե՞ս են ակտիվացել, խաղաղ բնակիչներին կոտորում են: Թուրքը մնում է թուրք:

Վեց տարեկան էի, ընկած պապիս գերեզմանի վրա, չհասկանալով ինչի համար, ես զգացի նրա հոգու խորքում լացող ձայնը:

Մի անգամ հարբած մտել եմ եկեղեցի, հետո ուշքի գալով՝ չներեցի ինձ: Վատ էի զգում: Խաչը բռնեցի, ձեռքիս մեջ ամուր սեղմած, Աստծուն խնդրեցի՝ մեղքերիս թողություն տա: Դրանից հետո վիճակս լավացավ: Հավատացի Աստծու գոյությանը: Ամեն օր ծնկաչոք աղոթում եմ:

Սամվել Հակոբյանի մարտական անունը «Աֆղանցի Սամվել» էր, կարողանում էր արագ կողմնորոշվել, տիրապետել իրավիճակին, տեղանքը մանրակրկիտ զննել, կատարել անհրաժեշտ ճշգրիտ տեղագրություն, քարտեզագրում:

Ինստիտուտը ավարտելուց հետո շատ բան սովորեցի կյանքում ծնողներից, մեծերից: Աֆղանստանի 9-րդ գումարտակի մարտական գործողությունները ճիշտ է նկարահանված: Սամվելը բռնցքամարտիկ էր, ուներ 2 մ հասակ: Հաղթանդամ էր, թիկնեղ, գեղեցիկ արտաքինով: Միշտ կրկնում էր՝ բոլորը պետք է զգան կրթված հայի շունչը:

Ստեփանակերտ մեկնելու համար Վազգեն Սարգսյանի հրամանով շարվեցինք: Բացատրեց զինվոր-ազատամարտիկների անելիքները ռազմաճակատում: Վերջում ավելացրեց. «հարցեր ունե՞ք», տղաները ինձ նայեցին, ասացի՝ այո՛, պարոն նախարար, Աֆղանստանում կռված տղա եմ, արագ, թեթև շարժվելու համար մեզ՝ բացի սապոգներից տալիս էին նաև բոթասներ: Կարգադրեց, արագ կատարեցին մեր բոլոր պահանջները:

Մեկնեցինք Ստեփանակերտ, տեղավորվեցինք 2-րդ դպրոցում: Ընդգրկվեցինք Տիկոյի վաշտի կազմի մեջ՝ պաշտպանելու 5-րդ պաշտպանական դիրքերը:

Զորանոցում ավտոմատները դրեցինք սեղանին ու երդվեցինք. մեր տեղը մարտադաշտն է, ոչ թե զորանոցի փափուկ անկողինը:

Իրավիճակը ծգնաժամային էր, Մարտակերտը նահանջում էր, Ասկերանի պաշտպանությունն անմխիթար էր: Ստեփանակերտի վիճակը դառնում էր հարցական:

Աղդամից թուրքերը գրադ կայանքից, հեռահար հրանոթներից ռմբակոծում էին Ստեփանակերտը, նկուղներից դուրս գալը վտանգավոր էր: Կային զոհեր, ավերածություններ: Արկը հարվածեց դպրոցի շենքին, տրվեց տագնապի ազդանշան, քնածները վեր թռան: Մեծ արագությամբ հասան պաշտպանական դիրքերը:

Նոր նորքեցի, ազգի նվիրյալ, ազդեցիկ ու սիրելի պստիկ Գագոն թուրքի նշանառուի գնդակից զոհվեց, նրա շուրթերին դրոշմված գրված էր՝ 10 թուրք ոչնչացնեմ, հետո:

Չլդրանում անցանք թշնամու թիկունքը, կատարում էինք հետախուզական աշխատանքներ: Խնդիրը հետևյալն էր՝ ապահովել երեխաների և ծերերի անվտանգությունը: Ստյոպան ջոկատի ամենատարիքավորն էր, խնայելով երիտասարդների կյանքը՝ քայլում էր շարքի առջևից: Հակատանկային ականի պայթունից մարմինը կտոր-կտոր եղավ:

Ներքին Հոռաթաղից վերադառնում էինք Ստեփանակերտ: Ազգաբնակչության մեջ սննդի պակաս էր զգացվում: Սովը աստիճանաբար նեղում էր մարդկանց:

Ջոկատի երկու կանայք ծանապարհին հաղորդեցին, որ կերակրայուղով տակառը մոռացել են զորանոցում:

Սամվելը վերադարձավ՝ յուղը բերելու: Տղաները ստիպված, Սամվելի անվտանգությունը ապահովելու համար, հետևեցին նրան:

Հոռաթաղից Դրմբոյի ծանապարհին 85 տարեկան ծեր կի-

ՆԸ ԾՆԿԱՉՈՔ փակեց Վիլիս ավտոմեքենայի առաջընթացը: Նա փայտացած, նիհար մատները երկինք պարզած՝ Աստծուց փրկություն էր աղերսում: Դիմելով մեզ՝ խնդրեց իրեն մեզ հետ վերցնել:

Սամվելի սիրտը ցավից ճմլվեց, իջավ մեքենայից, գրկեց կնոջը և ոտքի կանգնեցրեց: Պարզվեց, որ թաքստոցում թաքնված էր նրա 105 տարեկան ամուսինը: Սամվելը հիշեց իր պապին՝ Նշան Դարբինյանին: Հայրենական պատերազմի ժամանակ տանկով հաղթական մտել էր Բեռլին՝ արժանանալով Խորհրդային Միության հերոսի կոչման: Իսկ Արտուշ պապը, որը ապրեց 92 տարի, ինձ ասում էր՝ Ադա ծառը ունի չորս տուն ու բացատրեց, երբ 1915թ. գաղթեցինք Սուրմալուից, եկանք Էջմիածին: Մինչև մեզ օթևան տան, չորս ընտանիքներով պատսպարվեցինք ծառի ստվերում: Նա նստում էր սեղանի գլխին, երեսը խաչակնքում, մենք հավաքվում էինք սեղանի շուրջը ճաշելու:

Երբ Սամվելը պատմում էր պապերի քաջագործության մասին, մեջ ընկավ 105 տարեկան պապիկը. «Ամբողջ կյանքում պայքարել եմ բարբարոս թուրքերի դեմ, ծերացել եմ, ուժս էլ

ՀՀ Ներքին զորքերի ազատամարտիկները ճաշելիս, Ֆիզուլի, 1993 թ.

չի պատում, ոսկորներիս հանգստություն եմ խնդրում ձեզանից: Օգնեք վերջին խնդրանքս մահից առաջ կատարվի»:

Ծերունիներին հասցրին Ստեփանակերտ, տեղավորեցին փախստականների մոտ, որոնք ապրում էին 8-րդ դպրոցում: Մի պարկ ալյուր ունեինք, տարանք հացի փուռ, հացի հետ փոխանակեցին և բաժանեցին փախստականներին:

Հաջորդ օրը Սամվելը գնաց իմանալու նրանց վիճակի մասին: Նրանց դեմքին ժպիտ կար:

Կարծատև հրադադար էր. թշնամին՝ կատաղած, ուժերը սեղմած, կուտակվում էր, պատրաստվելով հաղթական թռիչքի:

Սամվելը բոլորում էր 26 տարին, որից 8 տարին ծառայել էր Աֆղանստանում, որի պատերազմը չէր տարբերվում Արցախյան ժողովրդի ինքնորոշման պատերազմից, որտեղ Սամվելը իր մարտական ընկերներով անցավ մութ ու խոնավ, ցուրտ ու սառը բնակարաններում: Ցեխ ու անձրև, սով ու ծարավ, անհույս, անտես, լույս ու հավատի ներշնչանքով, գոյելու համար մագլցում էին ճանապարհով:

Երեխաների լաց ու կոծը, կանանց հուսահատ ծղրտոցն ու կանչը, ծերերի անխնամ հառաչանքն ու ներշնչանքը, այս բոլորը տեսան ու անցան մոր ու մանկան լաց ու ողբի, վիրավոր թե զոհվածի հարազատների տառապանքի, կրակի ու բոցի, մոխրացող դիակների ռումբերի ու արկերի հարվածներից փոշիացող փլատակների միջով, ուր այրվում էին օրորոցներ ու տներ:

Գերեզմանների խուլ խորշերից, լուռ ու անտես թվացող պատկերավոր ուրվականներ, ահուսարսափ, մահ, սարսուռ տարածող սև և փակ դագաղներ, հորից ու ձորերից, անտառների ու լեռների մազապուրծ անցումների ելևէջներով մահ մահի դեմ պայքարող ազատամարտիկները ազատագրեցին հողերը պապական:

Մարդը ոչ հրեշտակ է, ոչ գազան, բայց դժբախտությունն այն է, շատ կամենալով դառնալ հրեշտակ՝ նա գազան է դառնում:

ՀՀ ՆԳՆ Վանո Սիրադեղյանի համաձայնությամբ ՀՀ ՆԳՆ փոխնախարար Սամվել Սաֆարյանի միջնորդությամբ, ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանի հրամանով կազմվեց ՀՀ ՆԳՆ

թիվ 666 հրամանը, որով Սամվել Հակոբյանին հանձնարարվում է կազմակերպել մի գունդ՝ երեք գումարտակով, յուրաքանչյուրը 100 հոգուց, գունդը պատրաստել՝ մասնակցելու Արցախի ազատագրման մարտական գործողություններին, ապահովելու նաև հանրապետությունից առաքվող ապրանքների անվտանգ տեղափոխումը Վրաստան, ինչպես նաև՝ Ռուսաստան:

Բայց կատաղած շունը կծեց Աֆղանցի Սամվելի ձեռքը, Սամվելը գնդակահարեց կատաղած շանը: Այդ պատճառով նրան 1997թ.-ին ազատեցին ծառայությունից: Սամվելը հասցրեց հասկանալ, թե ինչ կատարվեց իր հետ: Վերհիշեց Աֆղանստանում ատոմային ռումբի մասին կարդացած հոդվածը: Ինժեներ - քիմիկոս Հայկ Հովակիմյանը մասնակցել է 1949թ-ին ԽՍՀՄ-ում ԱՄՆ-ից հինգ տարի հետո ատոմային ռումբի ստեղծմանը: «Էներմոս» էր այդ սարսափելի ատոմային ռումբի ծածկանունը, որի փորձարկման ժամանակ Հայկ Հովակիմյանը չկար. Բերիան և Ստալինը նրան մեկուսացրել էին: ТU-4 տիպի ինքնաթիռի ստեղծումը եղավ նրա կործանման պատճառը:

1939թ. Մելսինգին Ստալինը փորձում էր և ասում Բեռլինի բանտից փախչելով՝ առանց անցագրի Կրեմլի պատերի միջով անցել է, այն կատարել է հաջողությամբ: Հիտլերը և Ստալինը Մելսինգին հարցրել են, թե ինչպե՞ս կավարտվի 1941-1945թթ պատերազմը, նա պատասխանել է, որ 1945 թ. այն կավարտվի Սովետական Միության հաղթանակով: Ստալինին հաղորդել է, որ տղան ինքնաթիռով չթռչի, այլ մեկնի գնացքով: Օդում ինքնաթիռը պայթել է:

Սամվելը՝ լինելով հետախույզ, ընկել էր մտատանջությունների մեջ՝ ինչպես Մելսինգի նման անցնի պատի միջով:

Հիշեց Ջավախքի իր ընկերներին, որոնց հետ հաճախ էր շփվում: Տեսել է ինչպես են անձնվիրաբար, արիասիրտ մարտնչում Արցախի ազատագրմանը և ձգտում նույնին արժանացնել Ջավախքը:

ՋԱՎԱԽՔԸ ԱՐՑԱԽԻ ԱԶԱՏԱՄԱՐՏՈՒՄ

Ջավախքի տղաները 1988թ. Օպերայի ազատության հրապարակում էին, ողջ հայության հետ անվախ մասնակցում էին ազգային ազատագրական պայքարին, ուս ուսի տված՝ կանգնեցին խորհրդային տանկերի դեմ: Ձևավորվեց «Ջավախք» ժողովրդական շարժումը «ՋԺԾ» և 1991թ. այն ամբողջությամբ անցավ իշխանության գլուխ:

Երջանային վարչության նախագահ նշանակվեց Սամվել Պետրոսյանը, տեղակալ՝ Մելս Թորոսյանը, Ա. Գրիգորյանը, վարչության գրասենյակի պետ՝ Ֆիոդոր Թորոսյանը, տեղակալ՝ Դավիթ Ոստակյանը: Իշխանությունը լիովին հայերի ձեռքում էր: Նրանք կարողացան Վրաստանի քթի տակ կազմակերպել, օգնել Արցախին՝ դիմակայելու պատերազմին:

Նշված ընկերների ղեկավարությամբ Ջավախքը «Կամազ» ավտոմեքենաներով սնունդ, հանդերձանք, զենք ու զինամթերք ուղարկեց Արցախ, թնդանոթի 152մմ, ՀՄՄ-ի արկեր ու ականներ, մեծ քանակությամբ դրամ հասցվեց Երևան-Ստեփանակերտ: Առանձին ծյուղով գնդացիրներ ուղարկվեց Եամշադին՝ Դավիթին:

Ծուշիի ազատագրումից հետո Արցախում վառելանյութը վերջացել էր, ռազմական տեխնիկան անշարժացել: Ցոլակ Ռայսյանը իր գործարանի վերջին կաթիլ վառելանյութը՝ մոտ 9 տոննա, չորս բենզատար ավտոմեքենաներով Գրիգոր Քերոբյանի, Ֆիոդոր Թորոսյանի օգնությամբ, հանձնեց Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻՆ, որն էլ անմիջապես ուղարկեց ռազմադաշտ:

Այստեղ ձևավորվեց օգնություն նախաձեռնող խումբը՝ Դավիթ Միքայելյան, Մաքսիմ Ռայսյան, Կիմիկ Սամվելյան, Սամվել Վահանյան, Ֆահրադ Թորոսյան:

Մինչև Ստեփանակերտ՝ ճանապարհին ընկած դիակները, կիսավեր տները, մոխրացած մարմինները, վառված այգիները, հրկիզված արտերն ու անտառները, գաղթն ու տառապանքը, նկուղներից դուրս եկող դեղնած ու բոկոտն մանուկների սփրթնած դեմքերը ասեղի պես խրվում էին մարդու սրտի մեջ, մարդու հոգին տակն ու վրա անում:

Ցավը ստիպում էր ավտոմատը ձեռքիդ մտնել ռազմաճա-

կատ: Այստեղ հանդիպեցի հորաքրոջս որդուն՝ Վանիկ Հարությունյանին: Նրա ընտանիքը ապրում էր Բաղրամյանի Քարակերտ գյուղում:

Ստեփանակերտում «ՋԺԾ»-ին պատվիրեցին Ջավախքում պատրաստել ջոկատներ և ուղարկել Արցախ: Այդպես էլ արվեց. երեք խումբ՝ 60-70 հոգուց բաղկացած, առանձին-առանձին ուղարկվեց Ստեփանակերտ: Մեծ մասը ընդգրկվեց Ծուշիի ժիրո Սեֆիլյանի գումարտակի կազմում: Ստուգելով տղաների մարտունակությունը՝ ավագ լեյտենանտ Գագիկ Հովհաննիսյանը, Ֆյոդորո Թորոսյանը, Գրիշա Քոսյանը, Դավիթ Միքայելյանը, Մաքսիմ Ռայսյանը, Վալերի Հովհաննիսյանը, Կիմիկ Սամվելյանը, Արմենակ Թամանյանը, Վահրամ Բաղասյանը մեկնեցին Չլդրանի ռազմական բազա: Հրամանատարները Ջավախքի տղաների մասին գոհունակությամբ էին խոսում: Մանիքլյում, Փափրավենում դիրքից դիրք անցնելով՝ նկատում էինք, որ, իրոք, մեր տղաները հրաշքներ են գործում:

Սումգայիթի հայերի ջարդը ահազանգ էր ողջ հայությանը՝

Ջավախքի ջոկատ. կենտրոնում՝ հրամանատար Սամվել Պետրոսյան, Քաշաթաղ, «Կոբրա», 1992

ինքնապաշտպանության համար զինվելու: «Ղարաբաղ» կոմիտեի հանձնարարականով տողերիս հեղինակն ու Գագիկ Գաբրիելյանը մեկնեցինք Ախալքալաք: Հակոբ Մանուկյանի աշխատանքային գրասենյակում կազմակերպվեց գաղտնի հավաք: Հինգ հոգուց կազմված խումբը՝ Սամվել Պետրոսյան, Միշա Թադևոսյան, Գևորգ Համոյանց, Հակոբ Մանուկյան, Վարոս Մահտեսյան, անվանվեց «Ջավախք» կոմիտե:

Այս հրաշալի հնգյակը իր ուսերին վերցրեց Արցախին օգնություն կազմակերպելու գործը: Առաջին օգնությունը առաջին մեքենայով, որի մեջ թաքնված էր զենք ու զինամթերք, հասցրեցին Երևան:

Երկրորդ մեքենայի մեջ դրվեցին Պետրոս Վլադիմիրի Ստամբուլյանի մոր, վեց երեխայի, 65 տարեկան Սաթենիկի 50 զույգ պատրաստած գուլպաները: Սաթենիկի օրհնանքի խոսքը հասավ խրամատ. «Հագեք տղաներ, տաքացեք ու կենդանի վերադարձեք ձեր մայրերի գիրկը»:

Գևորգ Ստեփանի Հակոբյանի և գնդապետ Ավագ Խաչատրյանի անձնազոհ աշխատանքի շնորհիվ երեք գրադ ավտոմեքենա՝ արկերով, անցկացրին Հայաստան:

«Ջավախք» ջոկատի մի խումբ ազատամարտիկներ:

Մնացական Մարգարյան

Ավագ Խաչատրյան

«Ղուկասյանում սրտատրոփ սպասում էր իմ ուսանողական ընկեր Վազգեն Սարգսյանը: Նա իմ հավատարմության վրա չէր կասկածում»,- պատմում է Գևորգ Հակոբյանը: Կիմ Գիլոյանի եղբայր Մելսիկ Մահտեսյանը, որ Ախալքալաքի վարչության նախագահի տեղակալ էր, ասաց. «Ջավախքի, Ախլցխայի 15 հայ գյուղերի մոտ 30.000 բնակիչներ, Ախալքալաքի 75 հայ գյուղերի 60.000 հայ բնակիչներ սրտով և հոգով օգնում են Հայաստանին: Վրաստանի ճնշման տակ դատարկվում է Ջավախքը»:

1993թ. Ղուբաթլու-Քաշաթաղի «Կոբրա» բարձունքի ազատագրման ժամանակ «Ջավախք» ջոկատի հրամանատար Սամվել Պետրոսյանը և ջոկատը արդեն մեծ փորձ էր ձեռք բերել: Պատերազմի դաշտով անցել էր նույնպես ախալքալաքցի Վահան Զատիկյանի հերոսական ուժերի հետ: «Կոբրայի» անծանոթ ծալքերով, խոր ու դժվար անանցանելի լեռների կիրճերով, խոր անտառներով կարողանում էին ղեկավարել մարտերը:

Մնացական Խաչիկի Մարգարյանը, որ 19 տարեկան էր,

«Սասուն» ջոկատի հրամանատար Վոլոդյա Խաչատրյան Գրադ Վոլոդյա: Զոհվել է 1993թ ապրիլի 13-ին, Կոբրայում

«Սասուն» ջոկատ: Աջից կանգնածը՝ Լևոն Խաչատրյան, ձախից երկրորդ շարքում՝ Վոլոդյա Խաչատրյան, Դրմբո 1992 թ.

Գյումրիի պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանող, մեկնեց Արցախ: Մասիս Ղուկասյանի, Ամասիայի Կարոյի հետ, Երևանի Շենգավիթի ջոկատի կազմում, որի հրամանատարն էր Մանուկը: Մեկնեց Ծուշի Ժիրայր Սեֆիլյանի հրամանատարության տակ, այնտեղ ծանոթացավ Ջավախքի Կարծախ գյուղի Գառնիկի «Գառնուկ»-ի հետ: Որպես գնդացրորդի օգնական, պաշտպանական դիրքերում աչքի ընկնելով՝ Մնացականին վստահեցին գնդացիրը: Նրանց անմիջապես ղեկավարում էր Պետոն, որին հետո փոխարինեց Բոգդանովկայի Վիտոն: Մեր ջոկատի հրամանատարության շնորհիվ Ծուշիում դիմավորեցինք Նոր տարին՝ 1992 թ.:

1993 թ. հունվարի 10-17-ը շենգավիթցի Մանուկը և ջավախքցի Մնացը վիրավորվեցին, իսկ աբովյանցի Արտյոմ Սարգսյանը թշնամու ականի բեկորից զոհվեց: Ախալքալաքից Արարատ էր տեղափոխել Ավագ Խաչատրյանը: 1946թ. օգոստոսի 13-ին Ախալցխա քաղաքում է ծնվել Ավագ Խաչատրյանը: Ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը, ընդունվել է Երևանի Պոլիտեխնիկ ինստիտուտը: Ծառայելով խորհրդային բանակի ռազմածովային նավատորմում, լինելով փորձառու, մասնակցում է Արցախյան պատերազմին, ընդգրկվում

Սասունցի Դավիթ» ջոկատի կազմում: 1992թ. ՀՊՆ գործերի կառավարիչ Ավագ Խաչատրյանը ղեկավարում է շարային ծառայությունների ու գաղտնի մասի վարչության պետի պաշտոնը: ՀՀ ՊՆ նախարարի հրամանով կատարելով հատուկ հանձնարարություններ՝ որպես զենքի ու զինամթերքի ավտոշարասյան հրամանատար, գիշերը ծանապարհին տասնհինգ տոննա տարբեր ականներ է տեղափոխում Արցախ: «Կամազի» սռնին կոտրվում է, մեքենան զարնվում է սարալանջին, արկերը թափվում են գետնին: Մինչ օգնական ուժերի գալը Ա.Խաչատրյանը՝ վտանգելով կյանքը, թափված ականները տեղափոխում է ավտոմեքենայի մեջ: Կապելով մեկ այլ մեքենայի պոչից՝ հասցնում է ռազմածակատ:

1992թ. աշնանը գլխավորելով 5 հոգուց բաղկացած հատուկ խումբը հարևան հանրապետությունից պայմանավորված վայրից 2 «Կամազ» ավտոմեքենայով զինամթերք պետք է տեղափոխեր սահմանային գոտի: Ճանապարհին հարձակվում են տասնյակ զինված անձինք, անկանոն կրակում են մեքենաների վրա: Ոտքից վիրավորվում է Անդրանիկ Պետրոսյանը, ձերբակալվում է Ա.Խաչատրյանը: Երկու օր մեծ ջանքեր գործադրելով՝ կարողանում են բանակցել զինյալներից մեկի հետ և լուծել վիրավորի բուժման խնդիրը: Կարողանում են գաղտնի կապով հաղորդել Վազգեն Սարգսյանին, և նրա օգնությամբ բեռը հասնում է ռազմագիծ:

«Սասուն» ջոկատ: Հրամանատար Վոլոդյա Խաչատրյան: Մարտական ընկերներով, Խաչիկ գյուղ, 1992 թ.

Մեր դիրքերից առաջին անգամ խփեցին ռմբակոծող առաջին ինքնաթիռին: Որքան ուրախալի էր ամբողջ Արցախում, որ ազատամարտիկները նույնիսկ ունակ են ինքնաթիռ խփել:

Մանուկը վիրավորված էր կրծքից, Արտյոմը գլխից, բեկորը աչքը թափել էր, անցել գանգի միջով դուրս եկել: Ես Մանուկի կրծքից հանեցի բեկորը: Վիրավորվել էի գլխից ու կրծքից, աչքերս սևանում էին, վերքերս տաք էին, չէի զգում:

Արտյոմին երկու մետր քաշեցին. նրա ուղեղը ցրիվ էր եկել, անօգուտ էր, սակայն դիակը պարտադիր էր հանել մարտադաշտից: Վիճակս գնալով վատանում էր, մոտ 300 մետր սողալով մի կերպ հասանք շտաբ: Թշնամին ռմբակոծում էր: Շտաբում զեկուցեցինք իրավիճակի մասին, թեկուզ շտաբում պարզ տեսնում էին թշնամու գրոհը, մեր դիրքերի վիճակը, զոհերի, վիրավորների քանակը: Հետախույզները արդեն Արտյոմի դիակի մոտ էին:

«Արաբո ջոկատի հրամանատար» Ավետ Մացակի Մանուկյան, Արմեն Ամիրյան, 1990 թ.

Մեզ պատմում է Մնացականը. «Առաջին բուժօգնությունը ցույց տալուց հետո ուրալի հետ ուազ մեքենայով տեղափոխեցին Ստեփանակերտ: Ապաքինվելուց հետո վերադարձա ռազմագիծ, ուր մի քանի օր առաջ գլխից զոհվել էր «Գառնուկ»-ը, թշնամու հրթիռակոծման հետևանքով:

Գյումրիի ծարտարապետական համալսարանի 3-րդ կուրսի ուսանող 19 տարեկան Մնացական Մարգարյանը մեկնեց Ծուշի, ընդգրկվեց Ժիրայր Սեֆիլյանի գումարտակի կազմում: Այնտեղ էին ջավախեցի Վիկտոր Դավթյանը, որը 1990թ. ընդգրկվելով Նաիրիի ՀՅԴ ջոկատի մեջ՝ թողել էր Ռուսաստանում խոշոր բիզնեսը, այժմ վաշտի հրամանատար էր:

Հավաքվեցին Մնացականի շուրջը՝ զեմլյակ-զեմլյակ կանչելով, ծանոթացրին Ջավախքից եկած Գառնիկի հետ: Ստանալով հաստիքային ավտոմատը՝ շարք կանգնեց: Դիրքային կռվի ընթացքում աչքի ընկնելով՝ արժանացավ գնդացիր կրելու պատվին: Մազերս երկար էր, Գառնիկի տղաները կիսակատակ ասում էին՝ հիպի ես, կարծացրու: Մկրատ չկար, դանակը քոռ էր, ապակին իր գործը արեց: 19-ամյակիս կապակցությամբ գյումրեցի Արտաշը մի զույգ ծտքակոշիկ նվիրեց, զինվորական հագուստի հետ տեսքի եկա, նմանվեցի ազատամարտիկներին, շարք կանգնեցի: Երբ ծանոթացա Արցախի բնության հետ, իմ մեջ զգացի բնության գեղեցկությունը: Նվիրվեցի ջերմ ու սրտով կպա Արցախի ազատագրման գործին: Նախիջևանը կործանվեց: Ջավախքի փրկության մասին խոսք անգամ չկա: Գոնե այս մի կտոր հողը՝ Արցախը, փրկենք բարբարոսներից:

Տղաներից մեկի գնդացիրը անփութության պատճառով կոռոզիայից խափանվել էր: Վերանորոգելուց հետո փորձարկեցի. գումարտակը խառնվեց իրար, կարծեցին թե թուրքերը անցել են հարձակման: Զենքը գործածելուց առաջ մեզ ուսուցանում էին նրա մաքրելն ու յուղելը: Ավտոմատի արդյունավետ կրակի հեռավորությունը 400մ է, մահաբեր՝ 1500 մ, թռիչքը 3000 մետր, նշանայինը՝ 1000 մ: Կրակահերթով 1 րոպեում՝ 100 հատ, մենահատ կրակոցներով՝ 40 հատ փամփուշտ է կրակում:

Փոխգործողությունից, տեղանքի բնույթից, եղանակից, օրվա ժամից և ժամանակի այլ գործոններից յուրաքանչյուրը

ազդում է մարտական գործողությունների, ինչպես նաև հակատանկային միջոցների, հրետակոծության, տեխնիկայի, զենքի օգտագործման արդյունավետության վրա:

- Սրխավենդում 1992թ. հունիսի 11-ին Գյումրիի Արտո Ալիխանյանի, Աբովյանի ջոկատի հրամանատար Կարենի հետ սպասում էինք մեր ուղղաթիռին՝ «ՄԻ-8»-ին, որի (ըստ հրամանի) երևալու ժամանակ սկսենք մարտը: Եղավ հակառակը՝ մեր հարձակումը ձախողվեց, թշնամին անցավ հակահարձակման,- պատմում է Վիկտոր Ռաֆիկի Դավթյանը՝ Վիտոն:

«26-Յուրան» դիրքավորված էր Խաչեն գետի ափին: Նա ապահովեց գիշերով մարտադաշտից 5 դիակ հանելը: Դիտակետից նկատեցի թշնամու գնդացրորդին, մեր նռնակնետողի դիպուկ հարվածից լռեց գնդացիրը: Թշնամին բոլոր ուղղություններով գործի դրեց իր ռազմական տեխնիկան: Հունիսի 14-ին Աշոտ Ղուլյանը՝ «Ասկոլկա»-ն, իր ողջ ուժերով գրոհեց թշնամու վրա: Նռնակնետողները տանկիստների հետ ոչնչացրին թշնամու երեք ռազմական միավոր տեխնիկա, մոտ 70 թուրք: Թշնամին նահանջեց: Մարտը ղեկավարում էր ժաննա Գալստյանը:

Հրահանգ ստացանք մեկնել Ծուշի, համալրվել: Ծուշիում ջոկատը կարգի բերելով՝ վերադարձանք դիրքերը: Սեյիդիշենում միացանք «26-Յուրայի» ջոկատին: Այդ գյուղի Սլավիկը քաջ էր և համարձակ, նրան էլ վստահվեց ուղեկցողի պաշտոնը: Օպերացիան ղեկավարում էր Դավթաշենի Թաթ Վաչոն: Ազատամարտիկները անանցանելի դժվար ճանապարհները հաղթահարելով՝ հասան Սարդարաշեն գյուղ, Ալիաղալու գյուղի թիկունքում դիրքավորվեցին: Լուսաբացին Վիկտոր Դավթյանը (Վիտոն) հակատանկային ՀՊԳ-9 զենքը ուսին դրած՝ Գյումրիի Արտյոմի խմբի հետ իջավ Խաչեն գետը, Սրխավենդի ուղղությամբ հարվածեց թշնամու թիկունքին, իսկ ծակատից պետք է հարվածեր գնդի հրամանատար Սեյրան Օհանյանը: Այս օպերացիայում հրաշք գործեց հայրենասեր Դուշման Վարդանը:

Վիտոն առաջինը կրակեց, արկերը վերջանում էին: Երեխաները եկել էին օգնության, մոտ 60 մետր հեռավորությունից թաքստոցից արկերը հասցնում էին Վիտոյին: Նրա արձակած արկը թշնամու ռազմական շտաբի լուսամուտից ներս խուժեց;

Երբ գրավեցին գյուղը, տեսան՝ արկը պատը ծակել, դուրս էր եկել:

Թշնամու Т-72 տիպի տանկի անձնակազմում բանիմաց քաջ տղաներ էին, նրանք խիզախորեն կռվում էին հայերի դեմ: Ծրջապատը վերցրել էին իրենց ազդեցության տակ: Խուսանավում էին, աննահանջ կռվում, արձակած արկը նպատակին խոցում: Հայերի մեկ կրակոցին պատասխանում էին երեք կրակոցով:

Վիտոյի կողքին կանգնած բուժքույր Աղավնի Սաֆարյանը և Արայիկ Խնդոյանը (միայնակ գայլ), վիրավորվեցին: Վիտոն նույնպես վիրավորվեց, ձախ ականջի կողմից: Ասենք, որ Արայիկ Խնդոյանի մարտական ընկեր, համագյուղացի, Արագածի ջոկատի Արտյոմ Սահակյանը (Ճուտ), «Ազատագրում» գրքի երկրորդ հատորում՝ (էջ 268-ում) սխալմամբ շփոթվել է Ֆեդյա Տոնոյանի հետ, որի զոհվելու պահը վերագրվել է Արտյոմ Սահակյանին:

Ֆեդյան զոհվել է 1992թ. սեպտեմբերի 19-ին Հոչազի մարտերից մեկի ժամանակ: Գեդեոնը վիրավորվում է: Ֆեդյան նրան «Վիլիսով» տեղափոխում է Ամիավան՝ «Զաբուխ», ընկնում է շրջապատման մեջ: «Ղաչաղ Նաբու» ջոկատը գնդակահարում է վիրավոր Գեդեոնին, աշխատում են կենդանի գերեվարել Ֆեդյային: Ֆեդյան, մահը գերադասելով գերությունից, քաշում է ձեռքի նռնակի օղը: Պայթունից զոհվում է Ֆեդյան՝ իր հետ տանելով իրեն գերեվարող երկու թուրքերի:

Բուժքույր Կարինե Գևորգյանը հասավ օգնության, որը նույնպես մեկ տարի հետո 1992թ. հունիսի 12-ին զոհվեց Մեծ Ծենում:

Վիտոյի զենքը խափանվել էր, շարքից դուրս եկել: Չէր կարողանում տանկի հախից գալ: Գետի ափից գյումրեցի Նորիկը իր գրոհող խմբով խորացավ մարտադաշտում և այդ պատճառով ԼՂՀ-ի Մարտունու Թաթուլը վիրավորվեց: Այդ տանկի արկից զոհվեցին գյումրեցի Արտավազդ Ալիխանյանը, «26-Յուրա»-ի ջոկատից Յուրան:

Հայկական ուժերը շրջապատեցին Սրխավենդը, թուրքերը նահանջեցին: Հայերը՝ հետապնդելով նահանջող թուրքերին, նրանց սեղմեցին Ալիաղալու գյուղին: Սակայն լրացուցիչ պահեստային ուժերի բացակայության պատճառով հայերը նա-

խաձեռնությունը իրենց ձեռքում չպահեցին և նահանջեցին. Մարտակերտը ընկավ գերության մեջ:

Վիկտոր Ռաֆիկի Դավթյանը 1992թ. ավարտելով Երևանի մանկավարժական ինստիտուտը՝ անցնում է ՀՀ ԶՈ-ի որպես դասակի հրամանատար և Սրխավենդի կռիվներից հետո մասնակցում Աղդամի, Ջիլի, Ասկերանի, Սաղարաշենի, Մարտակերտի Օրթա, Բաշ, Գյունհայա, Մանիքլու, Ղարաշիլար, Պուշկինյալ, Ալի Մադաթլի, Հանգելանի, Ջեբրայիլի, Ֆիզուլիի, Քելբաջարի ազատագրման մարտերին:

ԼՂՀ 6-րդ պաշտպանական շրջանի հրաձգային գումարտակի հրամանատար էր, հետո այդ գնդի փոխհրամանատար, ՀՀ ԶՈ-ի ռազմական ինստիտուտի 4-րդ կուրսանտական գումարտակի հրամանատար, պարգևատրվում է մարտական խաչ 2-րդ աստիճանի շքանշանով: Մարտակերտի անկումից հետո սկսվեց մեծ նախապատրաստական աշխատանք՝ Մարտակերտը ազատագրելու օպերացիան:

1993թ. Ամանորը դիմավորեցինք Սրխավենդի պաշտպանական խրամատների մեջ: Ջավախքից երրորդ խումբը՝ մոտ 73 հոգի, Մելս Թորոսյանի ղեկավարությամբ ընդգրկվեցին Ժիրոյի գումարտակի կազմում: Դիրքերում երգում էինք հայկական խրոխտ երգեր: Դիմացի դիրքերից թուրքերը բացականչում էին՝ սաղոլ-սաղոլ էրմենիներ: Առավոտյան շարունակեցինք մեր ուրախությունը, երգն ու պարը, թուրքերը հայհոյելով՝ ավտոմատներից կրակ բացեցին մեր դիրքերի վրա: Իմացանք, որ կատարվել է հերթափոխություն:

Թալինի Մանվելը ուսումնական մարզումների ժամանակ ազատամարտիկներիս քրտնացնում էր՝ կզեք-ելեք-վազեք, շունչներս կտրվում էր: Բրոնիժիլետը, պահեստատուփերը, ավտոմատը, ձեռքի նռնակները, փամփուշտները, ուսապարկը, դեռ չեմ ասում կարճ բահը, ջրամանը՝ կողքներիցս կախ, 40-50կգ: Պարապմունքից հետո տրվում էր կարճ դադար, որը շատ հաճելի էր: Տրվեց տագնապի նշան, Իլյիչի ջոկատը ընկել էր շրջափակման մեջ, պահանջում էր օգնություն: Գերանի վրա նստած ծոծվում էի, թշնամու նշանառուն վրաս աշխատում էր: Գնդակը ականջիս մոտով սուրաց, ընկա ցած, փրկվեցի:

Իսկ հեռահար ռումբի պայթյունից Վահագնը խենթացավ, խելագարի տպավորություն թողեց: Երգով կարողացանք

նրան ուշքի բերել, կենտրոնացնել: Երեք տանկիստ եկել էին մեզ մոտ, խրամատի մեջ քնել, հանգստանում էին: Թշնամու արկի դիպուկ հարվածից երեքն էլ տեղում զոհվեցին: Այդ ժամանակ Պռոշյան սովխոզի Պետոն մոտ 500մ բարձրությամբ թռչող ռմբակոծիչ CY-25 ինքնաթիռը երկնքից գետին տապալեց: Լրագրողը գրի էր առնում այս բոլորը: Օպերատորը Մնացականին պատվիրեց կրակելը չընդհատել. լայն պլանով նկարահանում էր:

Մի քանի օր անցավ: Գնում էինք հերթափոխի, ոտքերս ծանրացել էին, չէի կարողանում փոխել, սիրտս կախ էր, հոգով ընկճված: Տղաները նկատել էին, սկսեցին սրամտել: «Մնացական, տեսնում եմ Ջավախքում կարտոֆիլ ես ցանում, մարտի տրամադրություն չունես,- ասաց Մանուկը: Աբովյանից Արտյոմը մեջ մտավ. «Մնացակա՛ն, Մանուկի խոսելուն մի հավատա, քեզ կշեղի կենտրոնանալուց»: Արտյոմ ջան, Մանուկին դաբաղանից գիտեմ, Մանուկը ինձ շեղում է, բայց ուշադրությունս քո ծոցի մեջ է. մի տուփ խտացրած կաթ ու մի հաց կար Արտյոմի ծոցում պահած: Արտյոմ ջան, դու մեր միջի համարձակն ես: Ես այսօր մտածում եմ՝ ուսումս կիսատ մնաց, պատերազմից հետո կշարունակեմ»:

Հասանք խրամատ: 100 մ-ի վրա թշնամին տաս անգամ ռմբակոծում էր: Ըստ հետախուզական տվյալների՝ թշնամին ուներ 70 գրադ կայանք, 30 հատ ՄԻԳ 25 տիպի, 7 հատ ՄԻԳ-24 բազմանպատակային կործանիչ ինքնաթիռներ, 279 տանկ, 320 ռազմական մարտական տեխնիկա: Արագ-արագ դիրքավորվեցինք, սակայն դա մեզ չփրկեց: Ականը կորագծով կախվեց մեր գլխավերևում, չհասցրինք թաքնվել, գետնատներ չէինք պատրաստել, որն էլ մեզ պատժեց: Ականի պայթունից բեկորը մտել էր Մնացականի գլխի կաշվի տակ: Ուշքի գալով՝ ձեռքը տարավ գլուխը, մատները արյունոտվեցին: Աշխատեց շարժվել, կրծքի մասում ցավ զգաց: Բեկորը ծակել էր ծոցագրպանի անձնագիրը, խրվել մարմնի մեջ, երկրորդ բեկորը հարվածել էր առաջին բեկորին ու լռվել:

«Ծնողներիս միանուագար որդին եմ, աչքերիս առաջ գունավոր պատկերներով մայրս՝ ձեռքերը կրծքին ծալած, Ջավախքի Մուրջախեթ գյուղի փեշով հանդարտ հոսող գետի քարե կամուրջին կանգնած սպասում էր որդու դիակին: Մարմինս ցնցվեց, մի կերպ նստեցի»,- պատմում է Մնացականը:

Մանուկի վիճակը նույնպես թեթև չէր, բեկորը խրվել էր մեջքի մեջ, ցավից տնքում էր ու գալարվում: Մանուկի հետ սողալով մոտեցանք Արտյոմին. խռխռում էր, հասկացրեց, որ ուզում է ապրել, սրտում մուրազ ունի՝ մեկնել ԱՄՆ: Զարկերակը ստուգեցի, չէր աշխատում, Մանուկն էլ ստուգեց, Արտյոմը արդեն անշնչացել էր: Ռազմական շտաբից 300մ հեռու էինք: Դիակը քաշեցի, ուղեղը թափվեց ձյան վրա: Արկը աչքի միջից մտել էր, գանգի միջից միջանցիկ դուրս եկել:

Արյուն կորցնելով, տանջանքով հասանք շտաբ, հաղորդեցինք, որ Արտյոմը զոհվել է, հասնեն օգնության: Մեզ շտապ կարգով տեղափոխեցին Ստեփանակերտի հիվանդանոց:

Բագրատունիների միության նախագահ Անդրեաս Մարտիրոսի Սրաբյանը ծնվել է Ջավախքում, 1959թ., որտեղ ծնվել է նաև հայ խոշոր պատմաբան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը, ով մեծ ներդրում է ունեցել հայ մշակույթի մեջ:

Հայաստանի «Մեծ Հայք» կոչված նահանգի Սպեր գավառի Հունուտ գյուղում 1770 թվականին ապրում էր մի հայ մարդ՝ Կարապետ Եղիկ-Օղլի անունով: Իր դատաստանական գործերում ուշիմությամբ և խելքով մեծ համբավ ուներ բոլոր ժո-

Մարտին Բաղդասարյանը բժիշկ Գալուստ Ղարիբյանի և նրա զավակների հետ, Արցախ: 2000 թ.:

ղովրդական և մեծամեծ իշխանավորների շրջանում գավառի օսմանցիք նրան հայ թագավորազն էին անվանում:

Կարապետ Եղիկ-Օղլին խրախուսվելով այդ հանգամանքից և գուցե պատմությունից իմանալով, որ Սպերը հայոց իշխանության ժամանակ պատկանում էր Բագրատունյանց ցեղին, թողել էր յոթ «Եղիկ-օղլի» մականունը և ընդունել «Բագրատունյան» ազգանունը: Այս պատմության պատճառով Անդրեաս Սրաբյանը գրավոր դիմեց ՀՀ Պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանին, որի կարգադրությամբ 1999թ. ապրիլի 14-ին բաց է թողնվում 2 տոննա բրոնզ, հուշարձանը կառուցելու նպատակով:

Պատճառն այն էր, որ Ախալցխա քաղաքում վրացիները կառուցեցին Թամարա թագուհու արձանը:

Անդրեաս Սրապյանի նախաձեռնությամբ, ՀՀ Ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանի ցուցումով որոշվեց կազմակերպել Կարին, Էրզրում, Ալաշկերտ, Բայազետ, Բարբերտի ու Արդահանի հայության վերաբնակության 1700-ամյակի և այդ վերաբնակության կազմակերպիչ և առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու ծննդյան 220 ամյակը և կառուցել նրա բրոնզաձույլ արձանը:

Այս ձեռնարկը համազգային պետական կարևորության գործ էր համարվում, գնահատվում նրա բարոյահոգեբանական նշանակությունը:

Կարապետ արքեպիսկոպոսը գերազանցապես գործել է Ախալցխայում, Ջավախքում՝ հասնելով Վրաստանի և Իմերեթի հոգևոր առաջնորդի պաշտոնին:

Բագրատունիների միության մտահղացմամբ ձուլվեց երախտագետ արքեպիսկոպոս Բագրատունու՝ բրոնզե գավազանը ձախ ձեռքին, բազկաթոռին բազմած մեծաչափ հուշարձանը:

Հայ թագավորությունները ձևավորվել են Հայկ Նահապետի, Արա Գեղեցիկի, Արտաշեսյանների, Արշակունիների, Բագրատունիների, Մամիկոնյանների, Արծրունիների, Խորխոռունիների, Պռոշյանների, Օրբելյանների քրտնաջան աշխատանքի շնորհիվ:

Հայրենասեր ուժերին, նախաձեռնողներին իր շուրջը հավաքելով՝ Անդրեասի, Աշոտ Մելքոնյանի նախաձեռնությամբ կերտվեց Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու բրոնզե արձանը: Այսպիսով հարստացրին հայ մշակույթը ևս մեկ արժեքով:

«Զվեզդա» հյուրանոցի տնօրեն Անդրեասը Երևանի Էրեբու-

Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունի, բրոնզաձույլ հուշարձանը Ախալքալաքում

նու օդանավակայանում ներկա էր, երբ ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը ՌԴ ՀՈ նախարար մարշալ Պավել Գրաչովին ուղղաթիռով հատուկ թռիչքով ճանապարհում էր Մոսկվա: 1991թ. Պ. Գրաչովը անցավ ՌԴ նախագահ Ելցինի կողմը, պատմում է Անդրեասը,- Ես Պ. Գրաչովի մոտ եմ կանգնած, նա նայում էր Արարատ սարին, դեմքը պայծառացավ, աչքերը լայնացան, աշխույժ շարժումով ձեռքերը շփելով տարածեց օդ, վայելեց, ընկալեց պարզ ու զուլալ, վեհ ու հպարտ երկինք խոյացող սարերի գեղեցկությունը, ձեռքով խփեց ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանի ուսին ու ասաց.

- Արարատ սարը մերն է լինելու:

Անդրեասի համար այդ պահը դարձավ պատմություն, համաշխարհային մշակույթ: Այդպես է Խաչատուր Աբովյանը բարձրացել Մասիս սարի գագաթ, ուր մեր նախնիների ոգին է շղթայված:

Վ. Լենինի հանձնարարությամբ Ս. Ծահումյանը ցանկանում էր կազմակերպել Անդրկովկասյան Բոլշևիկյան պետություն: Ս. Ծահումյանը Հայաստանը տեսնում էր բարգավաճ երկիր: Անդրկովկասում հայերը 3 միլիոն էին, վրացիները 300 հազար, ադրբեջանցիները 800 հազար:

Սակայն Ստալինը Կոմունիստական Խորհրդային գահին հասնելու համար մաքրում էր Վ.Լենինի շուրջը, ճանապարհ հարթում դեպի բռնակալի գահը: Եվ 1918թ. վիժեցրեց այդ ծրագիրը: 1918թ. 26 կոմունիստներ գնդակահարվեցին:

Ջավախքցի Միշան, Գագիկ Գաբրիելյանը, ես և ՀՀ ՆԳՆ տեղակալ Սամվել Սաֆարյանը 1992թ. փետրվարին մեկնեցինք Ջավախք, հանդիպեցինք տեղի տղաների հետ: Քննարկում էինք Ջավախքը Հայաստանին միացնելու հարցը: Բայց դա դեռ միայն մեր երազանքն էր: Իսկ մինչ Ջավախք մեկնելը պատմաբան Նորայր Խանզադյանը ցանկանում էր օգնել մեզ: 1989 թ.-ին ԱԻՄ-ի կազմում ստեղծվում է «Հայոց ազգային բանակ» միավորումը: ՀԱԲ-ի անդամ Ռազմիկ Վասիլյանի ղեկավարությամբ այն դառնում է ռազմա-քաղաքական կազմակերպություն:

«Սյունիքի աշխարհազոր»-ը բաղկացած էր 17 ջոկատներից: Նրա հրամանատարն էր պատմական գիտությունների թեկնածու Նորայր Խանզադյանը:

ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ

Քաջարանի ինքնապաշտպանական կամավորական ջոկատի ազատամարտիկներ Հովհաննես Յուրիկի Մատինյանը, Վարդան Ծմավոնի Գևորգյանը, Մանվել Օնիկի Հակոբյանը ուս ուսի տված՝ մաքառեցին Արցախի ազատագրության համար:

Անցնելով մարտական ճանապարհով՝ Կապան-Գորիս սահմանագծի, Ղուբաթլուի, Զանգելանի, Հորադիզի հատվածներով, հաղթահարեցին պատերազմի դժվարությունները: Համագործակցելով Կապանի, Մեղրիի ջոկատների հետ՝ նյուվադցի Խաչիկ Սեյրանի Անդրեասյանը Ծիրանաձորի, «Աշլի դաղ» բարձունքների ազատագրման ժամանակ աչքի ընկավ իր քաջագործությամբ, հատկապես Ղուբաթլուի, Հորադիզի ուղղությամբ ընթացող մարտերի ժամանակ և արժանացավ լեյտենանտի կոչման:

Երբ Քաջարանի ջոկատը պաշտպանում էր Ղազանչի-Ախքյանդ հատվածը, նրանց թիկունքը ամուր պահպանում էին Սի-

Արմեն Ջիգարխանյան, Վանո Միրաղեյան, Վազգեն Սարգսյան, Հրաչ Թամրազյան, Հանտ Մաթևոսյան

սիանի ջոկատի արծիվները՝ հրամանատար Աշոտ Մինասյանի գլխավորությամբ:

1992թ. ապրիլի 25-ին Կապանում թշնամու արկի հարվածից բռնկվեց հայերի հետևակային մարտական մեքենան՝ անձնակազմը՝ թվով 8 հոգի, զոհվեցին:

Ծմավոն Մովսիսյանի քրտնաջան աշխատանքի, Լեոնիդ Գրիգորյանի օգնության շնորհիվ Կապան քաղաքում ստեղծվեց պատմության թանգարան, որտեղ ցուցադրվում է Հայաստանի, հատկապես Զանգեզուրի հայ ժողովրդի պատմական անցյալի, ներկայիս Հայաստանի սահմանների պաշտպանության, Արցախի ազատագրման մարտական գործողությունների, Կապանի 24 հայ կանանց մասնակցությամբ Հորադիզի ազատագրման, ինչպես նաև Կապանի 176 զոհվածների հերոսական սխրանքների մասին պատմող նմուշներ: Ասում են, որ գեներալ Շառլ Դը Գոլը ծնվել է 1890 թ. Կապանի Բաշքանդ գյուղում, որի մասին կա վկայող փաստաթղթեր:

Գարեգին Նժդեհի գաղափարները մինչ օրս ուսանելի են: Նրա յոթ պատվիրանները գրված են Խուստուփ ժայռի ճակատին: 1920թ. նա մեկ ամսից ավել բնակվել է Վարդանի մարտական ընկերոջ՝ Սլավիկի ծնողներ Լուսիկ Խաչատրյանի և Խոջա Սարգսի տանը: Գեղաձորի յոթ օրվա կռիվներից հետո Նժդեհը վերադառնում է տուն՝ ձիու վրա նստած չորս տարեկան թուրք աղջնակի հետ: Բոլորը զարմացած էին: Տատիս կանչեց մոտը, հանձնարարեց խնամել երեխային: Փոքրիկը ոջլոտ, գզգզված, կեղտոտ մազերով, մաշված ճղճղված հագուստով էր: Տատս լողացրեց, հագցրեց, Նժդեհի հետ նստեցրեց սեղանին՝ ճաշի: Ծուրջ մեկ ամիս յուղով, մեղրով, թեյով կերակրեցին:

Նժդեհն իր հետ տարավ երեխային: Հետո, մեկ օրվա մեջ Գեղաձորի Գյարդ գյուղում դավադրաբար սպանվեցին 7 հոգի:

Իրերը քայքայվում և ոչնչանում են, մարդկանց մի սերունդը փոխարինվում է մյուսով: Պատմությունը խտացված է մեր իմացության մեջ:

Մարդկանց սպանել հնարավոր է, բայց հնարավոր չէ սպանել ազատ միտքը: 1600թ. ինկվիզիտորները մանուշակագույն փարաջա հագած և կաթոլիկ եկեղեցու հովվապետ Պապի գվարդիայի զինվորներով շրջապատված՝ խարույկի վրա այրեցին մեծ փիլիսոփա ու գիտնական Ջորդանո Բրունոյին: Ողջ աշխարհի առաջադեմ մարդկանցից հավաքված միջոցներով հուշարձան կանգնեցվեց: Պատվանդանի վրա գրված է. «Ջորդանո Բրունոյին՝ դարից, որը նա կանխատեսել էր»: Իսկ հայ հերոսներին համայն հայությունը ի՞նչ պիտի նախատեսի...

Գարեգին Նժդեհին հալածեցին իր տան մեջ՝ Հայաստանում, նրա սահմաններից դուրս: Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻՆ մեկ ակնթարթում դավադրաբար սպանեցին:

Աստվա՜ծ իմ, ի՞նչ անընմբռնելի ուժ է թաքնված մարդու մեջ: Ծայրահեղ կարիքը, շահամոլությունը, փառքին ձգտելու տեն-

Աջից՝ նստածը Գարեգին Նժդեհ

Ձախից՝ Վարդան Գևորգյանը Վազգեն Սպարապետի հետ, Զանգեզուր

չը, ոսկի դիզելու կուրությունը մարդուն դարձնում են սրիկա, խորամանկ, նենգ, գող, դավադիր, թշվառ, խաբեբա, կեղծ վկա, դավաճան: Նրանք սպանում են զորավարներին, գրողներին, փիլիսոփաներին, ու նրանց մահով ողջ աշխարհներ են հանգչում:

Ահա այս հսկաները, որոնք ազատ են իրենց որոշումների մեջ. առաջնորդվում են Աստծու կողմից՝ երբեմն նույնիսկ անկախ իրենց կամքից: Անվախ են նրանք, վախը ներծծվել է մահի մեջ: Վազգեն Սարգսյանն էլ այդպիսի հսկաներից մեկն էր: Նրա լայն ճակատին շողում էր արևը, դեմքին մի վեհ արտահայտություն կար, հայացքը Մասիս սարին էր ու արևի լույսով ողողված Խոր Վիրապին, Արարատ աշխարհի դրախտավայրին, որ լի էր չքնաղ գույներով ու ապագայի դյութիչ հնչյուններով: Արևի այս երկիրը՝ բարձր էր իր մշակույթով, վեհաշուք՝ իր տաճարներով: ՍՊԱՐԱՊԵՏԻ խոսքն ալիքվում էր՝ հասնելով մտքի հորիզոններին: Նա երջանկանում էր, երբ հանդիպում էր ազատամարտիկներին, համախոհներին, բարեկամներին, իր բանակի զինվորներին: Նրա դեմքին մշտապես ժպիտ կար, որից բարձրահունչ մի ծիծաղ էր բխում: Աչքերից բոցկլտացող աղոթքով ասես դիմում էր Աստծուն: Նա չէր վախենում մահից:

Քաջարանի ջոկատի կազմավորումը, 1989:

ՀՀ ՀՈՒ Հրամկազմ, Հանգեզուր

Մահն էր վախենում նրանից, որովհետև նա հաղթահարում էր մահը՝ իր երազանքը փոխանցելով շատերին:

Նրա կյանքը հանուն հայրենիքի մարտնչելն էր. այն օգնում էր՝ հաղթահարելու հոգեկան ծանր ապրումները: Նա իր իմացությամբ ղեկավարում էր պատերազմը, հոգու իր ամրությամբ շարժում հայոց հաղթական բանակը: Նա ընդարձակեց հայոց սահմանները, նվաճեց մեր հողերը: Նրա երջանկության արտահայտությունը աչքերից հոսող արցունքներն էին, երբ 1996թ., և հատկապես՝ 1999թ. հանրապետության հրապարակում կազմակերպեց (պարապմունքները տևեցին երեք ամիս, գաղափարա-դաստիարակչական գծով փոխհրամանատարը տողերիս հեղինակն էր, ու այս ամենին մեր աչքերով ականատես եղանք) զորահանդես: Նա զգում էր, որ իր սնուցած գաղափարների շնորհիվ հայ զինվոր-պաշտպանները ծաղկում են և աշխարհին նայում ծաղիկների բարի աչքերով: Ինչպես կասեր մեծ փիլիսոփա Էպիկուրը. «Գիտեմ այս նշենին մեկ արմատ ունի, որը դուրս է ցցվել հողից՝ ծաղիկներին նայելու համար»:

Հովհաննես Յուրիկի Մատինյանը 28 տարեկան էր, երբ ընդգրկվեց ղարաբաղյան շարժման մեջ: Դեկտեմբերին ակ-

ՀՀ ՀՈՒ Հրամկազմ, Հանգեզուր

տիվորեն մասնակցում էր Քաջարանում ինքնապաշտպանական ջոկատի կազմավորման գործին: Ջոկատը՝ համագործակցելով Կապանի գումարտակի հետ՝ պետք է Նախիջևանից, Ադրբեջանից հարձակվող ուժերին հակահարված տար:

Մարտական գործողությունները թեժանում էին. Ագարակ, Ուժանիս, Դավիթ Բեկ, Փայլասար գյուղերի տարածքների, ինչպես նաև Կապան, Ծուռնուխ, Գորիս կապող միակ ճանապարհի պաշտպանությունը դժվարացնում էր թշնամուն դիմակայելը:

Սակայն այս դժվար, հակասական, ոչ ծրագրված իրադարձություններից տղաները կարողանում էին գլուխ հանել՝ հենվելով իրենց գիտելիքների վրա:

1993 թ. Հովհաննեսը նշանակվում է Քաջարանի ԵԿՄ-ի տարածքային բաժանմունքի պետ: Մասնակցում է Հորադիզի մարտերին: Նրա կողքին մարտնչում էր Մանվել Օնիկի Հակոբյանը, որը վիրավորվում է աջ թևից, Վարդան Գևորգյանը և շատ շատերը:

Քաջարանը Հանգեզուրի ինքնապաշտպանությունն իրականացնող, Մեղրի-Կապան-Գորիս կապող կարևոր օղակներից մեկն էր:

1988թ. աշնանը Գագիկ Խալաֆյանը Ագարակի 2500 միտինգավորներին հաղորդագրություն ներկայացրեց օպերայի ազատության հրապարակից, որի շնորհիվ ձևավորվեց 250 հոգանոց ինքնապաշտպանական ջոկատ: Հրամանատար նշանակվեց կապիտան Խաչատրյանը: Ջոկատը հետագայում ընդգրկվեց Մեղրու գնդի կազմում, որի հրամանատարն էր Ղևոնդ Հովհաննիսյանը և մասնակցեց Լաչինի, Հորադիզի ու Ֆիզուլիի մարտերին:

1988 թ. ամռանը Ղևոնդ Հովհաննիսյանը Մեղրիում կազմավորեց 23 հոգանոց ջոկատ՝ ընդգրկվելով հատուկ գնդի կազմում՝ որպես վաշտ, և տեղափոխվեց Մեղրի, ձևավորվելով որպես մոտոհրաձգային գումարտակ, հետագայում՝ 1993 թ. համալրվեց որպես Մեղրու առանձին մոտոհրաձգային գունդ՝ որի հրամանատար նշանակվեց փոխգնդապետ Ղևոնդ Հովհաննիսյանը: Այն համախմբեց Խաչիկ Անդրեասյանի, Արայիկ Թումանյանի (22 հոգի), Սըմբատ Համբարձումյանի (23 հոգի), Խաչիկ Խաչատրյանի, Բորիկ Խաչատրյանի և Մեղրու

Մեղրու գումարտակ: Ձևավորվել է 1995 թ:

22 մյուս ջոկատները: Այն ընդգրկվեց Մեղրու գնդի կազմում, որը մարտնչում էր ՀՀ ԶՈՒ համակարգում՝ որպես առաջատար զորամասերից մեկը, Զանգեզուրի ինքնապաշտպանական մարտեր մղում Արաքսի ափից հասնելով Զանգելան, Ղուբաթլու, Ֆիզուլի, Հորադիզ, համագործակցելով Կապանի, Քաջարանի, Գորիսի ինքնապաշտպանական ուժերի հետ: Պաշտպանելով Կապանի, Սրաշեն, Տրիցադկա գյուղերի անվտանգությունը՝ Խոշլիդաղ բարձունքը: Վոլոդյա Ազատյանը, Համլետ Արզումանյանը, Վաչագան Աստանյանը իր սխրագործություններով, որը 1990 թ. ծառայել է ՀՀ ՆԳՆ ՄՕՀՋ, որպես վաշտի, այնուհետև գումարտակի հրամանատար, մասնակցել է Լաչինի, Կապանի, Մեղրու, Իջևանի Տավուշի, Նոյեմբերյանի, Ծամշադինի, Ֆիզուլու մարտերին: Վիրավորվել է բեկորային, հրազենային գնդակներից: Երբ ձևավորվեց Մեղրու գունդը, նա նշանակվեց փոխհրամանատար: Այժմ գնդապետ, ՀՀ ԿԳՆ համակարգում ղեկավարում է ռազմահայրենասիրա-

Մեղրու ՀՄՄ ջոկատը Նյուվադի պաշտպանության ժամանակ, 1991 թ.

կան դաստիարակչական գործընթացը: Մյուս ազատամարտիկների հետ ուս ուսի տված իրենց պայքարով փայլեցին քաջագործություններով:

Վարդան Ծմավոնի Գևորգյանը ծնվել է 1963 թ.-ին: Հոր քեռին՝ Ռոստոմ Սարդարյանը, եղել է Գարեգին Նժդեհի վաշտապետը, նրա թևութիկունքը: Լինելով ցարական բանակի սպա՝ երկու անգամ պարգևատրվել էր Գեորգիևյան խաչով:

Տան դուռը կրնկի վրա բաց էր: Վարդանը բազկաթոռին կիսաքուն պառկած էր: Երբ լսեց մեր ձայնը, տեղից վեր թռավ. «Այ դուք բարով եկաք, ես ձեզ վաղուց էի սպասում»:

Կինը՝ Սիլվան, տնային գործերով էր զբաղված: Երեխաները, հետաքրքրությունից շփոթված, շարվեցին մեր շուրջն ու զարմացած նայում էին անծանոթ մորուքավոր մարդկանց: Սիլվայի հոր քեռին՝ Տիգրան Հայրապետյանը, նույնպես Նժդեհի վաշտապետերից է եղել: Նրանք հպարտորեն էին պատմում իրենց նախնիների մասին, հարգանքով անդրադառնում ներկա օրերի արցախյան պատերազմին, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին:

Աջից՝ Հովհաննես Մարտիկյան, Վարդան Գևորգյան, բժիշկ՝ Վիկտոր Սարգսյան

Վարդանը համեստորեն լռում էր՝ ասելով. «Իմ կատարած գործերի մասին թող խոսեն իմ մարտական ընկերները, թող հայ ժողովուրդը գնահատի»:

Ծնչակտուր ներս մտավ Վարդանի մարտական անբաժան ընկերը՝ Սլավիկ Աշոտի Նավասարդյանը: Հիշեցի նրան, թե ինչպես էին Վարդանի հետ հասնում Չարենցավան, նռնակներ, արկեր, զենք տեղափոխում Քաջարան, զինում ազատամարտիկներին՝ Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի կոլեկտիվի կողմից հավաքված փողերով:

Քաջարանի ջոկատը Կապանի հետ ընդգրկվեց մայոր Վալերի Գրիգորյանի բրիգադի զորամասի կազմում: Լյովա Արշալույսի Եղիազարյանը, Սեյրան Սարոյանը, Խորեն Հակոբյանը նշված զորահրամանատարների հետ ուս ուսի տված, միասին,

Ձախից՝ Վարդան Գևորգյան, Մուրազ Սարգսյան, Սուրեն Խաչատրյան, Գ.Գաբրիելյան՝ մարտական ընկերներ, Կապան

մեկ ընդհանուր ճակատով պայքարում էին թշնամու ուժերի դեմ: Կարճևանի սարից մինչև Ալագյազ կամավորական ջոկատի հսկողության տակ էր: Ալագյազից մինչև Գազանալիճ հատվածը պաշտպանում էր Քաջարանի կամավորական ջոկատը. նա կանգնած էր Կապանի և Մեղրու ինքնապաշտպանական ուժերի թիկունքում: Կապանի առաջին ջոկատի կազմակերպիչը Համլետ Քոչարյանն էր: Հետագայում Վարդանի քրտնաջան աշխատանքի շնորհիվ ձևավորվեց Կապանի մոտոհրաձգային գումարտակը, և նա ընտրվեց որպես հրամանատար:

Վարդանի նախաձեռնությամբ Չարենցավանից զենքն ու զինամթերքը հասնում էր Քաջարան:

- Ձեռքի նռնակը փորձարկելու ժամանակ նետեցինք մետաղե տակառի մեջ. տակառը ցանց դարձավ: Տղաները ուրախությունից թռչկոտեցին: Այսպիսին էին մեր երջանիկ պահերը,-

Գնորգ Խաչատրյանը (զոհվել է Սոյուղում 1991 թ.) զավակի հետ:

Լյովա Արշավիրի Խաչատրյան
Ազարակի ԵԿՄ բաժանմունքի հրամանատար

հարգելի Մարտին,- զրույցի ժամանակ պատմեց Վարդանը, ապա շարունակեց.

- Գարուն էր: ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը եկավ Քաջարան, ծառերը ծաղկել էին: Մոտեցավ, ծաղկած ծիրանի ծյուղը գրկեց ու ասաց. «Վարդան, նայի՛ր, թե այս ծաղիկներն ի՞նչ բարի աչքերով են նայում աշխարհին: Դու, որ լեռնային ինժեներ ես, գիտուն մարդ, ի՞նչ կասես այս ծաղիկներին»:

- Պարոն ՍՊԱՐԱՊԵՏ, նրանք բարի աչքերով են նայում նորածնունդ հայկական անկախ պետությանը:

Քաջարանն ունեցել է 39 զոհ, որից 7-ը՝ 1992թ.-ի դեկտեմբերի 4-ին, Կապանի եղվարդ գյուղի ազատագրման ժամանակ:

- Ընկերներիս կորուստը մեծ ցավ էր ինձ ու բոլորիս համար: Ես անմիջական ուշադրություն եմ դարձնում նրանց ընտանիքներին,- ավելացրեց վերջում Վարդանը: Ծեշտելով, որ մեր ջանքերի գնով Կապանում կազմավորվեց հինգերորդ բրիգադը:

Աջից՝ Հովհաննես Մարտիկյան, Վարդան Գնորգյան, բժիշկ Վիկտոր Սարգսյան

ԿԱՊԱՆ ԳՈՒՄԱՐՏԱԿ

ՀՀ Կապանի զինկոմ փոխգնդապետ Լեոնիդ Կոլյայի Գրիգորյանը ծնվել է 1963թ. նոյեմբերի 3-ին Քաջարան քաղաքում: Ավարտել է Կապանի թիվ 13 միջն. դպրոցը, այնուհետև ընդունվել Կապանի շինարարական տեխնիկում, որն ավարտել է 1982թ.-ին: Ամուսնացած է, ունի երեք երեխա:

1982թ.-ին Կապանի զինկոմիսարիատից զորակոչվել է ԽՍՀՄ զինված ուժեր, ծառայել է ԳԴՀ-ում տեղակայված զորքերում՝ սկզբում որպես պարտադիր զինծառայող, այնուհետև՝ պայմանագրային զինծառայող: ԳԴՀ-ում ծառայել է մինչև 1988թ.-ի նոյեմբերը, այնուհետև տեղափոխվել Լենինգրադի զինվորական օկրուգ, Լենինգրադ քաղաքից ոչ հեռու գտնվող Սապյոռնեյե բանավան՝ որպես դասակի հրամանատար: Ծառայության ընթացքում վայելել է հրամանատարների և անձնակազմի սերն ու հարգանքը՝ բազմիցս արժանանալով խրախուսանքների և պարգևների: Գերմանիայում ծառայության 7 տարիների ընթացքում ոչ միայն աշխատել է իր պատիվն ու արժանապատվությունը բարձրացնել, այլև այլազգիների մեջ սեփական ազգի հեղինակությունը հաստատել:

Խուշլիդաղ բարձունքի ազատագրման ժամանակ: Զոհվեցին Հրաչիկ Մայիսի Ստեփանյանը, Գնորգ Ռազմիկի Խաչատրյանը, Նյուվադի, 1991 թ.

1988թ.-ի նոյեմբերից Լենինգրադի օկրուգ տեղափոխվելուց հետո լավագույն ծառայության համար 20 օր անց ընտանիքին հատկացնում են 3 սենյականոց բնակարան: Ծառայության ընթացքում ուշիուշով հետևում էր Հայաստանում և Արցախում տեղի ունեցող իրադարձություններին: Զգալով հայադրբեջանական հակամարտության պատերազմի վերաճման վտանգը, Լ.Գրիգորյանը 1989թ.-ին որոշում է ծառայության պայմանագրի ժամկետը չերկարաձգել, վերադառնալ հայրենի Կապան քաղաք և իր զինվորական փորձով օգտակար լինել սեփական ժողովրդին: Վերադառնալով Կապան՝ անմիջապես ներկայանում է զինկոմիսարիատ՝ խնդրանքով, որ եթե որևէ զինվորական ստորաբաժանում ստեղծվի, հաշվի առնեն իրեն և անպայման ընդգրկեն նրա կազմի մեջ: Սկզբնական

Գումարտակի առաջին զոհված ազատամարտիկ Սուրիկ Հովհաննիսյանի հուղարկավորությունը

շրջանում աշխատանքի է անցել «Կապան-տուրիստ» կոոպերատիվում և օր օրի ուշադիր հետևել տեղի ունեցող իրադարձություններին՝ համագործակցելով ինքնապաշտպանական ջոկատների և առանձին անհատների հետ: Լ. Գրիգորյանը 1991 թ.-ին ընդունվել է Երևանի տնտեսա-իրավագիտական ինստիտուտի իրավագիտության ֆակուլտետի հեռակա բաժինը, որն ավարտել է 1996թ.-ին:

1991թ.-ի ՀՀ Մինիստրների խորհրդի որոշմամբ Ներքին գործերի նախարարության Կապանի պահպանության բաժնին կից կազմավորվեց 120 զինվորներից բաղկացած հրաձգային գումարտակ, որի կազմում ընդգրկվեց Լ.Գրիգորյանը: Նշանակվելով դասակի հրամանատար և ունենալով զինվորական մեծ փորձ՝ ջանք ու եռանդ չխնայեց գումարտակի ձևավորման գործում: Գումարտակը Կապանի Ծղարշիկ բանավանի դպրոցի շենքում երկամսյա նախնական զինվորական պատրաստության դասընթացից հետո անցնում է զինվորական ծառայության՝ ստանձնելով սահմանամերձ տարածքներում տեղակայված կարևորագույն նշանակության օբյեկտների պաշտպանությունը: Գումարտակի զինվորները՝ ոգեշնչված հրամանատարների անձնվեր գործողություններով, մարտերի ժամանակ անօրինակ սխրանքներ էին գործում: Նրանցից երեքը հավերժ սրբացան՝ իրենց կյանքը նվիրաբերելով հայրենապահպանության, հիրավի, վսեմ նպատակի իրականացմանը:

Սահմանային ընդհարումները օր-օրի վերածում էին մարտական մեծամասշտաբ գործողությունների: Առկա էր պատերազմի վտանգը: Ակամա ստեղծվում էին ինքնապաշտպանական և կամավորական ջոկատներ: Անհրաժեշտ էր կոորդինացնել նրանց գործողությունները, այսինքն՝ ստեղծել պետական պաշտպանական կառույցներ:

1993թ.-ի հունվարի 1-ին Կապանում կազմավորվեց ՀՀ ՊՆ թիվ 97-րդ առանձին մոտոհրաձգային բրիգադը, որի հրամանատար նշանակվեց գնդապետ Մանվել Սեկտորի Գրիգորյանը: Պահպանության հրաձգային գումարտակից զորացրված բազմաթիվ զինվորներ Լ.Գրիգորյանի հետ համալրեցին նորաստեղծ բրիգադը:

Լ.Գրիգորյանը 1993թ. հունիսի 1-ին նշանակվեց բրիգադի 1-ին գումարտակի շտաբի պետի տեղակալ՝ կատարելով նաև

գումարտակի հրամանատարի պարտականությունները՝ նշված պաշտոնի թափուր լինելու պատճառով:

Արժանի է հիշատակել Վլադիմիր Ծահբազյանին՝ Վալիկոյին: Կամավոր ծառայության անցնելով կապանի փոստում, որպես մոտոհրաձգային գումարտակի հրամանատար, 1993 թվականի հոկտեմբերի 29-ի թեժ մարտերում զոհվում է՝ 34 նորակոչիկների կյանքը փրկելով: Արժանանում է Արիության մեդալի:

Այնուհետև 1993թ.-ի հոկտեմբերի 1-ին նշանակվեց նույն գումարտակի հրամանատար: Նա անմիջապես ձեռնամուխ եղավ գումարտակի զինծառայողների մարտական պատրաստության բարձրացման աշխատանքներին՝ շեշտը դնելով զինվորների բարոյահոգեբանական դաստիարակության վրա:

Ինչպես ասել է մեծն Նժդեհը, «Նախ հերոսների և նահատակների գերեզմանատուն, ապա նոր՝ ազատ և երջանիկ հայրենիք»: Առօրյա աշխատանքների գումարտակը մասնակցում էր Կապանի շրջանի Սրաշեն և Ներքին Հանդ գյուղերի հատվածի պաշտպանությանը:

1993թ.-ի դեկտեմբերին բրիգադի հրամանատար գնդա-

Առաջին զինվորական շքերթը Կապանում: Առջևից ընթանում է Լեոնիդ Գրիգորյանը, շքերթն ընդունում է Սամվել Սաֆարյանը: Զինված բանակը միշտ պատրաստ է դիմակայել թշնամու նենգությանը:

պետ Մ. Գրիգորյանը առաջադրանք ստացավ բրիգադի մի մասը իջեցնել ռազմաճակատի հարավարևելյան հատված, որտեղ գումարտակներից երկուսը ստանձնել էին Իրանի Իսլամական Հանրապետության հետ հսկվող ուղեկալները, իսկ մյուս գումարտակը Կապանի ու Քաջարանի երկրապահ ջոկատների հետ մարտական գործողություններ էր վարում Ժդանովի ուղղությամբ:

1994թ.-ի հունվարի 3-ին կտրուկ փոխվեց ռազմական իրադրությունը հարավարևելյան ճակատում: Հակառակորդն իր ամբողջ ուժերը կենտրոնացրեց Կապանի բրիգադի դիմաց և ամեն կերպ փորձում էր ճեղքել ռազմաճակատի պաշտպանական գիծը: Կատաղի մարտեր էին մղվում: Բրիգադի անձնակազմը, նրա մեջ ընդգրկված կամավորական ջոկատները արժանի հակահարված էին հասցնում, կասեցնում հակառակորդի ամեն մի առաջխաղացում՝ պատճառելով տեխնիկայի ու ռեսուրսների բազմաթիվ կորուստներ: Ցավոք, մեր բրիգադի կազմում ևս ունեցանք տեխնիկայի և մարդկային կորուստներ:

Աջից՝ Լեոնիդ Գրիգորյանը, գ.մ. Արշալույս Փայտյանը, Արամյիս Հարությունյանը մարտական ընկերների հետ

Այդ օրերին իր անմնացորդ նվիրվածությամբ աչքի ընկավ բրիգադի 1-ին գումարտակը՝ ավագ լեյտենանտ Լեոնիդ Գրիգորյանի գլխավորությամբ, որին վստահված էր ռազմաճակատի աջ թևի պատասխանատվությունը՝ Հանգելան-Բաքու մայրուղուց մինչև Արաքս ընկած Ղազախլար գյուղը: Իր առջև դրված առաջադրանքը գումարտակը կատարեց բարձր պատասխանատվությամբ և մեծ փառքով:

1994թ.-ի հունվարի 23-ին կատաղի մարտեր էին ընթանում ռազմաճակատի ամբողջ երկայնքով: Հերթական խնդիրը կատարելիս օգնության հասած ջոկատներից մեկին առաջադրանք տալու պահին Լ.Գրիգորյանը փորձում էր վերադասավորել ուժերը, սակայն չհասցրեց տալ վերջին հրամանը, լսեց թշնամու ականանետի ականի սուլոցը: Այդ ակնթարթին իր դիմաց կանգնած զինվորներին հրեց մոտակա փոսը, ուղղակի պառկեց նրանց վրա՝ իր մարմնով փակելով նրանց: Չարաբաստիկ ականը պայթեց ավագ լեյտենանտ Լ.Գրիգորյանից մոտ 1,5 մետր հեռավորության վրա: Հրամանատարը պայ-



Երդման արարողության ժամանակ: Հանգեզուր: Կապան

թած արկի բեկորից ծանր վիրավորվեց՝ ստանալով բեկորային բազմաթիվ միջանցիկ վերքեր և կոնտուզիա:

Ականատեսները պատմում են, որ Լ.Գրիգորյանին արնաշաղախ վիճակում, զինվորական բաճկոնի մեջ փաթաթած, մարտի դաշտից դուրս բերեցին իր իսկ փրկած զինվորները: Տեղափոխելով մոտակա Ղազախլար գյուղը, որտեղ ինժեներասակրավորական վաշտի հրամանատար Մ. Նավասարդյանը ցույց տալով առաջին օգնությունը, կանգնեցնում է «ՈՒՐԱԼ» բեռնատար ավտոմեքենան, որի թափքի մեջ զոհեր և վիրավորներ էին, Գրիգորյանին տեղավորում է մեքենայի հետևամասում և որպեսզի վայր չընկնի, իր զինվորներից մեկին հանձնարարում է պահել նրան:

Լ. Գրիգորյանին առաջին բուժօգնություն ցույց տվեցին զորամասի բուժմասում: Այդ մասին ահա թե ինչ է գրել իր հուշատետրում զորամասի բուժկետի բուժքույր, ավագ-լեյտենանտ Մ.Գևորգյանը.

«Այդ դաժան ու ծանր օրերից անհնար է մոռանալ 1994թ. հունվարի 23-ը: Երևի ամբողջ պատերազմի ընթացքում, իմ հաշվով, այդպիսի ծանր ու արյունալի օր չի եղել, ունեցել ենք 68 վիրավոր և 2 տասնյակից ավել զոհ: Չէինք հասցնում կարգին վիրակապ դնել, ցավազրկել: Մինչև մեկին օգնություն էինք ցույց տալիս, մյուսը ցավից տնքում էր: Այդ նույն չարագույժ հունվարի 23-ին էր, երբ վիրավորվեց նաև Լեոնիդ Գրիգորյանը՝ 1-ին գումարտակի հրամանատարը: Երբ Լեոնիդին դիրքերից իջեցրին բուժկետ, նա անգիտակից, խիստ

Լեոնիդ Գրիգորյան

Հայաստան ներխուժած ադրբեջանական բանակին օրորոցում սովորած մեր ցեղի հավատալիքների դաջվածքով: Կենտրոնում՝ Լեոնիդ Գրիգորյանը զինակից ընկերների հետ, Կապան 2006

ցավերի մեջ միայն տնքում էր: Ու շատ զարմանալի էր, որ իր հետ վիրավորված զինվորները բարձրաձայն գոչում էին. «Մենք՝ ոչինչ, հրամանատարի կյանքը փրկեք»:

«Ես էի, բժշկուհի Արևիկը և Սվետան: Արյան մեջ շաղախված շորերը հանեցինք, վիրակապ դրեցինք, ցավազրկեցինք: Մինչ կարմիր խաչի մեքենան կգար, նա ուշքի եկավ և չգիտեր, թե ինչ էր կատարվել իր հետ, ստիպում էր իր սպաներին, որ իրեն նորից դիրքեր տանեն, չէր կարող զինվորներին մենակ թողնել: Այդ ժամանակ շատ հուզված, ներս մտավ բրիգադի հրամանատար գնդապետ Մ. Գրիգորյանը՝ տեսնելով այդքան զոհ և վիրավորներ, մոտեցավ Լեոնիդին՝ թե դու պետք է մեկնես Կապանի հիվանդանոց, լավանաս, ապա հետ գաս: Բայց ի՞նչ իմանար գումարտակի հրամանատարը, որ մի ամսում չէր լավանա այդ վերքը, ոչ էլ այդքան հնարավորություն ունեին Կապանի հիվանդանոցում նրան վիրահատելու: Ստիպված եղան ուղղաթիռով Երևան տեղափոխել և այնտեղ վիրահատել»:

Տարիներ են անցել այդ օրվանից, բայց ոչ միայն վերքի

սպիները չեն վերացել, դա անհնար է, այլև մարդիկ են չարացել: Այսօր շատ հանգիստ կարող են վիրավորին, զոհվածի ընտանիքի անդամներին հաշվի չառնել: Բայց եթե մարդիկ կյանքում գոնե մեկ վայրկյան ապրեին նրանց կյանքով, ապրեին սարսափի ու ցավի մեջ, կխոնարհվեին ազատամարտիկների առաջ և կօրհնեին այն մայրերին, որ նրանց լույս աշխարհ են բերել: Էրեբունի բժշկական կենտրոնում 2,5 ամիս բուժվելուց հետո հենակներով Լեոնիդը վերադարձավ հարազատ զորամաս՝ իր անձնակազմի մոտ:

Հետագայում էլ գումարտակը մինչև պատերազմի վերջը՝ հրադադարի կնքումը, ակտիվորեն մասնակցեց թեժ մարտական պատասխանատու գործողություններին շնորհիվ գումարտակի շտաբի պետ լեյտենանտ Տիգրան Պետրոսյանի, գումարտակի հրամանատարի տեղակալ Սերգեյ Ծահնազարյանի, գումարտակի հրամանատարի սպառազինության գծով տեղակալ լեյտենանտ Արմեն Ոսկանյանի, գումարտակի հրամանատարի անձնակազմի հետ տարվող աշխատանքների

Ըստ Գարեգին Նժդեհի կտակի Կոզի աղբյուրում թաղված է աջը, ձախից՝ Արմեն Հարությունյան, Գագիկ Գինոսյան, Լեոնիդ Գրիգորյան, Գրիգոր Հարությունյան: Գարեգին Նժդեհի գերեզմանի մոտ, 1995 թ:

գծով տեղակալ լեյտենանտ Ռաֆիկ Տոնոյանի և գումարտակի հրամանատարի թիկունքի գծով տեղակալ Մարտուն Մուրադյանի:

Ավագ լեյտենանտ Լ.Գրիգորյանի վրա ցավալի տպավորություն թողեց գումարտակի երիտասարդ սպա լեյտենանտ Մարտիրոս Հայրապետյանի զոհվելու լուրը: Ռուսաստանի ռազմական ուսումնարանի երիտասարդ շրջանավարտը անմիջապես ընդգրկվեց 1-ին գումարտակի կազմում: Գումարտակի հրամանատարի բացակայության ժամանակ ստանձնեց հենակետի ղեկավարությունը և Հորադիզի ուղղությամբ կենաց-մահու մարտեր մղեց՝ փորձելով լուծել զոհված եղբոր՝ Արմեն Հայրապետյանի (Միկրոբի) վրեժը: Ծանր մարտերից մեկում եղբոր պես ինքն էլ մարտիրոսվեց՝ հավերժությանը հանձնելով իր վեհ անունը:

Պատերազմի այդ ժամանակահատվածում 97-րդ առանձին մոտոհրաձգային բրիգադը իր վրա վերցրեց հայ ազգի և հայոց պետականության հաստատման ճակատագրական

Կենտրոնում՝ ավագ լեյտենանտ Մելանյա Գևորգյանը, Լեոնիդ Գրիգորյանը իրենց մարտական ընկերների հետ Գ. Նժդեհի հուշարձանի մոտ:

կ-ն Մուրդ Կարապետյան

ավ.լ. Մելանյա Գևորգյան

խնդիրներից թերևս ամենաձակատագրականը՝ հարավարևելյան սահմանների պաշտպանությունը: Ցավոք, մարտական գործողությունների ընթացքում բրիգադը ունեցավ բազմաթիվ զոհեր և վիրավորներ, սպառազինության և տեխնիկայի կորուստներ, թեև անհավասար մարտերում թշնամու կորուստները հնգապատիկ ավելի էին: 1994թ.-ի մայիսին կնքվեց զինադադարի պայմանագիրը:

Արդեն փոխվել էր բրիգադի հրամանատարը: Գնդապետ՝ Մ. Գրիգորյանը նշանակվել էր օպերատիվ խմբի հարավարևելյան ուղղության հրամանատար, և նրան շնորհվել էր գեներալ-մայորի կոչում: Բրիգադի հրամանատար էր նշանակվել գնդապետ Վ. Հովհաննիսյանը, որին մի քանի ամիս հետո փոխարինեց երկու պատերազմների հերոս, 74-ամյա լեգենդար գեներալ-լեյտենանտ Քրիստափոր Իվանի Իվանյանը:

Գեներալ Իվանյանի ժամանակ 97-րդ ԱՄՀ-ն իրականացնում էր նշված սահմանագծի պաշտպանությունը ամբողջ առաջնագծի երկայնքով՝ կատարելով ինժեներական մեծածավալ աշխատանքներ: Լեգենդար գեներալը, օգտվելով ստեղծված զինադադարի հնարավորությունից, խնդիր դրեց բրի-

գադի 1-ին գումարտակի հրամանատարի առջև սեղմ ժամկետում կառուցել ուսումնական կենտրոն՝ իր մեխանիզացված հրաձգարանով, վաշտա-տակտիկական համալիրով և տանկային զորավարժարանով:

Լ. Գրիգորյանի ղեկավարությամբ 2 ամսվա ընթացքում Աշաղի-Մարալյանում վերակառուցվեց կիսաքանդ դպրոցի շենքը, որը պետք է ընդուներ մոտ 800 նորակոչիկ զինվորների: Կառուցվեց հրաձգարանը, վաշտա-տակտիկական ավտոմատացված համալիրը և տանկային զորավարժարանը:

Դպրոցի վերակառուցման ժամանակ գեներալը խնդիր էր դրել Կապանից եկած թվով 8 վարպետների օժանդակությամբ 7-օրյա ժամկետում զորանոցը պատրաստել սկզբնական շրջանում 400 զինակոչիկներ ընդունելու համար՝ իր բոլոր օժանդակ կառույցներով: Խնդիրը Լ.Գրիգորյանի ջանքերի շնորհիվ իրագործվեց 4 օրում, որի համար նա արժանացավ

ֆ.գ. Արարատ Մանուչարյան իր որդու և մայոր Գարիկ Ներսիսյանի հետ, Հորադիզ 1994 թ.

գեներալի վստահությանը, որպես զինվորական՝ նրա հավանությանը: Ուրախությունից ցնցվել էր գեներալը և հայտարարեց. «Դո՛ւ ճիշտ ես ընտրել քո մասնագիտությունը, «Կոմբատ»: Ի դեպ, նա միշտ այդպես էր անվանում Լ.Գրիգորյանին: Առիթից օգտվելով՝ Լ.Գրիգորյանը դիմեց խնդրանքով, որ մեկ օրով թույլատրի ծննդյան օրը հարազատների հետ անցկացնելու: Միանգամից փոխվել էին գեներալի դիմագծերը. «Ո՛չ մի տուն, ո՛չ մի ծննդյան օր, դու ծառայում ե՞ս քո հայրենիքին, թե՞ ծնունդ ես տոնում: Երբ խաղաղություն հաստատվի, այն ժամանակ էլ ծնունդ կտոնես: Անցի՛ր գործիդ, գործդ հասցրու ավարտին»:

Անհարմար դրության մեջ էր հայտնվել Գրիգորյանը, բայց ցույց չէր տալիս: Հաջորդ օրը բրիգադի հրամանատարը, իր բոլոր տեղակալների հետ միասին, առավոտյան ժամը 7-ին ժամանել էին ուսումնական կենտրոն և շնորհավորել Գրիգորյանին՝ ցանկանալով նրան միայն առողջություն:

Լեոնիդ Գրիգորյանը ծնողների հետ, իրենց զոհված զավակների շիրիմների մոտ:

Գեներալ-լեյտենանտ՝ Իվանյանի միջնորդությամբ ավագ լեյտենանտ Լ.Գրիգորյանը 1994թ.-ի դեկտեմբերին նշանակվեց բրիգադի հրամանատարի տեղակալ՝ մարտական պատրաստվածության գծով: Չնայած նա ընդդիմացավ, նախարարին խնդրեց ուղարկել իրեն ռազմական ակադեմիա, բայց նախարարը գտավ, որ նա համապատասխանում է նշված պաշտոնին և որ գեներալ-լեյտենանտ Իվանյանի առաջարկը քննարկման ենթակա չէ: Նշանակման հետ միաժամանակ նրան շնորհվեց կապիտանի զինվորական կոչում:

Վերադառնալով զորամաս՝ անմիջապես հանձնարարություն ստացավ՝ էլեկտրիֆիկացնել ուսումնական կենտրոնը, զորավարժարանը և ավարտին հասցնել այն: Որպես հրամանատարի տեղակալ՝ շուտով գործուղվեց ք. Երևան՝ «Հայէլեկտրո» գործարան՝ դիզելային շարժիչով գեներատոր ձեռք բերելու համար:

Ճմեռային անանցանելի ճանապարհներով, դժվարությամբ հասավ Երևան, ներկայացավ նախարար Վազգեն Սարգսյանին, զեկուցեց գալու նպատակը և փոխանցեց Իվանյանի խնդրանքը՝ ֆինանսավորել դիզել-գեներատոր ձեռք բերելու: Ապա ներկայացավ «Հայէլեկտրո» գործարանի գլխավոր տնօրեն Կարեն Դեմիրճյանին, որը շատ բարձր մակարդակով ընդունեց գեներալ-լեյտենանտ Իվանյանի տեղակալին, այնուհետև ասաց, որ ֆինանսավորումը շատ քիչ է այդ կարգի գեներատոր գնելու համար, սակայն եթե գեներալ Իվանյանն է դա պահանջում, մեծ սիրով կտրամադրի, քանի որ այն կծառայի ազգին: Կարեն Դեմիրճյանի հետ ծանոթանալով և զրուցելով՝ շոշափեցին մի շարք հարցեր, նույնիսկ՝ անձնական: Մեծ բավականություն ստանալով՝ նաև շատ հպարտ լինելով, հեռացավ նրա աշխատասենյակից, որտեղից էլ մեկնեց զորամասի տեղակայման վայր ու անցավ պարտականությունների կատարմանը:

Մի քանի օրից ավարտվեցին զորավարժարանների աշխատանքները, հաջողությամբ փորձարկվեց: Այդ օրը հնարավոր չէր մոռանալ գեներալի ուրախության արցունքները: Գրկում ու ողջագուրվում էր մասնագետ մեխանիզատորների հետ, շնորհակալություն հայտնում և ասում. «Դուք գիտե՞ք ինչպիսի մեծ աշխատանք եք կատարել մեր ժողովրդի համար: Այստեղ

զինվորները մարտավարություն սովորելուց հետո իրավունք կստանան մասնակցելու մարտական գործողություններին»:

Այնուհետև կապիտան Լ. Գրիգորյանի հիմնական պարտականությունը զինծառայողների մարտական պատրաստակամության բարձրացման և բարելավման խնդիրն էր: Բրիգադի բոլոր ստորաբաժանումները հերթականությամբ առանձին-առանձին հանվում էին մարտական դիրքերից և անցկացնում ուսումնավարժական պարապմունքներ, մարտական կրակով տակտիկական զորավարժություններ: Դրական գնահատական ստանալու դեպքում թույլատրվում էր նրանց մարտական դիրքերում փոխարինել մի այլ ստորաբաժանման: Այդ ընթացքում գեներալ Իվանյանի կողմից լավ ծառայության համար արժանացավ անձնական նվերի՝ ձեռքի ժամացույցի:

1995թ.-ին գեներալ-լեյտենանտ Ք. Իվանյանը նշանակվեց ՀՀ պաշտպանության փոխնախարար: Բրիգադի հրամանատար նշանակվեց գնդապետ Սեմյոն Խորենի Հակոբյանը, որին 1995թ.-ի սեպտեմբերի վերջին փոխարինեց գնդապետ Մանվել Սեկտորի Գրիգորյանը: Միավորվեցին թիվ 97 և թիվ 83 առանձին մոտոհրաձգային բրիգադները, կազմավորվեց թիվ 14 ԱՄՀԲ-ն: Հաստիքների նոր դասավորումից հետո կապիտան Լ. Գրիգորյանը նորից նշանակվեց բրիգադի հրամանատարի տեղակալ՝ ստանձնելով ուսումնական կենտրոնի պետի պարտականությունները: Նա անմիջապես ձեռնամուխ եղավ նորակոչիկներին հավուր պատշաճի ընդունելու և նրանց հետ երիտասարդ մարտիկի դասընթացներ կազմակերպելու և անցկացնելու աշխատանքներին: Որպես բրիգադի հրամանատարի տեղակալ՝ ծառայությունը շարունակեց մինչև 1996թ. հունվար ամիսը:

Պատերազմում ստացած վնասվածքների վատթարացման պատճառով գնդապետ՝ Մ. Ս. Գրիգորյանի միջնորդագրով ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի հրամանով նշանակվեց Կապանի զինվորական կոմիսար, ուր ծառայում է առ այսօր: Զինկոմիսարիատում լինելով նոր մարդ՝ առաջին իսկ օրից մշակեց մի շարք կարևոր հարցեր, որոնք հետագայում իրենց դրական ազդեցությունը թողեցին զինկոմիսարիատի աշխատանքների արդյունավետության վրա: Միշտ պատվով է կատարել զորահավաքային և զորակոչային պետական

առաջադրանքները, հաճախակի արժանացել պարգևատրումների, անձնական նվերների, ՀՀ ՊՆ ՀՀ ԶԿ-ի հրամաններով տրված այլ խրախուսանքների: Սերտ համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների, ՀՀ ԶՈՒ-ի ու ՌԴ զորամասերի և վետերան կազմակերպությունների հետ՝ վայելելով նրանց սերն ու հարգանքը: Կապանի փառքի սրահում հիմնել է ռազմահայրենասիրական դպրոց, որտեղ ուսանում են 8-10-րդ դասարանների աշակերտներ, որոնց մեծ մասը ընդունվում են բարձրագույն ռազմական ուսումնական հաստատություններ:

Ակտիվ համագործակցում է «Սյունյաց Արծիվներ» ե.հ/կ-ի հետ: Արժանացել է «Սյունյաց Արծիվներ» կազմակերպության

Արամայիս Հարությունյանը՝ աջից, մարտական ընկերների հետ, 1992 թ.

Զաքուխի Կարինեն իր 3 դուստրերի հետ, Ծուռնուխ, 1993 թ.

հիմնադրած «Լեռնահայաստանի արծիվ» ոսկյա հուշամեդալին: Պարգևատրվել է կառավարական պարգևով և այլ գերատեսչական մեդալներով: ՀՀ նախագահի հրամանով ՀՀ անկախության 7-րդ տարեդարձի առթիվ պարգևատրվել է «Արիության» մեդալով, այնուհետև՝ «Անբասիր ծառայության համար» մեդալով, «ԽԱՀՄ բանակի 70-ամյակի» մեդալով, ՌԴ-ն սահմանապահ զորքերի «2-րդ աստիճանի գերազանցիկ» կրծքանշանով, Հանրապետության զինկոմիսարիատների 80-ամյակի կապակցության մեդալով, պարգևատրվել է մի շարք մեդալներով, այդ թվում՝ «Գարեգին Նժդեհ» մեդալով:

Մանվել Արսենի Օհանյանը 1988թ.-ի փետրվարից կամավոր անդամագրվել է Ղարաբաղյան շարժմանը և զբաղվել կամավորական ջոկատների կազմավորմամբ: 1988թ. ապրիլին արդեն ստեղծվել էին կամավորական ջոկատներ և առաջացել էր ջոկատներին զենք-զինամթերքով ապահովելու խնդիրը: Օհանյանը ակտիվորեն մասնակցել է ջոկատների համար զենք-զինամթերք հայթայթելու գործին և կատարել անձնական դրամական ներդրումներ:

1989թ.-ին Կապան քաղաքի «Դավիթ Բեկ» ջոկատի ազատամարտիկների կողմից ընտրվել է ջոկատի հրամանատար: Մ. Օհանյանի և մի քանի կամավորական ջոկատների հրամանատարների ջանքերով ու առաջարկություններով Կապանի կամավորական ջոկատները միավորվեցին, և ստեղծվեց Կապանի «Երկրապահ» կամավորական ջոկատը: Օհանյանը մասնակցել է Կապանի շրջանի Կաղնուտ, Դավիթ Բեկ, Եղվարդ, Ագարակ, Փայլասար, Ղարաչիման, Սյունիք, Բանավան, Գեղանուշ, Ճակատեն, Ծիկահող, Սրաշեն և Ներքին Հանդ սահմանամերձ գյուղերի պաշտպանությանը:

1992թ.-ի ապրիլի 26-ին ջոկատով մասնակցել է Զանգելանի շրջանի Ղազանչի գյուղի գրավմանը և գյուղում տեղակայված կրակակետերի ոչնչացմանը: 1992թ.-ի հունիսին ջոկատը մասնակցել է Լաչինի միջանցքի պաշտպանական մարտերին: 1992թ.-ի հուլիսի 10-ին մարտական առաջադրանք կատարելիս վիրավորվել է Կապան-Գորիս մայրուղում՝ փրկելով մի քանի տասնյակ ուղևորների կյանքը:

1992թ.-ի դեկտեմբերի 10-ին ջոկատով մասնակցել է Զանգելանի շրջանի Սեիդլար և Տրիցատի գյուղերի գրավմանն ու կրակակետերի ոչնչացմանը՝ թշնամուն պատճառելով մարդկային և զրահատեխնիկայի մեծ կորուստներ: Հակառակորդը տվել է 12 զոհ, 2 զրահամեքենա, 1 հրանոթ ու զինամթերք: Նա ակտիվորեն մասնակցել է հետախուզական ծառայություններին: Մ. Օհանյանի գլխավորությամբ ու անմիջական մասնակցությամբ մի քանի անգամ հակառակորդից պատանդներ են բերվել ու փոխանակվել հայկական կողմից գերված խաղաղ բնակիչների ու զոհված ազատամարտիկների դիակներով:

1993 թ.-ի հունվարի 1-ին, «Երկրապահ» առանձին մոտոհրաձգային վաշտի ազատամարտիկների կողմից ընտրվել է հրամանատարի տեղակալ: 1991-ի հունիսի 1-ին Զանգելանի շրջանի Տրիցատի գյուղի մարտական դիրքերում ընտրվել է «Երկրապահ» առանձին մոտոհրաձգային վաշտի հրամանատար:

Օգոստոսին իր ակտիվ մասնակցությունն է ունեցել Կուբաթլուի շրջանի և շրջկենտրոնի ազատագրմանը: Հոկտեմբերի 29-ին մասնակցել է Զանգելանի և շրջկենտրոնի ազատագրմանը: Նոյեմբերի 25-ին՝ «Երկրապահ» առանձին

Աջից՝ Մանվել Օհանյանը մարտական ընկերների հետ, Զանգեզուր 1990 թ.

մոտոհրաձգային վաշտով տեղափոխվել է հարավարևելյան ծակատի Հորադիզ կայարանի մարտական դիրքերը: Դեկտեմբերին ԼՂՀ Հադրութի շրջանի զորամիավորումների հետ մասնակցել է Ֆիզուլիի շրջանի մի քանի գյուղերի ազատագրմանը և կրակակետերի ոչնչացմանը, վաշտով դիրքավորվել Բոյուկ-Բահմալու գյուղի բարձունքներում: Մարտական առաջադրանք կատարելիս թշնամուց առգրավել են 1 տանկ՝ Տ-72, 1 ՀՍՈ և տարբեր տրամաչափի զենք ու զինամթերք, որը հանձնվել է ԼՂՀ-ի պաշտպանական բանակին:

Բանակաշինության և մարտական գործողություններին ակտիվորեն մասնակցելու համար ՀՀ Պաշտպանության նախարարի կողմից խրախուսվել է, և թիվ 273 հրամանով նրան շնորհվել է ավագ լեյտենանտի կոչում: Սահմանների պաշտպանության և մարտական գործողությունների ժամանակ ստացել է բեկորային ու հրազենային տարբեր աստիճանի վերքեր և գլխուղեղի ցնցում (կոնտուզիա): Մ. Օհանյանը

01.06.1993թ.-ից մինչև 15.03.1995թ.-ը ծառայել է ՀՀ ՊՆ 84029 (54122) զորամասում որպես «Երկրապահ» առանձին մոտոհրաձգային վաշտի հրամանատար: Ներկայումս ՀՀ ԵԿՄ Կապանի տարածքային բաժանմունքի նախագահն է:

Արամայիս Արտավազդի Հարությունյանը՝ ընդգրկվելով Կապանի «Բաղաբերդ» թաղամասի ջոկատում, իր անբաժան մարտական ընկերոջ՝ Մանվել Օհանյանի հետ անցել է նույն մարտական ուղին և ունեցել նույն ճակատագիրը:

1988 թ.-ի փետրվարից մինչև 1994թ.-ի մայիսը տեղի ունեցած ՀՀ և ԼՂՀ սահմանների պաշտպանական և մարտական գործողությունների ժամանակ ցուցաբերած խիզախության և քաջության համար մի քանի անգամ պարգևատրվել է թանկարժեք նվերներով: 1995թ.-ի մարտի 15-ին Մ. Օհանյանը զորացրվել է երկարատև բուժման պատճառով:

Կապանի գնդի մի խումբ ազատամարտիկներ, 1991 թ. Մանվել Օհանյան (կանգնած երկրորդ շարքից ձախից երկրորդը), Արամայիս Հարությունյան (կանգնած առաջին շարքի երկրորդը)

97-ՐԴ(5-ՐԴ) ԲՐԻԳԱԴԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՂԻՆ

1988թ.-ին արցախահայության ազատատենչ բաղձանքը արագորեն վերածեց ազգային-ազատագրական հզոր շարժման՝ հանգեցնելով հայ-ադրբեջանական հակամարտության և լայնամասշտաբ ռազմական գործողությունների ոչ միայն Արցախում, այլև Հայաստանի Հանրապետության տարածքներում:

Աշխարհագրական դիրքի տեսակետից (երեք կողմից շրջափակված լինելով ադրբեջանական հարակից տարածքներով) թերևս ամենաանմխիթար վիճակում հայտնվեցին Կապանի և



Մարտակերտ, Պուշկին Յայի կռվից 1 օր առաջ, Կուսապատ, 1993 թ.

Մեղրու տարածաշրջանները: Սահմանամերձ գյուղերի և շրջկենտրոնների բնակչության անվտանգությունը ապահովելու նպատակով Կապանում, Քաջարանում ստեղծվեցին երկրապահ կամավորական ջոկատներ (հրամանատարներ՝ Մանվել Օհանյան, Հովիկ Մատինյան), ՀՀ Ներքին գործերի նախարարության հատուկ գնդի Կապանի սահմանապահ վաշտը (հրամանատար՝ Ռաֆիկ Ասրյան), Կապանի Ներքին գործերի նախարարության բաժնի պահպանության գումարտակը (հրամանատար՝ Օնիկ Ստեփանյան), իսկ գյուղերում՝ գյուղերի ինքնապաշտպանական ջոկատներ, որոնք գործում էին օրվա պահանջների թելադրանքով՝ չունենալով փոխհամագործակցության եզրեր և ընդհանուր նպատակային ծրագրեր: Կապան-Գորիս ճանապարհը դարձավ վտանգավոր և անցանելի, ինչից ելնելով՝ նշված մայրուղու երթևեկությունը իրականացվում էր ավտոշարասյուների միջոցով, որոնց անվտանգությունը ապահովում էր Կապանի սահմանապահ վաշտը: Սակայն 1991թ.-ի հունվարից վերջնականապես փակվեց Գորիս-Կապան մայրուղին, և Կապանն արտաքին աշխարհի հետ կապ ուներ միայն Տաթև-Աղվանի անավարտ ճանապարհի միջոցով, որը կոչվեց «կյանքի ճանապարհ»:

1992թ.-ի ապրիլի 24-ից Կապանի տարածաշրջանում սահմանային տեղական ընդհարումները վերածվեցին իրական պատերազմական գործողությունների: Այդ օրերին Կապանի զինկոմիսարիատում գեներալ մայոր Մուրազ Սարգսյանի, և զինկոմ, մայոր Վ. Քոչարյանի ղեկավարությամբ հավաքագրվեց և նշված օրերի ընթացքում ձևավորվեց Կապանի թիվ 100 ինքնապաշտպանական գումարտակը, հրամանատար՝ Ա.Ա-վանեսյան:

Զանգելանի և Ղուբաթլուի տարածքներից զանգվածաբար հրետակոծվում էին Կապան քաղաքն ու սահմանամերձ Ներքին Հանդ, Ծավ, Սրաշեն, Ծիկահող, Ճակատեն, Գեղանուշ, Սյունիք, Ագարակ, Եղվարդ, Կաղնուտ, Դավիթ Բեկ և մյուս բնակավայրերը: Կառուցված հողային պատնեշները և անցողիկ ճանապարհները ի վիճակի չէին ապահովելու և երաշխավորելու բնակչության անվտանգությունը: Օրակարգի խնդիրն էր՝ հավաքագրել գործող բոլոր խմբերն ու ջոկատները, կոորդինացնել նրանց գործողությունները, և

միջոցներ ձեռնարկել՝ վերացնելու հակառակորդի առավել նպաստավոր հենակետերը:

Այդ խնդիրը իրականացնելու նպատակով 1992թ.-ի նոյեմբերին ՀՈՒ գլխավոր շտաբի պետ գեներալ լեյտենանտ Հ. Անդրեասյանի կողմից մշակվեց ռազմավարական մի ծրագիր, որը նպատակաուղղված էր հարակից տարածքներից թշնամուն ետ շպրտելուն: Օպերացիայի ղեկավար էր նշանակվել գնդապետ (այժմ՝ գեներալ լեյտենանտ) Յու.Գ. Խաչատուրովը, իսկ Կապանի շրջանի պաշտպանության ընդհանուր հրամանատար գնդապետ՝ (այժմ՝ գեներալ-լեյտենանտ) Մ. Գրիգորյանը: Նա այստեղ էր տեղափոխվել 1992թ.-ի նոյեմբերի սկզբներին՝ իր հետ բերելով հրետանային մեկ մարտկոց (Դ-20) և բազմաթիվ զինակիցներ իր նախկին բրիգադից: Նշված օպերացիայի նախապատրաստական և հետախուզական աշխատանքներն անձամբ իրականացնում էր գնդապետ Մ.Գրիգորյանը: Միաժամանակ նա Կապանում ստեղծեց օպերատիվ շտաբ, որտեղ իրականացնում էր բոլոր կազմակերպչական աշխատանքները: Այդ կարևորագույն մարտական խնդիրն ի կատար ածվեց 1992թ.-ի դեկտեմբերի 10-ին, մարդկային փոքրաթիվ կորուստներով, որից հետո Կապան քաղաքը վերստացավ իր բնականոն կյանքը՝ դուրս գալով խղճալի իրավիճակից: Բացվեցին Ներքին Հանդ, Ծավ, Ագարակ, Եղվարդ գյուղերի ճանապարհները: Սակայն թշնամին չէր հանգստանում, ամեն րոպե փորձում էր հակահարձակման անցնել՝ ետ վերցնելու կորցրած տարածքները:

1992թ.-ի դեկտեմբերի 12-ին թշնամու 2 ռմբակոծիչներ ներխուժեցին Կապանի օդային տարածք (8 հատ ավիառումբ գցեցին) և ռմբակոծության ենթարկեցին քաղաքը: Հոգվեցին մի քանի տասնյակ խաղաղ բնակիչներ: 1992թ.-ի դեկտեմբերի 24-ին թշնամու ուժերը գաղտագողի և անսպասելիորեն մտան Ագարակ գյուղը՝ նպատակ ունենալով էլ ավելի առաջանալ: Սակայն կարճ ժամանակաընթացքում մեր տղաները կարողացան պարտության մատնել թշնամուն, հետ շպրտել գյուղից՝ պատճառելով մարդկային և տեխնիկայի կորուստներ:

1993թ.-ի հունվարի 1-ին ՀՀ Պաշտպանության նախարարի հրամանով Կապանում ստեղծվեց 97-րդ առանձին մոտոհրաձգային բրիգադը, որի կազմի մեջ մտան տարածքում գործող

բոլոր զինվորական ստորաբաժանումները, որի հրամանատար նշանակվեց գնդապետ Մանվել Գրիգորյանը, իսկ շտաբի պետ՝ փոխգնդապետ Սերգեյ Կարապետյանը: Ստեղծման առաջին իսկ օրվանից բրիգադը լուծելով կազմակերպչական բազմաբնույթ հարցեր, միաժամանակ լայնածավալ մարտական գործողություններ էր վարում Կապանի և Մեղրու սահմանների ամբողջ երկայնքով: Բրիգադի կազմում ձևավորվեցին տարբեր զորամասեր, որոնց հրամանատարները իրենց զինվորների հետ՝ ոգու կանչով մարտի նետվեցին՝ պաշտպանելու հող-հայրենին: Թիվ 1 մոտոհրաձգային գումարտակը՝ հրամանատար Լեոնիդ Գրիգորյան, թիվ 2-րդ ՄՀ՝ հրամանատար Վարդան Ալեքսանյան, թիվ 3-րդ ՄՀԳ՝ հրամանատար Արամայիս Հարությունյան, թիվ 4-րդ ՄՀԳ՝ հրամանատար Արայիկ Թումանյան, ապա՝ Կառլեն Հակոբյան, թիվ 5-րդ ՄՀԳ՝ հրամանատար Արամայիս Ավանեսյան, ապա՝ Արարատ Մա-

Փրկամայի Հախմախթաղ, 1992 թ.

նուչարյան, թիվ 6-րդ ՄՀԳ՝ հրամանատար Մարտուն Բաղալյան, ապա՝ Սպարտակ Ստեփանյան, թիվ 7-րդ ՄՀԳ՝ հրամանատար Արթուր Մարտիրոսյան, տանկային վաշտի հրամանատար՝ Ռուբիկ Աբրահամյան, հրետանային դիվիզիան՝ հրամանատար Սամվել Պողոսյան, հրթիռա-զենիթային դիվիզիան՝ հրամանատար Գառնիկ Հակոբյան, հակատանկային դիվիզիան՝ հրամանատար Վարուժան Մանուկյան, ապա՝ Վարդան Գևորգյան, հետախուզական վաշտ՝ հրամանատար Արթուր Գևորգյան, ինժեներասակրավորային վաշտ՝ ծառայության պետ Սլավիկ Բաղդասարյան, վաշտի հրամանատար Մանվել Նավասարդյան:

Այս ձևով ստեղծվեց հետագա փառավոր հաղթանակների ընդունակ մի զորեղ ռազմական ուժ, որը կարողացավ պատվով դուրս գալ իրեն վիճակված անհավասար գոյամարտում՝ ի չիք դարձնելով երկու պետությունների՝ Թուրքիայի և Ադրբեջանի միջև անմիջական կապ ստեղծելու նվիրական երազանքը:

1993թ.-ի ապրիլի 10-ին հակառակորդը, ծածուկ մտնելով

Հետախուզական ջոկատը Կապանում

անցնելով մեր սահմանը, անցավ Ծիկահող գյուղի թիկունքը՝ մտադրվելով փակել գլխավոր մայրուղին և գրավել Ծիկահող, Սրաշեն, Ներքին Հանդ, Ծավ և Ծիշկերտ գյուղերը: Սակայն բրիգադի հրամանատարության, անձնակազմի խիզախության և մարտական բարձր ոգու շնորհիվ թշնամին ետ շպրտվեց՝ կրելով մեծաթիվ կորուստներ: Բրիգադի առաջնային խնդիրը դարձավ Մեղրու, Կապանի սահմանների ամրապնդումը և նրա պաշտպանության կազմակերպումը, որը իրականացվեց տառացիորեն հաշված օրերի ընթացքում:

1993թ.-ի հոկտեմբերին բրիգադի հրամանատության առջև խնդիր դրվեց՝ համագործակցել ԼՂՀ զորքերի հետ, մասնակցել Կուբաթլուի, այնուհետև՝ Զանգելանի, Մինջավանի ազատագրման մարտական գործողություններին, որոնք նույնպես հաջողությամբ ու փառքով իրականացվեցին: Մասամբ ազատագրվեցին պատմական Սյունիքի նախկին տարածքները, որով էլ պայմանավորվեց Զանգեզուրի խաղաղությունը: Այնուհետև բրիգադի հրամանատարության առջև խնդիր դրվեց իրականացնել Արաքս գետի երկայնքով Իրանի հետ սահմանի հսկողությունը, միաժամանակ զբաղեցնել Հորադիզ կայարանի հատվածում տեղակայված ղարաբաղյան զորքերի երկրորդ ծակատային գիծը: Սակայն այդ օրերին ռազմական իրադրության կտրուկ փոփոխության հետևանքով որոշում ընդունվեց զբաղեցնել ծակատային առաջին գիծը՝ մարտի մեջ մտնելով հակառակորդի հետ:

Թշնամին հսկայական ուժերով և տեխնիկայով նոր հարձակման անցավ: 1994թ.-ի հունվարի 6-ի առավոտյան թշնամու հրետանային կարկտահարումը ուժեղանում էր, ընթանում էր թեժ ու դաժան ծակատամարտ: Հակառակորդը ձգտում էր օղակի մեջ առնել բրիգադի անձնակազմին: Հայ զինվորները ձմռան այդ բքաշունչ օրերին մարտնչում էին, ինչպես իրենց նախնիները՝ Ավարայրում, Հալիձորում, Սարդարապատում: Ուժերը անհավասար էին, զոհերը գնալով ավելանում էին: 6-րդ գումարտակը ընկավ շրջափակման մեջ, բայց հրամանատար Մարտուն Բաղալյանի գլխավորությամբ հերոսաբար դիմադրում էր: Մարտուն Բաղալյանը ծանր վիրավորվեց, և մի շարք սպաների ու զինվորների հետ մնաց ազերիների տարածքում: Շրջափակվեց նաև հրետանային

մարտկոցը՝ իր ողջ անձնակազմով ու տեխնիկայով: Ցավոք, առ այսօր անհայտ է նրանց ճակատագիրը: Մարտերի ընթացքում ծանր վիրավորվեց նաև 3-րդ գումարտակի հրամանատար Արամայիս Հարությունյանը: Բրիգադի հրամանատարության ճկուն, խելամիտ տակտիկայի շնորհիվ թշնամու առաջխաղացումը կասեցվեց, և բրիգադը նախապատրաստվեց հակահարձակման: Այդ մարտերի ընթացքում վիրավորվեց նաև տանկային վաշտի հրամանատար Ռուբիկ Աբրահամյանը, որի մեքենան պայթեց թշնամու դարանակալած ականից: Մարտերը հետզհետե ավելի կատաղի բնույթ էին ստանում: 1994թ.-ի հունվարի 23-ին հակահարձակման ժամանակ թշնամու ականից ծանր վիրավորվեց նաև 1-ին գումարտակի հրամանատար՝ Լեոնիդ Գրիգորյանը:

Հունվարի 26-ին թշնամին կրկին փորձեց ներխուժել բրիգադի աջ թևը: Օգնության հասավ հրթիռահրետանային դիվիզիայի հրամանատար Սամվել Պողոսյանը, և իր «Գրադ» կայանքով ուղիղ նշանառությամբ կասեցրեց թշնամու առաջխաղացումը, որը տալով բազմաթիվ կորուստներ՝ հետ նահանջեց: Սակայն թշնամին չէր հաշտվում պարտության մտքի հետ և տենդորեն կուտակում էր ռազմական տեխնիկայի և մարդկային բազմիցս գերազանցող միջոցներ՝ նպատակ ունենալով հակահարձակման անցել և ձեղքել 97-րդ բրիգադի պաշտպանության գիծը :

Վարդանը, Վահանը, Ռոստոմ Գասպարյանը (կքանստած) մարտական ընկերներով Վազգեն Սպարապետի հետ, 2-րդ երկրապահի համագումարի ժամանակ

1994թ.-ի ապրիլից վերսկսվեցին մարտական կատաղի գործողությունները: Հսկայական ուժերով թշնամին հակահարձակման անցավ համարյա ողջ ճակատով: Մարտական գործողությունները դաժան բնույթ էին կրում հատկապես Հորադիզ գյուղի ուղղությամբ, 5-րդ գումարտակի պաշտպանության գծի երկայնքով (հրամանատար՝ Ա. Մանուչարյան): Առավել ակտիվ էին հակառակորդի տանկերն ու զրահամեքենաները: Նրանց դեմ պայքարում հերոսացավ հակատանկային դիվիզիայի հրամանատար՝ Վարուժան Մանուկյանը, որը իր «Ծտուրմ» զրահամեքենայով խիզախորեն մարտնչում էր թշնամու տեխնիկայի դեմ, ուղիղ նշանառությամբ գրոհում հակառակորդի տանկերի վրա: Սակայն թշնամու «Ֆագոտից» արձակված հրթիռը անսպասելիորեն մխրճվեց զրահամեքենայի մեջ, որի հետևանքով Վ. Մանուկյանը հերոսաբար զոհվեց:

Կատաղի մարտերը շարունակվում էին, բայց և այնպես, չնայած թշնամու տեխնիկայի և մարդկային գերազանցող ուժերին, Կապանի բրիգադը կարողացավ կասեցնել թշնամու առաջխաղացումը, մեծ կորուստներ պատճառելով նրան, և ստիպեց հետ կանգնել իր մտադրություններից:

1994թ.-ի մայիսի 12-ին կնքվեց զինադադարի պայմանագիրը: 97-րդ առանձին մոտոհրաձգային բրիգադը իր վրա վերցրեց և պատվով իրագործեց հայ ազգի ու հայոց պետականության հաստատման կարևորագույն խնդիրներից թերևս ամենաճակատագրականը՝ հարավարևելյան սահմանների պաշտպանությունը:

Երիցս փառք ու պատիվ այդ պայքարում նահատակված հերոսներին, այդ պայքարում հերոսացած զորամիավորման քաջարի մարտիկներին ու հրամանատարներին:

Զինադադարից հետո մինչև 2001թ.-ը բրիգադը պաշտպանություն իրականացրեց հարավարևելյան սահմաններում: Այդ ժամանակահատվածում բրիգադի հրամանատարությունը

ստանձնեցին այնպիսի լեգենդար անուններ, ինչպիսիք են՝ գնդապետ Վանիկ Հովհաննիսյանը, գեներալ-լեյտենանտ Քրիստափոր Իվանյանը, գեներալ-մայոր Սեմյոն Հակոբյանը, Արցախի հերոս գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանը, գեներալ-լեյտենանտ Արթուր Աղաբեկյանը, գնդապետ Արթուր Գրիգորյանը:

Այնուհետև 14-րդ բրիգադը կազմալուծվեց և ձևավորվեց 14-րդ ԱՄՀ-ը, որի մարտական հերթապահությունը հանձնելով Արցախի ինքնապաշտպանական ուժերին, տեղափոխվեց մշտական տեղակայման վայր՝ Կապան: Այնուհետև գնդի հրամանատարությունը ստանձնեցին գնդապետ Դավիթ Աղաջանյանը, և զորամասի ներկայիս հրամանատար, գնդապետ Արայիկ Վարդանյանը:

Հազար փառք հայոց բանակին, հաղթանակած հայ զինվորին, հազար փառք պատերազմի բովով անցած ազատամարտի բոլոր մասնակիցներին: Այս ամենին անմասն չմնաց Զանգեզուրը, մասնավորապես Պարսկաստանին և Նախիջևանին սահմանակից Մեղրին: Մեղրիի գումարտակը հերոսաբար պաշտպանեց հայոց սահմանները, ապա հասավ Ֆիզուլի, Հորադիս, Կուբաթլու, Քաշաթաղ և այլ շրջաններ:

Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻ խոսքերով ասած՝ մեր նախնիների շունչն ու հոգին հողի կանչով մեզ հանգիստ չեն տալիս:

Հազարավոր տարիների պատմական անցյալի ապրումներով, հայացքն ուղղած Արագածի պսակաձև չորս գագաթներին՝ նայում է Արարատի ծերմակ կատարին:

Աստվածատուր իր շնչով, հոգու պատուհանով բնության այդ հսկան զգում էր, թե ինչպես է Մասիսն իր ուսերին խաղաղ տարել Նոյան Տապանը:

Արարատյան դաշտի քանի՞ արշալույսներ են եղել, որոնք երկնքի արևի վարդագույն շողերով ողողված՝ շոյել են այդ նորածին երեխայի այտերը, իսկ հիմա համբուրում են ադամանդե ծակատը և բարի ճանապարհ մաղթում ՀՀՊ նախարարության շենք: Նա քաջալերում էր ամենօրյա հայրենանվեր աշխատանքը, փառք ու հպարտություն սփռում ազատամարտիկներ հոգում, որ հայ մարդը զգա իր մեծությունը, հնամենի լինելը, արժեքն այս աշխարհում: Ոչ թե որոշ անհատների ու խմբերի պես Հայաստանում ու դրսում, որոնք մի քանի տարի

հետո Հայաստանում 80-ից ավելի կուսակցություններ ստեղծեցին, որ փորձանք են հայ ազգի գլխին: Անձնական, շահամոլական, փառամոլական իրենց ձգտումներով նրանք՝ ընդհատակյա խավար ուժերի հետ անգիտակցորեն միավորված՝ քանդում և ավիրում են Հայաստանը: Դիմանալն անհնար է այս ամենին:

Մամուլն էլ՝ հետևելով իր շահին, դառնում է ծախու, ամեն ինչ փչացնող, զուրկ ազգային բնույթից, մեկուսի, խորթ: Չար ուժերի ձեռքին այն հեշտությամբ դառնում է հլու-հնազանդ խաղալիք և թույն է թափում իր իսկ ժողովրդի գլխին, շեղելով նրան պետականությունից: Այն նման է հսկա կաղնու փարթամ տերևները փչացնելուն: Ներծծվելով կաղնու կենսահյութի մեջ, չորացնում է այն: Չորացնում է արմատապես, քանի որ մամուլն իր մեջ չի ֆիլտրում արտաքին աշխարհի շահադիտական աղմուկը: Եթե ֆիլտրի, կտեսնի այն խորքայինը, որ ամենօրյա գործունեությամբ հսկում է ազգային շահերը, դիմադրում արտաքին չար ուժերին, բայց չի արտահայտվում: Զգացումով պիտի ընկալել իրական ճշմարտությունը, ապրելուն անհրաժեշտ արվեստը՝ հոգով ու սրտով:

Վազգեն Սարգսյանը անսահման մեղմ էր և բնածին արժանապատվությամբ օժտված: Հայ ցեղի բնավորության տեր լինելով՝ հարազատ իր ժողովրդին, ծառայում էր ի սրտե, արյան թելադրանքով, ազգային էր՝ համաժողովրդական: Ամեն ինչից անկախ՝ նա Մեծ էր մշտապես:

Վլադիմիր Չահրազյան
զոհված

Անդրանիկ Թոռնիկյան
ՀՕՊ ծառայություն

Վաչագան Ասլանյան
գնդապետ, Մեղրի

ԵՐԵՎԱՆԻ ԳՈՒՄԱՐՏԱԿԸ 5-ՐԴ ԲՐԻԳԱԴԻ ԿԱԶՄՈՒՄ

Տիգրան Անուշավանի Մարտիրոսյանը լավ ճաշատեսակներ էր պատրաստում, արժանացավ խոհարարի վստահությանը: Երևանի գումարտակը ընդգրկվեց 5-րդ բրիգադի կազմում: Տիգրանը ասող-խոսող, հավեսին տղա էր:

Մարտակերտի Կուսապատ գյուղի մարտերից հետո կարճ հրադադար էր: Սննդի պակասությունը նեղել էր տղաներին:



Տանկիստ Սահակը (կենտրոնում) Հաթերքի էդիկը (ձախից) և Աշոտը (զոհված), Առաջաձոր, 1992 թ.

Տիգրանը քափ-քրտինքի մեջ էր, հացի մասին էր հոգում: Սահակ Եդիգարյանն ու Ալբերտ Ղազարյանը զրուցում էին մարտական ընկերների հետ: Թշնամու արկը մեխվեց հենց ուղիղ տղաների կողքին՝ հողի մեջ: Բեկորը ծակեց Ալբերտի կոշիկի կրունկը՝ ոտքի վրա թողնելով անջնջելի հետք:

Երկու օր անդադար արկերը կարկուտի պես թափվում էին տղաների գլխին: Սահակը ծնվել է 1951թ. Արմավիրի շրջանի Արմավիր գյուղում: Ղարաբաղյան շարժման առաջին օրից ճանաչում եմ Սահակին: Կամավոր զինվորներից էր, ջոկատի հրամանատար: 5-րդ բրիգադի թիկունքի պետը Միհրանն էր, որոնք հինգ եղբայրներ էին:

Հայոց ցեղասպանությունից փրկված սասունցի Սարգիսը, որի 7 որդիներ՝ Հրանտ, Գևորգ, Հայկ, Սուրիկ, Սուշեղ, Միրան, Արմեն, Ծմայլս Մովսիսյաններից 5-ը բախտ են ունեցել մասնակցելու արցախյան պատերազմին, արժանացել են արիության մեդալների, իսկ վերջին երկուսը՝ «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշաններով: Գերիների նկատմամբ եղել ենք մարդկային: Մեծ Ծենում բրիգադի գլխավոր շտաբի խոհանոցում թուրք 22-ամյա ռազմագերուն հատկաց-

Մովսես և Ծմայս եղբայրները Պարգև Սրբազանի, հոգևոր առաջնորդ Գրիգորիսի, Պետրոս Մակեյանի և մարտական ընկերների հետ, Մաղավուզ, 1994թ

ված էր պահեստը, սննդամթերքը, խոհանոցը, որը ճաշ էր պատրաստում և սպասարկում:

1993թ. Մարտակերտի Արջաձոր գյուղում տեխնիկային տիրապետող մարդկանց էին հավաքագրում: Սահակն առաջինը ընդգրկվեց զրահատանկային խմբի մեջ: Ալբերտ Վոլոդյայի Մայիլյանը, Սարգիս Վազգենի Հովսեփյանը և ուրիշներ, թվով 10 հոգի, կամավորներ, Սահակն էլ իր տանկով, որպես մեխանիկ-վարորդ, մասնակցեցին Սարսանգի ջրամբարի՝ Ումուդլուի, Վաղուհասի, Չլդրանի, Դրմբոնի, Մեծ Շենի, Մոխրաթաղի ազատագրման մարտերին:

Մոնթեի գումարտակի հետ Սահակը մասնակցել է Քարվաճառի ազատագրմանը: Հմուտ տանկիստ էր, մեծ փորձ ուներ: Աչքի էր ընկնում իր խիզախությամբ, ռազմական արվեստի մեծ գիտակ էր: Լինելով տանկի մեխանիկ-հրամանատար՝ տիրապետում էր իր գործին: Սահակը պարգևատրվել է «ԼՂՀ մարտական ծառայության» մեդալով:

Երևանի գումարտակ: Թիկունքի գծով զինծառայողները Ուջանում, 1993 թ. Քարվաճառը ազատագրելուց հետո Կենտրոնում Սահակ Եդիգարյանը մարտական ընկերների հետ

Առաջին տանկով 1993թ. գարնանը գրոհում էինք դեպի Օմարի գագաթ: Չորս անգամ հակատանկային ականի վրա պայթել է: 1993թ. օգոստոսի 18-ին Ֆիզուլիում ականի պայթյունից ծանր վիրավորվեց և կոնտուզիա ստացավ: Պատգարակի վրա պառկած՝ նրան տեղափոխեցին հոսպիտալ: Վիրավոր վիճակում էլ անդադար մտահոգված էր զենք-զինամթերքի հայթայթման գործով:

1992թ. դեկտեմբերին հատուկ գնդի՝ Աշտարակի վաշտում մարտական տագնապ հայտարարվեց: Վաշտի տղաներից մի խումբ մեկնեց Քաշաթաղ: Երբ վաշտը շարվեց, հրամանատարը հրահանգեց՝ Քաշաթաղ (Լաչին) մեկնել ցանկացողները երեք քայլ առաջ գան: Գրեթե ողջ վաշտը առաջ եկավ, նրանց մեջ էր նաև 1-ին գնդի 1-ին ջոկի հրամանատար՝ Լևոն Օհանյանը: Ընդամենը երեք քայլ, բայց... այդ քայլերը հենց այնպես չեն անում: Դրանք քայլեր են, որ խոսում են բնավորության, կերտվածքի, կամքի, հայրենիքի հանդեպ վերաբերմունքի ու

Երևանի գումարտակ: Մի խումբ ազատամարտիկներ: Կենտրոնում, կանգնած Սահակ Եդիգարյան, Մարտակերտ Մեծ Շեն, 1993թ

զինվորի պատասխանատվության մասին ու նաև նախապատմություն ունեն և ընթացք...

Լևոնն առաջին քայլն արեց թերևս այն օրը, երբ թողեց ուսումն ու գնաց բանակ: Պոլիտեխնիկական ինստիտուտի 4-րդ կուրսի ուսանող էր: Գերազանց ավարտել էր դպրոցը, լավ մասնագետ էր լինելու: Սակայն հայրենիքը զինվորի կարիք ուներ, և Լևոնն ընտրեց զենքը, մեկնեց ռազմադաշտ՝ մարտնչելու: Հունվարի 14-ին մառախլապատ ձմեռային այն օրը, երբ թշնամին գաղտագողի փորձում էր սողոսկել Քաշաթաղի միջանցքը, կտրել Արցախը Մայր հայրենիքին կապող արյունատար երակը, կատաղի մարտ էր բորբոքվել: Թշնամին ուժեղ էր, հայերն աննահանջ պաշտպանվում էին: Լևոնը վիրավորվեց ոտքից: Նրան տեղափոխեցին գետնատուն, առաջին օգնություն ցույց տվեցին, սակայն Լևոնը չէր կարող մարտին անմասն մնալ: Ցավը հաղթահարելով՝ սկսում է լիցքավորել ինքնաձիգ պահունակներն ու գնդացիրի ժապավենները:

Հերթական անգամ, երբ մարտիկներից մեկը՝ Ռուբենը,

Երևանի զումարտակը 5-րդ բրիգադի կազմում, Սարսանգ, 1993թ

եկավ լիցքավորված պահունակներն ու ժապավենները տանելու, ընկավ թշնամու նշանառուի գնդակից: Լևոնը տեսավ ընկերոջ ընկնելը: Վիրավոր ոտքը քարշ տալով՝ ելավ գետնատնից, սողեսող հասավ վիրավորին, շալակեց ու ... ընդամենը երեք քայլ էր մնացել մինչև ապաստարան, երբ նշանառուի գնդակը հասավ նաև նրան: Ցավոք, ընկերոջը փրկելու խիզախ քայլը, ազնիվ ու վեհ հոգու այդ անձնվեր պոռթկումը վերջինն էր Լևոնի կյանքում: Գեղամ և Խաչիկ Ծահենի Գասպարյան եղբայրները արմատներով մշեցու ծոռ են: Ղուկասավան, Գետափ, Գեղանիստ, Արգավանդ գյուղերից կազմված «Զորավար Անդրանիկ» ջոկատի հրամանատար Խաչիկ Գասպարյանը իր ջոկատով ընդգրկվեց Ղռերի, Վանաձորի, Ծամշադինի, Իջևանի, Վարդենիկի, Արարատի, Ավշարի, Մասիսի «Զորավար Անդրանիկ» միացյալ գնդի կազմում, որի հրամանատարն էր՝ Գնել Մանուկյանը՝ մասիսցի Գագոն: Խաչիկը ունեն ինժեներ-մեխանիկի մասնագիտական բարձրագույն կր-

Գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանը (աջից) Կիմ Գիլոյանի հետ, Հադրութ, զոհված ազատամարտիկների հուշարձանի մոտ

Աջից երրորդը՝ Ավետիս Լալայան Երևանի գումարտակ

Առաջածոր, 1993թ. Մարսանգը ազատագրելուց առաջ: Մարտակերտի Առաջածորի դպրոցի բակում: Աջից երկրորդը դասակի հրամանատար Տիգրան Մարտիրոսյան, 1993թ

թություն: «Վազգեն Սարգսյանին Երասխավանի կռիվների ժամանակ եմ ճանաչել, մեր ջոկատը ուղարկեց Մարմարաշեն գյուղ, այնտեղից Հադրութ: Սպիտակաշենի, Պետրոսաշենի, Արփագյուղակ գյուղերի ինքնապաշտպանության մարտերի ժամանակ կազմակերպվում էր պաշտպանություն: Հատկապես գիշերները պահանջվում էր անցաբառ, իսկ ճանաչելու համար լինում էր պատասխան: Օրինակ՝ հրացան, պատասխանը՝ նույն տառով սկսվող բնակավայր՝ Հրազդան»-ասում էր Խաչիկը: Մշո Հաջի Գևոյի անունը հիշատակվում է «Ռանչպարների կանչը» գրքում: Խաչիկը նրա ծոռն է, իր պապերի համար երդվել էր վրեժխնդիր լինել: Մայրը միշտ կրկնում էր.- «Խաչիկիս, Գեղամիս երակներով հոսում է մշեցու արյունը, նրանք պիտի իրենց պապերի վրեժը լուծեն»:

Ջոկատը մասնակցեց Ծահումյանի, Բուզլուխ, Մանաշիդ, Խաչինտակ գյուղերի, այնուհետև՝ Խոջալու, Կիչան, Սրխա-

Խաչիկ Գասպարյանը դստերի՝ Հռիփսիմեի և Լուսինեի հետ, 1992 թ.

վենդ, ապա Հոչազ, Քաշաթաղ, Տիգիք-1, Տիգիք-2 գյուղերի մարտական գործողություններին:

Երբ Իջևանում էինք, լարված դրություն էր: Վազգեն Սարգսյանը հրամայեց Խաչիկին թուրքերից խլած երկու ՀՄՄ-2 ռազմական տեխնիկան թաքցնել անտառում՝ Մակարավանքի տարածքում, որ օմոնականները չհայտնաբերեն:

Խաչիկի մայրը տան անկյունում սրբապատկերներով աղոթատեղի էր պատրաստել, մոմ էր վառում, երեսը խաչակնքելով աղոթում էր Աստծուն՝ երկու զավակների կյանքն անվտանգ դարձնի: Սպասում էր նրանց բարի վերադարձին: Դրմբոնում Խաչիկն առաջին անգամ վիրավորվեց: Տանկիստ Սահակը ծխախոտը դրեց Խաչիկի շուրթերին, ասաց. «Ծխիր ախպերս, դո՛ւ մեռնելու իրավունք չունես: Քո՛ երակներում մշեցու արյուն կա, ապաքինվի՛ր և շուտ վերադարձի՛ր, որ Մուշն էլ ազատենք գերությունից»: Խաչիկը, որ ջոկի հրամանատարն էր, նույնպես վիրավորվեց:

1993թ. Խաչիկ Գասպարյանն իր ջոկատով ընդգրկվեց 5-րդ

Երևանի գումարտակը, 5-րդ բրիգադի կազմում՝ կենտրոնում՝ Անահիտ Վարդանյան, ձախից կքանստած երկրորդը վաշտի հրամանատար Մխիթար Ավագյան, Վերևի շարքի կենտրոնում Հադրութի խիզախ Հրայրը, Գետափցի խելառ Նորոն, Դրմբոն, 1992թ.

մոտոհրաձգային բրիգադի կազմում, որպես մարտական գծով տեղակալ: Իր վարած մարտերի համար ստացավ ավագ լեյտենանտի կոչում: 2004թ. ԼՂՀ-ի նախագահի հրամանով պարգևատրվեց արիության մեդալով:

1993թ. Երևանի գումարտակի հրամանատար Ոսկան Գյուլումյանը, տեղակալ՝ Մխիթար Արմենակի Ավագյանը, հրամանատար Ռեմիկ Մարդանյանը, տեղակալ՝ Սուրիկ Սարգսյանը, շտաբի պետ՝ Յուրա Հովհաննիսյանը («26-Յուրա»), մեկնեցին Արջաձոր: Հաջորդ օրը գնացին Դրմբոնի զորանոց, Սարսանգ գէսի Կուսապատ գյուղը, որտեղ թեժ մարտեր էին ընթանում: Խաչիկ Գասպարյանը առաջին գծում էր՝ Մուրադ Ավագյանի, Անդրանիկ Քոչարյանի, Արտակի և մի քանի ազատամարտիկների հետ:

Այդ դաժան մարտերի ժամանակ Ուսապատի պաշտպանական դիրքերում թուրքերը մտան խրամատ, Հայկազի գլուխը

Խաչիկ Գասպարյանը (ձախից կանգնած) 1991 թ. Հակոբը զոհվել է Արևաշենում, 1992 թ.

կտրեցին, ականջները տարան, Նառայի գլուխը նույնպես կտրել էին: Խաչիկը վիրավորվեց 1992թ. հուլիսի 3-ին Մարտակերտի Մարաղա գյուղում՝ ազատամարտի ժամանակ, հրազենի գնդակից երկու քեռիները նույնպես վիրավորվել էին: Մորս ու տատիս վիճակը սարսափելի էր: Եթե սեղանին երկու դիակ դրվեր ու կողքերին էլ «այդքան հարազատների վիրավոր մարմինները, մարդն ի վիճակի կլինե՞ր դիմանալ»,-ահա այս էր որ մեխի պես խրվել էր Խաչիկի ուղեղի մեջ:

Խաչիկի քեռին իր մարտական ընկերներով երդվել էր, որ Խաչիկի արյան վրեժը կլուծի: Թուրքը չի կարող տրորել հայոց հողն, ուր թափվում է մեր ընկերների արյունը: 1993թ. մարտի 1-ին Ալաշանի, Սարսանգ ջրամբարի համար մղվող մարտերում Խաչիկը վիրավորվեց և ի՞նչ իմանար որ մի քանի տարի հետո նույն օրը Ազատության հրապարակում մահակի հարվածով կցավացնեն իր պատերազմական վերքերը:

Երևանի գումարտակի հրամանատար գնդապետ Ռեմիկ

Հատուկ գնդի ազատամարտիկներ Խաչիկն ու Ստյոպան

Գեղամ Եահենի Գասպարյան: Երևանի գումարտակի ազատամարտիկ 1992թ.

Մարդանյանը՝ լսելով Խաչիկի վերքից թափած արյան վրա երդվող տղաներին, բարձրաձայն գոչեց.

- Տղաներ, տե՞ր եք ձեր խոսքերին:

Լսվեց միաձայն՝ այո՛-ն:

- Դե՛ ձեզ տեսնեմ, արծիվ տղերք, այս սարերը մեր գործերին վկան են, ուրեմն առա՛ջ, իմ քաջեր,- ասաց նա:

Թշնամու գնդակը մտել էր Խաչիկի կոնքից, որովայնից դուրս եկել: Տարան դաշտային հոսպիտալ: Հրամանատարությունն իր վրա վերցրեց Մխիթարը: Տղաները համախմբվեցին, մարտական գործողության ուղղությունը փոխվեց Ներքին Հոռաթաղով, Մեծ Շենով, Վաղուհասով, Չափարով, Պուշկինյալով դեպի Քարավաճառ: Տանկիստ Սահակը, ռուս Վիտյան տանկերով սլացան առաջ իրենց հետևից տանելով հետևակին:

Հիսուն օր ու գիշեր ընթացող թեժ մարտերում հայկական ուժերը թշնամուն կարողացան սեղմել Օմար-Մռավ լեռների խոր ու մութ լեռնախորշերի, ձորերի ու կիրճերի մեջ՝ հասնելով փառավոր հաղթանակի: Այն նման էր երթային մարտերի: Ելնելով առաջադրված խնդրից, իրադրության պայմաններից և վերադասի ցուցումներից՝ Օմարի գագաթին ծածանեցին եռագույն դրոշը. այն իրականացրեց 16 հոգուց բաղկացած հետախուզական խումբը՝ Գևորգ Հայրապետյանի Գևորգ 4-ի ղեկավարությամբ:

Տրվեց 10 օր հանգստի ժամանակ: Պետք էր վերանորոգել ռազմական տեխնիկան, կարգի բերել զենքերը, զինամթերքը, հանդերձանքը: Այս բոլորը ժամանակի խնդիր էր և անհրաժեշտ: Մինչև հրադադարը Մանվել Գրիգորյանը, Ռոմիկ Մարդանյանից ընդունել էին 5-րդ զորամիավորումը՝ «Բրիգադը», որը հաստատեց Խաչիկ Գասպարյանի մարտական ուղին:

Մարտակերտի ազատագրման ժամանակ, 1993թ. դեկտեմբերի 5-ին, «Բրիգադ»-ի հետախուզական վաշտը Հադրութ-Ֆիզուլի պաշտպանական տարածքից տեղափոխվեց Մարտակերտ, հրամանատարն էր Աշոտը («Հայկազ»): Տեղավորվեցին Մաղավուզ գյուղում: Մեկ ամիս անց Աշոտը եկավ Երևան ու սիրած աղջկա հետ նշանվեց: Համբույր առավ, համբույր տվեց, վերադարձավ մարտադաշտ:

Կարծես մեկը կողքից հուշում էր՝ տղանե՛ր զոհվելու եք, մի՛ գնացեք: Ազատ ժամանակ էր՝ նկատվեցին: Հինգ հոգուց երե-

քը զոհվեցին միասին, երկուսը՝ վիրավորվեցին, ստացան ցնցակաթված՝ կոնտուզիա:

Հակոբ Կամարի գյուղի համար կատաղի մարտերը տևեցին 10 օր: Ջոկատը կազմված էր 16 հոգուց: Ոչնչացնելով 60 թուրքի՝ մնացածին ստիպեցին նահանջել՝ դիրքերը զիջելով հայկական այդ փոքրիկ ջոկատին: Հետախույզ Արթուրը՝ ստանալով ցնցակաթված, մինչև օրս կակազում է: Գնդապետ, կապավոր հետախույզ Այվազյանը զարմացած բացականչում էր. «Տղաներ, ինչպե՞ս կարելի է 16 հոգով մի ողջ գումարտակի դեմ կռվել և գրավել նրանց պաշտպանական դիրքերը»: Նրանց դեմ կռվել էր Միրբաշիրում տեղակայված ադրբեջանական «703» բրիգադի մի ողջ գումարտակ: Անհավասար այդ մարտին մասնակցում էին Վաղարշը («Դինջ»), Սաշիկը («Արջուկ»), Գենյան, Գրիգորը, Վիկտորը, Վարդանը, Տիկոն, Հայկոն:

Հատուկ գնդի մի խումբ ազատամարտիկներ՝ Խաչիկ, Նիկոլ, Անտոն, Աշոտ, Սլավիկ, Լյովա, Հովհաննես, Մնաց, Եահումյան մեկնելուց առաջ, 1990թ.

Թշնամին օրը երկու անգամ հեռահար ռմբակոծում էր հայկական դիրքերը: Հարձակման անցած հետախուզական վաշտի տղաները՝ հրամանատար Աշոտի («Հայկազ») ղեկավարությամբ, ավտոմատի կրակահերթով գետնին էին տապալում գրոհող թուրք խմբերին: Թուրքերից մեկը թաքնվեց սարաթմբի ետևում: Աշոտի զինամթերքը պակասում էր, Արթուրը հեռու էր և չէր կարող նրան զինամթերք հասցնել: Աշոտը ավտոմատի ապահովիչը դրեց մենահատի վրա, նշան բռնեց թուրքի ճակատին, վայր գցեց, վազքով մոտեցավ թուրքին, որ գերեվարեր: Թուրքը մինչև մահանալը հասցրեց իրեն մոտեցող հային հայհոյել՝ ասելով. «Էրմեն, ինձ ուզո՞ւմ ես գերել, ես կենդանի եմ, դե ստացի՛ր»,- և հասցրեց կրակել իրեն մոտեցող Աշոտին:

Թշնամու գնդակը Աշոտի կրծքից կախված, երկու պահեստատուփերի արանքից մխրճվել էր մուրազով լի նրա սրտի մեջ: Զոհվեցին Սաշիկը, Գրիգորը՝ Արթուրի թանկագին ընկերները: Աշոտի մթագնած աչքերից կայծակի շողեր ցայտեցին, նշանդրեքի ոսկե մատանին մնաց որպես երկնքում կամար կապած ծիածան: Ավա՜ղ, մի քանի օր առաջ Աշոտը՝ իր հինգ ընկերներով, թույլտվություն էր ստացել մարտադաշտից մեկնել տուն, հարսնացուի հետ նշանվել, մատին անցկացնել ոսկե օղ մատանին ու վերադառնալ: Ինչպես նշեցինք, վերադառնալու ժամանակ Քաշաթաղի ծանապարհին «Վիլիս»-ը երկու անգամ խափանվում է, և նրանք թշնամուն նկատում են, նրանց սրտները վկայում էին, որ չգնան մարտադաշտ, զոհվելու են:

Աշոտը ձեռքը պարզեց, որ նշանածի ձեռքը դնի կրծքին, ավա՜ղ, կրծքին մետաղյա խաչն էր. հասցրեց պոկել, տալ Արթուրին և անշնչացավ: Այդ մասունքը տվեց, որ մորը տան: Բայց մայրն այդ խաչը չընդունեց, Արթուրը չհասկացավ՝ ինչո՞ւ: Սարսռում է մարդու հոգին հիշելիս: Խաչն Արթուրի մոտ է: Արթուրն անշարժ դիակը ծածկում է խոտերով ու վիրավոր, սողալով՝ հասնում տղաներին, որ օգնության գան: Թույլ քամին քշում է տերևները, բացում Աշոտի դեմքը:

Օգնական ուժերը հասնում են տղաներին, նրանք հաղթում են կռվում: «Մարտից առաջ ծնողներս էին աչքերիս առաջ: Արայիկը բուժօգնության մեքենայի մեջ վառվեց: 1993թ. Ֆի-

զուլիում, Քլդլարում չորս թուրքի լցրի մի տան մեջ, ձեռքիս նռնակը նետեցի ներս՝ ասելով. «Ձեր նախնիները հայերի նկատմամբ այդպես են վարվել: Սա ձեր պատասխանն է»,- զրույցի ժամանակ ասաց Արթուրը:

Հայ մշակի ճակատից քրտինքի կաթիլները ողջ կյանքի ընթացքում կաթիլ առ կաթիլ գլորվելով՝ խառնվել են հայոց հնավուրց հողին: Ազատամարտիկների կրակներից արյան շիթն է նրա հետ շաղախվում, շունչ տալիս ապառաժ քարերին, նրանց միջից ծլարձակվում են արևից տաքացած մեր պապերի շունչն ու ոգին: Ազատամարտիկների, հացթուխի, քարտաշի, խառատի, մտավորականի, ՍՊԱՐԱՊԵՏԻ ձիչն է մարտադաշտում խաչվում օդում, և կաթիլ առ կաթիլ հունցվում: Դարերի խորքից բացվում է պատմության վարագույրը և հատակից պարզ արտացոլվում է ճշմարտությունը, լսվում է տառապանքի ու սարսափի արձագանքը, երևում Դանթեական դժոխքը: Ադրբեջանի, Պարսկաստանի, Հայաստանի սահմանները Ֆիզուլիից Հորադիզով ձգվում են մինչև Արաքս գետը: Այդ տա-

Երևանի զումարտակի առաջին վաշտը, հրամանատար Խաչիկ Գասպարյանը մարտական ընկերների հետ, 1993 թ.

ռածքները հարթավայրային են, փարթամ բուսականություն չկա: Օդը շոգ է, անծայրածիր, խաղողի այգիների, ցորենի, գարու, դաշտերի ոռոգումը կատարվում է խողովակներով անցկացրած ավտոմատ ջրմուղով:

Ֆիզուլիին կպած Հադրութը միշտ ռմբակոծության տակ էր: ԼՂՀ-ի պաշտպանական բանակի շտաբը հայտարարեց, որ Ադրբեջանը խախտել է հրադադարը, իսկ վերջին երեք օրերի մարտերի ընթացքում միայն Ֆիզուլու ճակատում կորցրել է 350 զինվոր, 9 տանկ: Հարավարևելյան ռազմաճակատում արձակվեցին ավելի քան 3000 արկ ու հրթիռ: Հաջորդ օրը հերթական մարտին հաջորդած գրոհի ժամանակ, Ադրբեջանը նորից կորցրեց 100-ից ավել զինվոր, չորս միավոր զրահատեխնիկա, բայց շարունակում էր գրոհել: Հետախուզությունը պարզել էր, որ ադրբեջանական ստորաբաժանումների թիկունքում «դիրքավորված» պատժիչ գումարտակները նահանջողներին գնդակահարելու սպառնալիքով պարտադրում էին ճեղքել հայկական ուժերի պաշտպանական գիծը և Ֆիզուլիով առաջանալ Հադրութ:

Լևոն Տեր-Պետրոսյան և Ալիև հանդիպումը այդպես էլ չկայացավ, որից խիստ տուժեց պայմանագրերի հետագա կատարումը:

Ադրբեջանը հույսը դնելով վարձկանների, մուջահեդների ու թուրք սպաների վրա՝ խախտում էր բոլոր խաղարարար միջնորդությունները և լայնածավալ գրոհ ձեռնարկում Մարտակերտի ուղղությամբ: Այդ կապակցությամբ դեկտեմբերի 17-ին 5-րդ բրիգադի հետախուզական վաշտը մեկնեց Մարտակերտ՝ հետախուզելու ԼՂՀ-ի հյուսիսարևմտյան ռազմաճակատը:

5-րդ բրիգադի հերոսական մարտերի ճնշման տակ հակառակորդը թեժ ու ծանր մարտերով դանդաղորեն նահանջում էր Մատաղիս, Թալիշ, Արեգասարի ուղղությամբ՝ Ինջիք գետով դեպի Ադրբեջանի տարածքները:

Հադրութ-Ֆիզուլի մարտերի ժամանակ Սահակի մարտական ընկերը՝ տանկիստ Ավետիս Նորիկի Լալայանը, մահացել էր կամ գերեվարվել: Մայրը՝ Օֆիկը, այդպես էր մտածում, քանի որ որդուց լուր չուներ: Դա 1994թ. օգոստոսի 15-ն էր: 13 հոգով ճեղքեցինք թշնամու առաջին գիծը: Սաղավարտը գլխիս էր, ինչ որ մեկն ինձ ասաց՝ պառկիր: Թշնամու արկը

մոտ երկու մետր հեռու պայթեց. բեկորը ծակեց սաղավարտիս ձախ մասը, խրվեց մեջքիս մեջ: Մի կերպ մոտ երկու կիլոմետր սողալով հասա դաշտային բուժկետ: Հաղորդեցի, որ ինձանից ավելի ծանր վիճակում են Ռուբիկը, Օհանը, Գրիշը, որոնց ոտքերն ու ձեռքերը անդամահատեցին: Ստեփանակերտի հիվանդանոցում բժիշկ Արշավիր Ղուկասյանը թույլ չտվեց, որ ոտքս կտրեն՝ բուժեց: Հիվանդանոցում երբ հայտարարեցին, թե ո՞վ է ուզում Երևան գնալ, մոտ 60 հոգի մի վայրկյանում արագ շարվեցին ու անհետացան: Ես,- պատմում է Ավետիսը,- վերադարձա զորամաս: Մայրը՝ Օֆիկը, որդու դարդից հիվանդացավ ու մահացավ:

Փախչողներ էլ եղան: Բայց կան տղաներ, որոնցով հպարտանում է ազգը: Այդպիսիներից են՝ Հովսեփ Ժորայի Անտոնյանը, որի մարտական ուղին անցավ Լաչինի Հարութագոմերից, Դրմբոյից, Ումուդլուից, Մեծ Ծենից, Մաղավուզից, մինչև Տոնաշեն Հայլու գյուղերի ազատագրումը: Նա վիրավորվեց, կոնտուզիա ստացավ, պարգևատրվեց արիության մեդալով: Մեխանիկ վարորդ Մաքսիմ Սիմոնի Հովհաննիսյանը Երասխավանից հասավ Ֆիզուլի-Հորադիզ-Մարտակերտ: Անձնական խիզախությամբ աչքի ընկավ տանկիստ Սահակի հետ, ուս-ուսի տված մարտեր են մղել, թշնամուն խուճապի մատնել, ոչնչացրել նրանց պաշտպանական դիրքերը, հենակետերը:

Ենթասպա, դասակի հրամանատար Սմբատ Անուշավանի Մանուկյանը Քարվաճառ-Օմարի ազատագրման ժամանակ իր ակտիվությամբ հարգանքի արժանացավ մարտական ընկերների կողմից:

Վազգեն Սարգսյանը եկավ Օմար, մոտեցավ հետախույզ Արթուրի բարեկամ Լյովային, ձեռքը պարզեց, ցեխոտ ձեռքերը սեղմեց: Լյովան արդարանալու համար և այդ անսպասելի վերաբերմունքից շփոթված ասաց.

- Պարոն ՍՊԱՐԱՊԵՏ, ձեռքերս ցեխոտ են:

- Աշխատող ձեռքերը մաքուր են, կեղտոտ չեն լինում,- ու գրկախառնվեցին:

ԼՂՀ-ի պաշտպանական բանակի շտաբը հաղորդեց, որ Ադրբեջանը խախտել է հրադադարը: Լեյտենանտ Համլետ Վարդանյանը 1989թ. կամավոր մեկնում է Արցախ: Մինչ այդ, 1992թ. Վազգեն Սարգսյանի կոչով «Արծիվ» գումարտակի

կազմում՝ Վաղուհասի վանքի, Չլդրանի մարտերում կռվելով՝ վիրավորվեց, կոնտուզիա ստացավ: Հետագայում ընդգրկվեց է 5-րդ բրիգադ, ստանձնեց ավտոծառայության պետի պաշտոնը: Մարտերից մեկի ժամանակ կրկնակի կոնտուզիա ստացավ:

Ավտոծառայության վարորդ Ֆելիքս Հովհաննեսի Պողոսյանը՝ Մովսես Գյորգիսյանի հարևանը՝ մի ապարանցի քաջազուն տղա, աչքի ընկավ Երասխավանի կռիվների ժամանակ: Կոնդեցի Ֆելիքսը 12 տարեկան էր. թխսկան հավի ծտերի պես հավաքվում էին տատի շուրջը:

Նիգավանից թուրքերը չկարողացան առաջանալ,- պատմում էր տատը,- սուրը ձեռքիս, ամուսնուս՝ Խաչիկի կողքին կռվում էի թուրքերի դեմ:

Ֆելիքսն հիշեց իր անցածը .

Ֆելիքս Պողոսյան

«Մինչև 5-րդ բրիգադ ընդգրկվելը ես ու տանկիստ Սահակը ընկերներ էինք: Զորամասում ավելի մտերմացանք: Իմ սեփական «Լազ» ավտոբուսով էի մեկնում Արցախ: Ծենգավիթի 14 հերոս տղաների դիակները կարողացա հասցնել Երևան: Երկու ամիս իմ սեփական «Վոլգա 24»-ով ծառայել եմ Միհրան Մովսիսյանին՝ որպես վարորդ, նա թիկունքի գծով փոխհրամանատարն էր,- ասաց Ֆելիքսն, ապա ավելացրեց,- Արմավիրից 25 տարեկան մի աղջկա ոտքը կտրվեց, վրաս շատ ազդեց: Հիշեցինք Ծամշադի-

նի չորս գերիների մասին: Բաքվում այնքան վատ էր նրանց վիճակը, որ ուզել էին ինքնասպան լինել, կյանքներն ազատել այդ դժոխքից, ապա նա շարունակեց. «Բայց մենք միշտ բարի ենք եղել գերիների նկատմամբ: Հայր ու որդի թուրք գերիներ կային, ինչ ուտում էինք նրանց էլ էինք տալիս: Շատ անգամ պահակային ծառայության ժամանակ նստել եմ գերիների հետ երկար խոսել, թաքուն օգնել:

Վիրավորներ ու դիակներ եմ հանել, վախ եմ զգացել նրանց ջախջախված, այլանդակված դեմքերից: Գիշերները հոգնած էինք լինում, ժամանակ չկար հանգստանալու, գերհոգնած՝ ինչ իմանաս՝ որտեղ կհայտնվես, հատկապես երբ ստամոքսիս խոցի ցավը սկսվում էր: Գյուղի տղա լինելով՝ ծանաչում



26-ի Յուրան Կարինե Գևորգյանի հետ

էի խոտաբույսերը. ջրի, աղբյուրների ափերի մոտ կամ ծառի շուրջը աճած խոտերը պոկում էի, հաց ու պանրի հետ փաթաթում լավաշի մեջ, ուտում:

Տղաները լավաշի մեջ փաթաթած կերակուր բերեցին՝ ասելով, որ ընտիր քյաբաբ է, անուշ անողը կջահելանա: Ախորժակներս բացվեց, վերցրի մի լավաշ առանց ստուգելու ախորժակով կուլ տվեցի: Հետո ասացին, որ օձ էր, մարմինս մի վայրկյանում բշտիկներով ծածկվեց: Եկան բժիշկները, փրկեցին: Սոված էինք, գորտ կերանք, քիչ էր մնում խելագարվեի: Կաշին ձիգ էր, թռչունի մսի նման: Մտքովս չէր անցել: Կրակի վրա խորովում էինք, տաք-տաք ուտում, օղին էլ վրան անուշ անում: Կրիա էլ եմ կերել:

Զորամասի բուժքույր Անժելան օգնում էր դեղորայքով, կազմակերպում առաջին բուժօգնությունը: Շուտ ապաքինվում էինք: Անժելան ծնվել է Բաքվում: 1989թ. ծնողների հետ փախան Բաքվից և հաստատվեցին ծնողների ծննդավայրում՝ Ար-

Արշալույս Փայտյան, Անժելան գերհոգնածության պահին, Մարտակերտ

ցախում: Եղբոր հետ մտան արյունոտ թոհուբոհի մեջ: Թշնամին մոտ կես միլիոն հայերին կոտորելով՝ քշել էր Բաքվից, հիմա Արցախն էր ուզում:

Եղբայրը որպես տանկիստ ընդգրկվեց Ասկերանի գնդում: Պատերազմը ստիպեց, որ հայ փխրուն, գեղեցիկ, արտաքուստ դյուրաբեկ թվացող աղջիկը հայտնվի պատերազմի դաշտում: Անժելան ընդգրկվեց «Սևանի» ջոկատում, որն իր հերթին հրամանատար՝ Սուրիկ Սարգսյանի, տեղակալ՝ Սամվել Գևորգյանի 5-րդ բրիգադի կազմում:

Անժելա Հրանտի Հակոբյանը 1992թ. Դրմբոնի ինքնապաշտպանության ժամանակ վիրավորվել էր, իսկ Կաղուհասում կոնքից վիրավորվել էր Սուրիկը: Իմ գոտիով կապեցի վերքը, արյունահոսությունը դադարեց: Օգնել եմ նաև Կոմանդոսին: Երկուսին իմ ուսերի վրա քարշ տալով՝ հանեցի կրակների միջից, ուղղաթիռով հասցրեցինք Երևան: Մեկ ոտքի վրա՝ արագիլի պես, հասա տեղ: Ուղղաթիռում դիակներ էին, ցավ ու մրմուռ, վիրավորների հառաչանքներ: Ինձ մի Ֆ-1 նռնակ էին տվել, ավտոմատ չկար: Սուրիկը հպարտորեն ասում էր. «Իմ դիակը մարտադաշտից Անժելան կհանի»:

Անժելան պատմեց.

«Բաքվում՝ իմ աչքի առաջ 5-րդ հարկից դուրս նետեցին իմ հարևանին՝ դպրոցական ընկերուհուս ու վառեցին: Թերթի մեջ փաթաթած արմատուրայով հածույքի համար մարդկանց ծեծելով՝ արունլվա էին անում այնքան, մինչև շունչները փչեին: Նրանք այդ բոլորից հածույք էին ստանում, հրծվում, ուրախանում, ցուցադրում էին իրենց «տղամարդկային արժանիքները»: Իմ հարազատներից շատերին սպանել են: Բերդաձորում սպանեցին քեռուս տղային՝ Սպարտակին, Մարտակերտում՝ Վաչագան Զախարյանին: Մինչև մի թուրք չսպանեմ, չեմ հանգստանա»,- ասում էր Անժելան: Մինչ օրս այդ պատկերը Անժելայի աչքերի մեջ է: Այդ մտատանջությունների մեջ՝ աշխատեց երկրորդ ոտքին տեղ բացել, սթափվեց: Հոգնած էր, մարմինը թուլացած, աչքերի կոպերը դանդաղ փակվում էին, բռնակից կախված՝ ննջում էր:

«Շուշիի ազատագրման ժամանակ զոհվեց կարմիրցի Ռաֆոն: Երբ «Սևանի» ջոկատը ընդգրկվեց 5-րդ բրիգադի կազմում, լսում էի տանկիստ Սահակ Եդիգարյանի մասին. հետաքրքրություն էր առաջացել, թե ո՞վ է այդ քաջ մարդը, որ մենակ կարողանում է տանկով մտնել թուրքերի մեջ ու հաղթանակած դուրս գալ:

Կաղուհասում էինք, խրամատի մեջ սոված սպասում էինք հարձակման հրամանին: Տանկի ձայնը, որը լսվում էր տաս կիլոմետրից, շատ մոտիկ լսվեց: Երևաց մի «Վիլիս», մեջը հարբած երկու թուրք ու ռուս. շփոթվել էին, հայտնվել մեր դիրքերում: Տանկիստ Սահակի տանկն էր, հաղորդել էին, որ թշնամու «Վիլիս» է: Սահակը խփեց ավտոմեքենային, մեջը լիքն էր օղիով ու խնձորներով: Ես վազեցի, բերեցի խրամատ, տղաներն անուշ արեցին»:

Այստեղ Անժելան ծանոթացավ տանկիստ Սահակի հետ, ապա մտերմացան՝ Սուրիկ Սարգսյանի, Յուրա Հովհաննիսյանի («26-ի Յուրան»), շտաբի պետ Սեյրան Օհանյանի, Հայկազ Բաղմանյանի հետ: Մոտ 9 հոգու գլուխները կտրել էին:

«Սահակի տանկը, երբ երևում էր ռազմադաշտում, ոգևորվում էինք:

1993թ. մարտի 20-ին Մոնթեի հետ դիրքավորվել էինք Ներքին Հոռաթաղում, Կուսապատում: Այստեղ մշակվեց Պուշկինյալի գրավման օպերացիան: Կարողանում էինք ադրբեջանական ռացիայի հաղորդումները որսալ: Թուրքերեն, ռուսերեն լավ իմանալով՝ թարգմանչի դեր էի կատարում: Մարտից առաջ Մոնթեն գրեթե կրկնեց

Աջից Անժելան մարտական ընկերոջ հետ

Ալեքսանդր Մակեդոնացու խոսքերը. «Գրավեք թշնամու դիրքերը և կերեք նրա ռազմամթերքը»:

Այս օպերացիաների կատարումից հետո 1993թ. սեպտեմբերին Ամարասից՝ Արթուրը, Վարդենիսից՝ Կոլյա Քոչարյանը, Գագիկ Խաչատրյանը՝ («Դերո»), Վաղուհասի բարձրունքներում թշնամու ռմբակոծության տակ մարտնչում էին: Արտաշատի ջոկատի հրամանատար Լայերտի տղաները ժայռաբեկորի շուրջ նստեցին մի-մի կտոր հաց ուտելու: Թշնամու արկից զոհվեցին չորս ազատամարտիկ, չորսը վիրավորվեցին: Ես շտապեցի հասնել օգնության,- այս բոլորի մասին արագ-արագ պատմում էր Անժելան,- ի՞նչ կարող էի անել, ձեռքս գցեցի, որ գրկեմ, սիրտը կախվեց ափիս մեջ, ցավից ուշաթափ՝ գոռացի՝ օգնեցեք, ձեռքս խրեցի հողի մեջ, մի բուռ հող դրի վերքի վրա, չհասկանալով ինչ եմ անում,- շարունակեց Անժելան:

Ձուտ (կենտրոնում պառկած, զոհված), Մարտակերտ, 1992 թ.

Արայիկը, Վարուժը, Հայկը ղարաբաղցի աղջիկների հետ ամուսնացան, իմ բախտն այդ հարցում չբերեց: Հատկապես գիշերները, երբ տղաները պառկում էին հողին՝ հանգստանալու, զգում էին, որ իրենց սիրած աղջկան են գրկել:

Հողը մարդուց քամում է մարդկային տառապանքը, թորում տանջանքն ու մրմուռը: Հողն ազնվացնում է մարդուն, որտեղ շաղախվեց 5-րդ մոտոհրաձգային բրիգադի 390 զոհված ազատամարտիկների արյունը, որոնք Արցախյան պատերազմի ընթացքում պաշտպանել և ազատագրել են Արցախյան շուրջ 80 բնակավայր: Բրիգադի կազմում մարտնչել են հանրապետության գրեթե բոլոր շրջանների կամավորները, ինչպես նաև համագործակցել են ԼՂՀ-ի մարտիկները, կադրային սպաները, որոնցից 5-ը դարձան գեներալներ:

Մեղրիից, Կապանից, Գորիսից, մինչև Սիսիան, Զանգեզուրյան Նժդեհական գաղափարներով մեր նախնիների կանչով շաղախված՝ փայլատակեց Արցախյան գոյամարտը:

Մուշեղ Բաբայան՝ Ջերմուկի Համ. 5-րդ բրիգադի երևան գումարտակի քաջազուն հրամանատար՝ «54», 1993 թ. Մարտակերտ

ԱՐՑԱԽԻ ԴՈՒՍՏՐԸ

Էլմիրա Ալեքսանդրի Աղայանը («Խանում») 17 տարեկան էր, երբ մայրը մահացավ, երեք ամսից հետո մահացավ հայրը: Հայրը մահից առաջ ասաց. «Իմ երեք զավակների մայրը դու ես, խնամի՛ր, պահպանի՛ր»: Խանումը երդվեց հոր դիակի վրա և դարձավ այդ գերդաստանի կաղնին:

1988-1994թթ. Արցախյան պատերազմի թոհուբոհի մեջ Արցախի դուստրը հասավ գնդապետի կոչման: Արմատներով Շուշիից էր, բնակվում էր Ստեփանակերտում: Մեր երակներով հոսող մեր պապերի արյունը արցախյան պատերազմում ուղղեց մեր պապերի դարավոր սխալները:

Ստեփանակերտում հավաքվել էինք Խանումի մոտ՝ տանկիստ Սահակը, Բորյան, Ենոքը, որի պապը՝ Շամիրը, եղել է Դրոյի գնդացրորդը: Ես այս բոլորը գրի էի առնում: Հավաքվածները մարտական ընկերներ էին, տաք-տաք զրուցում

ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր Պետրոսյան, Էլմիրա Աղայն «Խանում» ՀՀ ՀՈՒ հրամկազմի հետ, Երևան 1997

էին: Պատերազմը միայն տղաների համար չէ, այլ նաև կանանց համար:

Սերգեյ, Բորիս Հակոբի Բաբայան եղբայրները ծառայել են Խանումի մոտ, տանկիստ Սահակի մարտական ընկերներն էին:

«Գարեգին II-ը օծեց «ՑՕՐ» զորամասի մարտական դրոշը: Ամեն օր լացել-վշտացել եմ, մեր հողն ու ջուրը մեզ ստիպել է անել ամեն ինչ, որպեսզի զուլալվի ջուրը, զտվի օդը, մաքրվի հողը, որ հայ մարդն իր ծննդավայրում ապրի խաղաղ:

Մեր տղաների ոգին, ինձ՝ որպես կնոջ, ոգեշնչում էր, հույս էր տալիս, որ առջևի հաղթանակները մերն են լինելու: Իմ ականջից չի հեռանում Վազգեն Սարգսյանի խոսքերը խրամատում. «Մարտադաշտում մենք պիտի հաղթենք, մենք պարտվող ազգ չենք: Այս պարտադրված պատերազմում հաղթելու ենք: 21-րդ դարը մերն է լինելու»:

Երկու թուրք կին գերի կար իմ տանը, պահել եմ քրոջ պես: Մեկին փոխանակել եմ Մեղրու գումարտակի հրամանատարի քրոջ հետ, իսկ մյուսին՝ Էջմիածնի հրամանատարներից մեկի հետ»:

Երբ թուրքերի ինքնաթիռը ռմբակոծում էր Ստեփանակերտը, նրանք անիծում էին թուրքերին և օրհնում հայերին, հատկապես իրենց խնամողին՝ Խանումին, բան չպատահի: Խանումը հասցրել էր ստանալ բարձրագույն կրթություն: Նա կարողանում էր իր հմտության, բանիմացության շնորհիվ ձեռք բերել հաց, ջուր, սնունդ, հագուստ:

«Չեխոսլովակիայից բարձր զինվորական հայեր էին եկել: Թշնամին ռմբակոծում էր Ստեփանակերտը: Լույս չկար, քսան լամպեր տեղադրեցի: 30 հոգուց էր կազմված շքախումբը: Վազգեն Սարգսյանն ինձ հատուկ հանձնարարել էր, որ հյուրընկալության պատասխանատու գործը պատվով կատարեմ: Թուրքերն իմ գլուխը գնահատել էին 10 միլիոն ռուբլի: Սամվել Բաբայանը բազմաթիվ անգամ զգուշացրել էր, որ զորամասից դուրս չգամ, ռազմագիծ չմտնեմ, բայց չէի ենթարկվում, հայտնվում էի թեժ գծում, ոգևորում ազատամարտիկներին:

Մանվել Գրիգորյանը, Փայտյան Արշոն, Հայկազ Բաղմամյանը, Լյովա Երանոսյանը, Սեյրան Սարոյանը իմ տանը շատ են գիշերել, իմ հացը կերել, ջուրը խմել: Քույր ու եղբայր ենք

եղել: Այսօր նրանք գեներալներ են, սակայն ինձ համար զինվոր են: Նրանց մեր ուսերի վրայով ենք տարել դրել գեներալի պատվանդանին»:

Օմարի միջանցքը բացելու համար հրամանատարն էր Սամվել Կարապետյանը՝ «Օգանովը»: Օմարի օպերացիայի ժամանակ շատ դժվար էր, բայց հրամանը հրաման էր: Վերջին զոհը եղել է Մարտունու շրջանի Մաչկալաշեն գյուղի ինքնապաշտպանական ուժերի հետախուզական վաշտի Արթուրը: Քողախալաթներով բարձրացան հաղթական Օմարի գագաթը:

«Դառը կյանք եմ ունեցել, անցել եմ անհաշիվ կիլոմետրեր, հոգեպես շատ եմ տանջվել, ունեմ շաքար: Ֆիզուլիում չորրորդ անգամ վիրավորվեցի: Սիրտս կանգնում էր, Սամվել Կարապետյանն օգնեց, որ նորից աշխատի:

Մանյա Բաբայանը՝ չորս զավակների մայր, սև շորերով՝ որդու՝ Սերյոժա Հակոբի Բաբայանի դիակի մոտ կսկծում էր ու աղիողորմ լաց լինում: Այդ տառապանքը տանում էր հաշվի

Արայիկ Խանդոյանի և Էլմիրա Աղայանի «Խանում» այցը ապաքինվող Սամվել Օգանովի մոտ

առնելով, որ բոլոր մայրերը վիշտ ունեն: Հաշտվում էր՝ ասելով՝ որդիս զոհվեց հանուն իր ծնողների, հանուն իր հողի ու ջրի, հայրենիքի ազատության:

Հավատացյալ հայ ժողովուրդը պիտի ողբա Վազգեն Սարգսյանի կորուստը: Հասկանա, որ մեծ կորուստ կրեց: Երկու ամիս բուք ու բորանի մեջ ստիպեցի, որ նրա կիսանդրին կանգնեցնեն: «ЦОР»-ի զորամասում ամեն տարի 40 օր մոմ էի վառում: Մի անգամ իմ տանը հյուր էին Սամվել Բաբայանն ու Կոմանդոսը: Սամվել Բաբայանին ասացի մի քանի հատ մակարի փամփուշտ տուր: Կոմանդոսն ինձ դեռ չէր ճանաչում. նա մի փամփուշտ նվիրեց ինձ,- որպես մասունք պահում եմ իմ սրտում:

Ծուշիի ազատագրման ժամանակ Արմենի հետ շամպայն բացեցինք, բոլորին շնորհավորեցինք: Վազգեն Սարգսյանին կերակրել եմ, նկարները փոշուց մաքրել: Նա ասում էր՝ այդ նուրբ ձեռքերով ինչու ես լվացվում, բաղնիքը վառի մի լողանանք: Սամվել Բաբայանը Վազգեն Սարգսյանին շատ էր հարգում: Վազգեն Սարգսյանի շունչը շատ եմ զգացել»:

Վազգեն Սպարապետ, Էլմիրա Աղայան՝ Խանում, տիկին Գրետան

1993թ. Խաչեն գյուղում զոհվեց Հարությունը: Խանումը Հարութի դիակը Արցախից Երևան բերեց: Հարութի մայրը կրկնում էր որդու խոսքը. «Գնում եմ մեր պապերի սխալը ուղղեմ»:

Խանումը, Լայերտը, Համբարձումը, Բորյան, տանկիստ Սահակը, վերհիշեցին մի ազատամարտիկի, որի ծնոտը թշնամու արկի բեկորից ջախջախվել էր, չէր կարողանում խոսել: Ձեռով-ոտով հասկացրեց Խանումին, որ ծյուղից պոկի տերևը, կապի փայտի ծայրին, իր արյունով գրի իր ով լինելը: Չկար հարմարություն, մի տախտակի կտոր ծարեցի, վրան գրեցինք, դիակի հետ ուղարկեցինք հարազատներին:

Վազգեն Սարգսյանին մատաղ, նրա թասիբին մեռնեմ, սքանչելի հայ էր, ազնիվ մարդ, նմանները հարյուր տարին մեկ են ծնվում: Աստված հայ ազգին նրան շռայլորեն նվիրեց:

1993թ. մարտին ադրբեջանական զորամասերից մեկը, գեներալ՝ Սադիգովի հրամանատարությամբ, գրավելով Մարտակերտը՝ ռազմական շտաբը տեղադրեց շրջկենտրոնում: Այդ էր վկայում ռուս լրագրող-օպերատորը: Թուրքերի հետ կռվելով հայերի դեմ՝ կարողացել էր նկարահանել և այն հասել էր հայերին:

Արմեն Ձավենի Սարգսյան, Էլմիրա Խանում

Վազգեն Սպարապետը, Էլմիրա Խանումը, Գրաղ Ժորան:

Որպեսզի ամրանար գրավյալ տարածքներում, երիտասարդ թուրք գեներալը հրավիրել էր խորհրդակցություն: Մշակում էր Մեծշենի, Մաղավուզի, Հաթերքի, Դրմբոնի և այլ գյուղերի պաշտպանական ծրագրերը՝ աշխատելով ստորաբաժանումները առաջ մղելով հյուսիսից, ամրանալ, որպեսզի հետագայում Ստեփանակերտի գրավման օպերացիան ղեկավարելի լիներ:

Դրմբոնի ազատագրման ժամանակ թշնամին մեծ դիմադրություն էր ցույց տալիս: Նախատեսված գյուղերը թուրք բարբարոսներից ազատելու համար գրոհման ընթացքը մտածված էր: Թուրքերի հետ մտնելով շփման մեջ՝ դժվարություններ առաջացան: Թշնամին հասցրել էր դիրքավորվել: Այդ իսկ պատճառով դժվարությունները հաղթահարելը դյուրին չէր:

Թշնամուն առնելով օղակի մեջ՝ Ռոմիկ Սարգսյանը գումարտակի առջևից սրընթաց գրոհող տանկիստ Սահակը 10-15կմ-ից հեռահար ռմբակոծում էր թշնամու ամուր հենակետերը, քարուքանդ անում նրանց պաշտպանական դիրքերը՝ ստեղծելով հնարավորություն հայկական ուժերի առաջխաղացման համար:

5-րդ բրիգադի դասակի հրամանատար Զավեն Ջանյան, նստած աջից երրորդը, Մեծ Ծեն, 1994

Թշնամին դեպի Մարտակերտ ձգվող սարերի մեջ ընկած ձորակով միակողմանի քարքարոտ հողե ճանապարհով լեռապատառ նահանջում էր: Ռազմական տեխնիկան, իրենց դիրքերը լքած՝ անկանոն, խուճապահար փախչում էր: Հայերի գրոհի թափը անխափան ուժեղանում, կանոնավորվում էր:

«Խաչակիրներ» ջոկատի հրամանատար «Սպիտակ արջ» Կարոն քափ - քրտինքի մեջ հետապնդում էր նահանջող ազերիներին: Այդ պահին երկու տանկեր ելան իրար դեմ: Թշնամու հետևակային մարտական մեքենան՝ «ՀՄՄ»-ն, որին օգնում էր զրահապատ մեքենան, կանգնեց ու հետընթաց փախավ, բայց չհասցրեց ազատվել իրեն հետապնդող Սահակի տանկից, ճանապարհի եզրից կախվեց ձորը: Հայերին օդի պես անհրաժեշտ էր թշնամու զենքն ու զինամթերքը, ռազմական ավարը: Ծրջապատելով՝ գերեվարեցին անձնակազմին:

Սահակի ընկեր Լյովա Կոլյայի Ծահբազյանը պատմում է.

«Ջուլիա Ծատախյանը 1988թ. աշխատում էր դեղատների վարչությունում, ակտիվորեն մասնակցում էր շարժմանը և ոգևորում էր տղաներին ակտիվորեն մասնակցել: Ջուլիան

Խանումը Սպարապետի մոր՝ տիկին Գրետայի և իրենց հարազատների, զինակից ընկերների հետ, Սպարապետի կիսանդրու մոտ, 2001թ

անձնական մեքենայով էր զենք, զինամթերք, սնունդ, հանդերձանք, կարևորը՝ դեղորայք հասցնում ռազմաճակատ:

1989 թ. Ծահեն Մեղրյանի՝ Ջուլիայի հետ ունեցած կապի շնորհիվ Ծանթի օժանդակ ուժերը նրանց օգնության եկան: Ջուլիան օգնում էր, ինչով կարող էր: Տղամարդկանց ամոթանք էր տալիս, ասելով, թե դուք թիկունքում անելիք չունեք՝ գնացեք ռազմաճակատ: Մուշեղ Մխոյանի հետ սերտ հարաբերությունների մեջ էր: Այդ ժամանակ Վազգեն Մանուկյանը ՀՀ վարչապետն էր: Ջուլիան ում որ հանդիպում էր ուտել-խմելիս, քեֆի մեջ, նախատում էր՝ ասելով.

- Բա դուք տղամարդ ե՞ք, քաջերը ռազմաճակատում ձեր պատիվն են պահում, արյուն են թքում, իսկ դուք քածերի հետ խունջիկ-մունջիկ եք լինում, կանանց փեշի տակ կենացներ ասում:

Մարտերին մասնակից ազատամարտիկների ընտանիքներին, նրանց կանանց զանգում էր՝ քաջալերում՝ ամուր մնան, պինդ պահեն իրենց ամուսինների թիկունքը, և անընդհատ

Աջից՝ Համլետ Վարդանյան, Լյովա Մալաքյան, Մարտակերտ 1993 թ.:

Նահեն, Վարուժան, Գագիկ մարտական ընկերներ, 1992 թ.

շեշտում, որ եթե թուրքերը ծեղքեն մեր ամրոցները, մեզ բոլորիս մեր տների մեջ կմորթեն ու կտիրեն Հայաստանին:

Օվսաննա Մեյանը նշանառու էր: Վիրավորվելուց հետո գլխի մեջ արկի երեք բեկոր էր մնացել, գնում էր Եռաբլուր, հողը համբուրում և ասում էր, որ իրենց թափած արյունով հողը զորեղացել է: Հայ կին, թե տղամարդ պիտի վրեժ ունենան, նրանք առյուծի ձագ կորյուններ են:

Եվ այսպես, թուրք գեներալն, անտարբեր ձևանալով, սեղանին փռած քարտեզի վրայից գլուխը բարձրացրեց

Համլետ Վարդանյանն Արիության մեդալի արժանանալու ժամանակ, 1996 թ.

ու հայհոյանքի լուտանք թափեց ռուս վարձկան զինվորականների հասցեին, որոնք փողերը վերցրել ու անհայտ ուղղությամբ ծողոպրել էին: Գեներալը վեր կացավ, մոտեցավ դասալիք հրամանատարին ու հարվածեց դեմքին: Գռեհիկ հայհոյանքներով աշխատեց ինքն իրեն հանգստացնել: Դուրս եկավ բակ, փախստականներին հավաքելով իր շուրջը՝ բացատրական բոցաշունչ խոսքերով ոգևորեց և բոլորին հրամայեց վերադառնալ այնտեղ, որտեղից փախել էին, պաշտպանական դիրքերը: Այդ բոլորը անօգուտ էր: Հայերը ձնագնդիկի նման ուժեղանալով՝ մոտենում էին Մարտակերտին: Թշնամին ցաքուցրիվ, անկանոն նահանջում էր:

Խաչակիրների Կարոն գլխին կապել էր մուգ կանաչագույն գլխաշոր, հագել էր սպիտակ խալաթ: Երեք հոգով ավերակ տան պատի թաքստոցից դուրս եկան, պատվիրեց ընկերոջը

թիկունքից ապահովել աջ թևը, իսկ երկրորդ ընկերոջը՝ կրակահերթով վազել ձախ թևով:

Այս հրահանգներից հետո թաքստոցից վագրի ցատկով թեթևակի փռված ձյան վրայով վազեց առաջ: Ընկերը վազքի ընթացքում սայթաքեց ձյունից սառցակալած գետնի վրա: Երերաց և վայր ընկավ: Արագ վեր կացավ, հետևեց Կարոյին: Կարոն մոտ վեց լեզու գիտեր, ռադիոկապով հաղորդում էր, որ գրոհը շատ հաջող է ընթանում: Գրոհի ընթացքն ապահովելու համար Սահակը տանկով հետընթաց սլանում էր, նկատեց ծառերի մեջ թաքնված թուրքի տանկը, ընթացքից հարվածեց, տանկը բոցավառվեց: Այդ կրակից մետաղը տաքանում է, առաջացած ջերմությունից ներսում անձնակազմը խեղդվում է: Մեկին հաջողվել էր ուշաթափ իրեն դուրս նետել, սակայն Կարոյի տղաները, նկատելով նրան, շրջապատեցին ու զեկուցեցին, որ թուրքը «հոս» է:

Կարոն ձեռքով նշան արեց, թե՝ հասկացա, ռադիոկապով օգնություն էր խնդրում՝ բացատրելով, որ «տղաների կոշիկները անորակ են, մի անգամ ցեխի կամ ջրի մեջ ընկնելով, մանավանդ այս ձմեռային պայմաններում, արագ շարքից դուրս են գալիս: Գնացեք, արտասահմանի հայերին ասեք, աշխարհի հարուստ հայերին ահազանգեք՝ գան Արցախ, սեփական աչքերով տեսնեն հայ կռվող տղաների վիճակը, տրամադրեն, սատար կանգնեն, ցուցաբերեն տնտեսական օգնություն: Հայ զինվորը սնվում է անբավարար, շատերը ամուսնացած են, ընտանիքներին, կանանց ու երեխաներին, հարազատներին թողել են բախտի քմահաճույքին, եկել առաջին գիծ, զենքը ձեռքներին կանգնել հայրենիքի պաշտպանության դիրքերում՝ կյանքը զոհաբերելու պատրաստակամությամբ»:

Մինչ Կարոն ուսուցողական դասերը էր տալիս, Սահակը ճշգրիտ հաշվարկներով, արկերի հեռահար կրակոցներով շարուքանդ էր անում թշնամու պաշտպանական հենակետերը: Այդպիսով, հեշտանում էր հետևակի առաջընթացը: Այդ գրոհի ժամանակ հինգ ազատամարտիկ Սասնա պարն էին պարում: Մյուս տղաները՝ երգելով մտնում էին մարտի

Կոմանդոսի հետախուզական ջոկատ (ԴԵՌԳԵ), 1992 թ. Հակոբ-Կամար

Համլետ Վարդանյանը մարտական ընկերներով Գետաշենի անկման ժամանակ, 1991 թ. մայիս

դաշտ՝ Ծիրազ երգելով, Ծիրազ արտասանելով: Ծիրազի խոսքերից մարդ հարստանում էր, ոգեղենանում: Նա դաստիարակել է մի ողջ սերունդ: Ծիրազը մեծ էր: Այդ էր վկայում Ղարաբաղյան շարժման ժամանակաշրջանը: Նրա գաղափարները ոգևորում էին, բոցավառում:

Միտինգներից մեկի ժամանակ տողերիս հեղինակն օպերայի Ազատության հրապարակում ասացի. «Հաց ուտելու ժամանակ բռունցքներդ չբացեք: Բարձի փոխարեն զենքի վրա ծերացեք»:

Այդպես, երգելով՝ տղաները շարժվեցին առաջ: Թշնամին, օգտվելով իրավիճակից, գրոհեց տղաների ուժերի աջ թևի վրա: Տղաները արագ դիրքավորվեցին, ծնկաչոք ընդունեցին մարտը: Երկու կողմից ինքնաձիգներից ճրտճրտում էին գնդակները օդում: Ժիրոն՝ դաշնակ սասունցու բեղերով, խրոխտ հետազոտում էր շրջապատը, պատրաստվում տղաներին տանել մարտի: Երեսը խաչակնքեց, քթի տակ մրմնջալով ասաց. «Հիսուս Քրիստոսն իր վրա վերցրեց աշխարհի մեղքերը, որ-

Հովհաննես Ծիրազը որդու՝ Վանանդի և Մարտին Բաղդասարյանի հետ, 1970 թ. Ծիրազը կյանքից հեռացավ 1984թ, մարտի 14-ին

պեսզի մաքրի սատանայի մեղքերի գարշահոտությունը, որը երկինք է պատում: Մաքրի բարի գործով, ժպիտով, ինչպես Լուի դը Ֆյունեսը աշխարհին ծիծաղեցրեց, առողջացրեց մարդկությանը»:

Ծիծաղի արքա Ֆյունեսը, տանը Ֆրանսիայի մեծահարուստ Խաչիկ Քեբարդջյանի հետ հաճախ էր շոշափում հայոց ցեղասպանության թեման: Պարոն Լուին սիրում էր ունկնդրել զորավար Անդրանիկի սիրված երկը և ապրիլի 24-ին անպայման այցելում էր Պեր լա Շեզ գերեզմանատուն ու ծաղիկներ դնում Զորավարի գերեզմանին:

Տիկին Աղավնին, իր մատուցած հաճելի անակնկալի ավարտին, հատուկ շեշտադրմամբ ընդգծեց պարոն Լուիի առանձնակի հակումը հայկական ազգային խոհանոցի նկատմամբ և պատմեց, թե ինչպես էր նա հայկական տոլմայի, խորոված-ծի, սպասի, ազգային թխվածքներից՝ գաթայի պատվերներ տալիս իրեն: Տատը լինելով հայ՝ ժառանգած սովորությունները սրբորեն պահպանում էր:

Սահակը քաղցած էր: Այս պատմածից բերանի ջրերը հոսեցին. «Բա մի աման մորս պատրաստած տոլման չլիներ՝ ուտեի»: «Ա՛յ Սահակ ջան, արկի միջից վառող հանիր, խառնենք տաք ջրին, որպես թեյ խմենք, ինչ տոլմի մասին ես խոսում: Մի բաժակ թեյ լիներ, խմեինք: Տղանե՛ր համբերեք,- կատակեց Կարոն,- հաղթանակից հետո կգնամ Ֆրանսիա, այնտեղ խորոված կանեմ, տաք-տաք սպասի հետ կուղարկեմ»: Այսպես կատակելով՝ տղաները, խոսքերով իրար կերակրելով՝ շարժվեցին առաջ: Թշնամու արկը պայթեց Սահակի տանկից մի քիչ հեռու: «Սահա՛կ, թշնամին քեզ մի արկ խորոված է ուղարկել, հյուրասիրությունը երկկողմանի է լինում, շտապիր փոխհատուցել»,- կատակեցին տղաները:

Շուշիի ազատագրման ժամանակ Սահակենց ջոկատը ընդգրկված էր Աշոտ Ղուլյանի գումարտակի կազմում, թիվ 10-րդ տանկի ետևից, հետիոտն, գրոհում էր Շուշիի վրա:

Երբ ազատագրեցին Մարտակերտը, թշնամին ակտիվացավ Քարվաճառի ուղղությամբ: Հայկական ուժերը շուռ եկան 180 աստիճանով դեպի Քարվաճառի ռազմաճակատ: Թուրքերը գրված տանկի վրա նշել էին թիվ 445-րդ, կիսալուսին և աստղ՝ Ադրբեջանի պետական զինանշանը վրան պատկերած:

1993թ. ապրիլի 1-ին տանկով գրոհում է թշնամու վրա: Թուրքերը չէին հասկանում և իրենց տանկի վրա էին կրակում:

Այդպես, Սահակին հաջողվում է գրոհել թշնամու ռազմական տեխնիկայի, հենակետերի, կարևոր օբյեկտների վրա, ջախջախիչ հարված հասցնել: Օգանով Սամվելը՝ իր գումարտակով կարողացավ բեկում մտցնել՝ մարտի ելքը որոշելու համար: Այդ մարտերը ընթանում էին Քարավաճառի թունելի մոտերքում: Սամվելը գումարտակի դեմ դիմաց, երկու սարերի միջով անցնող հողե ճանապարհին, հանդիպեց թուրքի մոլորված տանկին, որի հետևից գալիս էր մոտ 15-20 հոգուց բաղկացած հետևակը: Հայերը այդ անսպասելի, հանկարծակի երևույթից նույնպես շփոթվեցին: Ուշքի գալով՝ ինքնաձիգերով կրակ բացեցին: Տղաները ծնկած ոչնչացրին թուրքերին, Օգանով Սամվելը աջ ոտքից վիրավորվեց:

Համառ մարտերը տևեցին շուրջ երկու ամիս մինչև մարտի 23-ը՝ Պուշկինյալից մինչև Օմար: Համագործակցում էին Մարտակերտի ինքնապաշտպանական ջոկատների հրամանատար Նորիկ Դանիելյանը, Էջմիածնի, Մասիսի, Արարատի, Երևանի գումարտակի հրամանատար Ռոմիկ Մադանյանը,

Մաքսիմ Սիմոնի Հովհաննիսյանը՝ Սահակի խփած ՀՄՄ-ի մոտ, Փափրավեն, 1995 թ.

Ձախից 3-րդը Ալիկ Պետրոսյան՝ «Արծիվ» մահապարտների հրամանատար, որի հիման վրա ձևավորվել է «Արծիվ» 33 ջոկատները

Մոնթեի գումարտակը, «Ալաշկերտ» ջոկատը՝ Աբել Հարությունյանի հրամանատարությամբ, Վանաձորի տանկիստ Ալբերտ Սարգսյանը: Ապրիլի 15-ին Սահակն իր տանկով առաջիններից էր, որ բարձրացավ Օմարի գագաթը: Սամվել Ավագյանը հետագայում 4 անգամ տանկով հակատանկային ականի վրա պայթել է, բայց կենդանի է մնացել: Հինգերորդ անգամ 1993թ. օգոստոսի 18-ին Ֆիզուլիում՝ Քուրդլարի ուղղությամբ, Սահակի գրոհող տանկի ետևից սլանում էր մի ողջ գումարտակ, մոտ 100 հայ արծիվ: Այդ գրոհի ժամանակ Սահակի տանկը հակատանկային արկից օդ բարձրացավ: Սահակին մահամերձ վիճակում պատգարակի վրա տեղափոխեցին Հադրութի դաշտային հոսպիտալ: Հետո տեղափոխեցին Ստեփանակերտ: Համապատասխան բուժօգնություն չստանալով՝ ուղարկեցին Երևան: Բուժումը թողնելով կիսատ՝ նորից վերդառնում է Մարտակերտ՝ 5-րդ բրիգադ, ընդունում է իր հարազատ տանկը: Սամվելը, Մուրադի, Մխոյի, Քաջիկի, Անդոյի կողքին կանգնելով, մասնակցում է Մարտակերտի ազատագրման օպերացիային:

30 մետր հեռու թշնամու արկը ուղիղ հարվածեց փոքրիկ հողաթմբին, մի ազատամարտիկի մարմնի մասնակցությունը խառնեց հողին: Որոշ հեռավորության վրա արկը 4 հոգու գետին

տապալեց: Թշնամու հաշվենկատ հարվածները հասնում էին նպատակակետին: Սակայն հայերը գրոհման տեմպը չթուլացրին:

Սահակը շատ մտերիմ էր Սամվել Ավագյանի հետ:

«Չորս եղբայր էին, երեքը՝ Մուրադը, Մխոն, Սամվել Ավագյանները, ընդգրկվեցին Ղարաբաղյան շարժման մեջ: Արմատներով մշեցի են: Պապը՝ Սահակ Ավագյանը, եղել է Անդրանիկի զինվորը: Թուրքի ձին գողանում էր, ձիու փորի տակից պտտվում էր, թամբին նստում: Անդրանիկը պատժում էր, երբ խաղաղ բնակիչներին անհանգստացնում էին: Քրդերի մեջ կային լավ ու վատ մարդիկ: Նրանք հայերի հետ ախպերություն և շանտղություն էին անում: Նրանց քաղաքականությունը փոփոխական էր, շահադիտական:

Մենք եղբայրներով՝ դասարանի աշակերտների նման, հավաքվում էինք պապիս շուրջը, լսում հայոց Ցեղասպանության պատմությունը: Անդրանիկի և Դրոյի հաշտեցման միջնորդն է եղել»:

Տանկիստ Սահակը և Սամվելը հիշեցին իրենց մարտական ընկերոջ Մուրադի սխրագործությունները: «Մուրադը վեց ամիս մնաց խրամատի մեջ: Նրա երեք որդիներից երկուսը ծառայեցին ՀՀԶՈՒ-մ: Մուրադը ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանի անունով էր երդվում, հպարտանում էր, որ կամավորական խմբերից հայոց բանակ կազմավորվեց»:

Մուրադը պատմեց.«Այուս եղբայրս՝ Մխոն, Երևանի գումարտակի շտաբի պետն էր: 1993թ. Չլդրանից երեք ազերիների գերեվարեցինք, երկուսը փախուստի ընթացքում գնդակահարվեցին: Այն բանի համար, որ մեր աչքի առաջ մոտ 200 մետր հեռավորության վրա քրոջս տղային՝ 23-ամյա ծաղկուն երիտասարդին՝ Դավիթ Նիկողոսյանին, բենզինը լցրին վրան ու վառեցին, մարմինը հալվեց, մոխրացավ, մոխիրը մեզ տվին: Իսկ մեկ տարի առաջ՝ 1992թ., Մարտակերտում մարտի 5-ին զոհվեց 17 տարեկան Հայկ Ռազմիկի Ավագյանը, որը թաղվեց Եռաբլուրում:

1993թ. Մաշտոցի զինկոմիսարիատի տեղակալ Քոչարյանի հետ իմ սեփական ավտոբուսով զենք ու զինամթերք էինք տանում Ստեփանակերտ: Հանձնելուց հետո մեզ առաջարկեց դիակներ տեղափոխել Երևան:

Զաբուխից անցանք Տեղ գյուղ, չհասած՝ ընկանք շրջափակման մեջ: Մուրադի հայրենասիրության ու քաջության, ուժի և ոգու շնորհիվ կարողացանք մեկուկես ժամ դիմադրել՝ ժամանակ շահելով: Օգնության հասած Գորիսի ուժերը մեզ կարողացան ազատել շրջապատումից: Մուրադը 15 հոգու դեմ էր մենամարտում, քարից քար էր թռչում, թմբից թումբ վազում, փոսից թռչում թավալգլոր, ակնթարթորեն թաքնվում: Թշնամին կարծում էր՝ մի ողջ ջոկատի դեմ է կռվում:

1992թ. հոկտեմբերի 23-ին Հադրութի շրջանի պաշտպանական մարտերում՝ Էդիլուի բնակավայրի մոտերքում, թշնամու գնդակից վիրավորվեցի: Կազդուրվելուց հետո մեկնել եմ Հադրութ, Ֆիզուլի, Հորադիզ, Մարտակերտ և մասնակցել մարտական գործողություններին: Մեր հրամանատարը՝ գնդապետ Ռոմիկ Մարդանյանը, քաջ էր ու անվախ»:

Սամվելը մտերիմ էր ՍՊԱՐԱՊԵՏԻ հետ: Նա պատմում է. «Ձեռքս՝ ձեռքին, մեջքս՝ մեջքին, հոգով-սրտով հարգում էի ՍՊԱՐԱՊԵՏԻՆ, որպես նրա զինվոր՝ պատրաստ էի կատարել հայրենիքիս յուրաքանչյուր հրահանգը: Կերել եմ Գրետա մայ-

5-րդ բրիգադ. մի խումբ մահապարտներ. կենտրոնում՝ Ֆելիքս Պետրոսյան, Սուրիկ Խաչատրյան (աջից երրորդ կանգնածը), Գագիկ Սարգսյան՝ Բիլլի (ձախից՝ երկրորդը)

րիկի եփած բորշչը, ՍՊԱՐԱՊԵՏԻ հոր՝ Զավենի հետ նարդի խաղացել: Այսպես մտերիմ էինք: Հիմա սիրտս ցավից մղկտում է»:

Տանկիստ Սահակը Սամվելին հիշեցրեց բուժքույր Անոյի հոգատարությունը, թե ինչպես էր նա խնամում վիրավորներին, հիվանդներին՝ կյանքը վտանգելով, անտրտունջ: Տղաներն այսպես շարունակում էին հիշել անցյալը:

«Կռվող տղաներից ակտիվ էին Մուրադը, Մխոն, Անդոն, Քաջիկը: Խաչիկն իր քաջությամբ ազդում էր և նույնիսկ նրա գոռգոռոցները տղաները հարգանքով էին ընդունում: Մենք բոլորս հասկանում էինք, որ նա անիմաստ չէր գոռգոռում: Իսկ Քաջիկը խմբի ուղնուծուծն էր:

Մեր ազգի ճակատագիրը լավ է լինելու: Վտանգը քաղաքական խաղերի մեջ է, ավելի վտանգավոր են ընտրությունները, որ ջլատում, քայքայում են հայ ժողովրդի միասնության ուժը: Աթոռակռիվ է: Կռվող տղաներին մոռանում են, շրջանցում նրանց շահերը: Եթե մի ազգ մոռացավ անցյալի պատմությունը, նա ապագա չի ունենա, դատապարտված է կործանման: Մեր ներքին ժանգը մեզ ուտում է: Չի գնահատվում կռված տղաների արժանապատվությունը, պետականորեն կարգավի-

5-րդ բրիգադի հետախուզական վաշտ, ձախից չորրորդը՝ Հայկազ Անանյան, ով զոհվեց 1994թ Հակոբ Կամարում

ծակ չի տրվում, որ պատիվ ու հարգանք ունենան: Մոռանում են, որ կռված տղաները տարիներով անգործ են:

Կռվի ժամանակ ոմանք փախան արտասահման, փող դիզեցին, եկան սեփականատեր դարձան, կռվող տղաներին խեղճացրին: Հիմա էլ աշխատում են խղճալ, կարեկցել: Վզներս ծռած տեսնում ենք այս բոլորը, ցավը սա է, մեծ ցավ...

Երեք երեխաների մայրը կամավոր մեկնեց ռազմադաշտ որպես բուժքույր՝ բուժելու և օգնելու ազատամարտիկներին: Տանկիստ Սահակի հետ գնացինք Ծուշի՝ Անիի մոտ: Նա ապրում էր հիվանդ մոր հետ, խղճուկ վիճակում, բնակարանի, լույսի վարձերի պարտքերի մեջ:

«Ես գիտեի, բայց հիմա չգիտեմ - ասաց Անին, - 1989թ.-ի աշնանը Աբովյանի Չափիչ գործարանում գաղտնի զենք էինք պատրաստում, ամեն մի զենք համբուրում էի, որ սիրով հասնի ազատամարտիկներին:

Որպես Զանգեզուրի դուստր, 1993թ.-ի օգոստոսին զենքը ձեռքիս եղա Հադրութի 15 պահակային հենակետերում: Ուղղաթիռով, որպես բուժքույր, իմ մարտական ընկերուհի Սուսաննայի հետ Երևանից ուղղաթիռով թռչում էինք Արցախ: Որոշ ժամանակ անց ուղղաթիռով Երևան էինք տանում 12 վիրավորների և 8 զոհվածների դիակներ: Ուղղաթիռից հաղորդում էինք Երևան, նշում հիվանդների կատեգորիաները, որպեսզի համապատասխան հիվանդանոցներից շտապօգնության մեքենաները ժամանակին հասնեն ուղղաթիռի վայրէջքին, շտապ հիվանդներին հասցնեն համապատասխան հիվանդանոցներ: Դա կատարվում էր խնամքով, հրաշալի կազմակերպված:

Ուղղաթիռը թռչում էր շատ ցածր, որպեսզի թշնամին չնկատեր: Թռիչքը տևում էր մոտ 2 ժամ: Թռիչքներից մեկի ժամանակ նկատեցի, դիակներից մեկի գլուխը չկար, գլուխը առանձին էր, մարմինս ցնցվեց, ձեռքերս դողացին, ծնկներս թուլացան, աչքերս մթագնեցին: Սրտաքամ տեսարան էր: Թշնամու արկի բեկորը թռցրել էր գլուխը, անջատել պարանոցից: Դիահերձարանում՝ պարանոցին շին հագցրի, պոլիէթիլենային տոպրակ կարեցի: Այս բոլորն արեցի, որ հարազատները չսարսափեն: Քարացել էր նաև Զորիկը:

Թալիշի ազատագրման ժամանակ Արաբկիրի Գևորգի գլխի կափարիչը թշնամու արկը թռցրել էր: Նայեցի ուղեղը աշխատում էր, ոսկորի կտորներից մի երկու փոքրիկ կտոր գտանք, մետաղյա լարերով կարեցի, հարմարեցրի, կապեցի: Եղբորը այս բոլորի մասին տեղյակ պահեցի, որ զգույշ տեղափոխեն:

Հետախույզները բերեցին վրաստանցի Վալերիկին՝ «Բիձո», վիճակը շատ ծանր էր, արկի բեկորը ուսից միջանցիկ բացվածքով դուրս էր եկել: Նայեց ինձ, համբուրեցի ճակատը, ուժ առավ, մի կերպ խոսեց. «Անի ջան, նամակ եմ ստացել, կինս արու զավակ է ծնել: Վերքս այնպես կապիր, որ կենդանի մնամ, հասնեմ տղայիս գրկեմ ու նոր մեռնեմ»: Արեցի՝ ինչ կարողացա, բայց ավա՜ղ օդում՝ ուղղաթիռում մահացավ: Երբ լսեցի, ինձ դատապարտեցի, մեղադրելով մտածեցի, թե որ երևի վերքը խնամքով չեմ կապել: Նա 25 տարեկան էր:

Տղաներից մեկի դիակը երկար ժամանակ գտնվում էր թուրքերի գրաված տարածքում: Մեկ շաբաթ հետո կարողացան դիակը բերել: Մարմինը քայքայվում էր, քթից, աչքերից, բերանից որդեր էին դուրս գալիս:

Ես ինձ ներշնչեցի, նախապատրաստեցի, սառնասրտորեն մաքրեցի, մեկ օր սպասեցի որ վերջին որդը դուրս գա: Ախտահանեցի, մաքրեցի: Թարմացնելով դիակը՝ ուղարկեցինք հարազատներին երկու ոտքերը կտրած մեկ ուրիշ դիակի հետ: Ոտքերը չկար, որ կարողանայի դիակը տեսքի բերել:

Այդ օրերին Մատաղիսում կռիվը թեժ էր, թշնամու հրետանային արկերն այնքան շատ էին, որ հայկական հողում պայթելով՝ կարող էին գետնի և երկնքի միջև կիսալուսին նկարել: Երեք ճակատով էինք կռվում, բուժքույրերը՝ Ժենյան, Անահիտը, ես, շնչելու ժամանակ չունեինք: Ժամը մեկ բերում էին 7-8 վիրավորներ, դիակների թիվը շատ էր:

Լուլասազում «Հակոբ Կամարիի» խոտերի մեջ կորցրի պինցետը և կտրող դանակը՝ նշտարը: Չէի կարողանում վերքի խորությունը, բեկորի դիրքը, տեղը որոշել մատներով, եղունգներս մաքուր չէին, ստիպված ատամներով ու լեզվով մտա վերքի մեջ: Վերքը երիկամի մոտերքում էր, նա ուշագնաց եղավ, բուժեցի, հիմա կենդանի է, ապրում է:

Վիճակս վատացավ: Հրամանատարս ռուսախոս էր, ինձ քաջալերելու համար առաջարկեց ծխել և պարզեց ծխախոտը:

Ես կյանքում սպիրտ և ծխախոտ չէի օգտագործել: «Անի, ծխի՛ր, ես ուրիշ ոչնչով չեմ կարող օգնել, բացի ծխախոտից: Մեխանիկորեն ծխախոտը վերցրի, ծուխը կուլ տվի, զգացի գլխապտույտ: Դառը ուտելիք է: Ուզում, ուզում ես ծխախոտը ուտել: Ծխելը այդպես եմ սովորել: Իմ տառապանքը բուժելի է, զոհվածների հարազատների ցավը, մրմուռն է անբուժելի:

Կանչ եղավ, տանկիստ Եդիգարյան Սահակն էր, արյունահոսությունը դադարեցրի, ավտոմեքենայով բերեցինք դաշտային բուժսանմաս:

1994թ.-ի մայիսին ՀՀՊ նախարարի հրամանով նշանակվեցի 5-րդ բրիգադի տանկի գումարտակի բուժքույր:

Տոնաշենի անցագրային կետում հոգնեցուցիչ էր, փախա ռազմագիծ, որ ավելի օգտակար լինեմ: Բրիգադի շտաբի պետ գնդապետ Ֆրունզիկ Ավագյանը բռնեց, պատժեց: Կապավորն ինձ կանչեց շտաբ, 10 շուրջօրյա կալանատուն ուղարկեց: «Գնա ուր ուզում ես, բայց նայիր՝ չսատկես, դու զորքին պիտանի ես: Եվ ասաց՝ զինվորական կարգապահությունը բոլորի համար նույնն է: Պահակային ծառայությունը լքել ես, փախել, ով է քեզ թույլատրել»:

Մի քանի օր հետո թշնամու հրազենից վիրավորվեց, աղջիկներն հասան, առաջին բուժօգնությունը ցույց տվեցին:

Ձախից երկրորդը՝ Արմեն Ասատրյան: Մարտակերտ 1994 թ.

Ֆիզուլիում բուժօգնության ավտոմեքենաների վարորդը գյումրեցի էր: Ժորան Իշեղլի, Աբդուլհռախմանլի, Քենդի, Զիվառլու գյուղերի համար մղվող մարտերի ժամանակ առանց քարտեզի ավտոմեքենան արագընթաց վարում էր՝ հասնելու վիրավորներին օգնության: Նկատեցի զինվորներ, որոնց թևին կապված էր կիսալուսինը՝ Ադրբեջանի զինվորական զինանշանը: Թշնամու ծամբարում էինք հայտնվել: Զգալով իրավիճակը՝ ժորային զգուշացրի մեքենայի ընթացքը չփոխել: Ժորան, ինչպես միշտ, իր հետ զենք չէր վերցնում: Հիմա հաշվարկային զենքը իմ հետ էր և Ֆ-1 ձեռքի նռնակը, որ հրամանատարիս խորհրդով պահում էի ձախ կրծքիս կրծքակալի մեջ:

Նայեցի Ժորային, ձեռքը դողում էր: Ես աշխատեցի խոսքերով գոտեպնդել՝ ինչ ասում եմ, լուռ կատարիր: Եթե կանգնեցնեն, ընթացքդ դանդաղեցրու, իբրև կանգնում ես: Ավտոմեքենան քողարկված էր, շորով ցանցապատված: Ավտոմատը լիցքավորեցի, նռնակի օղը դուրս քաշեցի: Անցանք մոտ 100 մետր, Ժորան կտրուկ շուռ եկավ ու ավելացրեց մեքենայի ընթացքը: Թշնամին կրակ բացեց, մենք արդեն բոլորի հետևում

Կենտրոնում Արմեն Ասատրյանը, Մարտակերտ, 1994թ

էինք, հողե ծանապարհով ավտոմեքենան սլանում էր բարձր արագությամբ: Չկարողացանք վիրավորներին հանել մարտադաշտից: Տեղ հասանք: Մարմինս քարացել էր, մատներս փայտացել էին, անզգայացել, չէին անջատվում նռնակից: Հայրական կողմից նախնիներն են՝ Մելիք Կարապետի, Ծահենի Գիչունց, հիմա ապրում եմ Ծուշիում՝ Արամ Մանուկյան 9/22 բնակարանում՝ հաշմանդամ մորս հետ: 60 հազար լույսի ու այլ վարձերի պարտքերի մեջ եմ: Հպարտ եմ, ապրում եմ Զանգեզուրի լեռների քերծերի կարոտով, ինձ բուժում եմ ազատագրված յոթ շրջանների հաղթանակով»,- պատմում է Անին:

Բուժքույր, ենթասպա Անին մարտական գործողությունների ողջ ընթացքում աչքի է ընկել իր խիզախությամբ, բազմաթիվ անգամ վտանգելով կյանքը, մարտի դաշտից հանել է վիրավորներին, ցուցաբերել առաջին բուժօգնությունը, բազմաթիվ անգամներ որպես դոնոր արյուն է տվել արյունաքամ վիրավորներին: 1994թ.-ի Տոնաշեն գյուղի ազատագրման ժամանակ վիրավորվել է, ստացել ցնցակաթված: Նրան շնորհվել է լեյտենանտի կոչում և տարբեր խրախուսանքներ:

Ապրում է՝ չհուսալով ավելին, չնայած իրականում նա պիտի ապրեր բարեկեցիկ կյանքով, շրջապատված լիներ սիրով, գուրգուրանքով, չէ որ նա կին-ազատամարտիկ էր՝ մեկը՝ «Տիկնայք փափկասուն հայոց աշխարհի»:

Արմեն Ասատրյանի նախնիները Սիրիայի Տիգրանակերտ քաղաքից են: Մայրը հայուհի է, հայրը՝ եզդի: Եկել, բնակություն են հաստատել Մասիսի Մարմարաշեն գյուղում: 1989թ. ընդգրկվել է Մասիսի գնդի կազմում: 17 տարեկան Արմենն իր համառությամբ հաղթահարել է Վազգեն Սարգսյանի դիմադրությունը և որպես բացառություն, դարձել «Արծիվ-4» մահապարտների ջոկատի անդամ, որի հրամանատարն էր Լևոն Գրիգորյանը:

- Այս փոքրիկին ինչո՞ւ եք բերել մարտադաշտ,- ասաց մի օր Վազգեն Սարգսյանը՝ նրան տեսնելով:

Ծուշիի ազատագրման ժամանակ դաշնակ Ժիրոյի ջոկատի կազմում մասնակցել է Ծուշիի ազատագրմանը: Գրոհի ժամանակ ընթանում էր գրոհողների առջևից: Հետագայում ընդգրկվում է 5-րդ բրիգադի երրորդ գումարտակի կազմում՝ օր

առաջ ձգտելով դուրս պրծնել այդ զորամասից՝ Մանվել Գրիգորյանի կոպտության պատճառով:

«Մարտակերտի Մեծշեն գյուղում ավտոմատը տեղացի բնակչի հետ մածունով փոխեցի: Երիտասարդ Արմենը վիճում է Մանվել Գրիգորյանի հետ, բայց այն թեթև չանցավ: Գոմեշը ականի վրա պայթել էր, մի ոտքը ամբողջովին եփեցինք կերանք: Մանվելն իմացավ:

Թուրքի ավագ լեյտենանտին գերեվարեցի: Անդրանիկ Միսակի Հարությունյանի հետ քայլում էի, թուրքը գալիս էր մեր թիկունքից, մեզ չէր նկատել:

1993թ. փետրվարի 17-ից 3 օր եղել եմ թուրքերի մեջ թաքնված, թփերի մեջ սոված ու ծարավ, երբ հայերը գրավեցին, ազատվեցի: Երեկոյան մարտի ժամանակ թշնամու արկի բեկորից գլխիցս վիրավորվեցի՝ ստացա կոնտուզիա: Վազգեն Սարգսյանը փաթաթվեց, համբուրեց ճակատս: Երկրորդ անգամ թիկունքից վիրավորվեցի՝ 1994թ. մայիսի 12-ին Թալիշի Արեգսարի համար մղվող մարտի ժամանակ: Մարտական գործողությունների ժամանակ կատարել եմ հրամանատարների հրամանները, ցուցաբերել խիզախություն, հարգվել եմ ընկերների կողմից:

5-րդ բրիգադի շտաբի պետ գնդապետ՝ Ֆրունզիկ Ավագյանը իմ սիրելի հրամանատարներից էր, եղբայրություն էինք անում: Ոտքով զգուշորեն քայլում էինք Տոնաշենի ուղղությամբ, միասին մաքրում ականները, պայթեցնում, ականազերծում ճանապարհը: Մարմնումս բեկորներ շատ կան, ցավեցնում են, ազատվելու համար ժամանակ, միջոց է անհրաժեշտ:

1988-89թթ. Երևանից Բաքու գնացող բեռնատար թնդանոթներ տեղափոխող վագոնների, բոլոր թնդանոթների փողերի մեջ ծծմբաթթու էինք լցնում, թնդանոթները շարքից հանում», պատմում է Արմենը:

Հայ ժողովրդի անցած ճանապարհը մաքառում ու ոգու փորձության ճանապարհ է: Դարը սակավ է ծնում մեծ անհատներ, որոնք սրբագրեն ու ոգեղենացնեն մաքառման ճանապարհը նախանշեն ժամանակի ուղին և իրենց ուսերին վերցնեն ժամանակի բեռը: Այդ մեծ անհատներից էր Ազգային հերոս ու ազգի ծառա, զինվոր ու ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը: Մեր

նորօրյա պատմության մեջ ասուպի ցոլքով ու աստղի հավերժությամբ փայլատակած մեծ հայը, որի մասին հետագա սերունդները հպարտությամբ ու ակնածանքով են խոսելու: Մեր խնդիրը շատ պարզ է ու դժվարին՝ չկորցնել նրան երկրորդ անգամ:

Շատ բառերի մեջ շատ ունայնություն կա, շատ լռության մեջ՝ մոռացության վտանգ: Արդարացվածը մեծ կամ փոքր գործն է՝ հանուն վեհ գաղափարների, ու այդ վեհ գաղափարները անխաթար կրողների: Մեր խղճի հանգստության, մեր գոյատևման ու հզորացման համար հարկ է ամեն օր, ամեն ժամ հիշել ու վերապրեցնել նրանց, առանց որոնց մեր ժամանակները պատմության էջերում կխունանան:

Այսօր տասն է օգոստոսի: Ոչինչ չասող ու ոչինչ չհիշեցնող սովորական մի օր՝ նվիրված այնքան արտասովոր մի մարդու: Օրվա նպատակը մեկն է՝ մաքրագրել առօրեականը, որ յուրաքանչյուր սովորական օր արտասովոր դառնա՝ արտասովոր մարդկանց կենդանի շնչով:

Էլի մեկ-երկու լիարժեք քայլ, էլի մի քիչ համբերություն, փոխադարձ հանդուրժողականություն և Վազգեն Սարգսյանի ու բոլորիս երազած Հայաստանը այլևս իրականություն է լինելու՝ նաև Վազգեն Սարգսյանի հորդորած հավատով ու ոգով:

Այս փոքրիկ հուշաքարը, որ Սուրբ Մասիսների անունը կրող քաղաքում հավերժացնում է ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանի գործն ու անունը, ամենևին էլ արժանի հատուցումը չէ Ազգային հերոսի հիշատակին: Սակայն կարևորը, այնուամենայնիվ, գիտակցման ու գնահատման կարողությունն է, որ այս փոքրիկ նախաձեռնությամբ ցուցաբերեց Ասատրյան Արմենը («Սայաթ»):

5-րդ մոտոհրաձգային բրիգադը Արցախյան պատերազմի ընթացքում պաշտպանել և ազատագրել է Արցախյան շուրջ 80 բնակավայր: Պատերազմի ընթացքում բրիգադը տվել է 390 զոհ: Բրիգադի կազմում մարտնչել են հանրապետության գրեթե բոլոր շրջանների կամավորականները, կադրային սպաներ, որոնցից 5-ը գեներալներ են: Առանձնահատուկ նշվեց զանգեզուրյան ոգին, նժդեհական գաղափարախոսությունը, նախնիների կանչով փայլատակեց ազատամարտիկների արցախյան գոյամարտը:

«ՎԱՐԴԵՆԻԿ» ՋՈԿԱՏ

Հայաստանի ամենամեծ Վարդենիկ գյուղի ազգաբնակչությունը անհանգիստ էր: Մեծամասնությունը Ղարաբաղյան շարժումից անտեղյակ՝ միմյանց հարցուփորձ էր անում՝ հասկանալու, թե ինչ է կատարվում:

Հավաքվեցինք գյուղի կենտրոնում, որոշեցինք ոտքով քայլել մինչև Երևան, միանալ օպերայի ազատության հրապարակում հավաքված ժողովրդին:

Կազմավորվեց «Վարդենիկ» ջոկատը՝ 60 հոգուց, որը լծվեց Հայաստանի սահմանների պաշտպանության, Արցախի ազատագրման սուրբ գործին: 1989թ. լսելով ջոկատի հրամանատար Դավիթ Այվազյանի վիրավորվելու լուրը՝ Տարոն, Ստեփան, Գևորգ Այվազյանները, ուղղաթիռով մեկնեցին Ստեփանակերտ: Գիշերով հասան տեղ: Ասկերանի օդանավակայանում տեղանքին անծանոթ՝ շփոթված շտապեցին հասնել տղաներին: Ճանապարհը վտանգավոր էր, վարորդը չէր համաձայնում այդ դժվար խնդիրը հաղթահարել:

Գևորգը որոշեց «Հապարոժեցի» վարորդի հետ խոսել: Պայմանավորվեցինք, որ նա մեզ հասցնի Փարուխ, մենք իրեն զենք տանք: Հասանք տեղ, մեզ դիմավորեց Մամբրեի Դավիթը իր ջոկատի տղաներով: Շատ ուրախացանք, որ իրար գտանք: Սակայն վարորդը մեզ հայհոյեց ու նեղացած՝ առանց զենք ստանալու վերադարձավ: Զենք չունեինք, վարորդին խաբել էինք: Մի տուփ ծխախոտ տվեցինք: Գիշերով գնացինք պահակակետեր: Թուրքերը կրակում էին և անցան հարձակման, լուսադեմին ետ քաշվեցին:

Դա նման էր փորձության: Մեզ վստահեցին ավելի վտանգավոր, պատասխանատու հենակետեր: Անծանոթ ու մթին այդ տարածքում դիրքային մարտերի ժամանակ շնագայլերի ոռնոցների ներքո կիսավախեցած լուսացրինք այդ գիշերը:

Երկրորդ փորձությունից հետո մեզ ընդունեցին ջոկատի կազմում՝ համարելով իրենց լիարժեք ազատամարտիկ ընկերը: Վերադառնալով՝ տղաները կազմավորեցին երկու ջոկատ. առաջին ջոկատի հրամանատարը Պարգև Մանուկյանն էր, և

Գևորգ Այվազյան՝ «Մամբրեի Գևորգ», «Վարդենիկ» ջոկատի շտաբի պետ

Սմբատ Այոյան, 1993թ

այն ընդգրկվեց Մարտունու ջոկատի կազմում, երկրորդինը՝ Գևորգ Այվազյանը, որոնք ընդգրկվեցին Մասիսի «Հորավար Անդրանիկ» գնդի կազմում: Նրանք մեկնեցին Լաչին: Այդ ջոկատից էին Կոռնիձորում Արաբոյի զենքի վրա երդվյալ Արտակ Օհանյանը՝ «Գուսան», Դավիթ Այվազյանը՝ «Արծիվ»:

1992թ. դեկտեմբերին Գնել Մանուկյանի միջնորդությամբ երկու ջոկատները ՀՀ ՊՆ նախարարի համաձայնությամբ կազմավորեցին «Վարդենիկ» վաշտը: Հրամանատար նշանակվեց Օնիկ Պետրոսյանը, շտաբի պետ՝ Գևորգ Այվազյանը: 60 հոգուց կազմված վաշտը կատարում էր պաշտպանության նախարարի հրամանները:

1993թ. հունվարի 9-ին Քաշաթաղի «Կոբրա» կոչվող հատվածում կատաղի մարտեր էին ընթանում: Օրեցօր ծանրանում էր իրավիճակը, զոհերի թիվը գնալով ավելանում էր: «Վարդենիկ» վաշտին ուղարկեցին օգնության:

Լուսաբացին հասնելով տեղ՝ ընդունեցին թիվ-01 պաշտպանական հենակետում: Ռազմաճակատի պաշտպանական գիծը 5 կմ էր՝ 5 հենակետում: Առաջին հենակետը պաշտպանում էր Սուրմալու ջոկատը. հրամանատարն էր Արթուր Խաչատրյա-

«Վարդենիկի» ջոկատ Քաշաթաղի «Կորրա 01» հենակետերում, 1993 թ.

նը, շտաբի պետը՝ Արթուր Մարգարյանը, որին օգնում էր «Վարդենիկ» վաշտը: Գեներալ Գ. Դալիբալթայանից ստացանք հրաման՝ թողնել բարձունքը և նահանջել ելման դիրք: Երկու ջոկատների հրամանատարները որոշեցին չնահանջել. դիմեցին ռիսկի: Ընկան անելանելի վիճակի մեջ, ունեցան ծանր վիրավորներ, որոնց տեղափոխեցին Քաշաթաղի հիվանդանոց: Մարտը թեժացավ: Տղաները իրենց խոսքին տեր

«Վարդենիկի» ջոկատը Քաշաթաղի ռազմական շտաբի բակում, 1993թ.

«Վարդենիկ» և Լիճք ջոկատների ազատամարտիկները «Կորրա 01» հենակետում 1993

կանգնելու համար ուժեղացրին ճնշումը թշնամու դիրքերի վրա: Թշնամին կորուստներ տալով՝ առաջին դիրքերից նահանջեց: Տղաները գրավեցին «Կորրա» բարձունքը: Այն առանց խրամատների էր, գետնատներ էին:

Ուտելիքը վերջացել էր: Թուրքերից մեզ հասավ մի սաղավարտ, որը ծառայեց ձյունը հալեցնելու և սառեցնելով ջրի տեղ օգտագործելու համար:

Երկու օր այդպես ապրեցինք: Ունենալով դիրքային առավելություն՝ ամրացանք այդ բարձունքում, օգնություն ստացանք թիկունքից, մեզ հասցրին սնունդ, զինամթերք և վառելիք:

Մի քանի օր հետո եկավ ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը, բարձրացավ դիրքերը, ստուգեց խրամուղիները, պաշտպանական դիրքերը, նրանց միջև եղած հեռավորությունները, ազատամարտիկների կենցաղը ու նրանց բարոյահոգեբանական վիճակը: Նրանց հետ նստեց ճաշի, կատակեց, պատմեց թշնամու մտադրությունները: Շոշափվեց այն միտքը, թե ինչպես Արևմտյան ուժերը փորձում են Անդրկովկասը անջատել Ռուսաստանից, ԱՄՆ-ի օգնությամբ Թուրքիայի մուտքը Անդրկովկաս և Միջին Ասիայում միավորվելու ու ամրանալու հարցերը, Հայաստանի կողմնորոշումը, անսխալ գործելը: Գովեստի, խրախուսական խոսքեր ասվեցին «Վարդենիկ» վաշտի հասցեին, նրանք արժանացան դրամական պարգևի: Ապա

«Վարդենիկ» ջոկատը Քաշաթաղի «Կոբրա 01» հենակետերում: 1993 թ.

մեկնեցին Քարվաճառ՝ խոստանալով, որ շուտով իրենց կփոխարինի «Հատուկ գնդի» առաջին գումարտակը: Վաշտը նախապատրաստվում էր մասնակցելու Քարվաճառի ազատագրման օպերացիային:

ՍՊԱՐԱՊԵՏԸ կնայեր դեմքիդ ու կկարդար հոգիդ: Նրա հետևից գնում էր մի ողջ ազգային բանակ, նրա սիրտը ոնց չէր ծաքում, հայ ազգի ծանր ապրումները նա իր մեջ էր կրում:

«Կոբրա» բարձունքի հարևանությամբ Բալդիր-Գյանլի գյուղի հայկական ուժերին օգնելու և գյուղը ազատագրելու համար ՀՀՊ նախարար Վազգեն Մանուկյանի հրամանով վաշտը արժանացավ դրամական պարգևի և շնորհակալագրի:

Վաշտը մասնակցեց Քարվաճառի (Քելբաջարի) համար մղվող մարտերին: Մայիսին, հրադադարից հետո, «Վարդենիկ» վաշտը՝ որպես պայմանագրային հիմունքներով գումարտակ, ՀՀ Պաշտպանության նախարարի հրամանագրով ընդգրկվեց թիվ 54016 զորամասի կազմի մեջ:

Մինչև հրադադարը՝ Օմարի լեռնանցքի մարտական գործողությունների ժամանակ ունեցել ենք երկու զոհ և քսան վիրավոր:

Պատերազմից հետո կազմավորվեց ազատամարտի վետերանների «Վարդենիկ» հասարակական կազմակերպությունը,

Ազատամարտիկները ճաշի ժամանակ: «Կոբրա 01» հենակետերում: 1993 թ.

որի նախաձեռնությամբ Վարդենիկ գյուղում կանգնեցվեց հուշակոթող՝ նվիրված Արցախյան պատերազմի զոհերի հիշատակին: Այն զուգահեռ օգնում էր զոհվածների ընտանիքներին, հաշմանդամներին և մասնակիցներին, նրանց բարոյական և ֆիզիկական աջակցություն ցուցաբերում:

Թուրքական հետախուզությունը՝ օգտվելով խորհրդային 4-րդ բանակի հետախուզությունից, սկզբնական շրջանում հայերի նկատմամբ ուներ առավելություն: Բայց հայերի հետախուզությունը մասնագիտորեն հզոր էր: Ղուբաթլու, Քաշաթաղ (Լաչին), Հոչազ, Քարավաճառ (Քելբաջար), մինչև Օմար ուղղությամբ ընթացող մարտական գործողությունների համար հետախուզական տվյալներ են հաղորդել Գորիսից Վարդան Բալայանը, Սամվել Հովհաննիսյանը: Գյուլիբերդում Ծաղկահովտի նոր բնակիչ, Կոռնիձոր գյուղի ջոկատի հետախույզ Վարդան Բալայանը իր ստեղծած կաթ ու մածնով հյուրասիրեց: Մի գունդ պանիր լավաշի մեջ փաթաթեց և հետներս դրեց:

Հեռախոսազանգով կապվեցինք Գորիս՝ հետախույզ Սամվել Հովհաննիսյանի հետ, որոշ ճշտումներ, ուղղումներ կատարելուց հետո պայմանավորվեցինք մեկ օր հետո Կոռնիձորում հանդիպել, որտեղից մեկնեցինք Հագուրի գետափ, լե-

«Վարդենիկ» և «Լիճք» ջոկատների ազատամարտիկները հենակետերում: Կոբրա 01: Ջախից շտաբի պետ Գևորգ Այվազյան: 1993 թ.

ռան լանջին ձգվող հարթավայրի վրա տարածված Գյուլիբերդ գյուղը՝ Հագուրի գետի կամրջի մոտ: Գյուլիբերդից Խնձորեսկ կապող հողե ճանապարհը անցնում էր Ջիջիմլի գյուղի գերեզմանոցի մոտ իրար կողք կողքի կառուցված կիսաքանդ մեջիթի և եկեղեցու մոտով:

Երկու հուշարձանները ավերակների էին նման, ամառվա շոգին անասունների հանգստավայր էր:

Սամվելը՝ այդ խիզախ հետախույզը, քար ու թփին, փոս ու թմբին ծանոթ, տեղանքին գիտակ էր, սար ու ձորերը, անցումները անգիր գիտեր: Անցուդարձին տեղյակ էր: Սամվելը մեզանից առաջ էր գնացել: Եկանք Գորիս, քարտեզագրեցինք: Սամվելը կապվեց գեներալ-մայոր Սամվել Սաֆարյանի հետ՝ անցյալից որոշ ճշտումներ կատարելու համար:

1991թ. Գորիս-Կապան տանող ճանապարհը փակված էր: Թուրքերը գրոհում էին Ծուռնուխի ուղղությամբ: Վ. Սարգսյանը Սամվել Հովհաննիսյանին հանձնարարեց իր հետախուզական խմբով մեկ գիշերվա մեջ ուսումնասիրել և պարզել թշնամու ուժերը և ուղղությունները, նրանց նպատակները: Այն կատարվեց փայլուն ձևով: Հաջորդ առավոտյան հրավիրեց խորհրդակցություն, քննարկումից հետո որոշման մեջ ասվում էր.

Գառնիկ Խաչատրյան, Յուրի Սարգսյան, 1993 թ., «Կոբրա 01» դիրքերում

Սիարոն Գրիգորյան (Վզո) զոհվել է 1993 թ. «Կոբրա 01» դիրքերում

«Ծտապ կարգով հասնել օգնության Վահան Հարությունյանին, նրա ջոկատին, որ գտնվում էր Ծուռնուխում և հայտնվել էր շրջափակման մեջ»:

Օնիկ Ստեփանյանը Կապանից Գորիս տանող ճանապարհի ուղղությամբ հարձակվելու էր թշնամու վրա: Իսկ Գորիսից Կապան տանող ճանապարհի ուղղությամբ Սամվել Հովհաննիսյանի խումբը հետախուզական տվյալներով պարզաբանում էր հարձակման աջ ու ձախ ուղղությունները, որի մասին պետք է տեղեկացվեր գնդապետ Սամվել Սաֆարյանին:

Ծուռնուխից, Կապանից և Գորիսից հարձակման անցավ Վահան Հարությունյանի գումարտակը: 3 ժամ տևած մարտերը ստիպեցին թշնամուն 5 կմ նահանջել: Գորիս-Կապան ճանապարհը սկսեց լիարժեք գործել: Սամվել Հովհաննիսյանը Վազգեն Սարգսյանին ասաց.

- Այս մարտերում գնդապետ Սամվել Սաֆարյանը թե՛ զինվոր էր, թե՛ մեր ղեկավարը: Ես, որպես հետախույզ, այդ չհասկացա:

Վ. Սարգսյանը պատասխանեց.

- Մեծ ու փոքր, զինվոր ու գեներալ, նախարար ու ՍՊԱՐԱՊԵՏ մարտի դաշտում բոլորը ազգի համար զինվոր են: Այդ է

Օնիկ Պետրոսյան,
1993 թ., «Կոբրա 01» դիրքերում

վկայում հաղթանակը և Աստծու օրհնանքը:

Զանգեզուրի հետախույզներից Սամվել Հովանիսյանն Ազգային ազատագրական պայքարի առաջին իսկ օրից մասնակցել է ՀՀ սահմանների ինքնապաշտպանությանը, Ղարաբաղի և Սյունիքի տարածքների պաշտպանական մարտերին:

1992թ. մայիսի 18-ին մասնակցել է Լաչինի շրջանի ազատագրմանը, որից հետո 1993թ. ձմռանը հատուկ մարտական առաջադրանքով, ՀՀ ՆԳՆ հրամանով, գործուղվել է, մասնավորապես Լաչինի շրջանի Հոչազի, Քելբաջարի տարածքների պատերազմական գոտի՝ որպես հետախուզական խմբի ղեկավար:

Բազմաթիվ անգամ եղել է սահմանված կարգով գրանցված կամավորական ջոկատների հետ տարբեր կրակագծերում:

Ընդգրկվել է ռազմական և մարդատար օդանավերի, ուղղաթիռների անձնակազմերում և իրականացրել ռազմական գործողությունների գոտու սպասարկում (Կապանում, Կուբաթլիում, Լաչինում, Քելբաջարում):

Կոռնիձորի, Խոզնավարի, Տեղի, Ծուռնուխի, Լաչինի, Աղբուլաղի, Որոտանի, Արամուսի, Ղուբաթլուի, Զանգելանի, Հորադիզի, Կապանի, Քելբաջարի մարտերում վատթարացել էր առողջական վիճակը, որի պատճառով տեղափոխվել է Կապանի հիվանդանոց՝ բուժվելու:

Որպես այս ամենի հետևանք՝ 1997թ. մայիս ամսից հիդրոնեֆրոզված երիկամի և միզաքարային հիվանդությունը բուժելու նպատակով 2.5 տարի ստացիոնար պայմաններում չորս անգամ վիրահատվել է:

Նախարարի անմիջական միջնորդությամբ վերջին անգամ վիրահատվել է ամերիկյան վիրաբույժների կողմից, և ուշագրավ է, որ նախարարի նախաձեռնությամբ 2 հոգով՝ Սամվել

Հովհաննիսյանն ու Արարատ Հակոբյանը որպես կամավոր մահապարտներ Հոչազում ընդգրկվել են հետախուզական խմբում:

Հիշարժան է, որ Գորիսի ՆԳ բաժնի հերթապահ մասից գողացված 48 տաբելային մակարով տիպի զենքերը ամբողջությամբ ճանաչել, ստացել ու հանձնել է Գորիսի ՆԳ բաժնի հերթապահ մաս, ԱԱ փոխնախարար՝ Գ. Գրիգորյանին:

Սամվել Հովհաննիսյանը որպես հետախույզ շատ-շատերին էր ճանաչում և համագործակցում: Այդ թվում՝ Ապարանցի Ավետիքին (հոպարներին), որը նաև կապավորի դեր էին կատարում:

Սամվել Հովհաննիսյան, հետախույզ



Գեներալ մայոր Սամվել Սաֆարյանի և հետախույզ փոխգնդապետ Սամվել Հովհաննիսյանի գծած սխեմատիկ մարտական քարտեզ, 1990-91 թթ.

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿ

1989 թ.դեկտեմբերին Մովսես Գորգիսյանի և Աշոտ Նավասարդյանի կողմից հիմնադրվեց «Անկախության բանակ» ռազմահայրենասիրական միավորումը, որի հրամանատար նշանակվեց Մովսես Գորգիսյանը, իսկ գլխավոր հրամանատար՝ Աշոտ Նավասարդյանը: Երասխավանում Մովսես Գորգիսյանի զոհվելուց հետո ստեղծվեց ռազմական խորհուրդ, որի նախագահ ընտրվեց Աշոտ Նավասարդյանը, խորհրդի կողմից բանակի հրամանատար ընտրվեց Լեոնիդ Ազգալդյանը, շտաբի պետ՝ Աշոտ Աղաբաբյանը:

Աշոտ Նավասարդյանի ու Պարույր Հայրիկյանի տարաձայնության պատճառով «Անկախության բանակը» առանձնացավ: Երկրի քաղաքական իրավիճակը պահանջում էր ունենալ Հայոց ազգային պետական բանակ՝ ՀԱԲ: «Անկախության բանակի» հիման վրա ստեղծվեց քաղաքական միավոր, որն անվանեցին «Հանրապետական» կուսակցություն, նախագահ ընտրվեց Աշոտ Նավասարդյանը: Այդ կուսակցության ղեկավարներից Աշոտ Աղաբաբյանը, Լաչինի պատմական Քաշաթաղից, հատկապես Տիգիք-2, Տիգիք-1 գյուղերի ուղղությամբ, գնդապետ, նախկին՝ ՀՀՊ նախարար Միքայել Հարությունյանի հետ մասնակցում էին Հարավ-Հյուսիս ռազմաճակատի, ինչպես նաև Քարվաճառի ազատագրման մշակման օպերացիային: Թիկունք-ճակատ կապն ուժեղացնելու համար վերադառնում է թիկունք, Աշոտ Նավասարդյանի հետ լծվում «Հանրապետական» կուսակցության ծրագրերի իրականացման գործին:

ՀՀ ԶՈՒ մի շարք խաչեղբայրներ հրամանատարները երդման արարողությունից հետո, 1990 թ.

Այս են վկայում «Անկախության բանակի» հետախույզ դիվերսանտ, մայոր Սլավիկ Բաղդասարյանը, ծածկանունը՝ «կապանցի Բուլուշ», որը կնոջ՝ բուժքույր Անուշ Ոսկանյանի հետ Ստեփանակերտի 3-րդ վաշտի կազմում մարտնչելով ընդգրկվեց թիվ 97 առանձին մոտոհրաձգային բրիգադի կազմում՝ որպես ինժեներա-սակրավորների ծառայության պետ:

Սլավիկը գովեստով էր խոսում իր մարտական ընկերոջ՝ «Բուռնաշի» մասին: Նա պատմում էր, թե ինչպես Աշոտ Աղաբաբյանը ոգևորում էր տղաներին: Մեջբերում ենք. «Յուրաքանչյուր հայի ներսում ցավ կա, որոնց ճակատագիրը դառն է

Թորգոմ Նալբանդյան (ձախից) Աշոտ Նավասարդյան, Աշոտ Աղաբաբյան և սփյուռքահայ լրագրող Սևան, 1990 թ.

Բուռնաշը մարտական ընկերների հետ, Շուշիի ազատագրումից առաջ, 1992 թ.

Աշոտ Նավասարդյանը և Աշոտ Աղաբաբյանը հետախուզական վաշտի հետ

Անկախության բանակի հիմնադիր-հրամանատար Աշոտ Նավասարդյանը և շտաբի պետ Աշոտ Աղաբաբյանը՝ Բուռնաշը Շուշիի ազատագրումից առաջ, 1990 թ.

ՀՀ ՀՈՒ մի հրամանատարներ Սեյրան Սարոյանը, Ռուբեն Ստեփանյանը, Ադմիրալը, Բուռնաշը հոգևոր առաջնորդի հետ, Սուրբ Էջմիածին, 1990 թ.

Հորադիզ-Ֆիզուլի մարտերում վիրավորված Աշոտ Աղաբաբյանը՝ Բուռնաշը դստեր՝ Նաիրայի և մարտական ընկերների խնամքի ներքո, 1993 թ.

եղել: Հայի առաքինությունները խաղաղության արգասիք են, իսկ արատները՝ բռնադատման հետևանքներ:

Մեր նպատակն է եղել Հայաստանը տեսնել ազատ: Հզոր թագավորություն ունենալով, հաճախ կորցրել ենք մեր անկախությունը, իսկ թուրք փաշաներն անապատ են դարձրել այն երկիրը, որտեղ Աստված մարդուն ստեղծել է իր իսկ պատկերով: Այսօրվա հարկադրված պատերազմում անհույս չենք մարտնչել, չենք ասել փրկության ոչ մի հույս չկա: Ասել և կրկնում ենք. հաղթանակին հասնելու համար պետք է մեկ ծակատով պայքարել: Եվ ցույց տալ համառ դիմադրություն, երբ գտնվում ես շրջափակման մեջ: Եղել են պահեր՝ դաժան պայքար ենք մղել, երբ օգնության հույս չկար: Երբ հայտնվել ենք վտանգի մեջ, անձնազոհաբար ծեղքել ենք մեզ շրջապատող օղակները և թշնամու ահաբեկումից չենք երերացել ու պառակտվել, ահա որն է մեր միասնության ուժը:

Զորավարը նա չէ, ով հաստատում է ծրագրեր, այլ նա, ով թեկուզ ինչ-որ չափով մասնակցում է դրանց, առաջնորդում և ղեկավարում է զորքը, ծակատամարտի ծակատագրական պահին փոխում իրադարձությունների անհաջող ընթացքը»:

Բոլշևիկների կողմից հալածված Զորավար Սմբատը՝ Մախլուտոն, մահից առաջ Կոմիտասի այգում մի կապոց է թաք-

Հադրութի Մեծ Թաղլար գյուղ, 1991: Կենտրոնում՝ Հակոբ Հակոբյան, ձախից առաջինը կանգնած Անդրանիկ (Օնիկ) Ավետիսյան՝ Փուշ, կքանստած Գագիկ Գևորգյան՝ բէտէր, մարտական ընկերներով

ցնում: Բյուրականցի Կարապետյան Արտակի Պետրոս պապի հորեղբոր որդին՝ Թովմասը, ով աշխատում էր այգու հրաձգարանում, ծառատունկի ժամանակ գտնում է կապոցը և տանում Բյուրականի իրենց տան սալահատակների տակ հորում: Այս ամենի մասին Պետրոս պապը պատմում է 15 տարեկան Արտակին: Ղարաբաղյան շարժման սկսվելուց Արտակն իր մանկության ընկերներ Խաչիկ Թորոսյանի և Նվեր Փիլիպոսյանի հետ սալահատակների տակից գտնում է մոմակալած կտավե փաթեթով կապոցը, որի մեջ զենք, զինամթերք կար և դժվար ընթեռնելի մի գրություն: Մախլուտոյի թաքցրած մոսինը, բիրդանկան և մյուս զենք-զինամթերքն արդեն ժանգոտած էին, ցեցը կերած: Արտակը մաքում, յուղում է և ոգևորված մեկնում Կոռնիձոր:

Այդ զենքի վրա Չաուշը՝ Գեղազնիկ Միքայելյանը, Գոգա Պետրոսյանը, Սամվել Սաֆարյանը, տողերիս հեղինակը, և էլի շատերը՝ թվով 30 հոգի երդվեցինք շարունակել մեր պապերի կիսատ թողած գործը: Մախլուտոյի թողած ժառանգությունը հասավ իր արժանի հետնորդներին՝ Կոռնիձոր ջոկատի յոթ դյուցազուններին՝ Կարեն Մելիքբեկյանին (Մոլոկան), Հարություն Մուրադյանին (Գդլյան), Արտակ Օհանյանին (Գուսան), Արտակ Կարապետյանին (Լեռնային Արծիվ), Աշոտ Ավետյանին (Արաբո), Մարտի Ղազարյնին, Արա Խուդավերդյան (Կոռնիձորի Արո), ովքեր իրենց կազմակերպած առանձին ջոկատներով միասնական ճակատով հերոսաբար մասնակցեցին Հայաստանի սահմանների ինքնապաշտպանությանը և Արցախի յոթ շրջանների ազատագրմանը:

Հարություն Մուրադյան՝ Գդլյան, Արտակ Կարապետյան, Գեղազնիկ Միքայելյան՝ Չաուշ, 1990թ. Կոռնիձոր

1991թ. Հատուկ նշանակության ջոկատը, որն ապահովեց Խոջալուի ազատագրումը: Կենտրոնում նստած՝ Հրայր Մարգարյանը, հրամանատար՝ Հրաչ Ծահվերդյան:

Անդրանիկ Ավետյան, Հադրութ, 1991 թ.

Հրաչ Ծահվերդյան, Աֆղանստան, 1982

Նշանառու Գրիշ

Գագիկ Գևորգյան,
Հաղրութ, 1991 թ.

Գևորգ,
Հաղրութ, 1991 թ.

Ալիկ՝ Պոնչո

ՄԵՐ ՊԱՊԵՐԻ ԱՐՅԱՆ ԿԱՆՉԸ

24 տարեկան տղա էր Սուրեն Խաչատրյանը, երբ ռոմանտիկ քամիները նրան թռցրին հայրենի Սյունիքից: 1980թ.-ից հաստատվեց Ուկրաինայի Զապորոժյե քաղաքում: Ատամնատեխնիկի մասնագիտություն էր սովորել, լավ վաստակ ուներ: Սակայն 1988թ.-ը, ինչպես շատ հայրենասեր հայերի, Սուրենի համար էլ ճակատագրական եղավ: Նժդեհի զինվոր պապի՝ Նիկոլայ Բաբայանի արյան կանչը նրան բերեց հայրենիք, գցեց արցախյան շարժման փոթորիկների մեջ:

Մինչ մայրաքաղաքում միտինգներ ու ցույցեր էին անում, սահմանամերձ շրջաններում թուրքերը գաղտնի ու բացահայտ հակահայկական գործողություններ էին իրականացնում, հոտեր ու նախիրներ հափշտակում, հովիվներ ու հողագործներ առևանգում: Այդ ավազակների ճանապարհը փակելու համար ամենից առաջ հարկավոր էր զինվել: Դեռ 1988թ.-ից Սուրեն Բաղդասարյանի նախաձեռնությամբ Գորիսում երկու ջոկատ ստեղծվեց: Այնուհետև Սուրեն Խաչատրյանի ընդհանուր հրամանատարությամբ միավորվեցին շրջանում կազմավորված բոլոր ջոկատները: Այդ ջոկատները զինելու համար հրամանատարի նախաձեռնությամբ և միջոցներով մեծ քանակությամբ զենք ու զինամթերք ներկրվեց Ռուսաստանից, Վրաստանից և Մերձբալթյան հանրապետություններից:

Արդեն 1989թ.-ից Գորիսի կամավորները պաշտպանական մարտեր էին մղում Ծուռնուխից մինչև Խոզնավար ընկած մոտ 150 կմ սահմանի երկարությամբ:

1989թ.-ի հոկտեմբերից մինչև դեկտեմբեր բացահայտ ագրեսիա սկսվեց շրջանի տարածքի նկատմամբ: Հոկտեմբերի 7-ին ռուս-ազերական միացյալ ուժերը գրոհեցին Կոռնիձորի վրա: Տեղի կամավորականները ոչ միայն կարողացան ետ մղել հարձակումն, այլև վնասազերծել ազերաբնակ Ջիջիմլի գյուղի կրակակետերը: Նույնպիսի մի հարձակում ձեռնարկվեց նաև շրջանի Խնածախ գյուղի ուղղությամբ: Հրամանատարության գրագետ մարտավարության շնորհիվ՝ հակառակորդը երկու մարտերում էլ զոհեր տալով՝ ետ քաշվեց, իսկ

Սուրեն Խաչատրյան, Սուրեն Բաղդասարյան.
մարտական ընկերներն ամուր կանգնած են հայրենի հողին
Հանգեզուր, 2005 թ.:

հայ կամավորները մարտից դուրս եկան առանց կորուստների:

Մարտից մարտ դրսևորվում և կատարելագործվում էին ոչ միայն Սուրեն Խաչատրյանի, այլև սահմանամերձ գյուղերի ջոկատների հրամանատարների ռազմական կարողությու-



Գնդապետ Սուրեն Խաչատրյանը (ձախից երկրորդը)
մարտական ընկերների հետ, Հանգեզուր, 2005 թ.:

ները, նրանք հմտանում էին ոչ միայն պաշտպանական, այլև հարձակողական մարտավարության մեջ: Եվ երբ 1991թ.-ի գարնանը սկսվեց «Կոլցո-1» գործողությունը, շրջանի պաշտպաններն արդեն պատրաստ էին ետ մղելու այդպիսի հզոր հարձակումը: 1991թ.-ի մայիսի 7-ի լուսաբացին ռուսական բանակի և ազերի ՕՄՕՆ-ականների միացյալ ուժերը օդուժի և հրետանու աջակցությամբ շրջանի սահմանի ողջ երկարությամբ հարձակման անցնելով՝ ժամանակավոր հաջողության հասան միայն Ծուռնուխ գյուղի ուղղությամբ: Հետագայում պաշտպանությունից անցնելով հարձակման՝ հայ կամավորները կարողացան հակառակորդին ետ շպրտել Ծուռնուխից: Այդ մարտերում ազերիների մեծաքանակ զոհերի դիմաց հայերը միայն մի քանի զոհ ունեցան:

1992թ.-ին շրջանի կամավորական ջոկատները հաջողությամբ իրականացրին մի քանի մարտական գործողություններ, ինչի շնորհիվ ազատագրվեցին Ջիջիմլի-1, Ջիջիմլի-2 բնակավայրերը: Միաժամանակ Տեղ գյուղի ջոկատը գրավեց Թուրուսի Խութ կոչվող բարձունքը: Այս գործողությունները՝ թուլացնելով ազերիների պաշտպանությունը, դյուրացրին Լաչինի միջանցքի բացումը:

Մայիսից հրամանատար Սուրեն Խաչատրյանի նախաձեռնությամբ և հրամանատարությամբ ստեղծվեց Գորիսի պայմանագրային գումարտակը: Վաշտի հրամանատարներ նշանակվեցին սահմանամերձ Տեղ, Խնձորեսկ և Ծուռնուխ գյուղերի ինքնապաշտպանական ջոկատների հրամանատարներ Մելիքսեթ Պողոսյանը, Սանասար Բեգլարյանը, Վալերիկ Ստեփանյանը և Միշա Գրիգորյանը:

Նորաստեղծ գումարտակն այլ ջոկատների ու ստորաբաժանումների հետ մասնակցեց Լաչինի միջանցքի պաշտպանական մարտերին՝ այն լայնացնելով հարավում մինչև Սաֆյան, իսկ հյուսիսում՝ մինչև Սարի Բաբա գյուղերը:

Հրամանատարը և շրջանի մարտական ջոկատներն արդեն մի քանի տարվա մարտական կենսագրություն ունեին: Վազգեն Սարգսյանն անձամբ ճանաչում և վստահում էր Գորիսի գումարտակի հրամանատար Սուրեն Խաչատրյանին: Երբ 1992թ.-ի հոկտեմբերի 6-ին իրադրությունը միջանցքի հյուսիսային կողմից չափազանց սրվել էր, ՍՊԱՐԱՊԵՏԸ

շտապ եկավ Գորիս: Հարկավոր էր, ինչ գնով էլ լինի, փրկել դրությունը: Առավոտյան վաղ գումարտակից 100 հոգի կազմ-պատրաստ սպասում էին հրամանի: Ծարժվեցին եղծահող գյուղի ուղղությամբ, որտեղ ազերիները ներխուժման վտանգ էին ստեղծել: Հակառակորդի առաջխաղացումը հաջողությամբ կասեցվեց: Այնուհետև պաշտպանությունից անցնելով հակահարձակման՝ ստորաբաժանումների հետ կարողացան ազատագրել մինչև Սարի Բաբա գյուղի տարածքը:

Ազերիների բոլոր ջանքերն իզուր անցան: Հայ կամավորները, որոնք ազատագրել էին Ծուշին, բացել Լաչինի միջանցքը, այլևս նախաձեռնությունը զիջելու տրամադրություն չունեին: Հետագա մարտերն արդեն ընթանում էին միջանցքից շատ հեռու, հաջորդ շրջաններում: 1993թ.-ի ամռանը Գորիսի կամավորները մասնակցում էին Կուբաթլու և Զանգելանի ազատագրական մարտերին:

1994թ.-ի հունվարից Արցախյան ուժերն անցան ազատագրական գործողությունների: Մարտերը ծավալվում էին Աղդա-

Աջից՝ Արայիկ Խանումյան, Ծուռնուխ, 1993 թ.

մի և Ֆիզուլիի շրջաններում: Գորիսի կամավորներն այլևս անելիք չունեին սահմանամերձ տարածքներում, ռազմաճակատի գիծը մի քանի տասնյակ կիլոմետր ետ էր քաշված: Հունվարից մինչև հրադադար նրանք մարտնչում էին Հորադիզի և Ֆիզուլիի շրջանի մյուս բնակավայրերի ազատագրման համար:

Ազատամարտի առաջին օրից մինչև հրադադար Սուրեն Խաչատրյանն անձնվիրաբար մասնակցելով բազմաթիվ մարտերի՝ անցավ շարքայինից մինչև փոխգնդապետի ծանապարհը, պարգևատրվեց «Մարտական ծառայություն», «Մարշալ Բաղրամյան», «Մայրական երախտագիտություն» մեդալներով: Հայրենիքը նրան լիովին վարձատրեց իր ազնիվ նվիրաբերման համար:

Հրադադարից հետո շատերի նման գումարտակի հրամանատարը նույնպես անցավ խաղաղ աշխատանքի: 1994թ.-ից ընտրվեց Գորիսի քաղաքային խորհրդի նախագահի տեղա-



Սուրեն Բաղդասարյանը (աջից երկրորդը) մարտական ընկերների հետ, Զանգեզուր 1992 թ.

Սուրեն Խաչատրյանը, Սուրեն Բաղդասարյանը ՊՐ հրամկազմի հետ, Զանգեզուր, 2005 թ.

Սուրեն Բաղդասարյանը մարտական ընկերների հետ, Զանգեզուր, 2005 թ.

Սուրեն Բաղդասարյանը զինակից ընկերների հետ

Սուրեն Խաչատրյան, Սուրեն Բաղդասարյան.
հանուն հայրենիքի անվտանգության և երեխաների ապագայի, Զանգեզուր, 1990 թ.

կալ, նախագահ, ապա՝ քաղաքապետ: 1995թ.-ից ՀՀ ազգային ժողովի պատգամավոր է: Միևնույն ժամանակ նա չհեռացավ իր զինակից ընկերներից: 1993թ.-ից ընտրվեց Գորիսի տարածքային բաժանմունքի ԵԿՄ, իսկ 1997թ.-ից՝ Սյունիքի մարզային խորհրդի ԵԿՄ նախագահ: Նրա համար իր զինակից ընկերների ու հայրենիքի շահը միշտ եղել և մնում է առաջնային: Յուրաքանչյուր օրն ապրում է զենքի, եղբայրության ու նորաստեղծ անկախ պետության կայացման հոգսերով:

Սուրեն Ազատի Բաղդասարյանի նախաձեռնությամբ Գորիսի Քոլատակ թաղամասի տղաներով 1988թ.-ի մարտի 3-ին կազմակերպեցին «Քոլատակ» 250 հոգանոց գումարտակը: Երդման արարողությունը տեղի ունեցավ Մխիթար ՍՊԱՐԱՊԵՏԻ գերեզմանին: Նա պատմում է, որ Երասխավանի ինքնապաշտպանության մարտերի ժամանակ ներկայացավ Վազգեն Սարգսյանին, տեղեկացրեց, որ ջոկատով եկել են օգնության:

Վոլոդյա (ձախից առաջինը նստածը՝ զոհված), Սուրեն (ձախից կանգնածը), Սերժիկ (աջից նստածը) Բաղդասարյանները մարտական ընկերներ Հրանտի (կենտրոնում նստած) և Մուրադի (աջից կանգնած) հետ, 1992 թ.

Նա զայրացավ և միաժամանակ ուրախացավ, որ Զանգեզուրի արծիվները եկել են իրենց օգնելու: Սակայն Գորիսի վիճակը ավելի ծանր էր և նա առաջարկեց շտապ մեկնել Գորիս՝ պաշտպանելու Հայաստանի սահմանները: Ծուտով օգնության կգան Արմավիրի ազատամարտիկները, որոնք զենք չունեն: Քոլատակցի Սուրենին ասաց՝ եթե կարող է, այդ հարցում օգնի:

Սուրենը 2 կարաբին, 4 որսորդական, 2 տոգի հրացաններ այն, ինչ կարողացավ նվիրել ու շտապ մեկնեց Գորիս:

Տուն հասնելուն պես 8 տարեկան դուստրը հարցրեց. «Հայրի՛կ, մաման լացում է, թուրքի ռումբից փլվել է հարևանի բնակարանը: Թուրքը ռմբակոծում է Գորիսը, որ գան ի՞նչ կանես»: Արցունքները գլոր-գլոր սահեցին դեմքով... Սուրիկը խոսեց քաղցրաձայն.«Ով ռումբ է նետում մանկանց վրա, նրանց Աստված, ինչպես նաև նրանց մայրերի արգանդն անիծում է: Ես իմ արդար կռվից, քեզ պաշտպանելուց չեմ փախչի: Իմ դա-

Գորիսի Քոլատակ գումարտակի հիմնադիրները, 1992 թ.



Սուրեն Բաղդասարյան, 1989 թ.

ը վրեժ լուծելու դար է, նրա տանջանքներից պիտի ծնվի արդար, խաղաղ, լուսավոր ապագա: Իմ պայքարը մտնում է պատմության մեջ, ծնվել եմ այն ժամանակ, երբ պիտի պաշտպանեմ քեզ, իմ սիրուն, անուշի՛կ բալիկ: Հաղթանակը, մեր պայքարը գեղեցիկ են և արդար, քո աչքերի լույսի պես պայծառ: Թուրքը եթե գա, միայն իմ դիակի վրայով»:

Վազգեն Սարգսյանի հրամանով ձևավորվեց 500 հոգանոց Գորիսի ինքնապաշտպանության պայմանագրային գումարտակը՝ Սուրեն Խաչատրյանի հրամանատարությամբ, շտաբի պետ՝ Սուրեն Բաղդասարյան:

Գորիսի փոքր Սոսը զբաղվում էր զինամթերք հայթայթելով, Երևանի մեծ Սոսը՝ ՀԱԲ-ի հրամանատարը, Կոռնիձորից Ղուբաթլու հետախուզություն կատարելու ժամանակ, Զաբուխում՝ Աիմավանում, զոհվում է թշնամու գնդակից, ընկնում Հագուրի գետը: Թշնամին դիակը հանում է ջրից և ուշացած փոխանակում:

Խոզնավարից մինչև Կարմրաքար «Քոլատակ» ջոկատի պաշտպանական ռազմագիծն էր:

- Վազգեն Սարգսյանն իմ լավ եղբայրն է,- հպարտորեն ասում էր Սուրենը:

1992թ.-ի մայիսի 28-ին Ծուռնուխի տարածքում զոհվեց եղբայրը՝ Վոլոդյա Ազատի Բաղդասարյանը՝ 45 տարեկան հասակում: Նրանք երեք եղբայր էին:

«Քուն է մտել եղբայրս, նայում եմ՝ այս հինավուրց ազատագրված հողի կանչն է վետվետում դեմքին: Ինձ ասում է. «Քայլի՛ր, եղբայրս, կյանքն է ծաղկում լուռ, խորհրդավոր, լսի՛ր փոքրիկ դստերդ կանչը: Սթափվի՛ր, զորքն է քեզ սպասում, թափ տուր քեզ, մի գամվիր տեղում, առաջ քայլիր: Դիմացդ սարսափելին է, երեք եղբայր ենք, դեռ երկուսը կանք, եղե՛ք հպարտ: Հասեք Արաքսի ջրերին, լվացեք քրտինքը ձեր ճակատի: Եղբա՛յր իմ, դու զոհվեցիր՝ վաստակելով սեր, հարգանք, փառք: Մեր սրտերը լցրիր հույսով, ջանքով, երգով, իսկ դու քուն ես մտել անդորրի գրկում: Հավերժության մեջ կարճ է այս վայրկյանը, Հայաստանի անունից համբուրում եմ սառը ճակատդ: Թուրքերը մեզ տառապանք ու վիշտ են պարգևել: Մարդակեր գազաններ են՝ անկուշտ, արյան, մահի մշուշում չգիտեն, որ իրենք են իրենց խորովում: Այս պահին անմոռանալի է ցավը, երկար պիտի իմ մեջ ոգիս ուտի: Զրգտի՛ր, սիրտ իմ, որ ապրես արևի տակ, ազատագրված այս սուրբ հողում»,- Սուրիկն այսպես մտքերի մեջ սուզված, խոսում էր անշունչ եղբոր դիակի հետ՝ հոգու խորքում արտասվելով լուռ ու անտես:

Հայոց մայրե՛ր, ազատամարտիկները զոհվում են, որ Հայաստանն ապրի, որ օդում թնդա հայոց զուռնան, երեխաների աղմկոտ ձայնը երկնքին ծուլվի, դաշտերում հայոց հորովելը զրնգա: Կգա օրը, եռագույն դրոշի տակ կիրականանա հողահավաք ծրագիրը, հայությունը՝ մեր գալիք սերունդը, կապրի հզոր և ուժեղ»:

Ձեռքի շարժում զգաց ուսին, սթափվեց: Բռունցքը թաքուն սեղմեց, ոտքի կանգնեց: Զորքը ձգվեց՝ պատրաստ հրամանի: Ո՛վ դու Արարիչն աշխարհի, դու եղիր մեզ ապավեն, երեսը խաչակնքեց, քայլեց առաջ...

Հուղարկավորության ժամանակ մարտական ընկերները բորբոքվեցին, հրամանատարից թույլտվություն պահանջելով, գնան թուրք գերեվարեն, վրեժխնդիր լինեն: Թշնամին հաջողությունից ոգևորվել էր:

Հայկական ուժերը 2 բետերով՝ զրահափոխադրիչով, 1 ՀՄՄ-1-ով՝ հետևակային մարտական մեքենայով անցան հակահարձակման, գերեվարեցին երկու թուրքի: 18-19 տարեկան էին, նոր էին զորակոչվել ադրբեջանական բանակ: Երբ

Սուրեն Բաղդասարյանը՝ նստած, զինակից ընկերների հետ, 1991 թ.

այս բոլորի մասին զեկուցեցին Սուրեն Բաղդասարյանին, նրանց տարիքը մտահոգեց Սուրենին, խղճաց, հրամայեց չնմանվել գազանի և նոր հրահանգի սպասել:

Որոշ ժամանակից հետո ցանկություն եղավ խոսել գերիների հետ: Գերին՝ Ռաֆիմին, ներկայացավ ավտոմատը ուսին առած, մի պահ զարմացա, չհավատացի տեսածիս: Գերին խնդրեց թույլտվություն՝ հարազատներից որևէ մեկի հետ խոսի, հաղորդի իր և նրանց վիճակի մասին, ինչ-որ բան իմանա: Գերու խնդիրը կատարեցի: Հեռախոսակապով խոսեցի քրոջ հետ, չհավատաց, ասելով, թե եղբայրը ծառայում է Ֆիզուլիում: Հեռախոսափողը տվեցի Ռաֆիմին: Խոսեցին քույր ու եղբայր իրենց մայրենի լեզվով. երկուսով էլ հեռախոսի մեջ լացում էին:

Քույրը զարմացած էր, որ եղբայրը գերի է, կենդանի է, հայտնեց իր շնորհակալությունը:

Ըստ պատերազմական օրենքների՝ համապատասխան փաստաթղթեր ձևակերպելուց հետո, գերիներին հանձնեցինք Սիսիանի ռազմական ոստիկանապետ Հովիկ Ազոյանին:

Աշխարհում հայտնի է ամենքին, որ հայը երբեք չի հարձակվել, չի պատերազմել, չի ստրկացրել հարևան ժողովուրդներին: Նա միշտ պաշտպանվել է, հաղթել կատաղաշունչ թուրքին, իր հեղեղված արյունով ազատություն նվաճել:

- Ձեզ եմ ուղղում իմ խոսքը, ջահել, կտրիճ տղանե՛ր, լկտի ադրբեջանցու դունչը պիտի ջարդել մեր անառիկ լեռների գրկում: Նրանք զավթել են ծովից ծով Հայաստանը, պապենական մեր հարստությունը վայելում են անհոգ: Հիմա այս մի կտոր հողն էլ են ուզում խլել մեր ձեռքից, մեր մանկության արևն ու երկիրը, արյունարբու Սուլթանի ծրագիրը վերջնական լուծելու համար,- ասում էր Սուրենն իր զինվորներին:

Սուրենը այդ պահին հակված էր ռազմական գործողությունների՝ զորքը մարտի տանելու, ոչ թե տրվելու պարապության:

1994թ.-ի հունվարի 3-ին Վազգեն Սարգսյանի հրամանով մեկնեցինք Հորադիս կայարան, թշնամու ուժերի ճնշմամբ նահանջեցինք մինչև Հորադիս՝ Մարջալու: Հունվարի 11-ին Ֆիզուլիի Աշղադարահխմալի և Ծուքուրբելի գյուղերը ազատագրելով՝ դիրքավորվեցինք այդ գյուղերի պաշտպանական հենակետերում:

(աջից) Սուրեն Բաղդասարյանը զինակից ընկերների հետ երկրաշարժի հուշարձանի բացմանը, Հանգեզուր, 1989 թ.

Սուրեն Բաղդասարյանը պատմում է.

«Խոսում էի Արաքս գետի ջրերի հետ: Վազգեն Սարգսյանն ինձ ասաց.

- Քոլատակի՛ Սուրեն, փոխգնդապետի կոչում ես ուզո՞ւմ, թե՞ «Նիվա» ավտոմեքենա: Առանց վարանելու ասաց՝ «Նիվա»: Վազգեն Սարգսյանն անմիջապես կատարեց իմ խնդրանքը:

Խանլարից Ղուբաթլու 10կմ ճանապարհ է, որտեղ կառուցեցի զորամասի զորանոցը: Վազգեն Սարգսյանն ուղղաթիռով եկավ, օդից հաղորդեց, որ վերևից գեղեցիկ է երևում զորամասը: Հարկավոր էր ստուգել ներսի պայմանները: Ներս մտնելու պահին հրձվանքից գլուխը բռնեց և ուրախացավ: Նստեց բազկաթոռին ու պատվիրեց մազերը՝ կտրել և հարդարել: Այն կատարվեց շատ հաճույքով: Վարպետը վարձի փոխարեն 20 լիտր բենզին պահանջեց: Վազգեն Սարգսյանը կատակով ասաց.

Գորիսի գումարտակի մի խումբ ազատամարտիկներ, 1992 թ.

- Դեռ չի եղել մի անգամ, որ առանց վարձատրելու մազերս կտրեն: Քոլատակցի՛ Սուրեն, թշնամու ՆՕ-25 ինքնաթիռը խփեցինք, օդաչուները պարաշյուտով իջան Պարսկաստանի սահմանները, իսկ ինքնաթիռը՝ չեզոք տարածք, ձեր տված օգուտը ո՞րն էր, որ պարծենում եք ու ինձանից վարձ կորզում:

- Պարո՛ն ՍՊԱՐԱՊԵՏ, երկու տանկ խփեցի, դու խոստացել էիր յուրաքանչյուր տանկի համար մեկ միլիոն գումար տրամադրել իմ զորամասին:

Վազգեն Սարգսյանի մահճակալը, անկողինը և այլ պիտույքներ, ինչպես եղել է, այդպես էլ կա, պահպանվում է մինչ օրս:

Պաշտպանական կամավորական ջոկատի կազմավորումը Գորիսում սկսվել է Քոլատակ թաղամասից: Քաջ ու վճռական տղաներ էին ապրում այնտեղ: Սուրեն Ազատի Բաղդասարյանը՝ «Քոլատակ» կամավորական ջոկատի հրամանատարն էր:

Վիտո Դավթյանի վաշտը Ժիրայր Սեֆիլյանի գումարտակի կազմում, Չլդրան, 1993 թ.
2-րդ շարքի ձախից երկ. տանկիստ Միսակը Ջավախքից (զոհված), աջից առաջինը Գորիսի տանկիստ Միհրը (զոհված), գնդի 10 տ. որդին՝ Անդրանիկը

Վազգեն Սպարապետը՝ քնած Առյուծը, Արցախից վերադառնալիս, ուղաթիռում:

1988թ.-ին, երբ սկսվեց հայ-ադրբեջանական հակամարտությունը, նա հավաքեց քոլատակցիներին և գնացին սահմանները պաշտպանելու: Քաջ ու արի ջոկատը հմուտ հրամանատարի հետ դժվար ճանապարհներ է անցել: Սակայն ճանապարհը որքան էլ որ դժվար է եղել, այնուամենայնիվ, ցանկացած մարտ պատվով է ավարտվել՝ թեև կորցրել էր ընկերներ, հերոս մարտիկներ: Տարիներ շարունակ աշխատանքի բերումով շփվելով ադրբեջանցիների հետ, լավ գիտեր նրանց էությունը և ղարաբաղյան շարժման առաջին օրերից համոզված էր, որ այն շուտով վերածվելու էր զինված պայքարի:

1988թ.-ի մարտի 3-ին՝ նրա գլխավորությամբ ստեղծվեց «Մխիթար Սպարապետ» երդվյալ ջոկատը: Պաշտպանում էին Գորիսի 150 կիլոմետրանոց սահմանի գերակշիռ մասը՝ Խոզնավարը, Կոռնիձորը, Հարթաշենը, իսկ ՄՀՕՁ-ի ստորաբաժանումների հետ միասին՝ Գորիս-Կապան մայրուղին, որտեղ էլ զոհվեց Սուրեն Բաղդասարյանի ավագ եղբայրը՝ Վոլոդյան: Եղբոր մահը ցնցել էր նրան, և նա իր առջև նպատակ դրեց.

մինչև արյան վերջին կաթիլը վրեժխնդիր լինել: Այդ տարիներին Սուրեն Բաղդասարյանը մի քանի անգամ ծանր վիրավորվեց, սակայն նպատակը առողջությունից թանկ էր: Քոլատակի ջոկատը աչքի էր ընկնում բարձր մարտունակությամբ:

1992թ.-ին «Մխիթար Սպարապետ» երդվյալ ջոկատը միավորվել է պայմանագրային գումարտակին, հրամանատար է նշանակվել Սուրեն Խաչատրյանը, հրամանատարի տեղակալ՝ Սուրեն Բաղդասարյանը, իսկ ավելի ուշ՝ պայմանագրային գումարտակի հրամանատար, հետագայում՝ 1997թ.-ին, գնդի հրամանատարի տեղակալ:

Հրամանատար եղած տարիներին Սուրեն Բաղդասարյանը արժանի հրամանատար էր և յուրաքանչյուր զինվորի համար՝ ծնող: Նա բարեխիղճ էր և միաժամանակ խստապահանջ: Յուրաքանչյուր զինվորի մոտ սերմանում էր հայրենասիրություն և քաջություն, որը ձեռք էր բերվել իր իսկ քրտնաջան աշխատանքի շնորհիվ:

1996թ.-ին գումարտակի հրամանատարների ուսումնամեթոդական հավաքի ավարտին՝ կրակային պատրաստության քննությունների ընթացքում ցույց տալով ամենաբարձր արդյունքները, Սուրեն Բաղդասարյանը ստացավ «գերազանց»

«Գևորգ Մարզպետունի» ՀՄՄ ջոկատ.
Սուրեն Բաղդասարյանը մարտական ընկերների հետ: Գորիս-Լաչին, 1993 թ.:

գնահատական, իսկ պաշտպանության նախարարի կողմից՝ շնորհակալագիր, ավտոմեքենա, ինչպես նաև բազմաթիվ հուշամեդալներ՝ ԼՂՀ «Արիություն», «Արցախի քաջորդիներ», «Մարշալ Բաղրամյան», «Սպարապետ», «Մարտական ծառայություն» և ԵԿՄ մեդալ: Ահա անքուն գիշերների խրախուսական պարգևները:

Այժմ Սուրեն Ազատի Բաղդասարյանը Սյունիքի ԵԿՄ մարզխորհրդի նախագահն է: Հիմա էլ նա անմիջականորեն կապված է մարտական ընկերների և զոհված ազատամարտիկների ընտանիքների հետ և փորձում է հնարավոր չափով օգտակար լինել նրանց: Այդ պահին լսվեց հեռախոսազանգը, Սյունյաց արծիվ Աշոտ Մինասյանի և Մարտին Գաբրիելյանի ծշգրտումներ կատարելու ձայնն էր:



Գորիսի զումարտակի անցած մարտական ուղին, հրամանատար Սուրեն Բաղդասարյան

ՍԻՍԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՏԱԿ

Երբ ՀՀ Ղարաբաղ կոմիտեն ձերբակալվեց, սկսվեց որսահավաքը: Սիսիանի Վուրգը, Կամոն, Արշակը, Աշոտ Մինասյանը, Մասիս Բաղդասարյանը և Մարտին Գաբրիելյանը տրիկոտաժի ֆաբրիկայում գործադուլ կազմակերպեցին: Դեկտեմբերի 15-ին եկեղեցու հոգևորականի թույլտվությամբ Աշոտ Մինասյանի Ռուսաստանից բերած զենքերը գաղտնի թաքցրին եկեղեցում: Գործողությունը այնպես կատարվեց, որ հավատացյալները աղոթքի ժամանակ հավատացին, թե այդ տղաները մասնակցում են աղոթքին:

1989թ. Աշոտ Մինասյանը նորից փողի կապը փաթաթած մեջքին՝ մեկնեց Ռուսաստան, յոթ միավոր զենք բերեց: Մարտիկն ու Մարատը նրան ուրախությամբ դիմավորեցին և Աշոտի քրոջ՝ Նինելի բնակարանում թաքցրին զենքը: Հետաքրքրությունից դրդված՝ զենքերը փորձարկեցին: Կրակոցից

Սիսիանի գումարտակը Քաշաթաղի թունելի մոտ, կենտրոնում, գլխաշորով Սուրադյան Արայիկ, Կոմեդի Մախնո, հրամանատար Աշոտ Մինասյան, 1993թ.

շենքը դղրդաց, հարևանները խառնվեցին իրար, տղաները փախան, հեռու գյուղերից մեկում թաքնվեցին: Նինելն ընկավ փորձանքի մեջ: Քննությունը չկարողացավ պարզել, թե կրակոցն ում բնակարանից էր:

«Սիսիանի Իշխանասարի հատվածում թուրքաբնակ Միքենդ գյուղի ազատագրման առաջին մարտն էր,- պատմում է Մարտին Գաբրիելյանը,- եղբորս՝ Մանուկի հետ ընկանք շրջափակման մեջ, ձակատից վիրավորվեց: Հարցրեցի ոնց ես, կդիմանաս, թե ոչ, -ասաց,- ամեն ինչ է:

Հրամանատարը, որի թիկունքն էի պաշտպանում, խորացել էր մարտի մեջ: Հրամանատարի վիճակը ծանրանում էր այն ժամանակ, երբ զոհվածների ճանաչելը, վիրավորները և նրանց հաշվառումները սահմանված կարգով չէին իրականանում: Հրամանատարի թիկունքից թշնամիներին չեզոքացնելու, նաև խոցելի պահելու համար հարկավոր է հավատարիմ պաշտպան: Այդ պարտականությունը վստահվել էր ինձ: Բայց վիճակս անլուծելի էր, ինչպես կողմնորոշվել, թշնամին գրո-

«Վարդան Հովակիմյանի» անվան ջոկատի մի խումբ ազատամարտիկներ, 1991 թ.

հում է: Կաշվիս վրա զգացի, որ եղբայրների հետ միասին չի կարելի մարտական գործողություններին մասնակցել: Առանձին-առանձին դա է ելքը: Մարտի ժամանակ իրար խանգարում են:

1990թ. Սիսիանում Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻՑ ստացանք հանձնարարություն. դաշտամիջյան դժվար անանցանելի ճանապարհներով հասանք Կապան, նշանակված վայր: Առաջադրանքն էր՝ գերի վերցնել թուրքերին փոխանակելու նպատակով:

Ժողովրդից իմացանք, որ իրավիճակը փոխված է: Նախազգուշացրեցին մարտի չբռնվել, այլ հարմար պահ ստեղծել, գերեվարել երկու թուրքի և կատարել փոխանակում: Կատարելով այդ աշխատանքը՝ գերիներին ուղարկեցինք Երասխավան: Վազգեն Սարգսյանը կատարեց գերիների փոխանակում՝ գերությունից ազատելով 14 հայ գերիների: Այս կարևոր, ազգօգուտ աշխատանքի համար հիշարժան են՝ Գոնչը, կապանցի Միկրոպը, Համլետ Քոչարյանը:

1992թ. Բաշաթաղի ազատագրման ժամանակ Սիսիանի ջոկատը Սիմավանի՝ Հաբուխի ուղղությամբ մտավ մարտական գործողությունների մեջ, փայլեց իր ռազմական արվեստով ու իմացությամբ:

«Վ. Սարգսյանը մեզ ոգեկոչողն էր: Նա արդեն ձևավորվել էր որպես ՍՊԱՐԱՊԵՏ»- այս բառերը Աշոտ Մինասյանը կրկնում էր,- ես նրան,- պատմում է Աշոտը,- ընդունում էի որպես լավ ղեկավարի, զորավարի, կայուն հրամանատարի: Նրա խոսքը սրբություն էր, հաճույքով էինք կատարում: Ես կատարում էի նրա բոլոր հրամանները, առաջադրանքները: Առանց նրա համախմբվածություն չկար, տեղից չէինք շարժվում»:

1993թ. մարտի 24-ին Պուշկինյալի արյունալի ճակատամարտում Մոնթեի «Քավթառ» տանկը խփվեց թշնամու նշանառուի հակատանկային նռնականետով, որը թուլացրեց Մոնթեի գրոհման թափը: Նման մի ծանր իրավիճակի մեջ ընկավ Սիսիանի ջոկատը Հորադիզում: Իրավիճակը ճշտելու, մարտավարությունը փոխելու համար Աշոտ Մինասյանը, որն այն հրամանատարներից էր, որ չէր քծնում, շողոքորթում իր վերադաս հրամանատարներին, պահանջեց խորհրդակցություն՝ իրավիճակը պարզելու համար: Գուրգեն Դալիբալթայա-

«Վարդան Հովակիմյանի» անվան ջոկատ, հրամանատար՝ Մարտին Ղազարյան, Նյուվադի, 1991 թ.

նի հրավիրած խորհրդակցությանը մասնակցում էին հինգ հրամանատարներ, որոնցից երեքը հետագայում զոհվեցին, երկուսը՝ Աշոտ Մինասյանը և Ռաֆիկ Ասրյանը, վիրավորվեցին:

Աշոտի հայրը՝ Հրանտ Մինասյանը, արմատներով խոյեցի էր, հայոց լեզվի և գրականության 40 տարվա ուսուցիչ: Կոկորդը խեղդող արցունքներով դանդաղ շարադրում էր մտքերը,- «Աղվանս պատանի էր դեռ, հաճախ կրկնում էր Ձորի Միրոյի խոսքերը. «Իմ որդին զինվոր կերթա»: Հետո լուրջ ասաց. «Քո որդին կռիվ կերթա»: Ականջիս մեջ է Աղվանի այս խոսքերը: Աղվանը բանաստեղծ էր, գերեզմանաքարին փորագրված էր. «Բարի լույս ասա, որ բարի ժպտա լույսը աշխարհին»: Ծնողներով մեր զավակներին հայրենասիրություն ենք քարոզել, սեր դեպի հայրենիքը, սեր դեպի մարդը, տուն կառուցելը: Սիսիանի Լծեն գյուղում էինք, որտեղից մարտի էր գնացել պատանի, կայտառ Աղվանը, ուր նկարահանվել էին սեղմ կադրեր:

Բանաստեղծ Թադևոս Տոնոյանը, պատմաբան Արմեն Կարապետյանը զուգահեռ էին անցկացնում պատմության և պոեզիայի միջև: Կարդում էին. այս երգը թախծոտ է, այս երգը ցավոտ է, այս երգը քամունն է: Երբ նայում էիր այդ պատանու մանկության սարերին ու ձորերին, զգում էիր նրա նմանությունը Լոռվա բնությանը: Հովհաննես Թումանյանի մանկությունն էիր հիշում:

Կապանի 12 թուրքաբնակ գյուղերի ազատագրման ժամանակ Աշոտը ծակատից վիրավորվել էր, տարել էին հիվանդանոց: Գիշերն ինձ հետ հեռախոսակապով խոսեց: Վիրավորվելու մասին ոչինչ չգիտեի: Ձայնը նվաղ էր:

Առավոտյան մի «Վիլիս» կանգնեց դռանս առաջ: Ես մեղր էի լցնում: Ասացին՝ շորերդ փոխի, գնանք հիվանդանոց, Աշոտը վիրավորվել է, վերքը թեթև է: Սիրտս կասկած ընկավ, հոգիս փոթորկվեց. «Աստված իմ, երկու զավակս էլ զոհվեն, շատ է, գոնե մեկին բաշխիր, այսպես ուղեղս մթագնեց: Տղաների դեմքի արտահայտությունը խաղաղություն էր արտահայտում, տագնապի առիթ չէին տալիս. ճշմարտությունը թաքցնում են՝ Աշոտս էլ է զոհվել, ինձ շեղում են: Տղաները ծանր ու լուրջ դեմք ունեին, թուրքերը ստոր արարածներ են, ի՞նչ իմանաս...

Հասանք հիվանդանոց, Աշոտիս տեսա բարվոք վիճակում, հոգիս խաղաղվեց»:

Աշոտը թղթերի մեջ խոթած գլուխը բարձրացրեց, ճակատը կապած գլխով շրջվեց հոր կողմը: Հայր ու որդի գրկախառնվեցին:

- Փառք Աստծո, կենդանի է որդիս, - ասաց նա:

Աղվանի զոհվելուց վեց տարի առաջ մայրը մահացել էր, Աշոտը հորը համոզել էր, որ ամուսնանա, հայրը չէր առարկել:

1994թ. հունվարին ՍՊԱՐԱՊԵՏԸ ուղիղ հեռախոսակապով կապվեց Աշոտ Մինասյանի հետ, պահանջեց, որ շտապ կարգով ջոկատով մեկնի Հորադիզ. թշնամին ռազմագիծը ճեղքել է:

Սիսիան-Գորիս զորամասի «Բրիգադի» հրամանատար Վալերի Գրիգորյանն էր ղեկավարում մարտը: Ընդհանուր ռազմագծի հրամանատարն էր գեներալ ՀմայակՀարոյանը: Այնտեղ էին Կոռնիձորի, Սիսիանի, «Սև Հովազ» ջոկատներն՝ իրենց հրամանատարներով՝ Արայիկ Խուդավերդյան, Ռուստամ (Ռոստոմ) Գասպարյան, Աշոտ Մինասյան:

Հունվարի 26-ին թշնամու 24 տանկերից 7-ը կարողացավ շրջանցել և մտնել հայկական ուժերի թիկունքը: 19 տանկ ծակատից գրոհեցին հայկական պաշտպանական դիրքերի վրա: Արյունն ու միսը ավազ ու հողի հետ շաղախվեց:

Աշոտի տղաները գերեցին թուրքերի տանկերից մեկը, ուղարկեցին թիկունք, որպեսզի թուրքական զինանշանը՝ կիսալուսինը աստղով, ջնջեն, մաքրեն: Երբ տանկը սրընթաց մոտենում էր շտաբին, այնտեղ սպասող շտապ օգնության անձնակազմը, տեսնելով իրենց վրա գրոհող թուրքական տանկը, սարսափահար փախչում են, որոշ մարդիկ ձեռքերը վեր բարձրացնում՝ ծիծաղ հարուցելով:

Զինվորը մարտադաշտում պետք է օժտված լինի բարձր բարոյահոգեբանական հատկանիշներով, պետք է լինի կազմակերպված, վճռական, նախաձեռնող, արագաշարժ, համարձակ, հնարամիտ, կողմնորոշվող և ունենա ուժեղ կամք, փոխադարձ օգնության ընդունակություն, միմյանց հասկանալու և կարեկցելու ունակություն:

Գիշերային մարտերի ժամանակ պակասել էր զինամթերքը, փամփուշտների քչության պատճառով ավտոմատի ապահովիչը կրակահերթի վրայից շարժել էին մենահատի վրա, որը չէր համարվում փրկություն:

Աշոտն իր տեղակալ, հավատարիմ, անբաժանելի մարտական ընկերոջից՝ Մարտին Գաբրիելյանից պահանջում էր, միաժամանակ խնդրում կյանքի գնով, հողի տակից զինամթերք ծարել: Մարտին Գաբրիելյանը Արարատ Հայրապետյանի հետ թշնամու գնդակների տարափի տակ մի կերպ հասանք ավտոմեքենային: Հասնելով շտաբ զարմացանք, որ որոշում են կայացրել նահանջելու: Մարտիկ Գաբրիելյանը հրամանատար Վ. Գրիգորյանից պահանջեց՝ ոչ մի նահանջ, տուր մեզ 1 ժամ ժամանակ և մենք կփոխենք իրադրությունը: Գումարտակի զինանոցից զենք և զինամթերք բարձած մի կերպ հասանք առաջին գիծ: Ես Աշոտ Մինասյանից խնդրեցի, որ պահանջի թույլատվություն, նա ռադիոկապով հակագրոհի հրաման խնդրեց: Դա 1994 թ-ի մարտի 3-ն էր, Վազգեն Սարգսյանի հրամանը: Անցան հարձակման: Միանգամից իրավիճակը առաջին գծում հոգեբանորեն փոխվեց: Այդ ժամանակ թշնամու արկի հարվածից վիրավորվեցին Աշոտի օգնական զինվորները: Մեկը տեղում մահացավ, մյուսը՝ ծանր վիճակում հաշտվեց մահվան հետ: Սակայն Աշոտը ատրճանակը դրեց վիրավոր զինվորի քունքին, ասաց. «Կգնդակահարեմ, սողեսող քեզ գցիր փոսի մեջ, դո՛ւ դա կարող ես, դո՛ւ պիտի ապրես, քո ծնողները սպասում են քեզ»: Եվ իրոք փրկվեց զինվորի կյանքը, նա ապրում է:

Ֆիզուլիի-Հորադիզի Կոմբային կոչվող գյուղական հատվածում երեք-չորս տուն հրկիզեցինք, բոցը երկինքը պատեց: Բնակիչներն ընկան խուճապի մեջ, դիմեցին փախուստի: Այն, ինչ որ թաքուն ծրագրվել էր, իրականացրինք: Այդ գյուղում էին տեղակայված թշնամու ուժերը և նրանք ոչնչով չկարողացան կանխել փախչողներին: Այդպես արվում էր հետախուզության կողմից առաջխաղացման համար, որպեսզի հարձակման ժամանակ հակառակորդի դիմադրությունը թուլանար: Այդ մարտերում դիակները շատ էին: Բորենիները, վայրի գազանները ուտում, կշտանում էին: Սարսափելի, տանջալի այդ մարտերում անհավանական էր դարձել կենդանի մնալը:

Սիսիանի գումարտակի մի խումբ ազատամարտիկներ:
Կենտրոնում նստած հրամանատարը՝ Աշոտ Մինասյան:
Պարգևատրվել է մարտական խաչ 2-րդ աստիճանի շքանշանով: Իշխանասար, 1992թ.

Սիսիանի զումարտակի մի խումբ ազատամարտիկներ:
Կենտրոնում կանգնած ձախից 3-րդը՝ Մարտին Գաբրիելյան, փոխհրամանատար:

Սիսիանի զումարտակի ազատամարտիկներ, մարտից առաջ, 1993թ:

Ձախից երկրորդը՝ Վուրգի որդի Սուրիկը, պաշտպանում է հոր հաղթանակը, 2008թ:

Մարտին Գաբրիելյանը,
Իշխանասարից դեպի Մինքենդ,
1991թ:

Սիսիանի զումարտակի մի խումբ
ազատամարտիկներ: Իշխանասարի
պաշտպանական դիրքերում: 1992թ:

Խուճապը նկատելի էր նաև հայկական պաշտպանական հենակետերում: Այն կարող էր բացասականորեն անդրադառնալ, եթե չլիներ Աշոտ Մինասյանի սթափությունը. նա դիմեց խորամանկության: Այդ դժվար պահին հրամայեց իր աջ ու ձախ թևերից անցնել հարձակման: Գրոհի թափը ոգևորեց ռազմագծի ազատամարտիկներին, շատերը չհասկանալով ինչն ինչոց է՝ բացականչելով իրենց նետեցին կրակի մեջ:

Մի անգամ թշնամու երկու ուղղաթիռ երկնքից կախվեցին Աշոտի գլխավերևում: Աշոտը գնդացիրն ուղղեց դեպի ուղղաթիռը: Օդաչուն մատը դրեց քունքին, Աշոտին ասելու՝ խելագարվել է, ի՞նչ է: Ուղղաթիռը թեքեց թռիչքի ուղղությունը՝ հրթիռները բաց թողնելով անորոշ ուղղությամբ և հեռացավ:

Սիսիանի Բռնակոթ գյուղից հայոց կաթողիկոս Հակոբ Ջյուղաեցու շառավիղից Վուրգ Ոսկանյանը ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտն ավարտելուց հետո անցնում է Սիսիանի թիվ 1 դպրոցում՝ որպես ռազմագիտության ուսուցիչ: Երբ սկսվեց Արցախյան հարկադրված պատերազմը, անմաս չմնաց, նա էլ բոլորի պես, ով ինչով կարող էր, զինվեց՝ չախմախներով, բիրդանկաներով, ՏՕՀ-ով և որսորդական հրացաններով: 1993 թվականին Քաշաթաղում դրությունը օրհասական էր: 31 հոգով թշնամու տանկերի դեմ կռվելու ժամանակ երկու անգամ վիրավորվում է, բայց չի նահանջում: Բժշկուհի Ալինան չկարողացավ օգնել, փրկել հրամանատարի կյանքը, որը ուզում էր լվացվել Արաքսի ջրերով, հասցրեց ասել՝ չեմ ուզում մեռնել, աղջկաս ու տղայիս ուսում տայի, Արաքսում լվացվեի, նոր մեռնեի: Այդ պահին էլ հասան տղաները, բայց արդեն ուշ էր: Օդում ճախրում էին շիկացած բառերը. «Բոլորն ուզում են ազատ ապրել, բայց քչերն են պայքարում հանուն ազատության»: Թուրքերը գրեցին՝ վերջապես ոչնչացվեց մայոր Վուրգ Ոսկանյանի ջոկատը: Դա 1993 թվականի մարտ ամիսն էր, Կորչ գյուղում: Վուրգին և նրա նմաններին հասավ հողն ու հայրենին, իշխանավորներին՝ փողն ու աթոռը:

Աշոտը բարձր էր գնահատում Սպիտակի ջոկատի, նրա հրամանատար Միդոյի, «Լույս» ջոկատի 5-րդ բրիգադի, Գեղազնիկ Միքայելյանի՝ Չաուշի գործունեությունը:

«ԼՈՒՅՍ ՋՈԿԱՏ»

Մեծ է Վլադիմիր Մացակի Սարգսյանի դերը Ասկերանի ինքնապաշտպանության գործողություններում:

Լինելով Երևանի քաղաքային էլեկտրացանցի տնօրեն՝ 1992 թ. ապրիլից իր հովանավորության ներքո է վերցրել Արցախի Ասկերանի շրջանի ինքնապաշտպանության ջոկատները, դպրոցները, մանկապարտեզները և բնակչությանը:

Վլադիմիր Սարգսյան
«Լույս» ջոկատի հիմքով կազմավորեց գունդ, որն ընդգրկվեց Ասկերանի զնդի կազմում

Մեծ է Վլադիմիր Սարգսյանի դերը հատկապես Ասկերանի ինքնապաշտպանության ջոկատներին զենքով և զինամթերքով (հակատանկային սարքավորումներ, հրթիռներ, հրաձիգներ, փամփուշտ և այլն) ապահովելու գործում: Ինքնապաշտպանության մարտիկներին ապահովել է սնունդով, բենզինով, դիզվառելանյութով, զինհանդերձանքով, ծխախոտով և անհրաժեշտ ֆինանսական միջոցներով:

Վլադիմիր Սարգսյանի օգնությունը Ասկերանին համապարփակ էր. նա ֆինանսավորել է պետական, տեղական և տնտեսական մարմինների աշխատանքները: Աշխատավարձ է վճարել ինքնապաշտպանության մարտիկների համար հացահատիկ աճեցնող հողագործին: Բազմապիսի գույքային և ֆինանսական օգնություն է ստացել Ասկերանի մանկապարտեզը: Հրթիռակոծություններից և ռմբակոծություններից ավերված

ու քանդված 199 ընտանիքներին ցույց է տվել ֆինանսական օգնություն: Պարբերաբար ֆինանսական օգնություն են ստացել թոշակառուները և կարիքավորները: Վլադիմիր Սարգսյանի հովանավորության ներքո են եղել նաև զոհված ազատամարտիկների ընտանիքները, նրանց երեխաները:

1992 թ.-ին Վլադիմիր Սարգսյանն ամբողջովին իր վրա վերցրեց Ասկերանի 250 երեխաների խնամքը, երեխաներն Արցախից տեղափոխվեցին Սևանի և Արզնու առողջարաններ, որտեղ բուժվելուց և հանգստանալուց բացի, շարունակեցին ուսումը: Այնուհետև բոլորը տեղափոխվեցին հարազատ բնակավայրեր:

Վլադիմիր Սարգսյանի անմիջական ղեկավարությամբ վերականգնվեցին Ստեփանակերտի և Շուշիի էլեկտրակայաններն ու էլեկտրահամակարգը:

Վլադիմիր Սարգսյանը՝ պարբերաբար լինելով Արցախում, մասնակցել է ինքնապաշտպանության մարտերին, աջակցել «Լույս» ջոկատի հրամանատար Յուրա Խաչատրյանին:



Յուրա Խաչատրյան՝
«Լույս» ջոկատի հիմնադիր հրամանատար

Վլադիմիր Սարգսյանը՝ լինելով ՀՀ Պետական հանձնաժողովի կազմում, կազմակերպել է նյութական արժեք ունեցող գույքի տեղափոխումը Աղդամից Ստեփանակերտ:

Ասկերանի ինքնապաշտպանության խորհուրդը, բնակչությունը և պետական տեղական մարմինները Վլադիմիր Սարգսյանին բազմիցս են հայտնել խորին շնորհակալություն՝ իրենց հետ ուս ուսի տված՝ թշնամու դեմ մարտնչելու և նյութական ու բարոյական օգնություն ցույց տալու համար:

1989թ. Բերդի (Ծամշադինի) կենտրոնում միտինգ էր: Կազմակերպիչներն էին՝ Մարտին

Բաղդասարյանը, Մուշեղ Ասրյանը, Հրաչ Աթոյանը՝ «Չարլի», Արամ Մալյանը: Նրանց մոտեցավ Անդրանիկ Ջուլհակյանը՝ «Ադանա» ջոկատի հրամանատարը:

Ծաղկավան գյուղից Յուրա Խաչատրյանը ներկայացավ երկտողով, խնդրեց իր ելույթում ներկաներին տեղեկացնել, որ Ադրբեջանում բնակվում են շուրջ կես միլիոն հայեր, (Բաքվում՝ 210, Սումգայիթում՝ 100, Գանձակում՝ 90 հազար և այլն) որոնց սպառնում է ջարդը: 20 տարեկան մի աղջկա Բաքվում մորթել էին, խորովել, կերել, որի մասին հետագայում հաղորդեց քաղաքական մեկնաբան Ռաֆիկ Հովհաննիսյանը և դատապարտեց:

Մուշեղ Ասրյանը ցույց տվեց ձեռք բերած երեք հրաշք ավտոմատ զենքերը: Յուրան ուրախությունից փոքրիկ երեխայի պես թռչկոտում էր: Համբուրեց այդ զենքերը և Մուշեղի հետ կազմակերպեցին օգնել իր ջոկատի համար գոնե մի քանի միավոր զենք ձարել:

Մինչև մարտական գործողությունները «Լույս» ջոկատի կազմավորումը գիշեր ու ցերեկ Յուրի Խաչատրյանը, Գալստյան Սերգեյը, Սեյրան Չիլինգարյանը, Փայտյան Վանիկը, Մարդյան Սամվելը, Մայիլյան Ռոբերտը ձեռք էին բերում զենք ու զինամթերք, 8 հրանոթ, նաև հանդերձանք:

Այդ պատճառով Երևանի օպերայի Ազատության հրապարակում ձևավորվեց խումբ, որի գլխավոր ղեկավարն էր Երքաղէլցանցի տնօրեն Վլադիմիր Մացակի Սարգսյանը: 1992 թ. կազմավորեցին «Լույս» ջոկատը, որի համալրվելուց հետո հրամանատար ընտրվեց Յուրա Գրիգորի Խաչատրյանը, շտաբի պետ՝ Հակոբ Աղեկյանը (հետագայում Լույս ջոկատի հրամանատար՝ Սպարտակ Սագսյան):

1992 թ. հուլիսին ջոկատի կազմում հերոսաբար մարտնչում էին Սամվել Զաքարյանը (զոհված), Հովիկ Խաչատրյանը (զոհված), Մանվել Պապյանը (զոհված), Արտուշ Աբգարյանը (վիրավորված), Կառլոս Փայտյանը, Վանիկ Փայտյանը, Նորայր Ադամյանը, Տիգրան Մուրադյանը, Արմեն Ղևոնդյանը, Գագիկ Ղարիբյանը, Հակոբ Աղեկյանը:

«Լույս» ջոկատն իր ակտիվ մարտական գործողություններով համալրվում էր: Վլադիմիր Սարգսյանի, Սամվել Գաբրիելյանի, Վահան Գրիգորյանի, Անդրանիկ Մխիթարյանի և մյուս

ընտիր տղաների շնորհիվ 1993թ. դեկտեմբերին ջոկատը հզորացավ, դարձավ գունդ: Սպարտակ Սարգսյանից հետո հրամանատարն էր Վահան Գրիգորյանը:

Երբ ջոկատը 17 հոգով Ստեփանակերտից մեկնեց Ասկերան, ընդգրկվեցին Ասկերանի գնդի կազմում՝ Վիտալի Բալասանյանի ընդհանուր հրամանատարությամբ: «Լույս» ջոկատը ընդգրկվեց նրա տեղակալ Արթուր Հարությունյանի գումարտակում: Վլադիմիրը իր սեփական խաչը նվիրեց «Լույս» ջոկատի հրամանատար Յուրային: Օգնում էին Աբովյանի, Մասիսի ջոկատները:

Ջոկատի ազատամարտիկ Սամվելը պատմում է, որ Ասկերանի պաշտպանական դիրքերում, որը գտնվում էր Նախիջևանիկ գյուղի տարածքում, երկու մարտական ընկերներ՝ Վլադիկը և Բաղդասարը, անհահանջ դիմադրում էին թշնամու գրոհին: Սակայն թշնամին ականանետային ճիշտ հաշվարկով ականը խրեց երկու խիզախ հայորդիների արանքը: Նրանց երկու մարմիններից կարողացանք հավաքել մի պարկ մսակտորներ: Ցավի ու մրմուռի հարվածից Վալտերը կծկվեց, պահակը քնած էր, ուղղաթիռով այդ մասունքները կարողացանք ուղարկել Երևան:

«Լույս» ջոկատի օրենքն էր. մինչև բոլոր ազատամարտիկները միասին սեղան չնստեին, ոչ ոք հացին ձեռք չէր տալիս: Յուրայի հայրը՝ Գրիգորը, ոտքով հասել էր Բեռլին: Հայրենական մեծ պատերազմի տարիներին Թամանյանի դիվիզիայի կազմում իր մարտական հերոսական ուղին կերտել է պատերազմի ամենածանր ռազմաճակատային գծում: Թամանյան թերակղզու, Կերչի, Ստավրապոլի, Ֆրանկֆուրտի, Բեռլինի գրավման մարտերին: Ստալինի կողմից շնորհվել է բազմաթիվ մեդալների: Յուրան ոգևորում էր տղաներին՝ ազատագրել Արցախը, թոռներին դաստիարակում էր հայրենիքի վրեժի ոգով: Ժամանակը եկել է լուծելու մեր պապերի վրեժը:

Ասկերանի գումարտակի հրամանատար Վիտալի Բալասանյանին շատ եմ օգնել: «Լույս» ջոկատի շտաբի պետ Հակոբ «Նագանի» հետ զենք ու զինամթերք, օգնություն էինք հասցնում, իսկ պարկով փողը տվեցի Ասկերանի գյուղսովետի նախագահին: Ասկերանի 4-րդ պաշտպանական հենակետ ավտոմատով Վլադիմիրը երաժշտության տակտով կրակում էր: Ասկերանի Բերդում տեղակայված էր ռազմական շտաբը: Քերոլյան Քոքսն ասաց՝ նկարահանեք մարտը: Յուրան թույլ չտվեց՝ ասելով.

- 250 հոգու պահել եմ մեկ տարի: Ճիշտը մարդու խիղճն է:

Հայերը կարողանում են գոտեմարտել գիտության հետ: Թուրքերի հետ համեմատած՝ բացահայտ առավելություն ունեն, քանի որ թուրքերն իրենց տգիտությամբ ի ծնե մարդկության նկատմամբ ունեն անփոփոխ մի գիծ՝ սպառողի, համամարդկայինի թշնամու. աշխարհի չարիքն են: ՄԱԿ-ը, որ կազմված է 192 պետություններից, մինչ այսօր չի կարողանում վերացնել տգիտության կարծր շերտն այդ երկրի վրայից:

Յուրայի աչքը դիպավ Ծահումյանի, Գետաշենի, Մարտակերտի փախստականների հոծ խմբերին, մի կնոջ, որ ոտքերը լաթով փաթաթած, կծկված, ձեռքերը կրծքին խաչած՝ ցրտից դողում էր: Թուրքերը գողացել, թալանել էին հայ կնոջ վերջին շապիկը, նրա ինքնասիրությունը, նրա պատիվը, ունեցվածքն ու դուրս շպրտել իր տնից:

Յուրան մտքում վերլուծում էր պատմությունը: Հայի բազուկը չի գործել ամբողջ զորությամբ: Տվել է կայսր, սակայն պետություն չի ունեցել: Զորավարներ է ծնել ուրիշ բանակների համար, սեփական բանակ չի ունեցել: Այդ է հիմնական պատճառը, որ հայ ժողովուրդը հասել է այդ վիճակին:

Մեր թշնամին մեկն է՝ թուրքը: Մենք ճաշակեցինք խորհրդային բանակի կողմից հարկադրված պատերազմը: Այս անգամ հայ ժողովուրդը ծանրությունը վերցրեց իր ուսերին, ունեցավ նախագահ և սպարապետ:

Առաջին փուլը սկսվեց 1988թ.-ից՝ անփորձություն, երկրաշարժ, փախստականներ. այդ փլատակների վրա կառուցվեց կամավորների հավատը, միավորվեց հայ ժողովուրդը:

Երկրորդ փուլը՝ 1992 թ.-ից սովածությամբ, զրկանքներով, ստեղծվեց հայոց անկախ բանակը և մեզ՝ որպես զինվորներ, նետեց մարտադաշտ, իսկ հունիսին եղավ առաջին զորակոչը:

1993թ. ազատագրվեց Քարվաճառը: Այդ մարտերում հայոց բանակը կորցրեց շատ արժանավոր սպաներ, որոնց պետք է փոխարինեին նորերը:

Երրորդ փուլը սկսվելու էր 1994թ.-ի հունիսից՝ հրադադա-

րից հետո, բանակաշինությամբ, մարտունակության բարձրացմամբ, բանակի և հասարակության կապի ամրապնդմամբ:

Ընկերոջը՝ ջոկատի շտաբի պետ Յակոբ Աղեկյանին հիշեցրեց, որ լեգենդար Կոմանդոսը՝ ազատագրելով Շուշին, ավտոմատը աջ ձեռքից ցած չդրեց, խրամուղիով մի ծայրից վազում էր մյուս ծայրը, իր ներկայությամբ քաջալերում ազատամարտիկներին. ահա որտեղ է հաղթանակի աղբյուրը:

Հայոց ճակատագրի Աստվածը եթե չուղարկեր Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻՆ, չէր լինի հաղթանակ:

Յուրայի հայրական տունը զինանոց էր: Յուրայի վրա խոր ազդեցություն թողեցին կնոջ ոտքերին փաթաթված լաթի կտորները: Այդ անմարդկային, գազանաբարո, մարդկությանը խորթ արարքը մարդու ուղեղում չէր տեղավորվում: Տարիներ հետո Յուրայի աչքերից արցունքներ էին հոսում՝ հանուն վրիժառության, երբ Թուրքիայում՝ Ստամբուլի կենտրոնում, 17-ամյա մի թուրք 5 գնդակով սպանեց հայ գրող ու լրագրող Հրանտ Դինքին՝ «Ակոս» թերթի խմբագրատան շենքից դուրս: Ճանաչված թուրք հայտնի երգչուհի Եշիմ Սալքըմը 2007 թվականի հունվարի 19-ին, իր համերգային ելույթի ժամանակ իմացավ Հրանտ Դինքի մահվան լուրը: Հեռուստատեսությամբ տեսավ ասֆալտին փռված դիակը, որի աջ ոտքի կոշիկը ծաքած էր, լատիներեն վիվա տառի ձև ուներ, որը նշանակում էր հաղթանակ, որը անցել էր տանջանք ու տառապանքի, ճշմարտության ու արդարության ճանապարհը, և չէր մտածել սեփական կյանքի արտաքինի մասին: Նույն պահին համերգը նվիրեց Հրանտ Դինքին և արցունքն աչքերին երգեց նրա սիրած «Սարի գյալի» երգը:

Սամվել Գաբրիելյան

««1.500.000+1» Հայրենիք-Սփյուռք Մշակութային Կամուրջ» ՀԿ նախագահ, երգիչ-երգահան Արման Ավետիսյանը «Վանից Արծրուն Բերբերյանի» տուն-թանգարանում

Հրանտ Դինքին նա միայն ճանաչել էր հեռուստատեսությամբ: Հրանտ Դինքի հուղարկավորության ժամանակ հազարավոր թուրքեր, քրդեր, հայեր բարձրացրեցին 1.500.000+1 թիվը, որը խորհրդանշում էր, որ Դինքի սպանությունը 1915 թ. հայերի ցեղասպանության շարունակությունն է:

2008 թ. Հայաստանում ստեղծվեց ««1.500.000+1» Հայրենիք-Սփյուռք Մշակութային Կամուրջ» ՀԿ-ը (հիմնադիր-նախագահ՝ երգիչ-երգահան Արման Ավետիսյան), որն ամեն տարի նշում է Հրանտ Դինքի ծննդյան (սեպտեմբերի 15) և մահվան (հունվարի 19) օրերը, եղեռնի օրը, կազմակերպում է բարեգործական միջոցառումներ և իրականացնում ազգային ծրագրեր՝ շարունակելով պայքարը արդարության համար: Արման Ավետիսյանը 2009 թ. փետրվարին կազմակերպեց ստորագրահավաք, որն ուղարկվեց ԱՄՆ-ի Հայկական Համագումարին, նկարահանեց «1.500.000+1» երգի տեսահոլովակը, որը ճշմարտության փաստերից վախենալով հայկական հեռուստաընկերությունները եթեր չեն արձակում:

Վլադիմիր Սարգսյանը պատմում է.«1994թ. Վազգեն ՍՊԱ-

ՐԱՊԵՏԻ հետ հեռախոսազրույց էի ունեցել, նա վերադարձել էր Հորադիզից: Հանգեց ինձ, թե գնդից 110 հոգի Վահան Գրիգորյանի հետ ուղարկել է Օմար: Մարտերի ժամանակ, որքանով էր ճիշտ, ստույգ չկարողացա զեկուցել, ճանապարհին հանդիպել էր գերիներին, գիտեր, որ 30 հոգի ցրտահարված գտնվում էին հիվանդանոցում: Ես ասացի, թե ինչո՞ւ ենք խոսում հիվանդների մասին, լավ է խոսենք քաջերի, ներկայի, եղածի մասին: Հայրույթն անցավ, տրամադրությունը լավացավ, ուրախացավ: Ասաց, որ Վահան Գրիգորյանին նշանակեմ հրամանատար: Երբ մարդ մտնում է պատերազմի դաշտ, ժպիտ պետք է լինի երեսին: Ես տղաներին ուղարկեցի Օմար:

Ղարաբաղցի 70 տարեկան մի ծերունի ինձ թթի օղի հյուրասիրեց՝ պահանջելով օղին փոխանակել գարեջրի հետ:

- Ինձ խաբել են հայաստանցիները, գարեջուր չեն տվել:

Ես մի արկղ գարեջուր տվեցի ծերունուն:

Երեք երեխայի հայր, Մասիսի շրջանի Ջրահովիտ գյուղի բնակիչ Բաղդասար Մանուկի Գևորգյանը, Երևանի Անասնաբուժական ինստիտուտի անասնաբուժական ֆակուլտետն ավարտելուց հետո Ղարաբաղյան շարժմանը մասնակցելով՝ ընկերանում է Արարատի Գեղամահովիտում ծնված Վլադիկ Վարազդատի Աբրահամյանի հետ, որը բնակություն էր հաստատել Արարատի մարզի Ջրահովիտ գյուղում:

Ավարտելով Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը՝ չորս երեխայի հայրը 1991թ. թշնամու գնդակից վիրավորվում է գլխից: Ապաքինվելուց հետո երկու ընկերները՝ որպես փորձառու ազատամարտիկներ, ցուցակագրվում են «Լույս» ջոկատում: Մեկնում են Ստեփանակերտ, ընդգրկվում Ասկերանի գումարտակի կազմում, որի հրամանատարն էր Վիտալի Բալասանյանը, տնտեսական գծով փոխհրամանատարը՝ Սամվել Հակոբյանը (Բալուջա), ռազմական գծով՝ Արթուր Հարությունյանը (Ասկերան), ջոկատի անդամներ էին Էդիկ Պատոյանը (Նորագյուղ), Վանյա «Դյավոլ»-ը (Խանծախ), Վանիկ Մեհրաբյանը, Սանասարը (Խնաբադ) և այլոք:

Գումարտակին մեծ աջակցություն և օգնություն էր ցույց տալիս ասկերանցի Սամվել Իսահակի Գաբրիելյանը, որ կապող պատասխանատու օղակ է եղել Ասկերանի գնդի և «Լույս» գնդի միջև, որ ղեկավարում էր Վլադիմիր Մացակի

Սարգսյանը: Նրանց քրտնաջան աշխատանքով կազմակերպվում է (1992թ. մայիս 27-ին) Ծուշիի, նաև Աղդամի (1993թ. հուլիսի 23-ին ազատագրվեց Աղդամը), Ասկերանի և շրջակա գյուղերի էլեկտրական ցանցերի կառուցման, վերանորոգման, տրանսֆորմատորների տեղադրման և շահագործման բարդ ու պատասխանատու գործը:

«Լույս» ջոկատի անձնուրաց մասնակցությամբ ազատագրվում է Ասկերանի Նախիջևանիկ գյուղը, զոհվում են հերոս ազատամարտիկներ Բաղդասար Մանուկի Գևորգյանը և Վլադիկ Վարազդատի Աբրահամյանը:

Մարտական ընկերներով վերհիշում էին անցած օրերի դառը պատմությունը: Երևանի էլցանցի ղեկավար աշխատակիցներ Սամվել Գաբրիելյանը, Վլադիմիր Սարգսյանը զենք ու զինամթերք են հայթայթել, աշխատել, որ մարտնչող զինվորի թիկունքը լինի ապահով, պատերազմի բեռն իրենց ուսերի վրա են տարել: Հաղթանակի հասնելու միակ ուղին ազգի միասնությունն է:

Օմարի ազատագրման մարտերին «Լույս» գնդից մասնակցել են 130 ազատամարտիկ, որոնցից 30-ը ցրտահարվեցին: Սեյիդլարի ոլորապտույտ ճանապարհին նրանց օգնության հասավ Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԸ:

ՀՀ ՊՆ դաստիարակչական աշխատանքների վարչություն

Դեկտեմբերի 5-ին Արկադի Տեր-Թադևոսյանը՝ Կոմանդոսն ինձ ասաց, որ ՍՊԱՐԱՊԵՏԸ ներքուստ երկնային խաղաղությամբ է լցված, նման պահերին կարելի էր գլոբալ հարցեր առաջադրել: Նրա հոգում վերածնվում էր հայրենիքը՝ ազատագրված հայկական հողերով:

Հորդառատ էին Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻ մտքերը, ինչպես երկնքից թափվող անձրևաջրերը, որ իջնում են երկնքի երակներից, հորդանում, հոսում լեռների կիրճերով, սար ու ձորին ձեն տալիս, ծառ ու թփին՝ շունչ ու հոգի, անտառի անդորրը չխախտելով: Քայլող լեգենդի էր նման ՍՊԱՐԱՊԵՏԸ, բնության հետ մի ամբողջականություն էր կազմում: Բնությունը գեղեցիկ է իր բազմազանությամբ, մարդն էլ՝ իր ծիծաղով: Մարդն

իր ծիծաղով է տարբերվում կենդանիներից: Աստվածահաճո էր ՍՊԱՐԱՊԵՏԻ ծիծաղը:

ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանի հանձնարարականով Կոմանդոսը, Գեղամ Հարությունյանը կազմավորեցին ՀՀ ՊՆ՝ դաստիարակչական աշխատանքի վարչությունը: Նրա գաղափարական բաժինը ղեկավարեց Ապարանի միջնակարգ դպրոցի տնօրեն Համլետ Դավթյանը, որը նշանակվեց այդ բաժնի պետ, իսկ տողերիս հեղինակը՝ որպես ավագ սպա, գաղափարախոս:

Նա իր ստեղծագործությամբ շրջապատն ու աշխարհը հաճելի էր դարձնում, մեր հոգեվիճակը լավացնում, գեղեցկացնում կյանքը: Նա հայոց բանակին տալիս էր գաղափարական սնունդ: Այն համարվում էր ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանի ինստիտուտը: Մայոր Արայիկ Պետրոսյանի ներաշխարհում ստեղծագործական ուժեր կային: Նրա հետ լինել և չնկատել ակնթարթը, անհնար էր: Հրաշալի գաղափարներ ուներ: Վազ-

Կենտրոնում՝ Արկադի Տեր-Թադևոսյան՝ Կոմանդոս, Արայիկ Մուրադյանը զինակից ընկերներով

գեն Սարգսյանն իր նմաններին ճանաչում էր դպրոցական, համալսարանական նստարաններից, որոնց համարում էր վաղվա հայ ժողովրդի ապագան:

Լեգենդար Կոմանդոսը նշանակվեց Վազգեն Սարգսյանի խորհրդական: Դաստիարակչական աշխատանքի վարչության պետ նշանակվեց գնդապետ Գեղամ Հարությունյանը: Երբ նա նշանակվեց փոխնախարար, նրան փոխարինեց Արայիկ Թադևոսյանը:

Գեղամ Հարությունյանը երիտասարդ էր, ավյունով լեցուն, համարձակ, աշխատանքի մեջ անհանգիստ, հետևողական: Նա հետամուտ էր ազգային ընդհանուր շահին, պետականության կառուցմանը: Հետևում էր ՍՊԱՐԱՊԵՏԻ և պետական նորաստեղծ ծրագրերի ճշգրիտ կատարմանը:

Մայոր Արայիկ Թադևոսյանը՝ վարչության փոխհրամանատարը, գրականագետ էր, գրականության զինվոր, համեստ, մարդամոտ: Միտքը պայծառ էր, որից ռազմական արվեստի ուժն ու կարողությունն էին ծորում:

Կապիտան Արայիկ Մեհրաբյանը ցանկացած գործի նկատմամբ ուներ յուրահատուկ մոտեցում: Համարձակորեն վեր էր

Ձախից՝ ՀՀ ՊՆ Ս.Սարգսյան, Ադոյան, Գ.Մելքոնյան, Թումանյան

հանում այն, ինչ խրթին էր, դիմակավորված, թաքուն: Նույնիսկ կարողանում էր իր գաղափարների ուժով մարդկանց մոտեցնել բնության օրենքների ճանաչողությանը: Կապիտան Համլետ Դավթյանի հետ խոսելով՝ զգում էիր, որ նա կարող է կյանքի կոչել շատ օգտակար մտահղացումներ:

Այս կոլեկտիվով շատ անգամ ենք հայտնվել ծանր կացության մեջ, սնվել ենք խաշած կարտոֆիլով, մեր գոյությունը պահպանելով՝ լուծել ենք հարցեր, որին հավանել և ընթացք է տվել ՍՊԱՐԱՊԵՏԸ: Հասկացել ենք, որ փոթորիկներով անցնող մարդն ինքն իր ճանապարհը պիտի հարթի, եթե ոչ՝ կարող է հայտնվել խռովության մեջ և խեղդվել:

Հորեղ անհատականություն դառնալու համար պետք է սուզվել, խորանալ կյանքի ընդերքը և ապա նավն առաջ տանել: Նախաձեռնած գործը պետք է ավարտին հասցնել, աշխատել, վերապրել, չնմանվել նեխած, լխկած, փտած մարդու խղճուկ մնացորդի: Եթե մարդը սովոր չէ տանջվել ու համբերել, նա նման է դատարկ տակառի: Երկյուղ ունեցող մարդու հոգին արդեն ուժասպառ է:

Աջից երկրորդը՝ Վալերի Գրիգորյան, ՀՀ ՊՆ Ս.Սարգսյանը զորավարժությունների ժամանակ

Ռոբերտ Քոչարյան, Սերժ Սարգսյան, Սամվել Բաբայան, Սամվել Օգանով, Բակո Սահակյան

ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը մի հսկա ամրոց էր, մի ամբողջություն: Դժվար էր նրան ուսումնասիրել և ընկալել ամբողջովին: Նրա խորհրդակցություններն անցնում էին շատ լարված, ամեն վայրկյան մենք կարծես շիկացած վառարանի վրա նստած լինեինք: Երբ խորանում էինք բուն ծրագրերի իրականացման մեջ, վերլուծում դրանք, դառնում էինք առաքինի: Նա խոսքաշեն էր, յուրաքանչյուր միտք արտահայտում էր սահուն, նուրբ, օրինակներով համեմում, տեսանելի մատուցում, լավագույն ձևակերպումներով որոշում առաջընթացը: Երբեմն դիպուկ էր ու չոր, երբեմն՝ կոշտ ու կոպիտ, շատ անգամ՝ տեղին և ընդունելի, քաղցր ու կատակող, գեղեցիկ ու հաճելի, երբեմն դառն էր, բայց ճշմարիտ. դա հետո էր պարզվում: Անկրկնելի էր իր հումորով ու կատակներով:

Նա հատուկ ճաշի սեղան չուներ, ուտում էր աշխատասենյակում կամ ինչպես պատահեր: Ծուկայական առևտուրը Նունեն էր անում. նրան վստահում էր ամբողջովին: Սպասքը հատուկ կամ ճոխ չէր. հասարակ թեյի ապակե բաժակ, գդալ, պատառաքաղ, դանակ: Ուտում էր ոլոռով կամ կարտոֆիլով պյուրե,

մակարոն՝ կոտլետով, վերմիշել, եփած, մանր կտրատած կաղամբ, պանիր, լոլիկ, վարունգ՝ նաև թթու դրած, հաց, աղ, խմում օղի, գինի կամ կոնյակ: Նրա ենթականերից մի քանիսի ծաշասեղանն անհամեմատ ավելի ծոխ էր: ՍՊԱՐԱՊԵՏԻՆ մոտ կանգնած լինելով՝ այդ ենք տեսել: Նա զինվոր-ՍՊԱՐԱՊԵՏ էր, անմնացորդ նվիրյալ: Նունեին էր վստահված շուկայից գնումներ կատարելը:

1992թ. գարնանը ՀՀՊ նախարար Վազգեն Սարգսյանի աշխատասենյակում խորհրդակցության էին հավաքվել որոշ ջոկատների հրամանատարներ՝ մոտ 33 հոգի: Ցուրտ ու պատերազմական տարիներն էին, աշխատասենյակը ջեռուցում չուներ:

Խորհրդակցությունը նման էր դպրոցական դասի: Նրա սպարապետական ճկուն մտքերն արտահայտվում էին պարզ ու հստակ: Մեզ հետ խոսում էր խրամատային լեզվով, կարծես գետնատան կամ խրամատի մեջ լիներ: Իրեն այնպես էր պահում, կարծես ՀՀՊ նախարար չլիներ, այլ սովորական դաշտային մի սպա, և որպես զինվորներ էին զրուցում: Բոլորս

Ճաշկերույթ Արարատի «Ոսկե բանալի» հանգստյան տան բակում. կենտրոնում Ռոմիկ Հակոբյան, Համայակ Զոհրաբյան, Նորիկ Պողոսյան՝ Չկո, Տարոն, Մոսո, Վազգեն Սպարապետի հավատարիմ ընկերները, 1997 թ.:

բավարարված էինք լինում: Ստանում էինք մեր առաջադրանքները, քարտեզագրումները, տեղագրությունները և այլն: Մի հարմար պահի ես առաջարկեցի Վայքի Բարձրունի, Եղեգնաձորի Խաչիկ գյուղերից սեպաձև, Երասխավանից՝ սլաքաձև խրվել Նախիջևան, թշնամուն դուրս շպրտել հայկական հինավուրց հողերից: Ժամանակը հոսում էր մեր օգտին: Կտրուկ առարկեց և ինձ, կարելի է ասել, դուրս շպրտեց: Աջ ձեռքը պարզելով դեպի արևմուտք՝ քարտեզի վրա գծեց Արմավիրի, պատմական Անիի, Ախուրյանի սահմանագիծը և ինձ հրամայեց վաղը մեկնել Անի-Պեմզա՝ ուսումնասիրելու իրավիճակը: Եվ ավելացրեց, եթե մեկ ռումբ պայթի Նախիջևանում, թուրքերը պատրաստ են Հայաստանի հետ պատերազմել: Թուրքական տանկերը կանգնած էին Ախուրյանի մյուս կողմում, Անիի մայր եկեղեցու շրջակայքում: Տանկերի փողերը դեպի Հայատան էին ուղղված: Ասաց.

- Սրանց տեսեք, իրենց ամենակարող են համարում, մի ձեր ուժերը տեսե՛ք, ձեր ոտքերը ձեր վերմակի չափ պարզե՛ք:

Ես այդ ժամանակ Չարենցավանի «Ղարաբաղ» կոմիտեի նախագահն էի, ունեի հեղինակություն, սակայն չառարկեցի:

Անդրանիկ Մելյան, «Վարդենիկ» ջոկատ, զոհվել է Քարվաճառում, 1993 թ.

Գեներալ մայոր Սուրեն Աբրահամյան, Երևան 2004թ.

Հասկացա, որ եթե մենք կրակեինք Նախիջևանի ուղղությամբ, որը սահմանամերձ է Թուրքիային, դա կհամարվեր հայերի ոտնձգություն, սահմանների խախտում, կհայտարարվեր պատերազմ, Հայաստանի վիճակն ավելի կծանրանար: Ահա ՍՊԱՐԱՊԵՏԻ բարկության պատճառը:

Եվ ավելացրեց. «Ով ուզում է իրեն ճանաչել, հայի շունչը զգալ, թող գնա Խոր Վիրապ՝ դեմքով կանգնի դեպի Արարատը, նայի Արարատին, մտքով Հայոց պատմության ծալքերը սլանա»:

Մենք՝ փոքր մարդիկս, ունակ չենք խորապես հասկանալու և մեր մեջ զգալու զորավարի անսպառ ուժը, Հայաստանի անկախության, պետականության, Հայոց բանակաշինության, գերված հողերի ազատագրման 10 տարվա նրա թափած քրտնաջան աշխատանքի ողջ մեծությունը:

Ուստի մնում է, որ մեր հոգու խորքում երբեմն անդրադառնանք նրա մեծությանը, քանի որ նա հայ ազգի խտացումն էր: Լինելով մարդասեր, մեծ հայրենասեր, ազգային գաղափարախոսության ջահակիր՝ Հայաստանը կապում էր համամարդկային բարձր գաղափարների ու ժամանակի պահանջների հետ: Նա սովորեցնում էր ապրել Աստծո տված բարիքներով, սեփական քրտինքով, բավարարվել սեփական աշխատանքի արգասիքով՝ առանց ուրիշի ունեցածի վրա աչք դնելու, նրանից զավթելու, նրան զրկելու երկրի վրա ապրելու հնարավորությունից, իր իրավունքներից: Բարի գործն է մարդուն պարգևում ճշմարիտ ուրախություն ու երջանկություն:

Մահն անզոր է ջնջել ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանի արածը, բայց սատանան ամենազոր գտնվեց, կասեցնելով այն գործերը, ինչ նա դեռ կարող էր անել:

Յուրաքանչյուր առողջ մտածող հայ իր հոգու խորքում քաջ գիտակցում է, որ մեկ ուրիշը չի կարող համեմատվել ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանի հետ: Նա բարձր էր բոլորից, ուժեղ և խելացի: Դրա ապացույցը նրա ղեկավարած արցախյան գոյամարտն էր:

Գեղազնիկ Չաուշը Կոռնիձորում մի առիթով ասաց. «Վազգեն Սարգսյանն արդար սիրտ ունի, որը մտածում է՝ թե ինչ անի, նա բարի է, կթեթևացնի Հայաստանի հոգսը»:

ԳԵՂԱԶՆԻԿ ՉԱՈՒՇ

«Ազատագրում» առաջին և երկրորդ հատորներում անդրադարձել են Չաուշին, բայց ավելացնենք երկու խոսք: Կոռնիձորից հեռադիտակով նայում էինք Ջիջիմլի գյուղից դեպի հարավ ընկած Գյուլիբերդ գյուղի տեղանքը՝ քարտեզագրում կատարելու համար՝ շեշտադրելով գոմերից ձախ հենակետերի պաշտպանությունը հայկական ինչ որ ուժերի կողմից:

Հեռվից մեզ էր մոտենում մի երիտասարդ, քայլում էր հրպարտ, ուսին դրած ավտոմատը երկու ձեռքերով բռնած: Բերանը ծածկող, ծնոտից կախված հաստ ու փարթամ բեղերը մորուքի հետ խճճվել էին: Նրա տեսքը հոգու պայծառությունն էր արտահայտում: Դեմքից թռչող բարի ժպիտ պարգևեց մեզ: Հասնելով մեզ՝ բարևեց, դիմելով ինձ՝ ասաց.

- Կամանդի՛ր, ի՞նչ կաչկա, Օպերայի ազատության հրապարակում ժողովուրդը ի՞նչ է որոշել,- ապա շարունակելով խոսքը՝ ավելացրեց,- գոմերից մինչև Ջիջիմլի գյուղ հասնող ձորակի սահմանագիծն իմ արծիվներն են պաշտպանում: Ձեռքերն օդում տարածելով՝ մատնացույց արեց պաշտպանական հենակետերը:

Կենտրոնում՝ Մարտիկ Բաղդասարյանը Յուրիկ և Արման Դուրգարյան եղբայրների հետ, Մարտակերտ 1999 թ.

Ես հմայված նայում էի այդ քաջասիրտ հայորդու հաստատուն քայլերին, համարձակ տեսքին, նրա պատրաստակամ լինելուն, կիսաշփոթ ասացի. «Չաուշին շատ ես նման, անունդ ի՞նչ է»:

- Ծուտ ես մոռանում,

կամանդիր, օպերայի հրապարակում ինձ չե՞ս հիշում, այստեղ են Ծռամը, Կորյուն Ղումաշյանը, Արայիկ Խուդավերդյանը, Գոգան, շարքային Հովիկ Պողոսյանը: Նստացույցի ժամանակ դեմքով ծանոթ էինք միմյանց, բայց գործի բերումով առնչություն չէինք ունեցել: Միտինգների ժամանակ շատ եմ լսել քո ելույթները և ահա այստեղ եմ, անունս Գեղազնիկ է,- ծիծաղելով, հավասարակշռված պատասխանեց Գեղազնիկը:

Մեզ շրջապատող երեխաները, ինչպես ասել ենք «Ազատագրում» գրքի առաջին հատորյակում, «Չաո՛ւշ, Չաո՛ւշ» ասելով՝ թռչկոտեցին դեպի գյուղամեջ, կարծես ինչ-որ բան հայտնաբերած՝ բոլորին հաղորդելու այդ կարևոր լուրը, որ լսել և սովորել էին դպրոցում, ուսումնական դասընթացների ժամանակ: Գրքից ծանոթ Չաուշը կենդանացել և ահա հսկում էր հայոց լեռները: Երեխաներն իրենց բացականչություններով քաջալերում էին բնակիչներին: Հայոց լեռների պահապան արծիվը՝ Չաուշը, զենքը ձեռքին ելել է ընդդեմ մարդակեր գազանի: Կարծես կրկնվում էր հայոց պատմությունը:

Եվ այդպես Գեղազնիկ Արմենակի Միքայելյանի մարտական անունը «Չաուշ» կնքվեց: Նրան հետագայում իր մարտական

Չաուշի ջոկատ: Կենտրոնում՝ հրամանատար Գեղազնիկ Միքայելյան՝ Չաուշ, Հովիկ Պողոսյան, շտաբի պետ Մուշեղ Սաղաթելյան, 1989թ:

գործունեության համար շնորհվեց Հայոց ազգային հերոսի բարձր կոչում: Նա ծնվել է 1951թ. Աշտարակի Լեռնապար գյուղում, բնակություն է հաստատել Սասունիկ գյուղում: Ավարտելով տեղի 8-ամյա դպրոցը՝ ընդունվում է Արմավիրի գյուղատնտեսական տեխնիկում: Ավարտելուց հետո ուղեգրով մեկնում է Բելգրադի մարզ՝ Ստարի Օսկոլ, որտեղ հանդիպում է իր կյանքի ընկերուհուն՝ Էմիլիային: Վերադառնում է Հայաստան, Սասունիկ սովխոզում անցնում աշխատանքի: 1987-1990թթ. աշխատում է Աշտարակի ուժային կիսահաղորդիչների գործարանում և զուգահեռ մասնակցում Կոռնիձոր, Երասխավան, Նյուվադի, Ոսկեպար, Լաչին և Հայաստանի այլ սահմանային գոտիների ինքնապաշտպանական մարտական գործողություններին:

Կոռնիձոր եկած կամավորական խմբերի միավորումից ձևավորվեց «Կոռնիձոր» ջոկատը՝ թվով մոտ 70 հոգի: Հրամանատար ընտրվեց Արայիկ Խուդավերդյանը՝ «Կոռնիձոր Արո»: Ինչպես ասել ենք, Հայաստանի սահմանների ինքնապաշտպանական կռիվների, Արցախի ազատագրման առաջին

Արամ Խաչատրյան, «Մարալիկ» ջոկատ:



Եալիկո Չարչիյան, «Մարալիկ» ջոկատ



Չաուշի և Վիտյա Այվազյանի հուղարկավորությունը, 1990 թ. օգոստոս, Փոքրիկ Սասունիկ:

մարտական գործողության առաջին զոհը՝ ուջանցի Նորիկը, 1988-1989 թթ. հունվարի 8-ին եղել է Կոռնիձորում: «Կոռնիձոր» ջոկատից ձևավորվեցին առանձին ջոկատներ և մասնակցեցին Երասխավանի ինքնապաշտպանական կռիվներին, մինչև հրադադար: Չարենցավանի «Կենտրոնաձույլ» գործարանի «Մուշ» ծածկանունով ինքնաշեն ձեռքի նռնակները, ականները, «Ծմայս» ավտոմատները հասնում էին ռազմաճակատի բոլոր անկյունները:

Երբ Չաուշին նվիրեցի «Ծմայս» տիպի ավտոմատ, ուրախությունից հուզվեց: Անսահման գեղեցիկ էր այդ պահը: Զգալով անչափ բավականություն՝ երանության գիրկն ընկավ: Երեք զավակի՝ Ալբերտի, Համլետի, Անահիտի հայր Գեղազնիկ Միքայելյանը 1990թ. օգոստոսի 27-ին Երևանում զոհվեց հայի դավադիր գնդակից: Հետմահու նրան ՀՀ Ազգային հերոսի կոչում շնորհվեց:

Չաուշի համագյուղացի, մանկության և մարտական անբաժան ընկեր Հովհաննես Հայկի Պողոսյանը՝ («շարքային Պողոսյան»), երկու զավակի հայր (Հակոբ, Հայկ), Չաուշի ջո-

Հովհաննես Եիրազի զավակները՝ Արա, Մասիս, Սիփան, Թաթոս, Աստղիկ, Անի, Արաքսյա, Վանանդ՝ Մարտին Բաղդասարյանի ուսերին, Ծիծեռնակաբերդ, 1984թ. ապրիլի 24-ին:

կատի շտաբի պետն էր: Կատարում էր ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանի հատուկ հանձնարարությունը: Նա ողբերգական մահով զոհվեց ավտովթարից՝ իր «Վիլիսը» վարելիս, 1990թ. նոյեմբերի 19-ին: Թաղվեց Չաուշի կողքին, այնտեղ, որտեղ ես, Չաուշը, շարքային Պողոսյանը մի քանի ամիս առաջ Սասունիկ գյուղի եկեղեցի կառուցելու հիմքի հուշաքարն էինք տեղադրում:

Հովհաննես Պողոսյանը 1969թ. ավարտել էր Սասունիկի միջնակարգ դպրոցը: Ծառայել էր խորհրդային բանակում: Ավարտել էր միլիցիայի դպրոցը, անցել աշխատանքի Աշտարակի ռադիոֆիզիկայի, էլեկտրոնիկայի ինստիտուտի պահակային ծառայությունում: Որպես քարտաշ վարպետ մասնակցել է Ապարանի Թուխ-Մանուկ և Աշտարակի Սպիտակավոր եկեղեցիների վերականգնման աշխատանքներին: Ղարաբաղյան շարժման ժամանակ, երբ ժողովուրդը գրավեց ՀՀ Գերագույն խորհրդի շենքը, շարքային Պողոսյանը առաջիններից էր, որ ցեխոտ սապոգներով քայլում էր միջանցքի գորգի վրայով՝ ցեխոտ ոտքերի հետքեր թողնելով վրան: Վերհիշում էինք ու լիաթոք ծիծաղում:

Մենք բոլորս մեծամասամբ գյուղի տղաներ էինք: Վազգեն Սարգսյանին շրջապատողներս նույն կյանքն ունեինք: Ավաղ, չէինք հասկանում, հետո հասկացանք. Աստծու կողմից տրված գանձ էր նա մեզ համար, չկարողացանք պահպանել, նրա կորուստը հետո զգացինք:

1988թ. խռովահույզ մի օր Վազգեն Սարգսյանն ասաց. «Ահա թե այս օրերին մեզ ո՞վ էր պետք, Պարույր Սևակը»: Երբ ես ավելացրի՝ նաև Հովհաննես Ծիրազը, տղաներն ինձ պաշտպանեցին: Ծիրազն ավելի մեծ հեղինակություն ուներ, քան Պարույր Սևակը: Դժվար ու ծանր պահերին ՍՊԱՐԱՊԵՏԸ, իր պարզ ու անարատ մանկական հայացքով կասեր.

- Մեր տունը մի խուց ուներ, դա եմ կարոտում, մեր Արարատի մոծակներին, մեր ֆուտբոլի դաշտը, որտեղ խաղի ավարտից հետո լողանում էինք ջրի խողովակի տակ: Ամեն առավոտ Արարատի ծերմակ կատարին էի նայում, բախտավոր մարդ եմ:

Լսողը երանության մեջ էր ընկնում՝ ակամա փնտրելով Արարատի ծերմակ կատարը:

Չաուշը շատ էր սիրում, երբ Վազգեն Սարգսյանը մեջբերումներ էր անում պատմությունից, աշխարհի լավագույն գործիչների ստեղծագործություններից: Ծարքային Պողոսյանը հումորի վարպետ էր, կարողանում էր կատակել Վազգեն Սարգսյանի հետ: Սկզբնական շրջանում բոլորս պարզապես Վազգեն էինք ասում: Որքա՜ն գեղեցիկ էր, երբ ազատամարտիկները ժամանակ էին գտնում կրակի շուրջը հավաքվել ու կլանված լսել Վազգեն Սարգսյանի զրույցները: Բոլորիս հաղթում էր իր սրտամոտ, հարուստ բառապաշարով, ճշմարիտ ոճով, պարզ ու համոզիչ արտահայտություններով: Նրա մեջ նկատվում էր վայրի կոպտություն. դա նրա համարձակությունն էր, բնական ազնիվ մղումը: Ծատերին, որոնք նրան մոտ կանգնած չէին, թվում էր՝ կոշտություն է: Նրա այդ վարքագիծը, այսպես ասած, այդ կոպտություն-կոշտությունը նրան մոտ կանգնածներն ընդունում էին քաղցրությամբ: Նրանց թվում էրսպիտակցի Միհրդատ Ոսկանյանը՝ Միդոն:

Կային նաև տխմարներ՝ կիսաուսյալ կամ անուս, արհեստական կարգ ու կանոնին հետևող մարդիկ, որոնք լավ չէին հասկանում նրան, շահարկում էին այդ կոշտությունը, հատկապես նրա բացակայության ժամանակ, բայց ընկնում էին անհարմար վիճակի մեջ: Սակայն անգիտակցորեն հանդիպում էին դիմադրության և գիտակցորեն հեռանում: Իրենց սեփական կաշվի վրա ներքուստ զգում էին ՍՊԱՐԱՊԵՏ Վ. Սարգսյանի հզորությունը, կռված տղաների հարգանքը, ժողովրդի անդավաճան սերը նրա նկատմամբ՝ դասելով նրան մեր սիրելի մեծերի շարքում:

Զինվորը նրա համար է, որ մինչև վերջին կաթիլ արյունը պայքարի հանուն ճշմարտության և արդարության: Մարդը մեռած է, երբ գտնում, բայց անտեսում է անարդարությունը: Մեկ գերեզմանի քարին ես նստած, մեկ՝ նրա տակ ես:

Այդ զինվորներից էր Աղբյուր Սերոբ ջոկատի Վլադիմիր Ծահբազյանը, 16 տարեկան, եղբայր Դավիթը՝ Ղարս ջոկատից, և երբ ձևավորվեց ՀՀ ԶՈՒ-ն մայրը մանկավարժ էր, ստիպում էր որդիներին զորակոչվել ծառայելու հայոց նորաստեղծ բանակում: Ծևֆլի բնակավայրի թեժ մարտերում Վլադիմիրը, որպես դասակի հրամանատար սերժանտի հետ կրակը վերցնում են իրենց վրա և զոհվում: Դասակը փրկում է ոչնչացումից:

ՍՊԻՏԱԿԻ ԳՈՒՄԱՐՏԱԿ

Հայ ժողովուրդը դարավոր անարդարության ցավից հրաբխի պես ժայթքել էր: Հավաքվել էին Երևանի օպերայի Ազատության հրապարակում, պահանջում էին վերականգնել ազգային իրավունքները: Ղարաբաղյան շարժումը հասել էր իր գագաթնակետին, որ կասեցնելն անհնար էր:

1988թ. դեկտեմբերի 7-ին ժամը 11:30-ին վայրկյանների ընթացքում Հայոց երկիրը ցնցվեց, երկրաշարժը ավերեց Հայաստանի երկրորդ մայրաքաղաք՝ Գյումրին, Վանաձորը, Սպիտակը՝ հարակից գյուղերով ու շրջաններով: Սև լուրը պատեց աշխարհը: Սակայն մարդ արարածը չի հաշտվում մահվան հետ, նույնիսկ բնության դաժանության դեմ ձեռնոց է նետում, ելք ու միայն ելք որոնում... Ծուրջ 25 հազարից ավելի մարդիկ մնացին փլատակների տակ, շատերը դարձան հաշմանդամներ, մեծ մասը զրկվեց օթևանից: Ձմռան բուք ու բորանի դեմ մնացին մերկ ու սոված, շփոթ ու մոլոր:

Վշտի ու մրմուռի, լացուկոծի դժոխային այդ խառնարանում մի ծեր կին քաշում էր սայլակը՝ վրան դագաղ, մեջը ծծկեր փոքրիկ երեխա, որի անշունչ կրծքին նստած տիկնիկը՝ ժպտադեմ ձեռքերը երկինք պարզած, կաթիկ էր ուզում՝ իր տիրոջ շուրթերին կենդանություն պարգևելու: Դժվարությամբ

Սպիտակի և «Արագած» գումարտակ, 1991, Մարտակերտ:

էր քաշում սայլակը, տեղ-տեղ կանգնում, շունչ էր քաշում, խաչակնքում երեսը, քթի տակ մրմնջալով՝ աղոթում. «Ով Տեր Աստվա՜ծ, դու մեզ պահապան», ու ձգելով սայլակը՝ քաշում էր առաջ: Իսկ խառնափնթոր ծամփեզրին ավտոմեքենաներից իջեցնում էին դագաղներ, իրար վրա անկանոն դիզելով՝ վազում էին կրակի շուրջը, տաքանում ու էլի շտապում իրենց գործը շարունակելու:

Քարին նստած ծերունին, ձեռքերը կրծքին խաչած, ուժը չէր պատում դիակը դագաղի մեջ տեղավորելու, անօգնական նայում էր երկնքին, երկրին և անշունչ մարմնին: Գոնե սավան ունենար՝ ծածկեր դիակը: Միայն կարողացավ քար նետել՝ պոչը աջ ու ձախ թափ տվող, ծծերը կախ, գաղտագողի իրեն մոտեցող շանը:

Ադրբեջանցիների ուրախությանը չափ ու սահման չկար, ծափ ու ծիծաղի մեջ լողում էին, հեռագրով շնորհավորում աղետի մեջ ցավից տնքացող հայ ժողովրդին: Օգտվելով առիթից՝ ուժեղացրին հարձակումը Գետաշենի, Ծահումյանի վրա՝ հայերին ներքաշելով իրենց կողմից հարկադրված պատերազմի մեջ:

Սպիտակի ջոկատը 1992 թ. Ծուշիի ազատագրումից հետո:

Հայ ժողովուրդը զսպանակի պես ձկվում էր: Այս բոլորին զուգահեռ՝ Գյումրիում, Վանաձորում, Սպիտակում կազմավորվում էին ինքնապաշտպանական ջոկատներ՝ Արցախ մեկնելու, կործանման եզրին հայտնված մի բուռ մնացած ժողովրդին օգնելու:

1989թ. գարնանը կազմավորվեց Սպիտակի կամավորական ջոկատը: Հրամանատար ընտրվեց Միհրդատ Վանիչկայի Ոսկանյանը (Միդո), շտաբի պետ՝ Արամայիս Վոլոդյայի Օթարյանը: 6 հոգով մեկնեցին Գետաշեն, Մարտունաշեն, հետագայում օգնության հասան 40 ազատամարտիկներ: Ստացան անձնագրեր՝ իբրև Խանլարի ժամանակավոր բնակիչներ:

Սպիտակի ջոկատի հետ համագործակցում էր «Արաբոյի» ջոկատը: Երբ օմոնականների ստուգիչ-հսկիչ խումբը հայտնվում էր, տղաները թաքնվում էին մոտակա անտառներում: Հայտնվում էին այն ժամանակ, երբ նրանք հեռանում էին:

Այսպես շարունակվեց շուրջ հինգ ամիս: Գետաշենի անկումից հետո տղաները վերադարձան Քաշաթաղի, Գորիսի սահմանագիծ: Որոշ ժամանակ անց, 1990թ. դեկտեմբերին, զոհվեց Վալերի Վոլոդյայի Թորոսյանը, վիրավորվեցին չորս ազատամարտիկներ: Գյուղը անվանվեց՝ Արջաձոր: Ծուշիի ազատագրման ժամանակ Սպիտակի համալրված ջոկատի 65 ազատամարտիկներ գրոհում էին: Թշնամու գնդակից հետույքից վիրավորվեց «Չոբրան»: Վազգեն Սարգսյանը նկատելով՝ հարցրեց.

- Ա՛յ տղա, ինչ է եղել, ոտքդ քարշ ես տալիս:

- Ոչինչ էլ չի պատահել, Սպարապե՛տ, թշնամին հետույքս համբուրեց,- պատասխանեց նա:

Աշխարհում կա այսպիսի մի կարևոր բան. «Ինքն իր մեջ բաժանված ամեն թագավորություն ավերվում է, և ինքն իր մեջ բաժանված ամեն տուն կործանվում»: Եկել է ժամանակը. ադրբեջանցիները զավթել են հայերի քաղաքներն ու շեները, այդ պատճառով նրանք պարտվելու են: Ծուշին մերն է եղել,

Ձախից Միրդատ Ոսկանյան (Միդո): Ձինակից ընկերների հետ: 1991թ.:

«Սպիտակ» ջոկատի ազատամարտիկներ, Դեկեմբր 1993 թ.:

մերն էլ կլինի, հարկավոր է գրոհի տեմպը չգցել: Գեղեցիկ է ասված, որ աշխարհում գոյություն ունի վեճում հաղթելու միայն մի միջոց. նրանից խուսափելը: Խելացիները լսում են ականջով, գործում խելքով: Պատերազմի ամենահզոր զենքը խուճապն է, թշնամին խուճապի մեջ է, նահանջում է դեպի Լաչին, հարկավոր է նրան հետապնդել:

Միհրդատ Ոսկանյանը՝ (Միդո), մինչ այդ լուռ լսում էր ՍՊԱՐԱՊԵՏԻՆ: Գլուխը օրորելով, հաստ բեղերը շոյելով՝ ավելացրեց, որ օրվա հոգսը օրվան հերիք է: Այս բոլորի մասին կ>գրեր լրագրող՝ Գեղամ Բաղդասարյանը, ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանի հետ հետագայում արված հարցազրույց ի մեջ:

Գյումրի, Վանաձոր, Սպիտակ քաղաքներ ավերվեցին անողոք երկրաշարժից: Տղաները վերք ու ցավով, լաց ու մրմուռով, գիշեր ու ցերեկ մոռացած՝ ինքնապաշտպանական ջոկատներ էին կազմավորում և պատրաստվում Արցախի ազատագրման մարտական գործողություններին մասնակցելու:

Ձախից երկրորդը՝ Սպիտակի Միդոն զինակից ընկերների հետ, Մարտունի, գյուղ Ճարտար, 1994թ.:

Վանիկը, Արուշը, Սամսոնը, սուրենավանցի Դումանչիկը, Միդոն մեկնեցին Գետաշեն, Մարտունաշեն: Գիշերը հերթապահում էին ֆիդայիները, ցերեկը՝ տեղի անփորձ բնակիչները:

Գյուղի դիմացի սարալանջով թշնամին հետախուզում էր տեղանքը, աշխատում ոչնչացնել հայերին: Սակայն հինգ հայորդիներ միլիցիայի համազգեստներով հետևում էին այդ գործընթացին: Նրանք շրջապատեցին թուրքերին և 45 հոգու ոչնչացրին՝ որպես ավար վերցնելով նրանց զենքերը:

Հրամանատար Միհրդատ Վանիչկայի Ոսկանյանը, Վոլոդյա Վահանի Հովհաննիսյանը, Վաչիկ Վաղինակի Մկրտչյանը, Տիգրան Գևորգի Սարգսյանը, Արտուշ Մաքսիմի Մադոյանը, Սամսոն Մեխակի Արեյանը, Լադիկ Սաշիկի Մակարյանը, Հայկ Էլմիրի Եղիազարյանը, Միեր Վարշամի Թադևոսյանը ազգային- ազատագրական շարժման առաջին օրից ռազմադաշտում են եղել, ամենաթեժ կետերում:

Հայի համար ամեն սրբություն խտացված է «հավաքական Հայաստան» բառի մեջ: Ազատամարտիկները կամավոր են դարձել հայոց սահմանները ոտնակոխ արած անողոք թշնամու դունչը կոտրելու, հերոսաբար մարտնչելու համար:

Սպիտակի գումարտակի մի խումբ ազատամարտիկներ, Դրմբո 1993 թ:

Արցախում իրավիճակը բավականաչափ ծանր էր, բայց տեղիք չէր տրվում խուճապի ու անկումային տրամադրություններին: Բոլոր դժվարին ելքերի համար կան լուծումներ և կարծում եմ, որ Արցախի հերոսական ժողովուրդը, որը չորս տարի շարունակ դժվարին դրությունից ելք էր գտել, այս անգամ էլ կելնի իր և մեր օգնությամբ: Միակ բանը, որ կարելի է Արցախի ժողովրդին ցանկանալ, դա խուճապի չմատնվելն է: Խուճապը մեծ վտանգ է, որին չպետք է ենթարկվել: Ժամանակ առաջ, երբ նայում և տեսնում էինք, թե ինչպես է Ծուշիի պես հզոր քաղաքը հանձնվել, զարմանում էինք: Ամենամեծ վտանգը ոչ թե թշնամու հզորությունն է, այլ խուճապը: Այդ հարաբերություններում միշտ կարելի է հասնել որոշակի համամասնության: Ոչ մի տեսակ տեխնիկա ու ռազմամթերք չի կարող օգնել, եթե կռվող ուժերի և հատկապես ժողովրդի մեջ չկա ոգեկոչման հատկություն:

Արցախի ժողովրդի մեջ այդ հատկությունը երբեք չի պակասել, և այս ամենապատասխանատու պահին դարձյալ չպետք է նվազի: Առանց թիկունքին սատարող ունենալու, զինվորը զինվորություն չի կարող անել: Իսկ Արցախի ազատամարտիկները, որոնք վերջին երկու տարվա ընթացքում ցույց տվեցին,

«Սպիտակ» ջոկատը մարտից առաջ, Օմար, Յանշակ 1994 թ.:

որ նախկին խորհրդային տարածքում ամենափորձված, ամենակայուն ու ամենատոկուն զինվորներն են, այսօր որոշակի թուլություն են դրսևորում: Մենք բավականին աշխատանք ունենք անելու, այս տատանումները և թուլության ժամանակավոր դրսևորումները վանելու ուղղությամբ: Զինվորները նորից պետք է իրենց թափ տան Սասունցի Դավթի պես, ամուր կանգնեն իրենց լծակների վրա, առյուծի պես պաշտպանեն իրենց հողը: Իսկ ամուր կանգնելու դեպքում նրանք միշտ համապատասխան օգնություն և աջակցություն կստանան: Թող ոչ ոք չկասկածի:

Այս ամենի և ապագայի նկատմամբ լավատես ենք: Ես նորից պիտի հիշեցնեմ, որ զինական տարբերությունները միշտ փոփոխվում են: Չի կարելի մոռանալ, որ Ադրբեջանի հանրապետությունը խորհրդային նախկին բանակից վերցրել է այն ամենը, ինչ կարող էր վերցնել. դրա մասը Արցախի ազատամարտիկները ոչնչացրել են, իսկ մյուս մասը տեխնիկապես անսարք լինելու պատճառով շարքից դուրս է եկել: Հիմա արդեն զինական հավասարակշռության պահն է գալիս: Արցախի ազատամարտիկները, որոնք դեռևս իրենց բաժինը չէին ստացել խորհրդային նախկին բանակից, հիմա արդեն ստանում են և կշարունակեն ստանալ: Եվ եթե առաջիկա մի քանի օրվա ընթացքում բոլորս միասին կարողանանք պահել հավասարակշռությունը, կարող ենք թշնամու դեմն առնել, համոզված եմ, որ հետագայում իրադարձությունները մեր օգտին կփոխվեն: Իսկ ինչ վերաբերում է ռազմաճակատին, փոփոխություններ կլինեն, թե՝ ոչ, ես կարծում եմ, որ որոշ փոփոխություններ մեր օգտին այսօր իսկ կան:

Որոշակի հստակ քայլեր են կատարված և առաջիկա ընդամենը երկու-երեք օրվա ընթացքում դա ակնհայտ կլինի և՛ մարդկային ուժի, և՛ տեխնիկայի, և՛ կառավարման իմաստով:

Ես նորից պիտի ասեմ, որ Հայաստանի իշխանությունները, քաղաքական հոսանքները, որքան էլ տարբեր կարծիքներ ունենան Արցախի հարցում, միևնույն է՝ բոլորի դիրքորոշումը միանշանակ է: Արցախը եղել է ու կմնա հայինը: Թշնամու այսօրվա առավելությունները ժամանակավոր են, ու բոլորս այն կարծիքին ենք, որ ոչ մի թիզ հող չպիտի մնա թշնամուն: Դա է պահանջում այս հողի վրա մեր ընկերների և եղբայրների թա-

փած արյունը: Սա միանշանակ է, և ուրիշ կարծիք չի կարող լինել: Այսօր ես խնդրում և խնդրելով պահանջում եմ Արցախի ժողովրդից և հատկապես այն շրջանների բնակիչներից, որտեղից գաղթել են, պաշտպանեցեք ձեր հողը, խուճապի մի՛ մատնվեք: Թող բոլորն իմանան, եթե կռվող ուժը թիկունքում ժողովուրդ չտեսավ, նա չի կռվի: Այս պահը պետք է քաջ գիտակցել: Պետք է դիմանանք և սատար կանգնենք կռվող ուժերին, որպեսզի նրանք այս պատասխանատու, դժվարին պահին կարողանան ամուր կանգնել իրենց դիրքերի վրա: Իմանալով, որ իրենց թիկունքն ամուր է, նրանք կկարողանան կատարել իրենց սուրբ պարտականությունը:

Թիկունքի հզորությամբ է կառուցվել աշխարհի յոթ և ութ հրաշալիքները՝ Քեոփսի բուրգը, Ալեքսանդրիայի փարոսը, Բաբելոնի կամ Ծամիրամի կախովի պարտեզները, Հռոդոսի կոթողը, Մավզոլի թագը, դամբարանը, Զևսի արձանը՝ Օլիմպիայում, Արտեմիդայի տաճարը՝ Հոնիայի Եփեսոս քաղաքում: Իսկ ութերորդ հրաշիլիքի մեջ ընդգրկված են՝ Սպահան քաղաքի և Տաթևի ճոճվող սյուները, Աղթամարի Սուրբ Խաչ վանքը, Անիի մայր եկեղեցին, Զվարթնոցի տաճարը, Հռիփսիմեի տաճարը, Գառնի-Գեղարդ կոթողները, Արցախի 2000 ամրոցները:

Մի դեպք հիշենք: Վերջացել էր զինամթերքը, խրամատի միջից Հովիկը ստիպված քարեր էր նետում թշնամու վրա: Թշնամին կարծում է թունաքիմիկատ նյութեր կամ ձեռքի նռնակներ են նետում իրենց վրա, մինչ այդ ռադիոկապով իրար հաղորդում են, թե թշնամու դեմ օգտագործեք թունավոր նռնակներ: Այդ քարերի նետումով և հաղորդագրումով թշնամին ենթարկվում է խուճապի:

Ժամանակն աշխատեց հայերի օգտին: Նույնիսկ եղան տեղեր, որ հայ ազատամարտիկները գրավեցին հակառակորդի մի քանի հենակետեր, ունեցան տաք հագուստ: Ապարանի, Արագածի, Սպիտակի, Վանաձորի ջոկատները հիմնականում մոտ էին Նոյեմբերյանին, Իջևանին, Ծամշադինին, որոնք սահմանակից էին Ադրբեջանին, սակայն ժամանակի թելադրանքով մարտական գործողությունների բարդության պատճառով, ինչպես նաև Արցախում, ջոկատները կատարում էին տեղափոխություն:

«ՎԱՆԱՁՈՐ» ԳՈՒՄԱՐՏԱԿ

Գնդապետ Կամո Հովհաննիսյան

«Վանաձոր» ջոկատի հիմնադիր-հրամանատար Վարդան Ասլոյանը զոհվեց 1993 թ. սեպտեմբերին: 17 հոգուց 1991թ. ձևավորվեց ջոկատը, որ հետո դարձան 22 հոգի: Մարտական գործողությունները սկսեցին Տավուշի ներքին Կարմիր Աղբյուր և Այգեպար գյուղերից: Առաջին մարտական մկրտությունից հետո մեկնեցին Մեղրի՝ Սոյուզի կոչվող բարձունքի պաշտպանական մարտերին մասնակցելու:

Մարտակերտի ծանր վիճակից տղաները՝ Դրմբոնից, Մեծշենից, Մոխրաթաղից, Մաղավուզից մեկնում են ազատագրման օպերացիային մասնակցելու: 1992 թ. հուլիսից Կամո Հովհաննեսի Հովհաննիսյանը ընտրվում է 45 հոգուց, ապա 280 հոգուց կազմված գումարտակի հրամանատար: Կամոյի պապերը Ղարսից ու Մուշից էին: Կամոյի զինվորները կարողացան օգոստոսի 31-ին Կծղուտի հատվածի պաշտպանական դիրքերում լինել: Թշնամու տանկից արձակված արկի հարվածի ալիքը Կամոյին հեռու շպրտեց, հրազենի գնդակից վիրավորվեց աջ ոտքը: Կծուղուտի հատվածում 5 օր ընկանք շրջափակման մեջ: Օգնող ուժերը հանեցին մեզ շրջապատումից: ՍՊԱՐԱՊԵՏ Վ. Սարգսյանը իր ավտոմեքենայով ինձ հասցրեց Արջաձորի հիվանդանոց, շատ հոգատար էր: Կազդուրվելուց հետո գործի բերումով մեկնեց Ստեփանակերտ, ինքնապաշտպանական ջոկատների շտաբի պետ գնդապետ Ֆելիքս Գզողյանի մոտ (հետո՝ գեներալ), որը մեկ դույլ շոկոլադե սալիկներ և «Բլեք» ֆիլտրի սիգարետ տվեց:

Հոկտեմբերի 4-ին ջոկատով մեկնեցինք Հոչազ: Երկրորդ

Կամո Հովհաննիսյանը և ՀՀ վաստակավոր մարզիչ Վազգեն Բադալյանը բոնցքամարտի աշխարհի չեմպիոն Վիկ Դարչինյանի հետ, 2002 թ.

անգամ վիրավորվեցի ձախ ուսից: Վիտյա Մկրտումյանը՝ մեր միջի համարձակը, անհայտ կորավ, 8 հոգի վիրավորվեցին:

Դրմբոնում նստած՝ բոլոր ավտոմեքենաները քողարկել էինք: Թշնամու ռմբակոծիչ ինքնաթիռը մեր գլխավերևում շուրջպար էր բռնել: Հետախուզում էր, որ արկը հարմար պահին բաց թողնի:

Դեկտեմբերին մեկնեցինք մասնակցելու Կապան, Եղվարդ, Ագարակ շրջանների պաշտպանական մարտերին: Դարանակալած թուրք հետախույզը 3-4 մետր հեռավորության վրա ինքնաձգային կրակահերթով գետին տապալեց գիտաշխատող Մերուժան Եղինյանին՝ հիասքանչ հայրենասեր մարդուն: Ցավ զգացինք բոլորս: Կարողացանք այդ թուրքին բռնել, գլուխը կտրեցինք: «Օ՜ֆ» չարեց, քաջ, համարձակ տղա էր:

12 օր անքուն էի, Կիլիշլի գյուղում Քարվաճառի ազատագրման ժամանակ վախեցել էի: Քնած էի, երազիս մեջ մի հոգևորական գորգ, այլ իրեր թալանած՝ Երևան էր տանում: Նա անցագրային թույլտվություն չուներ: Սև շորերով, փարաջայով,

գլխիս վրա կախված՝ ուզում էր ինձ արթնացնել, թույլտվություն ստանալ: Աչքերս բացեցի, երևի մշուշի մեջ էի, վախեցա, նրա կերպարանքը տեսնելով՝ քիչ մնաց սիրտս պայթեր:

1993թ. Վանաձորի ջոկատը ընդգրկվեց 5-րդ բրիգադի կազմում՝ որպես առանձին մոտոհրաձգային գումարտակ: Ապրիլին սկսվեց Քարվաճառի ազատագրման օպերացիան: Ընդհանուր հրամանատարը Յուրի Խաչատուրովը, Գուրգեն Դալիբալթայանը, Ալեքսանդր Թազագուլյանն էին, տեղակալը՝ Կամո Ծատուրյանը: Այստեղ էր 5-րդ բրիգադը, հրամանատար՝ գնդապետ Ռեմիկ Մարդանյանը, շտաբի պետ՝ Յուրա Հովհաննիսյանը՝ «26-ի Յուրան», տեղակալ՝ Սուրիկ Սարգսյանը, անձնակազմի տեղակալ՝ Արթուր Աղաջանյանը: Բրիգադի կազմի մեջ էր Սահակը, որ մինչև տանկիստ դառնալը զենիթային ինքնագնաց կայանի՝ «Ծիլկա» զենքի վրա էր: Մարտերով հասանք Օմարի գագաթին մնացինք մինչև օգոստոս: Պաշտպանական դիրքերը հանձնեցինք Հովսեփ Հովսեփյանին, մեկնեցինք Նոյեմբերյան: Կարճ ժամանակով Նոյեմբերյանից նորից վերադարձանք Քարվաճառ: Վերջնա-

Վազգեն Սարգսյան, Լևոն Տեր-Պետրոսյան, Պավել Գրաչով

կանապես ազատագրելով Քարվաճառը՝ երկրորդ անգամ մասնակցեցի Օմարի հաղթանակին:

Հրադադարից հետո մեկնեցի Մարտունի: Թշնամին պարտությունից գազազել էր, մաղձ էր թափում: Դիրքավորվեցինք Մարտունու դիմաց՝ Դիլագաարդա գյուղում: Թուրքի հետախույզները մտան հայկական խրամատ, 7 հոգու մորթեցին: Հովհաննիսյան Միշան ձեռքի նռնակով իրեն տրաքացրեց: Երկու ազատամարտիկի գերեվարեցին, գողացան: Երեք ժամ ուշացած հասանք, կատաղի մարտեր տեղի ունեցան: Երկու ժամ հետո կարողացանք թուրքերին վռնդել, վերագրավել պաշտպանական դիրքերը, 9 հոգի վիրավորվեցին:

Սոկրատը թիկունքի գծով տեղակալն էր, թուրքի մի ոչխար մորթեց և հայտարարեց՝ յուրաքանչյուրին 150 գրամ միս է տրվելու:

Գնդապետ (այժմ՝ գեներալ) Կամո Ռուբենի Ծատուրյանը, լինելով Թազագուլյանի տեղակալը, մեծ աշխատանք էր կատարել բանակաշինության կայացման գործում: Հայտնվում էր ամենադժվար կետերում: «Կամո Հովհաննիսյանը ձևական հրամանատար չէր, նրա հետ մարտի գնալը հաճույք էր»,- ասում էր գեներալը: Կամոն դժվար մարտական ճանապարհ է անցել, հատկապես Հոչազում: Գեներալը երեք եղբայրների անբաժան ընկերն էր, դաժան տարիներին չլքեց իր ընկերներին: Գումարտակում ուրիշ երեք եղբայրներ էլ կային՝ Վարդևան, Սեյրան և Սայաթ Կարապետյանները:

Աջից՝ գեներալ մայոր Լյովա Երանոսյան, Կարեն Սարիբեկյան, Կամո Հովհաննիսյան՝ մարտական ընկերներով, 2002 թ.

Կամոյի հարազատ եղբայրը՝ Արամ Հովհաննեսի Հովհաննիսյանը, 18 տարեկան էր: Երեք եղբայրներով՝ Կամո, Հայկազ, Արամ Հովհաննեսի Հովհաննիսյանները, իրենց 18 տարեկան փոքրիկ եղբորը՝ Արամին, չկարողացան ետ պահել արցախյան պատերազմից: Ինչպե՞ս պիտի ինքն իրեն խնամեր:

Նրանց մայրը՝ տիկին Սուսաննան, անհանգիստ էր. երեք արու զավակները շուրջն անհոգ մանուկների պես խաղում, վազվզում էին բակում ու կանչում. «Հաց ու պանիր ենք ուզում, մայրի՛կ»: Մայրը գլուխը շրջած նուրբ ձեռքերով պանիրը լավաշի մեջ փաթաթում, զավակներին էր հասցնում, մեղմիկ շոյում նրանց գանգուր մազերը:

Ժպտաց հիշողությունների մեջ, օրհնությամբ ձգեց ձեռքերը Արարչին՝ երեսը խաչակնքեց, որդիներին հանձնեց Աստծուն: Համբուրեց ոտքը մանուկ Հիսուսի, հոգու խորքում աղոթեց անարցունք, առանց խռովքի, օրհնեց, հաջողություն մաղթեց երեք որդիներին, որոնք մարտնչելու մեկնեցին հայ ժողովրդի խաղաղության համար:

«Վազգեն Սարգսյանը բոլորին ճանաչում էր, եթե մեկը ստում էր, նա գիտեր, շատ պարզ էր,- պատմում է երեք եղբայրներից Արամը,- ես ամաչում էի, քաշվում նրանից: Նա արդեն կայացած ՍՊԱՐԱՊԵՏ էր, մտնում էր խրամատ, խրամաուղու միջով քայլում, հենվում թմբին: Մի բուռ հող էր առնում բռի մեջ, մեզ բացատրում է. «Հողը հզոր է, մեզ ուժ է տալիս, ազնիվ է, մեզ ազնվացնում է»: Բռի մեջ սեղմեց սևահողը. «Թշնամին ուզում է մեզ այս հողի պես սեղմել, ճեղքել մարմինը, նրա տաքուկ արգանդի մեջ իր սերմը դնել:

Կամո Հովհաննիսյանը մարտական ընկերներով՝ խրամատում, 1992 թ.;

Սխալը նրանում է, որ Եվրոպական քաղաքականության մեջ մեր դիվանագետները հողի ուժը չիմանալու պատճառով խաբվում են: Սակայն հայ ժողովուրդը բնավ չի կորցնում իր ազատության հույսը: Նա իր համառ, անխոնջ աշխատանքի շնորհիվ հաղթելու է:

Մայրական գրկից ուժեղ է հողի ուժը: Կարևորը այն է, որ նրան պիտի տանք մեր առավելագույնը, որ ապրենք: Պատմության վերլուծությունը ճիշտ պիտի մատուցվի»: «Հետամուտ պետք է լինենք մեր պապերի կանչին»,- խոսքի մեջ մտավ տանկիստ Սահակը, ապա զանգեց Բարսեղին, որի նախնիները Կարսից էին, որոշ տվյալները ճշտելու համար: 14 տարեկան Նահապետը 1915թ. Կարսից է փախչել Գյումրի, ապա բնակություն հաստատել Սպիտակի Լուսաղբյուր գյուղում: Սիրանուշի ու Նահապետի համատեղ ամուսնությունից ծնվել է Ամալյա Նահապետի Կարապետյանը: Նա է պատմում.«14 տարեկան Նահապետը զորակոչվելով բանակ՝ անցնում է ծառայության ինչ որ հրամանատարի մոտ, որպես հանդերձապահ, միաժամանակ խնամում է անասուններին: Մի անգամ

Կամո Հովհաննիսյանը դիրքերում

Կամո Հովհաննիսյանը երկրի առաջնորդների հետ

անասուններին արածացնելու ժամանակ թուրք հրամանատարը ձերբակալում է երեխաներին ու պահանջում Նահապետից ցույց տալ հայերի ցորենի թաքստոցները: Պատանին հրաժարվում է:

Գիշերվա խնջույքից գինովցած թուրք հրամանատարն անուշ-անուշ քնած ժամանակ Նահապետը զենքերը գողանում է ու փախչում: Այդ զենքերով գնդակահարում է չորս թուրքի, ջրհորը գցում: Պատանի Նահապետը փախչում է, սակայն թուրքերը հետապնդում են: Հասնելով Ջաջուռի մոտ գտնվող Լուսաղբյուր գյուղ՝ թուրքերն հայերին հավաքում են Հզազի (Ջարդի) ձորը և խնայելով իրենց փամփուշտները՝ բոլորին սվինահարելով կոտորում:

Այդ ժամանակ ամուսնուս՝ Բաբկեն Կարապետյանի տատը՝ Ծաշլուն և Սաթենիկը դիակների մեջ թաքնվելով, կենդանի են մնում: Սպասում են մութն ընկնի, որ փախչեն: Հորեղբորս կինը՝ Սաթենիկը, վիրավորվում է, արյունաքամ լինում: Գարնան ցրտաշունչ գիշերը նրա հագուստի փեշերը հողին կպչելով, սառցակալում են: Ուժ չունենալով տեղից շարժվելու՝ ցրտահարվում, մահանում է:

Ամուսնուս՝ Բաբկենի տատը՝ Ծաշլուն, կարողանում է փախչել: Հասնում է Քեֆլու գյուղ, ճանապարհին ոտքերը ցրտահարվում են: Ոչխարի փեյնի մեջ ոտքերը տաքացնելու ժամանակ թուրքերը հասնում են և ստիպում, որ շարժվի: Ծաշլուն թուրքերին բացատրում է, որ չի կարող, փայտացել են ոտքերը: Թուրքերը թրով Ծաշլուի գլուխը կտրում են, մարմինը երկու մասի բաժանում: Մի ծանոթ տղա Ծաշլուի մարմինը թաղում է այդ գյուղի սրբավայր մատուռի բակում և մի կերպ հաղորդում հարազատներին եղած դեպքի մասին: Նա թաքնված տեսել էր կատարվածը:

Թուրքերն իմ հարևանի աղջկան բռնում են, ոտքերը կապում սյուներից և բռնաբարում, թրով կտրում կրծքերը, թունդրից հաց հանող շիշը խրում որովայնի մեջ: Հետագայում՝ տրակտորիստներն արտերը վարելու ժամանակ, հողից դուրս են հանում գանգը, հուղարկավորում:

Բարսեղն իր ընտանիքի՝ կնոջ Մանյայի և որդու՝ Տիգրանի հետ, Սուրբ Սարգիս եկեղեցում

1920 թվականն էր: Լուսաղբյուրի գյուղապետ Բարսեղը տիֆով հիվանդ էր: Նրա տան երդիկից թուրքերը ներս են մտնում, բոլորին ծեծում ու ջարդում: Բարսեղի հարսին՝ Նազիկին, որ շատ գեղեցիկ էր, թուրքերը ցանկանում են գողանալ, բայց չի հաջողվում: Աստծո օրհնությամբ փրկվողներ եղան:

Աջից երրորդը Դավիթը իր զինվորների հետ կերտում է ապագան

Ես ծնվեցի 1928թ., ամուսնացա, ունեցա որդի, անունը կնքեցինք Բարսեղ, որ նա լուծի իր պապերի վրեժը»: Սիրանուշը խոսքը վերջացնելով՝ խաչակնքեց երեսը, փառաբանելով ազատամարտիկներին:

Սերգեյ Պողոսյան, զոհված 1994թ

Ռուբիկ Մնացականյան՝ 9ել ,

Գնդապետ Կամո Հովհաննիսյան,
հրամատանար, Սոյուղի, 1992 թ.

Հրայր Հարությունյան
«Վանաձոր» զումարտակի շտաբի պետ

Արտուշ Աղամալյան,
զոհվել է 1994 թ.

Հարություն Խաչատրյան
զոհվել է 1993 թ.

Լիպարիտ Ղույյան,
զոհվել է 1994 թ.

Աշոտ Ղազարյան,
զոհվել է 1994 թ.

Գագիկ,
զոհվել է 1993 թ.

Գիտնական՝ Մերուժան Եղինյան
Զոհված 1992թ

Վրույր Պետրոսյան
Զոհված 1993թ

Արայիկ Միրզախանյան

«Վանաձոր» գումարտակի
ազատամարտիկներ
1993թ

Աշոտ Խոյեցյան



Բաբկեն Ախոյան

«Վանաձոր» գումարտակի
ազատամարտիկներ,
աջից՝ Կամո Հովհաննիսյան

«Վանաձոր» գումարտակի ազատամարտիկները խրամատում, Սոյուղի 1992 թ.

ԱՊԱՐԱՆԻ ԳՈՒՄԱՐՏԱԿԸ

1988թ.Ապարանում Ռազմիկ Պետրոսյանի նախաձեռնությամբ ստեղծվեց մի ջոկատ, որ հետագայում ընդգրկվեց հատուկ գնդի կազմում, որպես 4-րդ պայմանագրային գումարտակ: 1991թ. Ծահումյանի Ղարաչինար գյուղի ազատագրման ժամանակ նա վիրավորվեց, որ հետագայում սովորական երևույթ դարձավ:

Քարվաճառը, համարում էինք նոր Ապարան: Մարտունու տղաները հակաճառեցին, պատճառաբանելով, որ իրենք շատ են եղել այնտեղ և մեծ լումա ունեն Քարվաճառի ազատագրման գործում. ճիշտը Մարտունու անունով կոչելն է: Վազգեն Սարգսյանն ասաց.

- Որակ է պետք, ոչ թե քանակ,- բոլորը ծիծաղեցին:

Առաջինը Ռազմիկի ծնողները բնակվեցին այնտեղ: Այս պատերազմում հաղթեց հայերի ներքին սերը:

Վազգեն Սարգսյանը շատ էր կարդում: Երբ մտնում էինք աշխատասենյակ, թիկնած, կիսաքուն, թե հոգնած լիներ, անմիջապես սթափվում էր, ուրախանում, կանգնում, բարևում և ուշադիր լսում: Գրասեղանին դրված էին Տիգրան Մեծի, Սուվորովի, Ալեքսանդր Մակեդոնացու նկարները, Շեքսպիրի, Նարեկացու գրքերը, Աստվածաշունչը:

Կան զորահրամանատարներ, կան նշանավոր մարդիկ, որոնք տասը տարի, ինչպես կային, այնպես էլ մնացել էին, չէին աճում, ոչ մի փոփոխություն չկար: Անգիր արած ֆրազներով մեջբերումներ են կատարում, խելացի բանիմաց ներկայանում:

Վազգենը իրեն նետում էր կրակ ու բոցերի մեջ, կյանքը վտանգելով՝ իր անձով օրինակ էր ծառայում, պահանջելով այն, ինչ հնարավոր էր, ապացուցում էր, որ յուրաքանչյուրն ունակ է լավ ու մեծ գործ կատարել: Նա բոլորին ճանաչում էր և հիշում անունները, երբեք չէր շփոթում: Արտակարգ հիշողություն ուներ:

Մեր սիրտը շատ անգամ քարանում էր: Նա յուրաքանչյուր զոհի համար թե ներքուստ, թե արտաքուստ արտասվում էր:

Ապարանի գումարտակ: Կենտրոնում՝ հրամանատար Ռազմիկ Պետրոսյան:

Ձախից կանգնած չորրորդը՝ Ռազմիկ Պետրոսյան, Գագիկ Մելքոնյան մարտական ընկերների հետ

Վահան Եիրխանյան, Ռազմիկ Պետրոսյան, Սմբատ Այվազյան:

Ռազմիկ Պետրոսյանի կինը, երեխաները և եղբայրը՝ Արմենը: Օմար, 1996թ:

Աջից՝ Մյասնիկ Մալխասյան, Մև Կակաչ, Մոսո, Լենորուշ, Սպարապետ, Մացո կքանստած՝ Բուռնաշ:

Վայրի, երբեմն կոշտ վերաբերմունքի մեջ փխրուն հոգին էր թաքնված:

Հայերի մեջ թաքնված թուրքերը արտաքին ու ներքին լրտեսների օգնությամբ սպանեցին Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻՆ: Նրա հոգու մեջ դրեցին այն բոլոր վերքերը, խոցերը, մահերը, որ կրել է հայ ժողովուրդը:

Ապարանի Ավետը՝ երդվյալ ֆիդային, լցված ցասումով, բոլորի պես ողբալով բացականչում էր.«Մենք կռվում ենք Եվրոպայի համար, աշխարհի համայն մարդկության քաղաքակրթության համար: Հայերը շինարար են. հնադարյան մատյանների պատմությունը վկա: Պահլավունեները երեք եկեղեցի են կառուցել, որոնցից մեկը Մարմարաշենն է: Շինարար-վարպետները ճարտարապետական կոթողներ են կերտել, հողը պաշտպանող ու զարդարող բազում բերդեր ու տաճարներ պարգևել աշխարհին: Սրբատաշ բազալտե քարերի վրա խաղողի ողկույզներից հյուսված զարդակամարներ կան, լուսեղեն քանդակներ: Բայց այդ նույն Եվրոպայի աչքի առաջ մորթեցին մի ողջ ժողովրդի: Ֆրանսիան, Անգլիան՝ Կիպրոսը

Վազգեն Սպարապետը Ապարանի գումարտակի հետ պարում է հաղթական հայկական քոչարին: Օմար 1996թ.:

վերցնելու համար Կիլիկիան նվիրեցին, Գերմանիան իր ուսյալ զինվորներով, սպաներով համալրեց թուրքական բանակը, որպեսզի հայերի էժան ուժով կառուցի Գերմանիա-Անկարա-Դեր Զոր երկաթգիծը: Խորամանկ թուրքերը այդ գիծը կառուցեցին միլիոնավոր հայ մարդկանց ոսկորներով: Ռուսաստանը՝ Լենինյան հեղափոխությունից հետո, առանց հայերի ներկայության, 15 նահանգներ նվիրեց Թուրքիային, Ախուրյան, Արաքս գետերով գծեց թուրքական սահմանները, հայերին թողնելով միայն Էջմիածինն ու Երևանը: Գարեգին Նժդեհի շնորհիվ փրկվեց Զանգեզուրը:

Ապարանի Չինար գյուղից էր Ջիվան Խաչիկի Ավետիսյանը: Նա աջ ոտքից բնածին կաղ էր, սակայն վազքի կամ ֆիզիկական գործողությունների ժամանակ ակտիվ էր, արագաշարժ ու հաջողակ: Իր պարզ ու շիտակ վարքագծով շատերի կողմից հարգված էր, ճանաչված: Իր մարտական գործողությունն-

Ջիվանը և նրա ընկերները իրենց համար գերեզման են փորում, 1990թ.:

րով քաջածանոթ էր, կատակասեր: Ազատամարտիկի սրտամոտ խոսքը հարգված էր:

Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԸ ձեռքը Ջիվանի ուսին դրեց. «Ջիվան ախպեր, ոչ մի հարցով չես դիմում, ի՞նչ է՝ գործերդ լավ են ընթանում»: «Պարոն ՍՊԱՐԱՊԵՏ, քեզ մոտենալու համար ժամանակ չունեմ, խոտհունձ է, արտերս մնացել են չհնձած, Մարտակերտը նահանջում է: Ուզում եմ մոտենալ, սապոնվող հերթագրվածները շատ են, կրունկով խփում են գլխիս, շպրտում դուրս»,- ծիծաղեց ՍՊԱՐԱՊԵՏԸ:

Ջիվանը գլխից սաղավարտը չէր հանում: Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԸ նկատեց. «Ես ապարանցի եմ, սաղավարտի վրա սաղավարտ եմ հագնում»,- կատակեց Ջիվանը:

Քաշաթաղում թեժ մարտեր էին ընթանում, վիրավորներին,

Ձախից Ջիվանը ՀՓ ջոկատի հետ, Քաշաթաղ, Կոբրա հեռակետ:

դիակները մարտադաշտից հանելու համար լապտերները վառած ավտոմեքենան սլանում էր առաջ: «Ջիվան, թշնամին լույսերի ուղղությամբ կրակում է, քիչ էր մնում ես քեզ գնդակահարեի»,-ասաց տողերիս հեղինակ Մարտինը: «Ախպերս, ես կաղ ոտքով ինչպես այս մթության մեջ շարժվեմ»: Այդպիսին էր նա. կատակներով աշխուժացնում էր ամեն պահ:

Ջիվանը հարգում էր Արտաշատի գումարտակի հրամանատար Լաերտին, գովեստով խոսում Խանումի մասին. «Դավանում ու պաշտում եմ ցեղիս ստեղծող Աստծուն: Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԸ կռված տղաների, ազատամարտիկների խաչն էր, հավատը: Թող Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻ բազուկներին ուժ տրվի, հայ ժողովրդին՝ հաղթանակ:

Ծիրանի ծառ տնկեցի մեր չքնաղ գյուղի իմ այգում: Հրադադարից եկա տուն շունչ քաշելու: Պատրաստվեցի Երևան գնալ՝ առողջությունս ստուգելու: Առավոտյան մտա այգի, ծիրան քաղեցի ճանապարհին ուտելու, ծարավս հագեցնելու համար: Հասա Երևանի Նորքի հիվանդանոց, հերթի կանգնած սպասում էի, ծիրանից անուշ արեցի, մարդկանց էլ հյուրասիրեցի,

Ապարանի, Արագածի, Մանթաշի միացյալ ջոկատը մեկնում է ռազմաճակատ, Ապարան 1992 թ.:

ասելով՝ Ապարանի ծիրան է, համտես արե՛ք: Ոմանք ծիծաղեցին, ոմանք ջղայնացան, ոմանք նախատեցին՝ ասելով թե ձեռք եմ առնում: Գժի պիտակը ճակատիցս կախելով, ասացի՝ Ապարանն ու՞ր, ծիրանն՝ ու՞ր»:

Տարիներ հետո՝ 2007թ. մայիսի 16-ին Ջիվանին հանդիպեցի Ազատության հրապարակում: «Հայկական ժամանակ» թերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանը Թումանյանի արձանի մոտ նստացույց էր կազմակերպել՝ ապօրինի իշխանությունների անօրինականությունների դեմ: Կարգախոսն էր՝ «Մեկ գումարած մեկ»: Կանայք մոմ էին վառել, աղոթում էին:

Երկու գիշեր նստեցինք Նիկոլի կողքին, մեզ միացան Միքայել Հայրապետյանը, Գեղամ Հարությունյանը, Սմբատ Այվազյանը, Արամ Կարապետյանը, Կարո Հակոբյանը, Ջանիկ Հովհաննիսյանը, Խաչիկ Սուքիասյանը, ով խոստացավ օգնել «Ազատագրում» երրորդ գրքի հրատարակմանը: Գիշերը կանայք ջուր բերեցին, Նիկոլն ուրախացավ: Առավոտյան կանայք բռով կոնֆետ հյուրասիրեցին, շիկնելով վերցրեց:

Սասունը, որին «Քնած մանուշակ» էին ասում, «Հայե՛ր,

Ջիվանը՝ կքանստած, ձախից առաջինը, իր մարտական ընկերներով, Ֆեդյան՝ կանգնած, Ռազմիկը՝ կքանստած, Եահումյան, 1992թ.

արթնացեք» նշանաբանով, սուսամբար, յասման էր բաժանում կանանց: Մի օրիորդ դժգոհ դեմքով, զարմացած նայեց Սասունին, բայց վերցրեց ծաղիկները:

Հիշեցինք մեր հին ընկերներին, հատկապես գուսան Արտակին՝ Մարտունու Վարդենիկ գյուղից, որ լավ երգում էր հայկական ֆիդայական երգեր, նրա ընկեր Ռուբեն Ստեփանյանին՝ Արծվաշենից, ինչպես նաև Չոբանյան Մհերին, Բաբայան Ամասիկին, Աղաբաբյան Սուրենին, որ Գառնիի ջոկատի հրամանատարն էր:

Ռուբեն Ստեփանյանի նախնիները Ալաշկերտից են: Աբդուլհամիդյան ծիրաններից փախչելով՝ բնակություն էին հաստատել Հայաստանի Մարտունու շրջանի Արծվաշեն գյուղում: Պապը՝ լինելով ՀՅԴ անդամ, իր յոթ եղբայրների հետ աքսորվել էր, Ուզբեկստանում գնդակահարվել: Երբ սկսվեց Ղարաբաղյան շարժումը, Ռուբենը, իրավաբանական բարձր կրթություն ստանալով՝ գուսան Արտակի հետ սերտ կապեր է ստեղծում և ազատամարտիկների հետ կցվում այդ սուրբ գործին: Մար-

Հոգևոր առաջնորդ Տեր Հովհաննիսյանը, Ռուբեն Ստեփանյանը մարտական ընկերներով. Գանձասար, 1992 թ.:

Աջից առաջինը Ռուբեն Ստեփանյան, Գանձասար, 1992թ, հատուկ հանձնարարությամբ:

տական մկրտությունը ստանում է Երասխավանի կռիվների ժամանակ: Մեկնում է Վարդենիս, այնտեղից՝ Գետաշեն: Գետաշենի անկումից հետո ծայրահեղ վատանում է Ծահումյանի վիճակը: Նահանջելով Մարտակերտ՝ տեսնում է ժողովուրդը խուճապի մեջ է: Մարտակերտի Գանձասարում Ծենգավիթի ներքին գործերի բաժանմունքի հատուկ նշանակության խմբի 15 տղաներով երդվում են լինել առաջին գծում, չնահանջել, պաշտպանել Արցախի սահմաններն ու նրա անվտանգությունը: Ծուշիի Ղազանչեցոց եկեղեցում մտերմանում է Ջավախքի արծիվների հետ:

Մարտակերտի ազատագրմանը զուգահեռ՝ Քաշաթաղից Քարվաճառով դեպի Օմար ծանր մարտեր էին ընթանում: Մոտ 10 թուրք, 18 տարեկան, Բաքվից հասել էին Ղուբաթլու. գերեվարվեցին, անզեն էին: Նրանք չգիտեին՝ ինչի համար էին եկել: Այդպես էլ չիմացան, որ հայերի մոտ գերի են, իրենց շատ ազատ էին զգում: Գերիների փոխանակում եղավ:

Հրադադարից հետո Ռուբեն Ստեփանյանը նշանակվեց Վայքի շրջանի միլիցիայի ՆԳ բաժնի պետ: Նախիջևանի թուրք



Ջիվան Ավետիսյան, Մյասնիկ Մալխասյան, Գևորգ Գևորգյան, Բյամար Ղազարյան, Օմար, 1994 թ.:

ներկայացուցիչների հետ շատ կարևոր հարցեր լուծեց: Այդ խիզախ երիտասարդը մեն-մենակ բանակցեց թուրքերի հետ:

Պատմաբան Արմեն Կարապետյանի հետ խոսում էինք գուսան Արտակի և Ռուբեն Ստեփանյանի սերտ հարաբերությունների մասին. վերջինս համեստորեն լռում էր:

Հայաստանում ապրող 7000 ասորիներից շատերը մասնակցեցին Ղարաբաղյան շարժմանը:

Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԸ մեծ տեղ էր տալիս այլ ազգերի ներկայացուցիչների կատարած աշխատանքներին,- ավելացրեց պատմաբանը, և գովեց ՌԴ պաշտպանության նախարար մարշալ Պավել Գրաչովին, ով ասել է. «Մենք միմյանց եղբայր էինք անվանում: Ես հիանում էի այդ մարդով, քանի որ նրա երազանքն էր Հայաստանը դարձնել ոչ թե՛ պարզապես ազատ, այլ գեղեցիկ, հարուստ երկիր, ինչպես իսկապես արժանի է այս երկիրը:

Վստահ եմ՝ հայ ժողովուրդը նրա մեջ տեսավ տաղանդավոր քաղաքական գործչին, ներկայիս Հայաստանի մարմնավորումը»:

Իսկ գեներալ-մայոր Վովա Գասպարյանն ասաց. «Վազգեն

ՍՊԱՐԱՊԵՏԸ եկավ վերականգնելու սպարապետության խամրած հիշողությունն ու դառնալու է մեր կորուսյալ արժանիքների մարմնավոր հոգին, մեր ըմբոստության, պատվախնդրության, ուժի ու հավատի ոգին»:

Վազգենը մեր ժամանակների հերոսն էր, մեր Դավիթը և շեշտադրեց, որ ժամանակին թույլ էր Հայաստանի ռազմաարդյունաբերությունը: Վազգեն Սարգսյանը իր հեղինակության շնորհիվ կարողանում է Ռուսաստանից Պավել Գրաչովի միջոցով օգնել Հայաստանին: Երբ գիրքը տպագրման ընթացքում էր, ասես հոգուս թելադրանքով հիշեցի մեր թիկունքում գործող հայրենասեր մարդու, միլիցիայի փոխգնդապետ Յուրի Սերգեյի Կավրայլսկու (Սահակյանի) մասին:

1991 թ. հունվարյան մի առավոտ գնդապետը և Կավրայլսկին ութ տղաների հետ շտապ մեկնեցին Մոսկվա: Տեղ հասնելուն պես տղաները տեղավորվեցին ներքին գործերի նախարարության հյուրանոցային համալիրում, որից հետո մեկնեցին մերձմոսկովյան տնտեսական բազա: Հաջորդ օրն ուշ գիշերին վերադարձան՝ տրամադրությունները բարձր, քիչ էլ գինովցած:

- Տղանե՛ր, ամեն ինչ կարգավորված է, մեքենաների և ապ-

Ձախից երկրորդը՝ Ռուբեն Ստեփանյանը մարտական ընկերներով, Գանձասար, 1992 թ.:

Նստած աջից Հրաչ Աճամյանը զինակիցներով, 1990թ

Սերգեյ Բաբայան, զոհվել է 1994թ

րանքների փաստաթղթերը ձևակերպված են, վաղը չէ մյուս օրը կստանանք և շարասյունով կմեկնենք Հայաստան,- ասաց Կավրայլսկին:

Լուսադեմին երկու ավտոմեքենաներով նրանց մոտեցան ՍՍՀՄ ՆԳՆ պահպանության վարչության ղեկավար աշխատակիցներ Անդրեևը, Բուլատովը և Ծվեցովը: Յուրատեսակ զրույցից հետո գնդապետ Սամվել Սաֆարյանին ուղեկցեցին օդանավակայան և ճանապարհեցին Երևան: Արժանի է հիշատակել, որ Անդրեևը և Ծվեցովը Հայաստանի սահմանամերձ Բարձունի-Խնձորեսկ գոտիներում տեղակայված խաղաղապահ ներքին զորքերի ստորաբաժանումների ղեկավարներն էին: Նրանք ճիշտ ընկալեցին արցախյան ազատագրական պայքարը և իրենց լավ դրսևորումներով ամրացրին հայ և ռուս ժողովրդի բարեկամությունը: Իսկ թույլ ղեկավարները, իրենց շահի ու աթոռի, պարտիական տոմսի համար ծրագրել էին Արցախը կտրել կապից, սովամահ անել, խեղդել, ոչնչացնել: Պաստառների վրա գրված էր «Հավատ, լեզու, պայքար»: Ժողովուրդը մեղադրում էր կառավարությանը:

Ձախից երկրորդը Վարդան Սեդրակյանը թշնամու տանկի վրա

Խորհրդային Միության երկաթգծի դատախազը Մոսկվայի կենտրոնական հեռուստատեսությամբ ասաց. «Ադրբեջանի ազգային ծակատը շրջափակում է Հայաստանը, չի թողնում, որ կարտոֆիլը, հացահատիկը տեղ հասնեն: Ավտոմեքենաները փչացնում են, որ Հայաստանը սովի մատնվի»:

Հաջորդ օրը շարասյունը շարժվեց Երևան: Նրանց շարքում կար արտասովոր մի բեռնատար սառնարան-մեքենա, որ բարձած էր կարագով, իսկ ավտոբուսի մեջ մեր անձնական իրերն էին: Ծարասյունը ուղեկցում էր փոխգնդապետ Կավրայլսկին նոր ստացած Վազ-2106 ավտոմեքենայով:

Ճանապարհին կանգ էինք առնում միայն հոգնածության դեպքում՝ ղեկը փոխանցելով մեկս մյուսին: Լուի լեռնանցքի ոլորապտույտում շարասյան վեցերորդ բեռնատար ավտոմեքենան շրջվեց խոր ձորի մեջ: Ռադիոկապով հաղորդեցինք փոխգնդապետին: Առաջին հարցը եղավ. «Վարորդին բան չի՞ պատահել, ուրեմն ոչինչ»:

Ծարասյունը կանգ առավ: Նա ետ վերադարձավ և մինչ միլիցիայի ժամանումը, երեք տղաներին հանձնարարականներ տվեց, ապա շարունակեց. «Հայաստան հասնելուն պես մենք

ետ կվերադառնանք ձեզ օգնության: Իսկ հիմա՝ շարժվեցինք առաջ»:

Ծարասյունը կանգ էր առնում միայն մեզ ստուգող պահակակետերում: Դրանք Վրաստանում շատ էին, ամեն քայլափոխի: Ամեն անգամ Կավրայլսկին դուրս էր գալիս պահակակետ, երկու շիշ «Ստալիչնի» օղի և մեկ տուփ կարագ նվիրելով՝ շարունակում ճանապարհը:

Հասանք Հայաստանի սահմանին: Միլիցիայի աշխատակիցները և ներքին զորքերի զինվորները չբավարարվեցին երկու շիշ օղիով և մեկ տուփ կարգով: Փոխգնդապետը շատ զայրացած էր, որ նրանք փորձում են ստուգել մեքենաների բեռները: Նա հանկարծ արագ շարժվելով՝ բացեց մեքենայի դռնակը, չորս տուփ կարագ ու կես արկղ օղի իջեցրեց ներքև ու թողնելով ճամփեզրին՝ հրամայեց շարժվել՝ առանց սպասելու ստուգողների կարծիքին:

Հասանք Երևան: Բեռնատար սառնարան-ավտոմեքենան առանձնացավ շարասյունից, մտավ Արգավանդի սեփական տներից մեկի դարպասներից ներս:

1990թ. հունվարի 2-ին գիշերով սառնարանի զենք-զինամթերքը բաշխվեց հարավ-արևելյան ռազմաճակատի դիրքերը պահպանող ջոկատներին: Իսկ Ծալանդ ավտոմեքենան հա-

Կենտրոնում նստածը՝ Ռուբեն Ստեփանյանը ճաշելիս, Գանձասար, 1992 թ.:

Վարդան Սեդրակյանը տիկնոջ հետ, Քաշաթաղ, 1994 թ.

ջորդ մթնշաղին կանգ առավ Երևան-Էջմիածին մայրուղու տներից մեկում, շատ արագ բարձեցին զենքերը:

Ինձ հետաքրքիր էր՝ նռնականետ զենքեր կա՞ն, թե՝ ոչ: Երկաթե շեղբով բացեցի փայտե կանաչ արկղը, ուրախացա. յուղը վրան շարված էին: Վերցրի, համբուրեցի, կարծես ոտքերս պոկվեցին հողից, թռչում էի:

Լույսը դեռ չէր բացվել, արևի կարմիր կիսագունդը արշալույսից իր ուլտրամանուշակագույն շողերը փռել, երկինքը կապում էր Երկրի հետ: Կանգ առա՝ Դավալուն էր, բլրակը, քաղաք չկար: Երկինք խոյացող Արարատ սարի հպարտությունն էր: Հայ ժողովրդի անձնագիրը, նրա հավատը՝ Խոր Վիրապն է: Նայեցի այնտեղ, ուր հածախակի էինք լինում լուսաբացին, ասացի՝ բարի լույս, ՍՊԱՐԱՊԵՏ... Մտքով զեկուցեցի: Պատերազմում զոհվում էինք մեր պապերի հայրենիքը գերությունից ազատագրելու համար: Այդ ժամանակներում ֆիդայական շարժման մեջ չկար գնահատանք ու մեծարանք: Ով ինչ կարող էր, ներդնում էր հաղթանակի հասնելու համար: Անթիվ, անհամար սարսափներ էին՝ պատերազմ, արտակարգ իրավիճակ: Հավերժի գոյակռվում անթիվ են դաժանությունը, անիմացությունը, բարդ իրավիճակները:

Բարեհաջող տեղ հասանք: Մեզ դիմավորեցին Սամվել Հովհաննիսյանը, Միշան: Սամվել Սաֆարյանի ուրախությանը չափ ու սահման չկար:

Վազգեն Սարգսյանն ասում էր. «Մենք վերականգնում ենք Հայաստանը»: Սպառազինության գործը Վազգենի ուսերին էր

ծանրացած: Ինձ ասացին, որ Սամվելի, Միշայի հետ Ջավախքից՝ Բոգդանովկայից կա ռազմական տեխնիկա բերելու տարբերակ: 12 բետեր, 2 տանկ բերվեց Ղուկասյան, ապա՝ Երևան, որտեղից էլ հասավ Կրասնոսելսկ՝ իր նպատակին: Այն նպաստեց 1991թ. օգոստոսի 16-ին Արցախի Հաթերք գյուղի պաշտպանությանը, որտեղ «Փառանձեմ» ջոկատի կանայք, ի պատասխան խորհրդային բանակի խժդժությունների, 5 օրով պատանդ վերցրին 43 զինվորների՝ իրենց լրիվ սպառազինությամբ (ներառյալ՝ զրահատեխնիկան): Ծահումյանից ու Գետաշենից հայերը խտացել էին դեպի Հաթերք, նահանջելով հասել մինչև Մարտակերտ, Ստեփանակերտ, Քաշաթաղով՝ դեպի Հայաստան:

«Գառնի» ջոկատում 120 հոգի էին: Հրամանատարն էր Վարդան Նիկոլի Սեդրակյանը, որի պապին՝ Մելիքին, բոլշևիկները գնդակահարել էին: Պապի եղբայր Ղազար աղայի

Վարդան Սեդրակյանը զոհվածների հուշարձան-խաչքարի մոտ

որդին՝ Արմենը, Իրանի Շահի ընտանեկան բժիշկն է եղել: Վարդանը 1989թ. իր ջոկատով Գետաշենում էր:

Հրադադարից հետո, երբ Լաչինում հյուրընկալվեցինք Վարդանենց տանը, չէինք ճանաչում Վարդանին: Վարդանը պատմում է. «1992թ. հոկտեմբերի 8-ին Քաշաթաղում Լաչին-Հոչազի ուղղությամբ ընթացող թեժ մարտերում զոհվում է Բաղդասար Ալոյի Ալոյանը: Հինամթերքը վերջացել էր, եկա շտաբ զինամթերք տանելու:

Աչքիս առաջ թշնամու արկից բռնկվեց Չարենցավանի և Հրազդանի մահապարտների միացյալ գումարտակի «Ուրալ» ավտոմեքենան, որը զենք ու զինամթերք էր տեղափոխում Թիղիք-1, Թիղիք-2՝ իրենց պաշտպանական դիրքերը: Արկի բեկորից վիրավորվել էր գումարտակի հրամանատար Սպարտակի թիկունքի գծով ժամանակավոր տեղակալ Մարտին Բաղդասարյանը: Այդ մեքենայի կողքին կանգնած «Հապորոժեց» ավտոմեքենայի մեջ վառվում էր մի ծեր ղարաբաղցի: Որդին՝ վարորդը, վախից միջից փախել էր և տղաներին խնդրում էր, որ փող կտա՝ միայն թե հորը ազատեն կրակի միջից: Փողի մասին լսելով տղաները զայրացել էին, դեմ էին տվել պատին, ուզում էին գնդակահարել: Մոտեցա նրանց՝ Մարտինի միջնորդությամբ, չթողեցի գնդակահարել: Մինչ այդ Մարտինի վիրավոր մարմինը քաշ տալով հանեցի կրակադաշտից: Ավտոմեքենային մոտ գնալն անհնար էր»: Ես այդտեղ իմացա, որ նա էր ինձ փրկողը: Երկու մարտական ընկերներ գրկախառնվեցինք: Երկար ժամանակ էր անցել, իրար չէինք հանդիպել:

Կիմ Գիլոյանի, Ջիվանի՝ «Բատյա», Վովա Մանուկյանի (Արամուսից), Մայիս Խաչատրյանի՝ (Բյուրեղավանից) և Սամվելի «Արջ» ջոկատներով միասին մասնակցել են մարտական գործողություններին: Մարտինը Վարդանից իմացավ նաև Ֆեդյայի զոհվելու մասին, քանի որ մի քանի ժամ առաջ Միյասնիկ Մալխասյանը՝ «Կաղ Ջոնը», Քաշաթաղի թիղիքների ուղղությամբ մարտնչում էին թշնամու դեմ: Իսկ Հոչազում գրադի հրետանու արկերի տարափի տակ մարտնչում էր ապարանցի Ռազմիկ Պետրոսյանի գումարտակը, որի հետ համագործակցում էին «Արծիվ-13», «Արտաշատ» և մի շարք այլ ջոկատների հետ:

ԱՐՏԱՇԱՏԻ ԳՈՒՄԱՐՏԱԿ



Լաերտ Սաղաթելյան՝ քաջազուն հրամանատար Արտաշատի գումարտակի ԵԿՄ ջոկատների գլխավոր հրամանատար

Լաերտ Սաղաթելյանի նախնիները Խոյից էին: Սուլթան Համիդի հայաջինջ քաղաքականությունից փրկված՝ բնակություն էին հաստատել Արտաշատում: Մինչև Ղարաբաղյան շարժումը խորհրդային պետության դեմ ընդիմություն էր, հետապնդվում էր, Ծիրազի մտերիմներից էր:

Արտաշատում կազմավորվեց ջոկատ, որի հիմքի վրա ստեղծվում է գումարտակ, հրամանատար ընտրվեց Լաերտ Սաղաթելյանը, շտաբի պետ Մնացական Մարգարյանը (Վիտյա), փոխհրամանատար Համբարձում Ասատրյանը, Արարատում՝ Վազգեն Սարգսյանը, Դավիթ Զադոյանը, Մասիսում՝ Բաբաջանյանը, համագործակցում էին միասնական ուժերով:

Անվտանգության կոմիտեի հետապնդումից տղաներն անցան ընդհատակ: Սակայն Լաերտի ոգին չնահանջեց, համարձակորեն վերակազմավորեց կոմիտեն և նրա հիմքի վրա 1988թ. դեկտեմբերին կազմավորեց 50 հոգանոց ջոկատ-վաշտ: Լաերտը, որպես հրամանատար, 1990թ. Արտաշատի շրջանի 16 ջոկատները միավորեց և ընտրվեց գումարտակի

Արտաշատի գումարտակ: Կենտրոնում նստած՝ հրամանատար Լաերտ Սաղաթելյան: Ավշարի ջոկատի հրամանատար Գագիկ Սարգսյան: Մարտի գնալուց առաջ, 1991թ.

ընդհանուր հրամանատար: Իրենց ընկերներից շատ հարգված մեկը՝ Քալանթարը, նրան «Ուստա» էր անվանում, «Նիվա» էր գնել, սակայն ջոկատ-գումարտակը զինված չէր: Նիվան վաճառեցին: Լաերտն ու Համբարձումը մեկնեցին Կրասնոդար՝ զենք ու զինամթերք հայթայթելու: Ռուս աղջիկների օգնությամբ զենքը տեղափոխեցին Հայաստան:

Ջոկատում արգելված էր ծխել և օգտագործել ալկոհոլ: Լաերտի վարորդ Ցոլակը, մի տուփ «Բելամոր» ծխախոտ էր թռցրել: Հրամանատարի նախատինքից ազդվելով՝ Ցոլակը երդվեց, որ այլևս չի ծխի:

Լաերտը կապեր ուներ համալսարանի դասախոսներ Ֆրիկ Մելիք-Ադամյանի, Նորիկ Գալստյանի հետ, որոնց օգնությամբ Մարտին Բաղդասարյանը աշխատում էր ստանալ դեղին վառոդ:

«Արցախ» պաստառը չորս հոգով հասցրին օպերայի Ազատության հրապարակ, ձերբակալվեցին: Բանտից Լաերտին ազատեց Զավեն Գևորգյանը:

Վարուժան Ղանդիլյան, Արա Գևորգյան, Գագիկ Մանուկյան, Մարգպետ Այվազյան:

Երասխավանի կռվի ժամանակ թշնամու արկը 2 մետր հեռավորության վրա խրվեց հողի մեջ, Լաերտի կողքին, բայց չպայթեց:

1990թ. այդ օրերին աշնանը օրենքով ծանաչված ընտիր գողեր Վարդգեսը՝ «Ծիպո» մականունով և նրա ընկերը հավաքվել էին Խոսրովի արգելանոցի գեղատեսիլ վայրում: Հրավիրել էին Լաերտին, Վիտյային: Նրանց հյուրասիրեցին արջի խորովածով, կարմրախայտով և այլ համեղ ճաշատեսակներով: Այդ մեծ հոգու տեր, հայրենասեր մարդը՝ Վարդգեսը, ի նշան հարգանքի, իր ձեռքով մատուցեց հայկական անուշահամ ուտելիքը: Վազգենը և նրա ընկերները համերաշխ էին մարտական-քաղաքական գործողությունների մասնակիցների հետ: Բռնակալ թուրք ոսոխի դեմ համազգային պայքարը համախմբեց հայ ժողովրդին: Հայաստանում շուրջ մեկ ամիս գողության դեպք չգրանցվեց: Լաերտին հաջողվեց Համբարձումի հետ մեկնել Մոսկվա, մասնակցել Ելցինի կազմակերպած միտինգին: Ծանոթանալով Գդլյանի հետ՝ Արտաշատում կազմակերպեց նրա ՀՀ Աժ պատգամավոր ընտրվելու գործը: Նրանց մասնակցությունը, ուշադրությունը, հետևողականությունը, օգնությունը ոգևորեց տղաներին:

Լաերտին և իր ընկերներին տղաները հայտնեցին իրենց գոհունակությունը: Հարգեցին ողջ հայ ժողովրդի արժանավոր զավակների հիշատակը: Հաջողություն մաղթելով մարտնչող մարտիկներին՝ բարի ճանապարհ ցանկացան: Արցախում Խանումը սպասում էր իր մարտական ընկերներին:

1990թ. հունվարին Վազգեն Սարգսյանի հանձնարարականով Լաերտը 60 հոգիանոց ջոկատով մարտնչել էր Գետաշենի, Ծահումյանի ինքնապաշտպանական մարտերում, արդեն որոշ փորձ ուներ: Ջոկատի տղաները կարողացան գերեվարել երկու թուրքի և փոխանակել Ծահեն Մեղրյանի հետ: Ծուրջ մեկ տարի մարտական գործողությունների ժամանակ թշնամուն հաջողվեց Լաերտի ջոկատի երկու արծիվների գլուխները կտրել, տանել:

Վերջում Վարդգեսը կանչեց Հարութին, մի մեծ փաթեթ փող առանց հաշվելու տվեց Լաերտին: 1992թ. սկզբին նորից Վարդգեսի գլխավորությամբ Սվոյ Ռաֆոյի, Կրասնոդարի Արտյոմի հետ եկան Արտաշատի Երկրապահի շտաբ, այցելեցին զոհված տղաների՝ Կոստանի, Արայիկի, Վաչոյի շիրիմներին: Յուրաքանչյուրն իր կողմից նվիրատվություն արեց:

Վովան մինչ մեռնելը եղել է ազատամարտիկների հետ: Արթուր Փափազյանին «Մերսեդես» նվիրեց. իր խորթ տղան էր, շատ էր սիրում: Ծուշիի բանտի բանալին մինչ օրս պահում է Վովան:

Աշտարակի հախճապակու գործարանի փոխտնօրեն Ստեփան Ստեփանյանը, ՆԳ բաժանմունքի պետ Ստեփան Դալլաքյանը, Տիգրան Ղանդիլյանը, ԴՈՍԱՖ-ի նախագահ Ալբերտ Սաֆարյանը, լինելով պաշտոնյաներ, օգնում էին իշխանություններից թաքուն՝ սնունդ, սպիտակ խալաթներ և այլ անհրաժեշտ պարագաներ հատկացնում:

1991թ. Երասխավանում Վեդու ջոկատի հրամանատար Առաքելը («Դայի») իր ջոկատով խորացել էր Նախիջևանի տարածքը: Թշնամին կարողացել էր ծարպկորեն փակել նրա նահանջի ճանապարհը: Դավիթ Զադոյանը Վազգեն Սարգսյանից խնդրեց, որ Լաերտին իր ջոկատով ուղարկի օգնության: Լաերտը ընտրեց 15 արծիվների, Սաքոյին նշանակեց ջոկի հրամանատար և առանց դադարի, կրակն իր վրա վերցնելով՝ տղաներին՝ մոտ 20 հոգու, ազատեց թշնամու ձիրաններից: Եվ որպես ռազմական ավար, իր հետ բերեց հինգ ավտոմատ, որն այդ ժամանակ ամենաարժեքավոր բանն էր:

Լաերտն ասում էր. «Վազգեն Սարգսյանին մինչև մազերիս ծայրը հարգում եմ, իմ ախպերն է, նրա դավադիր սպանությունից, այդ ցավից մինչև հիմա խելքի չեմ գալիս: Բռնենք՝ խեղդելու ենք»:

1994թ. Հորադիզի թեժ մարտերում սիսիանցի Աշոտ Մինասյանի հետ համագործակցելով՝ հասան փայլուն հաղթանակի: Այստեղ հերոսաբար մարտեր էր մղում կոռնիձորցի Արոն:

Երասխավանում զինադադար էր: Քաղաքացիների մուտքը պատերազմական գոտի արգելված էր, անցագրային հսկիչ կետեր էին դրված: Սանէպիդկայանից եկել էին ստուգումների: Նրանց ուղեկցում էր Լաերտը: Անցագրային հսկիչ կետի պահակային ծառայության զինվորը պահանջեց նշանաբանը: Նշանաբանը ֆիդայապետ «Քեռի»-ն էր: Լաերտը մոռացել էր: Հիշելով ինչ-որ հարազատ անուն, ասաց.

- Հորաքույր:

Լսվեց.

- Ո՛չ:

- Մորաքույր:

- Ո՛չ:
- Ընդհանուր բարեկամներ:
- Ո՛չ:
Ասաց.
- Լաերտին պետք է դեմքով ճանաչել:
16 ջոկատների Երասխավանից հետո ուղարկեցին Ծահումյան գյուղը: Տրանսպորտ չկար: Լաերտը կատակեց. «Ոչինչ, յուվեցիները մեզ հետ են, նրանք կարող են մեզ պետք գալ»: Ջոկատի հրամանատարի անունը «Կատու» էր: «Կատվին կարող ենք լծել մեր տեղը, յուվեցիները մեզ հետ են»:
ՀՀ Կենտկոմի քարտուղար Վլադիմիր Մովսիսյանը, Գրիգոր Գրիգորյանը («Գեգեն») և Վազգեն Սարգսյանը եկան Լաերտին ստուգելու: Լաերտը կատակեց. «Դավիթ Զադոյան 2 կոպեկ գցիր գրպանս, լսափողը վերցրու: Զագարը դնեմ Էլչիբեյի բերանին ու ջուր լցնեմ, եթե պղպջակներ ելան, վերջներս լավ է»:

«Բալահովիտ» գումարտակ, ձախից՝ հրամանատար Կիմ Գիլոյան, Իշխանասար, 1990 թ.

ԱՐԾԻՎ-13 ԳՈՒՄԱՐՏԱԿ

Մարտակերտի անտառներում 3 ամիս պարտիզանական մարտեր էին ընթանում ռուսական հատուկ զորամասերի ստորաբաժանումների դեմ, որոնք օգնում էին ադրբեջանցիներին: Հատկապես գարնան խոնավությունը, ցուրտը, անբավարար պայմանները ազդել էին ազատամարտիկների առողջության վրա: Գումարտակի հրամանատար Ռուբիկ Եղոյանը, Վանիկը, Ջոնը, Մարտիկը՝ ազատամարտիկներով կրակի շուրջը նստած, ծրագրում էին թե ինչպես կազմակերպել դիվերսիոն օպերացիա, թշնամու հենակետերում ստեղծել խուճապի տրամադրություն: Մարտիկը համաձայն չէր: Ջոնի հարցադրմանը պատասխանեց. «Մի՛ շտապեք, առավոտյան կիմանաք»:
Լուսածագ էր: Ճամբարը քնաթաթախ դիմավորում էր արշալույսը: Մարտիկը անկողնում չէր: Տրվեց տագնապի նշան, քիչ անց հևիհև վազքով, կիսամերկ՝ եկավ Մարտիկը: Բոլորը շփոթված հարցրին. «Խենթացե՞լ ես, ի՞նչ է»: «Մարտից առաջ

«Արծիվ 13» մահապարտների ջոկատ, հրամանատար Ռուբիկ Եղոյան, 1992թ

Ռուբեն Եղոյան
անհետ կորած, 1992թ, Արծիվ 13
ջոկատի հրամանատար

Մարտին Գրիգորյան
անհետ կորած, 1992թ,
Արծիվ 13 ջոկատի ազատամարտիկ

հարկավոր է մարզվել»,- եղավ կարճ պատասխանը: Այդ օրվանից ջոկատը սկսեց ամենօրյա վարժանքներ անցկացնել:

«Արծիվ-13» և «Գարեգին Նժդեհ» ջոկատները, որոնց հրամանատարներն էին Արարատ Խրիմյանը, Մանվել Բատիկյանը, շտաբի պետ Ջոն Աբելյանի հետ գտնվում էին Հադրութի պաշտպանական հենակետերում: Զենքի և զինամթերքի պակաս էր զգացվում: Թշնամու հրետակոծությունից ավերածությունը մեծ էր: Կային զոհեր ու վիրավորներ: Հայերը դիմակայում են ավտոմատի և հոգու արիությամբ: Արարատը և Մանվելը մեկնեցին հետախուզության: Խորանալով հակառակորդի տարածքում՝ ընկան դժվար կացության մեջ: Թշնամին սեղմելով օղակը՝ աշխատում էր գերեվարել նրանց: Մանվելն անձնազոհ մխրճվեց կրակուբոցի մեջ՝ գործի դնելով գնդացիրը: Գնդացիրը թշնամուն շփոթության մեջ գցեց, տղաներն ազատվեցին մահվան ծիրաններից: Հունիսի 29-ին Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻ հրամանով ջոկատը Հադրութից տեղափոխվեց Մարտակերտ, դիրքավորվեց Լենավան գյուղի պաշտպանական հենակետերում: Այդ կատաղի մարտերի ժամանակ զոհվեցին Ռուբիկ Եղոյանը և Պեպանը: Նրանց դիակները անհավատալի դժվարությամբ հանեցին մարտադաշտից: Մնացածի

ճակատագիրը անորոշ մնաց: Իսկ Մարտիկ Ժորժիկի Գրիգորյանը անհետ կորավ: Նրանք 7 եղբայրներ էին, լծվել էին ազգային ազատագրական պայքարին: Եղբայրներից Հենրիկ, Մարտիկ, Ժիրայր Գևորգյանը, իրենց պապի ազգանունով էին, Ռուբիկը, Գագիկը, Թոռնիկը, Նահապետը, Մեսրոպը՝ Թումանյան: Եղբայրներից ամենահաջողը՝ Նահապետը, ցավի ու մրմուռի մեջ գալարված՝ աննահանջ շարունակեց զբաղվել եղբոր ճակատագիրը պարզելով, սակայն արդյունքի չհասավ: Գոնե մի մասունք չեղավ, որ մոր՝ Ռոզայի սիրտը հովացներ: Նա մինչև օրս նկարի առաջ աղոթում է Աստծուն և սպասում որդու գալստյանը: Նա Թուրքիայի հեռուստատեսությամբ գերիների տեղափոխման ժամանակ տեսել էր իր որդուն, սպասում էր, որ մի օր իր գիրկը կգա որդին, հայոց ցավից տնքացող հողը նորեն կծլարձակի: Սպասում էր, որ արևի տաքուկ շողերի ներքո որդու ճակատը կհամբուրի: Սպասում էր, որ մի օր կբուժվեն փոթորկվող հոգիները մեր մայրերի: Զոհվածների արյան ճայնով, վիրավորների խուլ հառաչանքով՝ հայոց ցավը կախվել է աշխարհի ճակատին, սպասում է, որ մի օր ճշմարտությունը լուսարձակի:

Ստեփան Նիկողոսյան, Յուրի Գասպարյան, բարոնուհի Քերոլայն Քոքս, Ռաֆիկ Մեհրաբյան,
Նորայր Վարդանյան

Արծիվ-9 ջոկատի հրամանատար Կորյուն Ղումաշյանը 16 տարեկան Անդրեյ Գեորգևիչ Ծելեմային կասկածանքով ընդգրկեց ջոկատի կազմում: Նրա հայրը ռուս էր, մայրը՝ Արևիկը՝ հայուհի: 1992թ. նոյեմբերին Գյուլիբերդ գյուղի համար մղվող մարտերի ժամանակ նրանք օգնության հասան «Աղբյուր Սերոբ» ջոկատին և մարտի ժամանակ թշնամու արկի հարվածից Միշայի հետ նա վիրավորվեց, կոնտուզիա ստացավ: Անդրեյին ուշաթափ վիճակում օգնության հասավ Հրաչ Աբրահամյանը: Քարվաճառի ազատագրման կատաղի մարտերի ժամանակ ծանոթացավ Մասիսի գումարտակի շտաբի պետ Համլետ Սերգեյի Կիրակոսյանի հետ, նրան պատմեց Գյուլիբերդի մարտերի մասին:

Համլետ Կիրակոսյանը պատմում է, որ շատերն էին անձնուրաց, իրենց կյանքը նվիրեցին հայրենիքին: Նրանք առանձնահատուկ ուշադրությանն են արժանի, նրանց կարելի է ներկայացնել կառավարական պարգևների: Համլետ Կիրակոսյանը՝ լինելով Կոմանդոսի մարտական ընկերը, կարողանում էր ջոկատում սերտ կապեր ստեղծել: Օմարի գագաթի գրոհման ժամանակ զոհվում է ավագ լեյտենանտ Առաքել

Աջից չորրորդը Մասիսի հնքնապաշտպանական գումարտակի շտաբի պետ Համլետ Կիրակոսյանը Հրաչի և մյուս մարտական ընկերների հետ

Առաքելյանը: Այդ ջոկատից էին Հրաչ Թադևոսյանը, Կապիտան Անդրանիկ Բարությանը, Մարտիկ Մանուկյանը, Վանիկ Մկրտչյանը, Անդրանիկ Փիլոյանը և Լյովա Գրիգորյանը, որոնք չընկճվեցին սառնամանիքի, խեղդող բքի ժամանակ, աննահանջ մարտնչեցին՝ ցույց տալով հայ ազատամարտիկի խիզախությունը: Կոմանդոսը «Ազատագրում» գրքում հարկ համարեց լուսաբանել նրանց արածը:

Սասունի Նատոպա գյուղից Ժորա Սափեյանի նախնիները կոտորածներից մազապուրծ՝ բնակություն էին հաստատել Թալինի Աշնակ գյուղում: Նույն ճակատագրին արժանացած Հարութ Ալբերտի Տերյանի պապը, որը ծնվել էր Զորավար Անդրանիկի ծննդավայր Ծապին Գարահիսար գյուղում, նույնպես մոխրացավ կրակ ու բոցերի մեջ: Նա 4 տարեկանից ընկնում է Թուրքիայի և Հունաստանի մանկատներ, ապա՝ փրկվելով, հասնում Երևանում: Հարությունը 13 տարեկանում երգում էր եկեղեցական երգչախմբում, 15 տարեկանում նվաճեց ԽՍՀՄ բռնցքամարտի չեմպիոնի կոչումը: Նա «Սասնա Ծռեր» ջոկատում մասնակցում էր Արցախի ազատագրման մարտական գործողություններին: 18 տարին բոլորած՝ զորա-

Մարտական ընկերներ Գեղամը, Սերգեյը, Հարութը:

կոչվեց հայկական բանակ՝ որպես հաստիքային սակրավոր: Թշնամու հակատանկային ականների ականազերծման ժամանակ վիրավորվեց, ստացավ կոնտուզիա: Զոհվեց նրա սիրելի հրամանատարը՝ Սերգեյը, վիրավորվեց Գեղամը: Հարութի համառ միջնորդության շնորհիվ ընկերոջ ոտքը չանդամահատեցին, մասամբ բուժվեց, ապա սոցիալական սուղ պայմանների պատճառով մեկնեց Հոլանդիա: Հարութը մի հաշտության բանավեճի ժամանակ զոհվեց հրազենային գնդակից:

Ժորա Սեփեյանը իր ակտիվության շնորհիվ ընդգրկվել էր «Սյունիք» ջոկատի կազմում, որի հրամանատարն էր Եսայի Ասատրյանը: Հրադադարից հետո միասին աշխատեցինք ՀՀՊՆ համակարգում: Զենք ու զինամթերքի սակավության պատճառով Ժորայի անձնական նախաձեռնությամբ Թալինի Աղբյուր գյուղի «Արագած Բոնդո»-ի հետ մեկնեցին Ախալքալաք: Այնտեղ տեղակայված խորհրդային բանակից կարողացան հաջողացնել 3 կալաշնիկով ավտոմատ, 1 գրադ ավտոկայան, մեծ քանակությամբ ականներ: Բեռով, բարձով ցերեկ-

Ժորա Սափեյանը որդու հետ. վերադարձ մարտից, 1992 թ.:

ները՝ քողարկված, գիշերները՝ շարժվելով, հասան Հայաստան, թաքնվեցին Արագածի Կաթնաղբյուր գյուղում: Հաջորդ օրը խորհրդային բանակի օդային հետախուզական ուժերը հայտնաբերեցին թաքստոցը, տղաներին ձեռբակալեցին: Ուժեղ կամքի ու ամուր հոգու տեր տղաները չեն կոտրվում: Ազատվելով փորձությունից՝ մինչև իրենց կյանքի վերջը մնացին Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻ դրոշին հավատարիմ:

1989թ. կազմավորվեց «Սասունցիներ» ջոկատը: Հրամանատար ընտրվեց Ալֆրեդ Ներսիսյանը՝ ԱՖՕ-ն շտաբի պետ՝ Լենդրուշ Տոնոյանը: Տիգրան Բաղդասարյանը, Մկրտիչ և Ժորա Սափեյանները, Վրեժ Հովհաննիսյանը Հայկ Կիրակոսյանը, Արդարադատության 3-րդ կարգի պետական խորհրդական գեներալ մայոր իրավաբան Վաղինակ Ղազարյանը, որը Արցախի անկախության հիմնավոր փաստաթղթերի ձևակերպման մեջ մեծ ներդրում ուներ, թիկունքում աշխատող Ավագ Ավագյանը համալրելով ջոկատը սկսեցին համագործակցել «Նաիրի» ջոկատի հետ, որի հրամանատարներն էին Խաչիկ Սիմոնյանը և Ռաֆիկ Մկրտչյանը: 1990թ. նրանք Դոստուր գյուղում էին:

Ձախից չորրորդը Համլետ Կիրակոսյանը մարտից առաջ, Քաշաթաղ, 1993 թ.

Սասունցիները երգում էին հոգեզմայլ ու սրտահույզ երգեր, պարելու մասին խոսք չկար. կային սրտից բխող ձայներ, իսկ մյուս խումբը, որը ձայնակցում էր, երգուպարը դարձնում էր համահունչ: Դադարների ժամանակ կազմակերպվում դաշտային համերգներ էին լինում: Չի կարելի ասել, թե ազատամարտիկներն այն ժամանակ արել են ամեն ինչ: Եղել են սխալներ, թերություններ, վրիպակներ, բացթողումներ, քանի որ ջոկատների անձնակազմի ուսուցումը կամ նրա գործողությունները սկզբնական շրջանում ինքնուրույն էին: Շատ անգամ, ելնելով պայմաններից, տեղից, եղանակի բարդություններից՝ որոշ ջոկատների կառավարումը թերանում էր: Շտաբները նոր էին ձևավորվում, այդ պատճառով տարբեր ջոկատների փոխգործողությունների արագ ու հստակ կազմակերպումը մարտում դժվար էր: Ընդհանուր առմամբ, հրամանատարական կադրերը ունեին բարձրագույն կրթություն: Խորհրդային բանակի սպաները սկզբնական շրջանում վախենում էին իշխանություններից, Կոմունիստական կուսակցությունից: Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻ քրտնաջան աշխատանքի շնորհիվ հաջողվեց բեկում մտցնել հրամանատարական շտաբների, զորքերի գործունեության մեջ. նրանք աստիճանաբար տիրապետում էին ռազմական արվեստին:

Ասյա Բարխուդարյանը մարտական ընկերոջ հետ

Ասյա Նիկոլայի Բարխուդարյանը 30 տարեկան էր, երբ իր միանուագար որդուն թողեց ծնողների խնամքին և ընդգրկվեց «Ադանա» ջոկատի կազմում:

Ասյան լավ գիտեր իր պապերի անցյալը: Նրանք գաղթել էին Սասունից: Առաջին մկրտությունը ստացավ Երասխավանում, դեռ անփորձ էր: «Ուզում էի ոտքից կամ ձեռքից վիրավորվել՝ հպարտանալ: Արջ Աշոտին եմ պարտական, Ավտոմատը քանդել-հավաքել սովորեցրեց»,-

պատմում էր Ասյան: Մի անգամ Աշոտը ձեռքը մտցրեց կարասի մեջ, հանեց լիզեց: Հարցրեցի.

- Աշոտ ջան, թաքուն այդ ի՞նչ ես անում:

- Սուս, քոթոթ ջան, մեղր եմ գտել, արի՛ ուտենք:

Գդլյան Հարութի ծննդյան օրվա առթիվ ծնողները ոսկե ժամացույց տվեցին, որ հասցնեմ Ոսկեպար, նրան հանձնեմ: Այնտեղ թեժ մարտեր էին: Վիրավորվել էր Արման Թորգոմյանը, վիրակապեցի, դա եղավ իմ առաջին բուժօգնությունը: Կային դիակներ: Որպես բուժքույր հանձնարարեցին Սամվելի շտապ օգնության ավտոմեքենայով դիակները տեղափոխել Երևանի էրեբունի հիվանդանոցի դիահերձարան: Երբ տեղ հասանք, բժիշկը պահանջեց մաքրել դիակները, ստուգել փաստաթղթերը, անվանագրանցել՝ հարազատներին հաղորդելու համար: Երբ բացեցի կողքի ընկած դիակի դեմքը՝ Գդլյան Հարութն էր: Մարմինս ցնցվեց, աչքերս մթագնեցին, ծնկներս թուլացան: Սարսափից ուշաթափվեցի, ուշքի գալով՝ դիակի դեմքը սպիրտով մաքրեցի, համբուրեցի ճակատը,

Ձախից երկրորդը՝ Սեյրան Գրիգորյան՝ Ռեմբոն մարտական ընկերներով. Մարտակերտ, 1993 թ

շնորհավորեցի ծնունդը, ժամացույցը կապեցի թևին: Հուղարկավորության ժամանակ հետը գերեզման տարավ:

Երբ 1991թ. գտնվում էինք Ծամշադինի պաշտպանական մարտերում, Ջուլհակյան Անդրանիկը, Ցանգարյան Մուրադը, Մանուկյան Ծողինարը, Վալյան դիրքավորված հետևում էին թշնամու մարտական գործողություններին: Ասյան հաջողացնում է թուրքի հետ սեր խաղալ: Խաբելով՝ թուրքին գերի վերցրին: Հետո նրան փոխանակեցին հինգ հայի հետ, որոնց թվում էին Ծամշադինի Արմենն ու Գագոն: 1992թ. Մարտակերտի մարտերում ավանցի Կարինեն, արարատցի Աննան չկարողացան համոզել Սուսանին, որ հետ կանգնի մարտից: Սուսանը մեծացել էր մանկատանը: Նա ձեռքի նռնակով պայթեցրեց իրեն՝ ոչնչացնելով 10 թուրքի: Մինչև օրս Ասյան, որպես մասունք, պահում է Սուսանի բզկտված բեկորներից արնաշաղախ գլխաշորը:

Մարտի թեժ պահին թփի միջից խռխռոցի ձայն լսվեց: Մոտեցանք, 21 տարեկան մի թուրք վիրավոր ընկած էր, գերի վերցրինք: Պարանոցից ժետոն էր կախված, վրան գրված էր անուն ազգանունը, հասցեն, գրպանում թմրադեղ կար: Բացատրեց, որ իրենց ստիպողաբար են բերել ռազմաճակատ: Այնտեղ էր Ցվետանա Պասկալևան, նկարահանում էր:

Ձախից երրորդը գնդապետ Գևորգ Բաղդասարյանը և Ասյա Բարխուդարյանը. Վահան գյուղի զոհվածների հուշաքարի մոտ, 2007 թ.:

Սերգեյ Գալստյան, Ցվետանա Պասկալևա

«Ադանա» ջոկատի ազատամարտիկները, 1989 թ. Կենտրոնում նստած Հարությունյան Պողոս:

ՀԱԲ-ի «Դարս» ջոկատը: Գլխավոր հրամանատար-հիմնադիր փ.գ. Ռազմիկ Վասիլյան

Առաջին զինշքերթը, 1996 թ.

ՇԱՄՇԱԴԻՆԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Շամշադինի՝ Տավուշի ինքնապաշտպանության համար այնտեղ էին մեկնել տարբեր ջոկատներ: Տեղի ուժերի հրամանատարներն էին՝ «Ադանա» ջոկատինը՝ Անդրանիկ Ջուլհակյանը, Բերդինը՝ Մուշեղ Ասրյանը, նրա մահից հետո՝ Հրաչ Աթոյանը՝ «Չարլի»:

Երևանի ու Շամշադինի միջև քաղաքական կապը պահպանում էին Սերգեյ Գալստյանը, Արամ Մալյանը: Չարենցավանի Ղարաբաղ կոմիտեի նախագահ Մարտին Բաղդասարյանի, «Հրայր Դժոխք» ջոկատի հրամանատար Ալբերտ Մուսինյանի հետ Բերդում նրանք կազմակերպում էին միտինգներ, ազգաբնակչությանը հաղորդակից դարձնում դարաբաղյան շարժման ծրագրերին ու նպատակներին:

Զենքի ու զինամթերքի հայթայթման գործում մեծ դեր ունեին կարկառուն դեմքեր Սեյրան Արծրունու Չիլինգարյանը, Սերգեյ Գալստյանը, Յուրի Խաչատրյանը, Սպարտակ Հարությունյանը, փոխգնդապետ՝ Աշոտ Ցոլակի Չիլինգարյանը, որոնց գործունեությանը կանդրադառնանք հետագայում:

Տեղեկատվության և բաշխման ղեկավարությունը կատարում էր Տավուշի ներքին գործերի միլիցիայի պետ Արշակ Բագրատի Վարդանյանը՝ իր աշխատակազմով:

Շամշադինը, մոտ 40 հազար բնակչությամբ, շուրջ 350 մ սահմանագիծ ուներ Ադրբեջանի հետ. Ղազախի՝ 75, Թովուզի՝ 80, Գետաբեկի՝ 65 հազարանոց թուրք ազգաբնակչության հետ:

Տատանվելու ժամանակ չկար: Բոլորս լծվեցինք Շամշադինի ինքնապաշտպանության ծրագրի մշակմանն ու իրականացմանը:

Ընդհատակյա կարևոր աշխատանքներում ընդգրկված գործունեության պատասխանատու տղաների անուններն այդ ժամանակ ի հայտ չէին գալիս:

Իրենց հոգու խորքում չմոռանալով 1915 թ. մայիսի 14-ի օսմանյան կայսրությունում ընդունված փաստաթուղթը հայերի տեղահանության և ցեղասպանության մասին՝ տղաները մարտի էին մտնում վրեժի ցասման հրով բորբոքված:

Այդ տղաներից էր գործարար, Ռուսաստանից բենզին ներմուծող Ծամշադինի հարուստներից մեկը՝ Սեյրան Արծրունի Չիլինգարյանը: Նա ամուսնացած էր գյուղի նախագահի աղջկա՝ Կարինեի հետ, ուներ երկու երեխա:



Սոս Չիլինգարյան

Անդրանիկ Ջուլհակյանը, Սեյրան Չիլինգարյանը մարտական ընկերներով, 1990 թ.

Ինքնապաշտպանությունը հուսալի և ամուր դարձնելու համար Ծամշադինի Բերդի ավանային սովետի Անդրանիկ Մեսրոպյանը զենք ու զինամթերք հայթայթելու համար կազմակերպեց դրամահավաք: Գումարը կազմեց 84.000 ռուբլի, որը չէր բավարարում զենք ու զինամթերքի գնման համար: Տեղյակ պահեցին Սեյրան Չիլինգարյանին, նա ավելացրեց կրկնակին՝ 16.000 ռուբլի: Գնեցին զենք ու տեղափոխեցին Ծամշադին:

ՀԱԲ-ի լուծարման ժամանակ Սեյրան Չիլինգարյանը հանձն էր առել պաշտպանել Ադանա ջոկատի հրամանատար, ՀԱԲ-ի կողմից նշանակված Երևան քաղաքի պարեկ Անդրանիկ Ջուլհակյանի և նրա երկու ընկերների դատավարությունը, որոնք մեղադրվում էին Գեղազնիկ Միքայելյանի՝ («Չաուշ») և Վիտյա Այվազյանի սպանության մեջ:

Սեյրան Չիլինգարյանը՝ մոտիկից ծանաչելով, համոզված էր, որ Անդրանիկն անմեղ է, կապ չունի այդ գործի հետ:

Վանո Սիրադեղյանը և Վազգեն Սարգսյանը՝ լինելով վկա, մեղադրում էին ՀԱԲ-ին իր գործունեության մեջ, որը չէր ենթարկվում 1990թ. օգոստոսին ընտրված ՀՀ Գերագույն խորհրդի որոշումներին, որի նախագահն էր Լևոն Տեր -Պետրոսյանը:

Սեյրան Չիլինգարյանը կազմակերպում և առևանգում է Աբովյանի ռեգիոնալ գլխավոր դատախազ Վասիլյանին և դատարանի նախագահ Գյուլումյանին, տանում Ծամշադին, որ ծանոթացնեն իրավիճակին ու հանրության տրամադրություններին:

Ուսումնասիրելուց հետո իրավապահ մարմինների ղեկավարները բենզատար ավտոմեքենայի խցիկում վերադառնում են Երևան, առանց հետապնդելու իրենց առևանգողներին, կայացնում են արդարացի վճիռ: Վեց ամիս հետո Գերագույն դատավոր Ռազմիկ Թովմասյանի ջանքերով ութ ամիս ընթացող դատական պրոցեսից հետո՝ 1993 թ. Անդրանիկ Ջուլհակյանին, նրա երկու ընկերներին ազատում են դատավարությունից, նշանակում շրջանի պարետի տեղակալ: Բոլոր ծախսերը կատարել է Սեյրան Չիլինգարյանը:

Ծամշադինը նոր կազմավորված ՀՀՊՆ-ից ստացավ 80 հատ թնդանոթային արկեր, որը վերքը բուժելու համար չնչին դեղամիջոց էր:

Սեյրան Չիլինգարյանը (կանգնած) մարտական ընկերների հետ, Բերդ, 1992 թ

Սեյրան Չիլինգարյանը և Սերգեյ Գալստյանը հանձն առան զենքի ու զինամթերքի հայթայթման ահավոր վտանգավոր գործը: Այն նախօրոք ուսումնասիրված և համաձայնեցված էր Մասիվի հանրակացարանի թվով 60 - 70 ուսանողների, հատկապես ակտիվիստ Աշոտ Խառատյանի հետ: Նրանց օգնությամբ կազմակերպվեց անհնարինը՝ Գեղամի ընկեր շամշադինցի Սեյրան Չիլինգարյանը հպարտորեն պատմեց, որ բիզնեսով էր զբաղվում: 17 մեքենայով եկել էին Արմավիր՝ զենք ու զինամթերք բարձելու, ռազմաճակատ տանելու համար, որ չլինի թե անտարբեր են: Հայրենիքին օգնելու պատրաստակամություն:

Արմավիրում տեղակայված ռուսական զորամասից գաղտնի զենք էին գնում և հասցնում տղաներին: Այդ ժամանակ ջիպով մի մարդ եկավ, մորուքով էր, կլոր դեմքով, հաղթանդամ, աշխույժ ու կայտառ: Չէի ճանաչում, հուշեցին, որ Վազգեն Սարգսյանն է, նրան առաջին անգամ էի տեսնում, շատ ուրախացա:



Կարևորը հաղթելը չէ, այլ հաղթանակը պահպանելը:

Արգելեց որևէ աշխատանք կատարել և հայտարարեց, որ 1 ժամ հետո կգա: Եվ իրոք, եկավ: 1500 միավոր զենք առանց դրամի ստացա-ընդունեցի, տեղափոխեցինք ռազմաճակատ: Հայաստանի անկախացման պատճառով արգելված էր առևտուրը: Այդ ժամանակ Միշան և Գնելը, որ նույն մարդն է, դիմակը բացեց և ռուս սպա կապիտանի առաջ՝ ասելով՝ էլ ինձ չեք կարող ձերբակալել, Հայաստանը անկախացել է, իսկ այդ բոլոր ռազմական տեխնիկան, գույքը Հայաստանի սեփականությունն են: Այսպես տղաները ուրախ, զվարթ մեկնեցին Արցախ՝ Մարտակերտ, որտեղ Լեոնիդ Ազգալդյանը 1992թ. սեպտեմբերին հակագրոհով պիտի մասնակցեր Մարտակերտի ազատագրմանը: Տագնապ էր, գյուղի բնակիչներն անհանգիստ էին: Երեխաները վախից կուչ էին եկել: Կանայք ձեռքները կրծքներին խաչած՝ շվարած կանգնել, անհանգիստ նայում էին դրսում վազվզող ազատամարտիկներին: Ռազմական շտաբի բակում Լեոնիդը՝ շրջապատված մոտ 40-50 տարեկան գյուղացիներով, փայտե ձողով գետնի վրա գծագրում էր հարևան գյուղի՝ Չայղշլանում տեղակայված թուրքերի ռազմական ուժերը:

Արմավիրում տեղակայված խորհրդային բանակի զորամասի պահեստից մոտ 5000 ռուսական արտադրության թնդանոթային, տանկային արկեր հանվեցին ու հանձնվեցին ռազմագծին:

Զորամասի տարածքը ականապատված էր և գտնվում էր ֆինանսական գերածախսի մեջ: Ականազերծելու, նորից ականապատելու համար՝ Սեյրանը մեկ ժամի համար վճարում էր ահռելի գումար՝ 30.000 ռուբլի. այն տևում էր 5-6 ժամ: Աշխատանքն ավարտվեց 7-8 շաբաթում, տեղափոխեցին 3500 տարբեր տիպի ռուսական արտադրության արկեր, իսկ շրջանի հավաքած գումարով գնել են 155 հատ արկ:

Սրա մասին խեղաթյուրված ինֆորմացիա էին հաղորդել Վազգեն Սարգսյանին:

Սեյրանը զանգում է Սերգեյին և հաղորդում, որ Վազգեն Սարգսյանը իրենց համարել է բանդա և կարգադրել ձերբակալել. պետք է թաքնվել:

Սերգեյ Գալստյանը ներկայանալով Վազգեն Սարգսյանին՝ բացատրում է եղելությունը և ասում, որ այդ բանդան իրենք են: Վազգեն Սարգսյանը հարցնում է. «Դուք խե՞նթ եք, որտեղի՞ց այդ ահռելի գումարները»: Սերգեյը բացատրում է, որ այդ ծախսերը կատարել է Սեյրան Չիլինգարյանը և սպասում է Օմսկից եկող 20 վագոն բենզինի: Վազգեն Սարգսյանը 2 վագոն բենզինը տրամադրում է ռազմական տեխնիկային, իսկ 18 վագոնը անհետանում է: Մի քանի օր հետո Օմսկից հերթական վագոնների քանակը հասավ Աբովյանի երկաթգծի կայարան, որտեղից զանգեցին ՀՀ ՊՆ Մավրիկ Ավետիսյանին, որ բենզինը պատրաստ է: Սեյրանը երկու վագոնի վրա կավիճով նշեց, որ վաճառքի չի: Մոսոն 3-4 հոգով եկավ, ընդունեցին: Սերգեյը իրավիճակից ելնելով, որ մի վագոն բենզինն իրեն էր պատկանում, ձայն չհանեց: Սերգեյը նվիրվեց Ծամշադինի ինքնապաշտպանության գործին և կրեց ֆինանսական մեծ վնասներ:

Զորամասը ֆինանսական ճգնաժամից դուրս բերելու համար կար գաղտնի մշակված օպերացիա: Խումբ պիտի մտներ զորամաս, նշված զենքերը տեղափոխելու ժամանակ պայթյուն լիներ, որպեսզի դիակներով կարողանային ապացուցել, որ կատարվել է գողություն: Ճակատագրի բերումով այդ պայթյունը տեղի չի ունենում:

Այդ մասին հետագայում պատմում է ռուսական բանակի նույն զորամասում ծառայող սպաներից մեկը՝ չիմանալով, որ այդ խմբի կազմակերպիչի՝ Սեյրան Չիլինգարյանի հետ է խոսում:

Միլիոնավոր փամփուշտներ ու ձեռքի նռնակներ, որ հայթայթվում էին Գյումրիից, Արմավիրից, Ջավախքից, Աբովյանից, Չարենցավանից Միքայել Վարդանյանի օգնությամբ, Հրաչիկ Բաբայանի միջոցով բերվում, պահեստավորվում էին Հաղթանակ (Չորրորդ) գյուղի մանկապարտեզի շենքում՝ Սամվել Պավելի Մարդանյանի ձեռքերով, որը ծնունդով Ծամշադինից էր: Նա պատմում էր, որ Հադրութում իր ջոկատի Վոլոդյան թշնամու քթի տակից հանել է մի դիակ, որ թուրքերի կողմն էր անցել: Նրան խփել էին, զենքը տարել՝ ասելով, թե մեզ զենքն է հարկավոր, ոչ թե դավաճանը: Հայրը դավաճան որդու դիակը չընդունեց: Վոլոդյան ամուսնացավ նրա կնոջ հետ, որ մեկ երեխա ուներ, հետագայում ունեցան ևս երկուսը:

Շրջանը պայթյունավտանգ էր, ամենօրյա ռմբակոծությունից խուճապը մեծանում էր:

Ծամշադինից փախստականների հոսքը կանխելու համար Սեյրանը ձեռնարկեց երեք հարկանի տան կառուցումը: Մարդիկ այդ տեսնելով՝ գոտեպնդվեցին. ազգաբնակչության արտագաղթը դադարեց: Այս հայրենանվեր գործողությունների թիկունքում գործում էր մի հրաշալի ուժ, դա Սեյրան Չիլինգարյանն էր: Չիլինգարյանների նախնիները, նրանց շառավիղները սերում են Վարդան Մամիկոնյանի արմատներից: Սեյրանի հայրական պապը՝ Սոս Չիլինգարյանը, փոխգուբերնատոր էր և յոթ գյուղերի քյոխվա: Ղազախի պրիստավը՝ նրա ծոռը, իրավաբանության գեներալ Արմեն Հրանտի Հարությունյանը, ռազմական դատախազի տեղակալն էր:

Հայաստանը երկու ծայրից կրակի ու բոցերի մեջ էր: Արևմուտքից թուրքերը կոտորում էին հայերին, հյուսիսից բոլշևիկները խռովություն էին կազմակերպում: Հայաստանի անվճռական կառավարությունը անզոր էր դիմակայել: Հույսը ժողովրդի և մյուս արժանի զավակների վրա էր մնացել: Զորավար Սեպուհը զորքով հասավ Ղարաչայ կամուրջ և հրամայեց խռովարարներից մաքրել այդ ձորը: Դրանով քաջարի զորավարն ուզեց կառավարությանը հասկացնել, որ հայկական

Սերգեյ և Յուրա Հայկազի Գալստյան եղբայրները, Ծամշադին, 1992 թ.

բանակը կարող է ամեն ինչի դիմակայել: Մեկ ամիս հետո այդ չարաբաստիկ կամրջի վրա Սեպուհը նորից ստիպված էր ռազմական գործողություն վարելու համար խորհրդակցություն գումարել: Այդ խորհրդակցության ժամանակ լուր բերեց Սոսին, որ 40-45 տարեկան էր, Նավուր գյուղից:

Ծամշադինը բոլշևիկ ուժերի կողմից գրավելուց հետո, առաջին իսկ օրից, չհանդուրժելով այս հայրենադավ արարքը՝ անցնում է 240 լավ զինված երիտասարդների գլուխ, լեռները քաշվում: Սոսիի խմբում լինում է նավուրցի կին կամավոր Թամար Մարտիրոսյանը: Սոսին հետագայում պատմում է այդ կնոջ քաջագործությունների մասին: Նավուրի կռիվների ժամանակ հերոսաբար կռվելով՝ կրծքից ծանր վիրավորվում է և Իջևանի հիվանդանոցում մահանում: Սեպուհի կարգադրությամբ անմիջապես կատարում են հուղարկավորությունը, իսկ որբերի խնամակալությանը, կրթության հոգսերը կառավարությունը վերցնում է իր վրա:

Սեյրանի հայրը՝ Արծրունը, լինելով որսորդ ու նշանառու, Մուշեղ Ասրյանի խնդրանքով, գյուղի որսկանների հետ հերթապահում էին Ներքին Կարմիր և Այգեպար գյուղերի ինքնապաշտպանության մարտական դիրքերում: Իսկ նրա երեք որդիները ճակատագրական պահին տարբեր ուղղություններ-

Հայր և որդի Արսեն և Սերգեյ Գալստյանները, 1993 թ. Եամշադին

րով գտնվում էին իրենց ընկերների մարտական շարքերում:

Արցախի յոթ շրջանների ազատագրման ժամանակ մեկական ցլիկ է մորթվում: 1993թ., Ալիևի գահ նստելու ժամանակ, հայհոյում է նրան և բաժակը ձեռքին մահանում:

Հազվագյուտ երևույթ է, քանզի ով ծնվել է նման հարստության բարձունքում, իջնելու իրավունք չունի: Երևի կան բաներ, որ մեր գիտակցությունից դուրս են: Մարդ կա հանուն հայրենիքի փրկության գումար է ներդնում, մյուսը՝ կյանքը: Քչերն են երկուսը ներդնում:

Իծաքար գյուղը 1992թ. տարեմուտին մարտավարության պատրաստության մեջ էր: Ուներ այնքան որսորդական հրացան, ինչքան հավաքել էին 18 գյուղերից: Նախապատրաստվում էին դիմակայել: Սեյրանենց գոմը բոցերի մեջ այրվում էր, ջուր չկար: Օմսկից բերված բենզինի առուվաճառքից կուտակել էին 48 տոննա գինի, որով էլ հանգցրին հրդեհը: Հետո գնացին պաշտպանական հենակետեր: Մինչ այդ տղաները կարագ ու կիսաեփ միս էին կերել, լուծ ընկել: Սեյրանը Սերգեյի հետ անմիջապես վերադարձան թիկունք՝ ռազմական շտաբ: Այնտեղ էին Վլադիմիր Մովսիսյանը, Հենրիկ Քոչարյանը, Յուրի Խաչատուրովը և այլ տեղական ղեկավար անձինք,

որոնք վարորդին համոզում, աղերսում, նույնիսկ սպառնում էին երկու մորթած ցլիկի մսից պատրաստած կերակուրը հասցնել ռազմագիծ:

Վարորդը համաձայն չէր, վախենում էր՝ պատճառաբանելով թե ձմեռ է, բուք, սառնամանիք, թշնամին ճանապարհը ռմբակոծում է, կրակահերթի տակ է:

Սեյրանը ունենալով բարձր հեղինակություն՝ վարորդին մի հարց տվեց. «Գնալու ե՞ս տուն, երեխադ հարցնի՝ հայրիկ ի՞նչ ես արել մարտադաշտում: Ի՞նչ ես պատասխանելու»:

Այսպես համոզում է վարորդին, նստեցնում կողքին, վտանգավոր ճանապարհով կերակուրը հասցնում են խրամատ:

Հրթիռահրետանային տևական գնդակոծությունների պատճառով ահավոր տուժել էր Մարտակերտի շրջանը, դարձել անտանելի: Ռադիոկապը խափանված էր, հեռախոսակապը՝ անբավարար: Հաղորդակցման հնարավորություն չկար: Պատերազմի հաղթանակին հասնելու կարևորագույն պայմաններից են՝ կապը, հրամանատարը և բժիշկը:

Սնունդը տեղ հասցնելով՝ տեղեկացան, որ ջուր չկա, տղաները ձյուն էին օգտագործել, հազում էին: Թեյի մասին խոսք անգամ չկար: Կենտվասակի կռիվներն էր: Սեյրանն առանց հապաղելու Սերգեյի հետ վերադառնում է, Մաքսիմ Մաղաքյանից պահանջում 6 տարաներ՝ յուրաքանչյուրը 40 լիտր տարողությամբ և ջուրը հասցնում են հենակետ: Հինվորին անհրաժեշտ է ուտելիք, տաք հագուստ, դեղորայք, փոխարինողներ և այլն: Պատերազմի ժամանակ բացահայտվում է մարդը: Նա գործողությունները կատարում էր սրտանց: Հպարտանում էր իր դասընկեր Վիկտոր Պետրոսյանով, որը զոհվեց մարտադաշտում՝ Արցախում:

Քարինտակի տղաների հերոսական սխրագործությունների համար նրանք իրենց կանանց զարդերը, ոսկիները թաշկինակի մեջ փաթաթած՝ բերել էին Ծիրակ հյուրանոց՝ զենք գնելու: Արգելեցինք վաճառել, գումար հատկացրինք, բեռով-բարձով ճանապարհեցինք Արցախ:

Ասում են պտուղը ծառից հեռու չի ընկնում: Սերգեյ Գալստյանի միակ որդին՝ Արսենը, հորից թաքուն գրավոր դիմել էր ՀՀ զինկոմիսարիատ՝ զորակոչվելու:

Արսենը մեկ տարի մասնակցել է ամենօրյա սահմանային

Արթուր Մուրադյան

մարտական գործողություններին՝ Ներքին Կարմիրաղբյուր և Երիհանդ գյուղերի տարածքում:

Թուրքերը գրավել էին հայկական հենակետերը: Այդ օրերին Սասուն Մխիթարյանը հազար հատ ձեռքի նռնակները հեղափոխական հերոս Չարենցավան քաղաքից հասցրեց ռազմագիծ: Սեյրանն իր մտերիմների շրջանում՝ Աշոտ Չիլինգարյանի, Արթուր Մուրադյանի ներկայությամբ, հաճախակի կրկնում էր.

- Հայ կինը պետք է լավ ուսումնասիրի հայոց պատմությունը, եթե ոչ՝ տուժում է:

Այսօրվա գիտությունը մարդկությանը տանում է կործանման: Բարդ գիտություններ են տիեզերագիտությունն ու բժշկագիտությունը՝ քիչ ուսումնասիրված:

Բժիշկ Արթուր Մուշեղի Մուրադյանը Սեյրան և Աշոտ Չիլինգարյանների մանկության ընկերն էր: Մայրը՝ Թամարա Բաղդասարյանը, երկար տարիներ Ծամշադինի հիվանդանոցի գլխավոր բժիշկն էր: 1992թ. Արթուրը մեկնում է Արցախ: Բժշկին հարցրին. «Ինչքա՞ն ժամանակով ես եկել, ի՞նչքան ժամանակ ես մնալու», «Ես եկել եմ անվերադարձ, հայրենիքիս ծառայելու մինչև հաղթանակ. Հիպոկրատի երդմանը հավատարիմ»: Արթուրին պահում են հոսպիտալում աշխատելու: Երիտասարդներին ուղարկում են ռազմագիծ՝ առաջին բուժօգնություն ցույց տալու:

Երեք տարի ապրում է հոսպիտալում հիվանդների հետ, սնվում նույն ճաշերից:

Սեյրան Չիլինգարյանը գնում է Արթուրի մոտ՝ իմանալու վիճակը: Երեք օր մնալով՝ ընտելանում է պայմաններին:

Արթուրը դիմում է հոսպիտալի գլխավոր բժշկին, խնդրում չորս օր արձակուրդ տալ՝ վառելիքի հարցը լուծելու համար: Մերժում է ստանում:

Հաջորդ օրը մի «Կամազ» փայտ բարձած՝ տանում են Արթուրենց տուն: Հարյուրավոր վիրահատություն է կատարել: Ուղղաթիռ չկար, բժիշկ Արթուրը ավտոմեքենայով էր գնում, ճանապարհին վատ էր զգում, իջնում էր, ոտքով քայլում: Վարորդը երբ տեղ էր հասնում, հետ էին ուղարկում, նախատում առանց բժշկի հոսպիտալ մտնելու համար:

Մի առիթով Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԸ գովեստի խոսքեր ասաց բժշկի հասցեին: «Պարոն ՍՊԱՐԱՊԵՏ, Պավել Գրաչովը ձեր ծննդյան օրվա առթիվ ճի՞շտ է, որ ինքնաթիռ է նվիրել»: «Այո՛, բժիշկ, բայց դա Հայաստանին է: Մեզ էլ հայրենասիրությունն է պահում ռազմաճակատում»:

Հողը տնքում էր ցավից, հրադադարի էինք ձգտում: Ազատամարտիկները գրկում էին մահը, խեղդում, թքում չարի, սատանայի վրա: Կրծքով կանգնում էին՝ փակելով ահ ու սարսուռ մահի երախը:

Ծամշադինի տղաների արարքները, նրանց ծառայությունը հայրենիքին չի մոռացվի:

Հիշեցման կարգով ասենք, որ Նոյեմբերյանի, Իջևանի և Ծամշադինի շրջանները հնում մտնում էին Ուտիք գավառի մեջ: 1991թ. Հայաստանի պետականության վերականգնման ժամանակ վերանվանվեց Տավուշի մարզ:

Փոխգնդապետ Աշոտ Ցոլակի Չիլինգարյանը գիշերով հասավ Ծամշադին. նրան էր վստահված կատարել պատասխանատու, վտանգավոր մի գործողություն: Հանգստանալու համար ժամանակ չկար: Տեղեկացրին, որ Սպարտակ Հարությունյանը Գյումրիում իրեն է սպասում: Երկու ՀՄՄ հետևակային մարտական մեքենա կար՝ առանց գնդացրի, յուրաքանչյուրը 1.2 մլն ռուբլի արժողությամբ, սակայն գումար չկար: Աշոտ Չիլինգարյանի գրպանում կար 100.000 ռուբլի, Այգեձորի Վառլամը 1 միլիոն ավելացրեց, երեսը խաչակնքեց, հույսը կապում Աստծո հետ ու մեկնեց Գյումրի: Երկու ընկերներ կարողացան վստահություն ձեռք բերել և 1.100.000-ը որպես կանխավճար տալով, մեքենաները հասցնել Ծամշադին:

Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԸ՝ իմանալով գործարքի մասին, զայրացավ իր բամբ ձայնով, բռունցքը հարվածեց սեղանին, կանչեց իր մոտ: Աշոտ Չիլինգարյանը Ծամշադինի զինկոմ Գառնիկ Փայտյանի հետ ներկայացավ Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻՆ, բացատրություն տվեց: Հավատալով Աշոտի ուժերին, նրա աշ-

Օպերայի միտինգում լսվում է Ծամշադինի ինքնապաշտպանության հարցը1989թ.

խարիեընկալմանը և խոր գիտելիքներին՝ պահանջեց ճշտել, թե Ծամշադինի ինքնապաշտպանության համար հուսալի քանի՞ ազատամարտիկ կարելի է հավաքագրել: Աշոտը կարճ ու կոնկրետ պատասխանեց՝ 400 հոգի: «Յուրաքանչյուր շամշադինցի զենքի է սպասում է, տվեք և պահանջեք»,- ասաց: Դա բավարարում էր Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻՆ: Կանչեց Ալիկ Պետրոսյանին և հրամայեց՝ պահեստային զենքից հատկացնել 450 կալաշնիկով ավտոմատ: Աշոտ Չիլինգարյանը, Ծամշադինի շրջանի զինկոմ Գառնիկ Փայտյանի, ազգային անվտանգության փոխգնդապետ Սաշիկ Թովմասյանի, պարետ Վազգեն Ղավալյանի, Հովիկ Աթոյանի, Վրեժ Ծառոյանի հետ կազմակերպում են 550 հոգանոց գունդ և ստանում մեկ տանկ ևս Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻ կողմից, վրան մակագրած՝ «21-րդ դարը մերն է լինելու»:

Պատերազմի ժամանակ կռվողները հայրենիքի համար անհրաժեշտություն են, պատերազմից հետո դառնում են պրոբլեմ:

«Գերիների նկատմամբ եղել ենք մարդկային: Գերին միջոց է, գերուն ձեռք չեմ տվել, հանձնել եմ ռազմական շտաբ: Երբ թշնամին մեզանից տանում է մեկին, ես նրանից գողանում եմ

կրկնակին: Թուրքերը հայի ականջը կտրելու համար մեծ գումար էին ստանում: Գայթակղվեցին, սկսեցին յուրայինների ականջներից կտրել, ցույց տալ իբրև հայի ականջ: Այն դարձավ առևտուր և բացահայտվեց:

Մեզ շատ անգամ հարց են տվել՝ ո՞վ է հերոսը ձեզանից: Դժվար է ասել: Խրամատում մեկը զոհվում է, վիրավորվում, հաշմանդամ դառնում, մյուսները հետագայում շարունակում են սովորական կյանքը, անարդարության հետևանքով շատերը հայտնվում են անօգնական կարգավիճակում: Նորմալ չէ:

Աշոտ Չիլինգարյանը՝ 3 մլն ռուբլի ծամպրուկի մեջ, ինքնաթիռով մեկնեց Ռուսաստան՝ նոր զենքեր Հայաստան հասցնելու համար: Հաջող վերադառնալուց հետո աշխատակիցների հետ առանձին ճաշում էր: Սեյրան Չիլինգարյանը Աշոտի տեղն իմանալով՝ շտապում է ընկերոջը տեսնել: Գրկախառնվում են, հալուքեֆը իմանում: Սեյրանը՝ բաժակաճառում, սովորության համաձայն, հիշեց իրենց պապերին, որ թթենու այգիներ են ունեցել, սողոցարան, ջրաղաց, աղյուսի գործարան, իրենց քրտինքով մշակել, բարիք են ստեղծել: Ասաց.

Ծամշադինի ինքնապաշտպանության դիրքերում

- Պիտի պահպանվի մեր պապերի արժանապատվությունը: Ամրացնենք Ծամշադինի ինքնապաշտպանությունը, լացացնենք թուրքի մաման:

Հարցրեց Աշոտի հաջող թռիչքի մասին: Ապա ուրախությամբ ավելացրեց.

- Գրիգոր Չիլինգարյանը մի բուռ ոսկով գնել է Աղբյուր Սերոբի կտրած գլուխը, թաղել եկեղեցու բակում:

Հաջորդ օրը Աշոտ Չիլինգարյանի ազատման հրամանը դրվեց սեղանին:

Ընդհատակում մեծ գործ էր կատարում Վարդան Սուրենի Բաբայանը՝ Լոլոն: Լինելով Ջիլավյանի օգնականը, օդով և ցամաքով այդ ծանր օրերին, կյանքը վտանգելով, օգնում էր բեռներ տեղափոխում Հայաստան:

Աշոտ, Սեյրան և Հրաչ Չիլինգարյանները, Մարտին Բաղդասարյանը, Արշակ Վարդանյանը հավաքված՝ վերհիշում էին անցածը: Աշոտ Չիլինգարյանը պատվիրեց գրել Ծամշադինի մասին գիրք՝ հերոսամարտն ամբողջությամբ արտահայտելու

Հարենցավանի մարզիչ Բորիս Մարտիրոսի Նաղդալյան, Կոտայքի Հարենցավանի կարատեի ֆեդերացիայի նախագահն իր սաների հետ

համար: Ասաց, որ Ռուսաստանում 12 շամշադինցի միլիոնատերներ կան, գրքի հրատարակման ֆինանսավորումը կապահովեն: Բոլորը համաձայնեցին:

Հրաչ Չիլինգարյանն առաջինը արձագանքեց՝ հայտնելով իր պատրաստակամությունը: 2006թ. Մոսկվայում 650 աշխարհահռչակ ոսկերչական ֆիրմաների մեջ նրա «Նավուր» ֆիրման առաջին պատվավոր տեղը գրավեց:

Պատմում է Լիպարիտ Բաբայանը իր մարտական ընկերների հետ զրուցելիս.

«1990 թ. մարտի 29-ին ռուս գեներալ Կասալապովի դեսանտն իջավ Այգեպար և Մովսես գյուղերի տարածքում, ձերբակալեց 20 բնակիչների, որոնք զբաղված էին հողագործությամբ՝ կարտոֆիլ էին ցանում և պաշտպանում հարևան Այգեձոր ու Չինար գյուղերի աշխատավոր ժողովրդի անվտանգությունը: Հայերի պաշտպանական հակազդեցությունը թույլ էր:

Չորսով՝ Լիպարիտ Բաբայանը, Սամվել Խաչատրյանը, Արայիկ Ապերյանը և Երվանդը բացատրում էին, որ իրենք

Այսպես ենք ուժեղացնում հայոց բանակը, Սու Արմենի եղբոր որդին՝ Վահեն, 1999թ

СССР
МИНИСТЕРСТВО ВНУТРЕННИХ ДЕЛ
Серия ЕМ
СПРАВКА № 03

Учреждение УВ-44/1 г. Курска
3. 08 1990 г.
Выдана гражданину(ке) Бабаян Липарит Мелкоевич
Дата рождения 1945 г.
уроженцу(ке) с. Айгезур, Шамшадинского р-на, Армянской ССР
национальность армянин
семейное положение женат — н/с Ваг 1976 г. гр. Манвел Г.С.
отношение к военной службе в/обязанный
в том, что он(а) содержался(лась) в местах лишения с 30. 03 1990 г. по 3. 08
откуда освобожден(а) Бейтан Шамшадинского горуда Арм. ССР от 1.8.90 мера пресечения содерж. под стражей изменена на меру пресеч. подписку о невыезде.
Начальник учреждения

Липарит Բաբայանի գերության ազատականը

Լիպարիտ Բաբայան

որսորդներ են, այդ պատճառով են կրում որսորդական հրացաններ և պատահաբար էին հայտնվել այդ կողմերում: Սակայն գեներալն ուշադրություն չդարձրեց նրանց բացատրություններին, առավոտյան ժամը 8-ին բոլորին լցրին ավտոբուսը, տարան Ղազախ, հանձնեցին թուրքերին, բոլորի աչքի առաջ ստացած պարկով փողերն իրար մեջ բաժանեցին ու հեռացան:

10 օր պահեցին Ղազախում՝ ենթարկելով մահու չափ տանջանքների: Բանտային փակ ավտոմեքենայով, որի մեջ չհաղորդակցվող խցեր կային, նրանց տարան Բաքու, որտեղ շարունակվեց անմարդկային սոսկալի տանջանքները: Ղազախում եթե շան լակ էին տալիս, ապա այստեղ՝ Բաքվում, դրան էլ չարժանացան, զուգահեռ՝ ծեծ ու ջարդ էր, ծաղր ու ծանակ, բռնություն ու խոշտանգումներ: Այդպիսի տանջանքներին քչերն էին դիմանում:

Նկարներ էին դնում սեղանին, ցույց տալիս մեր հայկական գյուղերն ու ծանապարհները, լեռներն ու սարերը, գետերն ու անտառները և պահանջում էին, որ թուրքերեն բացականչենք, որ այդ բոլորն իրենցն են, հայերը պիտի հեռանան այդ հողերից: Այսպես շարունակվում էր ամեն օր, ամեն ժամ:

Մի կում ջրի համար ուշագնաց էինք լինում: Պղտոր ջրում վխտում էին որդերը, բայց դա էլ էր փրկություն: Աղաչում էինք Աստծուն, որ գոնե դա լինի:

Մեր աչքի առաջ գերիներից մեկի գլխի կաշին ծակատային մասից դանակով քերթեցին՝ Մասիս սար նկարելով: Կաշին ցուցադրելով սպառնացին, թե բոլորիս էլ նույնն է սպասվում:

Հաճույքի, լիաթոք ծիծաղելու, մեզ ստորացնելու հա-

СССР
МИНИСТЕРСТВО ВНУТРЕННИХ ДЕЛ
Серия ЕМ
СПРАВКА № 031505

Учреждение УВ-44/1 г. Курска
3. 08 1990 г.
Выдана гражданину(ке) Галечян Ерванду Егоровичу
Дата рождения 1948
уроженцу(ке) с. Айгезар, Шамшадинского р-на Армянской ССР
национальность армянин
семейное положение женат — р. бюро ЗАГС с. Делижан 1969 г. гр. Галечян Э.М.
отношение к военной службе в/обязанный
в том, что он(а) содержался(лась) в местах лишения свободы с 30. 03 1990 г. по 3. 08 1990 г.
откуда освобожден(а) Бейтан Шамшадинского горуда Арм. ССР от 1.8.90 мера пресечения содерж. под стражей изменена на меру пресечения подписку о невыезде.
Начальник учреждения

Գալստյան Երվանդի գերության ազատականը

Սարգիս Մեսրոպյան

Բժիշկ Դավիթ Հարությունյան

մար մատներս դնում էին դռան ծեղքի մեջ ու սեղմում: Մեր ուշագնաց ոռնոցներից թուրք խոշտանգողները լիաթոք ծիծաղում էին, հրճվում, գրազ բռնում:

Ֆիլմերում գերիներին տանջելու մեր տեսած կադրերը մեզ համար ավելի ցանկալի էին, գազախցում խեղդվելը, կամ ողջողջ այրվելը փառք էր, երանի էինք տալիս նման մահվան արժանանալու համար:

Ղազախում եղած ժամանակ Արագածի Ավոն գիշերվա ընթացքում կարողացավ եղունգներով հատ-հատ քաշել իր բեղերը, որ առավոտյան հարցաքննության ժամանակ աքցանով չքաշեին: Ասում էին՝ Արցա՞խն եք ուզո՞ւմ, առեք, կերեք և ենթարկում էին մարդկային պատկերացումներից դուրս տանջանքների: Ստիպում էին սովորել թուրքերեն և կրկնել «Ղարաբաղը թուրքերինն է»:

Ապրիլի 12-ին նրանց տարան Ռոստովի Կուրսկի բանտ՝ նույն մեղադրանքով, թե հայ ահաբեկիչները 15 կմ խորացել են Ադրբեջանի սահմանային տարածք՝ ահաբեկչական գործողություններ կատարելու համար:

Խորհրդային կայսրությունը փլուզման մեջ էր: Պյատիգորսկում իմացանք, որ Լիպարիտի հարազատներին լուր էր հասել, թե ինքը մահացել է: Ավտոմեքենայում գերիներ

Հայ գերիներին ազատագրելու բանակցությունների ժամանակ, ձախից երկրորդը Մաթևոս Ծատուրյան

ի ականջին հասավ խոսակցություն, թե ի՞նչ եղավ Լիպարիտը, որտե՞ղ մնաց նրա դիակը: Բայց Լիպարիտը մեքենայում էր, գերիների մեջ, կիսամեռ վիճակում: Ականջին հասած իր մասին խոսակցություններից էլ մի պահ ուշքի եկավ և ենթագիտակցորեն տվեց Երվանդի, Սամվելի, Արայիկի անունները՝ մի կերպ արտասանելով՝ «Կենդանի՜ եմ...»

Ռոստովում բժիշկները «կենդանի դիակներին» չէին ընդունում, դա նրանց համար «չէպէ» էր: Կուրսկի բանտում ընդունեցին և ցույց տվեցին առաջին բուժօգնությունը, կերակրեցին: Նրանց մեջ կենդանության նշույլներ երևացին, շունչները տեղը եկավ, կարողացան խոսել:

Կալանավորներից տեղեկություններ ստացանք, թե ինչպես է հայ ժողովուրդը դիմակայում Ադրբեջանի հարկադրած պատերազմին:

1990 թ. օգոստոսի 30-ին չորս գերիներին ազատեցին՝ իրենց երկրի օրենքներով դատապարտվելու հիմնավորմամբ:

Ազատման փաստաթղթերը ձեռքներիս դուրս եկանք այդ գերեզմանից»:

Ազատության մեջ իմացան, որ Ղազախում գտնվելու ժամանակ Ծամշադինի ազգաբնակչությունը, այդ թվում և Լիպարի-

Պառավաքարի ջոկատի հրամանատար Էլբրուս Բոզոյան

տի կինը՝ Հեղինեն ավտոբուսներով մեկնել են Երևան՝ ՀՀ Գերագույն Խորհրդին ներկայացնելու բողոք, որում ասվում էր, որ ադրբեջանցիները փողով ռուսների միջոցով Հայաստանի սահմանամերձ տարածքներից մարդագողություն են կազմակերպում: Ռուս գնդապետ Կուկուշկինի օգնությամբ Ղազախից ազատեցին բոլոր գերվածներին, բացի չորսից:

Տղաները կազդուրվելուց հետո միացան ազատամարտիկներին և մասնակցեցին Ծամշադինի ինքնապաշտպանական մարտերին: Քանի որ Այգեձորի դեմ ադրբեջանցիները թուրքերի «Գորշ գայլեր» խմբավորման համալրմամբ ուժեղացրել էին հենակետերը և մեծ վնասներ էին հասցնում հայերին, տղաները որոշեցին լռեցնել այդ ահաբեկչական խմբավորման որջը:

1992 թ. ապրիլի 18-ին Այգեձորի տարածքի դիմաց Բերդի 11 հերոս տղաներով երկու օր հետախուզելուց հետո, 25 հոգով ցերեկը ձուլվում էին հողին, գիշերը առաջ շարժվում: 8 կիլոմետր խորացան ադրբեջանական տարածքի մեջ, ամրացան թիկունքում: Սպասում էին գիշերվան: Օպերացիան շատ արագ կատարվեց: Ծատերը՝ քնաթաթախ չհասցրին դիմադրել, քնած էլ մնացին: Հայերն առանց զոհերի ոչնչացրին 23

ՀԱԲ-ի շտաբի պետ Վարդան Վարդանյան:

թուրքի, երկուսին գերի վերցրին, որոնց հետագայում փոխանակեցին 7 հայ գերված կանանց հետ:

1993 թ. ապրիլի 16-ին Ռոբերտ Այվազյանը, Գրիշիկ Մեջլումյանը, Անդրանիկ Ծաղկյանը, (որը վիրավորվում է ձախ թևից) և Ներքին Կարմիր գյուղի Բորիս Մինասյանը (զոհվում է) 25 հոգով կատարում են նույնպիսի մի օպերացիա՝ թշնամու թիկունքում խորանալով 15 կիլոմետր, այնքան, որ լսելի է լինում թշնամու խոսակցությունները: Հինգ հոգով նստած թեյում էին, նրանցից մեկը կանչում է. «Սուրե՛ն, արի չայ խմենք»: Թուրքերը գլխի չընկան, որ հայերն իրենց թիկունքում հարձակման պլաններ են ծրագրում: Ուշադիր ու զգույշ հաշվարկած քայլերով ակամա հայտնվեցին թշնամու թիկունքում: Դրան օգնեց տղաների փորձն ու հմտությունը: Առանց ծկուն մտքի հնարավոր չէր հակառակորդին ծնկի բերել: Պատերազմի ժամանակ կարևորագույն տարերից մեկը հետախուզությունն է, քանզի նրանից է կախված հետագա հաղթանակներն ու զորքերի տեղաբաշխումը: Երբ հասնում են թշնամու թիկունք, դաժան մարտեր են մղում: Այդպես է պատերազմի կարգը:

Հուշարձանի բացում 600 երեխաների կնքում Մեյրան Չիլինգարյանի նախաձեռնությամբ

Ծամշադինի Բերդ քաղաքում միտինգների ժամանակ Սասուն Մխիթարյանն օգնում էր միտինգների կազմակերպիչ Մարտին Բաղդասարյանին, Բերդի Մուշեղ Ասրյանին, Հրաչ Աթոյանին («Չարլի»), Անդրանիկ Ջուլհակյանին («Ադանայի Անդրանիկ»): Սասունը ծնվել է Ծամշադինի շրջանի (Տավուշի մարզ) սահմանամերձ Արծվաբերդ գյուղում: Երբ 1988-ին սկսվեց Ղարաբաղյան շարժումը, օպերայի Ազատության հրապարակում ընտրյալ հայորդիների հետ երդվեց դառնալ ֆիդայի՝ ու նվիրաբերել կյանքը հայրենիքի պաշտպանությանը:

Բրյուսովի անվան ինստիտուտի ուսանող Սասունը ծանոթ դեմք էր օտարերկրացի լրագրողների համար: Նրանք դիմում էին նրան՝ պատերազմի մասին տեղեկություններ ստանալու:

Ծարժման ժամանակ ճանաչված էր շատերի կողմից:

Պատերազմի տարիներին նրա հիմնական գործը զենք հայթայթելն էր:

Չարենցավանում արտադրվող զենքը նա ուսապարկով հասցնում էր ռազմաճակատ: Մեկնում էր հանրապետության տարբեր շրջաններ, գտնում անհատական զենք արտադրողներին ու նրանց, ովքեր կարող էին զենք հայթայթել:

«Ես ու ընկերներս մեր ուսապարկերով այնքան զենք ենք

փոխադրել, որ այդ ուսապարկերը պետք է թանգարանում ցուցադրել»,- հիշում է Սասունը:

Պաշտոնապես Սասունը հայկական բանակում չի ծառայել (ուստի և պատերազմի մասնակցի թոշակ չի ստանում): Բայց ոչ պաշտոնապես շարժման հետ առնչություն ունեցող ցանկացած մարդ գիտե, որ նա զինակիցների հետ իր ուսերի վրա է կրել պատերազմի բեռը:

Երդման ժամանակ Սասունն ավելացրեց, որ հանուն հայրենիքի լիակատար ազատագրման պատրաստ է հրաժարվել ընտանիքից: Սակայն հիմա, տարիներ անց, ընտանիքը՝ կինն ու չորս երեխան, չեն ընդունում նրան:

Վերջին հինգ տարիներին նրա տունը Երևանի Նոր-Նորքի IV-րդ զանգվածի Տորք-Անգեղ հուշարձանի տարածքում է, անտառի մեջ՝ մի հյուղակ-քոլիկ: Ինձ պատմեց, որ գողացել են շորերը, ցրտից դողում էր, սոված էր: «Ինձ ոչինչ պետք չէ» - ասաց Սասունը:

Նստացույց Ազատության հրապարակում. Կարեն Մելիքբեկյան՝ «Մալականի Կարեն», Կենտրոնում նստած՝ Քնած Մանուշակ՝ Սասուն Մխիթարյան:

Հրաչիկ Աթոյան, Մուշեղ Ասրյան, Նահապետ՝ Ֆեդյա Տոնապետյան, Մյասնիկ Մալխասյան, Ռազմիկ Պետրոսյան, Դավիթ Դավթյանը մարտական ընկերների հետ, 1990թ

Ես հասկացա, որ դա ֆիդայու խոսք է և ոչ թե ծերունու, որ զոհաբերել է տունն ու տեղը, պաշտպանում է հայրենիքը: Այս բոլորը արել է իբրև երդվյալ «ֆիդայի»:

1989թ. Բերդում (Ծամշադին), Մարտին Բաղդասարյանը Մուշեղ Ասրյանի, Հրաչիկ Աթոյանի, Արամ Մալյանի, Սամվել Մկրտումյանի, Դավթյան Դավիթի հետ կազմակերպում էր միտինգներ, օգնում «Ալաշկերտ» ջոկատի հրամանատար Աբել Հարությունյանին, որը շատ համարձակ ու քաջ ֆիդայի էր: Նրա օգնությամբ է Հայաստանում առաջին անգամ խորհրդային պետության պետական «Մուրճ ու մանգաղ» զինանշանով դրոշը Բերդի շրջկենտրոնի շենքի կատարից հանվել ու փոխարինվել եռագույնով:

1990թ. Բերդում Ադրբեջանի կողմից խախտվեցին հայկական սահմանները, եղավ կողոպուտ, որը ստիպեց ժողով հրավիրել: Ստեղծվեց 5 հոգուց բաղկացած պաշտպանական խորհուրդ: Հրաչ Գրիգորի Աթոյանին ընտրեցին 7 հոգուց կազմված ինքնապաշտպանական ջոկատի հրամանատար:

Մարտական ընկերներ Կառան, Մարտինը, Չարլին: Եռաբլուր, 2006 թ:

Չորաթաղի ջոկատի հրամանատար Վարդան Սահակյանը, տեղակալ Մամիկոն Քալանթարյանը, Պառավաքարի ջոկատի հրամանատար Ռուբիկ Հորբեկի Գասպարյանը, 32 տարեկան Վարսենիկ Մելիքբեկյանը, որ խանութում վաճառողուհի էր աշխատում, իր 4 տարեկան Արփինեին թողնելով 70 տարեկան պապի խնամքին, կամավոր մեկնում են պաշտպանական դիրքեր՝ ավտոմատը ձեռքներին՝ պաշտպանելու հայրենիքի սահմանները:

«Օրհնած խաչը պարանոցիցս կախ՝ համբուրել եմ Աստծուս ոտքերը՝ հավատով անվախ մտել մարտադաշտ: Խաչը ինձ պաշտպանել է թշնամու գնդակից: Ցանկացած քրիստոնյա չպիտի վախենա: Չարլին համարձակ էր, խիզախ: Չարլին երբ մեր կողքին էր լինում, հպարտանում էինք, վախ չէինք զգում: Նրա կազմակերպչական ջիղը մեզ ոգևորում էր, ճշգրիտ կողմնորոշվելու հատկություն ուներ: Տեղանքին լավ գիտակ լինելով՝ թաքնվելու, շրջանցելու, խուսանավելու վարպետության շնորհիվ, հասնում էինք հաջողությունների»,- ասում էր Վարսենիկը:

Ցանկացած բանակ ուժեղ է իր հրամանատարով:

Հրավիրված էինք «Հանրապետություն» կուսակցության

«Գաղտնի բանակ» ջոկատի հրամանատար դաշնակ Կարոն քրոջերի հետ մասնակցում է հայկական հարցի ցեղասպանության արդարացի լուծմանը: 2002թ. Թուրքիա:
Իր զավակ Ծիրազը 1988թ դեկտեմբերի 27-ին զոհվեց թուրքերի հրազենից, իսկ երկրորդ որդուն՝ Էմիլին 1993թ հունվարի 5-ին թուրքերը Մարտակերտի կոլտուրայի տան շենքից կախեցին:

համագումարին: ՀՀ կառավարության դահլիճում նստած՝ վերհիշում էինք անցած միտինգները: 1990թ. օգոստոսի 4-ին, նույն դահլիճում Լևոն Տեր-Պետրոսյանը ընտրվեց ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ: Այդ ոգևորությամբ Բերդում միտինգներ կազմակերպեցինք ու ձևավորեցինք ինքնապաշտպանական ջոկատ:

Սասունը՝ «Քնած Մանուշակը» Չարենցավանից առաջինն էր, որ ձեռքի նռնակները հասցնում էր ռազմաճակատ, ասելով, որ յուրաքանչյուր մարդ պիտի ունենա առնվազն երկու նռնակ: Այդ ժամանակ Սասունն ապրում էր Ծիրազի տան բակի «կատելնու»՝ ջեռուցման շենքում: Միշտ կրկնում էր. «Հայ Բակուր թագավորի անունով Բակուրակերտ քաղաքը սովետական կարգերի հաստատման օրերին Աթաթուրքը և Լենինը վերափոխեցին՝ անվանելով Բաքու:

Երկգագաթ Մասիս-քառագագաթ Արագած ծոպանուղի կառուցենք՝ 100 կանգառով: Արա սարից Ծաղկունյաց-Գեղամա

լեռնաշղթայով, Մռավ-Օմար լեռնագագաթներով, Սասնա պարով յարխուշտեն, քոչարին թնդա հայոց աշխարհում:

Այսպես զրուցում էինք, երբ լսեցինք..

- Մենք այս դահլիճը գրավելու ենք,- ասաց Արամ Մանուկյանը: Հովհաննես Իգիթյանը դիտողություն արեց, մասնակիցների ուշադրությունը հրավիրեց դահլիճի ծակատին ամրացված ժամացույցի գողացած սլաքներին:

Իր ելույթում արտասահմանի մամուլից մեջբերումներ արեց, որ Հայաստանի դիվանագիտությունը չունի այն ռեսուրսը, որ կարողանա պարզել, հակահարված տալ սուտ, խեղաթյուրված հաղորդագրություններին, ըստ որոնց Հայաստանը ագրեսոր է, օկուպացրել է ԼՂՀ-ն: Եթե մենք դիվանագիտություն ունենայինք, մեր երեխաներն ապագա կունենային,- ավելացրեց գաղտնի բանակ ջոկատի հրամանատար դաշնակ Կարոն: Համագործակցել եմ Եղնիկներ, ՀՅԴ, Ծուշվա դաշնակ Ժիրո Սեֆիլյանի և այլ ջոկատների հետ, զավակներիցս Ծիրազը զոհվեց 1980թ դեկտեմբերի 27-ին, թշնամու հրազենից, 1993թ հունվարի 5-ին թուրքերը շրջապատեցին բռնեցին մյուս զավակիս՝ Էմիլին, Մարտակերտի կուլտուրայի տան շենքից կախեցին: Այնպես, որ հայրենիքի ուժը ավելի բարձր է, հարկավոր է նոր ուժերով, նոր հավատով, նորեն պայքարել:

Լևոն Տեր-Պետրոսյանն ասել է ժամանակին՝ զինվորը զենքով չպիտի մտնի բարեկամի տարածք: ՀՀԾ-ի առկայությունը բարելավում է ՀՀ Աժ ընտրությունների դաշտը: Արթուրը՝ Ֆանատը եռագույն դրոշն օդում ծածանելով հևհև մոտեցավ մեզ ու բացականչեց.

- Ինչպե՞ս Գևորգ 4-րդը, Սարոյան Սեյրանը՝ մեր ազգի հերոսները, եռագույն դրոշը ծածանեցին Օմարի կատարին, ես էլ այն կծածանեմ բոլոր միտինգներում, որ հայ ժողովուրդը միշտ բռունցքվի, դիվանագիտությունը դրոշի պես ամուր բռնի:

Արթուրը բոլոր ցույցերի դրոշակակիրն էր՝ քաջ ու համարձակ:

Արթուրը՝ Ֆանատ

ՕՄԱՐԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՎԵՐՋԻՆ ՕՊԵՐԱՑԻԱՆ



Օմարի գագաթին. Գևորգ 4-րդն իր զինվորների հետ

Նոր Եդեսիա գյուղի երեք եղբայրներ Գևորգ, Ավետիս, Անդրանիկ Հայրապետյանները ընդգրկվեցին հայոց ազգային-ազատագրական պայքարին: Նրանց հայրը՝ մշեցի Ռաֆիկը, ոգևորում էր որդիներին: Չէր հանդուրժում, երբ գյուղում պարապ-սարապ անգործ երիտասարդ էր տեսնում: Նախատում էր ու հայհոյում, թե ինչու՞ չեն մեկնում ռազմադաշտ այդ վախկոտները:

Մայրը՝ տիկին Ռոզան, դեմ էր երեք որդիների մասնակցությանը մարտական գործողություններին: Չէր հանդգնում ամուսնուն առարկել, արտահայտել իր ցավը: Տիկին Ռոզան որդիների դարդից հիվանդացավ, անկողին ընկավ: Մահից առաջ որդիներին էր ուզում: Լուր հասցրին Գևորգ 4-ին: Ծահումյանից երկու օրվա ընթացքում գյուղ հասավ: Իրիկնամուտ էր, գյուղը թաղվում էր մթության մեջ: Հանկարծ ամեն ինչ խառնվեց իրար, իրարանցում սկսվեց: Ծներն այդ զգալով՝ ձեն-ձենի տված՝ հաչում էին: Ողջ գյուղը ոտքի կանգնեց: Մայրը լսեց որդու ձայնը, ձգվեց պառկած տեղից՝ հաղթահարելով ցավը, նստեց մահճակալին, ձեռքերը պարզեց, գիրկն առավ որդուն, սեղմեց կրծքին: Ձգված մարմնով երկար պահեց, կարոտն առավ, փարատվեց հոգու կարոտը, սիրտը բուժեց, փառաբանեց Աստծուն ու նորից հենվեց բարձին:

«Այ մե՛ր, մինչև ես չգամ ասեմ, որ մեռած եմ, չհավատաս»:

Մի քանի օր հետո եկավ Անդրանիկը՝ «Գնդոն»: Մորը՝ տիկին Ռոզային տեսնելուց հետո պատրաստվեցին վերադառնալ ռազմադաշտ: Մինչ ճանապարհ ընկնելը գնացին քնելու: Երկու եղբայր անուշ քնած էին հայրական օջախում: Ավտոմեքենան պատրաստ էր, օգնականը ձայն տվեց, Գևորգ 4-րդը տեղից վեր թռավ ու բացականչեց.«14-րդ պոստում մարդ չկա»: Գնդոն այդ պահին արթնացավ, ձեռքը տարավ զենքին, կանգնեց ոտքի՝ պատրաստ կատարելու եղբոր հրամանը:

Մայրը լացեց, որ որդիներն իրեն չեն լսում, եղբայրներով խոսքները մեկ են արել: Այդպես գանգատվելով՝ որդիներին ճանապարհեց Ստեփանակերտ: Ուղղաթիռն օդում էր: Կրակ ու բոցերի մեջ երևում էր Ծուշին: Հողին իջնելիս, անմիջապես ընթացքից անցան հակահարձակման՝ Լիսագորի ուղղությամբ:

«Սասունցի Դավիթ» ջոկատի Արամը, Մարատը՝ Երևանի,

Մկրտիչ և Վարազդատ Խալաթյաններ

Հրազդանի և այլ ջոկատների հետ մոտեցան Ծթլան գյուղին: Թուրքերը չկարողանալով դիմակայել հայկական ուժերի ճնշմանը՝ ստիպված դիմեցին փախուստի և թաքնվելով շրջակա սարերի անտառներում՝ ձեռնարկեցին պարտիզանական մարտեր:

Ազատամարտիկները, հաղթահարելով դժվարությունները, մարտերով մտան գյուղ: Գիշերելու համար խրամատը գերադասելով թուրքերի անկողիններից՝ կտոր ծարեցին, որպես սպիտակեղեն անկողին պատրաստեցին:

Խուսափելով թուրքերի փափուկ անկողիններից՝ գիշերեցին իրենց պատրաստած անկողիններում: Գյուղի գամփռ շները իրենց շղթաներին կապած՝ համառորեն հաչում էին: Հայերի տված հացը չէին ուտում, առաջացած խանդի պատճառով շներին գնդակահարում էին:

Մի թուրք թաքնվել էր զուգարանի մեջ: Գյումրեցի կապիտան Ավետն ասաց. «Չկրակե՛ք, ես նրան պիտի կենդանի գերեմ»: Զգուշորեն մոտեցավ զուգարանին: Թուրքն իրեն մոտեցող Ավետին ավտոմատի կրակահերթով գնդակահարեց: Տղաները զայրացան, բոլոր ուղղություններով կրակ բացեցին զուգարանի վրա, այն բոցավառվեց:

1992թ. մայիսի 12-ին Լիսագորն ազատագրելուց հետո հաղթահարեցին Բերդաձորի ազատագրման դժվարությունները և նստեցին կարճ դադարի՝ զենքերը, զինամթերքը, հանդերձանքը վերանորոգելու, կարգի բերելու: Նախապատրաստվեցին Քաշաթաղի գրոհման օպերացիային: Մոտենալով Քաշաթաղի Բերձոր շրջկենտրոնին՝ անսպասելիորեն հանդիպեցին երկու մարտական ընկերները՝ Արայիկ Խանդոյանը («Միայնակ գայլ») և Անդրանիկ Հայրապետյանը («Գնդոն»), որոնք էլ կազմակերպեցին Ստեփանակերտից Բերձոր մտնող

ճանապարհի եզրի սարալանջի անտառի փեշի երկու տների հրկիզումը: Այնտեղից կրակում էին, որը շատ վտանգավոր էր:

Այդ ուղությամբ մարտը ղեկավարում էր Յուրա Հովհաննիսյանը («26-Յուրան»): Թուրքերը փախչում էին: Մի կին թուրքի գնդակից վիրավորվել էր, Ալլահին աղոթելով՝ անիծում էր հայերին: Բեռնատար ավտոմեքենան բարձված էր պահարաններով, որոնց մեջ թուրքեր էին թաքնված, հարմար պահին ավտոմատից կրակահերթ էին բացում հայերի վրա: Փակեցին առաջ ընթացող ավտոմեքենայի ճանապարհը, գերեվարեցին բոլորին և նույն ավտոմեքենաներով տեղափոխեցին Գորիս, հանձնեցին միլիցիայի ներքին գործերի բաժին: Գևորգ 4-րդը մանրամասն ներկայացրեց կատարվածը գրավոր զեկուցմամբ: Մթով վերադարձան Քաշաթաղ: Չաղ Արմենը, Արթիկի Արամը, Մանթաշի Վոլոդյան, Աշտարակի 5-րդ սովխոզի Աշոտը, արթիկցի Ասոն, որը փամփուշտի նկատմամբ անկուշտ էր

Վահան գյուղ, 1992 Մարտունի

Աջից Մանվել Դոլուխանյան (զոհված), Մարտակերտ, Չայլու, 1994թ.

ու շատ անգամ ծոցն էր լցնում, Քաշաթաղի շրջկոմի շենքը շրջապատեցին, մտան ներս: Գևորգ 4-րդը, Գնդոն, Աշոտը բարձրացան ձեղնահարկ ու Ադրբեջանի կանաչ կիսալուսնով դրոշը պոկելով՝ ցած նետեցին:

ՀՀ պատգամավոր Սամվել Եահմուրադյանը բարձրաձայն գոչեց. «Տղանե՛ր, դուք հերոս եք: Այսուհետև իմ աշխատասենյակը իրավունք ունեք կրունկով, կոշիկով բացել, ներս գալ»: Այս բոլորը նկարահանված է:

Ջոկատներն ընդհատումներով գնում էին հանգստի: «Նոր Եդեսիա» ջոկատը մարտից առաջ ու հետո մտնում էր Աշտարակի 5-րդ սովխոզի սրբավայրը՝ աղոթելու: Կալինինոյի Ռուբոն («Ֆրանկը») 110կգ. քաշ ուներ, չմտավ սրբավայր՝ աղոթելու: Ղուբաթլուի, Քաշաթաղի հատվածներում Կոբրա կոչվող բարձունքի համար մղվող մարտերից մեկի ժամանակ ականի արկը ծառի միջով անցավ և 10մ հեռու խրվեց հողի մեջ. պայթյունից զոհվեց մեր անհավատ ընկերը: Արկի բեկորի հար-

Ձախից Սերգեյ Մնացականյան, Ջավախքից: Իր օգնական Պլեժի հետ: Կապան 1993թ.

Սամվել Կարեյան

4-րդ ջոկատ, Օմարի Չապլի գյուղ, 1994թ.

Նախիջևանի քի փջմալի գյուղերի մարտադաշտում խփված թուրքի ՀՄՄ-ի մոտ:

վածից ոտքը կտրվեց կոնքից, աղիքները դուրս թափվեցին որովայնից: Գնդոն ռետինե պարանով կապեց, գրկեց կտրված տեղից, որ տղաները չվախենան, ձեռքը խրվեց լյարդացած արյան մեջ, մարմինը սարսռաց:

Ռուբոյի մոտ էին զինագործ Ռուբոն, Քաչալ Կարոն, Ջավախքի Վռամ Գրիգորյանը: Ասենք, որ զուգահեռ կռվում էին Ջավախքի արծիվները՝ Սամվել Պետրոսյանի հրամանատարությամբ: Առավոտյան արթնանալով՝ անտրամադիր էր Ռուբոն, ասաց. «Վատ երազ եմ տեսել, իմ վերջին հաց ուտելն է»: Կռվի ժամանակ զոհվեց: Հասցրեց միայն Գնդոյին ասել, որ երեխաներին լավ պահեն, ընտանիքն անտեր չթողնեն, խնդրեց օգնել իրեն մի քանի րոպե երկար ապրել: Այդպես ավանդեց հոգին: Պլաշ-պալատկայի վրա դրած, մոտ 100 մետր քարշ տալով՝ հանեցին կրակագծից: Ռոստոմ Գասպարյանի՝ Սև Հովազի տղաները եկան, օգնեցին Գնդոյին:

Թշնամու արկերի տարափից վառվում էին կանաչ ծառերը, անտառը բոցավառվում էր, շրջապատը լուսավորվել էր: Քար-

Գեներալ Մանվել Գրիգորյանը, Միհրան, Արմեն (Ծմայս) Սովսիսյան եղբայրները, Պետրոս Մակեյանը իրենց մարտական ընկերների հետ, Հինգերորդ բրիգադ, Մեծ Շեն, 1994թ:

վաճառ-Օմար ուղղությամբ ընթացող մարտերն իրենց տարերքի մեջ էին: Այդ էր պատճառը, որ 1994թ. կազմավորվեց օպերատիվ խումբ. «Նոր-Եդեսիայի», Գևորգ 4-րդ, Ռոստոմ Գասպարյան («Սև Հովազ»), Կորյուն Ղումաշյան, Սամվել Հովսեփյան («Ադմիրալ Սամվել»), Համո Ծահիբազյան («Դուշման Համո») ջոկատների միավորմամբ: Ընդհանուր հրամանատարն էր Սեյրան Սարոյանը, իսկ մարտական գծով տեղակալը Գևորգ 4-րդը:

Էջմիածնի Զեյվայի ջոկատի Արմենը («Կոբրա»), զինագործ Ռուբոն, Գնդոն՝ մոտ 80 հոգով Սեիդլարից շարժվեցին Լև գյուղի ուղղությամբ: Սակայն թշնամին ամուր էր նստել-դիրքավորվել բարձունքում և հսկում էր շրջապատը: Հարձակման հրաման ստացանք: 1994թ. հունիսի վերջին անցանք հակահարձակման: Լև գյուղի մոտերքում հայտնվեցինք շրջափակման մեջ: Ժայռաքարերին կպած անշարժացանք: Այդտեղ վիրավոր թուրքեր կային, նրանք մեր տեղը հաղորդել էին:

Թշնամին ուժեղ էր Թուրքիայից ստացած զենքերով, հատկապես ականանետով, ռադիոհաղորդող սարքավորումներով:

Հնաբերդի Գարեգին Հուսիկ Հունանյան եղբայրները: Իրենց հորեղբայր Գրիշայի հետ: Վահան գյուղի ուղեկալ 1992թ.:

3 օր գիշերեցինք ձյան վրա, քնապարկերի մեջ և այդպես մնացինք շրջափակման մեջ: Արմենը («Կոբրան») ձորով ծեղքեց օղակն, իջավ դեպի Չոփռլու, որի կազմում էր Արամ Պողոսյանը («Արծիվ»):

Վիրավորվեցին Անդո Մխիթարյանը՝ ծակատից, Հուսիկը՝ ազդրից, երկու հոգի Հնաբերդից, եզդի Ալոն՝ Արմավիրից: Թուրքը յափնջին ուսին գցած, գեներալական գլխարկը գլխին, ժայռի կատարին կանգնած՝ հրամաններ էր տալիս. «Կրակե՛լ, ռմբակոծե՛լ»: Մենք ընկել էինք դժվար կացության մեջ: Այդ մարտերին աչքի ընկան Ջավախքից Լորիկ Դուրգարյանը, Վարազդատ Քեցյանը և Աղան:

Սնունդը վերջացել էր: Մասուրի ծյուղերին շողշողում էին կարմիր ու սև հատապտուղները, ձյան սառնությունից համեղ ու քաղցր էին դարձել: Գնդոն սողեսող հասավ մասուրի քոլին, ծոցը լիքը լցրեց ու վերադարձավ: Տղաները կերան, ուժ հա-

«Փրջամալ» ջոկատը Ասկերանի գնդի կազմում, հրամանատար Ֆելիքս Բեգլարյան, 1992թ.

վաքելով՝ կարողացան վիրավորներին հանել մարտադաշտից, նրանց վերքերը բուժել, ցույց տալ առաջին բուժօգնությունը: Գնդոն ստրեպտոցիդը ավտոմատի կոթով կամ փամփուշտի գնդակի ծայրով մանրացնում էր, դեղափոշին լցնում վերքերի վրա, կտրում արյունահոսությունը և այն խնամքով կապում:

Առաջին գծում մնացել էին 12 հոգի: Սեյրան Սարոյանը հեռախոսակապով հաղորդեց, որ դիմանան թեկուզ կյանքի գնով, մինչև լրացուցիչ ուժերի գալը:

Կգա ժամանակ ռոբոտները կփոխարինեն մեզ, նրանք կլինեն մեր ապագա երեխաները, նրանք կզարգանան, կուսումնասիրեն աշխարհի պատմությունը: Մենք՝ երկիր մոլորակի վրա ապրող մարդիկս, իրար չենք հասկանում, պատերազմում ենք, իրար ոչնչացնում, մարդկային կյանքը դժվարացնում: Ռոբոտները խելացի են, ծրագրված, նրանք երկրագունդը կործանումից փրկելու ելքը կգտնեն:

Էջմիածնի Հայկաշեն գյուղից Միհեր Ցոլակի Սերոբյանը սովորել է Հերացու անվան պետական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետում, այնուհետև կատարելագործվել Սանկտ Պետերբուրգի ռազմական բժշկական ակադեմիայում:

«Նոր Եդեսիա» ջոկատը, աջից երրորդը, կանգնած՝ Անդրանիկ Մխիթարյան, Օմար, 1994 թ.:

Չավարտելով ակադեմիան, նա 1993թ. մեկնում է Քելբաջար, ընդգրկվում Սարոյան Սեյրանի զորամասում, որպես բժիշկ, ավտոմատը ձեռքին մասնակցում մարտական գործողություններին՝ Ղուբաթլու, Վարդենիս, Հոդ, Քելբաջար ուղղությամբ: Ամեն վայրկյան մահն աչքի առաջ ունենալով՝ նա չի ընկրկել մեկ վայրկյան անգամ, թեև նրան էին սպասում հայրը, մայրը, երիտասարդ կինը և ընդամենը մեկ ամսական առաջնեկը:

Դիակին մոտենալը, վիրավորներին վիրահատելը կամ անդամահատելը, երբ նա անզգա է, ահռելի ցավ է: Ոչ ոք չի կարող բուժել այդ ներքին ցավը:

Իր հոգու հավատի շնորհիվ նա կարողանում էր լավատեսորեն նայել, թե ինչպես են բազում քաջորդիներ նահատակվում: Երևի հինավուրց տոհմի, մշեցու արյունն էր նրան այդպես կերտել կամ էլ Սասունցի Դավիթի Թուր-Կեծակիի կայծից էր բոցավառվել հայրենասիրության կրակը նրա սրտում:

Ձախից՝ Սամվել Սարիբեկի Սահակյան, Ահարոն Պողոսյան, Սարիբեկ Սահակյան Վահան գյուղի ուղեկալ, 1992թ.

Գնդոն և Մարիետան, Վահան գյուղ, ուղեկալ 1992 թ.

Տարբեր ազգերի ներկայացուցիչների մեջ մեկին գերազանց ուսման համար պետք է ոսկե մեդալ տրվեր: Ո՞վ էր լինելու այդ երջանիկը: Միերը՝ հրաժարվելով Կանազի հոսպիտալի պետի պատասխանատու պաշտոնից, ընդունվում է Սանկտ Պետերբուրգի ակադեմիա և արժանանում այդ մեդալին:

40 օր ու գիշեր փակվելով իր սենյակում՝ արյուն, կրակ ու բոցի, ականների պայթյունների տակ նա մտածում էր, որ Մշո սուրբ Առաքելոց վանքի գմբեթի Սուրբ Խաչի փոխարեն հիմա կիսալուսինն է շողշողում: Բակում թաղված են Դավիթ Անհաղթի, Մովսես Խորենացու աճյունները:

Նախնյաց վրեժի ցասումով ու համառությամբ, իր ժողովուրդի նկարագրին հարիր աշխատասիրությամբ՝ նա ջանում էր վաստակել ոսկե մեդալակրի տիտղոսը, որը պատիվ պիտի բերեր իրեն ծնող ազգին:

Մռավ լեռան գրավման ժամանակ զոհված հորաքրոջ որդու՝ Գագիկ Կիրակոսյանի մահը բժիշկ ազատամարտիկ Միերի

«Նոր Եդեսիա» ջոկատ, Օմար 1994թ.

Վռամ Գրիգորյան 1992 թ.
Կրասնոսելսկ

Ռոստոմ Գասպարյան՝ Սև Հովազ՝
Գումարտակի հրամանատար:

Ահարոն Պողոսյան,
Վահան գյուղի ուղեկալ, 1992 թ.

Գագո Խալաթյան, Պապ, Ավետիս,
Օմար, 1994 թ.

Կալինինոյի Ռուբո,
զոհվել է 1992 թ.

Վալտեր Հարությունյան

Կարապետ Վարդանյան



Լյովա Ավետիսյան

Չորրորդ, Մուկուչ, Մարիետա

Նորիկ Ավետիսյան

Վարազդատ և Սուրիկ Անդրանիկի խալաթյաններ

Գագիկ Յուրիկի խալաթյան, Նոյեմբերյան, 1990թ

Աջից. Ստյոպա Միրզոյանը, գ.լ. Մուրազ Սարգսյանը, փ.գ. Գրիշա Սարգսյանը մարտական ընկերների հետ

Ձախից երկրորդը՝ Հրաչ Նվերի Եահվերդյանը, Սուրիկ Սարգսյանը, Ռուբիկ Գալստյանը, Հայրո Մարգարյանը մարտական ընկերներով

Նրանք 5 եղբայրներ են՝ Սարգիս, Սուրեն, Սամվել, Մանվել, Արմեն Բենիկի Հովհաննիսյաններ, որոնք տանը լինեն թե դրսում մշտապես օգնում են Հայաստանին
Սամվել և Սարգիս Հովհաննիսյանները աշխարհահռչակ բռնցքամարտիկ Արթուր Աբրահամի հետ

համար ծանր ցավ էր: Վրեժի արյունը նոր ուժով բորբոքվեց Սերոբյանի երակներում: Նրա պապ Աղվան Սերոբյանը 1913-1914թթ. գաղթել էր Արևմտյան Հայաստանից:

Միերը, երբ հասցնում էր հանգստանալ, կիթառ կամ դաշնամուր էր նվագում, որ բուժում էր բոլորի հոգու վերքերը:

- Ջահելներդ շատ եք պարծենկոտ,- խոսքի մեջ մտավ Ֆիրդուսը: Ապա սկսեց պատմել.«1988թ. Գուրգեն Մելքոնյանի Կամազ ավտոմեքենայով, մեծ դժվարությամբ, Էջմիածնից մթերք էինք տանում Ղարաբաղ: Այդ ժամանակ ծանոթացանք Ղարաբաղին: Գնացինք Հադրութ, որտեղ մեզ հետ էր Նազիկը: 1989թ. սրվեց իրավիճակը, Ղարաբաղից եկա օպերա, բարձրացա հարթակ, ասացի. «Էս ի՞նչ եք անում, զենք ու զինամթերք է հարկավոր, ի՞նչ եք սուտի-մուտի խոսում»: Վազգենի հետ վիճում էի, որդիս՝ Սեյրանը լսեց ձայնս ու եկավ. «Այ հեր, ի՞նչ ես խառնվել իրար»: Վազգենի դուրը չէր գալիս, որ վիճում էի հետը: 6-7 կգ վառոդ, շեշմա տվեց, ուղղաթիռով ուղարկեց Հադրութ, այլուրի պարկերի հետ մարտկոցներ տարանք, գողանում էինք անագը, արծիթը, հալում՝ արջի գնդակ էինք ձուլում:

Մեկ հատիկ ծխախոտը տասնհինգ հոգով ենք ծխում: Մի անգամ ուսապարկիս մեջ մի կտոր լավաշ էր մնացել: Մելքոնյան Գուրգենն այն հավասար բաժանեց տղաներին:

Այդպես ենք պայքարել, այդպես կռվել, իրար հարգել ենք, հավատացել հայրենիքին ու մեկս մյուսին: ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը համամարդկային անհատականություն էր, նա կարողանում էր դեմոկրատիա կառուցել:

ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանն իր մոտ է կանչում հորը՝ Զավենին և Ֆիրդուս Սարոյանին և պահանջում 2 միլիոն ԱՄՆ դոլար մուծել պետական բյուջե, որ մյուսները

Միեր Ցոլակի Սերոբյան, բժիշկ

Մեր Ցոլակի Սերոբյանն ընտանիքի հետ

նույնպես հետևեն այդ հայրենանվեր քայլին: Նրանք կատարում են ՍՊԱՐԱՊԵՏԻ հրամանը:

Քարվաճառի ճանապարհն անցնում էր Վարդենիս, Հոդ, Սեյիդլար, Չայլի, Յանշակ գյուղերով, որոնց ստորոտով հոսում էր Սոյուտլուչան, Մայիդանչա, Լեչայ գետակները, որոնք խառնվում են իրար Ղամշլու գյուղում: Այդ գետակները միանում էին Թարթառ գետին, որի վերևից ձգվող լեռնաշղթայի վրա ծվարած Չոփռլու, Բաբաշլար, Լև Բոզլու գյուղերը Սուսուզլու լեռնաշարքով միանում էին 3395մ բարձրություն ունեցող Օմար սարին, որի բարձր գագաթը Գամիշ-Մռավ սարն է 3724մ, որը միանում է Ղարաբաղի Մարտակերտին՝ Տոնաշեն, Չափար, Հադրութ, Ումուդլու, Դրմբո գյուղերին:

Հրադադարից հետո հավաքվել էինք մարտական ընկերներով Գևորգ 4-րդի ձեռքերով կառուցած քարե նոր բնակարանում: Ես էի, Գևորգ Հայրապետյանը («Գևորգ 4-րդ»), Անդո Խաչիկի Մխիթարյանը, ժորա Անդրանիկի Աարգսյանը (գյուղի դպրոցի տնօրենը), Արծրունը, Միերը, Անդրանիկ Հայրապետյանը, («Գնդո»), որոնք հենց մարտադաշտում պարգևատրվել են Հայաստանի սահմանների ինքնապաշտպանության և Արցախի ազատագրման մարտական գործողություններում ցուցաբերած խիզախության, արիության համար:

Այստեղ էր, որ պատմական գիտությունների թեկնածու Արմեն Կարապետյանը՝ Պարույր Սևակի համագյուղացին, հարևանն ու ընկերը, գրող Թերեզա Ասատրյանի հետ հանդես եկան իր պատմական և լրատվական հոդվածներով: Այսօր նույնպես քննարկվում է Ադրբեջանի զավթած և նրան տրված Նախիջևանի, Արծվաշենի, հատկապես ԼՂՀ Շահումյանի շրջանի, Մարտակերտի հյուսիս-արևելյան մասի և հայերի պատմական բնակության այլ շրջանների խնդիրը: Հիմա միջազգայնորեն ճանաչված Արցախ աշխարհի դեմ անեքսիա ներկայացնելով և Հայաստանի վրա ատամներ կրճտացնելով՝ Բաքուն օգտվում է աշխարհի որոշ երկրների հովանավորությունից, որոնք հրահրում են նրան՝ ագրեսիա իրականացնելու ԼՂՀ-ի դեմ:

Հայոց արդարացի պահանջատիրությունն առավել շեշտված պիտի հնչի երկրագնդով մեկ:

ՀՀ ԳԱԱ «Հայոց ցեղասպանության թանգարանի» տնօրեն պատմական գիտությունների դոկտոր Հրանտ Դևրիկյանի

Վազգեն Սպարապետը, Ֆիրդուս Սարոյանը, գ.մ. Ապրիամովը՝ Դաթոն, Օմար, 1997թ.

ջանք ու եռանդի, նրա հայրենանվեր գործերի շնորհիվ, ի մի են բերվել քսաներորդ դարասկզբին հայերի նկատմամբ կատարված ցեղասպանության փաստերը:

Թուրքիան թեև չի ընդունում իր կողմից իրականացված ոճիրը, այնուամենայնիվ, 1918թ. Թուրքիայի խորհրդարանը պահանջեց ստեղծել հատուկ հանձնաժողով՝ պատերազմի հանցագործներին, հայ ժողովրդի ցեղասպանության կազմակերպիչներին պատժելու համար:

Մինչև 1965թ. հայոց մեծ ողբերգությունը լռության էր մատնված ողջ աշխարհում: 1965թ. առաջինը Ուրուգվայի սենատը կատարվածը որակեց որպես ցեղասպանություն: Հետո ընդունեց Կիպրոսի խորհրդարանը, Ուելսի պառլամենտը, շուրջ 23 երկրներ:

Ֆրանսիան 2001թ. օրենսդրությամբ ճանաչելով ցեղասպանությունը՝ մեկ անգամ ևս ապացուցեց, որ աշխարհի ամենաժողովրդական երկրներից մեկն է: 1995թ. ապրիլի 14-ին Ռուսաստանի Պետական դուման՝ ճանաչելով հայոց ցեղասպա-

Վազգեն Սպարապետը և Ֆիրդուս Սարոյանը զորամասում, Էջմիածին, 1997 թ.

Կոմանդոս և Ֆիրդուս, Էջմիածին, 1997 թ.

նությունը, նշեց, թե այդ դժվարին տարիներին հայ ժողովրդի զավակները որքան մեծ վնաս են կրել իրենց հայացքները հատկապես դեպի Ռուսաստան ուղղելու համար:

Կանադայի խորհրդարանը ինչպես նաև Լիբանանի Հանրապետությունը՝ հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձև ընդունեցին: Այս երկրներին հաջորդեցին Արգենտինան, Ծվեյցարիան, Ծվեդիան, Բելգիան, Իտալիան, Հունաստանը, Նիդեռլանդների թագավորությունը, Վատիկանը և այսպես ևս 15 երկրներ: Հսկայածավալ աշխատանքներ են կատարվում Մեծ Բրիտանիայում՝ բարոնուհի Քերոլայն Քոքսի կողմից: Մի քանի անգամ Լորդերի պալատում անդրադարձել են այս խնդրին: Հայրենանվեր գործի համար Քերոլայն Քոքսը պարգևատրվեց «Ազատագրում» ոսկե արծիվ մեդալով «Ազատագրում» ՀԿ կենտրոնական խորհրդի կողմից, որի նախագահն էր Մարտին Բաղդասարյանը:

ԱՄՆ-ի 50 նահանգներից 37-ն արդեն դատապարտել են այդ ոճիրը: Միայն Ռոնալդ Ռեյգանի պաշտոնավարման առաջին տարում օգտագործվեց «ցեղասպանություն» բառը: Ցեղասպանության պատճառով է, որ հայերը սփռվել են աշխարհում: Այսօր աշխարհի 109 երկրներում ապրում է մոտ 15 մլն հայ: Այս բոլորը մեջբերելով Երևանի Մանկավարժական ինստիտուտի դասախոս, ՀԳՄ անդամ Թերեզա Ասատրյանը վաճառել էր բնակարանը, որպես բարեգործ օգնում էր Նոր Եդեսիա գումարտակին, որի հրամանատարն էր իր մորաքրոջ որդին՝ Գևորգ Հայրապետյանը (Գևորգ 4-րդ): Երկուսն էլ Մշեցու թոռ էին: Մի անգամ երկու դուստրերի՝ Տաթևի, Վիկտորիայի ընկերուհու հետ մեկնում էին Քարավաճառ: Ճանապարհը մոլորել էին, բնական պահանջը ստիպեց Նիվա ավտոմեքենան կանգնել: Թերեզան իջավ, կիսավազքով հասավ

բլրի լանջի ծառի բնին կքանստեց: Հանկարծ դեմ դիմաց հայտնվեցին երկու անծանոթ մարդիկ: Թերեզան վեր թռավ, անծանոթները հայերեն ասացին. «Քույրիկ ջան սոված ենք, ուտելու բան չունե՞ս»: «Վայ քոռանամ ես, ազատամարտիկներս սոված են»,- ասաց Թերեզան ու վազեց մեքենան: Արագարագ ձեռքին ընկածը լցրեց տոպրակի մեջ, բերեց:

- Վերցրեք տղաներ, անուշ արեք, սնունդ եմ տանում ռազմածակատ:

Անծանոթները վերցրին տոպրակն ու հեռացան: Թերեզան եկավ Օմար, գլխի եկածը պատմեց ազատամարտիկներին: Տղաներն ասացին՝ զգույշ եղեք, նրանք թուրք հետախույզներ են եղել:

Այս խիզախ կինը՝ Թերեզան, մինչև Ղարաբաղյան շարժումը՝ 1987թ-ին մեկնել է Նովոսիբիրսկ, Տագուլգաղաց՝ անծայրածիր Տայգա, բանտարկված կալանավորիներին օգնելու՝ չիմանալով, որ տարած կարագի մեջ թաքցված էր բանտի

Սերժ Սարգսյանը, գեներալ-մայոր Սեյրան Սարոյանը զորքերի ստուգատեսի ժամանակ, Քարվաճառ

Գեներալ-մայոր Սեյրան Սարոյանը որդու՝ Աշոտիկի հետ

էլեկտրոցանցի գծագիրը, որով պիտի հրդեհեին և կազմակերպեին քաղբանտարկյալների՝ Էջմիածնի Հարութիկ Ռուստամյանի, Ռուբիկ Տոնոյանի, Աշոտ Հախվերդյանի, այդ թվում Անդրանիկ Մարգարյանի փախուստը: Քարավաճառի բնաշխարհով հիացած, Հայաստանի գեղատեսիլ վայրերով հմայված, իրենից անկախ սկսեց երգել Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» երգը: Հիշեց Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻ խոսքերը՝ «Աշխարհի որ ծայրից նայում ես ծփում է Սևանը, ափ վազող կապուտակ ալիքներիս սիրտդ սկսում է ծափ տալ»: Կանգնեցինք ափին, իջա մեքենայից, ծաղիկներ փնջեցի: Ծաղիկը ծյուղով եմ սիրում, չեմ սիրում չորացած ծաղիկները թափել աղբանոց: Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻՆ ուզում էի ծանաչել մոտիկից, շատ էի ուզում ծանոթանալ, մի հոդված պատրաստել: Նա բազմասեր էր, բոլորի մեջ գտնում էր սիրելու բան, մեկի մեջ երգ, մյուսի մեջ՝ աչքեր, հաջորդի մեջ՝ հող մշակողի, քարտաշի, նկարչի: Լիրիկ էր, զուլալ, քնքուշ, բազմազան ուժեղ տղամարդ, ում ես կողմնակից եմ: Վազգենի մեջ զորություն կար, զորեղ սեր, որը տեսնում էի նրա մազերի սանրվածքի մեջ, խոսքի, բառի, որ արտահայտում էր սիրալիր, շատ անգամ կոպիտ, որի մեջ բարեհամբույր վերաբերմունք կար: Նրանից շատերը վախենում էին, զգալով նրա խոսքի ուժի էներգիան: Նա երևույթ էր, տվածուրիկ: Կարող էր զոհեր շատ տալ, իսկ մեկի համար արտասվել: Օմարից վերադառնալու ժամանակ մտորումների մեջ աշխատեց մի փոքրիկ ակնարկ գրի առնել: Այս հոգու արտասուքն էր, որ գնդի որդին 1992թ. օգոստոսի 8-ին Արծվաշենի ինքնապաշտպանության մարտերում 40 զոհվածների հատուկ գնդի ազատամարտիկ Գառնիկ Թորգոմի Գրիգորյանի՝ ՀԱԲ-ի Գառնո, եղբայր

Վազգեն Սպարապետը Օմարում, 1996թ.

Սեյրանը պահանջեց բացել եղբոր դագաղը: Ձախ թևում Աֆղանստանում մարտերի ժամանակ դաջել էր Արև, Գառնիկ, Կարինե անունները: Դիակը զննելուց հետո պարզվեց, որ չկան այդ անունները: Այսպիսով Գառնիկի զոհվելը մնաց անապացույց: Ծշուկներ հասան 13-ամյա Գարիկ Գրիգորյանի ականջին, որ հայրը գտնվում է Ծուշիի բանտում: Գարիկն ընդգրկվում է «Սև գլխաշոր» ջոկատի կազմում, որ մեկնի Ղարաբաղ: Պատանին հոր կորուստի խոր ապրումով չդիմանալով վազեց իրենց հարևանությամբ երկաթգծի կայարանում կանգնած Ուրալ ավտոմեքենայի շուրջը հավաքված ֆիդայիների մոտ, խնդրեց, որ իրեն էլ ընդգրկեն Ղարաբաղ գնացող խմբի մեջ, չուներ անձը հաստատող փաստաթուղթ, թաքցնելով տարիքը, ասաց 20 տարեկան է: Նայեցին 1.7 մ բոյին, հավատացին: Գրանցեցին տվյալները, նստեցրեցին մեքենան և մեկնեցին Ղարաբաղ: Հասան Ծուշի հսկիչ անցագրային կետում ստուգում էին փաստաթղթերը, իրադրությունը խառնելու պատճառով Գարիկը ծխախոտը վառելու համար ասում է՝ արա լուցկի տվեք: Փաստաթղթեր ստուգող Ավագը ասաց. «Այ խոխա, խելոք կաց»: Գարիկը աշխատում էր ուշադրությունը

Գնդի որդին՝ Գարիկ Գրիգորյան, Հատուկ գումարտակի սև գլխաշոր ջոկատի հրամանատար, Խաչիկ Ղազարյանի հետ, ով զոհվել է Քաշաթաղում, 1992թ

Արայիկ Մուրադյան «Սիսիան» ջոկատ

Դավիթ Մուրադյան

Աշոտ Մուրադյան

Արմեն Ֆիդանյան

Հինգերորդ բրիգադի բժիշկ նստած Վահան Գնորգյան, Մեծ Եեն 1994թ:

Արամ Ավագյան՝ Բուդուլ 5-րդ բրիգադ

Աջից երրորդը՝ «Արամ Մանուկյան» ջոկատի հրամանատար Սեյրան Կյուրեղյան, խրամատային ճաշի ժամ, Մարտունի, 1992թ

գրավել իր վրա և պատասխանում է՝ «Արա, խոխեն հերդ ա»: Էլ չի հիշում, ուշքի գալուց հետո հարցրին՝ կարող ա թուրք ես, ես էլ ասացի թուրքը հայրդ է, ուժգին հարվածեցի, քաշ տալով խցկեցին Ուազ ավտոմեքենայի մեջ, որ տանեն Ծուշի, անձս հատատեն: Ուրախությանս չափ ու սահման չկար: Բանտում հարցուփորձ անելուց հետո պարզվեց, որ հայրս այնտեղ չէր: Այդպիսով գնդի որդին տարբեր ջոկատների հատուկ գումարտակ, հատուկ գունդ, ՀԱԲ-ի, Եղնիկների, ՀՅԴ, ջոկատների հետ մարտական գործողությունների մասնակցելով, հորը չի կարողանում գտնել: Քարվաճառի մարտերում վիրավորվում է, ստանում կոնտուզյա, կազդուրվելուց հետո ծառայությունը շարունակում է: Աշուն էր, Լև գյուղում էինք, եղանակը ցուրտ: Թուրքերի տունը մեր զորանոցն էր, տարօրինակ գարշահոտություն էր գալիս, չգիտեինք, որ նկուղում թաղված է տանտիրոջ դիակը: 5-6 անգամ գիշերները իմ հերթափոխության ժամանակ սպիտակ գլխաշորով մի աղջիկ էր հայտնվում: Տեսածս պատմում էի տղաներին, չէին հավատում, ծիծաղում էին, կատակում, իբրև անքուն եմ, երազների մեջ եմ լինում, աչքերիս է երևում: Հերթափոխից առաջ լավ քնեցի, արթնացա, սառը ջրով լվացվեցի,



Կազգեն Սպարապետն ուսումնասիրում է բժիշկների պատրաստվածությունը, Օմար 1996թ

նախօրոք Աշոտին զգուշացնելով՝ գնացի հերթափոխի: Գիշերը ժամը 4-ն էր: Գերեզմանի մեջ դիրքավորվեցի: Երևաց իմ նկարագրած աղջիկը՝ մոտ 20 տարեկան: Հավաքելով ինձ՝ ավտոմատը լիցքավորեցի, ընդունեցի մարտական դիրք, թաքուն մոտացա աղջկան ու թիկունքից ավտոմատը սեղմեցի ուսին ու ձերբակալեցի: Բերեցինք զորանոց, որը իրենց տունն էր, մեզանից առաջ թուրքերը նահանջելու ժամանակ բռնաբարել էին իրեն և հարազատներին: Տան բոլոր անդամներին սպանել էին: Աղջիկը կարողացել էր փախչել դիմացի սարերը, գիշերները գալիս էր, որ համար պահին հոր դիակը տաներ տանից 50մ հեռավորության վրա իր հարազատների գերեզմանների կողքին թաղեր: Այս բոլորի մասին տեղյակ էր նաև Գևորգ 4-րդը, ում մասին գովեստով էին խոսում Գագիկ Իշխանի Սարգսյանը, ով նույնպես «Նոր Եդեսիա» ջոկատի կազմում մասնակցում է մի շարք մարտական գործողությունների, մարտերի ժամանակ ցուցաբերելով դրական հատկանիշներ, աչքի է ընկնում խիզախությամբ: Օմարի ազատագրման ժամանակ թշնամու

Վազգեն Սպարապետ, Օմար, 1996 թ.

արկի պայթյունից վիրավորվում է, նույնպես ստանում կոնտուզիա: Կազդուրվելուց հետո 5-րդ բրիգադի կազմում մասնակցում է Մարտակերտի, Տոնաշենի, Թալիշի գյուղերի ազատագրմանը, իսկ Օհան Աբրահամի Գևորգյանը մարտական գործողությունները սկսել է Գյուլիստանի պարտիզանական կռիվներից: Ծուշիի առաջին գումարտակի կազմում ազատագրել է Սրխավենդ, Ղարաչինար գյուղերը: 5-րդ կամավորական բրիգադայում Երևանի գումարտակի կազմում Հադրութի Էդիլլու գյուղերի պաշտպանության ժամանակ, Ֆիզուլլու, Ղարղաբազար գյուղերի ազատագրման ժամանակ վիրավորվում է և ստանում կոնտուզիա: Դա 1993 թ-ի օգոստոսն էր: Կազդուրվելուց հետո շարունակում է Մաղավուզ, Հակոբ Կամարի, Մադաղիսի, Թալիշի գյուղերի ազատագրմանը: Հրադադարից հետո ծառայությունը շարունակում է ՀՀ ԶՈՒ-ում, որոնց մասին առանձին հատորյակով հանդես կգանք:

Հայոց հողը շատ տառապանք է տեսել, տնքում է ցավից: Հիմա վերքերն է բուժում: Լեռները կենդանանում են՝ վերակառուցված գյուղերով:

Ի՞նչ իմանայինք, որ մի գեղեցիկ օր կհավաքվենք մեր ազա-

տագրված հողի վրա, կենդանություն և շունչ կհաղորդենք մեր սար ու ձորերին, կկառուցենք, կշենացնենք քանդված ու լքված տները: Ղամշլու գյուղի դպրոցում կլսվի հայոց այբուբենը: Գևորգ 4-րդի հետ ընտիր մեղր կքամենք, հող կմշակենք, ձիաբուծությամբ և անասնաբուծությամբ կզբաղվենք»:

Հանաբերդցի քսան տարեկան Անդրանիկ Խաչիկի Մխիթարյանն ընդգրկվեց «Նոր Եդեսիա» գումարտակի կազմում: Կոռնիձորից, Երասխավանից մարտական գործողություններով հասավ Օմարի գագաթ: Նա Գևորգ 4-րդի անբաժանելի մարտական ընկերների՝ ժորա Սարգսյանի, Մարտին Բաղդասարյանի, Արծրունի, Միհերի ներկայությամբ, իր հրամանատար Գևորգ 4-րդի ձեռքով, Օմարի լեռնաշղթայի վրա, պաշտպանական հենակետում պարգևատրվեց «Ազատագրում» ոսկե արծիվ մեդալով: Ուրախությունից հուզվել էր: Բայց շարունակեց պատմել:

1994թ. հունվարին Զոդից Սեյրան Սարոյանից ստացանք հանձնարարություն. հետախուզելով՝ թիկունքից շրջանցել Լև գյուղի հյուսիսային լեռնաշղթան և գրավել գյուղը, այնուհետև Բուզլուխ, Բաբաշլի գյուղերի ուղղությամբ շարունակել հետապնդել թշնամուն և թույլ չտալ նրանց ամրանալ իրենց պաշտպանական դիրքերում:

Չորս հոգով ոտքով մեկ օրում շրջանցեցինք Լև գյուղը: Գևորգ 4-րդի գլխավորությամբ հետախուզեցինք գյուղը, հայտնաբերեցինք, որ տեղակայված է թշնամու մեկ վաշտ: Տեղակայված ուժերի քանակի, զենքի, տեխնիկայի մասին հավաքելով որոշ տեղեկություններ, առավոտյան 35 հոգով անցանք հարձակման: Թուրքերի հետախուզությունը գիտեր, որ հայերն ուժեղ են: Ցուցաբերելով թույլ դիմադրություն՝ նրանք նահանջեցին իրենց ելման դիրքերն ու «ՕՄՕՆ»-ի ստորաբաժանման հետ ամրացան այնտեղ:

Մոտենալով գյուղին՝ հայերը հանդիպեցին մեծ դիմադրության: 3-4 ժամ տևած մարտերից հետո հայկական ուժերն աստիճանաբար հայտնվեցին թշնամու օղակի մեջ: Փորձեցին ճեղքել, սակայն հաջողվեց: Երկու օր անօգնական մնացին շրջափակման մեջ: Զենքերի վերանորոգման կարիք էր զգացվում, վերջանում էր զինամթերքը, սնունդ չկար: Հակառակորդի ճնշումից հայերը հայտնվեցին անելանելի վիճակի մեջ:

Գևորգ 4-րդն, Վազգեն Սպարապետը: Օմար, 1998 թ.

Ավտոմատի պահպանակը դրվեց մենահատի վրա: Խնայելով փամփուշտները՝ կրակում էին անհրաժեշտության դեպքում: Թուրքերը մոտենալով հայերին՝ ձգտում էին կենդանի գերավարել նրանց, հատկապես՝ հրամանատար Գևորգ 4-րդին, որին ճանաչում էին: Գևորգ 4-րդին մոտեցան երկու թուրք, վախից կրակեցին ու ետ փախան, 10 քայլ հեռու թաքնվեցին: Կողքից փախչող թուրքը թաքստոցից կտրուկ շուռ եկավ ու խփեց Գևորգին: Նա գոտուց կախված ինքնաշեն թուրը մեկ ակնթարթում խրեց թուրքի կոկորդի մեջ: Երկրորդ թուրքը քարի տակ թաքնված՝ կրակում էր: Գևորգը թուրքի և դիրքավորված հայերի մեջտեղում էր. դա խանգարում էր կրակել թուրքի վրա: Գևորգը՝ գլորվելով գետնին և իրեն հեռացնելով նշանակետից՝ ավտոմատի կրակահերթով խփեց թուրքին: Գնդակը ականջից մտել, հակառակ կողմից դուրս էր եկել: Գևորգի զրահաբաճկոնը ծանր էր, հանեց ուսերից, վայր գցեց: Այդ պահին վիրավորված թուրքը Մհերի հետ գոտեմարտում էր: Նա էլ չհասցրեց իմանալ, թե ինչպես Մհերի դանակը խրվեց կոկորդի մեջ: Արյան շիթը ցայտեց Մհերի դեմքին, արյան հոտից Մհերի մարմինը սարսռաց, իրեն վատ զգաց: Թշնամու

արկերի հարվածից խոտի դեզերը վառվում էին: Տղաները թշնամու օղակի մեջ էին:

Թուրքերը 82մմ-անոց ականանետից գնդակոծում էին հայկական հենակետերը: Հինամթերքը վերջացել էր: Արևը ծուլորեն նստել էր լեռան կատարին, կարմիր աչքերով հետևում էր մարդակեր արյունահեղ մարտերին:

Գևորգը հրամայեց իջնել դիմացի ձորը, դեպի Չոփռլու:

Անդոն ամուսնացած չէր, պատրաստվում էր ամուսնանալ: Հակառակորդը գրոհում էր: Սակայն շփման ընթացքում Գևորգ 4-րդը փոխեց որոշումը՝ անցնել թշնամու թիկունք: Մենք ռազմական գիտակներ չէինք: Թիկունք անցնելով՝ մեր անվտանգությունը ապահով էր լինում: Ծրջանցելու ժամանակ Անդոն թշնամու արկից վիրավորվեց, տեղափոխեցին հիվանդանոց: Յոթ օր հետո փախավ: Արդեն Էլյասարը գրավված էր: Հաջորդը Չոփռլուն էր, Բաբաշլին, Յանշակը, Չապլին: Չորս օր սոված էինք, ցինկից տուփի մեջ ուզեցինք ջուր եռացնել և խմել:

Գումարտակը Յանշակի դպրոցի բակում շարվեց: Գևորգ 4-րդը իր ոգեկոչ ելույթում պահանջեց, որ Օմարի գագաթը ազատագրելու համար ամուր փորձված ազատամարտիկներ են անհրաժեշտ, հատկապես հետախուզության համար:

Անդոյին շարքից հանեցին: Նոր էր վերադարձել հիվանդանոցից: Առողջությունը կդավաճաներ, Օմարի ցրտաշունչ սառնամանիքին չէր դիմանա: Անդոն համառեց, Գևորգը ապտակեց: Անդոն իր որոշման մեջ կայուն էր, ավտոմատը դրեց ճակատին՝ եթե չտանեն, ինքնասպան կլինի: Գևորգը տեսնելով Անդոյի համառությունը՝ համաձայնվեց, թույլատրեց շարք կանգնել:

Հետախուզական խումբը, ինչպես նկարագրված է «Ազատագրում» երկրորդ գրքում, որ 12 հոգուց էր բաղկացած, տեղեկացավ, որ թշնամու դզոտի երեք լուսամուտներից գործում են երեք դեշեկա տիպի հզոր զենքեր: Տղաներին մնում էր սողեսող մոտենալ դզոտներին: Արևը մայր էր մտել, երկինքը խավար էր, սպիտակ խալաթները հագներին, ձյան վրայով աննկատ սողալով՝ մոտեցան դզոտին: Ցրտաշունչ բուքը շնչահեղձ էր անում: Չորս ձեռքի նռնակ նետեցին լուսամուտից ներս: Դզոտը լռեց: Տղաներն արագ մտան ներս: Հինգ հոգի

էին, չորսը զոհվել էին, մեկը վիրավորված էր, կրակահերթ բացեց իրեն մոտեցողի վրա, չհասցնելով հասնել արդյունքի՝ խոցվեց հայերի արձակած գնդակից:

Տղաները հասան վերջին պաշտպանական հենակետին. գագաթին մնացել էր 100 մ: Ճանապարհի աջ մասում կար երկու տրակտոր ու վրան: Սողեսող մոտեցան վրանին: Թշնամին հասցրել էր ծողոպրել: Տղաները հրաշալի էին կատարում իրենց գործը:

Հայերի հրետանին գրադների կայանից քարուքանդ էր անում թշնամու պաշտպանական դիրքերը: Հակառակորդի խրամատի մեջ քիչ ուժեր էին մնացել: Հինգ թուրք գերեվարեցին: Զգալի քանակությամբ զենք ու զինամթերք ունեցան: Օմարի գագաթ հասան 18 խիզախ, արիասիրտ ազատամարտիկներ՝ ունենալով երեք վիրավոր: Հայրենասիրական ոգին էր, որ նրանց անվախ առաջ էր մղում: Սարոյան Սեյրանը, որ ղեկավարում էր մարտը, կոչ էր անում.«Ով խփվի վախկոտ է ու անհաշվարկ»: Եվ առաջինն էր, որ շնորհավորեց հաղթանակը ու 30 րոպե կատարեց հերթափոխություն: Գևորգ 4-րդը զինվորի և հրամանատարի միջև տարբերություն չէր դնում: Զինվորից են աճում հրամանատարները: Զորքի առջևից ընթացող օրինակելի հրամանատարը միշտ հարգվում է անձնակազմի կողմից: Յուրաքանչյուր ազատամարտիկ մինչև զոհվելը մի երազանք ուներ, Հայաստանը տեսնել ազատ ու անկախ:

Այդպես նվաճվեց Օմարի գագաթը և ամբողջ ռազմագծում Ալեքսանդր Բալբաբյանը կապի միջոցով հայտարարեց ու շնորհավորեց բոլոր ազատամարտիկներին: Տղաներն իջան Յանշակ՝ հանգստանալու:

Տարիներ հետո, երբ այս ռազմի դաշտում գրվածը խմբագրում էի, Անդրանիկ Հայրապետյանի («Գնդո»), Արմեն Կարապետյանի («Պատմաբան»), հետ մասնակցում էինք գրող Հրաչյա Մաթևոսյանի 50-ամյակի: Այն տեղի էր ունենում Երևանի կամերային երաժշտության տանը: Նստեցի Արամ Զավենի Աարգսյանի կողքին: Արամը սև գուլպաներ էր հագել, ծիրանագույն շորեր, որը հարդուկված էին պատշաճ: Սև տուփով «Սիգարոն» ծխախոտը ձեռքին շուռումուռ էր տալիս և ուշադիր լսում Հրաչ Մաթևոսյանին:

Ազատագրում գրքի 3-րդ հատորի լույս տեսնելու կապակցությամբ նկարները ցույց տվեցի, նայեց, թերթեց, երկու աչքերը կկոցելով՝ հավանություն տվեց:

Այդ ժամանակ միկրոֆոնին մոտեցավ Հայաստանում Ուկրաինայի դեսպան Բուշկոն: Նա իր ելույթում ասաց, որ ավելի շատ գիտի Հրաչ Մաթևոսյանին, քան ինքն իրեն: Դինամիկ ազգ է հայ ժողովուրդը, շարժուն են հայերը: Կծնվեն պոետներ, բայց Նարեկացի, Չիրազ, Սևակ չեն ծնվի: Լեզուն տվյալ ազգի համաշխարհային ճանաչման համալսարանն է: Այդ պահին գրպանի բջջային հեռախոսը, զանգեց ուշադրություն չդարձրեց, երկրորդ զանգին հայերեն պատասխանեց՝ զբաղված եմ: Դահլիճում ծափահարությունների ներքո ծիծաղի ալիք բարձրացավ: Անդրեևի եկեղեցու յուղանկարը նվիրեց Հրաչյա Մաթևոսյանին: Ասմունքողը հատվածներ էր կարդում գրքից. «Տնից հենց կտրվում ենք, կորցնում ենք հայրենիքը»:

Գնդոյի հետ գնացինք Քնած Մանուշակի մոտ: Նա ապրում էր Տորք Անգեղի արձանի հարևանությամբ՝ այգու գետնատան մեջ: Հարևանի հետ խոսում էր Դումանյան Գեղամի մասին, որը ծառայելով ՀՀ ԶՈՒ զորամասում, ականի բեկորից ձախ ոտքը կորցրել էր: Ուտիքի գավառի Արծվաբերդ գյուղի Մեհրաբի Սուրուլիկ հողատարածքում թուրքերը ականապատել էին աղբյուրը: Գեղամը ծարավ սիրտը հովացնելու համար մոտեցել էր ջուր խմելու, ականը պայթել էր:

Ցավով էր պատմում Քնած Մանուշակը՝ Սասուն Միքայելյանը, այս պատմությունը: Նա հիշեց, թե ինչպես 1991թ. առաջին անգամ կառավարության և գերագույն խորհրդի շենքերից իջեցվեց խորհրդային դրոշն ու շողշողաց հայոց եռագույն դրոշը: Ի նշան հաղթանակի՝ Սասունի ինքնաշեն ատրճանակից կրակոց լսվեց: Բոլորը զարմացած իրար նայեցին: Լևոն Տեր-Պետրոսյանն ասել էր՝ Սասունի ատրճանակի կրակոցն է: Հետագայում խլեցին ատրճանակը, զրկեցին իր անբաժան զենքից՝ թողնելով միայն ցավատանջ հուշեր:

Անդոն շատ էր հարգում Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԻՆ: Նա պատմում է. «Ապաքինվում էի Վարդենիսի հիվանդանոցում: Եկավ վիրավորներին այցի: Մոտեցավ ինձ, գրպանից հանեց շոկոլադը՝ «Սնիկերս», տվեց ինձ, ասաց՝ դու շատ արյուն ես կորցրել՝ կեր: Վերջին անգամ տեսել էի Սեյիդլարում: Ինձ ճանաչեց, հարցրեց՝ հիմա քեզ լա՞վ ես զգում: Ձգվեցի, ուրախու-

Ռազմիկ Մեղրակյան, 14 տարեկան
Պաշտպանում եմ հայրենիքս

թյունից գոռացի՝ «Ճիշտ այդպես, պարոն ՍՊԱՐԱՊԵՏ: Ես ուշացել եմ պիտի հասնեմ գումարտակիս, նրանք հիմա մարտերի մեջ են»: «Ես ձեր շնորհիվ եմ ՍՊԱՐԱՊԵՏ, վերցրու այս «Մագնա» ծխախոտը, կհասնես, տղաներին կողջունես, կծխեք միասին»:

Արծրուն Եղիազարի Առաքելյանը՝ չորս երեխայի հայրը, մոտ 50 տարեկան է, արմատներով՝ մշեցի: Ապրում էին Մարտունիում: Երբ «Նոր Եդեսիա» գումարտակը կազմավորվեց, ընդգրկվեց նրա կազմում: Մարտական գործողությունները սկսեց Կոռնիձորից, ապա եղավ Երասխավանում, հասավ Արցախ, Օմար: Նոր տուն է կառուցել, հարազատորեն կպել է հողին, ապրում է: Վեց եղբայր են: Բոլորի անունները «Ա» սկզբնատառով է՝ Աբով, Արծրուն, Արտակ, Արագած, Արա, Արտավազդ: Հայ ազգի հավերժության համար են մարտնչում: «Բոլորս միջին խավի մարդիկ ենք: Ունևորներն իրենց հարստությունն են դիզում, իրենց կաշվի մասին մտածում: Մեր սուրբ գործն է՝ ազնվորեն ծառայել հայրենիքին»:

Հուսախաբ չեղանք, խտրականություն չկար, տարբեր ջոկատներ էին, հայրենանվեր գործ էր: Հուսալի թիկունքը մեծ նշանակություն ունի: Հիշեցին Օմարի, Վահան գյուղի ուղեկալի ցրտաշունչ խեղդամահ բուքը, սառնամանիքին անպատրաստ ազատամարտիկների ցրտահարվելը:

Արծրունն ու Միերը թուրքի սառած մարմնից ծտկակոշիկները հանելու համար դիզվառելիքով թրջված լաթի կտորը վառեցին, մոտեցրին ոտքին, տաքացրին, հալեցրին սառույցը:

Ոտքերը ցրտահարվելուց պաշտպանել էր պետք: Երբ մահը շրջապատում է մարդուն, նրա մոտ ստեղծվում է հաշտության դաշտ, թույլը դադարում է դիմադրելուց: Մարդու ուղին պայքարելն է: 1937թ. ծնված Սարիբեկ Ռուբենի Ահակյանը գումարտակի տարեցն էր, չորս երեխայի հայր: Որդին՝ Սամվելը և փեսան՝ գնդացրորդ Ահարոն Պողոսյանը, միասին էին մարտնչում, ու դա պարծանք էր նրանց համար:

18 տարեկան Արտյոմ Հովհաննիսյանն ամուսնացել էր, մարտադաշտում աչքալուսանք տվեցին, որդի էր ունեցել, անունը կնքեցին Գոռ: Նա Գևորգ 4-րդի վարորդի պարտականությունն էր կատարում, հետո վստահեցին հրամանատարի անվտանգության պահպանումը: Արտյոմը Մարտակերտում վիրավորվեց:

18 տարեկան թուրք նորակոչիկ զինվոր Մուստաֆան գերեվարվեց, շփոթվել էր, եկել հայկական դիրքերը: Գևորգ 4-րդը զենքը ետ տվեց և բաց թողեց: Մուստաֆան չէր գնում: Գնաց՝ ուտելիքով, օղիով եկավ: Գնում-գալիս էր: Մազրա գյուղի թուրք փախստականներից էր: Քավորը հայ էր, շատ էր հարգում հայերին: Մի անգամ գնաց, ավագ լեյտենանտ Յուրա Վագիֆի հետ եկավ, որն ասաց, թե լավ է իր ջոկատին ծանապարհ տան, գնա Ռուսաստան, չեն ուզում հայերի դեմ կռվել:

Իրիկնամուտ էր: Ավտոմեքենայի ղեկին նստած Վռամը կանգնեց Նոր Եդեսիա գյուղի ծայրին սրբավայր մատուռի առաջ՝ գումարտակի սովորության համաձայն: Վռամը՝ որդու *հետ, Գևորգ 4-րդը, Մարտին Բաղդասարյանը իջան, երեսները* խաչակնքեցին, մտան սրբավայր, մոմ վառեցին, աղոթեցին՝ Աստծուց օրհնություն խնդրելով, հասան գյուղ: Կապավորը հաղորդեց, որ Ֆելիքսը ավարտել է հուշակոթողի աշխատանքները:

Էստոնացի նկարիչ, գնդացրորդ Ֆելիքսի անսպառ երևակայությունն ու մտահղացումները մեզ խորհել էին տալիս: Մարտադաշտում, թե խաղաղ աշխատանքում նրա նկարները նույն ոճն ունեին, նույն սառնությունը, նույն սև ու գորշ գույները: Գարնան շունչը, ամառվա հասուն մրգերի տաքությունն ու ջերմությունը, աշնանային վառ գույները, բնության ժպիտը չկային: Նկարների մեջ լռություն էր, ռումբի պայթյունից առաջացած սև, մութ ծխից խտացող գորշ ամպեր, որ արցունքակալած երկնքից կախված՝ ծածկում են զոհվածի սառը դեմքը:

1992 թ. ստեղծվեց ՀՀ Ներքին զորքերի Հատուկ գունդը, հրամանատար գնդապետ Գեորգի Գրիգորյան (աջից երկրորդը), տեղակալ Արարատ Գրիգորյան (ձախից երկրորդը), Արմեն Պապյանը վաշտի հրամանատար (աջից առաջին), Սամվել Գրիգորյան մասնակցել են ՀՀ սահմանների ինքնապաշտպանությանը, Արցախի ազատագրմանը

Աջից կանգնածը՝ Հավենը մարտական ընկերների հետ

Արթուր Հարությունյան (ձախից առաջինը) մարտական ընկերների հետ, 5-րդ բրիգադ

Փրկամալի սրբի մոտ, աջից երկրորդը՝ Արթուր Հարությունյան, 1992 թ

Վիրավորի տխուր հառաչանք է՝ մի բուռ ջուր է աղերսում:

Լցվում է հոգիդ. մըտաբերում ես մարտական պահերը, երբ ընկնում է ազատամարտիկը, ծարավից պապանձվում է սիրտդ, չորացած շրջունքներդ խրվում են հողի մեջ, քամում պապերի թափած քրտինքի խոնավությունը: Եվ այդ հողի վրա է ծնունդ առնում կյանքը, որ աշխարհին ու մարդկանց պարտադրում է վեհանալ, ազնվանալ, ինքնամաքրվել, զենքը վայր դնել և հարստանալ՝ աշխատելու, ապրելու ակնկալիքով: Էստոնացի Ֆելիքսի նկարներից մեկում պատերված է պատերազմի դաշտում մաշված, պատառոտված, քրքրված ծտքակոշիկ, որի միջից շողում է վարդաթերթերի փունջը, որ ժպտում է աշխարհին բարի աչքերով՝ նրան խաղաղություն պարգևելով:

Էստոնացի նկարիչ, գնդացրորդ Ֆելիքսը

Հայ ժողովուրդն այսօր անցել է խաղաղ, ստեղծագործ աշխատանքի: Դա է վկայում մշեցու թոռ Մուշեղ Օհանյանը (իրավաբան), որ ձեռնամուխ եղավ կառուցելու «Հարիփոթ» ամրոցը Նոր Նորքի այգում, նմանացնելով այն Սասնա բնաշխարհին: Էստոնացի նկարիչ Ֆելիքսը բերդի պատի վրա մի արձան կառուցեց և ջրաղբյուր՝ վերականգնելով Սասնա աշխարհի, Մշո դաշտի պատմական շունչը, մամռակալած բազալտե քարերի մռունչը, պայքարի մարտական ոգին: Սասնա լեռնոտ երկրամասի տարածքում են Սիմ, Անդոք, Ծովասար, Մարաթուկ լեռնագագաթները:

Հիշեցնենք, որ Սասունի տարածքի մեծ մասն ընկած է Տիգրիսի վտակներից մեկը կազմող Բաթմանա կամ Քաղիրթ գետի վերին հոսանքում, որտեղ անցյալում հայ ժողովուրդն արդարացի պայքար է մղել արաբական բռնակալների դեմ:

Մսրա հարկահանների կողմից Մարութա վանքի կողոպտումն ու ավերումը, Մսրա Մելիքի կողմից Սասունի պաշարումը, Դավիթի դեմ կռվելը և սպանվելու միջադեպը, որ նկարագրված են «Սասունցի Դավիթ» էպոսում հայ ժողովրդի հերոսական պայքարի մարմնացման արտահայտությունն են:

851թ., երբ Յուսուֆ ոստիկանն իր զորքով ձմեռում էր Մուշում, խութեցի Հովնանը հայ իշխանների օժանդակությամբ խութեցիների գլուխն անցած, իջնում է Սասնա լեռներից, անակնկալ հարձակվում Մուշի վրա և կոտորում արաբական զորքը, սպանում Յուսուֆին, ազատում հայ գերիներին ու ավարը թշնամուց ետ խլում: Իսկ XX դարի վերջում նման մի պայքարով ազատագրվեց Արցախ աշխարհն իր յոթ շրջաններով:

Գագիկ Սարգսյան «Բիլլի» ազատամարտիկ, Վայոց Ձորի մարզ

Գրող Թերեզան

ԿՈՄԱՆԴՈՍ ԵՎ ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

3 տարեկան Վահանը՝ Վռամ Գրիգորյանի որդին նռնակը նետում է պապիկի վրա

Լեգենդար Կոմանդոս՝ Արկադի Տեր Թադևոսյան

Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏԸ, լինելով խոշոր ու լուրջ կազմակերպիչ, միաժամանակ նաև խելացի զորավար էր և առանձնակի ուշադրություն էր դարձնում ու կարևորում հատուկ նշանակության վաշտի գործունեությունը:

Կոմանդոսը՝ Արկադի Տեր-Թադևոսյանը, իր մկրտությունը սկսեց 1990թ. «Սասունցի Դավիթ» ջոկատում:

Կոմանդոսը հաճախակի այցելում էր N զորամաս և իր հանգիստն անցկացնում այստեղ. 3-4 ժամ քնում էր, նախօրոք զգոշացնելով՝ չխանգարել, ու բավականություն ստացած՝ գնում: Արամ Գրիգորյանը նույնպես ծնվել էր մարտի 5-ին, Վազգեն Սարգսյանի ծնված օրը, այդ պատճառով ծնունդները

Հունաստանի Զինված ուժերի գլխավոր շտաբի պետին ողջունում է ՊՆ հատուկ նշանակության գնդի հրամանատար Արամ Գրիգորյանը: Առաջին ինքնաթիռը Հունաստանից տվեց Գ.Մ. Լիոնիդասը

շատ անգամ միասին էին նշում. խրամատի մեջ կամ որտեղ լինեին: Նրանց հարաբերությունները շատ լավ էին: Այդ օրերին նշանվեց Արամը: Կոմանդոսը կատակում էր, թե՝ նշանը հետ վերադարձրու:

Երբ հատուկ նշանակության վաշտը հայտնվում էր մարտական գործողությունների մեջ, Վազգեն ՍՊԱՐԱՊԵՏՆ ուրախությամբ բացականչում էր. «Արծիվներիս ուզում եմ տեսնել, նրանց հետ լինել»: Առաջադրանք տալու ժամանակ պահանջում էր կատարել միայն իր հրահանգները:

Արամը պատմում է.«1997թ. Բարսելոնում ուրիշ երկրների պաշտպանության նախարարների ներկայությամբ ինձ շնորհավորեց: Հոլանդիայի, Ալբանիայի, Իտալիայի, Հունաստանի հանրապետությունների բանակների ստորաբաժանումների հետ ուսումնական զորախաղերի մեջ էինք: Հայաստանի հատուկ նշանակության վաշտը ճանաչվեց լավագույնը: ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը Բարսելոնից բարձր տրամադրությամբ եկավ հատուկ նշանակության զորամաս, բոլորիս գոհունակությամբ շնորհավորեց: Հոլանդիայի պաշտպանության

Կենտրոնում՝ Արամ Գրիգորյանը զինակից ընկերների հետ

նախարարը ՍՊԱՐԱՊԵՏԻՆ կատակով ասաց. «Արմունկդ բեր ծալեմ», բայց չմրցեցին: Երկու նախարարներ գրկախառնվեցին և իրար ձեռք սեղմեցին: Ահա՛, որն է կարևորը»:

Արամն ավարտել է Հունաստանի արագացված ռազմական կուրսերը և Մոսկվայի Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան: Նրա վրա խոր տպավորություն էր թողել 1915թ. թուրքերի գազանությունները և այդ մարդակերությունը չպատժելու հետևանքները, որ հասավ Ադոլֆ Հիտլերին և նա ևս շարունակեց այդ գազանությունները հրեաների նկատմամբ: Արամ Գրիգորյանին՝ ծածկանունը՝ Չամիչ, Կոմանդոսը շատ անգամ փոխելով ասում էր Գիշատիչ (Խիշչնիկ): Նախնիները՝ Սալմաստից:

Ազատ ժամանակ երբեմն կինո էինք նայում: «Մի կրակեք դաշնակահարի վրա» կինոնկարն էր: ԱՄՆ-ում շատ բանկիրներ կային, որոնք պետք է համոզեին Ամերիկայի ղեկավարներին, որ պատերազմ հայտարարեն Գերմանիային: Կես միլիոն 60 հազար հրեաներ էին մնացել, բոլորին կոտորում էին: Գերիների զանգվածից հրեաներին առանձնացնելու հրաման եղավ: Հրեաները պիտի շարք կանգնեին, լեհերը՝ ոչ: Բոլորին

«Այունաց բազեներ» ջոկատի Հրաչ Ստեփանյանը Մի-24 ուղղաթիռով

Խաչիկ Ստեփանյանը, Հինգիչ Ապրիամով Դաթոն Վազգեն Սպարապետի հետ զորքերը ստուգելու ժամանակ

տարան կոտորելու: Եթե կանխվեր 1915թ. հայերի ցեղասպանությունը, չէր լինի նաև 1941-1945թթ. հրեաների կոտորածը:

Վահան Մարգարյանը, Կարո բիձան, երկու Սամվելները, Արմավիրի Ռուբոն և մի քանի հայ տղաներ դիակները մեծ տանջանքով հասցրին Երևան՝ իրենց հարազատներին: Հուղարկավորությունը սոսկալի էր:

Կոմանդոսի հրամանով տղաներին օգնության եկան Նորագյուղի, Արաբոյի, Արամոյի, Արմավիրի, Նաիրիի ջոկատները: Ունեին 2 ՀՄՄ և 2 տանկ: Նրանք կարողացան Փափրավենու ուղղությամբ մաքրել թուրքերին և ոչնչացրին կալանավորների այդ բանտն՝ իր փշալարերով:

- Խնձոր ուտելով՝ գալիս էի շտաբ,- պատմում է Արամը,- Կոմանդոսը տանկիստներին նախատում էր արկերն աննպատակ օգտագործելու համար: Մեզ վստահում էր և մեր ներկայացրած տեղեկատվությունները քարտեզագրում, ապա հրամայում՝ ի կատարում: Պարզվում էր, որ թշնամու հենակետերը և դզոտները ճիշտ էինք հայտնաբերել:

ՀՀ ՊՆ-ին կից հատուկ նշանակության վաշտ, հրամատանար Մելժում Մանուչարյան, հետախուզական դասակի հրամանատար՝ Արամ Գրիգորյան
1992 թ. «Սասունցի Դավիթ» ջոկատում Փափրավենի գրավման ժամանակ, Մարտակերտի անկման ընթացքում արկի բեկորից վիրավորվում է 3-րդ սովխոզի ծախից՝ Վարդան Հովսեփյանը աջից կանգնած երկրորդը՝ Սերժիկ

1992 թ. մարտից մայիս ամիսներին ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի հրամանատար Արկադի Տեր-Թադևոսյանը և շտաբի պետ գեներալ Գուրգեն Դալիբալթայանը խիստ գաղտնի պայմաններում մշակեցին Ծուշիի գրավման օպերատիվ պլանը: ԼՂՀ ուժերը կազմված էին չորս հարձակողական խմբերից՝ Հյուսիսային, Արևելյան, Հարավային և Հյուսիս-արևմտյան: Մասնակցել է 80 ջոկատ: Գլխավոր ուղղությունների պատասխանատուներն էին Սեյրան Օհանյանը, Վիտալի Չիթչյանը, Արկադի Կարապետյանը, Աշոտ Ղուլյանը, Դուշման (Վարդան) Վալերի Բալյանը, Նվեր Չախոյանը: Հակառակորդը մարտին մասնակցելուց ուներ 2300 զինվոր, տվեց 300 զոհ, 600 վիրավոր, հայերը՝ 1700, 57 զոհ, 120 վիրավոր:

Որպեսզի քեզ հարգեն, առաջին հերթին դու պիտի հարգանք ցուցաբերես: ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանն այդպիսին էր: 1999թ. մայիսին՝ Ծուշիի հաղթանակի կապակցությամբ՝ Նոր-Նորքի երկրորդ զանգվածում՝ ուսանողական թաղամասում բնակարանների նվիրատվություն էր կատարում: Թիվ 7-րդ շենքի 26 բնակարանի դուռը բացեց, շնորհավորեց Մարտին Բաղդասարյանին, 2 տարեկան Լիլիաննային դրեց ուսին ու դուրս եկավ միջանցք, շենքի մուտքի մոտ ու ասաց. «Մեր թափած արյունն այս երեխաների ապագայի երջանկության, անվտանգության համար է: Արժե ապրել և պայքարել»: Չորս ամիս հետո զոհվեց դավադիր գնդակից:

«Ազատագրում» հայրենասիրական ՀԿ-ի կողմից Կոմանդոսը պարգևատրվում էր «Ոսկե արծիվ» հուշամեդալով: Նա իր ելույթում ասաց.

- Պարգևատրված այս խաչը, որի վրա պատկերված է Ղարաբաղի միացումը Մայր Հայաստանին, ժողովրդի տված մեդալն է, խրամատի մեդալը, որ շատ թանկ է ինձ համար: Այն տրվում է հայ ժողովրդի անու-

Ալբերտ Հովհաննիսյանը զեկուցում է Սպարապետին,

նից: Այս մեդալով կպարծենամ, շնորհակալ եմ: Այստեղ ներկաները իմ մարտական ընկերներն են, նրանց ներկայությամբ եմ արժանանում, ճշմարտությունը դա է:

Այդ խոսքի վրա դահլիճը ծափահարեց: Պահը հուզիչ էր և գեղեցիկ: Նա շարունակեց.

- Հայ ազգն է մասնակցել պատերազմին: Կգա ժամանակը, թացը՝ չորից, թեփը՝ աղունից զանազանելու: Թե ո՞վ ինչ է արել, ժողովուրդը կգնահատի: Մի քանի ուժեր իրար դեմ ելան, եղած-չեղածը իրար մեջ բաժանեցին, տնտեսությունը քայքայվեց: «Ազատագրում» գրքով կարողացանք որոշ բաներ ուղղել, շտկել, պարզաբանում մտցնել: Գրքում կիսատ են մասնակիցների, զոհվածների նկարները, թող լինեն, որ հետագայում երեխաները պարծենան իրենց ծնողներով: Այս բացթողումները երրորդ գրքում պիտի լրացվեին: Փոքրիկ երեխան մեծանալու է ու ասի՝ այս նկարում ես եմ: Հայրս զոհվեց հայրենիքի համար, որ ես ապրեմ անվտանգ»:

Հրաչ Ստեփանյան («Սյունյաց բազեներ» ջոկատ), Հորադիզ, 1993 թ.

Ձախից՝ Արամ Գրիգորյան

Հետախույզ Արմենը, Ապարանցի Ավետը, երկու ոտքից զրկված Գագիկը, Մարտին Բաղդասարյանը, Վարդգեսը ոտնկայս ծափահարում էին իրենց հրամանատարին՝ Կոմանդոսին: Կոմանդոսը միշտ խուսափում էր նման հանդիսավորությունից, հեռու է եղել իրեն մեծարելու արարողություններից: Դա համարում էր ավելորդ, երկրորդական մի բան:

«Զինվոր» թերթի թղթակիցներ Գնել Ծահնազարյանը, Արմեն Ճենտերեջյանը արագ-արագ թղթին էին հանձնում այս բոլորը: Նրանք ինձ հիշեցրին այն ժամանակները, երբ մի քանի տարի առաջ Մեղրիում՝ լուսնյակ գիշերով, Արաքսի ափին Հայաստանի և Պարսկաստանի սահմանագծում, փշալարերի մոտ կանգնած՝ խոսում էինք այն մասին, որ «Ազատագրում» գիրքը գրվել է խրամատի մեջ, ռազմաճակատում, հարձակման կամ պաշտպանության ընթացքում, ավտոմեքենայի մեջ, շատ անգամ՝ սոված ու ծարավ:

Այդ ժամանակ կապավորը մոտեցավ, տեղեկացրեց, որ վերահուղարկավորման համար արտասահմանից բերեցին Դրոյի մասունքներով դագաղը: Գեղամ Հարությունյանի հանձնարարականով ստեղծվեց հուղարկավորության հանձնաժողով:

Դրոյի դագաղը դրվեց Համալիրում: Դագաղից 5 մետր հեռավորության վրա դրված էր հաստափոր գրամատյանը՝ գրառումներ կատարելու համար: Նախօրոք ՀՀ նախագահ(ոչ լեգիտիմ) Ռոբերտ Քոչարյանի աշխատակազմից եկան, մատյանի մեջ գրեցին տեքստը: ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը հանդիսավոր մոտեցավ, նստեց, սև գրիչով ստորագրեց և կամացուկ ականջիս հարցրեց. «Ամսի քանի՞սն է»: Ես ասացի՝ 27.05.2000թ.

«Ազատագրում» գրքի շնորհանդեսն էր ՀՀ Ազգային ակադեմիայի մեծ դահլիճում: Դահլիճում ներկա էին Ղարաբաղյան շարժման մասնակից առաջատար հրամանատարներ, հաշմանդամներ, զոհվածների, հերոսների հարազատներ, բարձրաստիճան սպաներ, գեներալներ, ՀՀ պետականության, բանակաշինության կարկառուն դեմքեր, պետական գործիչներ, թիկունքի, ճակատի մահապարտներ, որոնք այս երկրի՝ Հայաստանի կառուցման սյուներից են եղել: Ելույթ ունեցավ Կոմանդոսը: Նա ասաց. «Ազատագրում» գրքերի երկու հատորները լավ-վատ համարձակորեն վեր են հանել ճշմարիտ

պատմությունը: Խուսափել են գեներալական պարծենկոտությունից, հորինված պատմություններից, ցուցադրական ու շինծու ավելորդություններից, կեղծիքից: Գրքի հեղինակին ու նախաձեռնողների խմբին հայտնում եմ իմ շնորհակալությունը»: Ոտնկայս բուռն ծափահարություններ հնչեցին, երբ ամբիոնից կարդացվեցին ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանի, ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի, Կոմանդոսի անունները: Զգացվում էր, որ գիրքը գնահատվում է: Երեկոյան «Հայլուրը» հաղորդեց, որ «Ազատագրում»-ը ժամանակակից պատմական մեծ արժեք ունեցող գիրք է՝ գրված մասնակցի, ականատեսի աչքերով:

Ճակատագրի կողմից ընտրյալ մարդն իր ամբողջ կյանքի տառապանքներով պետք է հատուցի ուրիշներից բարձր լինելու առավելությունը: Վազգեն Սարգսյանը գիտեր, որ բանակի, ժողովրդի ամենաթանկ նվաճումները ազատության, անկախության, պետության գրավականն են, նրա երաշխիքը: Զո-

Հաղթանակած հրամանատարը՝ Սեյրան Սարոյան, Արամ Պողոսյան, Գևորգ 4-րդ 12 հոգով եռագույն դրոշը ծածանեցին Օմարի կատարին, Օմար 1994 թ.

բահիրամանատար-ՍՊԱՐԱՊԵՏ ինչպես սիրում է կոչել ժողովուրդը, ինքն էր ու միայն ինքը կարող էր լինել: Հրամանատար սյուներից մեկը՝ Կոմանդոսը՝ Վազգեն Սարգսյանի մարտական ընկերը, այսպես արտահայտվեց.

«Կռվի ժամանակ եղել են պահեր, որ չենք հասկացել, անուշադրության ենք մատնել տարվա եղանակները՝ չտարբերելով իրարից: Գարնանը պատրաստվել ձմռանը, հետո՝ հակառակը: Զուգագուլպաներ, տաք բաճկոններ պահեստավորել: Մենք ծիծաղում էինք, իսկ պատերազմի առաջին գծում օդի պես հաց, ջուր, ռազմամթերք էր անհրաժեշտ: Հայ կանայք օգնում էին, ինչով կարող էին: Օրինակ, Ինգան 350 զույգ բրդյա գուլպաներ էր ուղարկել ռազմաճակատ, ծիծաղելի էր: Երբ ձմեռը իր ցրտաշունչ բուք ու բորանով պատեց շրջապատը, հագանք գուլպաները... փրկություն էր:

Վազգեն մարդը բնության կողմից տրված մեծագույն պարգև էր հայ ժողովրդին: Նա իր առջև խնդիր էր դրել փշրել ստրկության շղթաները, բռնակալության քաղաքական ու տնտեսական հիմքերը: Հետևողականորեն շարադրում էր ազգօգուտ ծրագրեր, հետո՝ իրականացնում դրանք:

Վազգենն համարում էր, որ իր կյանքը պատկանում է պատմությանը, որից սնվում էր Հայաստանը: Գիտեր, որ բոլոր նախնական հաշվարկները իրեն չէին հասցնելու երջանիկ ավարտին, բայց միշտ անում էր հնարավոր ամեն ինչ: Կարևոր գործը գրեթե երբեք չի արվում ճիշտ այնպես, ինչպես մարդը մտադրվել է:

Ազատամարտիկները հիմա ծանր վիճակում են, նրանց լքելը դավաճանություն է, նրանք ամենօրյա խնամքի կարիք ունեն, ուշադրության կենտրոնում պիտի լինեն: Հայրենական պատերազմի մասնակիցները նույնպես դժգոհում էին Ռուսաստանից: Հիմա ստանալով թոշակ՝ բարվոք վիճակում են: Այս հարցում մեղավոր են իշխանությունները: Մենք պիտի հնարավոր ամեն ինչ անենք նրանց համար: Առավել ծանր կացության մեջ են հաշմանդամներն ու զոհվածների ընտանիքները: Բոլորիս նպատակը մեկը պիտի լինի. օգնել ազատամարտիկներին, որոնք իրենց կյանքը նվիրաբերեցին հայրենիքին»:

Ավետիք Հայրապետյանը (աջից երկրորդը) որդու՝ Պարույրի, Աշոտի և Զարիկի հետ

Լեզվաբան
ազատամարտիկ

Տիգրան Բալասանյան
ազատամարտիկ

Ռուզաննա Հայրապետյան. կոչ համախմբան

Սիսակ (Սոս) Կիրակոսյան
ազատամարտիկ

«Հրայր Դժոխք» ջոկատի
ազատամարտիկ Ռաֆիկ Բալբաբյան

ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՇԵՄԻՆ

«1992թ. հոկտեմբերի 21-ին,- պատմում է ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանի քաջասիրտ ու հավատարիմ մարտական ընկեր Հմայակ Զոհրաբյանը՝ «Ցլիկ Համոն»,- Քաշաթաղի «Լաչինի» թալանը կանխելու կապակցությամբ գեներալ Անդրեասյանին զգուշացվեց: Արգելված է բոլոր տիպի ռազմական ավարի անօրինական տեղափոխությունները: Գեներալ Անդրեասյանը զեկուցում էր, որ նման անկարգություն չի եղել, հինգ օր է՝ շրջափակման մեջ են: Խստիվ պահպանվում է կանոնադրական կարգապահությունը:

Քաշաթաղից վերադառնալիս ՍՊԱՐԱՊԵՏԸ ուղղություն վերցրեց դեպի Կոռնիձոր, Ջիջիմլի, Գյուլիբերդ: Ճանապարհի անցման կետում մի երեխայի հարցրի՝ այստեղ ի՞նչ ես անում,

ՌԴ վարչապետ Վ.Պուտինն ընդունում է ՀՀ վարչապետ Ա.Սարգսյանին: Ճշմարտություն մի փնտրիր դրածո նախագահները ստում են, նրանց դիմակները կրացվեն ինձանից հետո, Մոսկվա, ապրիլ 2000 թ.:

նա պատասխանեց. «Դուշման Համոյի հրամանն եմ կատարում»:

Խնձորեսկով մոտենում էինք Գյուլիբերդ գյուղին: Ջիջիմլիի գերեզմանոցի մեջիթից կրակում էին և աշխատում խանգարել ՍՊԱՐԱՊԵՏԻ առաջընթացը. Աշոտի հետ փակում էինք, որ գնդակները չխոցեին ՍՊԱՐԱՊԵՏԻՆ»: Խոսակցությանը միացան Գեղամ Հարությունյանը, Սուրեն Աբրահամյանը, Սմբատ Այվազյանը, Նորիկ և Լյովա Եղիազարյանները, Լևոն Սիսակյանը, մշեցի Գալուստ Հայրապետյանը՝ Հայկիչը, Ռաֆիկ Մկրտչյանը, որը Աջափնյակի թաղապետ աշխատելու ժամանակ առաջարկել է ՍՊԱՐԱՊԵՏԻ կիսանդրին տեղադրել Լենինգրադյան փողոցը Ծահումյան փողոցին միացնող հրապարակում:

Վազգեն Սարգսյանի հարևան Հրայրը՝ («Հոպարը»), Գոհարը, Մարինեն կանացի նուրբ բառերով ավելացրին, որ եթե 150 հազար ԱՄՆ-ի դոլար լինի, հնարավոր է հեղափոխություն կատարել, ազատվել անարդարություններից: Հաջորդ օրը

Ձախից՝ Բաղմանյան Հայկազ, Սեյրան Սարոյան, Գագիկ Ջհանգիրյան, Արամ Սարգսյան, Սմբատ Այվազյան, Գեղամ Հարությունյան: Աստվածապարգև մեծ մարդկանց ընկերությունը արևից զրկված չի լինում

Ո՞վ կարող է դիմակայել ժողովրդի հարվածին
Օհան Դուրյան, Մատենադարան 2003թ.

20 տարի անց, հայ ժողովրդի պայքարը իշխանությունը զավթած Սերժ-Քոչարյան բռնակալ ավազակապետության դեմ: Ժողովուրդը ցնծությամբ է դիմավորում Աժ պատգամավոր, քաղբանտարկյալ Խաչիկ Սուքիասյանին: 2009թ. Երևան:

եկան թղթակիցներ Անահիտը, Նաիրան: Արմեն Չավենի Սարգսյանը, պատասխանելով նրանց հարցերին, ասաց.

- Հանրապետություն կուսակցության ծրագիրը հաստատուն է: Հարկավոր է ազատվել ռուսական ներկա իշխանությունների թելադրած ծրագրերի իրականացումից, նրանց դրածոներից: Ես Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի հետ անձնական ոչինչ չունեմ: Նրանք չարի բուրգ են, մենք՝ բարու: Ցեմենտի գործարանի կողպեքը բացել-փակելու մասին չեմ մտածում: Իմ ձեռքից առան՝ խանգարելով սեփականաշնորհումը: Ես ոչնչի ձգտում չունեմ: Իմ նպատակն է՝ օգնել հայ ժողովրդին և պահպանել նրա անվտանգությունն ու բարեկեցիկ ապագան:

Ես ավելացրի, որ իշխանությունները չեն աշխատում են, իսկ մամուլը թույն է թափում իր սեփական ժողովրդի վրա՝ շեղելով նրան իր հիմնական ծրագրից: Ներս մտավ Այդինը մի քանի ընկերների հետ: Չավենիչը կիսում էր Այդինի գաղափարները: Ես մի բաժակ թթի օղի էի խմել, տրամադրությունս

- Դու էլ ինձ պիտի պատիվ առնե՞ս,- ասաց ու ձեռքը մեկնեց Արամին ,1996 թ.
Հետին պլանում ենացող մեքենան այժմ Վազգեն Սարգսյանի տուն-թանգարանում է

ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպան Մարի Յովանովիչը, ժողովրդավարության ջահակիրն աշխարհում, 2009թ.

բարձր էր: Արամ Զավենիչը սև տուփով «Դավիդով» ծխախոտը դրեց սեղանին և դեպի ինձ հրեց: Ես վերցրի ու վառեցի: Նստել էի Գեղամ Հարությունյանի ձախ կողքի բազկաթոռին: Զրույցը շարունակվեց: Խոսում էինք ՀՀ Ազգային ժողովի գալիք ընտրություններին մասնակցելու մասին:

Ես ասացի, որ Հայաստանում ընտրությունները խեղաթյուրված են. ցուցակներում անճշտություններ կան՝ մահացածների անուններ, կեղծում են, վավերացնում նախօրոք գրված իշխանական ծրագիրը: Նրանք անում են ամեն

Սպարապետը ժողովրդի հետ: Մոր սիրտը դրախտ է նա բոլոր գործերի մայրն է ձախից Սովսես Գեղաքույլան՝ «Սոսո», 1999 թ.

ինչ իրենց հովանավորող ու պաշտպանող արտաքին աշխարհին գոհացնելու համար, որ չպաշտոնազրկվեն. տերերի հրամանն են կատարում, թքած ունեն ազգային շահի վրա:

Ընտրությունների լավագույն մարմնացումը կլինի տնտեսապես ու ռազմականապես հզոր, իր պատմական արմատներին և էությանը հավատարիմ Հայաստանը:

Այդ պահին մոտեցավ Հրաչ Աթոյանը՝ Չարլին, ձեռքին «Հայկական ժամանակ» թերթը, որտեղ տպագրված էր Վազգեն Սարգսյանին գրած Վանոյի նամակն ու զայրացած տողերիս հեղինակին հարցրեց.

- Կարդացե՞լ ես Վանոյի նամակը:

Ահա նամակը.

«Վազգե՛ն, վրա հասավ այն պահը, որի մասին գրել եմ գարնանը... Ոռբերտը կամ չգիտեմ՝ ով-ովքեր գտել են Վազգեն Սարգսյանին չեզոքացնելու միակ տարբերակը: Ես վստահեմ՝ այդ պլանը եղել է գարնանից: Նրա կողքը նայիր... Ամիս-

ՀՀ հիմնադիր նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, Արամ Սարգսյանը և Աշոտ Թաղևոսյանը (նախկին 51-րդ քաղբանտարկյալ), 2008թ.

Վանո Սիրադեղյան, Ազատության հրապարակում, 1989թ:

ներ շարունակ Հայաստանի հասարակական-քաղաքական մթնոլորտում ներշնչել են, որ քո գոյությունը «կասեցնում է Հայաստանի զարգացումը»: Ուշադրություն դարձրու ձևակերպման չարագուշակ անմեղությանը...

Նրանք փակուղի են մտել: Ո՛չ դուրս կարող են գնալ, ո՛չ ետ գնալ: Նրանք դատապարտված են Հայաստանում ունենալ բացարձակ իշխանություն, որի համար հարկ կլինի մանրացնել, փոշիացնել, ապա և ամայացնել Հայաստանի քաղաքական դաշտը, ինչպես արեցին Ղարաբաղում: Այս ծանապարհին պիտի դաշնակիցներ փոփոխեն, շարքից հանեն նշանակալի որևէ մեկին...

Ղարաբաղը ամայացնելիս դաշնակից (Քոչարյանը-խմբ.) ուներ Հայաստանը, Հայաստանի դեպքում կգտնեն այլ երկիր: Հայաստանն էլ այլ երկիր էր: Անձանց շարքից հանելուն դաշնակից գտան քեզ, քեզ արանքից կհանեն...

Հայաստանը նրանց ատում է: Այդ ատելության համար (քոչարյանենք-խմբ.) վրեժխնդիր են լինելու երևելի անհատներից: Այնպես որ, միայն քեզանով գործը չի ավարտվելու: Մի

մասին շարքից հանում են, որ իրենց դիմադրում են, մյուս մասին կհանեն, որ դեռ կան, երրորդներին՝ որ կարող են լինել: Դու ուշադիր լսիր կռված ընկերներիդ, նրանք քիչ են մնացել, բայց լավ գիտես դրանց հայատյաց բնույթը...

Քեզ կարող են մի ամսվա ընթացքում փաստի առաջ կանգնեցնել՝ պառլամենտը ցրելով: Տրամաբանական առիթ կգտնեն: Ասենք՝ պառլամենտը չի քվեարկի ինձ պատասխանատվության կանչելու առաջարկին, և քո ըմբոստության փորձը կմատուցեն հանցագործներին պաշտպանելու փորձ: Այստեղ կրվում ես...

Մինչ կմտածես՝ ինչ անել... հեռուստատեսությունն ու մամուլը կդնեն ԱԺՄ-ի, Դաշնակցության, մյուսների տրամադրության տակ: Եվ այդ հիստերիային հաջորդող ընտրական կամպանիան տանուլ է տրված քո և Դեմիրճյանի համար:

Դու հիմա քեզ հաղթած զգալով, զգոնությունդ կկորցնես և կհամաձայնես այլ, մուխանաթ ժամանակավոր տարբերակի...

Հայտ ներկայացնելով՝ վտանգի տակ ես դրել քո զինակիցներին և շրջապատը, քո կործանումը բոլորի կործանումն է,

Ով գիտի վտանգի մասին, լռում է, նա ազգի դավաճան է:
Արարատի «Ոսկե բանալի» հանգստատուն: Դեկտեմբեր 1997 թ.

Հայաստանին տարիներ սպասող տեռորով... Եղած խաղի կանոններով յոթ ամիս դու կրվում ես: Փոխիր խաղի կանոնները: Այսօր դեռ քո ըմբոստությունը չի դիտվում երկրորդ, կդիտվի առաջին՝ ընդվզման եզրափակիչ քայլ:

Արա, քանի դեռ Դեմիրճյանի գլուխը չեն կերել»:

«Ընդհանրապես ինձ համար զարմանալի էր, որ այդքան մահ ու արյուն տեսած, այդքան ծանր բեռ կրած, հոգեկան ծանր պահեր ապրած տղաս ո՞նց էր կարողանում պահել արիությունը, աշխատելու իր պատրաստակամությունը»,- ասում է տիկին Գրետան՝ Վազգեն Սարգսյանի մայրը և ավելացրեց. 2007 թ. ՀՀ քաղաքացիություն ունի 3 միլիոն 228 հազար 300 մարդ: Համաշխարհային գրքում, որը կազմվել է ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության կողմից 2006-ին նշված է 2 միլիոն 976 հազար 372 մարդ, որից 750 հազարը ապրում է Ռուսաստանում, փետրվարի 19-ին Հայաստանում բնակվում է 2 միլիոն 478 հազար: Տնտեսական հզորությունները 44 մարդու ձեռքում է:

Տիեզերական զոհաբերություն. Ամենայն Հայոց Սպարապետի մայրը՝ տիկին Գրետան

ԱՐԱՔՍԻ ԱՓԻՆ

Ալեքսանդր Մակեդոնացին շքախմբով անցնելու ժամանակ նկատում է ճամփեզրին նստած իր ուսուցիչ, մեծ փիլիսոփա Արիստոտելին: Փիլիսոփան ասում է. «Ձիդ մի կողմ քշի՛ր, թող արեգակը մեջքս տաքացնի, քո տված պաշտոնն ինձ հարկավոր չէ»:

Բագարանում գրկախառնվում են Ախուրյանի կապուտակ, զուլալ և Արաքսի կավահող, պղտոր ջրերն ու գնում լցվում են Կասպից ծովը - գրողի ծոցը... Պարույր Սևակը՝ ՍՊԱՐԱՊԵՏԻ սիրելի բանաստեղծը, նույնպես սիրում էր գալ այստեղ: Նստում էր ժայռի կատարին, նայում ջրերին, գետերի այս հախուռն միախառնմանը: Երկա՛ր, շատ երկար էր նայում...

ՍՊԱՐԱՊԵՏԻ մտքում մի հարց էր՝ ի՞նչպես ձևավորել կառավարությունը: «Ի՞նչ գեղեցիկ է վայրի մեղուների ժրաջան, անկաշառ, հավասար աշխատանքը, Տե՛ր Աստված»,- մտածում էր:

Վազգեն Սպարապետը ժողովրդի հետ

1998թ. հոկտեմբերին ՀՀՊՆ դաստիարակչական աշխատանքի վարչությունը պատրաստվում էր դիմավորել Ամանորն ու Սուրբ Ծնունդը, ամփոփել մեկ տարվա կատարած աշխատանքը :

Դեկտեմբերի 4-ն էր: Արևը մայր էր մտնում: ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը մի քանի ավտոմեքենա ուներ՝ ալ կարմիր, կապույտ, սպիտակ Մերսեդես ջիպ: Շատ անգամ փոխում էր: Սպիտակ Ջիպով կանգնեց կողքիս. ՀՀ ՊՆ շենքի տարածքում էր, իջավ, գլուխս կախ՝ չէի նկատել, մտատանջությունների մեջ էի: Ակամայից սթափվեցի, նա բարևեց, ես սովորության համաձայն ձգվեցի, պատրաստվեցի զեկուցել: Զգաց՝ թույլ չտվեց: «Քեզանից զեկուցող դուրս չի գա: Գործերն ինչպես են, էդ ինչի՞ մեջ ես խորացել մտքերով, չոլերն ընկել: Ամանորը մոտենում է, Գեղամ Հարությունյանին տեղյակ պահիր թող պարգևատրման ցուցակները ժամանակին ներկայացնեն: Քեզ համար մտածել ենք՝ բնակարան հատկացնել և երկրորդ աստիճանի «Մարտական խաչ»-ով պարգևատրել:

ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը վիթխարի անհատականություն էր: Նայելով մեր աչքերի մեջ՝ տեսնում և զգում էր մեր ներաշխարհը, մեր գաղտնի կյանքը, մեր երակներով հոսող կենսահյութի շարժումը: Նույնիսկ կանխազգում էր, արտահայտում, թե մենք ինչ ենք մտածում: Նա բնությունից օժտված, ամբողջական մի անհատականություն էր: Բոլորին հոգու աչքերով էր նայում, ամեն ինչ ընկալում: Մի բան չկարողացանք կռահել՝ ո՞վ էր նրա սիրած էակը, նրա հոգու թաքուն տիրուհին, մեզ համար անհայտ մնաց:

Նա ստիպեց մեզ տարբերակել արժանիների մեջ ամենաարժանավորին: Նա իր ուսերին կրեց ազգային վերաշինության ահռելի դժվարին աշխատանքը:

Անցել էր տասը ամիս: ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանը երևի տարբեր մարդկանց հանդիպելու պայմանավորվածություն ուներ: Արշալույսին վեր կացավ անկողնուց, շորերը հագավ, առանց նախաճաշելու նստեց Քուռկիկ Ջալալին. այդպես էինք ասում նրա ալ կարմիր «Մերսեդես» Ջիպին:

Խոր Վիրապին չհասած՝ 50 մ հեռավորության վրա կանգնեց իրեն սպասող երեք մեքենաների կողքին: Դուռը կիսաբաց արեց ու ասաց. «Այստեղ պաշտոններ չեն բաժանում»,-

ու շարունակեց ճանապարհը: Հասնելով փշալարերին՝ կանգնեց: 13-րդ դարում մոնղոլ թաթարների մնացուկ թուրք մարդակեր բորենիները զավթել են Հայաստանը, բետոնե սյուներով Հայաստանը մեխել նրա սրտի մեջ: Մետաղյա փշալարերով ցանցապատել, Հայաստանը սահմանագծել: Թողել են մի փոքրիկ պատառ, մի ոտնաչափ հողակտոր, գերության մեջ գտնվող Արարատ լեռան և Խոր Վիրապի վանքի խաչի առաջ:

Իսկ Արաքս գետը՝ հավերժ վկա իր ադամանդե շղթայով փաթաթվել է Արարատի ոտքերին, օծում է այն իր արցունքներով: Խաչն իր օրհնությամբ փրկության հույս է տալիս:

Մտքերի մեջ խորասուզված էր ՍՊԱՐԱՊԵՏԸ, երբ սահմանապահ զորքերի հրամանատարը մոտեցավ՝ զեկուցեց: Երկուսով անխոս քայլեցին մինչև սահմանի առաջին գիծը: Անցան ջրամբարը, մոտեցան վրանին: Կողքին տախտակե սեղան էր դրված՝ անկանոն շարված նստարաններով:

Հրամանատարը, որ արդեն զեկուցել էր, թե սահմաններում անդորր է, լիակատար խաղաղություն, այդ պահին նկատեց երկու վայրի խոզերի, որոնք, շրջապատին անտարբեր, դնչով հող էին փորում: ՍՊԱՐԱՊԵՏԻ մարմինը մի պահ սրթսրթաց, կարծեց, թե հողի ծալքերից և մեր պապերի գերեզմաններից, մեր արյունն են ծծում:

- Զորավար, որսի ցանկություն ունե՞ս:

- Առայժմ ոչ, ուզում եմ խորհել,- խոր հոգոց հանելով պատասխանեց ՍՊԱՐԱՊԵՏԸ: Նա այդ պահին հոգսաշատ լռում էր, ձգտում մենության: Առանձնացավ, նստեց հողաթմբին, ձեռքի մի կտոր փայտի ծայրով սկսեց հողը փորել, գծեր քաշել: Ցավ զգաց: Ինչքա՜ն արյուն ու արցունք կա այս հողին խառնված:

Հայ ժողովուրդը զբաղված էր խաղաղ աշխատանքով և հարկատու էր Մսրա երկրին: Դավիթը, իր զբաղմունքին սովոր, որս էր անում: Մսրա Մելիքի հարկահանները եկել էին Սասուն՝ յոթ տարվա հարկ տանելու: Տուն վերադառնալու պահին Դավիթը տեսնում է, որ հորեղբայր Օհանը, Ցռան Վերգոն, Սասունը ավերելու սպառնալիքից ահաբեկված՝ արաբների համար ոսկի են չափում:

Մհերի տղա Դավիթը մոտենալով ասում է. «Դուք շատ եք ծերացել, դուք չեք կրնա Սասնա ոսկին չափեք, կոտը վերցուց

ասաց, յա հացն ու գինին, տեր կենդանին, Մարութա Աստվածածին ու կոտը զարկեց Կոզբադնի գլխին: Հարկահավաքները փախչում են, Մսրա Մելիքին պատմում: Նա էլ զայրացած՝ զորքով զրահով արշավում է Հայաստանի վրա: Դավիթը պատրաստվում է դիմակայել այդ արհավիրքին: Կռիվների ընթացքում սպանվում են բազմաթիվ ռազմիկներ, դիակները գետն են լցնում: Մսրա երկրում ապրող նրանց հարազատները տեսնում են ջրի հետ եկած մարմիններ:

Դավթին է մոտենում մի ալևոր զորական և ասում, որ իրենց զոռով են բերել պատերազմի դաշտ: Ինչո՞ւ է նա անմեղներին կոտորում, նրա թշնամին Մսրա Մելիքն է, որ հանգիստ քնած է սարի գլխին վրանի մեջ: Դավիթը գնում է այնտեղ: Մսրա Մելիքի առաջարկությամբ յուրաքանչյուրին տրվում է երեք զարկ: Նրա երեք զարկերն էլ անցնում են անարդյունք:

Դավիթն իր երրորդ զարկին ասում է. «Մնաց մեկ զարկ, մեկ աստված, մեկ ես, - Յա Մարութա Բարձրիկ Աստվածածին, յա Խաչ պատերազմին, վեր իմ աջ թևին: Կանչեց, զարկեց Թուր Կեծակին: Կտրեց քառասուն ջրաղացի քար, կտրեց քառասուն գոմշու կաշին, կտրեց հրեշ Մսրա Մելիքին: Սասնա ծրագը հանգած էր, հիմա վառվավ: Հայ ժողովուրդը ազատվեց: Դավիթը ձիու գլուխը շրջեց, գնաց Մսրա Մելիքի զորքին ասաց. «Եկեք գնացեք ուր տեղեն եկել եք՝ գնացեք ձեր տեղ: Գնացեք ձեր տներ, նստեք, ինձ համար աղոթեք:

Զորքը Դավիթին օրհնեց՝ ուր էլ գնաս, Աստված քեզ հետ, Աստված քո բան միշտ հաջողի, Աստված քեզ ջանսաղություն տա, Աստված քո հոր ու մոր արքայությունը տա, Աստված քեզ պահապան»:

Դավիթին օրհնեցին, բայց նա ընկավ դավադիր թունավոր նետից, երբ բարեկամաբար ուզում էր մենամարտում օգնել Չմշկիկ Սուլթանին: Մենամարտից առաջ Դավիթը մտնում է գետը՝ լողանալու, նրա աղջիկը եղեգների մեջ թաքնված՝ թունավոր նետով զարկում է Դավթին: Դավթի գոռոցից աղջկա սիրտը ճաքում է: Դավիթը երբ իմացավ, ասաց. «Իմ ցեցը իմ անձից է, էդ իմ սերն է, որ ինձ սպանեց, ու ինքն էլ էնտեղ մեռավ»:

Մտածում էր ՍՊԱՐԱՊԵՏԸ: Նախնիների արյունն էր հոսում նրա սրտում: Մտքում պատմության էջերն էր թերթում:

Մի սառը քրտինք պատեց մարմինը: «Մեր ազգի ճակատագիրն է ի վերուստ այսպես է տրված:

Պապ թագավորին, Մուշեղ, Մխիթար Սպարապետներին թունավոր սրով սրախողխող արեցին: Անդրանիկին, Գարեգին Նժդեհին հալածելով՝ արտաքսեցին հայրենի հողից: Հիշում էր արնաշաղախ դիակներով լեցուն գետերն ու ջրերը: Թուրքերին, որ մորթել են հայերին, բռնացել են Աստծու կողմից տրված նրանց իրավունքների վրա, զավթել սուրբ հողը:

Վկա է Աստված, որ ազգի ճշմարիտ ուղին ներքնապես միաբան լինելն է: Կհասնեմ այն ժամանակին, երբ այդ փքված սարդին, այդ անմարդկային դոդոշ թուրքերի գլխին, աշխարհի անեծքը կթափվի՝ մարդկության դեմ գործած հանցագործության համար... Ցրիվ կգան փոթորկից: Ես պիտի զինվեմ ընդդեմ վատթարի: Մենք գոհ պիտի լինենք այս մի բուռ հողով և մեր ազատագրած Արցախով: Ու պիտի շարունակենք մեր հաղթանակը»:

ՍՊԱՐԱՊԵՏԸ նայեց Խոր Վիրապին, թմբերի Սուրբ խաչին, որին հաջորդում էին քույր Սուրբ Հակոբ և Սուրբ Խաչ եկեղեցիները: Խաղողի մի վազ տեսավ, որ սիգախոտերի միջից փայլում էր վարդագույն շողերով, ձգում իր ժպիտով: Վեր կացավ, մոտեցավ վազին, կքանստեց, տերևների միջից՝ ասես հարսնաքողի տակից, ամաչկոտ աչքեր էին իրեն նայում: Հայոց ՍՊԱՐԱՊԵՏԻ մեջ գրողը խոսեց.

- Եթե կարողանայինք սանձել ընդհատակի ներքին թունոտ ուժերը, երջանիկ կլիներ այս ժպիտը: Ու մենք էլ կլինեինք երջանիկ: Աշխարհը մեր հայրենիքն է, այսպես է պետք նայել աշխարհին:

Արևն այրում էր ՍՊԱՐԱՊԵՏԻ թիկունքը. շուռ եկավ դեպի արևը, հիշեց մեծ փիլիսոփա Արիստոտելին: Զգաց Արարատ լեռան շնչառությունը: Այստեղ, ամենաշատն այստեղ՝ Արարատի ստորոտում, Խոր Վիրապի մոտ էր ասես հաղորդակցվում Աստծու հետ, նրա զորությամբ հավատում Հայաստանի փրկությանը: Ու նրանց ներկայությամբ էր երդվում իրականություն դարձնել այն, արժանի լինել սուրբ հողին:

Նրա աչքն ընկավ Արաքս գետին: Ախուրյանը՝ կարկաչելով, Արաքսը՝ հառաչելով, խառնվում, գնում են հեռու... Արևը թեքվում էր զենիթից: Մայրամուտին մոծակները սկսում են բզ-

զալ: Իրենց երգն ու երաժշտությունն են խառնում Արաքսի ջրերին: «Ամեն ինչ ծրագրված է այս աշխարհում»- ասաց ՍՊԱՐԱՊԵՏԸ կիսաձայն ու ոտքի կանգնեց: Հայաստանը երկար է ապրել թուրքական սրի ու սպառնալիքի տակ: Մինչև ե՞րբ»:

Ձեռքով շոյեց մորուքը, շրջվեց ու քայլեց դեպի մեքենան, ուղղություն վերցրեց Երևան՝ իր աշխատավայր՝ Կառավարության շենքը, այնտեղից Ազգային ժողով, որտեղից լսվեցին հրազենի դավադիր, մահաբեր կրակոցները... ՍՊԱՐԱՊԵՏԸ...

1999թ հոկտեմբերի 27-ին, ժամը 15.00-ին:

Անձամբ ՍՊԱՐԱՊԵՏ ՀԱՅՈՑ

ՎԵՐՋԱԲԱՆ

Մենք ներկայացնում ենք Մարտին Բաղդասարյանի «ԱՋԱՏԱԳՐՈՒՄ» թվով 3-րդ «ՍՊԱՐԱՊԵՏ» գիրքը, որի վերաբերյալ անկեղծ երախտիքի խոսքն ենք ուզում ուղղել նրան, ում անցած վերջին ավելի քան 20 տարին նվիրված է եղել Հայաստանի նորագույն պատմության ամենանվիրական ժամանակաշրջանին՝ ազգային ազատագրական պայքարին, հատկապես Արցախի բնակչության և նրա սահմանների պաշտպանությանը, ինչպես նաև Հայաստանի պաշտպանական գերատեսչության և նրա անձնակազմի ռազմահայրենասիրական դաստիարակության սուրբ գործին:

Այսպիսով, հեղինակը նշում է. «Հիմա ո՞վ(քեր) է(են) այն անհատ(ներ)ը, որը(որոնք) կկարողանա(ն) ժողովրդին շարժել, իրականացնել երևակայող հեռուն գնացող Գորդյան հանգույցի լուծումը, որը (որոնք) կկարողանա(ն) գրավել ու նվաճել ժամանակակիցների սիրտն ու հոգին, արժանավորների մեջ դառնալ արժանին...: Դա եղավ ժողովրդի հավաքական ուժը, «Ղարաբաղ» կոմիտեն, ովքեր (կոմիտեի անդամները) անսահման Սիրո, անձնազոհ նվիրումի, ինքնամոռաց հայրենապաշտության ու հետևողականության և այլ գերմարդկային արժեքներով տոգորված ուղղորդեցին հայոց համազգային շարժումը և ազգային ազատագրական պայքարը:

Հեղինակը շարունակում է. «Եվ ի՞նչ էր մտածում այդ երիտասարդը: Եվ ի՞նչու էր պատրաստվում ձեռնոց նետել ճակատագրին: Հանուն այս գեղեցկության՝ պիտի գոչեմ, որ բախտ եմ ունեցել լինել նրա ժամանակակիցը և նրա հետ առաջինը մարտնչել հանուն հայ ժողովրդի և նրա պատմական տարածքների ազատագրմանը: Անցնելով տանջանքի ու տառապանքի ճանապարհով՝ նա մտածևեց ունենալ անանձնական երջանկություն: Այն է ԱՋԱՏԱԳՐՈՒՄ ԱՐՑԱԽ, և շատ անգամ կրկնվող հայկական երգերը. «Հազար թմբուկ թող հնչեն այս առավոտ»: Նարեկացի, Սևակ, Չիրազ և ի վերջո Սոլժենիցին: Դժժում էր Աշոտի շեփորի նվագը՝ «Ի՞նչու է աղմկում գետը» հայտնի գեղարվեստական կինոնկարի երաժշտությունը: Ա-

մուսնանալու ծրագիրը խախտվել էր, բայց ի՞նչու: Ա՛յն բանի համար, որ կնոջ մարմինը տիեզերքի խորամանկ ժպիտն է, որից գլուխ չեն հանում ոչ իրենք՝ աստվածները, ոչ էլ՝ առավել ևս մարդիկ», եզրափակելով խոսքը, հեղինակն ավելացնում է վերջապես պարտադրված պատերազմ:

«Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» Ժնևի 1949 թվականի օգոստոսի 12-ի կոնվենցիայի (Հայաստանը միացել է 1993 թ.-ի մարտի 31-ին), մասնավորապես 147 հոդվածում նախատեսված են այն լուրջ խախտումները, որոնց վրա տարածվում են կոնվենցիայի դրույթները, դրանք են, մասնավորապես.

- կանխամտածված սպանություն,
- տանջահարությունը և անմարդկային վերաբերմունքը...,
- հովանավորվող անձի անօրինական բռնագաղթը, տեղափոխումը և կալանումը,
- պատանդ վերցնելը,
- ունեցվածքի անօրինական, կամայական, մեծ չափերի հասնող ավերումն ու յուրացումը, որոնք ռազմական անհրաժեշտությամբ չեն պայմանավորված, և այլն:

1988 թ.-ի փետրվարի 26-29-ը Սումգայիթում հայության ջարդի ու բռնագաղթի սկիզբ դրվեց, իսկ նոյեմբերի 21-ին՝ Բաքվից հետո սկսվեց Ադրբեջանի 2-րդ հայաշատ կենտրոնի՝ Կիրովաբադի՝ հայոց հինավուրց բազմահազարանոց Գանձակ քաղաքի հայաթափումը: Ադրբեջանի վայրագությունները, լայն թափ ստացան մոտ 500.000 հայերի տեղահանման հարցում: Այդպիսի ահագնացող վայրագությունները կանգնեցնելու, ինչպես նաև հայկական բնակչությանը պաշտպանելու և գործող միջազգային նորմերին ու ԽՍՀՄ Սահմանադրությանը համապատասխան անհրաժեշտ էր ստեղծել որևէ իրավական ակտ, որը և չուշացավ, 1989 թ.-ի դեկտեմբերի 1-ին Երևանում կայացավ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի միացյալ նիստ, որում ընդունվեց այդքան սպասված պատմական որոշումը՝ Լեռնային Ղարաբաղը (այսուհետ ԼՂ) Հայաստանին վերամիավորելու մասին, հետագայում այդ պատմական որոշումը ներառվեց «Հայաստանի անկախության մասին» 1990 թ.-ի օգոստոսի 23-ի հռչակագրի նախաբանում:

Ազգային ազատագրական պայքարի գաղափարախոսական

հենքում իրենց ուրույն նշանակությունն ունեցան այդ պայքարի առաջնորդների՝ Լ. Տեր-Պետրոսյանի՝ «Պատերազմ, խաղաղություն», Վ. Սիրադեղյանի՝ «Ձեռքդ ետ տար ցավի վրայից», Վ. Սարգսյանի՝ «Հացի փորձություն» գրքերը, որոնք նոր ուժ և հոգևոր-մշակութային ոգևորություն, լիցք հաղորդեցին հայոց պետականության հիմնարար սկզբունքների և համազգային նպատակների, իրականացվելիք ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամի իրականացման գործում (տես «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի և ՀՀ Սահմանադրության նախաբանները):

Եվ ի վերջո այդ օրերի Ադրբեջանի գործողությունների տրամաբանական ավարտն սկսվեց հարկադրված պատերազմով, այսինքն «ագրեսիվ պատերազմով», որի հասկացությունը տրված է միջազգային պայմանագրային նորմերով, ինչը նշանակում է, որ ներպետական քրեական օրենսդրությամբ անհրաժեշտ է, որ (առավել ևս, որ այսօր էլ պատերազմական գործողությունները վերսկսելու Ադրբեջանի հոխորտանքներն առավել իրատեսական են հատկապես աշխարհաքաղաքական ներկա զարգացումների լույսի ներքո) այն ներառվի դիսպոզիցիայի ձևով, ինչն առկա է գործող քրեական օրենսգրքի (գործողության մեջ է դրվել 2003 թ.-ի օգոստոսի 1-ից) 384 հոդվածում, քանի որ և՛ պարտադրված պատերազմի, և՛ հետագա սպառնալիքով պայմանավորված՝ իրավական հիմնավորումների համար չափազանց կարևոր է, և հիշյալ հոդվածի 1-ին կետով նախատեսվել է «ագրեսիվ պատերազմ ծրագրելը կամ նախապատրաստելը», իսկ 2-րդ կետով՝ նաև «սանձազերծելը և վարելը», առավել ևս որ քրեաիրավական այդ նորմերը ներառված են եղել Հայաստանի ստանձնած միջազգային իրավական պարտավորություններում:

1965 թ.-ի ապրիլի 24-ին Մեծ Եղեռնի 50-ամյակին նվիրված ցույցի ժամանակ (թեև ԽՍՀՄ Սահմանադրությամբ, ինչպես նաև Հայկ. ԽՍՀ Սահմանադրությամբ այդպիսի իրավունք ժողովուրդը ուներ, այնուամենայնիվ այն դեկլարատիվ բնույթ էր կրում, քանի որ այն կիրառելու համար անհրաժեշտ էր հատուկ ընթացակարգ՝ նվազագույնը Հայաստանի կոմկուսի կենտկոմի որոշումն այդ դրույթը կիրառելու մասին, իսկ այդ-

պիսի որոշումները սովորաբար չէին կայացվում) Մովսես Գորգիսյանի և այլոց՝ անկախ Հայաստան ստեղծելու համար կազմակերպված ակցիան հիշատակվում էր, մասնավորապես սև, վրան «Հող» գրված դրոշը տանում էին գրքի հեղինակ՝ Մարտին Բաղդասարյանը և այլ ընկերներ, որով մեկ անգամ ևս համաշխարհային հանրության ուշադրությունն էին հրավիրում Հայաստանի և հայ ժողովրդի հիմնահարցերի շուրջ: Այդօրինակ ակցիաների արդյունքում էր, որ Հայաստանի անկախության հռչակագրում և հետագայում Սահմանադրությունում ամրագրվեց. «Հայ ժողովուրդը, հիմք ընդունելով ... իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը, ... ապահովելու համար սերունդների ազատությունը, ...», նախաբանի դրույթը, և որ այդպիսի ազատության ու պետականության վեհ գաղափարներով առաջնորդվող հայ ազգի, էթնոսի համար բնաջնջման արժեք ունեցավ, հատկապես XX դարասկզբին պետականորեն կազմակերպված և իրականացված Հայոց Մեծ Եղեռնը: Այստեղ տեղին է հիշատակել.

ա) «Ցեղասպանության հանցագործության կանխման և դրա համար պատժի մասին» 1948 թ.-ի դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի (Հայաստանը միացել է 1991 թ.-ի դեկտեմբերի 10-ին) 2 հոդվածի «C» կետում ամրագրված է. «որպես ցեղասպանության հանցագործություն ճանաչված է նաև ազգային, էթնիկական, ռասայական, կրոնական որևէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծում, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը», մի թե՞ Բաքվի, Սումգայիթի և, հետագայում լայնածավալ ռազմական գործողություններն Արցախի բնակչության և նրա սահմանների նկատմամբ թուրքական, ադրբեջանական ծպտյալ մտադրությունների, ցեղասպանության ծրագրված քաղաքականության նորագույն դրսևորումները չէին:

բ) ՀՀ գործող քրեական օրենսգրքի 393 հոդվածով նույնպես նախատեսված է ցեղասպանության դիսպոզիցիան, հիմք ընդունելով միջազգային շրջանակային կոնվենցիաները՝ Հայաստանի մասնակցությամբ:

1988 թ.-ի փետրվարի 20-ին ԼՂ-ի ինքնավար մարզի ժողովրդական դեպուտատների մարզային խորհուրդը մեկ այլ կարևորագույն, նաև իրավական դիրքորոշում արտահայտեց

ընդունելով որոշում՝ անջատվել Ադրբեջանից և վերամիավորվել մայր Հայաստանին, նույն թվականի մարտի 28-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը **մերժեց** Հայաստանին վերամիավորվելու ԼՂ-ի մարզային խորհրդի իրավապահանջ որոշումը, իսկ հետագայում 1991 թ.-ի դեկտեմբերի 12-ին ԼՂ-ում անցկացված անկախության հանրաքվեի մասնակիցների ավելի քան 99 %-ը **կողմ** քվեարկեց հայկական Արցախի անկախությանը:

Իրավական տեսանկյունից կարևորագույն նշանակություն ուներ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի այն որոշման ընդունումը, ըստ որի անօրինական ճանաչվեց ՌԿ(բ)կ կենտկոմի կովկասյան բյուրոյի 1921 թ.-ի հուլիսի 5-ի որոշումը, որով ԼՂ-ն բռնակցվել էր Ադրբեջանին:

Եվ այսպիսով, պարտադրված պատերազմի պայմաններում հրատապ հարց էր առաջացել և ինքնաբուխ մեկը մյուսի հետևից ստեղծվեցին երկրապահ կամավորական և աշխարհազորային ջոկատներ, այսինքն միջազգային ռազմական նորմերի պահանջների հստակ պահպանմամբ կազմավորվեցին «կոմբատանտները», որպես միջազգային մարդասիրական իրավունքի հասկացություն, նույնացվում է ոչ միայն բանակ, այլև աշխարհազորային և կամավորական ջոկատներ հասկացությանը, որոնց գործողությունները համակարգելու համար միասնական հրամանատար ընտրվեց Վազգեն Սարգսյանը: Հիշյալ հանգամանքներում և պայմաններում էր սաղմնավորվում հանրապետության միասնական բանակը՝ ՍՊԱՐԱՊԵՏ Վազգեն Սարգսյանի՝ անմնացորդ նվիրվածության և հետևողական աշխատանքի արդյունքում:

1990 թ.-ի սեպտեմբերի 20-ին ստեղծվեց ՆԳՆ-ին կից «Հատուկ գունդ»-ը, որը հետագայում դարձավ ապագա հայկական կանոնավոր բանակի կորիզը, որի մարտիկների երդման արարողությանը ներկա էր այն ժամանակվա Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը և բարձրաստիճան այլ պաշտոնյաներ:

1991 թ.-ի մայիսի 4-ին կառավարության որոշմամբ ստեղծվեց նրան առընթեր պաշտպանության կոմիտե:

1992 թ.-ի սեպտեմբերի 1-ին ստեղծվեց ԼՂ-ի պաշտպանության պետական կոմիտե, ստեղծվեց նաև Արցախի ինքնապաշտպանական ռազմական խորհուրդ, որի կազմում ընտր-

ված Ս. Սարգսյանը հետագայում դարձավ նրա նախագահը:

ՀՀ ՆԳ նախարար Վ. Սիրադեղյանի 1992 թ.-ի նոյեմբերի 2-ի թիվ 668 հրամանով ստեղծվեց ՆԳՆ հետախուզական վաշտը, որը կարևորագույն, անհրաժեշտ տեղեկատվություն էր տրամադրում հայկական զինված ուժերին՝ ինքնապաշտպանական մարտերում:

Իրավական տեսանկյունից չափազանց կարևոր նշանակություն ուներ այն ժամանակվա Հայաստանի Գերագույն խորհրդի ղեկավարության և, հատկապես նրա նախագահ պարոն Արարքցյանի պետական մտածողության կարևորումը և առհասարակ պետական խնդիրների նկատմամբ նրա անձնական պատասխանատվության ստանձնումն ու հետևողական ջանքերն այդ ժամանակահատվածում պատերազմող պետության համար կարևորագույն և առաջնային խնդիր էր միջազգային այնպիսի իրավական փաստաթղթերին միանալը (ներառյալ մեծածավալ ընթացակարգային հարցերը), որոնք առավել հիմնավորված կդարձնեին հարկադրված պատերազմի աշխարհաքաղաքական ու միջազգային իրավական հիմնահարցերը ներկայացնելիս և, մասնավորապես միջազգային հումանիտար իրավունքի կամ ինչպես հաճախ բնութագրվում է jus ad bellum կամ ուժի կիրառումը կանոնակարգող նորմերին համապատասխան:

ՄԱԿ-ի կանոնադրության (Հայաստանն անդամակցել և կանոնադրությանը միացել է 1992 թ.-ի մարտի 1-ին) 4-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, այն է. ՄԱԿ-ի անդամ պետությունների կողմից ուժի սպառնալիքը և ուժի կիրառումը միջազգային հարաբերություններում հստակորեն դատապարտվում են, ինչը չի նշանակում, որ պետությունները կորցնում են իրենց ինքնիշխանությունը կամ քաղաքացիական պատերազմն արգելված է: Ինչ վերաբերում է ազգային ազատագրական պատերազմներին, ապա սկզբնապես դրանք ներքին զինված ընդհարում էին համարվում, հետագայում ակնհայտ դարձավ դրանց միջազգային բնույթը, իսկ ՄԱԿ-ի կանոնադրության 1-ին հոդվածի 2-րդ կետի համաձայն, այն է. կանոնադրությունը հիմնված է ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի վրա և պետք է օժանդակի այդպիսի պայքարին և իրավունքի ձգտող ժողովուրդներին:

ՄԱԿ-ի կանոնադրությունը, առհասարակ արգելում է պետություններին ուժ կիրառել այլ պետությունների դեմ, բացառությամբ այն դեպքերի, երբ ագրեսիայի ենթարկված պետությունը պաշտպանվում է ագրեսորից:

Մինչդեռ, Թուրքիայի կողմից Ադրբեջանին ռազմական օգնություն ցուցաբերելու մասին 1990 թ.-ի հունվարի 24-ի ՏԱՍՍ-ի հաղորդագրության առաջին պաշտոնական տեղեկատվության համաձայն, թուրքական կողմին նախազգուշացվում էր Նախիջևանին զինամթերք մատակարարելու մասին, բայց և այնպես 1991-92 թթ.-ին Թուրքիան Ադրբեջանին մատակարարեց զենք ու զինվորական հանդերձանք՝ անտեսելով միջազգային իրավական և այլ ռազմական նորմերը, իսկ.

- թուրքական «Միլլիեթ» թերթի 1993 թ.-ի հունիսի 21-ի հաղորդմամբ «Գորշ գայլեր» կազմակերպության 300 զինյալներ ուղարկվեցին Ադրբեջան՝ Հայաստանին պարտադրված պատերազմում կռվելու նպատակով, իսկ.
- թուրքական «Gercek» շաբաթաթերթի տվյալներով 1993 թ.-ի հունիսին Թուրքիան 5000 (հինգ հազար) «Սթինգեր» տիպի հրթիռ, հրթիռային կայանք, ական ու ականանետ է մատակարարել Ադրբեջանին, իսկ.
- թուրքական «Հյուրիեթ»-ը 1993 թ.-ի հունիսի 24-ին գրում էր, որ Թուրքիայում ռազմական պատրաստություն անցած ադրբեջանցի զինվորների մեծ մասը տուն վերադառնալով, խուսափում էր ռազմական գործողություններին մասնակցելուց, և
- նույն թերթը 1993 թ.-ին հունիսի 23-ին՝ Հուսեյնովի խոռվության առիթով գրում էր, որ. «Թուրքիան Ադրբեջանին զենք տվեց, որպեսզի կռվեն հայերի դեմ, իսկ նրանք միմյանց վրա են ուղղել այդ զենքը: Եվ եզրակացնում. «Հայկական ուժերին մի քանի անգամ գերազանցող ադրբեջանական զինված կազմավորումների պարտության համար Թուրքիան պատասխանատու չէ»»:

Հետագայում՝ 1993 թվականի դեկտեմբերի 18-ին, ադրբեջանական 6000 (վեց հազար)-անոց բանակի՝ 1500-ը վարձկան աֆղան մոջահեդներ, լայնածավալ հարձակում կազմակերպեցին Արցախի և Հայաստանի 1200 կմ-անոց ռազմաճակատի ողջ երկայնքով:

«Միջազգային զինված ընդհարումների զոհերի պաշտպանության մասին 1949 թ.-ի օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության, 1977 թ.-ի հունիսի 8-ի Արձանագրություն I-ի (Հայաստանը միացել է 1993 թ.-ի մարտի 31-ին) 47 հոդվածի 1-ին կետի համաձայն. այն է. «վարձկանը չունի կոմբատանտի կամ ռազմագերու կարգավիճակ ստանալու իրավունք, իսկ 2-րդ կետի համաձայն, մասնավորապես այն է.

«վարձկան է համարվում ցանկացած անձ, որը.

ա/ տեղում կամ արտասահմանում հատուկ հավաքագրվել է, որպեսզի կռվի զինված ընդհարման ժամանակ,

բ/ փաստացի մասնակցում է ռազմական գործողություններին,

գ/ ռազմական գործողություններին մասնակցում է՝ ղեկավարվելով անձնական շահ ստանալու ցանկությամբ, որին ընդհարման մեջ գտնվող կողմից կամ այդ կողմի անունից տրվել է այնպիսի նյութական վարձատրության խոստում, որն էապես գերազանցում է այն վարձատրությունը, որը երաշխավորվում կամ վճարվում է տվյալ կողմի զինված ուժերի կազմի մեջ մտնող՝ այդ նույն դասի կոմբատանտներին,

...

ե/ չի մտնում ընդհարման մեջ գտնվող կողմի զինված ուժերի կազմի մեջ,

զ/ չի ուղարկվել ընդհարման մեջ գտնվող կողմի... զինված ուժերի կազմի մեջ մտնող անձ՝ պաշտոնական պարտականություններ կատարելու համար»:

Վերոհիշյալ հրապարակումները և Արձանագրություն I-ի դրույթներն ապացուցում են, որ վարձկանը կոմբատանտի (այսինքն մարտնչող կողմի, մարտիկի) կամ ռազմագերու կարգավիճակ չի կարող ունենալ, եթե համապատասխանում է հիշյալ հոդվածի 2-րդ կետի «ա», «բ», «գ», «ե» և «զ» ենթակետերով վարձկանի համար սահմանված ձևակերպումներին:

ՀՀ քրեական օրենսգրքի 395 հոդվածի համաձայն վարձկան հավաքագրելը, ուսուցանելը..., ինչպես նաև... ռազմական գործողություններում նրան օգտագործելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ տարբեր որակումներին [illegible]

պատժաչափերով: Այդ նույն հոդվածը սահմանում է նաև վարձկան հասկացությունը:

Ինչևիցէ, վերոհիշյալ հանգամանքները մեկ անգամ ևս ապացուցում են Ադրբեջանի և Թուրքիայի և, առհասարակ որոշ մուսուլմանական երկրների ներկայացուցիչների կողմից միջազգային հումանիտար իրավունքի նորմերի կոպիտ և բիրտ խախտումների մասին, որոնց դիմաց մեր պետական մարմինները տարբեր միջազգային ատյաններում կարող են տարբեր պահանջներ ներկայացնել՝ ազգային ազատագրական պայքարը ռազմական և այլ միջազգային նորմերով հիմնավորելու ու պաշտպանելու համար և, հատկապես դիվանագիտական ճանապարհներով ու իրավաբանորեն ամրագրելու մեր ռազմական հաղթանակների ճանապարհով ազատագրված հինավուրց հայկական Արցախի՝ միջազգային իրավունքի սուբյեկտի կարգավիճակ ձեռք բերելու հանգամանքը:

1965 թ.-ի Վիեննայում տեղի ունեցած Կարմիր խաչի XX միջազգային համաժողովում ընդունվեց բանաձև, ըստ որի հաստատվեց մարդասիրական իրավունքի 3 հիմնարար սկզբունք.

1. ընդհարման մեջ գտնվող կողմերի՝ թշնամուն վնաս հասցնելու միջոցների ընտրության իրավունքն անսահմանափակ չէ,

2. արգելվում է հարձակում գործել քաղաքացիական բնակչության վրա,

3. ընդհարման մեջ գտնվող կողմերը մշտապես պետք է տարբերակեն ռազմական գործողություններին մասնակցող անձանց քաղաքացիական անձանցից և պետք է հրաժարվեն հարձակում գործել վերջիններիս վրա:

Առհասարակ, միջազգային կոնվենցիաների խնդիրներն են հնարավորինս լայնորեն տարածել կոնվենցիաների տեքստերն իրենց երկրներում և, մասնավորապես 1949 թ.-ի օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաների և դրանց լրացուցիչ արձանագրությունների ուսումնասիրությունը մտցնել ռազմական և, եթե հնարավոր է, քաղաքացիական կրթության ուսումնական ծրագրերում, որպեսզի նրանց զինված ուժերը և բնակչությունը ծանոթանան կոնվենցիաների սկզբունքներին: *Միաժամանակ, այդ կոնվենցիաներին միացած պետությունները պարտավոր են, որպեսզի իրենց զինվորական կամ մյուս իշխա-*

կարգավիճակ չի կարող ունենալ, եթե համապատասխանում է հիշյալ հոդվածի 2-րդ կետի «ա», «բ», «գ», «ե» և «զ» ենթա-

տարբեր իրենց երկրներում և, մասնավորապես 1949 թ.-ի օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաների և դրանց լրացուցիչ արձանագրությունների ուսումնասիրությունը մտցնել ռազմական և,

նությունները ձեռքի տակ ունենան կոնվենցիաների տեքստերը և հատուկ ծանոթանան դրանց դրույթներին:

«Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին 1954 թ.-ի մայիսի 14-ի կոնվենցիայի (Հայաստանը միացել է 1993 թ.-ի հունիսի 22-ին) 2-րդ հոդվածը նախատեսում է, որ մշակութային արժեքների պաշտպանությունը ենթադրում է նաև դրանց հարգում»:

ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է. «Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում նպաստում է ... այլ պետություններում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, ...»: Սահմանադրական այսպիսի ձևակերպումը կարծես թե հայկական մշակութային արժեքները սահմանազատում է համաշխարհայինից, մինչդեռ նշված Կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն, այն է. «շարժական կամ անշարժ արժեքները, որպես այդպիսիք են համարվում՝ անկախ դրանց ծագումից և տիրապետողից»: Նշված Կոնվենցիան որևէ տարբերակում չի դնում նաև կապված այն հանգամանքի հետ, թե այդ արժեքները որտեղ են գտնվում:

Մինչդեռ, պարտադրված պատերազմի ժամանակ բազում հայկական պատմական, մշակութային, հետևաբար համաշխարհային (ըստ Կոնվենցիայի այդ դրույթի) արժեքների ոչնչացման, չհարգման բազմաթիվ դեպքեր են արձանագրվել, մասնավորապես Շուշի քաղաքի, Ղազանչեցոց եկեղեցու և այլ արժեքների նկատմամբ կազմակերպված ոտնձգությունը, վանդալիզմը:

Եվրոպայի խորհրդի անդամ Ադրբեջանի նախկինում և ընդհամենը վերջերս Նախիջևանի հայկական խաչքարերի ոչնչացման, պարտակման գործողությունների դատապարտման և նշված Կոնվենցիայի դրույթների կատարման համար պարտավոր են զբաղվել արդեն իսկ միջազգային կառույցները (քանի որ, ըստ այդ կոնվենցիայի, դրանք ոչ միայն ազգային, այլև համաշխարհային արժեքներ են), մասնավորապես ՅՈՒՆԵՍԿՕ-ն, որի գլխավոր քարտուղար Իրինա Բոկովան, լինելով բուլղարացի, ինքն էլ իր ազգային պետության մշակութային, հետևաբար համաշխարհային արժեքների ոչնչացման

դեպքերն այս անգամ Թուրքիայի կողմից, կարծում ենք բազմաթիվ են:

Հայկական զինված ուժերի և, հատկապես քաղաքական իշխանության գերագույն ուղղորդիչ ուժը ՍԵՐՆ էր, քանի որ.

Տիեզերական ստեղծագործության ուժը Սերն է,

Մարդու երջանկության աղբյուրը Սերն է,

Սերը, որ կյանքով և գործով կարտահայտվի, ծառայությամբ և բարիքով կմարմնավորվի,

արժե այդպիսի Սիրո համար պայքարել և ստեղծագործել, Աստվածաշնչյան այդպիսի մարգարիտների առջև անզոր են անգամ կայսրերն ու թագավորները, մեծահարուստներն ու ամենակարող անձինք:

Իրավաբանների խորհուրդ՝
Նորայր Եղիազարյան,
Հայկ Մարգարյան,
Արամ Անանյան

ՀԱԲ-ի «Ադանա» ջոկատի ազատամարտիկ Պողոս Հարությունյանը (կենտրոնում) տիկնոջ՝ Լաուրայի և ԱՄՆ-ում «Անմար կրակներ» ռազմահայրենասիրական բարեգործական հ/կ ներկայացուցիչ, բարեգործ Հարություն Կարմիրյանի հետ



Օհան Գևորգյան՝ 5-րդ բիրիգադ, Երևանի գումարտակ ...սահմանին նստած...

«ԱԶԱՏԱԳՐՈՒՄ 3», օգոստոս 2008

1988-94 թթ ՀՀ սահմանների ինքնապաշտպանության, արցախյան պատերազմի մասնակից, ջոկատների անցած մարտական ուղու իրական արտացոլումն է
Փառք նահատակած, ստորագիր ապրողաց

Ակադեմիկոս պատմաբաններ

1. Վլադիմիր Բարխուդարյան - ակադեմիկոս, պատմաբան
2. Աշոտ Մելքոնյան - պատմաբան, պրոֆեսոր
3. Էդվարդ Մինասյան - պատմաբան, պրոֆեսոր
4. Արմեն Կարապետյան - պատմաբան, գ/թ

1. Լեոնիդ Գրիգորյան - Կապանի ջոկատի հրամանատար
2. Սուրեն Բաղդասարյան - Գորիսի գումարտակի հրամանատար
3. Եղեգնաձորի Ուրբ - Եղեգնաձորի գումարտակի հրամանատար
4. Լաերտ Սաղաթելյան - Արտաշատի գումարտակի հրամանատար
5. Կամո Հովհաննիսյան - Վանաձորի գումարտակի հրամանատար
6. Աբել Հարությունյան - «Ալաշկերտ» գումարտակի հրամանատար
7. Վարդիթեր Գևորգյան - Վայքի ջոկատների կոորդինատոր
8. Համլետ Վարդանյան - 5-րդ բրիգադ
9. Արամ Բաբայան - «Ծեռամ» ջոկատակի հրամանատար
10. Սեյրան Չիլինգարյան - ազատամարտիկ
11. Գարուն Աբգարյան - Ռ զորամասի հրամանատար
12. Վլադիմիր Հայրապետյան - հրետանու ասպետ
13. Ալեքսանդր Բալբաբյան - ՀՀ ՀՌՈ կապի ծառայության պետ
14. Արկադի Տեր-Թադևոսյան - «Կոմանդոս»
15. Արմեն Ավետիսյան - Կոտայքի ՀԱԲ-ի հրամանատար
16. Արսեն Ֆիրդանյան - ՀՀ ԼԳ գումարտակի հրամանատար
17. Արմեն Ղևոնդյան - Գագուզ
18. Լուսաբեկ Սամվելյան - հետախույզ
19. Գագիկ Բոյաջյան - հետախույզ
20. Վլադիմիր Սարգսյան - «Լուս» գումարտակի հրամանատար

21. Յուրի Խաչատրյան - «Լույս» ջոկատի հրամանատար
22. Գևորգ Հայրապետյան - «Նոր Եդեսիա» գումարտակի հրամանատար
23. Տիկին Գրետա - Վազգեն Սպարապետի մայր
24. Լևոն Տեր-Պետրոսյան - ՀՀ առաջին նախագահ
25. Ռաֆիկ Ջուանյան - «Ամիր» կոթի
26. Միհրդատ Սիմոնյան - «Միություն» Սպիտակի գումարտակի հրամանատար
27. Սենիկ Գևորգյան - բարեգործ
28. Արամ Զավենի Սարգսյան
29. Ամարասի Արթուր - Հատուկ նշանակության ջոկատների հարմանատար
30. Խաչիկ Գասպարյան - «Հորավար Անդրանիկ» ջոկատի հրամանատար
31. Էլմիրա Ազայան - «Խանում»
32. Կարապետ Հաքոբյան - պրոֆեսոր
33. Ավետիք Հայրապետյան - ազատամարտիկ
34. Վարդան Գևորգյան - Քաջարան
35. Խաչիկ Սիմոնյան - Նաիրի ջոկատի հրամանատար
36. Սամսոն Աթոյան - ազատամարտիկ
37. Զավեն Սասորյան - ՀԱԲ-ի հիմնադիր
38. Դավիթ Եահնազարյան - «Ղարաբաղ» կոմիտեի անդամ
39. «Մեծն Տիգրան» աշխարհազորային գնդի հրամանատարի նախագահ Խաչիկ Գալստյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 3
Սպարապետ 7
Արարատ՝ Դավալու 21
Եռյակ՝ Լևոն, Վազգեն, Վանո 34
«Կոռնիձոր», «Ծռամ» ջոկատների ձևավորումը 46
ՀԱԲ-ի ձևավորումը 57
Նյուվադիի ազատագրումը 76
«ՄԷԳՎԱԽ» գումարտակը 102
«Ծաղկահովիտ» գումարտակը 116
Թիկունք և ապագա 126
Գրադ Գարուն 141
Հրետանու ասպետը 161
Ռազմարդյունաբերություն 170
ՀՀ ԶՈՒ Կապի ծառայություն 180
Կապավոր Մորեխիկ 186
ՀՀ ՆԳՆ Հետախուզական վաշտը 199
Եղեգնաձորի գումարտակը 223
Վայոց ձորի Երվանդի Ռուբո 246
«Մեծն Տիգրան» 263
Կոտայքի գումարտակները 268
ՀԻԿ գումարտակը 285
Հետախուզություն 294
Նաիրի-Զոլունի Խաչիկ 324
Վարդենիսի գումարտակը 336
Ապարանի Ավետը 350
Աննահանջ գործողություններ 363
Ջավախքը Արցախի ազատամարտում 375
Սյունյաց աշխարհ 391
Կապան գումարտակը 404
Երևանի գումարտակը 434
«Վարդենիկ» ջոկատը 484
Անկախության բանակ 494
Կապան գումարտակը 404
Մեր պապերի արյան կանչը 503
Սիսական գումարտակը 523

«Լույս» ջոկատ 533
Գեղազնիկ՝ Չաուշ 549
Սպիտակի գումարտակը 556
«Վանաձոր» գումարտակ 565
Ապարանի գումարտակը 578
Արտաշատի գումարտակը 597
«Արծիվ 13» գումարտակը 603
Եամշադինի ինքնապաշտպանությունը 615
Օմարի ազատագրման վերջին օպերացիան 644
Կոմանդոս և Արամ Գրիգորյան 684
Արդարության շեմին 696
Արաքսի ափին 705
Վերջաբան 711

Գիտական խորհրդատուներ՝
Վլադիմիր Բարխուդարյան՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Աշոտ Մելքոնյան՝
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն,
Էդիկ Մինասյան՝
պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր,
Արմեն Կարապետյան՝
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

«ԱԶԱՏԱԳՐՈՒՄ» 3-րդ գրքի
հրատարակմանն աջակցել են

Գորիսի գնդի հրամանատար Սուրեն Խաչատրյանը,
տեղակալ Սուրեն Բաղդասարյանը,

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրեն
Մաքսիմ Հակոբյանը,

Դավիթ Զադոյանը,
Լուսաբեկ Սամվելյանը,
Երվանդի Ռուբոն,
Աշոտ Մինասյանը,
Հովհաննես Մատիկյանը,
«Նիկիտա Մոբայլը»:

Մարտին ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
«ԱՋԱՏԱԳՐՈՒՄ»
գիրք 3-րդ
ՍՊԱՐԱՊԵՏ

Հրատարակչության տնօրեն՝
Արմեն ֆոն Գևորգյան,

Խմբագիրներ՝
Հակոբ Պետրոսյան,
Ամալյա Բաղդասարյան,
Հերմինե Նավասարդյան,
Նաիրա Վարդանյան

Սրբագրիչներ՝
Վարդան Գևորգյան,
Հերմինե Նավասարդյան,
Նաիրա Վարդանյան

Համակարգչային աշխատանքները կատարվել են
«Այսօր» հրատարակչությունում

Չափը՝ 60x84 1/16, ծավալը՝ 45.5 տպ. մամուլ, թուղթը՝ օֆսեթ 70գր.,
տպագրության եղանակը՝ օֆսեթ, տպաքանակ՝ 1000 օրինակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
(վարչական քարտեզ)